

**ՀԱՅԵՐԷՆ
ԹԱՐԳՄԱՆԿԱԾ
ԵՐԿԵՐ**

Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this book

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն գրքի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

**JOHN OF DAMASCUS
ARMENIAN TRANSLATIONS**

Volume II

OLD ARMENIAN VERSION OF THE *EXACT EXPOSITION OF THE ORTHODOX
FAITH* BY JOHN OF DAMASCUS. CRITICAL TEXT AND STUDY

Edited by Gohar Muradyan

Yerevan - 2023



МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМ. МЕСРОПА МАШТОЦА

**ИОАНН ДАМАСКИН
АРМЯНСКИЕ ПЕРЕВОДЫ**

Том II

ДРЕВНЕАРМЯНСКИЙ ПЕРЕВОД “ИЗЛОЖЕНИЯ ПРАВОСЛАВНОЙ ВЕРЫ”
ИОАННА ДАМАСКИНА. КРИТИЧЕСКИЙ ТЕКСТ И ИССЛЕДОВАНИЕ

Издание подготовила Гоар Мурадян

Ереван - 2023

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈՎՀԱՆ ԴԱՄԱՍԿԱՅԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՎԱԾ ԵՐԿԵՐ

ՀԱՏՈՐ Բ

**ՀՈՎՀԱՆ ԴԱՄԱՍԿԱՅՈՒ «ԱԻԱՆԴՈՒԹԻՒՆ ՈՒՂՂԱՓԱՌ
ՀԱԻԱՏՈՅ» ԵՐԿԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՔՆՆԱԿԱՆ ԲՆԱԳԻՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

Աշխատասիրությամբ Գոհար Մուրադյանի

ՀՏԴ 271.2
ԳՄԴ 86.372
Հ 851

Տպագրվում է Մեքոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ փ. գ. թ. Օլգա Վարդապետյան

Հ 851 Հովհան Դամասկացի, Հայերեն թարգմանված երկեր / Աշխատասիրությամբ Գ. Մուրադյանի. - Եր.: Մատենադարան, 2023, հատոր Բ: Հովհան Դամասկացու «Աւանդութիւն ուղղափառ հաւատոյ» երկի հայերեն թարգմ.: Քննական բնագիր և ուսումնասիրություն, 360 էջ:

Հովհան Դամասկացու հայերեն անտիպ պատկանելի ժառանգությունը մտադիր ենք հրատարակել երեք հատորով: Առաջին հատորը՝ «Դիալեկտիկա» տրամաբանական երկի երկու միմյանցից անկախ թարգմանությունները՝ հունարենից և վրացերենից, լույս է տեսել 2019 թ.:

Սույն հատորում զետեղված՝ Դամասկացու կարևորագույն աստվածաբանական աշխատությունը, ինչպես և երրորդ հատորում տպագրվելիք նրա մնացած երկերը ԺԳ դարի առաջին կեսին վրացերենից թարգմանել է Սիմեոն Պղնձահանեցին:

ՀՏԴ 271.2
ԳՄԴ 86.372

ISBN 978-9939-897-18-9

© Գոհար Մուրադյան, 2023

© Մատենադարան, 2023

DOI 10.57155/VDKE6777

ԱՌԱՋԱԲԱՆ

1. Հայ ֆաղկեդոնականներ

Զ դարում ընդհանրական և Հայ առաքելական եկեղեցու միջև սփռված տեղի ունեցավ, քանի որ վերջինս 554 թ. Դվինի երկրորդ ժողովում հրաժարվեց Քաղկեդոնի ժողովի որոշումները նանաշելուց: Այնուամենայնիվ, որոշ հայեր (հիմնականում արևելյան բյուզանդական գավառների բնակիչներ) Կոստանդնուպոլսի տիեզերական պատրիարքության հետևորդները դարձան: Ժամանակի ընթացքում ֆաղկեդոնական հայերը կորցրին հայկական ինքնագիտակցությունը և ձուլվեցին հույների կամ վրացիների հետ:

Արդի որոշ պատմաբանների կարծիքով՝ հայ ֆաղկեդոնականները միշտ կազմակերպված եկեղեցի են ունեցել¹, իսկ ըստ այլոց՝ ֆաղկեդոնական է եղել հայ հասարակության՝ կայսրության հետ սերտ կապեր ունեցող մի նեղ շերտ միայն²: Նրանք սովորաբար տիրապետում էին երկու կամ երեք լեզվի՝ հայոց ավանդույթների և գրի գերակայությամբ: Հայ հասարակությունից որոշակի առումով օտարված լինելով, հայ ֆաղկեդոնականները, սակայն, երբեք հունական կամ վրացական հանրության լիիրավ անդամներ չեն դարձել: Հայ ֆաղկեդոնականները կոչվել են հայ հոռոմներ կամ ծայթեր³: Վրացական միջավայրում ֆաղկեդոնական հայերը կոչվել են «վրացի», ինչը զուտ դավանական նշանակություն ունեցող բնորոշում էր:

Հայ ֆաղկեդոնականներին վերաբերող աղբյուրներն այնքան էլ շատ չեն, սակայն տեղեկություններ կան Հայ Առաքելական եկեղեցու հետ նրանց հակամարտության մասին: Այսպես, ԺԳ դարասկզբին Վարդան Այգեկցու

¹ В. Арутюнова-Фиданян, “Армяне халкидониты”, *Православная энциклопедия* <https://www.pravenc.ru/text/76122.html>, В. Арутюнова-Фиданян, “К вопросу о существовании халкидонитской Церкви в Армении”, *Вестник ПСТГУ III. Филология*, 2010, вып. 4 (22), сс. 7–22.

² Հ. Բարթիկյան, «*Narratio de Rebus Armeniae*. հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-ֆաղկեդոնական սկզբնաղբյուր», *Բանբեր Մատենադարանի*, 6, 1962, էջ 459:

³ Այդ եզրը և նրա ծայր/ծայր/ծաղ տարբերակները ստուգաբանություն չունի: Նորագույն բացատրության փորձ տես Գ. Ղազարյան, «Հայ հոռոմների ազգային ինքնության խնդրի շուրջ», *Լեվոն ԽԱՉԻԿՅԱՆ. ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱՆ, Նյութեր ակադեմիկոս Լևոն Խաչիկյանի ծննդյան հարյուրամյակին նվիրված հայագիտական միջազգային գիտաժողովի (28-30 հունիսի 2018 թ.), Երևան, 2019, էջ 180-204 (հակ. էջ 193): Գևորգ Ղազարյանը ցույց է տալիս, որ ծայթերը ուղղափառ դավանությամբ հարել են առնվազն Ժ դարում:*

կազմած «Արմատ հաւատոյ» շատագովական ժողովածուն ուղղված է հայ ֆաղկեդոնիկ Վաղաշկերտի, Անիի և Կարսի թեմերի դեմ⁴։ Սակայն պայքարը միշտ չէ, որ սուր բնույթ է կրել։ Այսպես, Պարույր Մուրադյանը նշում է առհասարակ ԺԲ-ԺԳ դարերի հայ գրականության մեջ դավանական հանդուրժողականության և ազգամիջյան համերաշխության դիրքորոշման վկայություններ, որոնք Մխիթար Գոշի «Առ վրացիսն» թղթի գիտական բնագրի բացակայության պատճառով վրիպել էին մասնագետների ուշադրությունից։ Թուղթը պատասխան է բյուզանդական և վրացական միջավայրում շրջանառվող մի դավանական գրության՝ Արսեն Վաշեսձեի «Դոգմատիկոնի» հակամիաբնական ուր դրույթներից մեկին, որ «հայկական աղանդի երեսուն գլուխներն» են։ Այդ գրվածքին խորթ է հանդուրժողականությունը, իսկ նրանում առկա կոշտ որակումները հանդուրժելի չեն եղել նույնիսկ ֆաղկեդոնական թարգմանչի համար. նա մեղմել է դրանք, լրացնելով մեկնություններով և հավելագրություններով⁵։

Հայ ֆաղկեդոնականներն իրենց գրականությունն են ունեցել։ Հայերեն ֆաղկեդոնական գրական երկեր ստեղծվում էին Բյուզանդական կայսրությանը և Վրաստանին սահմանակից վայրերում։ Այդ գրականությունը վատ է պահպանվել և բավարար ուսումնասիրված չէ, ուստի մեր պատկերացումները նրա մասին կցկտուր են և չհամակարգված։ Ամենից հայտնին *Narratio de rebus Armeniae*-ն է՝ պատմական բովանդակությամբ մի երկ, գրված մոտ 700 թ. և կորսված հայերեն սկզբնագրից հունարեն թարգմանված⁶։

«Վրացի» Գրիգոր Բակուրյանը՝ բյուզանդական ֆաղափական գործիչ և գորավար, Բաշկովոյում (Բուլղարիա, 1001 թ.) վրացական Պետրիցիոնի վանքի հիմնադիրը, գրել է վանքի տիպիկոնը (կանոնադրությունը) հունարեն, վրացերեն և հայերեն (վերջին տարբերակը չի պահպանվել) և ստորա-

⁴ П. Мурадян, “Культурная деятельность армян-халкедонитов в XI-XIII веках”, *Второй международный симпозиум по армянскому искусству, сборник докладов*, т. III, Ереван, 1981, с. 329, *Գիրք հաստատութեան և Արմատ հաւատոյ*, կազմեց Շահնե Բահանյա Հայրապետեան, Երևան, 1998։

⁵ П. Мурадян, “Идея конфессиональной толерантности и межнационального согласия в армянской книжности XII-XIII веков”, *ՊԲՀ*, 1995, 2, էջ 188-194։

⁶ G. Garitte, *La Narratio de Rebus Armeniae*, édition critique et commentaire (CSCO, vol. 132, Subsidia, tome 4), Louvaine, 1952, հայերեն թարգմանությունը՝ Հ. Բարթիկյան, «"Narratio de Rebus Armeniae" հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-ֆաղկեդոնական սկզբնաղբյուր», *Բանբեր Մատենադարանի*, 6, 1962, էջ 457-470, ռուսերեն թարգմանությունը՝ В. А. Арутюнова-Фиданян, *Повествование о делах армянских. Источники и время*, Москва, 2004, сс. 150-256։

գրել է հունարեն տարբերակը հայերեն տառերով, ինչը նրա հայկական ծագման ապացույց է⁷:

Հունաստանի Աթոս թերակղզու Լավրայի վանքի մատենադարանում գտնված 1035 թ. գրված մի հունարեն փաստաթղթում վանքի Թեոկտիստոս պոռտոսը՝ առաջնորդը, իրեն հաջորդ է նշանակել և ստորագրել հունարեն, ապա և հայերեն. «Իմ ձեռ/ֆս գրեցի՝ Թեոկտիստոս», այսինքն՝ նա հայ ֆաղկեդոնիկ էր՝ «վրացի»⁸:

ԺԳ-ԺԴ դարերի որոշ ձեռագրերի հիշատակարաններ վկայում են, որ դրանք ֆաղկեդոնական միջավայրի գործեր են⁹:

991/992 թ. հունական Սինաֆսարիոնը՝ Հայսմավուրը թարգմանվել է հայերեն՝ թարգմանչի հիշատակարանով և տոների ցուցակով: Այն դարձավ հայկական Հայսմավուրի հետագա խմբագրությունների կորիզը՝ նրա ծավալի երեք ֆոտոդի չափով, և պահպանվել է միակ՝ 1302 թվականի ձեռագրով՝ Վիենն. 1048¹⁰:

Ծիսական գրքերի իրենց տարբերակները ստեղծելիս հայ ֆաղկեդոնիկ հեղինակներն օգտվել են ոչ միայն թարգմանական աղբյուրներից, այլև հայ հեղինակների երկերից, քանի որ իրենց համարել են նրանց օրինավոր ժառանգներ, «հայրենի գրականության զարգացման մեջ ազգային գրականության ավանդույթների կրողներ: Այլ հարց է, թե ինչպես էր դրան վերաբերում պաշտոնական եկեղեցին և թե ինչպես էին իրենք պայքարում նրա դավանանքի դեմ»¹¹:

Հայ ֆաղկեդոնականների գրական գործունեության մի ուշ վկայություն է Աթենքի Բենակիսի թանգարանում պահվող՝ 1787 թ. Ակնի շրջանի հայ հոռոմների Վանք գյուղի եկեղեցու համար գրված ձեռագիր Ավետարանը (ձեռ. № 34179), որի բնագիրը բյուզանդական տարբերակի հայերեն թարգմանու-

⁷ Н. Я. Марр, “Аркау́н – монгольское название христиан с связи с вопросом об армянах-халкидонитах”, *Византийский временник*, том 12, 1905 (сс. 1-68), с. 20, նաև՝ Ն. Մառ, «Արքաուն», *քրիստոնյաների մոնղոլերեն անվանումը հայ քաղկեդոնականների խնդրի առնչությամբ*, Երևան, 2016, էջ 30-31:

⁸ Հ. Բարթիկյան, «Մեծ Լավրայի առաջնորդ (պոռտոս) Թեոկտիստոսի հայերեն ստորագրությունը», *Բանբեր Մատենադարանի*, 11, 1973, էջ 67-71:

⁹ Г. Бартикян, “О Византийской аристократической семье Гаврас (ΓΑΥΡΑΣ/ΓΑΒΡΑΣ)”, *ՊԲՀ*, 1988, № 1, էջ 163-178:

¹⁰ Հ. Ն. Ակինեան, «Յովսէփ Կոստանդնուպոլսեցի՝ թարգմանիչ Յայսմավուրի (991)», *Հանդէս ամսօրեայ*, 1957, սիւն. 1-12, П. Мурадян, “Культурная деятельность армян-халкедонитов в XI-XIII веках”, с. 326:

¹¹ П. Мурадян, նշվ. աշխ., էջ 327:

թյունն է և տարբերվում է ինչպես Ե դարի թարգմանությունից, այնպես էլ հունարեն բնական բնագրից¹²:

2. Սիմեոն Պղնձահանեցու թարգմանությունները վրացերենից և Հովհան Դամասկացի

Հայ փաղկեղոնական գրականության կարևոր նմուշներ են Սիմեոն Պղնձահանեցու թարգմանությունները վրացերենից: Նրա գրական գործունեությունն անցել է Զաֆարյան Հայաստանում, որ կիսանկախ իշխանապետություն էր Վրացական թագավորության կազմում: Վրաց Թամար թագուհու զորավարներ Իվանե († 1227) և Զաֆարե († 1212) եղբայրները Հայաստանի տարածքի մեծ մասն ազատել էին սելջուկներից. հայկական աղբյուրներում նրանք կոչվում են թագավոր: Իվանեն դավանել է ուղղափառություն, իսկ Զաֆարեն հավատարիմ է մնացել Հայ Առաքելական եկեղեցու դավանանքին:

Սիմեոն Պղնձահանեցին կրոնավոր էր Պղնձահանք վանքում (Լոռվա մոտակայքում գտնվող այդ վանքի նոր՝ Ախթալա անունը վկայված է 1438-ից): 1227 և 1231 թվականների միջև վանքը դարձել է փաղկեղոնական կենտրոն և անցել Վրաց եկեղեցու իրավասության տակ¹³: Այդտեղ Սիմեոնը

¹² Գ. Ղազարյան, «Ակնի Վանք գյուղի 1787 թվականի հայ հոռոմների Ավետարանը», *Բանբեր Մատենադարանի*, 24, 2017, էջ 222-232: Տե՛ս նաև նույն հեղինակի ընդհանուր ակնարկը՝ Gevorg Kazaryan, "The Orthodox Armenians Hay Horoms of Akn", *Վարձք* 2016, 12, էջ 19-16, որտեղ մասնավորապես ներկայացված է մի քանի հունական ծիսական գրքի՝ 19-րդ դարում հրատարակված հայերեն թարգմանություն:

¹³ Գլխավոր եկեղեցին զարդարված է եոխ որմնանկարներով, որ հայ կոթողային գեղանկարչության փայլուն նմուշ են: Վանական համալիրին վերաբերող գրական աղբյուրները բննված են հեռակալ հոդվածում А. Лидов, «Плиндзаханк – Ахтала, история монастыря, ктитора и датировка росписи», *Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը*, խմբ. Պ. Մուրադյան, Երևան, 2000, էջ 266-278: Որմնանկարները ստեղծվել են 1188-ին (կիողմն ամենից հավանական ժամանակն է համարում 1205 թ.) և 1216 թթ. միջև, երբ վանքը փաղկեղոնական է դարձել: Դրանցում կան հայերեն, վրացերեն և հունարեն արձանագրություններ: Որմնանկարները հայ, հույն և վրացի վարպետների համատեղ աշխատանքի արդյունք են, և դրանց պատկերագրության մեջ զուգակցվում են բյուզանդական, հայկական և վրացական ավանդույթների տարրեր: Տե՛ս նաև А. Lidov, *The Mural Paintings of Akhtala*, Moscow, 1991, pp. 93-113: "The Painters and the Represented Trends"; նույնի՝ *The Wall Paintings of Akhtala monastery. History. Iconography, Masters* (M. Dmitry Pozharsky University Publishing House, 2014 (552 pages, 220 illustrations), p. 471: "a monument of Armenian-Chalcedonian art that achieved an original blend of elements drawn from Armenian, Georgian and Byzantine culture." Պարույր Մուրադյանը, սակայն համարում է, որ նման հարտարապետական հուշարձանների վրա հունարեն կամ վրացերեն արձանագրությունների առկայությունը չի նշանակում անպայմանորեն, որ աշխատել են հույն կամ վրացի վար-

թարգմանել է վրացերենից Պրոկղ Դիադոխոսի «Շաղկապ աստուածաբանական»¹⁴, Հովհաննես Սինայեցու «Սանդուղ աստուածային ելից» (ընդ որում, առաջին ֆսան գլուխները հունարենից թարգմանել է Մինասը Տրապիզոնից, իսկ Սիմեոնը շարունակել է), «Պատմութիւն վրաց», «Ժամագիրք հունաց» (այս թարգմանությունը ևս արված է նույն Մինասի մասնակցությամբ)¹⁵:

Նա թարգմանել է նաև ուղղափառ եկեղեցու հայր Հովհան Դամասկացու (675/676-749 թթ.) մի շարք երկեր, հավանաբար ԺԳ դարի 40-ական թթ.¹⁶ մեծակտավ «Գիտության աղբյուրի» առաջին («Դիալեկտիկա») և երրորդ («Ասանդութիւն ուղղափառ հաւատոյ») մասերը՝ զանց առնելով երկրորդը՝ «Հերձվածների մասին»-ը, նաև՝ «Բանք ընդդիմադրական ի ֆակումն հերձուածոց Յակոբիկ Ասորոց», «Ընդդիմադրութիւն Նեստորիանոսի», «Բանք վասն հաւատոյ եւ ընդդիմադրութիւն Նեստորիոսի», «Վասն որ ի Քրիստոս երկու բնութեանց, եւ այլ ամենայն բնութեանց ինքնութեանց համառատեալ», «Ներբողեան ի ննջումն ամենասուրբ Աստուածածնին և միշտ կուսին Մարիամու» (երեք ներբողյաններից առաջինը): Դրանք թարգմանել է Արսեն Իդալթոնլիի կամ Վաչեսձեի (մահացել է 1127 թ.) վրացերեն թարգմանությունից¹⁷:

պետներ: Դրանցում հաճախ հայկաբանություններ են հանդիպում, ինչը վկայում է, որ գրողները հայ են եղել, П. Мурадян, “Культурная деятельность армян-халкедонитов в XI-XIII веках”, էջ 332:

¹⁴ Պրոկղ Դիադոխոս, *Շաղկապ աստուածաբանականը և Իոանն Պետրիժիի Լուծմունք, հայերեն թարգմանություն*, III, հետազոտությունը հավելել և տեխտը տպագրության է պատրաստել Մայա Ռափավան, ֆնական ապարատը և բառարանը պատրաստել են Մայա Ռափավան, Խաթունա Գափրինդաշվիլին և Իրմա Խոսիտաշվիլին, Թբիլիսի, 2016 (գիրքն ունի վրացերեն, հայերեն ու անգլերեն «Ամփոփում» և հայերեն-վրացերեն բառացանկ, բնագիրը կազմվել է երկու ձեռագրի համեմատությամբ՝ ՄՄ 1500 և ՄՄ 1832):

¹⁵ Հ. Ն. Ակիմեան, *Սիմեոն Պղնձահանեցի եւ իւր թարգմանութիւնները վրացերէնէ, Վիեննա, 1951*, էջ 8-9, 132, 190:

¹⁶ Նույն տեղում, էջ 57-101:

¹⁷ Գոյություն ունի վրացերեն ևս մի թարգմանություն՝ էփրեմ Մցիրեի ձեռնով (մահացել է 1101/3 թ.): «Ասանդութիւն ուղղափառ հաւատոյ» երկի երկու վրացերեն թարգմանությունները հրատարակել են մեկ զբոմով Ռ. Միմինոշվիլին և Մ. Ռափավան: Այս տեղեկությունները մեզ սիրով տրամադրել է Խաթունա Գափրինդաշվիլին. որի համար հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը: Գրքի անգլերեն վերնագիրն է St. John Damascus, *Exact Exposition of the Orthodox Faith*, the two ancient Georgian translations of St. Ephrem Mtsire and St. Arsen of Iqalto, edited by R. Miminoshvili and M. Rapava with an introduction and notes by M. Rapava, Tbilisi, 2000:

Հովհան Դամասկացու հայերեն ձեռագրերում նրան են վերագրված նաև հետևյալ երկերը՝ «Յաղագս հոռվմայեցոց»¹⁸, «Պատասխանի առ հրեայս»¹⁹ և «Պատասխանի առ հայս» (Դամասկացու անունով միակ հրատարակված երկն էր, երբ հանձն առանք նրա երկերի հրապարակումը²⁰։ հենց դրան ի պատասխան է Մխիթար Գոշը գրել վերը հիշատակված «Առ վրացիսն» թուղթը)։ Հիշատակվում են նաև հայ հոռոմների ժամագրքի մեջ մտնող որոշ երգեր²¹։ Ներսես Լամբրոնացու վկայությամբ՝ «Դարձեալ և հոռոմք, զի դժուարին և ոչ որպէս այժմ, քաղցրալուր ունէին զեղանակս յառաջնոցն. Գերմանոս պատուական նոցա հայրապետ եղեալ ի ժամանակս Հերակլի և Կոստանդեայ արքայից, հանդերձ Յովհաննոս և Կոզմայի կրօնաւո-

¹⁸ Այն հրատարակել ենք վերջերս՝ Գ. Մուրադյան, «Հովհան Դամասկացուն վերագրված «Յաղագս հոռվմայեցոց» երկը», *Բանբեր Մատենադարանի*, 30, 2020, էջ 505-527։ Երկը, որում հունական եկեղեցում ընդունված կարգերի տեսանկյունից քննադատվում է լատինական եկեղեցին, թարգմանված է հունարենից, հավանաբար՝ Երուսաղեմի պատրիարք Հովհաննեսի անունով պահպանված «Սինոդիկոնից»։ Հովհաննեսը Երուսաղեմի ութերորդ (ԺԲ դարի սկիզբ) կամ իններորդ (նույն դարի կեսեր) պատրիարքն է։ «Սինոդիկոնի» հունարեն սկզբնագիրը պահպանվել է Միլանի Ամբրոսյան գրադարանի երկու ձեռագրում (Ambr. Gr. 1 et 303) և հրատարակված չէ։

¹⁹ Նախնական ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ երկը թարգմանված է հետևյալ, հավանաբար 6-րդ դարի, հունարեն գրվածից՝ *Anonymus Dialogus cum Iudaeis saeculi ut videtur sexti*, editio princeps, ed. J.M. Declerck, Turnhout: Brepols, 1994, pp. 3-111 (Corpus Christianorum. Series Graeca 30)։ Այն պահպանվել է 6-րդ դարի երկրորդ կեսի՝ Աթոսի Վատոպեդի վանքում պահվող միակ ձեռագրով (cod. Vatoped. 236)։ ԺԱ դարում հաղորդված երկը թարգմանել Արսեն Վաչեսձե Իփալթեղին և մացրել իր «Դոգմատիկոն» աստվածաբանական ժողովածուի մեջ, որից էլ թարգմանվել է հայերեն։ Դամասկացուն է վերագրված միայն հայերեն տարբերակը։

²⁰ Բ. Կիվեսերեան, «Հին էջեր. Յովհան Դամասկացի եւ հայ եկեղեցին», *Լոյս շաբաթաթերթ*, Կոստանդնուպոլիս, 1905-1906։ Հրատարակության Հիմքում մեկ ձեռագիր է՝ Ղալաթիայի Ազգային մատենադարանի ձ. 77, քր. 1-86։ ՄՄ63 (ԺԶ դ., քր. 198ա-229բ), ՄՄ 5495 (1696-1697 քր., քր. 92ա-107բ՝ թերի բնագիր) և ՄՄ 5859 (ԺԷ դ., քր. 374ա-440բ) նույնպես պարունակում են երկը։ Քննական հրատարակությունը՝ ևս 4 ձեռագրի ներգրավմամբ, տե՛ս հետևյալ գրքում՝ Պ. Մուրադյան, *ԺԱ-ԺԳ դարերի հայ-վրացական դավանական խնդիրները և Մխիթար Գոշի «Առ վրացիսն» թուղթը*, Սբ. Էջմիածին, 2011, էջ 77-170։ Դամասկացու «Դիալեկտիկայի» մեր հրատարակության (տե՛ս ստորև, ծան. 27) առաջաբանում (էջ 15, ծան. 2) մենք թյուրիմացաբար չենք նշել այս վերջին հրատարակությունը։

²¹ Հ. Ն. Ակիմեան, *Սիմեոն Պոնտականի...*, էջ 95։ Հեղինակը (էջ 189-223) նշում է հունական Շարակնոցը պարունակող երեք ձեռագիր՝ Վիեն. 630 (1584 թ.), Վնտկ. 886 (մինչև 1351 թ.) և նախկին Բրիտանական թանգարանի, այժմ Բրիտանական գրադարանի Օր. 2611 (Ակիմյանի ենթադրությամբ՝ ԺԳ դարի)։

րօֆ ի Դամասկոսէ՝ յեղաշրջեցին գնոյն ի դիւրալուր և ախորժակս լսողաց և բազմապատկապէս անեցուցին զերգս տօնականս»²²:

Դամասկացու հայերեն ամենավաղ ձեռագիրը եղմ. 1297-ն է, գրված 1363 թ.: Այն պարունակում է նշված երկերից չորսը՝ «Դիալեկտիկա», «Աւանդութիւն ուղղափառ հաւատոյ», «Պատասխանի առ հրեայս»²³ և «Ընդդիմադրութիւն Նեստորիանոսի»: Կան ձեռագրեր, որոնք պարունակում են բոլոր նշված գործերը՝ բացի Աստվածածնի ներբողից՝ ՄՄ 63 (ԺԶ դ.), ՄՄ 3156 (ԺԸ դ.), ՄՄ 5859 (1613 թ.), Վնտկ. 1598, ուրիշները՝ երեւական, երկուական կամ մեկական երկ:

Հովհան Դամասկացուն է վերագրվել նաև «Պատմութիւն Բարադամու եւ Յովասափու», որ Բուդղայի՝ հավանաբար վրացական միջավայրում 10-րդ դարում Բրիստոնեացված պատմությունն է, թարգմանված հունարեն (որը և վերագրվել է Դամասկացուն), կամ գրվել է հունարեն 9-րդ դարում, հունարենից 1048 թ. թարգմանվել է լատիներեն և տարածվել արևմտյան աշխարհում: Նրա հայերեն թարգմանությունը հավանաբար արվել է հունարենից. այն գոյություն ունի համառոտ և ծավալուն²⁴ խմբագրություններով²⁵, սակայն դրանք որևէ աոնչություն չունեն Հովհանի երկերի ձեռագրական ավանդույթի հետ: Համառոտ խմբագրությունն ընդգրկվել է Հայսմավուրֆի մեջ և պահպանվել բազմաթիվ ձեռագրերով: ԺԵ դարում Առաքել Բաղիշեցին գրել է պատմության չափածո տարբերակը²⁶:

²² Սրբոյն Ներսէսի Լամբրոնացոյ *Խորհրդածութիւնք ի կարգս եկեղեցւոյ և մեկնութիւն խորհրդոյ պատարագին*, Վենետիկ, 1847, էջ 185: Այս տեղեկության համար պարտական ենք Գևորգ Դազարյանին:

²³ Ակիմյանն այն համարում է Հովհանի գրչից ելած գործ, նշվ. աշխ., էջ 90-92:

²⁴ Ծավալուն խմբագրությունը մեզ է հասել մեկ ձեռագրով (ՄՄ 732, 1322 թ.) և հրատարակվել է՝ *Նկարագրութիւն հոգևորական վարուց Յովասափու որդւոյ թագաւորին Հնդկաց*, աշխատասիրեց, Մեսրոպ վ. Տէր-Մովսէսեան, Վաղարշապատ, 1897:

²⁵ Հունարեն բնագրից լուրջ տարբերությունները ստիպում են ենթադրել, որ թարգմանությունը սերում է մեկ այլ՝ չպահպանված խմբագրությունից, տե՛ս Փ. Անթապեան, «Պատմութիւն Բարադամու եւ Յովասափու. Հայերէն թարգմանութեան նորայայտ մի հնագոյն ընդօրինակութեան աղբիւ», *Սիօն* 1979, յունուար-փետրուար (էջ 25-28), էջ 26: Նորահայտ խմբագրությունը (եղմ. 3120, ընդօրինակված հավանաբար ՄՄ 732-ից մեկ դար անց) հրատարակվել է առանձին՝ *Յովասափու եւ Բարադամ, Պատմութիւն և խրատք Խիկարայ իմաստնոյ*, հրտ. Փ. Անթապեան, Երուսաղեմ, 1980: Կոնիքիթի կարծիքով թարգմանությունը կարող է սերել սառնեւրեն տարբերակից, տե՛ս F. Conybeare, "The Barlaam and Josaphat Legend in the Ancient Georgian and Armenian Literatures," *Folk-Lore. Transactions of the Folk-Lore Society*, 7, 1896, pp. 101-142:

²⁶ Տե՛ս հետևյալ գրքում՝ *Երազահան եւ Երազացոյց յորում գտանին եւ բանք խրատու եւ խաղբ ինչ մանկւոյ ի խրատ եւ ի զուարճութիւն հայ մանկանց*, Կոստանդնուպոլիս, 1865, էջ 1-51՝ «Տաղ ի վերայ Յովասափու թագաւորի որդւոյ Արենեւայ թագաւորին հնդկաց»:

Հովհան Դամասկացու անտիպ պատկանելի ժառանգությունը ծագում էնմ հրատարակել երեք հատորով: Բացի աստվածաբանական գրվածքներից, այն պարունակում է «Դիալեկտիկա» տրամաբանական երկի երկու միմյանցից անկախ թարգմանություն՝ հունարենից (Բագարատ Մամիկոնյանի) և վրացերենից (Սիմեոն Պղնձահանեցու): Դրանց բնական բնագրերը կազմում են առաջին հատորը²⁷: Սույն հատորին հետևելու է երրորդը՝ «Բանմ ընդդիմադրականի ի փակումն հերձուածոց Յակոբիկ Ասորոց»²⁸, «Ընդդիմադրութիւն Նեստորիանոսի», «Բանմ վասն հաւատոյ եւ ընդդիմադրութիւն Նեստորիոսի» (ձեռագրերում վերջին ճառն ասես նախորդի շարունակությունն է, չունի առանձին վերնագիր, այլ պարզապես սկսվում է զարդագիր տառով, և նրանց միջև մեկ տողի չափ տարածություն է բաց թողնված), «Վասն որ ի Քրիստոս երկու բնութեանց, եւ այլ ամենայն բնութեանց ինքնութեանց համառատեալ», «Ներբողեան ի ննջումն ամենասուրբ Աստուածածնին և միշտ կուսին Մարիամու» ճառերով:

3. «Աւանդութիւն ուղղափառ հաւատոյ» երկի բնագիրը

Հովհան Դամասկացու գլխավոր աստվածաբանական երկում՝ «Աւանդութիւն ուղղափառ հաւատոյ» (Ἐκδοσις ἀκριβῆς τῆς ὁρθοδόξου πίστεως) արժարծվում են այդ հավատի հիմնախնդիրները՝ Աստված և Երրորդություն (գլուխներ 1-14 = Ա-ԺԴ), տեսանելի ու անտեսանելի արարածներ՝ հրեշտակներ, սատանա ու դևեր, տեսանելի աշխարհ, դրախտ, մարդն իր ունակություններով, նախախնամություն (գլուխներ 15-44 = ԺԶ-ԽԵ), Քրիստոս և փրկչագործություն (45-81 = ԽԶ-Ձ), այլևայլ հարցեր՝ մկրտություն, խաչի պաշտամունք, նշխարներ ու պատկերներ, աղոթք, հաղորդություն, Աստվածածինը, Սուրբ Դիրք, մանիքեացիների ու հրեաների բնադատություն, կուսություն, թլփատություն, Նեոն (82-99 = ՁԲ-ՂԹ), հարություն (100 = Ճ):

²⁷ Հովհան Դամասկացու «Դիալեկտիկա» երկի հայերեն թարգմանությունները, քննական բնագրեր և ուսումնասիրություններ (Հովհան Դամասկացի, Հայերեն թարգմանված երկեր, հատոր Ա), Երևան, 2019 (https://www.matenadaran.am/ftp/el_gradaran/G.Muradyan-Dialektika.pdf): Հատորում զետեղված է նաև հունարենից թարգմանության համառոտված տարբերակը: Այն ունի նաև հավելված՝ Դրիգոր Երուսաղեմացու կազմած հունարենից թարգմանված ամանուն փիլիսոփայական սահմանումների ժողովածուների բնական բնագրեր:

²⁸ Սկզբնագրից խոշոր հատվածներ են բաց թողնված՝ հունարեն բնագրի 1.18-22, 1.25-33, 4.1.1-4.2.79, 5.2.1-5.2.40, 6.2.1-77, 7.2.1-50 պարբերությունները. այս փաստը «համառատեալ» բառով նշված է վերնագրում, և այն նկատել է արդեն Ալիմյանը, տե՛ս Ալիմյան, նշվ. աշխ., էջ 94:

Հունարեն սկզբնագրի բնական բնագիրը հրատարակության պատ-
րաստած Բոնիֆատիոս Քոթթերը նշում է, որ Դամասկացին ինքնուրույն
մտքեր գրեթե չի արտահայտել, այլ ամփոփել է նախորդների գաղափարնե-
րը՝ երբեմն նաև հիշատակելով նրանց անունները: Երրորդության, Բրիստո-
սաբանության, մկրտության, հրեշտակների խնդիրները բննարկելիս հետևել է
Գրիգոր Նազիանզացուն, Երրորդության առիթով՝ նաև Աթանաս Ալեքսանդ-
րացուն, Երրորդության և Բրիստոսաբանության առիթով՝ Կյուրեղ Ալեքսանդ-
րացուն, Քրիստոսի կամփի և ներգործության առիթով՝ Մաքսիմոս Խոստովա-
նողին, Երրորդության և ներգործության առիթով՝ Գրիգոր Նյուսացուն, Աստ-
ծո անվան և հրեշտակների առիթով՝ Դիոնիսիոս Արիոպագացուն, առանձին
հարցերում՝ Հովհան Ոսկեբերանին: Այն շարադրված է պարզ ու հստակ ո-
ճով²⁹: Երկը մեծ ազդեցություն է թողել հետագայի ուղղափառ աստվածա-
բանական մտքի վրա: Նշվում են նրա արաբերեն և հին բուլղարերեն (այ-
սինքն՝ հին սլավոներեն) թարգմանությունները՝ 10-րդ դարի, 11-րդ դարի
վրացերեն և 13-րդ դարի հայերեն թարգմանությունները³⁰, լատիներենները՝
Կերբանուսինը (միայն 45-52 գլուխներ) մոտ 1145 թ., Բուրգունդիո Պիզա-
ցունը 1150 թ., որը 1235 և 1239 թթ. միջև վերամշակել է Ռոբերտ Գրոսսե-
տեստեն:

Հունարեն բնագիրը բաղկացած է 100 գլխից: Թարգմանության մեջ, ո-
րը նույնպես 100 գլուխ ունի, բաց է թողնված 16. Սերի ծղիւսօրցւյաճ «Արար-
չագործության մասին» կարճ գլուխը, և գլուխները մեկով հետ են ընկնում՝
մինչև ԶԱ. գլուխը. վերջինս համապատասխանում է 81b գլխին (որը գլուխ
52-ի՝ ԾԱ-ի մի տեսակ վերափոխված տարբերակ է, ուստի հավելում է հա-
մարվում), և դրանից հետո հունարեն և հայերեն 82-100 գլուխների համար-
ները համընթաց են:

Հունարեն բնագրի 12b (Ἔτι περὶ θείων ὀνομάτων ἀκριβέστερον –
«Դարձյալ աստվածային անունների մասին՝ ավելի հստակ»), 23b (Περὶ
πελαγῶν – «Ծովերի մասին»), 47b (անվերնագիր) գլուխները, որոնք ուշ ներ-
մուծված են համարվում, մեր թարգմանության մեջ չկան: Բայց 22b գլուխը՝
«Քամիների մասին», թարգմանված է որպես 22 (= ԻԱ. «Վասն օդոյ եւ հող-
մոյ») գլխի շարունակություն՝ առանց բաժանման և առանձին վերնագրի:
25b անվերնագիր գլուխը թարգմանված է որպես 25 (= ԻԴ. «Վասն դրախ-
տին») գլխի շարունակություն:

²⁹ *Die Schriften des Johannes von Damaskos*, vol. 2, ed. B. Kotter, Berlin – New York, 1973
(Patristische Texte und Studien, Bd 12), *Expositio fidei*, SS. XXVII-XXX.

³⁰ Նույն տեղում, էջ XLIII-XLIV:

Հայերեն ԶԶ. գլուխը պարունակում է մեկ, իսկ և ԶԹ-ն՝ երկու պարբերություն, որոնց համապատասխան հատվածներ հունարենում չկան: Դրանք բովանդակությամբ և ոճով միանգամայն համահունչ են մնացած բնագրին, սակայն դրանց ծագումը մեզ չի հաջողվել պարզել: Հատկապես ուշագրավ է վերջին հատվածի վերջին նախադասությունը, ըստ որի՝ Դուկաս ավետարանիչը Քրիստոսի պատկերներ է նկարել. «Նաեւ Դուկաս անտարանիչ կենդանագիր գորով, յամենայն տեղիս դրոշմէր զպատկերն Քրիստոսի ի տախտակս թողով յեկեղեցիս»³¹: Վրացերեն երկու թարգմանություններից մեկում՝ Եփրեմ Մցիրիի, համապատասխան տեղում ասվում է, որ Դուկաս Ավետարանիչը Աստվածամոր պատկերն է նկարել և նվիրել եկեղեցուն երկրպագելու համար³²:

Վիենն. 648 ձեռագրում կա մի փաղվածք՝ վեց գլուխ, որ Ակինյանը հրատարակել է որպես Հովհան Օձնեցու գրվածք³³: Նրա կարծիքով՝ դա Խոսրովիկ թարգմանչի հիշատակած՝ Օձնեցու «Բանին մարմնատրոսեան» մասին գրությունն է³⁴: Ձեռագիրը հիմնականում Աթանաս Աղեփսանդրացու տասնյոթ հադի հավաքածու է, հիշատակարան չունի, Ակինյանի կարծիքով՝ հավանաբար ԺԴ դարի է: 4ա-9ա էջերին երկու անանուն փաղվածք կա Հովհան Օձնեցու «Ատենաբանութիւն» գրվածքից: 10բ-14բ էջերին նշված վեց հատվածներն են, որոնք իրականում Հովհան Դամասկացու «Ատենաբանութիւն»-ից³⁵ փաղված հետևյալ գլուխներն են՝ առանց մյուս ձեռագրերից էական տարբերությունների.

³¹ Զ. դարից ի վեր Դուկասին համարել են Աստվածածնի պատկերների հեղինակ, *Православная энциклопедия*: «Луга», <https://www.pravenc.ru/text/2110770.html>: Այդ մասին վկայություն կա հենց Դամասկացու վերագրվող մի նամակում. *Epistula ad Theophilum imperatorem de sanctis et venerandis imaginibus*, PG 95, p. 349.43-49. «Քանզի աստվածային առաջյալ և ավետարանիչ Դուկասը տախտակի վրա նկարչական ներկերով նկարեց ամենասուրբ Մարիամ աստվածամոր աստվածային և սրբազան պատկերը, քանի դեռ նա ողջ էր երուսաղեմում և գտնվում էր սուրբ Սիոնում, և՛ ասես հայելու մեջ պատկերված, թողեց հետագա սերունդներին»:

³² Տե՛ս ծան. 17-ում նշված հրատարակությունը, էջ 265-266: Այս տեղեկությունը մեզ սիրալիր կերպով տրամադրել է Խաթունա Գափրինդաշվիլին, և մենք երախտապարտ ենք նրան:

³³ Ն. Ակինեան, «Յովհաննէս կաթողիկոս Օձնեցոյ նորագիտ գրուածք մը», *Յուշարձան, Գրական ժողովածոյ առթիւ 110-ամեայ յոբելիւնի հաստատման Միսիթարեան միաբանութեան ի Վիեննա (1811-1911) և 25-ամեայ տարեշրջանի «Հանդէս ամսօրեայ» ուսումնաթերթի (1887-1911)*, Վիեննա, 1911, էջ 336-344: Ակինյանի կարծիքով, այս անանուն հատվածները հիշեցնում են Օձնեցու «Ընդդէմ երկուքականաց» հադը, անգամ բառացի նմանություններով:

³⁴ Գ. Յովսէփեան, *Խոսրովիկ թարգմանիչ, Վաղարշապատ, 1899-1903*, էջ 11-12:

³⁵ Այդ փաստը նկատել և մեզ ամտնացույց է արել Գևորգ Ղազարյանը, ինչի համար հայտնում ենք նրան մեր խորին շնորհակալությունը: Նրա ենթադրությունը հիմնված է եղել «Ատենա-

ԾԴ. Վասն տեսակի և վասն յանհատիցն գոյ տեսանելի բնութեան և վասն բաժանման Բանի և միատրութեան և վասն մարմնատրութեան Տեառն, և թէ որպէս ասելի է «մի բնութիւն մարմնացելոյ Բանին Աստուծոյ»:

ԾԲ. Դիմադրութիւն ասացողացն, եթէ ոչ գոյ բնութիւն առանց անձին:

ՀԱ. Վասն ապականութեան և անապականութեան:

ՀԷ. Առ որս հարցանեն, թէ անձն Քրիստոսի անել է եթէ եղական:

ՀԸ. Եթէ յորմէ և երբ կոչեցաւ Քրիստոս:

ՀԴ. Վասն ընդ աշմէ Հօր նստելոյն:

Խնդրո առարկա երկի բնագրի լեզվական նկարագրի բնութիւնը որոշ լոյս կարող է սփռել թարգմանության և հետագա ճակատագրի վրա:

4. Սխալ կամ տարօրինակ թարգմանության դեպքեր

Այդպիսի դեպքերը շատ չեն, սակայն աչքի են զարնում: Նշենք հիմնականները:

Հունարեն բանական թվականները հաճախ թարգմանված են դասական թվականներով. օրինակ՝ տրեփ (49.8, 60.51) – «երրորդ» (ԽԸ., ԾԹ.), αἱ δύο θάλασσαι (23.22) – «երկրորդ ծով» (ԻԲ.), τῶν τριῶν ὑποστάσεων (36.113) – «երրորդ անձնատրութեանն» (ԼԵ.), καὶ ἀμφοτέροι (87.20) – «երկրորդն» (ԶԷ.), ἀνέκαστ' τρισάγιον (54.1, 2) – «յերրորդ սրբասացութիւն» (ԾԳ.),

πόλον ἔνδοον ἄλλου πόλου (21.113-114՝ «չրջան՝ մէկ այլ շրջանի ներսում») – «փաղափ ի միջի այլում փաղափ» (Ի.)՝ πόλος շփոթվել է πόλις բառի հետ,

τῶν περιοίκων (22b.9՝ «չրջակա բնակիչների») – «ի պարսից» (ԻԱ.), κέντρον (21.168՝ «կենտրոն») – «խայթոց» (Ի., բառն ունի նաև այդ իմաստը),

κήτη (23.55՝ «մեծ հրեշավոր ձուկ, կետ») – «գազան» (ԻԲ.),

ἄτομον (48.4՝ սպասելի էր «անհատ») – «հատոր» (ԽԷ.),

χολή (21.69, 26.63, 66, 30.2, 3՝ «մաղձ») – «փաղց» (Ի., ԻԵ., ԻԹ.), χόλος (30.3, 7՝ «մաղձ») – «փաղցատրութիւն», «ղառնութիւն» (ԻԹ.):

բանության» բովանդակությանը բաշխանոթ լինելու վրա, քանի որ հայերեն թարգմանությունը մինչ օրս միայն ձեռագրերում էր:

5. Խմբագրական աշխատանք՝ հունարենի հետ համեմատությամբ և լեզվական առանձնահատկությունները

«Դիալեկտիկան» ուսումնասիրելիս նկատել էինք, որ մի հետագա խմբագիր համեմատել է թարգմանությունը հունարեն սկզբնագրի հետ և ձգտել կարևոր եզրերի դիմաց օգտագործած «անսովոր» բառերը փոխարինել դրանց՝ հին թարգմանություններից հայտնի համարժեքներով³⁶։ Նման խմբագրական աշխատանք, մի փոքր պակաս նկատելի, առկա է նաև «Ավանդության» բնագրում, օրինակ՝ գլուխների վերնագրերում։ Այսպես, գլուխներին անմիջապես նախորդող որոշ վերնագրեր խմբագրված տարբերակն են ներկայացնում և ավելի ճշգրիտ են համապատասխանում հունարեն նախօրինակներին, անգամ պատճենված բառեր են պարունակում, իսկ բնագրից առաջ դրված ցանկում՝ նախնականը (նույնպիսի պատկեր է նաև «Դիալեկտիկայում»), օրինակ՝

«Ա. Որպես զի անհասանելի է Աստուած, եւ եթէ ոչ է պարտ քննել եւ խնդրել՝ զոր ոչ տուեալ է մեզ ի մարգարէիցն եւ յառաքելոցն» (1. Ὅτι ἀκατάληπτον τὸ θεῖον καὶ ὅτι οὐ δεῖ ζητεῖν καὶ περιεργάζεσθαι τὰ μὴ παραδεδομένα ἡμῖν ὑπὸ τῶν ἀγίων προφητῶν καὶ ἀποστόλων), իսկ ցանկում՝ «Յաղագս անհասանելի գոյ Աստուծոյ. և թէ ոչ է պարտ քննել և խնդրել արտաքին գրոց»,

«ԻԶ. Վասն նաշակացն, որ են համբ» (27 Περὶ ἡδονῶν), իսկ ցանկում՝ «Վասն համոցն»,

«ԼԶ. Վասն ներգործութեան» (37 Περὶ ἐνεργείας), իսկ ցանկում՝ «Վասն գործականութեան»:

Այդպես է նաև Զ., Լ., ԿԷ., ԿԸ. գլուխների պարագայում:

Ավելի հաճախ գլուխների վերնագրերը համապատասխանեցված են հունարենին, իսկ ցանկում ձեռագրերը տարբեր պատկեր են ներկայացնում: Եղմ. 2397 ձեռագրում ցանկ առհասարակ չկա: ՄՄ 63 և ՄՄ 116 ձեռագրերում հին տարբերակն է, իսկ ՄՄ 5789 ձեռագրի տարբերակը խմբագրվածն է և համապատասխանում է գլուխներից առաջ դրվածներին, օրինակ՝

«ԺԱ. Վասն մարմնապէս ի վերայ Աստուծոյ սասցելոցն» (11. Περὶ τῶν σωματικῶς ἐπὶ θεοῦ λεγομένων), ցանկում՝ ՄՄ 5789՝ նույնը, ՄՄ 63, ՄՄ 116՝ «Վասն մարմնաբար սասցուածոց զաստուծոյ»,

³⁶ Հմմտ. Հովհան Դամասկացու «Դիալեկտիկա» երկի հայերեն թարգմանությունները, էջ 105-112:

«ԺԴ. Յատկութիւնք աստուածային բնութեանն» (14. Τὰ ἰδιώματα τῆς θείας φύσεως), ցանկում՝ ՄՄ 5789՝ նույնը, ՄՄ 63, ՄՄ 116՝ «Վասն ինքնութեանց աստուածային բնութեանն»,

«ԼԹ. Վասն գործեցելոցն» (40.1 Περὶ τῶν γινομένων), իսկ ցանկում՝ ՄՄ 5789՝ նույնը, ՄՄ 63, ՄՄ 116՝ «Վասն եղանակաց»:

«ԽԱ. Վասն այնոցիկ, որք ոչ ի ներքոյ մեր են» (42. Περὶ τῶν οὐκ ἐφ' ἡμῖν), իսկ ցանկում՝ ՄՄ 5789՝ նույնը, ՄՄ 63, ՄՄ 116՝ «ԽԱ. Վասն որք ոչ ընդ մեամք են»:

«ԼԴ. Վասն որ ի ներքոյ ներառամադրական բան եւ արտաքին՝ արտաբերական» (35. Περὶ ἐνδιαθέτου λόγου καὶ προφορικοῦ), իսկ ցանկում՝ ՄՄ 5789՝ նույնը, ՄՄ 63, ՄՄ 116՝ «ԼԴ. Վասն որ ի մեզէն դրի բան». «ներառամադրական» բառը պատճենված է ἐνδιαθέτου-ից:

Այդպէս է նաև՝ Գ., Ժ., ԺԵ., ԺԸ., ԼԳ., ԼԸ., Ի., Խ., ԽԳ.-ԽԵ., ԽԹ., ԾԱ., ԾԲ., ԾԵ., ԾԷ.-ԿԲ., ԿԵ., ԿԶ., ԿԹ.-ՀԳ., ՀԶ.-ՁԱ., ՁԳ., ՁԴ., ՁԶ.-ՁԹ., ՂԳ.-ՂԶ., Ճ. գլուխների պարագայում:

ՀԱ. գլխի ցանկի վերնագիրը (ըստ ՄՄ 63, ՄՄ 116-ի)՝ «Վասն ապականութեան եւ ցնդման», ավելի է ճիշտ է համապատասխանում 72. Περὶ φθορᾶς καὶ διαφθορᾶς վերնագրին, իսկ գլխին նախորդող և ցանկի ՄՄ 5789-ի տարբերակն է «Վասն ապականութեան եւ անապականութեան». սա ճիշտ թարգմանությունն չէ, քանի որ հունարեն երկու բառը հականիշներ չեն, այլ՝ գրեթե հոմանիշներ:

Որոշ վերնագրեր երկու տեղում էլ նույնն են՝ Է., ԺԶ., ԺԷ., ԻԲ., ԻԴ., ԻԵ., ԻԷ.-ԻԹ., ԼԲ., ԽԸ., ԿԳ. (երկուսն էլ խմբագրված տարբերակն են թվում), ԿԴ., ՀԴ., ՁԲ., ՁԵ., Ղ., ՂԷ.-ՂԹ.), կամ գրեթե նույնը (Բ., Դ., Ը., Թ., ԺԲ., ԺԴ., ԻԳ., ԾԶ., ՀԵ., ՂԱ., ՂԲ.):

Բացառիկ է ԽԷ. գլխի վերնագիրը. այն պարունակում է նույն հունարեն վերնագրի (48. Περὶ τοῦ τρόπου τῆς ἀντιδόσεως) երկու իրար հաջորդող թարգմանությունն՝ «ԽԷ. Տեսակք ի միմեանս տալոյ արինակք փոխատրութեան միմեանց տալոյ»: Երկրորդ մասը («արինակք... տալոյ») ակնհայտորեն ձևված է հունարենի հետևությամբ, «փոխատրութեան» բառն էլ պատճենված է ἀντιδόσεως-ից: Յանկի ՄՄ 63, ՄՄ 116-ի տարբերակն է «Վասն տեսակի առ միմեանս դրութեանն», որը չի նույնանում, սակայն մոտ է բուն վերնագրի առաջին կեսին՝ «Տեսակք ի միմեանս տալոյ», իսկ ՄՄ 5789-ի տարբերակն է «Տեսակք ի միմեանս տալոյ արինակք միմեանս տալոյ»՝ մեկ բառի բացակայությամբ նույնանալով բուն բնագրի հետ:

Նման դեպք է հետևյալը՝ *πληρώσας τὴν παλαιὰν διαθήκην* (86.50) – «այնի կատարեաց զհինն արեւնն և ի լնույն զհինն արինացն» (ՁԶ.), որում նույն միտքը կարծես երկու անգամ է արտահայտված՝ մի փոքր փոխված բառերով: Այսինքն՝ խմբագիրը նորովի է թարգմանել հատվածը, և նոր տարբերակը տեղ է գտել հնի կողմին:

Անհասկանալի է *Περὶ οἰκειώσεως* (69) վերնագրի թարգմանությունը «ԿԼ. Վասն բաժանման եւ հատման», մինչդեռ ցանկում՝ «Վասն բաժանման եւ միատրելոյ» (ՄՄ 63, ՄՄ 116-ում, իսկ ՄՄ 5789-ում այն նույնական է գլխի վերնագրի հետ), այնինչ *οἰκειώσις* նշանակում է «յուրացում», և մասնավորապես՝ Բանի՝ մարդկային մարմին ընդունելը³⁷: Կարելի է ենթադրել, որ հունարենում, կամ վրացերենում, եղել է «Վասն բաժանման եւ միատրելոյ» վերնագրին համապատասխանող վերնագիր:

Բուն բնագրում որոշ տարբերություններ ևս թվում են նախնական թարգմանություն, իսկ մյուսները՝ հունարենին համապատասխանեցված.

περικλείονται (20.3-4) = «պարփակին» (ՄՄ 5789) // ՄՄ 63 ՄՄ 116 եղմ. 1297՝ «փակին» (ԺԹ.),

Φειδών (23.38) = «Փիսոն» (եղմ. 1297, ՄՄ 5789) // ՄՄ 63 ՄՄ 116՝ «Փեսոյն» (ԻԲ.),

ὕγρον (26.65) = «գէշ» (եղմ. 1297, ՄՄ 5789) // ՄՄ 63 ՄՄ 116՝ «կալուլ» (ԻԵ.),

τοῦ λογιζμοῦ (30.12) = «խորհրդոց» (ՄՄ 5789) // ՄՄ 63 ՄՄ 116 եղմ.

1297 «ստին» (ԻԹ.),

τῇ σαρκώσει (55.65) = «մարմնանալոյն» (Վիեն. 648) // ՄՄ 5789 եղմ.

1297 ՄՄ 63 ՄՄ «մարդանալոյն» (ԾԴ.),

ἀπαθοῦς (70.4) = «անկիրս» // ՄՄ 116 «անշարշարելի» (ԿԹ.),

ψυχὴ παθητὴ (70.7) = «հոգի ախտակրա[կա]ն» // ՄՄ 116 «հոգի պարտական ցաւոց» (ԿԹ.),

συναλγεῖ καὶ συμπάσχει τῷ σώματι (70.8) = «թէպէտ եւ ախտակցեալ կրակցի մարմնոյն» // ՄՄ 116 «թէպէտ եւ վշտակից լինիցի մարմնոյն կրելոյ գցաւս իւր» (ԿԹ.):

ՄՄ 116 ձեռագրում նկատել ենք ուղղումներ՝ ի համապատասխանեցում հունարենին և մյուս ձեռագրերի ընթերցումներին³⁸.

ἰδιότης (8.282) = «յատկութիւն» (եղմ. 1297) // ՄՄ 63 ՄՄ 116 ՄՄ 5789՝ «ինքնութիւն», ՄՄ 116-ում՝ ուղղված «յատկութիւն» (Ը.),

³⁷ G.W.H. Lampe, *A Patristic Greek Lexicon*, Oxford: Clarendon press, 1961, p. 938, s.v., 7.

³⁸ «Գիպլեկտիկայի» բնագրում ՄՄ 116 ձեռագրում այդօրինակ ուղղումները բազմաթիվ են և շատ տեսանելի՝ տողից վեր կարմիր թանափով, տե՛ս Հովհան Դամասկացու «Գիպլեկտիկա» երկի հայերեն թարգմանությունները, էջ 107-109:

ὁ Ἀρεοπαγίτης (17.67) «Արիսպագացին» // ՄՄ 116-ում՝ ուղղված «Արիոպագացին» (ԺԶ.):

Ի. գլխում թվարկվում են յոթ մոլորակները. «Արեգակն» և «Լուսին» թարգմանված են, իսկ մյուս հինգի անունները տառադարձված են հունարենից՝ «Զեւս, Երմիս, Արիս, Ափրոդիտէ, Կրանոս», և բոլոր ձեռագրերում դրանց գլխավերևում (իսկ ՄՄ 116-ում և Եղմ. 1297-ում՝ կարմիր թանափով) ավելացված են յուրաքանչյուրի՝ արաբական ծագումով անունները՝ «շամս», «ղամարտի/ղամար», «մուշթարի», «ատիբիդի/ատիրիդի», «մառեխ», «գունհրա/գորհրա», «գոհալի»³⁹: Երկնքի գոտիների առիթով մոլորակների հունարեն անունները թվարկված են ևս մեկ անգամ՝ «Կրոնոս, Դիա, Արեա, Արեգակն, Ափրոդիտի, Երմի, Լուսին»՝ ամեն մեկի կողքին գաղափարագրերով⁴⁰, իսկ ՄՄ 5789 ձեռագրում լուսանցքում դրանց դիմաց կարդում ենք հայերեն անունները՝ «երեսակ», «լուսնթագ», «հրատ կամ արաւսա», «արեգակն», «լուսաբեր», «փայլածու», «լուսին», իսկ մյուս ձեռագրերում (ՄՄ 116-ում՝ կարմիրով)՝ լուսանցքում կրկնված հունարեն անունների հետ՝ արաբերեն անունները («գունալ», «մուշթարի», «մարիխ/մառիխ», «իլիոս»⁴¹/շամս», «գունհրա/գոհրա», «ստորիդի», «սելիմի»⁴² ղամար»):

Նույն գլխում գառունը բնորոշված է որպես «տաֆ եւ հիւք» (θερμή και ύγρὰ 21.62). այդ բառերի գլխավերևում ՄՄ 63, ՄՄ 116 և Եղմ. 1297 (վերջին երկուսում՝ կարմիրով) ձեռագրերում կարդում ենք դրանց «ջերմ» և «գէշ/գէն» հոմանիշները (ևս մեկ անգամ՝ նույնը): Այն «Բան զձմեռն ջերմագոյն եւ Բան զամառն հիւքագոյն» է, և նույն եղանակով ավելացված է՝ «ցամաֆ եւ չոր» և «գէշ»: Նույն գլխում հունարեն «փղեմա» (φλέγμα 21.85) նույն եղանակով բացատրված է արաբերենից փոխառնված «պլղամ» բառով:

Նույն գլխում δεκανός (21.193) բառը, որ տառադարձված է լատիներենից (decanus՝ բառացի նշանակում է «տասնյակի գլուխ» և կենդանակերպի յուրաքանչյուր նշանի երեք հավասար տասնաստիճան բաժանմունքի անվանումն է), ՄՄ 63 և Եղմ. 1297 ձեռագրերում ունի «գալթապետս» համար-

³⁹ Հմմտ. Յովհաննէս Երզնկացի, *Յաղագս Երկնային շարժմանն*, աշխատասիրությամբ Լուսիկ Ստեփանյանի, հետևյալ գրքում՝ Yovhannēs Erznkac'i *On the Movements of the Celestial Bodies*, bilingual ClassicalArmenian-English edition, Yerevan, 2001, էջ 72. «Այս են մոլորականք ի վերուստ ի վայր սկսեալ՝ Զօհալ, Մուշթարի, Մառեխ, Շէմս, Զօհրէ, Օտարիտ, Դամէր: Այս տանիկ լեզուաւ անուանք են»:

⁴⁰ Բոլոր ձեռագրերում նույն գլխում գաղափարագրեր կան նաև կենդանակերպի նշանների անունների կողքին:

⁴¹ Սա հունարեն Հելիոսն է:

⁴² Սա հունարեն Սելենեն է:

ժեֆը և լուսանցքում կամ տողից վեր գրված է «տանարս», իսկ մյուս ձեռագրերում՝ «տանարս գալթապետս»:

Այս հավելումները խմբագրական աշխատանքի վկայություն են:

5.1 Հունարենից պատճենված՝ նախկինում ավանդված բառեր

Թերևս հունարենին համապատասխանեցնելու խմբագրական աշխատանքի նշան կարելի է համարել հունարեն բառերի բառակազմությունն արտացոլող բառերը, անգամ եթե դրանք, ինչպես վկայում է *ՆԲՀ*, ավանդված են ավելի վաղ թարգմանական, ինչպես նաև ինֆնուրույն երկերում⁴³.

«ամենաբարի» (ԶԶ.) – πανάγαθος (86.2),

«ամենագալ» (Բ., Գ., ԾԷ., ԾԸ., Կ., ԿԱ., ԶԳ., ԶԶ.) – παντοδύναμον (2.13, 3.42, 58.101, 59.114, 61.27, 62.80, 81, 84.5, 11, 86.73),

«ամենակատարեալ» (ՂԷ.) – παντελής (97.64),

«ամենաստեղծ» (ԾԹ., ԿԱ.) – παντοουργός (62.77), բայց և՛ «ամենայնի ներգործող» (Ը.) – (8.178),

«անախտ» (ԿԱ.) – άπαθής (62.78),

«անգոյ» (ԻԶ.) – τὸ μὴ ὄν (37.12),

«անհասանելի» (Ը., ԻԲ., ԽԷ.) – άκατάληπτος (8.82, 141, 23.6-7, 48.8), բայց և՛ άκαταλήπτως (8.98) – «աննկատելի» (Ը.),

«անհատանելի» (ԽԹ.), «անհատ» (ԾԳ., ԾԷ., ԾԹ.) – άτομον (50.6, 55.11, 58.76, 60.43),

«անձնիշխան» (ԼԶ., ԼԹ., Խ., ԽԳ., ԾԷ., ՀԶ., ԶԶ.), «անձնիշխանութիւն» (ԼԸ., Խ., ԾԷ., ՂԲ.), «անձնիշխան» (ԿԳ.) – αὐτεξούσιος (37.27, 40.15, 44.25, 39, 58.117, 64.6, 77.11, 86.15), τὸ αὐτεξούσιον (39.1, 41.2, 58.126, 92.20), αὐτεξουσιότης (58.122), հմմտ. «իմնիշխան»,

«անհառապէս» (ՀԸ.) – άπορρήτως (79.13),

«անմեղանալի» (Բ., Գ., Ը., ԻԳ., ՀԵ.) – άναφής (2.12, 4.5), άπρόσιτος (8.6, 76.13), άσύγκριτος (25.46),

«անպարագրելի» (Ը., ԺԳ., ԺԹ., ԽԶ., ԽԷ., Ծ., ՀԳ., ԶԹ., ՂԲ.) – άπερίγραπτος (8.3, 13.1, 20.5, 47.73, 48.42, 51.4, 75.4, 89.24), άκατάληπτος (92.39), «անպարագրելապէս» (ԽԵ.) – άπεριγράπτως (46.28, 47.31),

«անփոփոխելի» (ԾԳ., ԾԵ., ԾԹ., ՀԸ., ՂԱ.) – άμεταβλήτως (55.16, 56.9, 91.59), άτρέπτως (55.50, 79.7), άπαράλλακτος (60.42),

⁴³ Որոշ դեպքերում հունարեն նույն բառերի դիմաց բնագրի այլ մասերում հանդիպում է ավելի «ազատ» թարգմանություն: Դա նշում ենք բառահոդվածների վերջում՝ «բայց և»-ով:

- «անֆանակ և անորակ» (Ժ.) – ἄποσος καὶ ἀσχημάτιστος (10.9-10),
 «անֆննելի» (ՁՁ.) – ἀνεξερεύνητος (86.101),
 «աստուածախաւս» (ՂՁ.) – θεηγόρος (96.84),
 «աստուածգիտութիւն» (ՀՁ.) – θεογνωσία (77.36),
 «արդարադատութիւն» (Ճ.) – δικαιοκρισία (100.19),
 «բնակակից» (ԽԹ., ԿԱ.) – σύνοικος (50.45, 62.22),
 «գերակատարեալ» (Ե.) – ὑπερτελής (5.29), բայց և προτέλειος (5.29)
 – «ի սկզբանէ կատարեալ» (Ե.),
 «եղական» (Ը., ԺԳ., Խ., ԽԵ., ԾԸ., ԾԸ., ԿԳ., ՀԲ., ՀԵ., ՀԷ., ՀԹ., Ձ, ՁԱ.) –
 κτιστός 14.17, 48.25, 31, 58.119, 59.128, 65.22, 76.1, 78.2, 8, 80.12, 81b.11,
 ἢ κτίσις 8.169, 74.13, κτίσμα 59.212, 81.4, γεννητὸν 41.3,
 «եղելութիւն» (Ի., ԼԸ., Խ., ԽԳ.) – γένεσις (21.133, 39.13, 41.3, 44.31),
 «ենթակայ» (ԾԷ., ԾԹ.) – ὑποκείμενον (58.40, 60.13), «ենթակայի»
 (ԾԴ.) – ὑφέστηκεν (55.4-5), «որ ... ենթակայի» (ԽԹ.) – ὑποκειμένων
 (50.3),
 «երկատեսակ» (ԻԱ.) – διειδές (22.5),
 «ընթացակից» (ԺԳ.) – σύνδρομος (13.62),
 «ինֆնարոյս» (ԼՁ.) – ἔμφυτος (37.5),
 «ինֆնազար» (ԾԸ.) – αὐτοδύναμις (59.223),
 «ինֆնաշարժ» (Է., ԾԸ.) – αὐτοκίνητος (7.24), αὐτοκίνησις (59.223),
 «ինֆնիշխան» (ԼԸ., ԾԷ., ԾԸ., ԳԳ.) – αὐτεξούσιος (39.30-31, 58.46, 62,
 59.20, 93.34), «ինֆնիշխանութեամբ» (ԼԹ., ԾԷ.) – αὐτεξούσιοι (40.3,
 58.117), «ինֆնիշխանութիւն» (ԾԷ.) – αὐτεξούσιον (58.1, 59), αὐτεξου-
 σιότης (58.61), «ինֆնիշխանաբար» (ԿԱ.) – αὐτεξουσίως (62.57, 59), հմմտ.
 «անձնիշխան»,
 «լծակցեմ» (ԻԳ., ԼԵ.) – συνζεύγνυμι (24.51, 36.89-90),
 «կարգապետ» (ՁԸ.) – ταξίαρχος (88.74),
 «կենագործեալ» (ԾԸ.) – ζωοποίησις (59.116),
 «կենարար» (Ը., ԿԳ., Հ., ՁԸ.) – ζωοποιός (8.172-3, 61.24, 65.9, 11,
 71.13, 88.72), բայց և «կենաստու» (ԿԳ.) – (65.11, 12), «կենաբեր» (Կ.),
 «կենդանագիր» (ՁԹ.) – ζωγράφος (89.52),
 «համագոյ» (Ը., ԺԳ., ԽԴ., ԽԶ., ԽԹ., Ծ., ԾԵ., ԾԶ., ԾԸ., ԿԱ., ԿԷ., ՀԱ.,
 ՀԴ., ՀՁ., ՀԹ.) – ὁμοούσιος (8.36, 134. 13.90, 45.38, 47.6, 8.12, 26, 50.48,
 51.4, 56.13, 36, 57.9, 59.3, 63, 124, 62.48, 68.25, 72.14, 75.7, 77.31, 80.13),
 «համագոյի» (ԾԸ.) – συγγενής (59.44)
 «համաձայնող» (ԾԸ.) – συνεκφωνοῦντες (59.224),

«համանունաբար» (ԾԷ.) – ὁμωνύμως (58.122), «համանուն գոլով» (ԽԶ.) – ὁμωνυμία (47.68),

«համապատի» (Ը.) – ὁμοδόξως (8.279), «համապատի գոլով» (ԽԶ.) – ὁμοτιμία (47.68),

«մեծագործութիւն» (ԻԳ.) – μεγαλοουργία (25.57),

«միաձայնեալ» (ԽԸ.) – συμφώνως (59.99),

«միջնորմ» (Ի.) – μεσότοιχον (21.159),

«մշտաշարժ» (ԼԶ.) – ἀεικίνητος (37.10),

«մշտնջենակից» (ԺԳ.), «մշտնջենաւորակից» (Ը.) – συναΐδιον (8.175, 13.85),

«յառաջադրութիւն» (ԾԳ., ԶԶ.) – προθέσεις (54.22, 86.104-105),

«յառաջընթաց» (ՂԶ.) – πρόδρομος (96.70),

«նախագիտեմ» (ԽԳ.) – προγινώσκω (44.3),

«նախասահմանութիւն» (ԽԳ.) – προορισμός (44.1), «նախասահմանեմ» (ԻԳ., ԶԷ.), «նախասահմանադրեմ» (ԽԳ.) – προορίζω (13.52, 44.3, 87.8),

«նախասացեալ» (Խ.) – προειρημένος (41.6),

«նախատիպ» (ԶԹ.) – πρωτότυπον (89.7-8),

«ներգործեմ» (ԽԹ., ԾԷ., ԾԸ., ՂԲ.) – ἐνεργέω (50.42, 57.5, 59.7, 92.19), «ներգործել... ներգործական» (ԾԸ.) – ἐνεργητικὸν ... ἐνέργημα (59.6-7), բայց և ἐνεργητικὸν (59.8) – «գործական» (ԾԸ.),

«ներգործութիւն» (Է., ԺԳ., ԼԷ., ԼԶ., ԾԷ., ԾԸ., ՂԲ., ՂԹ.) – ἐνεργὸν (7.14), ἐνέργεια (13.72, 13.73, 36.1, 37.1, 58.1, 59.3, 92.2-3, 99.12, 33),

«ներտրամադրեալ» (ԺԳ.) – ἐνδιάθετος (13.93), բայց և (13.98) – «ներհաղորդեալ» (ԺԳ.),

«շարադրեալ են» (Ղ.) – σύγκεινται (90.55),

«որդեծնութիւն» (ՂԷ.) – τεκνογονία (97.68):

«շարափառութիւն» (ԶԶ.) – κακοδοξία (86.176),

«պատահումն» (Ի., ԽԹ.) – συμβεβηκός (21.12, 50.9, 55.7), բայց և «պատահելի» (ԾԳ.),

«պարունակեմ» (Ը.) – περιέχω (8.12),

«պարագրական» (ՀԳ.) – περιγραφόμενος (74.16), «պարագրեմ» (ԺԳ., ՀԳ., ՂԳ.) – περιγράφω (13.40, 75.4-5, 93.5), «պարագրելի» (ԽԷ.) – περιεκτικὸν (48.3), «պարագրելի» (Ը., ԽԶ., ԽԷ.) – περιγραπτός (8.168, 47.31, 72), περιεκτικός (48.3),

«սկզբնաշար» (ԻԳ., ԽԳ.) – ἀρχέκακος (24.40, 45.3),

«սկզբնատիպ» (ՁԹ.) – τὸ πρωτότυπον (89.48),
 «ստուգաբանել» (ԾԷ.) – κυριολεκτεῖν (58.156),
 «վայրաբերել» (ԾԵ.) – καταγαγόντα (56.12),
 «վերաբերական» (ՂԱ.) – ἀναφορὰ (91.95), «վերաբերել» (ԾԱ., ԾԹ., ԿԲ., Հ., ՁԱ.) – ἀναφέρω (52.4, 63.22), ἀνάγω (52.23, 60.20, 71.14, 81b.4),
 «վերաբերող ելով» (ԽԲ.) – ἐπάγονται (43.65),
 «վերակացութիւն» (ԽԴ.) – ἐπιστάσια (45.14),
 «վերելումն» (ԻԴ., ԿԷ.) – ἀναγωγή (25.74), ἀνάβασις (68.2), «վերելա-
 նել» (ԽԴ.) – ἐναγόμενος (44.38),
 «տեսակ» (Ը., ԽԴ., ԽԷ., ԾԴ., ԾԹ., ՀԹ.) – εἶδος (8.208, 43.52, 47.3, 55.1
 60.43, 80.10),
 «ցուակցութիւն» (ԿԱ., ԿԶ.) – συμπάθεια (62.50, 67.4):

5.2 Հունարենից «Աւանդութեան» բնագրում պատճենված բառեր

Այդպիսի բառերը, որոնք առաջին անգամ ավանդված են այստեղ, առավել ևս վկայում են հունարենի համեմատությամբ խմբագրական աշխատանքի մասին.

«անբաժանելապէս» (Կ., ՀԱ.) – ἀδιασπástως (61.8), ἀδιαιρέτως (81b.5),

«անգաղափարելի» (Ժ.) – ἀσχημάτιστος (11.10),

«անխառնակաբար» (ԽԵ., ԽԸ., ԾԱ., ՁԱ.) – ἀσυγχύτως (46.38, 49.22, 52.15, 81b.5),

«անկատարելի» (Ը., ՁԲ., ԺԴ.) – ἀτελεύτητος (8.10, 85, 15.9 82.92), ἀπέραντος (15.35)

«անմեկնելաբար» (ՂԱ.) – ἀνεκφοιτήτως (91.16),

«աննկարագրելի» (ՁԹ.) – ἀσχημάτιστος (89.25),

«անշփոթելի» (ՂԱ.) – ἀσύγχυτος (91.59),

«անուսանելի» (ԾԷ.) – ἀδίδακτος (58.64),

«անպարստելի» (ԿԱ., ԿԴ., ԿԶ., ՂԱ.) – ἀδιάβλητος (62.79, 64.2, 7, 67.16, 91.83),

«անպարփակելապէս» (Ծ.) – ἀπεριλήπτως (51.9),

«անփոփոխելութիւն» (ԾԹ.) – ἀπαρallaξία (60.35),

«առաջընթաց (Յովհաննէս)» (ՁԸ.) – πρόδρομος (88.64),

«աստուածակից» (Կ.) – ὁμόθεος (61.4), բայց և՛ «ընդ Աստուծոյ Աստուած» (Կ.) – (61.6),

«աստուածահայր» (ՁԳ., Ճ.) – θεοπάτωρ (84.54, 100.40),
 «աստուածայրական» (ԿԲ.) – θεανδρικός (63.1, 40), բայց և՛
 θεανδρική (59.117) – «աստուածային անձն բանին» (ԾԸ.),
 «աստուածիշխանական» (ԾԳ.) – θεαρχικός (54.32)՝ չիբ նԲՀՀ-ում,
 «աւթանագով» (ՁԷ.) – ἄξιέπαινος (87.45),
 «բարիատեաց» (ԽԳ.) – μισόκαλος (44.70-71),
 «գոյեղականաց» (CDE եղականաց ԾԹ.) – τῶν κτιστῶν ὡς
 γεννητῶν (60.21)՝ չիբ նԲՀՀ-ում,
 «դիւրահեղի» (ԻԲ.) – εὐδιάχυτος (23.4),
 «երկահատ» (Ի.) – διχοτόμος (21.203)՝ չիբ նԲՀՀ-ում,
 «իմֆնրնտրելի» (ԼԶ.) – αὐθαίρετος (37.26)՝ չիբ նԲՀՀ-ում,
 «լիալուսին» (Ի.) – πανσέληνος (21.205), «լիալուսին եւ լիալոյս» (Ի.)
 – πλησιέσληνοι, αἱ καὶ πλησιφαεῖς (21.204-205)՝ չիբ նԲՀՀ-ում,
 «ծնողութիւն» (Ը.) – γονιμότης (8.49),
 «համատեսակ» (ԾԳ.) – ὁμοειδής (55.5), բայց և՛ ὁμοειδής (8.130,
 50.7, 16) – «համասեռ» (Ը.), «համատիպ» (ԽԹ.),
 «հեշտագնաց» (ՀԶ.) – εὐεπίβατος (77.24)՝ չիբ նԲՀՀ-ում,
 «հեշտալոյծ» (Զ.) – εὐδιάλυτος (6.8),
 «մակացուցանել» (ԿԶ.) – ἐπιδείκνυμαι (67.26)՝ չիբ նԲՀՀ-ում⁴⁴,
 «միշտկոյս» (ԽԴ., ՀԸ., ՁԷ.) – ἀειπάρθενος (45.47, 79.6, 87.3, 100),
 հմմտ. «մշտակոյս»
 «յառաջադատեմ» (ԽԳ.) – προκρίνω (44.7)՝ չիբ նԲՀՀ-ում,
 «յառաջասահմանութիւն» (ԽԳ.) – προορισμός (44.5), «յառաջասահ-
 մանեմ» (ԽԳ.) – προορίζω (44.5)՝ չիբ նԲՀՀ-ում,
 «յառաջատեղծեալ» (Ի.) – πρωτόκτιστος (21.34),
 «յառաջընտրութեամբ» (Է.) – προαιρετικόν (7.13), «յառաջընտրու-
 րիւն» (Խ., ԾԷ., ՁԴ., ՁԶ., ՁԹ., ՂԲ., ՂԴ.) – προαίρεσις (41.7, 92.8, 58.155,
 86.16, 188, 89.21, 92.8, 94.8), συγκατάθεσις (84.20),
 «նախապատմեմ» (ՁԸ.) – προκαταγγέλω (88.80),
 «նախաարքութիւն» (ՁԲ.) – προκάθαρσις (82.55)՝ չիբ նԲՀՀ-ում,
 «ներֆնաբար» (ԻԲ.) – κατωφερές (23.3), չիբ նԲՀՀ-ում,
 «ունայնամիտ» (ԿԵ.) – ματαιόφρων (66.10),
 «պարունական» (ԾԹ.) – περιεκτικός (60.44),

⁴⁴ Հմմտ. սակայն «մակացուցական» 2. [9] – Nem 23. 24 ἀποδεικτικός (նեմեփոս եմեսացի, Յաղագս բնութեան մարդոյ, առաջաբանը, համեմատական բնագիրը և ծանոթագրութիւններ՝ Կարինե Մոսիկյանի, Երևան, 2019, էջ 470):

«պարփակին» (ԺԹ.) – περικλείονται (20.3-4), *մինչդեռ նրան հետևող* περιορίζονται *բառը պատճենված չէ՝* «սահմանին»,
 «վերագոյ» (ԾԳ.) – ὑπερούσιος (54.30),
 «վերագնաց լինին» (ԻԲ.) – ἀνάγονται (23.49),
 «վերակոչել» (ԿԱ.) – ἀνακαλέω (62.10),
 «վերանցեալ» (ԻԳ., ԽԸ.) – ὑπερβαίνων (25.11), ὑπερέχουσα (49.14),
 «վերանցեալ մերձեցէք» (ԻԳ.) – ἀναβιβάσθητι (25.79),
 «փոխանականուն» (ԾԸ.) – ἀντωνυμία (59.231),
 «փոխատուութիւն» (ԽԷ.) – ἀντίδοσις (48.38),
 «Քրիստոսածին» (ԾԵ.) – Χριστοτόκος (56.47):

Հունարէն մէկ բառի թարգմանությունը նրա տարբեր իմաստներն արտահայտող բառերով հատուկ էր հունարան թարգմանություններին. «զախտս եւ զշարշարանս» (ԾԸ. – τὰ πάθη (59.140), «անախտաբար եւ անշարշարելի» (ԾԸ.) – ἀπαθής (59.165), «ի շարշարանաց եւ յախտից» (ԾԸ.) – παθῶν (59.169):

Հունարան լեզվին բնորոշ հատ ու կենտ փերականական ձևերից նկատել ենք հետևյալ արհեստական կրավորական բայական ձևերը՝ «լուանիլ» (ԶԶ.) – λούεσθαι (86.88), «կոյրք բանութիւն» (ԶԷ.) – τυφλοὶ ἀναβλέπουσι (87.47), «-իցեալ» շինծու ածանցով անցյալ դերբայ՝ «անծնիցելոյ եւ ծնիցելոյն» (ԺԳ.) – ἀγεννήτου καὶ γεννητοῦ (13.77), «հիբար» արհեստական մակբայը (ԼԸ., ԽԴ., ԽԷ. ԽԸ., ԾԱ.) – ὥς (39.16, 48.10, ὅτι 48.5, 49.33), οἶον (52.10): Շարահյուսական հունարանություն է բացականչության սեռականը. «Ո՛վ անհաւատութեան, ո՛վ անիմացութեան» (Ճ.) - Ὡ τῆς ἀπιστίας. Ὡ τῆς ἀφοροσύνης (100.107-108):

5.3 Վրացերենից նախնական թարգմանության հետքեր

Այդպիսիք շատ են: Թարգմանության լեզուն շատ չի տարբերվում «Դիալեկտիկայի» համապատասխան առանձնահատկություններից: Այսպես. տրամաբանական և աստվածաբանական եզրերի համարժեքներն էլ ավելի հեռու են վաղ շրջանի, հատկապես՝ հունարան թարգմանություններից.

«ազգ» (ԻԳ., ԻԶ., ԽԳ., ԽԴ., ԶԸ.) – γένος (24.22, 27.13, 16, 44.30, 45.13, 88.51), *սպասելի էր* «սեռ»,

«բաժանիմ» (Ը., ԽԶ., ԶԲ.) – διαφέρω (8. 121, 128, 89.42), «բաժանեալ» (ԼԵ., ԼԶ.) – διάφορος (36.118, 37.6), «բաժանումն» (Ե., ԽԶ.) – διαφορὰ (5.16, 4, 47.29, 87, 88, 97, 59.216), բայց և «տարբերութիւն» (ԾԸ.),

«իմնութիւն» (ԽԷ., ԽԸ. ԽԹ., Ծ., ԾԳ., ԾԵ., ԾԶ., ԾԷ., ԾԸ., ԾԹ., Կ., ԿԶ., ՀԷ., ՂԳ., Ճ.) – ιδίωμα (48.25, 27, 29, 33, 49.11, 20, 50.10, 34, 51.19, 27, 56.72, 57.1, 58.146, 61.15, 78.6, 93.32, 100.72), ιδιότης (49.5, 10, 28, 54.23, 58.52, 59.216, 60.6-7, 30, 61.16, 77.5), ἴδιον (58.57, 60.24)՝ սպասելի էր «յատկութիւն»,

«լսիմ» (ԽԹ.) – κατηγοροῦνται (50.3, 6-7), ինչը վրացերենի ազդեցութիւնն է⁴⁵, սպասելի էր՝ «ստորոգիմ»,

«հռետոր/ռետոր» (ԼԶ.) – γραμματικός (37.20)՝ սպասելի էր «ֆերական», իսկ ընդհանուր (38.30) – «իմաստուն» (ԼԷ.),

«նիւթ» (ՀԱ.) – στοιχεῖον (72.7)՝ սպասելի էր «տարր»,

«շրջագրութիւն» (ԻԱ.) – διαγροφή (22b.10), հմմտ. «տրամագծութիւն»⁴⁶,

«պիթագորացիք» (ԼԲ.) – οἱ Πυθαγορικοὶ (33.7), սովորական ձևերն են «պիթագորական/ պիթագորեան»,

«սեռ» (Ի., ԼԳ., ԽԶ.) – σῶμα (21.159, 32.10, 24, 47.7, 19), «անսեռ» (ԻԵ.) – ἀσώματος (26.44)՝ սպասելի էր «անմարմին»:

Հավանաբար վրացերենի ազդեցությունն է նաև «Աթանասիէ» (ԾԳ., ԾԹ., ԿԶ., ՀԹ.) ձևը, որ հիշեցնում է հին թարգմանություններում կիրառվող հունարենի կոչական հոլովից ազդված «Ղազարէ», «Պետրէ», «Աղեփսանդրէ», «Քրիստոսիէ» ձևերը, սակայն մեր բնագրում անունը ուղղական հոլովով է: Խաթունա Գափրինդաշվիլիի վկայությամբ, վրացերեն բնագրում անունը հանդես է գալիս «Աթանասի» և «Աթանասէ» ձևերով: Հավանաբար նույն կերպ է բացատրվում «Որոգիների» (ՀԸ.) ձևը:

Բնագրում կան բառեր, որոնք «հունաբան» կերպարանն ունեն (փանի որ մեծ մասամբ՝ հունաբանների կերտած կամ հանախակի կիրառած նախաձանցներով են կազմված), ժամանակին հունարենից են պատճենվել,

⁴⁵ Այս բացատրության համար պարտական ենք Խաթունա Գափրինդաշվիլիին (անձնական մամակ):

⁴⁶ St'au David the Invincible, *Commentary on Porphyry's Isagoge*, Old Armenian Text with the Greek Original, an English Translation, Introduction and Notes by Gohar Muradyan, Brill: Leiden – Boston, 2014 (Philosophia Antiqua: A Series of Studies on Ancient Philosophy, vol. 137. Commentaria in Aristotelem Armeniaca. Davidis Opera curantibus Valentina Calzolari et Jonathan Barnes, vol. 3), p. 238 (23.5), 528.

լեզվում կիրառական էին, սակայն չեն համապատասխանում «Ավանդու-
թյան» հունարեն սկզբնագրի համապատասխան բառերին.

«ապացոյց սորա» (Խ.) – ἔδειξεν (41.23), «ապացոյց» (ԾԵ.) –
παραστατικόν (56.25՝ *իմաստային առումով ճիշտ է*), հմմտ. ἀπόδειξις,

«առդիցում» (ԼԸ., ԽԱ.) – ὑπαγάγωμεν (39.22), ἀναθετέον (42.9),
հմմտ. προστίθημι,

«առդբ, որ կոչի առդրութիւն... առդրութեան» (ԼԵ.) – ὁρμᾷ πρὸς τὴν
πρᾶξιν, καὶ λέγεται ὁρμή... τῆς ὀρεξέως (36.82-83), «առդբեցիմ» (ՂԶ.) –
ἀποτέμονται (96.23),

«արտադրող սահմանիմ» (ԼԵ.) – ὀρίζομενοί φαμεν (38.19), հմմտ.
ἐκτίθημι,

«բաղդատել» (ԻԵ.) – κρίνει τὸ ἀληθές (36.38), հմմտ. συγκρίνω,

«ենթադրեալ» (ԻԴ.) – κείμενος (25.8), հմմտ. ὑποκείμενον,

«ենթակայ» (ԾԷ.) – προσὸν (58.36), հմմտ. ὑποκείμενον,

«ենթակայի» (ԻԲ.) – κεῖται (23.23),

«որոց ընդ մերով ենթակային» (ԼԵ.) – τῶν ἐφ' ἡμῖν (36.65), «որ ընդ
մեամ ենթակայի» (ԼԸ., ԼԹ., ԽԱ.) – τὸ ἐφ' ἡμῖν (39.1, 42.2), εἰσιν ἐφ' ἡμῖν
(40.2), «ընդ մեամ ենթակային» – ἐφ' ἡμῖν ἐστί (40.6-7), «ի ներքոյ մեր են-
թակայի» (ԼԹ.) – ἐφ' ἡμῖν ἐστί (40.17), «ոչ ի ներքոյ մեր ենթակայից» (ԽԲ.)
– τῶν οὐκ ἐφ' ἡμῖν ἐστί (43.47-75), բայց և՛ «ի ներքոյ մեր գոյ նորա» (ԼԹ.)
– οὐσῆς ἐφ' ἡμῖν (40.5), «Վասն այնցիկ, որք ոչ ի ներքոյ մեր են» (ԽԱ.) –
Περὶ τῶν οὐκ ἐφ' ἡμῖν (42.1), «որ ընդ նովաւ ենթակային» (ԾԷ.) – τὰ ὑπ'
αὐτὸ (58.76),

«ենթակացելոց» (ԼԵ.) – προκειμένων (36.81), «ենթակացեալ» (ԾԸ.)
– συνιστάμενον (59.23),

«իմնագոյ» (ԼԸ.) – τὸ αὐτόματον (39.10, 28), «իմնագոյական» (ԼԸ.)
– αὐτόματος (39.29), հմմտ. αὐθυπόστατος,

«համակամութիւն և համատեսութիւն, համագործութիւն» (ԾԷ.) – πῶς
θέλει, πῶς ὀρᾷ, πῶς ἐνεργεῖν (58.34-35),

«մակացութիւն արուեստից» (ԼԸ.) – τέχνη (39.21), «մակացութիւն
արուեստիցն» (ԼԹ.) – τέχνη (40.16), հմմտ. ἐπιστήμη,

«նախադրութեամբ» (ԽԲ.) – προηγούμενος (43.77), հմմտ. πρόθεσις,

«ներգործութիւն» (ԼԲ., ԼԵ.) – πρᾶξιν (33.3), πρᾶγμα (36.63), հմմտ.
ἐνέργεια,

«ներկայ» (ԽԱ.) – παρὸν (42.3 67.27), հմմտ. ἐνεστώς,

«շրջափակող» (ԻԱ., ԻԲ.) – περιοχή (22.14), περιέχουσαι (23.25),

«պարագրին» (ԽԲ.) – εἰσὶν (43.9), «պարագրելարար» (Մ.) – χαρακτηριστικός (51.19), «պարագրէ» (ՄԸ.) – χαρακτηρίσει (59.130-131), հմմտ. περιγράφω,

«պարունակող» (ԻԵ.) – ἐπιδεχόμενον (26.48), հմմտ. περιέχω,
«որք ստորադրին» (Լ.) – ὑποπίπτον (31.4), հմմտ. ὑποτίθηναι,
«ստորակայի» (ԼԵ.) – ἔγκειται (36.61), հմմտ. ὑπόκειμαι,
«ստորոգի» (ՄԳ.) – δηλοῖ (55.23), «որ... ստորոգին» (ՄԹ.) – ἀναγομένων (60.43), հմմտ. κατηγορέω,

«որ յանձն ստորոգեալ է բան» (ԼԳ.) – ἐνδιάθετος μὲν λόγος (35.3),
«որոց ընդ մեաի ստորոգին» (ԼԵ.) – τῶν οὐκ ἐφ' ἡμῖν (36.65), «ընդ մեաի ստորոգին» (ԼԹ., ԿԳ.) – ἐφ' ἡμῖν εἰσιν (40.2-3), τὰ... ἐφ' ἡμῖν (64.7),
«որ ընդ մեաի ստորոգին» (ԽԲ.) – τῶν ἐφ' ἡμῖν (36.65),
«վերակոչել» (ԽԲ.) – καλέω (45.12), հմմտ. ἀνακαλέω,
«վերայայտնութիւնք» (ՀԶ.) – γνωρίσματα (77.43), հմմտ. ἀνακαλύπτω,

«տարորիշք» (ԼԶ.) – διάφοροι (37.7), հմմտ. διακριτικός,
«փաղանդունարար» (ՄԳ.) – παρωνύμως (55.62), հմմտ. συνωνύμως,
«փոխադրելի» (ԻԵ.) – μεθιστάμενον (26.34), «անփոխադրելի» (ՄԸ.) – μὴ τρεπόμενον (59.135), հմմտ. μετάθετος,
«փոխադրի» (ԻԳ., ԶԶ.) – ἀλλαγίησεται (24.59), μεταποιεῖται (86.106),
«որ... փոխադրեաց» (Ճ.) – μεταβαλὼν (100.108):

5.4 Տառադարձված հունարեն բառեր

Դրանք հետևյալն են.

«անդիփրիստոս» (ՂԹ.), «անտիփրիստոս» (Ճ.), բայց և՛ «անդիփրիստոսի, որ է նեոնն» «նեոն, որ կոչեցեալ է անդիփրիստոս» (ՂԹ.), «նեոն» (ՂԹ.) – ἀντίχριστος (99.1, 2, 4, 5, 25, 100.126),

«եմվոլիզմոս» (Ի.) – ὁ ἐμβόλιμος (21.185)՝ հրեական տոմարի ներմուծվող (ամիս),

«զալք» (Ի.) – ζῳδιον (21.94, 97)՝ կենդանակերպի նշան, բայց և բարգմանության ուղեկցությամբ՝ «զոս, այսինքն՝ կենդանիք» – ζῳδια (21.193),

«թրասկեա կոչի, որ կոչի Կիրկիոս» (ԻԲ.) – θρασκίας ἦτοι κέρκιος ... ὀνομαζόμενος (22b.8-9)՝ թրակական, որ կոչվում է կերկիոս (փամու անուն է),

«ակրա» (ԻԲ.) – ἀκτὴ (23.26)՝ հրվանդան, կա նույնիմաստ ἄκρα բառը, որից կարող էր փոխառվել «ակրա»-ն, սակայն նման տարբերություն չի նշվում,

«կոմիաբ⁴⁷, որ են վարսաւոր աստեղ» (Ի.) – κομῆται (21.140),

«ուրանիկոս» (ԼԱ.) – οὐρανίσκος (32.28)՝ ֆիւֆ,

«պերիփրասիս» (ԿԲ.) – περίφρασις (63.44)՝ շրջաօրհան,

«սիֆոն» (ԻԲ.) – σιφών (23.34)՝ թաթառ,

«սփեռ» (ԺԹ.) – σφαῖρά 20.10, «կէս սփեռի» (ԺԹ.) – ἡμισφαίριον (20.51). հմմտ. Դիալ. «զանաստղ գնդակն՝ սփեռ երկնից» (ԼԳ.) – τὴν ἄναστρον σφαῖραν (?),

«սփեռաձևություն» (ԺԹ.) – σφαιροειδῆ (20.42). սա կես-փոխառություն-կես-թարգմանություն է,

«գնդաձև... զսփեռ» (ԻԳ.) – σφαιροειδῆ (24.57),

«փղեմա» (Ի.) – φλέγμα (21.85), բայց և թարգմանված՝ «մաղաս» (ԻԵ.) – φλέγμα (26.64):

«Աստուած անուանի, որ է թեոս» (Թ.) – τὸ θεὸς ὄνομα (9.14)՝ բառը և՛ տառադարձված է, և՛ թարգմանված:

Քամիների անուններ ԻԱ. գլխում՝ «Կեկիա... Ապիլիոս» – καικία (հյուսիս արևելյան քամի) ... ἀπηνιότης (արևելյան քամի) (22.b3), «Եվոնոս... Լիփս» – εὐρος (արևելա-հարավ-արևելյան քամի) ... λίψ (հարավ-արևմտյան քամի) (22.b4), «Զեփիրոս» – ζέφυρος (արևմտյան քամի) (22.b5), «Արգեստ» – ἀργέστης (հյուսիս-արևմտյան քամի) (22.b5), «Ողոմպիայ» – Ὀλυμπίας (արևմտա-հյուսիս-արևմտյան քամի) (22.b5), «յապիֆս» – Ἰάπυξ (արևմտա-հյուսիս-արևմտյան քամի) (22.b5), «Էրդաստի» – ἐργάστης (22.b5), «Նոտոս և Ապարկտիա» – νότος καὶ ἀπαρκτίας (հարավային և հյուսիսային քամիներ) (22.b6), «Վորէաս» – βορέας (հյուսիսային քամի) (22.b7), «Փինիֆս» – Φοῖνιξ (22.b7), «Եւրոնոտոս» – εὐρόνοτος (22.b7), «Լիփոնոտոս և Լեկոնոտոս» – λιβόνοτος, λευκόνοτος (22.b8)⁴⁸:

Հետևյալ օրինակում՝

«աժենիտան, որ միովն նուի է գրեալ, անեղ նշանագրէ, իսկ ժեննիտան՝ երկու նուի դրոշմեալ, անձնունդ ասէ» (Ը.) – ἀγέννητον διὰ τῶν δύο

⁴⁷ Հանդիպում է «Արիստոտելի Յաղագս աշխարհի», Կորին վարդապետի, Մամբրէ Վերծանողի և Դաւթի Անյաղթի Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833, էջ 613. «կոմիաբ, որ են գիսաւոր»:

⁴⁸ Հմմտ. «Արիստոտելի Յաղագս աշխարհի», էջ 611-612. «Եւրոս, կէկիաս, ապելիօք, արգեստէս, ողիմփիաս, յապիֆա, զեփիրոս, լիփս, վոնէ, ապարկտիաս, քրասկիաս, նոտոս. լիւանօտոս. լիբոփինիկ, եւրովնօտոս»:

Νῦν γραφόμενον δηλοῖ τὸ μὴ γεννηθέν (8.123-125)⁴⁹, 63 *ի լուս.* 116 *չիք* այսինքն՝ անեղ եւ եղական, անծնունդ եւ ծնեալ Ex. Fid. 80.3 *չիք*:

Դ-ի տառադարձումը Ժ-ով առայժմ անբացատրելի է թվում. հմմտ. «Դիպելկտիկայում»՝ «մաշերա» (ԺԶ.)՝ μάχαιρα-ից:

6. Աստվածաշնչից մեջբերումներ

Դրանց մի մասը համապատասխանում է հայերեն ընկալյալ բնագրին (կա՛մ թարգմանիչն անգիր գիտեր դրանք, կա՛մ հետագայում են համապատասխանեցվել), սակայն կան բազմաթիվ նորովի թարգմանված հատվածներ, օրինակ.

«Առաքես զհոգի քո եւ ստեղծին» (Է.), հմմտ. «Առաքես զոգի քո եւ ստանաս զնոսա» (Սաղմ. ՃԳ 30),

«Հոգի Աստուծոյ, որ ստեղծ զիս, եւ շունչ ամենակալին, որ ըմբռնէ զիս» (Է.), հմմտ. «Հոգի աստուածեղէն է որ արար զիս՝ եւ շունչ ամենակալի է որ ուսուցանէ զիս» (Յոբ ԼԳ 4.),

«պատկերն անտեսանելոյն Աստուծոյ» (Ը.), հմմտ. «պատկեր աներեւոյթին Աստուծոյ» (Կողոս. Ա 15),

«Վասն այսորիկ կրկնեմ զծունկս իմ առ Հայր. յորմէ ամենայն հայրութիւնք յերկինս եւ յերկրի անուանեալ են» (Ը.), հմմտ. «Վասն այսորիկ դնեմ ծունր առ հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ուստի ամենայն նահապետութիւն յերկինս եւ յերկրի անուանի» (Եփես. Գ 14-15),

«նովաւ եղեն ամենայն յաւիտեանք» (Ը.), հմմտ. «որով եւ զյաւիտեանսն արար» (Եբր. Ա 2),

«Ոչ ոք ետես զՀայր, բայց Որդի եւ Հոգի» (ԺԳ.), հմմտ. «ո՛չ եթէ զՀայր՝ ուրով տեսեալ իցէ. եթէ ոչ որ է՛ն յԱստուծոյ, նա՛ ետես զՀայր» (Յովն. Զ 46),

«ըստ Յոբայ՝ սկիզբն գոլ գործոց Աստուծոյ» (ԺԶ.), հմմտ. «Նա՛ է սկիզբն արարածոց Տեառն» (Յոբ Խ 14),

«որ արկանէ զերկինս որպէս զխորան» (ԺԹ.), հմմտ. «Զգեցեր զերկինս որպէս խորան» (Սաղմ. ՃԳ 2),

«ուրախ լիցին երկինք եւ երգեսցէ երկիր» (ԺԹ.), հմմտ. «Ուրախ եղիցին երկինք՝ եւ ցնծասցէ երկիր» (Սաղմ. ՂԵ 11),

«վասն զի Աստուած մեր հուր է ծախող» (Ը.), հմմտ. «Զի տէր Աստուած քո հուր ծախիչ է» (Բ Օրին. Գ 24):

⁴⁹ Նույնը՝ τὸ ἀγέννητον καὶ τὸ γενητὸν (80.3) – «ածենիտոյն եւ ծննիտոյն» (ՀԹ.):

7. Հետագա անդրադարձներ

Հետագայի հայ հեղինակները կարճ անդրադարձներ ունեն Հովհան Դամասկացու անձին և երկերին, մեջբերումներ են արել դրանցից⁵⁰:

Գրիգոր Տաթևացին «Ոսկիփորիկ»-ում գրում է. «Իսկ Դամասկացին Յոհան գլուխն երկաբնակաց ասէ, թէ՛ բոլոր աստուածութիւնն է միատրեալ ընդ մարդկային բնութիւնն ի Քրիստոս, և տեսանի ի հոգւոյն Քրիստոսի... վարդապետք սուրբ օրինակ տան մարդեղութեանն Քրիստոսի, որպէս լոյս ընդ օդ և հուր ընդ երկաթ... Եւ որպէս հուրն յերկաթ միատրեալ բառնալ ի նմանէ գցրտութիւն և գսնութիւն, և մնայ ծանրութիւնն, այսպէս մարմինն Քրիստոսի միատրեալ ընդ Բանն Աստուած ունի զկարողութիւն և զաստուածութիւն Բանին»⁵¹ հմմտ. «Ավանդոյթյան» բնագրում. «ԽԹ. Իբր զի աստուածային բնութիւն բոլոր ի ձեռն միոյ իւր անձին միատրեցաւ ընդ բոլոր մարդկային բնութիւն և ոչ մասն առ մասն ինչ», նաև՝ «ի մարմնանալն միոյն ի սուրբ Երրորդութենէն Բանին Աստուծոյ ասեմք, եթէ բոլոր և կատարեալ բնութիւն աստուածութեանն միով իւրով առանձնատրութեամբն միատրեցաւ ընդ բոլոր մարդկային բնութիւնս և ոչ մասն ընդ մասն միացաւ» (ԽԹ.):

Ղազար Ջահկեցին, որ կաթողիկոս է եղել 1737-1751 թթ., մի հատված է մեջբերել «Ավանդոյթումից». «Եւ ըստ Դամասկացոյն՝ հրեշտակն է իմացական գոյացութիւն մշտաշարժ, կամօք անձնիշխան, անմարմին, Աստուծոյ սպասաւոր, ընկալեալ զանմահութիւն ըստ շնորհաց և ոչ ըստ բնութեան»⁵²: Հմմտ. «Եւ հրեշտակ է էութիւն իմանալի, մշտաշարժ, ինքնիշխան, անմարմին, սպասաւոր Աստուծոյ, և շնորհօք առեալ ի բնութիւն իւր զանմահութիւն» (ԺԶ.):

Ստեփանոս Ռոշբան գրում է. «Ս. Յոհան Դամասկացին, մակ(անուն) Խրիզոստոս, գրեաց վեց գիրս յաղագս ուղղափառ հաւատոց, զերիս հառս ընդդէմ Պատկերամարտից, զպատմութիւն Յովասափայ եւ Բարդամու, եւն: Տեսի հայերէն թարգմանեալս զՓիլիսոփայութիւն նորա ի յիսուն պրակս և զԱստուածաբանութիւն ի հարիւր պրակս, որոշեալս, գոր ոմն Սիմոն ի Վրաց ի մերս լեզու թարգմանեաց, բայց թարգմանութիւնն ոչ է գովելի. գտանին եւ

⁵⁰ Այս բոլոր զուգահեռները նկատել և մեզ սիրահոծար մատնացոյց է արել Գևորգ Ղազարյանը, որին հայտնում ենք մեր խորին երախտագիտութիւնը:

⁵¹ Գրիգոր Տաթևացի, *Գիրք որ կոչի Ոսկիփորիկ*, Կ. Պոլիս, 1746, էջ 502-503:

⁵² Ղազար Ջահկեցի, *Գիրք աստուածաբանական, որ կոչի զբախտ ցանկալի*, Կ. Պոլիս, 1735, էջ 15:

այլ շարագրած հայերեն նորին: Բայց ոչ են նորին. Իմ: Ս. Յոհան փոխեցաւ յերկինս յամի Տեառն 731»⁵³:




Հովհաննէս Հաննան սբ. Սաբայի եկեղեցու մոտակայքում հիշատակում է ուր փոքր եկեղեցի, որոնց թվում՝ «Յօթներորդն Յօհաննու Դամասկացւոյն... Աստ եկաց Յօհաննէս Դամասկացին և գրեաց զուր եղանակաւորս շարականս յարութեան Տեառն և այլ բազում գիրս արդիւնաւորեաց եկեղեցւոյն յունաց: Եւ եկեղեցին որ իւր անուամբն է, նա էր խուց նորին: Եւ ունի վանքս երկու պուտն վասն պահպանութեանն: Իսկ ճանապարհն է դժուար: Եւ ի ներքոյ վանիցն գոյ աղբիւր մի բարեհամ կաթեալ ի վիմէ, աղօթիւ սրբոյն Սաբայի: Զայս վանքս ազգին սրփից լեալ լսեմք, և այժմ ի ձեռս յունաց է»⁵⁴:

8. Զեռագրերն ու սույն հրատարակությունը

Բնագիրը կազմել ենք հետևյալ ձեռագրերի համեմատությամբ.

A – Վիեն. 648, ք. 10բ-14բ (Ակինայնի՝ *Յուշարձան*-ում հրատարակած)՝ ԾԴ, ԾԲ, ՀԱ, ՀԵ, ՀԸ, ՀԴ գլուխները:

B – Եղմ. 1297 (1363 թ.), 42ա-152ա. այս ամենավաղ ձեռագրին հատուկ է աւ/օ-ի անհետևողական գրություն: Երբեմն շփոթմամբ հետ ու առաջ գրված բառերն ուղղված են, և դրանց գլխավերևում գրված է ա և բ: Մի շարք բառեր արտահայտված են գաղափարագրերով.

«Արեգակն» , «լուսին», «երկիր», «երկինք»,
 «երկրպագով» , «յերկինս երկնից»
, «առաքելով» , «ամենայն» ,

C – ՄՄ 5789 (ԺԵ դ.), 48ա-178բ, «հոգի» բառը միշտ «ոգի» գրությամբ է,
 D – ՄՄ 20 (1497 թ.), 17ա-19ա՝ ԽԲ. «Վասն նախախնամութեան» գլուխը,

⁵³ Ստեփանոսի Ռոշֆայ *Ժամանակագրություն կամ տարեկանք եկեղեցականք*, հրատ. Հ. Հ. Ոսկեան, Վիեննա, 1964, էջ 87:

⁵⁴ Հովհաննէս Հաննա, *Պատմություն երուսաղէմի*, Կ. Պոլիս, 1731, էջ 314-315:

E – ՄՄ 63 (ԺԶ դ.), 29ա-110բ,

F – ՄՄ 116 (ԺԶ դ.), 59բ-246բ⁵⁵:

Եղմ. 1297, ՄՄ 63, ՄՄ 116 և այլ ձեռագրերում երկի վերջում կա այսպիսի հիշատակարան.

«Կատարումն⁵⁶ վաստակոց Յովհաննու⁵⁷ Դամասկացոյ կոչեցեալ⁵⁸ Մանսուր: Համառօտ ասացեալ նորո⁵⁹ շնորհաց Աւանդութիւնք: Եւ թարգմանեալ Սիմէոնի ի վրաց լեզուէ ի հայ բառ»⁶⁰:

Երկը պարունակում են նաև հետևյալ ձեռագրերը, որոնք չեն օգտագործել՝ ՄՄ 5859 (ԺԵ դ.), 50ա-207բ, ՄՄ 101 (ԺԸ դար), 52ա-210ա, ՄՄ 102 (ԺԸ դար), 18ա-88բ, ՄՄ 103 (ԺԸ դար), 23բ-97բ, ՄՄ 3156 (ԺԸ դար), 74ա-132ա՝ մինչև ԶԶ գլխի կեսը, ընդհատվում է, Եղմ. 1035 (1604 թ.), էջ 23-333 (Սիմեոնի հիշատակարանով), Եղմ. 768 (1710 թ.), 91-424, Վնտկ. 1598 (1708, 1706?, նախագիծ օրինակ՝ 1339 թ.), 23ա-92բ, Վիեն. 1045 (1836 թ.), 178-180 համառօտեալ, Վիեն. 763 (ԺԸ դ.), 6ա-58ա, Զմմառ 112 (1707 թ.), Թարիգ Զ 51, 192ա-221բ:

Հունարեն սկզբնագիրը, որի հետ համեմատել ենք ընթերցումները, օգտագործել ենք հետևյալ ֆինական հրատարակությունից՝ *Die Schriften des Johannes von Damaskos*, vol. 2, ed. B. Kotter, Berlin, 1973: *Expositio fidei*: Անհրաժեշտության դեպքում տողատակում բերել ենք այս հրատարակության ֆինական ապարատից տեղեկություններ՝ համապատասխան պայմանաձևներով:

⁵⁵ ՄՄ 63 և ՄՄ 116 ձեռագրերն օգտագործել էին նաև «Դիալեկտիկայի» վրացերենից թարգմանությունը կազմելիս, ուստի և կրկնում ենք դրանց՝ E ու F պայմանական նշանները:

⁵⁶ E F կատար

⁵⁷ B Յոհաննու

⁵⁸ E F կոչեցելոյն

⁵⁹ E նորա

⁶⁰ Ըստ Ակիմեանի (նշվ. աշխ., էջ 87)՝ նույն հիշատակարանն ունեն Վնտկ. 1598 և Վիեն. 763 ձեռագրերը:

ԲՆԱԳԻՐ

- Ա.¹. Յաղագս անհասանելի գոլ Աստուծոյ. եւ թէ ոչ է պարտ քննել եւ խնդրել² արտաքին գրոց:
- Բ. Վասն ճառելոյ³ եւ անճառելեաց⁴, իմանալեաց եւ անիմանալեաց⁵:
- Գ. Յուցումն, թէ գոյ⁶ Աստուած:
- Դ. Վասն⁷ թէ զինչ է Աստուած, եւ զի անհասանելի է:
- Ե. Յայտնումն⁸ եթէ մի է Աստուած եւ ոչ բազում:
- Զ. Վասն Բանին Աստուծոյ բնախատութիւն⁹:
- Է. Վասն Սուրբ¹⁰ Հոգւոյն:
- Ը. Վասն Սրբոյ¹¹ Երրորդութեանն:
- Թ. Վասն ի վերայ Աստուծոյ¹² ասացելոց:
- Ժ. Վասն Աստուծոյ¹³ միատրութեանն եւ բաժանման:
- ԺԱ. Վասն մարմնաբար ասացուածոց զաստուծոյ¹⁴:
- ԺԲ. Վասն նոցին դարձեալ:
- ԺԳ. Վասն տեղեացն Աստուծոյ եւ թէ¹⁵ միայն Աստուած¹⁶ է անպարագրելի:
- ԺԴ. Վասն ինքնութեանց¹⁷ աստուածային բնութեանն:
- ԺԵ. ¹⁸Վասն յալիտեանցն¹⁹:
- ԺԶ. Վասն հրեշտակաց:

¹ Այս ցանկը C եւ F-ում անմիջապէս բնագրից առաջ է, իսկ E-ում՝ Տրամաբանության ցանկից հետո:

² E F քննել *փ/ւ* քննել եւ խնդրել (*չ/ք* եւ խնդրել)

³ E F անճառելոյ

⁴ C անճառելոյ

⁵ E F անիմանալեաց եւ իմանալեաց

⁶ E F Վասն յայտնելոյ թէ է

⁷ C *չ/ք*

⁸ E F Վասն զի

⁹ Ex. Fid. pinax 6 *չ/ք* բնախատութիւն

¹⁰ C սրբոյ

¹¹ C սուրբ

¹² C *չ/ք*

¹³ C աստուածային

¹⁴ C մարմնապէս ի վերայ Աստուծոյ ասացելոցն

¹⁵ E F նա

¹⁶ C E F *չ/ք*

¹⁷ C Յատկութիւն

¹⁸ C + Երկրորդ գիրք

¹⁹ Հուն. + Ex. Fid. Pinax 15' (16) Περι δημιουργίας | հետագա գլուխները հունարենից մեկ համարով հետ են ընկնում:

- ԺԷ. Վասն սատանայի եւ դիւացն:
 ԺԸ. Վասն երեւելի արարածոյս²⁰:
 ԺԹ. Վասն²¹ երկնից:
 Ի. Վասն լուսոյ եւ²² հրոյ եւ լուսատւացն²³:
 ԻԱ. Վասն ատրոյ²⁴ եւ հողմոց:
 ԻԲ. Վասն ջուրց²⁵:
 ԻԳ. Վասն երկրի եւ որ ի նմա²⁶:
 ԻԴ. Վասն դրախտին:
 ԻԵ. Վասն մարդոյն:
 ԻԶ. Վասն համոցն²⁷:
 ԻԷ. Վասն տրտմութեան:
 ԻԸ. Վասն երկելի:
 ԻԹ. Վասն սրտմտութեան²⁸:
 Լ. Վասն տեսութեան ցնորի²⁹:
 ԼԱ. Վասն զգայութեան:
 ԼԲ. Վասն գիտութեան իմացման³⁰:
 ԼԳ. Վասն յիշողութեան³¹:
 ԼԴ. Վասն որ ի մեզէն դրի բան³²:
 ԼԵ. Վասն ախտի եւ ներգործութեան³³:
 ԼԶ. Վասն գործականութեան³⁴:
 ԼԷ. Վասն կամայի եւ ակամայի:

²⁰ C եւ զգալի արարածոց

²¹ C յաղագս

²² C չիք լուսոյ եւ

²³ C + ամենեցուն | Ex. Fid. Pinax κα' + ἡλίου τε καὶ σελήνης καὶ ἄστρον

²⁴ E F ատրից

²⁵ E F ջուրցն

²⁶ C + է

²⁷ Ex. Fid. Pinax κζ' Περὶ ἡδονῶν

²⁸ C տրտմութեան

²⁹ C վասն անընց եւ ցնորից | Ex. Fid. Pinax λα' Περὶ τοῦ φανταστικοῦ ἡմῶν. ՍՓ-ում «Ցնորումն» համապատասխանում է ֆանտասիա-ին

³⁰ C իմացականին

³¹ C յիշողականին

³² C ի ներքոյ տրամադրական բան արտաքին տարբերական չի/ւ | հմմտ. Ex. Fid. Pinax λε' Περὶ ἐνδιαθέτου λόγου καὶ προφορικοῦ

³³ C վասն ախտից եւ ներգործութեանց

³⁴ Ex. Fid. Pinax λζ' Περὶ ἐνεργείας

- ԼԸ. Վասն որոյ մեզ ստորոգի անձնիշխանութեանն³⁵։
 ԼԹ. Վասն եղանակացս³⁶։
 Խ. Վասն ընդէր³⁷ եղաք անձնիշխան։
 ԽԱ. Վասն որք ոչ ընդ մեաք եմ³⁸։
 ԽԲ. Վասն նախախնամութեան։
 ԽԳ. Վասն կանխագիտութեան³⁹։
 ԽԴ. Վասն Աստուծոյ⁴⁰ Բանին տնաւորութեան⁴¹։
 ԽԵ. Վասն օրինակի⁴² յղութեան Տեառն⁴³։
 ԽԶ. Վասն երկուց բնութեանց⁴⁴։
 ԽԷ. Վասն տեսակի առ միմեանս դրութեանն⁴⁵։
 ԽԸ. Վասն թուոյ⁴⁶ երկուց բնութեանցն։
 ԽԹ. Վասն զի ամենայն Աստուծոյ բնութիւն ի մի իւր անձն զգեցաւ զամենայն մարդկային⁴⁷։
 Ծ. Վասն մի գոլ⁴⁸ անձն Բանին Աստուծոյ⁴⁹։
 ԾԱ. Առ ասողս⁵⁰, եթէ միատրեղոյ⁵¹ թէ ի սահմանելոյ գան ի⁵² ֆանիաւնութիւն բնութեանցն⁵³ Քրիստոսի⁵⁴։

³⁵ C վասն ըստ մեաք ենթակային անձնիշխանութեան | Ex. Fid. Pinax λθ' Περὶ τοῦ ἐφ' ἡμῖν, τουτέστι τοῦ ἀντεξουσίου

³⁶ C գործեցելոցն | Ex. Fid. Pinax μ' Περὶ τῶν γινομένων

³⁷ C յաղագս որոյ պատճառի

³⁸ C Վասն այսոցիկ որք ոչ ի ներքոյ մեր եմ | Ex. Fid. Pinax μβ' Περὶ τῶν οὐκ ἐφ' ἡμῖν

³⁹ C + եւ նախասահմանութեան | Ex. Fid. Pinax μδ' Περὶ προγνώσεως καὶ προορισμοῦ

⁴⁰ C աստուածային

⁴¹ C + եւ որ առ մեզ փաղցրութեան եւ փրկութեան

⁴² C օրինակ

⁴³ C Բանին Աստուծոյ եւ մարմնանալոյ իւրոյ

⁴⁴ C + որք ի Քրիստոս

⁴⁵ C տեսակի ի միմեանս տալոյ արինակի միմեանս տալոյ

⁴⁶ Հռն. չիք | Ex. Fid. Pinax μζ' Περὶ τῶν δύο φύσεων

⁴⁷ C Իբր զի աստուածային բնութիւն բոլոր ի ձեռն միոյ իւր անձին միատրեցաւ ընդ բոլոր մարդկային բնութիւն, եւ ոչ մասն առ մասն

⁴⁸ E F գոլով

⁴⁹ չիք | Ex. Fid. Pinax να' Περὶ τῆς μιᾶς τοῦ θεοῦ λόγου συνθέτου ὑποστάσεως

⁵⁰ C որ ասեմ

⁵¹ C միատրեցելոյ եւ

⁵² C սահմանեցելոյ առեալ լինի

⁵³ E F բնութեան

⁵⁴ Ex. Fid. Pinax νβ' Πρὸς τοὺς λέγοντας· Ὑπὸ τὸ συνεχὲς ποσὸν ἀνάγονται αἱ τοῦ κυρίου φύσεις ἢ ὑπὸ τὸ διωρισμένον

- ԾԲ. Վասն զի թէ ոչ է բնութիւն անանձն⁵⁵։
 ԾԳ. Վասն երեւ սրբասացութեան⁵⁶։
 ԾԴ. Վասն ի տեսակ եւ յանհատս գոլ տեսանելի բնութիւն⁵⁷։
 ԾԵ. Վասն թէ⁵⁸ Աստուածածին է Կոյսն։
 ԾԶ. Վասն ինքնութեան երկուց բնութեանցն։
 ԾԷ. Վասն կամաց եւ ինքնիշխանութեան ասելով⁵⁹ Տեառն⁶⁰ Յիսուսի Քրիստոսի։
 ԾԸ. Վասն ներգործութեանցն Տեառն⁶¹։
 ԾԹ. Առ որս ասեն, եթէ յերկու կամաց եւ ներգործութեանց է մարդ. հարկ է երեւ ասել ունել զՔրիստոս զոսսա⁶²։
 Կ. Վասն աստուածանալոյ մարմնոյ եւ կամաց⁶³։
 ԿԱ. Վասն կամաց եւ ներգործութեանց Տեառն⁶⁴։
 ԿԲ. Վասն աստուածայրական⁶⁵ լինել մարմնոյն⁶⁶։
 ԿԳ. Վասն բնական եւ անխտրելի ախտից։
 ԿԴ. Վասն անգիտութեան եւ ծառայութեան։
 ԿԵ. Վասն անման եւ զարգացման⁶⁷։
 ԿԶ. Վասն երկիւղի ի ժամու մահուանն⁶⁸։
 ԿԷ. Վասն աղաւթիցն⁶⁹։
 ԿԸ. Վասն բաժանման եւ միաւորելոյ⁷⁰։

⁵⁵ C Դիմադրութիւն աստղացն, եթէ գոյ բնութիւն առանց անձին | Ex. Fid. Pinax νγ' Πρὸς τό, εἰ οὐκ ἔστι φύσις ἀνυπόστατος, ἀπάντησις

⁵⁶ C Յաղագս երեւ սրբասացութեանն, զոր յաւելուն

⁵⁷ C Վասն տեսակի եւ վասն անհատիցն գոլ տեսանելի բնութեան եւ վասն Բ. բանի եւ միաւորութեան եւ վասն մարմնատրութեան Տեառն, եւ թէ որպէս ասելի է «մի բնութիւն մարդացելոյ Բանին»

⁵⁸ C + նշմարիտ

⁵⁹ C չիք

⁶⁰ C + մերոյ

⁶¹ C Տեառն Յիսուսի կրկին ներգործութեան

⁶² C Առ ասողսն, եթէ յերկուս բնութեանց եւ ի ներգործութեան է մարդ, ապա հարկ է Քրիստոսի երեւ բնութիւն է եւ երեւ ներգործութիւն է ասեն գոլ

⁶³ C Վասն աստուածանալոյ բնութեան եւ կամաց եւ ներգործութեան մարմնոյ | Ex. Fid. Pinax ξα' Περὶ τοῦ τεθεωσθαι τὴν φύσιν τῆς τοῦ κυρίου σαρκὸς καὶ τὸ θέλημα

⁶⁴ C Դարձեալ վասն կամաց, գիտութեան եւ իմաստութեան եւ անձնիշխանութեան մտաց

⁶⁵ F աստուածաւորական Ex. Fid. Pinax ζγ' Θεανδρικῆς

⁶⁶ C ներգործութեան F լինել մարմին չիք լինել մարմնոյն

⁶⁷ F + տեառն C զարգացման եւ անման

⁶⁸ C չիք ի ժամու մահուանն

⁶⁹ C չիք վասն աղաւթիցն

⁷⁰ C վասն բաժանման եւ հատման Ex. Fid. Pinax ξθ' Περὶ οἰκειώσεως

- ԿԹ. Վասն չարչարանաց մարմնոյ եւ անչարչարելի գոլ⁷¹ աստուածութեան:
- Հ. Վասն անմեկնելի գոլով⁷² Բանին ի հոգւոյն եւ մարմնոյն, ի մահու մարմնոյն եւ թէ մի անձն է:
- ՀԱ. Վասն ապականութեան եւ ցնդման⁷³:
- ՀԲ. Վասն ի դժոխս իջանելոյ Բանին⁷⁴:
- ՀԳ. Վասն որոյ զկնի յարութեանն էին⁷⁵:
- ՀԴ. Վասն ընդ աշմէ Հաւր նստելոյն:
- ՀԵ. Առ ասողսն՝ եթէ կրկին բնութիւն է Քրիստոս⁷⁶, կամ զեղականն պաշտեցէ, իբրեւ եղականի երկիրպագեսցոմ, կամ մի բնութիւն երկրպագելի⁷⁷ ասացէ եւ⁷⁸ մի բնութիւն ոչ երկրպագելի⁷⁹:
- ՀԶ. Ընդէ՛ր Որդին Աստուծոյ⁸⁰ մարդացաւ⁸¹, եւ ոչ Հայր, եւ ոչ Հոգի, կամ զի՞նչ ուղղեաց մարմնանալովն⁸²:
- ՀԷ. Առ հարցողսն⁸³ եթէ անձն Քրիստոսի անեղ է, եթէ եղական գոլով⁸⁴:
- ՀԸ. Եթէ⁸⁵ երբ կոչեցաւ Քրիստոս:
- ՀԹ. Առ ասողս⁸⁶ եթէ երկու բնութիւն ծնաւ Կոյսն, եւ երկու ել ի խաչին⁸⁷:
- Ձ. Վասն զի⁸⁸ անդրանիկ կոչեցաւ Քրիստոս⁸⁹:
- ՁԱ. Առ ասողս⁹⁰ եթէ ի խառնելոց⁹¹ թէ ի սահմանելոց գան⁹² ի ֆանիանութիւն բնութիւնֆն Քրիստոսի⁹³:

⁷¹ C չիք

⁷² C + աստուածութեան

⁷³ C անապականութեան

⁷⁴ C իջմանն *ի/ս* իջանելոյ Բանին

⁷⁵ C վասն զկնի մեռելոց յարութենէն

⁷⁶ F Քրիստոսի

⁷⁷ F երկիր պագելի

⁷⁸ C + եւս

⁷⁹ F երկիր պագելի

⁸⁰ E F որդի միայն

⁸¹ C մարմնացաւ

⁸² C եւ կազմեաց իւրովն մարմնով

⁸³ C որս հարցանեն

⁸⁴ C է

⁸⁵ C + յորում է եւ

⁸⁶ C հարցողսն

⁸⁷ C կամ երկու կախեցաւ զխաչէն *ի/ս* երկու ել ի խաչին

⁸⁸ C որպէս

⁸⁹ C կոչի միածին Որդին Աստուծոյ *ի/ս* կոչեցաւ Քրիստոս

⁹⁰ C հարցողսն

⁹¹ C խառնակելոցն

⁹² C բերիմ

⁹³ Հուն. չիք այսպիսի վերնագիր

- ՁԲ. Վասն հաւատոյ եւ մկրտութեան:
 ՁԳ. Դարձեալ⁹⁴ վասն Հաւատոյ:
 ՁԴ. Վասն խաչին յորում փրկութիւն եղեւ⁹⁵:
 ՁԵ. Վասն ընդ արեւելս երկրպագութեան:
 ՁԶ. Վասն սուրբ խորհրդոյն Քրիստոսի պատարագին⁹⁶:
 ՁԷ. Վասն ազգաթուրքեան Քրիստոսի եւ Կուսին⁹⁷:
 ՁԸ. Վասն սուրբ նշխարաց պատուոյ⁹⁸:
 ՁԹ. Վասն պատկերաց⁹⁹:
 Ղ. Վասն գրոց աստուածայնոց:
 ՂԱ. Վասն ի վերայ Քրիստոսի ասացելոցն¹⁰⁰:
 ՂԲ. Վասն թէ ոչ պատճառ չարաց է Աստուած¹⁰¹:
 ՂԳ. Ոչ գոյ երկուս սկզբունս¹⁰²:
 ՂԴ. Ընդէ՛ր զի կանխաւ գիտէր¹⁰³ Աստուած զոմանս որ չարս լինելոց էին, ի գոյութիւն էած¹⁰⁴:
 ՂԵ. Վասն արինացն Աստուծոյ եւ արինացն մեղաց եւ մտաց եւ մարմնոյ¹⁰⁵:
 ՂԶ. Վասն շաբաթու եւ փափտումն հրէիցն¹⁰⁶:
 ՂԷ. Վասն կուսութեան:
 ՂԸ. Վասն թլփատութեան:
 ՂԹ. Վասն անտիփրիստոսի¹⁰⁷, որէ նեռնն:
 Ճ. Վասն հասարակաց մարմնոյ¹⁰⁸:

⁹⁴ C չէք

⁹⁵ C եւ վասն հաւատոյ *ի/ս* յորում փրկութիւն եղեւ

⁹⁶ C *ս*նապական խորհրդոց Տեառն *ի/ս* խորհրդոյն Քրիստոսի պատարագին

⁹⁷ C Ազգաբանութիւն Տեառն եւ Կուսին

⁹⁸ C Վասն նշխարաց սրբոցն եւ պատուոյ նոցա

⁹⁹ C երկրպագութեան

¹⁰⁰ C ասելոց

¹⁰¹ E F Եթէ ոչ է Աստուած պատճառ չարի

¹⁰² C Վասն զի ոչ գոյ երկուս սկիզբն *ի/ս* ոչ գոյ երկուս սկզբունս

¹⁰³ E F կանխագէտն *ի/ս* զի կանխաւ գիտէր

¹⁰⁴ C մեղանշել եւ ոչ ապաշխարել եւ ստեղծ զնոսայ *ի/ս* որ չարս լինելոց էին, ի գոյութիւն էած (Ե ած)

¹⁰⁵ C չէք եւ մտաց եւ մարմնոյ

¹⁰⁶ C ի փափտումն հրէիցն եւ վասն շաբաթուն

¹⁰⁷ C անդիփրիստոսի

¹⁰⁸ C յարութեան ամենեցուն *ի/ս* հասարակաց մարմնոյ

ՍՐԲՈՅ ՀԱԻՐՆ ՄԵՐՈՅՅՑ՝ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՔԱՀԱՆԱ ԿՐԱԽՆԱԽՈՐԻ ԴԱՄԱՍԿԱՅԻՈՅ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՒԱՏՈՅՑՑ²

Ա. Որպես զի անհասանելի է Աստուած, եւ եթէ ոչ է պարտ քննել եւ խնդրել՝ զոր ոչ տուեալ է մեզ ի մարգարէիցն եւ յառաքելոցն³:

«ՉԱստուած ոչ ոք ետես երբէք: Բայց⁴ միածինն Որդի, որ ի ծոց Հար, նա պատմեաց մեզ»⁵: Անպատմելի է Աստուած⁶ եւ անհասանելի: «Ձի ոչ ոք գիտէ զՀայր, բայց միայն Որդի»⁷: Եւ Հոգին Սուրբ այնպէս գիտէ զԱստուծոյսն, որպէս հոգի մարդոյն գիտէ⁸ զիրսն: Իսկ զկնի առաջնոյ եւ երանելի բնութեանն ոչ ոք ճանաչեաց զԱստուած⁹ երբէք, բայց միայն որոց¹⁰ ինքն յայտնեաց զինքն՝ ոչ միայն մարդկան, այլ եւ ի վեր քան զաշխարհս զաւրութեանց¹¹՝ քերութիցն եւ սերովքիցն¹²:

Բայց ոչ եթող զմեզ Աստուած ի սպառ յանգիտութիւն իւր¹³, զի գիտութիւն էութեանն Աստուծոյ բնութեամբ տնկեալ է յամենեսեան: Ձի ինքն ստեղծուածն ամենայնի եւ¹⁴ կեալն նորա եւ ուղղիլն քարոզէ զմեծութիւն աստուածային բնութեանն: Եւ նա յառաջնումն ի ձեռն արինացն եւ մարգարէիցն, եւ դարձեալ միածնաւ¹⁵ Որդւովն իւրով Տեառն¹⁶ մերով Յիսուսի Քրիս-

¹ B մերում

² Τοῦ ὁσίου ἀββᾶ Ἰωάννου πρεσβυτέρου Δαμασκηνοῦ ἐκδοσις ἀκριβῆς τῆς ὀρθοδόξου πίστεως

³ Ὅτι ἀκατάληπτον τὸ θεῖον καὶ ὅτι οὐ δεῖ ζητεῖν καὶ περιεργάζεσθαι τὰ μὴ παραδεδομένα ἡμῖν ὑπὸ τῶν ἁγίων προφητῶν καὶ ἀποστόλων
Ex. Fid. 1.5 + καὶ εὐαγγελιστῶν

⁴ B չէք

⁵ Յովհ. Ա. 18. «ՉԱստուած ո՛չ ոք ետես երբէք, բայց միածինն որդի՝ որ է ի ծոց հա՛ւր՝ նա՛ պատմեաց»:

⁶ Ex. Fid. 1.7 τὸ θεῖον

⁷ Ex. Fid. 8-9 + οὐδὲ τὸν υἱὸν εἰ μὴ ὁ πατήρ | Մատթ. ԺԱ 27 «Եւ ոչ ոք ճանաչէ զորդի՝ եթէ ոչ հայր. եւ ոչ զհայր ոք ճանաչէ՝ եթէ ոչ որդի, եւ ում որդին կամիցի յայտնել»:

⁸ C չէք

⁹ C F + ոչ

¹⁰ C յորոց

¹¹ Ex. Fid. 1.12-13 + καὶ αὐτῶν φημι

¹² C քերութիցն եւ սերովքիցն

¹³ C չէք

¹⁴ C չէք

¹⁵ F միածնաւ C միածնիւ

¹⁶ Ex. Fid. 1.18 + καὶ θεοῦ καὶ σωτήρος.

տոսի՝ ըստ հասանելոյ մերոյ յայտնեաց մեզ զգիտութիւն իւր: Վասն որոյ ըստ ամենայնի տուելոցն մեզ յարինաց եւ ի մարգարէից եւ յառաքելոց եւ յաւետարանչաց ընդունիմք եւ գիտեմք եւ պատուեմք եւ ոչ առաւել քան զայն խնդրեմք: Զի բարերար է Աստուած եւ ամենայն բարեաց պարգեւիչ, ոչ ընդունի զնախանձ եւ ոչ զախտ ինչ: «Զի հեռի է յաստուածային բնութենէն նախանձ՝ յանախտէն եւ ի միայն բարերարէն»¹⁷: Վասն այսորիկ¹⁸ որպէս ամենայնի գիտող եւ ամենայնի առ յաւգուտն նախախնամողն, զոր կարող էաք իմանալ, յայտնեաց, եւ զոր ոչ կարեաք բառնալ, լռեաց: Այս բաւականացի մեզ, եւ ի սմա¹⁹ կացցոք եւ մի փոփոխեսցոք զսահմանս յափտեանցն²⁰ եւ մի ի վեր անցցոք քան զաստուածային աւանդութիւնսն:

¹⁷ Greg. Naz., *De theologia* 11.11-12: μακρὰν γὰρ τῆς θείας φύσεως φθόνος, τῆς γε ἀπαθοῦς καὶ μόνης ἀγαθῆς.

¹⁸ Շ այնորիկ

¹⁹ Շ ամենայնի

²⁰ Առակ ԻԲ 28. «Մի՛ փոխեր զսահմանս յափտեմականս»:

**Բ. Վասն ճառելեաց եւ անճառելեաց,
անիմանալեաց եւ իմանալեաց¹:**

Պարտ է որք կամեսցին յաղագս Աստուծոյ ասել ինչ կամ լսել, յայտնապէս գիտել, իբր զի ոչ ամենայն անճառելի եւ ոչ ամենայն ճառելի² են աստուածաբանութեանն բանք եւ տնտեսութեանն բանք, ոչ ամենեւեան իմանալի եւ ոչ ամենեւեան անիմանալի: Իսկ այլ է իմանալին եւ այլ է ճառելին, իբր այլ է ասել եւ այլ է իմանալ: Որով բազում են եւ վասն Աստուծոյ փոքր մի իմացուածն³ եւ աղատքն⁴ որ եւ ոչ փոքր ինչ պատմել կարողութիւն է, այլ առ մեզ հարկիմք ասել եւ ի մեզ զայն, որ ի վեր քան զմեզ է, որպէս⁵ ասեմք քուն⁶, բարկութիւն, հեղգութիւն, ձեռք եւ ոտք եւ այլ այսպիսիք:

Արդ վասն զի է Աստուած անսկիզբն եւ անկատարումն, յափտենական եւ մշտնջենատուր, անեղ եւ անփոփոխելի⁷, պարզ, անխառն, անմարմին⁸, անտեսանելի, անմեծեմալի, աննկարագրելի, անհասանելի, անբովանդակելի⁹, անսահմանելի, անփանակելի, բարերար, արդար, ամենագաւառ, ամենայն եղականացս արարիչ, ամենակալ, ամենախնամ, ինքնիշխան, դատաւոր, եւ գիտեմք եւ խոստովանիմք: Եթէ մի է Աստուած, այսինքն՝ մի գոյութիւն, եւ եթէ յերեք¹⁰ անձինս ճանաչի եւ է՝ Հաւր ասեմ եւ Որդոյ եւ Հոգոյ Սրբոյ, եւ եթէ Հայր եւ Որդի եւ Հոգի Սուրբ ամենայնի մի են, բայց միայն յանձնելութենէն եւ ի ծնելութենէն եւ յեղողութենէն, եւ եթէ Միածին Որդին եւ Բանն Աստուծոյ եւ Աստուած ողորմութեամբ գրութեան իւրոյ վասն մերոյ փրկութեան հանդութեամբ¹¹ Հաւր եւ գործակցութեամբ Հոգոյն Սրբոյ առանց սերման յղացեալ, անապականութեամբ ծնաւ ի Սուրբ Կուսէն յԱստուածածնէն Մարիամայ¹² Հոգովն Սրբով, եւ կատարեալ մարդ եղեւ ի նմանէ, եւ եթէ նոյն ինքն Աստուած կատարեալ է միանգամայն եւ մարդ կատարեալ, յերկուց բնու-

¹ C իմանալեաց եւ անիմանալեաց | Ex. Fid. 2.0 Περὶ ῥητῶν καὶ ἀρρήτων καὶ γνωστῶν καὶ ἀγνώστων

² C ճառելի... անճառելի

³ F իմացուածքն

⁴ B C աղարթն

⁵ Ex. Fid. 2.8 + ἐπὶ θεοῦ

⁶ C քուն ասեմք

⁷ Ex. Fid. 2.11 ἄτρεπτος, ἀναλλοίωτος

⁸ C + եւ

⁹ Ex. Fid. 2.12 + ἄπειρος om. KLMN

¹⁰ C երեք

¹¹ C հանդութեամբ

¹² C Մարիամայ յաստուածածնէ

թեանց՝ յաստուածայնոյն եւ ի մարդկայնոյն, եւ երկու բնութիւնս՝ յիմանալին¹³ եւ յինքնիշխան եւ¹⁴, պարզ ասասցի, կատարեալ ունող իւրաքանչիւրոցն, ըստ նանաշման սահմանի եւ Բանի, աստուածութեան ասեմ եւ մարդկութեան, իսկ ի մի խառնեալ անձն, եւ եթէ փաղցեալ եւ ծարաւեցաւ, վաստակեցաւ եւ¹⁵ խաչեցաւ եւ զմահու եւ զթաղման փորձ ետո եւ յարեալ յերորդ աւուրն եւ յերկինս ել, ուստի էջ նա առ մեզ եւ դարձեալ գալոց է ի վերջնումն, վկայ է այսմ¹⁶ աստուածային գիրք եւ գունդք ամենայն սրբոց:

Իսկ եթէ զինչ է գոյութիւնն Աստուծոյ, կամ զիարդ յամենեսեան է կամ թէ զիարդ ծնանի յԱստուծոյ Աստուած կամ ելանէ, կամ զիարդ ունայնացոյց զանձն միածին Որդին եւ Աստուած, սքափեալ զինքն, մարդ եղել ի կուսական արեանցն այլազգ քան զբնութիւն ստեղծուածոյն, կամ զիա՛րդ անհետագատելի¹⁷ ոտիւք գնայր ի վերայ ջուրցն, այսմ¹⁸ անգիտեմք¹⁹, եւ ասել ոչ զաւրեմք: Որով ոչ է հնար առանց աստուածատուր աստուածային բանիցն Հին եւ Նոր Կտակարանացն գիտելոցն մերոց, այսինքն՝ յայտնելոցն²⁰, ասել ինչ կամ բնաւ իմանալ ինչ վասն աստուածայնոցն:

¹³ Ex. Fid. 2.25 + θελητικαῖς τε καὶ ἐνεργητικαῖς

¹⁴ B C E չէք

¹⁵ C չէք

¹⁶ C յայսմ

¹⁷ Ex. Fid. 2.35 ἀβρόχοις

¹⁸ C յայսմ

¹⁹ C E F անգիտ եմք

²⁰ Ex. Fid. 2.37-38 ἐκπεφασμένα ἤτοι εἰρημένα καὶ πεφανερωμένα / καὶ πεφανερωμένα om. LMN

Գ. Յուշումն եթէ գոյ Աստուած¹:

Արդ, եթէ է Աստուած եւ գոյ Աստուած, ընդունողացն գրոց՝ Հնոյ եւ Նո-
րոյ Կտակարանացն², ոչ անկասկածելի է, նա եւ ոչ հեթանոսաց բազմաց³:
Զի որպէս ասացաք, գիտութիւն Աստուծոյ էութեանն բնութեամբ տնկեալ է ի
մեզ: Այլ վասն զի այնչափ զաւրացաւ շարին պատրանքն ի վերայ բնութեան
մարդկան, մինչեւ զոմանս⁴ յանբանական⁵ եւ յամենայն շարեաց շարագոյն
կորստեան⁶ խորխորատն ընկեց, ասելով՝ «ոչ գոյ⁷ Աստուած», որոց⁸ անմ-
տութեանն երեւցուցանող աստուածաբարբառն Դաւիթ⁹ ասէ. «Ասաց ան-
զգամն ի սրտի իւրում, թէ չիք Աստուած»¹⁰:

Իսկ Տեառն աշակերտքն եւ առաքեալքն ամենասուրբ Հոգովն խոհե-
մացեալք զաւրութեամբ նորին եւ շնորհաւ ներգործութեամբ¹¹ սքանչելեացն
ուսկանաւ սքանչելագործութեանց ի լոյս աստուածգիտութեան ի խորոց
անգիտութենէ որսացեալ հանին զմարդիկ: Նոյնպէս եւ շնորհաց եւ պատուոյ
նոցա փոխանորդքն՝ հովիւքն եւ վարդապետքն, ընդունելով զլուսատրիչ
շնորհք¹² Հոգւոյն՝ զաւրութեամբ սքանչելի նշանացն եւ բանիւք շնորհացն,
զխաւարեալսն լուսատրեցին եւ զմոլորեալսն դարձուցին:

Իսկ մեք, որք ոչ սքանչելեաց եւ ոչ վարդապետութեան առաք շնորհս, զի
անարժան արարաւ զանձինս մեր ախտիւք հեշտասիրութեան, եկալք¹³ ի
տուիցելոցն¹⁴ մեզ յաշակերտաց¹⁵ շնորհացն¹⁶ ասացոյք յաղազս այսորիկ,
աւգնական կոչելով զՀայր եւ զՈրդի եւ զՀոգին Սուրբ:

¹ Ex. Fid. 3.1 Ἀπόδειξις, ὅτι ἔστι θεός

² Ex. Fid. 3.3 + φημί

³ C + բազմաց

⁴ E F զոմանք

⁵ F յանբանական

⁶ C չիք

⁷ C E F գոյ

⁸ C յորոց

⁹ C Դաւիթ

¹⁰ Սաղմ. ԺԳ 1, ԾԲ 1. «Ասաց անզգամն ի սրտի իւրում, թէ ոչ գոյ Աստուած»:

¹¹ Ex. Fid. 3.11 τὰς θεοσημίας ἐργαζόμενοι

¹² C չիք B շնորհաւք

¹³ Ex. Fid. 3.19 + ὀλίγα

¹⁴ C տուիցելոցն B տուեցելոցն

¹⁵ Ex. Fid. 3.19 ὑποφητῶν

¹⁶ C չիք

Ամենայն էութիւնք կամ եղականք են կամ անեղք, եւ եթէ եղականք են, ստուգիւ եւ հակադարձողք, այս ինքն՝ ապականացոյ¹⁷. զի որոց ի դարձուածոց առնու գէութիւն, նոքա ստուգապէս ընդ ինքն ունի¹⁸ գփոփոխումն եւ պարտական է հակադարձութեան¹⁹ կամ ապականութեամբ կամ յառաջադրելոյն²⁰ փոխանորդութեամբ: Իսկ եթէ անեղք են ըստ նշմարիտ բանին՝ անկասկածելի առանց փոփոխման են. զի որոց էութիւն ի հակառակացն է, հակառակ նոցա եւ բան գոյոյն հակառակ իմն է, այսինքն՝ ինքնութեանն²¹:

Եւ այս ո՛չ միայն²² ամենայն էիցս, որ ընդ զգայութեամբք մերովք են, այլեւ հրեշտակաց իմն դարձուած եւ փոփոխումն եւ բազմաւրիմակ շարժումն եւ փոխադրութիւն: Եւ ասեմ իմանալի հրեշտակացն եւ հոգւոց եւ դիւաց, յառաջադրութեամբ եւ անմամբ ի բարիսն, փախստեամբ ի չարեացն ուղղեն եւ հաստատեն, իսկ այլոցս²³ լինելութեամբ եւ ապականութեան²⁴, անմամբ եւ պակասութեամբ, որպիսութեամբ եւ ի տեղոյ ի տեղ շարժութեամբ լինի փոփոխումն: Ապա ուրեմն փոփոխական էք²⁵ եւ եղականք. եւ եղականքն ստեղծուած են ում²⁶ եւ են ստուգապէս: Եւ պարտ է արարչին նոցա անեղ լինել. զի եթէ եղական է եւ նա, ապա արարած է ումէն եւ նա, անհնար է, մինչեւ հանդիպեսցի ումէ անեղի: Եւ անեղ յորժամ²⁷ լիցի արարիչն, ստուգիւ եւ անփոխադրելի է: Եւ այս այլ ի՞նչ ոչ լիցի, բայց միայն Աստուած:

Եւ դարձեալ նոյն ինքն արարածոցս կալումն եւ պահիւն եւ ուղղիւն²⁸ ուսուցանէ զմեզ, եթէ գոյ Աստուած՝ այսմ ամենայնի հաստատող եւ ժողովող եւ պահող եւ միշտ նախախնամող: Զի ո՞րպէս հակառակ բնութիւնքն, հրոյ ասեմ եւ ջրոյ, օդոյ եւ հողոյ, ի լրումն միոյ աշխարհի ժողովեցան ի միմեանս եւ անփակտելի մնացին, եթէ ոչ էր ամենազաւր զաւրութիւն ինչ, որ յադէր զնոսա եւ միշտ պահէր անփակտելի:

¹⁷ Ex. Fid. 3.23 չիք այս ինքն՝ ապականացոյ

¹⁸ C ունիւն

¹⁹ Ex. Fid. 3.24 չիք

²⁰ C E յառաջադրելոցն

²¹ F այսինքնութեանն C այսինքն՝ ինքնութենէն

²² Ex. Fid. 3.27 τίς οὐδὲν οὐ συνθήσεται

²³ C յայլոցս

²⁴ C յապականութենէ

²⁵ C փոփոխականքս

²⁶ C չիք

²⁷ C այնժամ

²⁸ E չիք եւ ուղղիւն

Եւ²⁹ ուստի՞ է կարգաւորութիւն երկնաւորաց եւ երկրաւորաց, եւ ո՞ր-
 քան³⁰ ի յաւսն եմ, եւ ո՞րքան³¹ ի ջուսն, նաեւ զորս առաւել եւ յառաջն եմ
 քան զայս՝ զերկիր եւ զերկինս եւ զաւդս եւ զբնութիւն հողոյ եւ ջրոյ: Ո՞ խառ-
 նեաց զոսսա եւ բաժանեաց, ո՞ է շարժող դոցա եւ բերող դարձմամբ անդա-
 դարելի եւ անըմբոնելի, եթէ ոչ ճարտարապետն սոցա եւ հրամանաւ ար-
 տադրողն³² ամենայնի, որով ամենայն խնամի եւ բարձեալ լինի: Իսկ ո՞վ է
 ճարտարապետ սոցա եւ յէութիւն բերողն³³ սոցա, եթէ ոչ արարիչն: Զի մի յին-
 քնէ եղեալ ասասցոյ՜ զոսսա եւ ինքնակալ եւ ինքնագաւ³⁴, իսկ եղիցի ինք-
 նագոյութիւնն. ո՞ւմ եւ եղիցի կարգողի: Եւ եթէ կամիս եւ զինքնագոյութիւն
 տացոյ՜³⁵. ո՞ւմ եւ անկ է, եւ յումէ՞³⁶ լիցի ծածկեալ եւ պահեալ, որպիսի բա-
 նիւմ հաստատեցան ի սկզբանէ: Յայտ է՝ ոչ յայլ ումեմէ, բայց միայն յինքնա-
 գոյէ եւ յինքնագաւէն: Իսկ այս³⁷ այլ ո՞ է, բայց միայն Աստուած:

²⁹ E + զի

³⁰ C nrf

³¹ C nrf

³² Ex. Fid. 3.48 λόγον ένθεις

³³ C էութիւն *փ/ս* յէութիւն բերողն

³⁴ ասասցոյ՜ զոսսա եւ ինքնակալ եւ ինքնագաւ // Ex. Fid. 3.50 δώσομεν τοιαύτην δύναμιν

³⁵ Ex. Fid. 3.52 δώμεν // B ասասցոյ՜

³⁶ B E F ումէ

³⁷ Ex. Fid. 3.53 Τοῦτο // B C *չ/ք*

Դ. Վասն թէ զի՞նչ է Աստուած, եւ զի անհաս է¹:

Քանզի է Աստուած՝ այս յայտնի է: Իսկ թէ զի՞նչ է գոյութեամբ եւ² բնութեամբ, անհասանելի է եւ անիմանալի: Եւ զի անմարմին է, յայտնի է. զի³ զիա՞րդ մարմնաւոր լիցի անհասակն եւ անսահմանն, աննկարն եւ անմեղանալին, անտեսն եւ պարզն եւ անխառնն: Կամ զիա՞րդ փոփոխելի եւ փանդակելի եւ ախտաւոր լիցի. եւ դարձեալ՝ զիա՞րդ անախտ լիցին ի նիւթոց ժողովեալն եւ դարձեալ ի նոսա լուծանելին: Զի խառնումն սկիզբն⁴ պատերազմի է, եւ պատերազմ⁵ բաժանման, եւ բաժանումն՝ լուծման, իսկ լուծումն ամենեւիմբ աւտար յԱստուծոյ է⁶:

Կամ «զիա՞րդ պահի յամենեսեան բնականութիւնն եւ ամենեցուն լցուցանողութիւնն Աստուծոյ», որպէս ասէ զիր. «ն՞չ գերկինս եւ գերկիր եւ լնում, ասէ Տէր»⁷: Զի անհնար է մարմնաւորի ի մէջ մարմնաւորաց կեալ եւ ոչ հատանել եւ հատանիլ եւ ընդ միմեանս հիւսիլ⁸ եւ առընթեր դնիլ, իբրեւ այնք, որ ընդ հիւսիս խառնին եւ միաբանին:

Այլ թէպէտ եւ ոմանք ասեն աննիւթ մարմին, իբր հելլենացոց իմաստնոց ասացեալ է հինգերորդ մարմին, որ անկայ է⁹, եւ շարժուն լինիցի, իբրեւ գերկինս, զի զնա ասեն հինգերորդ մարմին: Ո՞վ է, որ շարժէ զնա, որովհետեւ ամենայն շարժուն յայլմէ ումեմէ շարժի: Եւ դարձեալ այն ո՞վ եղիցի. եւ այս անկատարումն լինի, մինչեւ մերձեսցոմ յանշարժ ինչ, վասն զի անշարժ է առաջի շարժողն, որ է Աստուած: Այլ զիա՞րդ ոչ ընդ տեղեւ պարագրի¹⁰ շարժուն, որով¹¹ միայն Աստուած է անշարժ, անշարժութեամբ շարժող ամենայնի: Այսպէս եւ անմարմին իմանի Աստուած:

¹ Ex. Fid. 4.1 Περί τοῦ τί ἐστὶ θεός; ὅτι ἀκατάληπτον

² C եւ գոյութեամբ

³ C չիք յայտնի է. զի

⁴ C չիք

⁵ F պատերազմն

⁶ F է յաստուծոյ

⁷ Greg. Naz., *De theologia* 8.1-3: Πῶς δὲ καὶ σωθήσεται τὸ διὰ πάντων διήκειν καὶ πληροῦν τὰ πάντα θεόν, κατὰ τὸ Οὐχὶ τὸν οὐρανὸν καὶ τὴν γῆν ἐγὼ πληρῶ; λέγει κύριος, երեւ. ԻԳ 24. «միթէ գերկինս եւ գերկիր եւ ո՞չ լնում ասէ Տէր»:

⁸ B C F հիւսել

⁹ B C F չիք

¹⁰ C տարագրի

¹¹ C որովհետեւ

Այլ եւ ոչ այս է¹² գոյութեան նորա յառաջադրող, իբրեւ ոչ անձնունդն եւ անսկիզբն եւ անփոփոխելին եւ անապականն եւ որքան վասն Աստուծոյ եւ կամ Աստուծոյ¹³ գոլ ասի¹⁴. զի այսոքիկ նորա ոչ եթէ զոր ինչ է՝ զայն յայտնեն, այլ՝ զոր ինչ ոչ էն: Զի զոմեք գոյութիւն ով ասել կամի, զոր ինչ է ասել պարտ է, եւ ոչ՝ զոր ինչ ոչ է: Իսկ զԱստուծոյ՝ եթէ զինչ է գոյութիւն¹⁵ նորա, անհնար է ասել նմա: Եւ առաւել սեփական է ի պակասմանն ամենայնի առնել վասն նորա ասացուած, զի եւ ոչ մի ինչ է ի գոյիցս, ոչ եթէ իբրեւ անգոյ է, այլ իբրեւ վերագոյն քան զգոյս, նաեւ ի վեր քան զէութիւն եւս: Զի եթէ գոյացութեանց են գիտութիւնն, որ ի վեր քան զգոյութիւն է, նա ստուգիւ եւ ի վեր քան զգիտութիւն է, եւ ընդդէմ սմա ի վեր քան զգոյութիւն եւ¹⁶ ի վեր քան զգիտութիւն եղիցի:

Անշափելի է Աստուած եւ անհասանելի. եւ այս միայն է նմա հասանելի՝ անշափութիւն եւ անհասանելութիւն: Իսկ որքան ասեմք Աստուծոյ ճառելի¹⁷ գոլ, ոչ զբնութիւն, այլ զմերձ¹⁸ ի բնութիւն նորա յայտնեն: Զի թէպէտ բարեբար կամ արդար, թէպէտ իմաստուն կամ զինչ եւ ասեն, ոչ զբնութիւն Աստուծոյ ասեն¹⁹, այլ զարտաւոյ²⁰ եւ մերձ ի նա ասեն: Իսկ են այլ ինչ ճառելի ասացուածք Աստուծոյ, որ ունին²¹ զաւրութիւն վերագոյն քան զանճառելիսն, որպէս ի մութն ասել զԱստուծոյ ոչ մութն ասեմք զնա կամ²² իմանամք, այլ եւ ոչ լոյս է, այլ ի վեր քան զլոյս է Աստուած²³:

¹² C ասէ *ի/ս* այս է

¹³ Ex. Fid. 4.24 *περι θεοῦ ἢ περι* (C om.) *θεόν*

¹⁴ C ասիւն

¹⁵ Ex. Fid. 4.26-27 *κατ' οὐσίαν*

¹⁶ E F *չ/ք*

¹⁷ B ճառել

¹⁸ C մերձ

¹⁹ Ex. Fid. 4.35 *λέγεις* // B են

²⁰ B C զորս արտաւոյ

²¹ C ունի

²² ասեմք զնա կամ // Ex. Fid. 4.38 *չ/ք*

²³ Ex. Fid. 4.38 *չ/ք*

Ե. Յայտնումն երէ մի է Աստուած եւ ոչ բազում¹:

Երէ է Աստուած՝ յայտնի է եւ² ցուցաւ իսկ, եւ երէ անհասանելի գոյութիւն իւր: Իսկ վասն զի մի է Աստուած³ եւ ոչ բազում, որոց հաւատան աստուածային գրոց ոչ անկարծելի է⁴: Զի ասէ⁵ Տէր ի սկիզբն արեւնադրութեանն. «Ես եմ Տէր Աստուած քո, որ հանի զքեզ յերկրէն եգիպտացոց: Մի եղիցին մեզ աստուածք⁶ բաց յինէն»⁷, եւ դարձեալ՝ «Լուր Իսրայէլ, Տէր Աստուած քո՝ Տէր մի է»⁸: Եւ ի ձեռն Եսայեայ մարգարէին ասէ. «Ես եմ Աստուած առաջին, եւ ես զկնի այսորիկ. եւ բաց յինէն ոչ գոյ այլ Աստուած»⁹: Եւ Տէրն յաւետաւանին ասէ վասն Հաւ. «Այս են¹⁰ յաւիտենական կեանքն, զի ծանիցեն զքեզ նշմարիտդ Աստուած»¹¹:

Իսկ որոց¹² ոչ հաւատան աստուածային գրոց, այսպէս ասասցում. երէ Աստուած կատարեալ է եւ անպակաս բարեւարութեամբ եւ իմաստութեամբ եւ զարութեամբ, անսկիզբն եւ անվախճան¹³, մշտնջենաւոր¹⁴, աննկարագրելի, պարզ ասեմ՝ ամենայնի կատարեալ: Արդ երէ բազումք ասեմք աստուածք, հարկ է բաժանմունս առնել ի մէջ բազմացն: Զի երէ եւ ոչ մի բաժանումն է ի մէջ նոցա¹⁵, ո՞ր է կատարելութիւնն: Զի թէպէտ եւ բարեւար կամ զարութեամբ կամ իմաստութեամբ կամ ժամանակաւ կամ տեղեալ¹⁶ պակասի ինչ ի կատարելութենէն, ոչ լինիցի Աստուած: Իսկ ամենայնի նոյնութիւն զմիութիւն առաւել եւ ոչ զբազմութիւն ցուցանէ: Կամ զիա՞րդ պահեսցի

¹ Ex. Fid. 5.1 Ἀπόδειξις, ὅτι εἷς ἐστὶ θεὸς καὶ οὐ πολλοί

² Ex. Fid. 5.2 չիք է եւ

³ Ex. Fid. 5.3 չիք / CFM^e + ἐστὶ

⁴ Ex. Fid. 5.4 ἀμφιβάλλεται // B կարծելի է

⁵ B C սա է

⁶ B E F աստուած

⁷ Եթ Ի 2-3. «Ես եմ տէր Աստուած քո որ հանի զքեզ յերկրէն եգիպտացոց ի տանէ ծառայութեան: Մի եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն»:

⁸ Բ Օրին. Զ 4. «Լուր Իսրայէլ, տէր Աստուած մեր՝ Տէր մի է»:

⁹ Ես. ԽԴ 6. «Ես առաջին՝ եւ ես առ յապայ. բաց յինէն այլ ոչ գոյ Աստուած»: | Ex. Fid. 9-10 + Ἐμπροσθέν μου οὐκ ἐγένετο ἄλλος θεὸς καὶ μετ' ἐμὲ οὐκ ἔσται καὶ πλὴν ἐμοῦ οὐκ ἔστι C E է

¹¹ Յովհ. Ժէ 3. «Այս են յաւիտենական կեանք, զի ծանիցեն զքեզ միայն նշմարիտ Աստուած»:

¹² C որ

¹³ E F + եւ

¹⁴ E F + եւ

¹⁵ Ex. Fid. 5.17-18 + εἷς μᾶλλον ἐστὶ καὶ οὐ πολλοί. Εἰ δὲ διαφορὰ ἐν αὐτοῖς / H om.

¹⁶ C + կամ

ի մէջ բազմացն անֆանակութիւն: Զի ուր իցէ մի անդ, ոչ կարէ լինել¹⁷ այլ: Կամ զիա՛րդ ի ձեռն բազմաց կեալ եւ պահեալ լիցի աշխարհ պահպանութեամբ պատերազմաւ բազմացն¹⁸: Զի բաժանումն զհակառակութիւնն բերէ ի ներս: Իսկ եթէ ասիցէ ոք, եթէ իւրաքանչիւրն¹⁹ իշխէ մասին միոյ²⁰ եւ պահէ զնա, եւ թէ այդպէս է²¹, ո՛վ է կարգողն եւ սահման դնողն²² նոցա, զի նա է Աստուած եւս: Վասն այսորիկ մի է Աստուած՝ կատարեալ, աննկարագրելի, ամենայնի արարիչ, կալող եւ պահող, գերակատարեալ եւ ի սկզբանէ կատարեալ²³:

¹⁷ Ը լինիլ

¹⁸ կեալ եւ պահեալ լիցի աշխարհ պահպանութեամբ պատերազմաւ բազմացն // Ex. Fid. 5.23-24 κυβερνηθήσεται ὁ κόσμος καὶ οὐ διαλυθήσεται καὶ διαφθαρήσεται μάχης ἐν τοῖς κυβερνώσι θεωρουμένης / L om. διαλυθήσεται καὶ

¹⁹ Ը այլ ոք

²⁰ Ը չիք մասին միոյ

²¹ Ex. Fid. 5.25 չիք եւ պահէ զնա, եւ թէ այդպէս է

²² սահման դնողն = Ex. Fid. 5.26 τὴν διανομήν... ποιησάμενον // B սահմանադրողն

²³ Ex. Fid. 5.29 + Πρὸς δὲ καὶ φυσικὴ ἀνάγκη μονάδα εἶναι δυάδος ἀρχήν / F om.

2. Վասն Բանին Աստուծոյ¹:

Այլ մինն եւ միայնն Աստուած ոչ անբան է: Այլ ունի բան՝ ոչ անմարմին ազգաւ եւ սկսեալ էութեամբ եւ ոչ կատարուն. զի ոչ երբէք էր Աստուած առանց Բանի, այլ միշտ ունի յանձն իւր Բան ծնեալ յիւրմէ, ոչ իբրեւ զբանն մեր անանձն եւ յաղս ցնդելի, այլ անձնաւոր, կենդանի, կատարեալ, ոչ արտաբոյ նորա կացող, այլ ի նմա է²: Զի ո՞ր լիցի արտաբոյ նորա կացեալ: Զի որովհետեւ բնութիւնս մեր տկար է եւ հեշտալոյծ³, վասն այսորիկ եւ բան մեր անանձն է: Իսկ Աստուծոյ՝ իբրեւ մշտնջենաւորի եւ կատարելոյ, կատարեալ եւ անձնաւոր է Բանն եւ միշտ է է եւ⁴ կենդանի եւ ամենայնի ունող, զոր ինչ ունի ծնող նորա: Զի որպէս ի մտաց մերոց ելեալ⁵ Բանն ոչ ամենեւին ինքն միտքն է, եւ ոչ ամենեւին աստար ինչ (զի ի մտացն ունի զէութիւնն, այլ է եւ ոչ նա, եւ զմիտսն ուստի է յանդիման կացուցանէ ոչ ամենեւին հետի ի մտացն, այլ բնութեամբ մի է ընդ նմա եւ այլ է ներհաղորդութեամբ), նոյնպէս եւ Բանն Աստուծոյ ինքն անձնաւորութեամբ բաժանի, յորմէ զէութիւն ունի, իսկ զայն ցուցանելով յանձն իւր, որ ինչ ի Հայր⁶ տեսանի⁷ եւ նոյն մի է բնութեամբ ընդ նմա: Զի որպէս յամենայնի կատարելութիւն տեսանի ի Հար⁸, նոյնպէս տեսանի եւ ի նմանէ ծնեալ Բանն:

¹ Ex. Fid. 6.1 Περί λόγου θεοῦ

² ի նմա է = Ex. Fid. 6.7 ἐν αὐτῷ // B ի նմանէ | Ex. Fid. 6.7 + ἀεὶ

³ Ex. Fid. 6.8 εὐδιάλυτος // C հեշտալի

⁴ C չիք է եւ

⁵ C ելեալ

⁶ Ex. Fid. 6.17 περὶ τὸν θεόν

⁷ E F տեսանին

⁸ C Հայր

Է. Վասն Սուրբ¹ Հոգւոյն²:

Իսկ պարտ է եւ բանին հոգի ունել, զի եւ ոչ բանն մեր անմասն ի հոգւոյն է, այլ որ ի մեզս է հոգի, աստար իմն է ի գոյացութենէս մերմէ: Զի աղից փաշումն եւ արտաքս առաքումն է փաշող եւ թողող³ վասն հաստատելոյ մարմնոյս, որ ի ժամ ձայն արձակելոյն ձայն լինի Բանին՝ յանձն իւր ցուցանելով զգաւրութիւն Բանին:

Իսկ յաստուածային բնութիւնն՝ ի պարզն եւ յանխառնն, էութիւն Հոգւոյն Աստուծոյ բարեպաշտութեամբ խոստովանեալ է, որպէս զի մի լիցի Բանն Աստուծոյ փոքրագոյն ֆան զբանս մեր, իսկ ոչ բարեպաշտութիւն է աստար ինչ եւ արտաքուստ եկամուտ հոգի Աստուծոյ իմանալ, որպէս այս ի մեզ⁴ խառնեալք: Այլ որպէս Բանին Աստուծոյ լսողքն ոչ անանձն, ոչ յուսմանէ եկեալ եւ ոչ ի ձայնէ ցուցեալ եւ ոչ յաւդս ցնդելի եւ լուծանելի⁵, այլ գոյութեամբ հաստատեալ՝ յառաջընտրութեամբ եւ ներգործութեամբ եւ ի նմին զաւրութենէ, նոյնպէս եւ հոգի Աստուծոյ յորժամ⁶ ուսանիմք՝ համագոյ Բանին եւ⁷ մերձ է եւ յայտնող ներգործութեան նորա, ոչ անանձն շունչ իմասցով (զի այսպէս ի⁸ խոնարհութիւն իջցէ մեծութիւն աստուածային բնութեանն, եթէ նմանութեան ոգոյս մերոյ եւ նորա հոգին իմասցի), այլ զաւրութիւն է գոյութեամբ նոյն ինքն յինքն⁹ յորիշ առանձնատրութիւն տեսեալ¹⁰, ի Հաւրէ ելանէ եւ ի Բանին հանգչի եւ իւր յայտնող է, ոչ յԱստուծոյ, յորում է, եւ ոչ ի Բանէն, ընդ որում է, հեռանալ կարող է եւ ոչ յոչէութիւն ցնդելի է, այլ նմանութեամբ Բանին ինքն անձնատր է, կենդանի, յառաջընտրութեամբ, ինքնաշարժ, ներգործող, ամենայն բարեաց կամող եւ ընդ ամենայն կամս իւր հետընթաց

¹ C սրբոյ

² Ex. Fid. 7.1 Περὶ πνεύματος ἁγίου

³ C չէք եւ թողող

⁴ C ի մեզ այս

⁵ Ex. Fid. 7.13 + ὥθημεν / C om.

⁶ B C այժմ

⁷ C չէք

⁸ C այսպիսի

⁹ E F չէք

¹⁰ B C չէք

ունի զարութիւն, ոչ սկիզբն ունելով եւ ոչ կատարած. եւ¹¹ ոչ պակասեցաւ երբէք ի Հարէ¹² Բանն, եւ ոչ ի Բանէն Հոգին:

Մի են բնութեամբ միատրութեամբն, իսկ¹³ միութեամբ բնութեանցն բազմաստուած մոլորութիւն հելլենացոց անյայտ լինի¹⁴, իսկ Բանին եւ Հոգւոյն ընդունելութեամբն հրէիցն փակտեսցի հաւատն, եւ յերկրորդ¹⁵ հերձուածոյն մնամբ անգթելի¹⁶ ի հրէից կարծեացն միութեամբ բնութեանցն, եւ ի հեթանոսացն՝ անձանցն միայն բաժանմամբն: Իսկ եթէ հակառակի հրեայն¹⁷ ի Բանին եւ ի Հոգւոյն խոստովանութիւնն¹⁸, յաստուածային գրոց յանդիմանեալ կարկեսցի: Զի¹⁹ վասն Բանին ասէ Դաւիթ. «Յաւիտեան, Տէր, Բան քո կայ յերկինս»²⁰, եւ դարձեալ. «Առաքեաց զբան իւր եւ բժշկեաց զնոսա»²¹: Այլ բան անանձն ոչ առաքի եւ ոչ յաւիտեանս կայ²²: Իսկ վասն Հոգւոյն նոյն Դաւիթ. «Առաքես զհոգի քո եւ ստեղծիւն»²³²⁴, եւ այլ թէ²⁵ «բանի Տեառն երկինք հաստատեցան, եւ հոգւով բերանոյ նորա ամենայն զարութիւնք նոցա»²⁶: Եւ Յոր. «Հոգի Աստուծոյ, որ ստեղծ զիս, եւ շունչ ամենակալին, որ ըմբռնէ զիս»²⁷: Որովհետեւ Հոգի առաքեալ եւ ստեղծող եւ հաստատող²⁸ եւ ըմբռնող ոչ գոլորշի²⁹ է յաւրս ցնդելի, իբրեւ ոչ մարմնատու անդամ³⁰ է երես Աստուծոյ, այլ երկոյնն այս³¹ աստուածավայելչապէս իմասցին:

¹¹ E F զի

¹² C F ի հարէ երբէք

¹³ Մի են բնութեամբ միատրութեամբն, իսկ // Ex. Fid. 7.28 Οὐτως

¹⁴ F լիցի

¹⁵ Ex. Fid. 7.30 ἐκατέρας

¹⁶ Ex. Fid. 7.30-31 παραμένει τὸ χρήσιμον

¹⁷ C հրեայն հակառակի

¹⁸ C ի խաւակցութենէ

¹⁹ C չիք

²⁰ Սաղմ. ՃԺԸ 89. «Յաւիտեան Տէր քո բան քո կայ յերկինս»:

²¹ Սաղմ. ՃԶ 20. «Առաքեաց զբան իւր եւ բժշկեաց զնոսա»:

²² F կեա

²³ C ստեղծանին

²⁴ Սաղմ. ՃԳ 30. «Առաքես զհոգի քո եւ ստանաս զնոսա»:

²⁵ E F չիք այլ թէ

²⁶ Սաղմ. ԼԲ 6. «Եւ բանի Տեառն երկինք հաստատեցան, եւ հոգւով բերանոյ նորա ամենայն զարութիւնք նոցա»:

²⁷ Յոր ԼԳ 4. «Հոգի աստուածեղէն է որ արար զիս՝ եւ շունչ ամենակալի է որ ուսուցանէ զիս»:

²⁸ C հատալ

²⁹ C F գոլորշի

³⁰ C անդէմ

³¹ C այսինքն

Ը. Վասն Սուրբ Երրորդութեանն¹:

Հաւատամք ի մի Աստուած, ի մի սկիզբն եւ անսկիզբն², յանդն եւ յանստեղծն, յանլոյծն եւ յանմահն, յաիտենականն եւ յանֆանակն, յանկարագրելին եւ յանսահմանելին, յանշափ զաւրութիւնն, ի պարզն եւ յանխառնն, յանմարմինն եւ յանցնդելին, յանախտն եւ յանփոփոխելին, յանհերձելին եւ յանտեսանելին, որ է աղբիւր բարութեան եւ արդարութեան, լոյս իմանալի, անմեծնալի, զաւրութիւն՝ եւ ոչ յումեմնէ ֆանակէ³ ծանուցեալ, այլ միայն իւրով կամամն չափեալ (որ զամենայն, զոր ինչ եւ կամի, կարող է), ամենայն եղելոցս երեւալեացս եւ աներեւութիցն արարիչ⁴, ամենայնի ըմբոնող եւ տիրող եւ թագաւոր՝ անկատարելի եւ անմահ թագաւորութեամբ եւ ոչ մի ինչ ի հակառակացն ունելով, ամենայնի լցուցիչ եւ ոչ ի միոյ իմեմէ պարագրեալ, այլ եւս առաւել ինքն պարունակող ամենայնի գոլ եւ ամենակալ եւ յառաջակալ, անապականաբար ի վերայ ամենայն գոյից գոլով եւ ամենայն մասամբ ֆան զամենայն գերազանցեալ եւ ֆան զամենայն էսս վերանեալ⁵, որպէս վերագոյն ֆան⁶ զէսս եւ վերագոյն ֆան զգոյս էութիւն, վերագոյն Աստուած, առաւել բարեւար, վերագոյն լցեալ, ամենայն իշխանութեան եւ կարգաց ցուցանող եւ ֆան զամենայն իշխանութիւն⁷ եւ զկարգս առաւել հաստատեալ, ի վեր ֆան զգոյութիւն եւ զկեանս եւ զբանս եւ զմտածութիւնս, ինքն լոյս, ինքն բարեւար, ինքն կեանք, ինքն գոյութիւն, որպէս ոչ յայլմէ ունելով զէութիւն, որպէս եւ այլքն ամենեմեան, այլ նա ինքն աղբիւր է էութեան էիցն եւ կենդանեացն կենաց, եւ որոց զբանս ունին բան, ամենեցուն պատնառ ամենայն բարեաց, գիտող ամենայնի յառաջ ֆան զգալ յէութիւն նոցա, մի էութիւն, մի աստուածութիւն, մի զաւրութիւն, մի կամք, մի ներգործութիւն, մի սկիզբն, մի իշխանութիւն, մի տէրութիւն, մի թագաւորութիւն, յերիս կատարեալ անձնաւորութիւնս ծանուցեալ եւ պաշտեալ⁸, յամենայն բանական ստեղծուածոցս անխառնակելի միաւորեալ եւ անմեկնելապէս բա-

¹ Ex. Fid. 8.1 *Περὶ τῆς ἁγίας τριάδος*

² Ex. Fid. 8.2 *ἄναρχον* // B *ἄρ*

³ C ֆանակիւ

⁴ Ex. Fid. 8.8-9 + *πάντων συνεκτικὴν καὶ συντηρητικὴν, πάντων προνοητικὴν* / L om. *πάντων συνεκτικὴν καὶ συντηρητικὴν*, H om. *πάντων προνοητικὴν*

⁵ C վերացեալ

⁶ C *ἄρ*

⁷ C իշխանութիւնս

⁸ Ex. Fid. 8.24 + *μιᾷ προσκυνήσει πιστευομένην τε καὶ λατρευομένην*.

Ժանեալ, որ եւ սփանչելի իմն է այս: ⁹Առ որ եւ զմկրտութիւնն առաք, վասն զի այսպէս պատուիրեաց Տէրն մկրտել¹⁰ առաքելոցն. «մկրտեցէ՛ք զնոսա», ասելով «յանուն Հաւր եւ Որդոյ եւ Հոգոյ սրբոյ»¹¹:

Ի միոյ Հաւր, որ է ամենեցուն սկիզբն եւ պատճառ, ոչ յումեմէ ծնեալ, այլ միայն անպատճառ¹² եւ անծնունդ, եւ ամենեցուն արարիչ է, եւ ի մի միայն բնութեամբ Հաւր միածին Որդոյ նորա՝ Տեառն եւ Աստուծոյ եւ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ առաքողի Հոգոյն սրբոյ: Միոյ միածնի Որդոյն Աստուծոյ, որ ծնեալ է ի Հաւրէ յառաջ քան զամենայն յաիտեանս, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնեալ եւ ոչ արարած, համագոյ Հաւր, որով ամենայն եղեւ: Իսկ «յառաջ քան զամենայն յաիտեանս» ասելով, ցուցանի¹³, զի անժամանակ եւ անսկիզբն է ծնունդ նորա, զի ոչ եթէ յոչ գոյից ի գոյութիւն ածեալ եղեւ Որդին Աստուծոյ՝ հառագայքն փառաց եւ պատկերն հայրական¹⁴ անձնատրութեան¹⁵, կենդանի իմաստութիւն եւ զարութիւն¹⁶, անձնատր բան, գոյական եւ կատարեալ եւ կենդանի պատկերն¹⁷ անտեսանելոյն Աստուծոյ¹⁸. այլ միշտ էր ընդ Հաւր եւ ինքն¹⁹ էր մշտնջենատր եւ անսկիզբն ծնեալ ի նմանէ²⁰: Զի Հայր առանց Որդոյ գոյով ոչ կոչեսցի հայր: Իսկ եթէ էր երբեք, յորժամ ոչ էր Որդի, նա եւ ոչ Հայր էր, եւ եթէ յետոյ եղեւ Որդի, յետոյ եղեւ եւ Հայր, ոչ գոյով Հայր յառաջ քան զսա, եւ շրջեալ փոփոխեցաւ յոչ հայր լինելոյ ի լինել հայր, որ է այս շար քան զամենայն հայհոյութիւն: Վասն զի ոչ է կարողութիւն ասել Աստուծոյ աստար լինել երբեք ի բնութեամբ ծնողութենէն: Իսկ ծնող լինել նորա, այս ինքն յիւրմէ գոյութենէն, ծնանի զնմանն իւր բնութեամբ:

Եւ զի ի վերայ ծննդեան Որդոյ հայհոյութիւն է ասել միջնորդ գոլ Ժամուց կամ զկնի Հաւր մտածել²¹ զլինելութիւն Որդոյ, քանզի ի նմանէ, այ-

⁹ Ex. Fid. 8.26 + Εἰς πατέρα καὶ υἱὸν καὶ ἅγιον πνεῦμα

¹⁰ C չ/ք

¹¹ Մատթ. ԻԲ 19. «մկրտեցէ՛ք զնոսա յանուն Հաւր եւ Որդոյ եւ Հոգոյ սրբոյ»:

¹² F պատճառ

¹³ Ex. Fid. 8.38 δείκνυσεν

¹⁴ Ex. Fid. 8.40 τοῦ πατρὸς // B C հայրենական

¹⁵ Հմմտ. Եբր. Ա 3. «լոյս փառաց՝ եւ նկարագի՛ր էութեան նորա»:

¹⁶ Հմմտ. Ա Կորնթ. Ա 24. «Աստուծոյ զարութիւն, եւ Աստուծոյ իմաստութիւն»:

¹⁷ C պատկեր

¹⁸ Հմմտ. Կողոս. Ա 15. «պատկեր աներեւութիւն Աստուծոյ»:

¹⁹ Ex. Fid. 8.42 ἐν αὐτῷ // B ինքն

²⁰ Ex. Fid. 8.43-44 + οὐ γὰρ ἦν ποτε ὁ πατήρ, ὅτε οὐκ ἦν ὁ υἱός, ἀλλ' ἅμα πατήρ, ἅμα υἱὸς ἐξ αὐτοῦ γεγεννημένος.

²¹ Ex. Fid. 8.52 չ/ք

սինքն՝ ի Հաւր բնութենէն ասեմք զծնունդն Որդոյ: Եւ ոչ եթէ ընդ Հաւր ի սկզբանէ ասեմք զոլ Որդոյ ծնելոյն ի նմանէ եւ փոփոխումն բերելով ածեմք յառանձնատրութիւն Հաւր, իբրեւ եթէ ոչ զոլ հայր նախ եւ յետոյ եղեւ հայր: Վասն զի եղական ամենայն թէպէտ եւ յետոյ ի նմանէ եղեն²², ոչ յերեւելէ կամ ի գոյութենէ²³ Աստուծոյ, այլ յոչ գոյից ի գոյութիւն խորհրդով եւ զաւրութեամբ նորա եկին, եւ ոչ մերձեմայ փոփոխումն յաստուածային բնութիւնն: Վասն զի ամենայն²⁴ ծնունդ ի գոյութենէ ծնողին լիցի ծնունդ ծնելոյն եւ էութեանն նման նմա զոլ, իսկ եղական եւ արարած արտաբնատ եւ ոչ ի գոյութենէ արարողին եւ էացուցանողին յերթիւն ածէ զնոսա²⁵ ամենեւիմբ աննմանք գոյով նմա:

Վասն այսորիկ միայն անախտին եւ անեղին²⁶ եւ անփոփոխելոյն եւ մշտնջենատրին Աստուծոյ ծնունդն անախտաբար ապի գոլ եւ անարարած: Վասն զի այն, որ բնութեամբ անախտ եւ անցնդելի է, իբրեւ պարզ եւ անխառն գոյով, ոչ կարէ զախտանալ յանձն²⁷ առնուլ եւ զցնդումն՝ ոչ ի ծնունդ եւ ոչ յեղականութիւն, եւ կամ գործակցի իմիք կարատի, այլ ծնունդն անսկիզբն եւ մշտնջենատր գործ է բնութեանն, երեւեալ ի գոյութենէ իւրմէ, որպէս զի մի դիպեսցի փոփոխումն անեղ²⁸ ծնողին եւ զի մի Աստուած առաջինն եւ Աստուած այն, որ զկնի՝ լինիցի, եւ յաւելուած ընդունիցի: Իսկ արարչութիւն Աստուծոյ կամացն²⁹ գործ եւ³⁰ ոչ մշտնջենատրակից Աստուծոյ է, վասն զի ոչ է կարողութիւն այնմ, որ յոչէից³¹ յերթիւն եկն, մշտնջենատրակից լինել անսկզբանն եւ միշտ էին:

Վասն զի որպէս ոչ միով արիւնակաւ ներգործէ մարդ եւ Աստուած (զի մարդ ոչ ինչ կարէ յոչ գոյէ ի գոյութիւն ածել, այլ զոր եւ ինչ առնէ, յենթակայէ նիւթոյ առնէ, ոչ կամելով միայն, այլ եւ յառաջ մտադրելով եւ ի միտսն արիւնակելով, զոր գործել ջանայ, եւ ապա աշխատութեամբ ձեռացն ի կիր արկանելով եւ զվիշտ եւ զնեղութիւն յանձն առնելով, բազում անգամ զրկի եւ ոչ կարէ այնպէս առնել, որպէս կամեցաւ, իսկ Աստուած միայն կամելով յոչէից

²² Ex. Fid. 8.56 + ἄλλ'

²³ յերեւելէ կամ ի գոյութենէ երկու բառով մեկ բառն է *Թարգմանված*՝ Ex. Fid. 8.57 ἐκ τῆς... οὐσίας.

²⁴ B E Բյամենայն Ex. Fid. 8.59 չիք

²⁵ Ex. Fid. 8.61 τὸ κτιζόμενον καὶ ποιούμενον

²⁶ Ex. Fid. 8.63 ἀναλλοιώτου

²⁷ C ախտանալ անձն

²⁸ B C E ունել Ex. Fid. 8.68 չիք

²⁹ C + է

³⁰ E չիք

³¹ C ոչէից

յէտրին եբեր զամենայն), նոյնպէս եւ ոչ նմանապէս ծնանի³² Աստուած եւ մարդ: Վասն զի Աստուած որպէս անժամանակ եւ անսկիզբն եւ անախտ եւ անցնդելի եւ անմարմին եւ պարզ եւ անկատարած, անժամանակաբար եւ անսկզբնաբար եւ անախտաբար³³ ծնանի եւ³⁴ առանց մերձաւորութեան, եւ³⁵ ոչ սկիզբն ունի անհասանելի ծնունդն իւր եւ ոչ կատարած: Եւ³⁶ անսկիզբն՝ վասն անփոփոխելի գոյոյն, իսկ անցնդելի՝ յաղագս անախտութեան եւ անմարմնութեան, եւ առանց մերձաւորութեան՝ վասն աննիւթ գոյոյն, վասն զի մի միայն է Աստուած պարզ եւ³⁷ անկարատ ալոյ, անկատարելի եւ անդադարելի յաղագս անսկզբնութեան եւ անժամանակ գոյոյն³⁸, եւ անկատարելութեան եւ միշտ նոյնպէս³⁹ լինելութեան. վասն զի անսկիզբն եւ անկատարած եղիցի, իսկ որք շնորհամ առնուն զանկատարածն գոյ, նա ոչ անսկիզբն գոյով, որպէս եւ են հրեշտակք:

Արդ ծնաւ միշտ էնն Աստուած յանձն իւր զբանն կատարեալ՝ անսկիզբն եւ անկատարած, որպէս զի մի ընդ ժամանակաւ ծնող եղիցի Աստուած, որ վերագոյն քան զժամանակաւ ունի բնութիւն եւ էութիւն: Իսկ մարդ յայտնի է, զի հակառակ ծնանի, որպէս եղականութեան եւ ապականութեան եւ հեղման եւ բազմութեանն հետեւեալ⁴⁰, եւ⁴¹ սեռական⁴² նիւթեղէն մարմին գոյով, եւ յարուի եւ յիգի բնութիւն ստանալով զպատճառ գոյութեանն⁴³. վասն զի կարատ է արուն աւգնականութեան իգին: Այլ քաւիչ լեր մեզ, որ քան զամենայն գերազանցելով եւ ամենայն մտածութեան եւ գիտութեան բարձր եւ գերազանցեալ աննկատելի⁴⁴ եւ:

Ուսուցանէ սուրբ կաթողիկէ եւ առաքելական եկեղեցի յանկարծակի ընդ Հար եւ յանկարծակի ընդ ինքն զմիաժին Որդին ծնեալ ի նմանէ՝ անժամանակ եւ անհոսելի, անախտ եւ աննկատելի, որպէս գիտէ ինքն միայն ամե-

³² Ex. Fid. 8.79 γενηῖ // B C E ծնանիս

³³ Ex. Fid. 8.81 + καὶ ἀρρεστῶς

³⁴ C չիք

³⁵ C չիք

³⁶ C չիք

³⁷ Ex. Fid. 8.85 չիք պարզ եւ

³⁸ F չիք վասն զի մի միայն է Աստուած պարզ եւ անկարատ ալոյ, անկատարելի եւ անդադարելի, յաղագս անսկզբնութեան եւ անժամանակ գոյոյն

³⁹ Ex. Fid. 8.83 ὡσαύτως // C F նոյն

⁴⁰ E F հետեւել

⁴¹ C չիք

⁴² C սեռական տեսական Ex. Fid. 8.92 չիք

⁴³ Ex. Fid. 8.93 չիք զպատճառ գոյութեանն

⁴⁴ Ex. Fid. 8.95 չիք

նայնի Աստուածն: Վասն զի որպէս յանկարծակի հուր եւ յանկարծակի ընդ ինքն լոյս իւր, եւ ոչ նախ հուր եւ ապա զկնի լոյս, այլ առժամայն ընդ նմա ելով⁴⁵, եւ որպէս ի հրոյ ծնեալ լոյսն միշտ ընդ նմա է, ոչ ուրեք հետանալով ի նմանէ, այսպէս Որդի ի Հաւրէ ծնանի, ոչ երբեք բաժանեալ ի նմանէ, այլ միշտ ի նմա է: Այլ զի ի հրոյն ծնեալ լոյսն եւ անմեկնելի ի նմանէ ելով⁴⁶, ոչ ունի ուրոյն անձն իւր տարորիշ ի հրոյ, զի բնութեամբ լոյս առ ինչ է հրոյ, իսկ Որդին Աստուծոյ միածինն, որ ի Հաւրէ ծնեալ է եւ անմեկնելի մշտնջենատուր ի նմա է⁴⁷, ունի զիւր կատարեալ առանձնատրութիւն, որոշեալ ի Հաւր առանձնատրութենէն, անորոշելի գոլով⁴⁸:

Եւ Բան⁴⁹ հառագայթ կոչի, վասն զի առանց մերձատրութեան եւ անախտ եւ անժամանակ եւ առանց հեղման եւ անմեկնելի ծնեալ է⁵⁰ ի նմանէ⁵¹, իսկ Որդի⁵² պատկեր հայրական անձին, վասն զի կատարեալ է եւ անձնատուր եւ ամենայնիւ նման Հաւր, բայց միայն յանձնելութենէն, իսկ միածին, վասն զի միայն ի միայնոյ Հաւրէ միայն ծնաւ: Քանի ոչ կարէ նմանող լինել այլ ծնունդ ծննդեան Որդոյն Աստուծոյ, եւ ոչ գոյ այլ Որդի Աստուծոյ: Եւ զի թէպէտ եւ Հոգի սուրբ ի Հաւրէ ելանէ, այլ ոչ ծննդեամբ, այլ ելողութեամբ: Այլ արիւնակ էութեան այլ⁵³ այնպէս⁵⁴ անգիտելի եւ անհասանելի, որպէս եւ էր ծնունդն Որդոյ: Վասն այսորիկ զամենայն ինչ, զոր ունի Հայր, նորա է, բայց միայն յանձնելութենէն, որ ոչ զգոյացութեան փոփոխմունս նշանակէ եւ ոչ զպատուոյ, այլ զարիւնակ էութեանն, որպէս աղամեան ծնունդ⁵⁵ (գոլով ստեղծուած Աստուծոյ), եւ Սեթ՝ ծնունդ (վասն զի որդի Աղամայ), եւ Եւա՝ հատումն⁵⁶ ի կողիցն Աղամայ, եւ ոչ բաժանին սոքա ի միմեանց բնութեամբ եւ գոյութեամբ⁵⁷, վասն զի մարդիկ ելով, այլ միայն այս արիւնակաւ էութեան այլ⁵⁸:

⁴⁵ Ex. Fid. 8.100 ἄμα // F չիք ընդ նմա ելով

⁴⁶ C մնալով փխ ի նմանէ ելով Ex. Fid. 8.103 չիք

⁴⁷ Ex. Fid. 8.106 ἐν αὐτῷ // E նմանէ

⁴⁸ Ex. Fid. 8.107 չիք անորոշելի գոլով

⁴⁹ E Բանն

⁵⁰ Ex. Fid. 8.103 γεγεννησθαι // C ծնելոյն B չիք

⁵¹ Ex. Fid. 8.109-110 ἐκ τοῦ πατρὸς

⁵² C E + եւ

⁵³ C չիք

⁵⁴ այլ այնպէս // Ex. Fid. 8.116 + οὕτως ἄληπτος

⁵⁵ Ex. Fid. 8.119 ὁ Ἀδὰμ ἀγεννητος = *Աղամ անծնունդ

⁵⁶ Ex. Fid. 8.121 ἐκπορευθεῖσα (οὐ γὰρ ἐγεννήθη αὕτη) / LMN om. (οὐ γὰρ ἐγεννήθη αὕτη)

⁵⁷ Ex. Fid. 8.122 չիք

⁵⁸ Ex. Fid. 8.122 չիք

Պարտ է գիտել, վասն զի ածենիտան, որ միովն նուի է գրեալ, անեղ նշանագրէ, իսկ ժեննիտան⁵⁹ երկու նուի դրոշմեալ, անծնունդ ասէ: Արդ ըստ առաջնոյ⁶⁰ գծին բաժանի գոյութիւն ի գոյութենէն⁶¹: Վասն զի այլ է գոյութիւն եղական եւ այլ է անեղ, այսինքն՝ ածենիտան եւ ժեննիտան⁶²: Իսկ ըստ երկրորդ գծին ոչ բաժանի գոյութիւն ի գոյութենէն⁶³, վասն զի ամենայն արինակ կենդանեացն առաջին անձն անծնունդ է, այլ ոչ անեղ: Վասն զի էացան յարարչէն բանի ածեալք յէութիւն եւ ոչ եղեն ծնեալ⁶⁴, վասն զի ոչ գոյր յառաջ քան զնոսա այլ համասեռ նոցա, յորմէ ծնանէին:

Այսպէս ըստ առաջին գծին հաղորդին առ⁶⁵ միմեանս երրորդն սուրբ աստուածութեանն վերնագոյ աստուածոց անձինքն (վասն զի համագոյ եւ անեղ է են), իսկ ըստ երկրորդ գծին՝ եւ ոչ ուրեք (վասն զի Հայր միայն է անծնունդ, զի ոչ յայոյ ուրեք առանձնաւորութենէ է էութիւն իւր), եւ Որդի միայն է ծնեալ (վասն զի ի Հայր էութենէն ծնաւ անժամանակ եւ անսկիզբն), եւ միայն Հոգին Սուրբն ելալ յէութենէ Հայր ոչ ծննդեամբ, այլ ելողութեամբ: Զայսոսիկ այսպէս ուսուցանէ մեզ աստուածային գիրք, իսկ զարինակ աստուածային ծննդեանն եւ զեղողութեանն անհասանելի մնալով:

Եւ զայս եւս⁶⁶ ուսանել պարտ է, եթէ ոչ ի մէնջ եղեալ եղեն երանելոյ⁶⁷ աստուածութեանն հայրութեան եւ որդիութեան եւ եղողութեան այս անուանք, այլ նովաւ տուեալ եղեն մեզ, որպէս ասէ⁶⁸ առաքեալ. «Վասն այսորիկ կրկնեմ զծունկս⁶⁹ իմ առ Հայր. յորմէ ամենայն հայրութիւնք յերկինս եւ յերկիր անուանեալ են»⁷⁰:

Իսկ թէպէտ ասեմք զՀայր⁷¹ սկիզբն Որդոյ եւ մեծ քան զնա, ոչ աւագութիւն ինչ⁷² ասեմք ժամանակաւ կամ բնութեամբ ցուցանելով, զի «նովաւ

⁵⁹ E նէննիտան

⁶⁰ C յառաջին *ի/ս* ըստ առաջնոյ

⁶¹ C գոյութենէ

⁶² E ժեննիտոյն | Ex. Fid. 8.126-127 ἄλλη γὰρ οὐσία ἢ ἄκτιστος ἦτοι ἀγέννητος (διὰ τοῦ ἐνὸς Νῦ), καὶ ἄλλη ἢ γεννητὴ ἦτοι κτιστή / MN om.

⁶³ C գոյութենէ

⁶⁴ C ծնեալք

⁶⁵ B ընդ

⁶⁶ C *ի/ս*

⁶⁷ B E երանելի

⁶⁸ Ex. Fid. 8.144 + ὁ θεῖος

⁶⁹ C զծունկս

⁷⁰ Եփես. Գ 14-15. «Վասն այսորիկ դնեմ ծունք առ հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ուստի ամենայն նահապետութիւն յերկինս եւ յերկրի անուանիք»:

⁷¹ B C հայր

⁷² Ex. Fid. 8.148 προτερεύειν αὐτὸν τοῦ υἱοῦ

եղեն ամենայն յափտեանմ»⁷³, եւ ոչ այլ ինչ իմիք բայց ի պատճառ գոյոյ միայն, այսինքն՝ եթէ Որդի ի Հարէ ծնաւ, եւ ոչ Հայր յՈրդոյ, վասն զի Հայր պատճառ է Որդոյ բնութեամբ, որպէս եւ ոչ ի լուսոյ զհուր ասեմք ելեալ, այլ եւս առաւել զլոյս ի հրոյ⁷⁴: Որովհետեւ յորժամ լսես⁷⁵ սկիզբն եւ մեծ Որդոյ զՀայր, զպատճառ գոյն ի միտ առցես⁷⁶: Եւ որպէս ոչ ասեմք յայլ գոյութենէ զհուր եւ յայլմէ զլոյս, նոյնպէս ոչ կարողութիւն է ասել յայլմէ գոյութենէ զՀայր եւ յայլմէ զՈրդի, այլ ի մի եւ նոյն գոյութենէ⁷⁷: Եւ որպէս ասեմք յեղեղոյ իւրմէ լուսոյն տեսանելի լինել հրոյ, եւ ոչ ասեմք, եթէ սպասաւոր անաւթ ինչ է լոյս հրոյ, այլ⁷⁸ բնութեամբ զաւրութիւն նորա է, նոյնպէս եւ ասեմք վասն Հար զամենայն, զոր ինչ եւ առնէ, միաձին Որդովն առնելով, ոչ իբրեւ ծառայական անաւթի ինչ, այլ որպէս բնութեամբ եւ անձնատրական զաւրութեամբ առնելով⁷⁹:

Եւ որպէս ասեմք լուսատու զհուր⁸⁰ եւ զնոյն զլոյս հրոյ⁸¹, նոյնպէս եւ զամենայն, զոր ինչ Հայր առնէ, զնոյն եւ Որդին նման նմին գործէ⁸²: Այլ լոյս ոչ ստացեալ է⁸³ անձն, բայց ի հրոյն, իսկ Որդի կատարեալ անձն է՝ անմեկնելի ի հայրական առանձնատրութենէն, որպէս վերագոյն ցուցաւ⁸⁴: Վասն զի անկար է գտանել յեղականֆս, որ կարող է անփոփոխելի ցուցանել յանձն իւր զաւրինակ սրբոյ Երրորդութեանն եւ զկերպարանն:

Վասն զի եղական եւ խառնեալ եւ ցնդելի եւ փոփոխելի եւ պարագրեւ լին եւ տեսականն եւ տպաւորեալն եւ ապականացուն ո՞րպէս կարող է⁸⁵ յանդիման կացուցանել զայն, որ յայսմանէ հեռացեալ է, ⁸⁶վերագոյն քան զամենայն գոյս աստուածային գոյութիւնն⁸⁷: Իսկ ամենայն եղական, յայտ է, թէ այսմ ամենայն կրից պարտական է եւ իւրով բնութեամբն ապականութեան լծակից եւ մերձաւոր ենթակայէ:

⁷³ Եբր. Ա. 2. «որով եւ գյափտեանսն արար»:

⁷⁴ B չիք ասեմք ելեալ, այլ եւս առաւել զլոյս ի հրոյ

⁷⁵ Ex. Fid. 8.153 ἀκούσωμεν

⁷⁶ C ածցես Ex. Fid. 8.153 νοήσωμεν

⁷⁷ Ex. Fid. 8.156 չիք

⁷⁸ C չիք

⁷⁹ Ex. Fid. 8.161 չիք

⁸⁰ E չիք

⁸¹ զնոյն զլոյս հրոյ // Ex. Fid. 8.161-162 καὶ πάλιν φάμεν τὸ φῶς τοῦ πυρὸς φωτίζειν

⁸² C F չիք նմին գործէ | Յովն. Ե 19. «զոր նայն առնէ, զնոյն եւ Որդին նմին նման գործէ»:

⁸³ Ex. Fid. 8.163 + ἰδίαν

⁸⁴ Ex. Fid. 8.165 παρεστήσαμεν

⁸⁵ Ex. Fid. 8.168 + σαφὺς / H1 om.

⁸⁶ C + զի

⁸⁷ C + է

Նոյնպէս եւ ի միոյ Հոգոյ Սրբոյ, որ է Տէր եւ կենարար⁸⁸, որ ի Հարէ ելանէ եւ յորդի հանգչի, եւ ընդ Հար եւ ընդ Որդոյ երկրպագի եւ փառատրի, որպէս համագոյակից եւ մշտնջենատրակից, Հոգի Աստուծոյ, ուղիղ, իշխանական, աղբիւր կենաց եւ սրբութեան, Աստուած ընդ Հար էութիւն⁸⁹ եւ խոստովանեալ ընդ նմա, անեղ, լի, արարիչ, ամենակալ, ամենայնի ներգործող, ամենագաւ, կարող, անհասանելի⁹⁰, ամենայն եղելոցս տիրող, ոչ ինքն ընդ⁹¹ տէրութեամբ լեալ, լցուցիչ եւ ոչ լցեալ, հաղորդիչ եւ ոչ հաղորդեալ, սրբիչ եւ ոչ սրբեալ, միախարիչ, որ եւ զամենեցուն պաղատանս ընդունի, ամենեւեմ նման Հար եւ Որդոյ, ի Հարէ ելանելով եւ Որդով տուեալ լինի, եւ ընդունելի լեալ յամենայն եղելոց եւ ինքն ինքեամբ էացուցնաող եւ ստեղծագործող⁹² եւ գոյացուցիչ ամենայնի եւ սրբիչ եւ պահող, անձնատու, այսինքն՝ յիւրում անձնատրութեանն էութիւն⁹³, անբաժանելի եւ անմեկնելի եւ Հարէ եւ յՈրդոյ, եւ զամենայն ունի, զոր ինչ ունին⁹⁴ Հայր եւ Որդի, բայց միայն յանձնելութենէ եւ ի ծնելութենէ: Վասն զի Հայր անպատճառ է եւ անծնունդ, զի եւ ոչ յումեմէ ունի զէութիւն, որպէս եւ այնք ամենեւեմն, եւս առաւել ինքն է սկիզբն եւ պատճառ էութեան եւ որպիսութեան ամենեցուն բնութեամբ: Իսկ Որդի ի Հարէ ծնեալ է, եւ Հոգին Սուրբ եւ նա ի Հարէ է⁹⁵, այլ ոչ ծննդեամբ, այլ եղողութեամբ ուսուցին զմեզ⁹⁶: Եւ զի է բաժանումն ինչ ծննդեանն եւ եղողութեանն ուսեալք, այլ եթէ զինչ ազգ⁹⁷ բաժանմանցն է՝ ոչ բնաւ: Եւ առժամայն Որդոյ ծնունդ ի Հարէ, եւ Հոգոյ եղողութիւն հաւատամբ⁹⁸:

Զի զամենայն, զոր ինչ ունին Որդի եւ Հոգի, ի Հարէ ունին, նաեւ զէութիւն եւս: Եւ եթէ ոչ էր Հայր, եւ ոչ Որդի⁹⁹ էր եւ ոչ Հոգի, եւ եթէ Հայր ոչ ունէր ինչ, եւ ոչ Որդի ունէր ինչ եւ ոչ Հոգի: Վասն զի ի Հարէ, այս ինքն՝ յէութենէ

⁸⁸ Ե կենդանարար

⁸⁹ էութիւն // Ex. Fid. 8.176 καὶ υἱὸς ὑπάρχον / CG om. καὶ υἱὸς / M συνυπάρχον

⁹⁰ կարող, անհասանելի // Ex. Fid. 8.178 ἀπειροδύναμον

⁹¹ Ե չէր

⁹² Բ յամենաստեղծագործող չիս յամենայն եղելոց եւ ինքն ինքեամբ էացուցնաող եւ ստեղծագործող

⁹³ Ex. Fid. 8.185 ὑπάρχον

⁹⁴ Ե չէր

⁹⁵ Ե չէր

⁹⁶ Ex. Fid. 8.191 չիս ուսուցին մեզ

⁹⁷ E F + բնաւ

⁹⁸ Ex. Fid. 8.194 չիս

⁹⁹ Ե որդի ոչ

Հաւր են Որդի եւ Հոգի, որպէս¹⁰⁰ եւ զամենայն, զոր ինչ ունին, ի Հաւրէ¹⁰¹ ունին նոքա¹⁰², բաց միայն յանձնելութենէ եւ ի ծնելութենէն եւ յելողութենէն¹⁰³: Վասն զի այսու առանձնաւորութեանց յատկութեամբ միայն բաժանին ի միմեանց երրորդ անձինքն եւ ոչ գոյութեամբ եւ բնութեամբ, եւ վասն զի տեսաւոր յատկութեամբ առանձնաւորութեանց բաժանին:

Եւ ասեմք զիրաւանշիւրն յերեցունց կատարեալ անձն ունել, որպէս մի յերից անկատարելոց մի կատարեալ¹⁰⁴ բնութիւն ուսցոմ, այլ յերիս կատարեալ անձինս մի պարզ գոյութիւն առաւել կատարեալ եւ ի սկզբանէ կատարեալ գոյ: Զի ամենայն, որ յանկատարելոց ժողովի, ստուգապէս խառնեալ իմն է, իսկ ի կատարեալ անձանց անկար է խառնումն ինչ գործիլ: Վասն որոյ ոչ ասեմք զտեսակ յանձանց, այլ ի յանձն գոլով: Իսկ անկատար զայնոսիկ ասեմք, որք ոչ կարեն կատարել զտեսակն, որ ի նոցանէ կատարեալ էր գործ, վասն զի քաւ եւ փայտ եւ երկաթ իւրաւանշիւր յանձն իւր կատարեալ է ըստ բնութեան իւրում, իսկ առ ի նոցանէ կատարելոյ տան անկատար է իւրաւանշիւրն: Վասն զի եւ ոչ մի ի նոցանէն է անձամբ իւրով տուն:

Արդ կատարեալ ասեմք անձինս, որպէս զի մի խառնուած ինչ իմասցոմ զաստուածային բնութիւնն: «Վասն զի խառնումն սկիզբն է բաժանման»¹⁰⁵: Եւ դարձեալ մի առ մի էացեալ ասեմք ի մի զերեք անձնաւորութիւն, զի մի բազմութիւն եւ դասք աստուածոց ի ներքս բերցոմ: Ի ձեռն սկզբանն¹⁰⁶ անձանցն անխառնութիւն եւ անմիաւորութիւն, իսկ¹⁰⁷ համագոյութեամբն եւ առ միմեանս կալով անձանցն եւ¹⁰⁸ կամաց եւ ներգործութեան եւ զաւրութեան եւ իշխանութեան եւ շարժութեան, եւ զի այսպէս ասացից՝ յատկութեան¹⁰⁹, անբաժանելութիւն եւ միութիւն աստուածութեանն ուսանիցիմք: Վասն զի ստուգապէս մի է Աստուած Աստուած, եւ Բանն եւ Հոգին իւր:

¹⁰⁰ B E F չիք

¹⁰¹ F հարկէ

¹⁰² որպէս եւ զամենայն, զոր ինչ ունին, ի Հաւրէ ունին նոքա // Ex. Fid. 8.198-200 καὶ διὰ τὸν πατέρα ἔχει οὐ νόος καὶ τὸ πνεῦμα πάντα, ἃ ἔχει, τουτέστι διὰ τὸν πατέρα ἔχειν αὐτα

¹⁰³ C յելողութենէ

¹⁰⁴ Ex. Fid. 8.205 σύνθετον

¹⁰⁵ Gregorius Nazianzenus, *In sanctum baptismum* (orat. 40). σύνθεσις γὰρ ἀρχὴ διαστάσεως

¹⁰⁶ Ex. Fid. 8.217 τῶν τριῶν

¹⁰⁷ E չիք

¹⁰⁸ Ex. Fid. 8.218 + τῆς ταυτότητος

¹⁰⁹ Ex. Fid. 8.220 չիք

Իսկ պարտ է գիտել, զի այլ է գործով տեսութիւն¹¹⁰, եւ այլ է բանիւ եւ¹¹¹ մանրաբանին մտածութեամբ: Որով եւ յամենայն էսս անձանցն բաժանմունս գործով տեսանի¹¹²: Իսկ հասարակութիւն եւ միատրութիւն եւ խառնակումն բանիւ եւ մտածութեամբ¹¹³, քանզի իմանամք մտաւ, եթէ Պետրոս եւ Պաղոս մի բնութեան եւ գոյութեան են եւ մի եւ հասարակաց ունին բնութիւն: Զի իւրաքանչիւրն ի նոցանէ կենդանի է բանական, մահկանացու, եւ իւրաքանչիւրն մարմին հոգեւոր եւ մտաւոր: Այլ հասարակաց բնութիւն բանիւ միայն տեսանելի է: Իսկ ոչ¹¹⁴ առանձնատրութիւնն առ միմեանս են, այլ բաժանեալ իւրաքանչիւրն, այսինքն՝ ինքն անձամբ իւրով հեռագոյն կալով մին ի միոջէն բազումս ունելով յայլոց զբաժանմունս իւրեանց: Վասն զի տեղեալ¹¹⁵ բաժանեալ են եւ ժամանակաւ եւ կամաւ¹¹⁶ եւ զաւրութեամբ եւ տեսակաւ, այսինքն՝ հատուածով, եւ անձամբ եւ խառնուածով եւ պատուով եւ արուեստիւ եւ ամենայն արիւնակաւ յատկութեան, եւ առաւել քան զամենեսեան ոչ առ միմեանս ի մի, այլ բաժանմամբ տեղեալ ելով: Որով երկու եւ երեք եւ բազում մարդիկ ասին:

Եւ այս ի վերայ ամենայն եղելոցս եւ կենդանեաց տեսանի այսպէս: Իսկ ի վերայ սուրբ եւ վերնական գոյութեան եւ յամենայնի անպարագրելի եւ անհասանելի Երրորդութեանն՝ սորին հակառակն: Զի նոցա հասարակաց եւ մի գործով տեսանի եւ մշտնջենատրութեամբ եւ նոյն գոլով գոյութեան եւ ներգործութեան եւ կամաց եւ հանդիպեան¹¹⁷, իշխանութեան եւ զաւրութեան եւ բարերարութեան¹¹⁸ (ոչ ասի, եթէ նմանք, այլ նոյն գոլով) եւ մի փայլակն շարժման: Վասն զի մի գոյութիւն¹¹⁹, մի զաւրութիւն, մի կամք, մի ներգործութիւն, մի իշխանութիւն, մի ինքնութիւն, ոչ երեք¹²⁰ նման միմեանց, այլ մի եւ նոյն շարժութիւն երեք անձնատրութեան: «Վասն զի իւրաքանչիւրն ի նոցանէ

¹¹⁰ C որ գործով տեսանի

¹¹¹ C չէք

¹¹² Ex. Fid. 8.225 + πράγματι γὰρ ὁ Πέτρος τοῦ Παύλου κεχωρισμένος θεωρεῖται.

¹¹³ Ex. Fid. 8.227 + θεωρεῖται.

¹¹⁴ C չէք

¹¹⁵ Ex. Fid. 8.233 τόπω // E տեղաւ B F տեղեալ

¹¹⁶ C կամաւ

¹¹⁷ C հանդիպեան

¹¹⁸ Ex. Fid. 8.243 + ταυτότητα

¹¹⁹ Ex. Fid. 8.244 + μία ἀγαθότης.

¹²⁰ Ex. Fid. 8.245 τρεῖς // B երեք

ի միսն էացեալ կայ ոչ վատթարագոյն, այլ¹²¹ յանձն իւր»¹²², այսինքն՝ եթէ յամենայնի մի եմ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի, բայց միայն յանձնելութենէն եւ¹²³ ի ծնելութենէն եւ յելողութենէն:

Իսկ բաժանումն է մանրամասնին մտածութեամբ: Վասն զի մի Աստուած գիտեմք եւ միայն յատկութիւն՝ միայն Հայր եւ Որդի եւ ելող, պատճառ եւ ի պատճառէն եւ կատարեալ առանձնաւորութեամբ, այսինքն՝ ազգաւ էութեանն զբաժանմունս իմանամք: Վասն զի եւ ոչ տեղոյն հեռաւորութեամբն որպէս ի վերայ մեր կարող եմք ասել ի վերայ անպարագրելի աստուածութեանն (վասն զի մի առ մի եմ անձինքն ոչ իբրեւ թէ խառնակելով, այլ իբր ի միմեանս բովանդակելով ըստ Բանին Տեառն, եթէ. «Եւ ի Հայր եւ Հայր ի յիս»¹²⁴), նաեւ ոչ կամացն է¹²⁵ բաժանումն, կամ հաճութեան կամ ներգործութեան կամ զաւրութեան, կամ այլ իմիք, որով գործով¹²⁶ բաժանմունս լինին առ մեզ: Վասն որոյ եւ ոչ երիս աստուածս ասեմք զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգի, այլ եւս առաւել մի Աստուած՝ զսուրբ¹²⁷ Երրորդութիւնն, առ մի պատճառն ի վեր հանելով զՈրդի եւ զՀոգի, ոչ խառնակելով եւ պակասեցուցանելով ըստ Սաբելիոսի խառնակութեանն, վասն զի միաւորին, որպէս ասացաք, ոչ խառնակելով, այլ իբր առ միմեանս բովանդակելով: Եւ առ միմեանս բնակելոյ եւ էութեան կարողս գոլ¹²⁸ առանց խառնակութեան եւ շփոթելոյ, եւ ոչ բաժանելով կամ զգոյութիւն հատանելով, իբր զԱրիոս, բաժանեմք: Վասն զի բաժանի անբաժանաբար, եթէ պարտ է համառատ ասել, աստուածութիւնն եւ որպէս յերիս արեգակնս, որ մերձ կալով առ միմեանս եւ հեռանալով զմի լուսոյ խառնումն եւ զհառագայթս¹²⁹ ունին:

Արդ յորժամ առ աստուածութիւնն նայեսցոմք եւ առաջին պատճառին եւ միոյ իշխանութեան եւ մի եւ նոյն աստուածութեան, եւ զի այսպէս ասացից՝ շարժութեանն եւ խորհրդոյ, էութեան եւ զաւրութեան եւ ներգործութեան եւ տէրութեան ի նոյն յատկութիւն ունիմք, եւ մի է, որ երեւին ինձ: Իսկ յորժամ առ նոսա, յորս աստուածութիւնն է, կամ թէ ստուգագոյն¹³⁰ ասացից, որոց է

¹²¹ B C + իբրեւ

¹²² Greg. Naz., *De spiritu sancto* 16.14-15: τὸ ἐν ἑκάστων αὐτῶν ἔχει πρὸς τὸ συγκεκριμένον οὐχ ἦττον ἢ πρὸς ἑαυτό.

¹²³ C չէք

¹²⁴ Յովն. ԺԳ 11. «Եւ ի հայր, եւ հայր յիս»:

¹²⁵ C չէք

¹²⁶ Ex. Fid. 8.258 + καὶ δι' ὅλου.

¹²⁷ E զմի C սուրբ

¹²⁸ E չէք

¹²⁹ C զհառագայթ

¹³⁰ Ex. Fid. 8.272 ἀκριβέστερον // C ստուգապէսն

աստուածութիւնն, եւ յառաջին պատճառէն անժամանակաբար պատճառեալ¹³¹, համապատիւ եւ անմեկնելիք, այսինքն՝ առանձնաւորութեամբ երիւ երեւին երկրպագելիս: Մի Հայր Հայր եւ անսկիզբն, որ եւ անպատճառ է, զի եւ ոչ յումեմէ է: Մի Որդի Որդի եւ ոչ անսկիզբն¹³², զի ի Հաւրէ է: Իսկ եթէ ի ժամանակէ առցես զսկիզբն, նա անսկիզբն է, վասն զի արարիչ ժամանակաց եւ ոչ ընդ ժամանակաւ է: Մի Հոգի սուրբ Հոգի, որ ելանէ ի Հաւրէ, այլ ոչ որդիաբար, այլ երողութեամբ, ոչ ի Հաւրէ հեռանալով յանձնելութենէն եւ ոչ յորդոյ ծնելութենէն¹³³, վասն զի ի Հաւրէ¹³⁴ անձնելոյն է¹³⁵, եւ ոչ Հոգոյ ի Հայր կամ յորդի փոփոխելով, վասն զի երող է եւ վասն զի Աստուած է: Վասն զի յատկութիւն անշարժ է: Կամ ո՞րպէս կացցէ յատկութիւն¹³⁶ շարժեցեալ եւ փոփոխեալ: Վասն զի եթէ Որդի է Հայր, ոչ է¹³⁷ ստուգապէս: Վասն զի մի է ստուգապէս Հայր: Եւ եթէ Հայր է¹³⁸, ոչ է¹³⁹ Որդի, վասն զի մի է ստուգապէս Որդի, եւ մի է Հոգի Սուրբ:

Պարտ է գիտել, զի զՀայր ոչ ասեմք ի պատճառէն¹⁴⁰, այլ ասեմք զնա Հայր եւ պատճառ¹⁴¹ Որդոյ: Եւ զՈրդի ոչ ասեմք անպատճառ¹⁴² եւ ոչ Հայր, այլ ասեմք զնա ի Հաւրէ եւ Որդի Հաւր: Իսկ զՀոգի¹⁴³ ի Հաւրէ ասեմք եւ Հոգի Հաւր անուանեմք, իսկ յորդոյ ոչ ասեմք զՀոգի, այլ Հոգի Որդոյ անուանեմք (Զի «եթէ ոք զՀոգի Քրիստոսի ոչ ունի»¹⁴⁴, ասէ¹⁴⁵ առաքեալ), եւ ի ձեռն Որդոյ յայտնեալ եւ տուեալ եղել մեզ հաւատամք (զի «փշեաց յաշակերտսն եւ ասէ. Առեմ Հոգի Սուրբ»¹⁴⁶): Զի որպէս յարեգակնէ են շառաւեղք եւ պայծառութիւն (զի նա է աղբիւր հառազայթիցն եւ լուսոյ), իսկ ի ձեռն հառազայթից սփռի առ մեզ պայծառութիւնն, եւ նա է լուսաւորիչն մեր առեցելով ի մէնջ: Իսկ զՈրդի ոչ Հոգոյ Որդի ասեմք եւ ոչ ի Հոգոյ:

¹³¹ Ex. Fid. 8.273 ἐκεῖθεν ὄντα καὶ

¹³² Ex. Fid. 8.276 + τουτέστιν οὐκ ἀναίτιος

¹³³ F չիք եւ ոչ յորդոյ ծնելութենէն

¹³⁴ Ex. Fid. 8.280 չիք

¹³⁵ Ex. Fid. 8.280 + (πῶς γάρ:).

¹³⁶ Ex. Fid. 8.282 ἰδιότης // C E F ինքնութիւն F ուղղված յատկութիւն

¹³⁷ Ex. Fid. 8.283 + πατήρ

¹³⁸ Ex. Fid. 8.284 + ὁ υἱός.

¹³⁹ Ex. Fid. 8.284 + κυρίως

¹⁴⁰ Ex. Fid. 8.286 ἕκ τινος

¹⁴¹ Ex. Fid. 8.286 չիք եւ պատճառ

¹⁴² Ex. Fid. 8.287 αἴτιον / HI ἀναίτιον

¹⁴³ Ex. Fid. 8.288 + τὸ ἄγιον καὶ

¹⁴⁴ Հռոմ. Ը 9. «եթէ ոք զհոգի Քրիստոսի ոչ ունի» | E + սա թէ նորա

¹⁴⁵ Ex. Fid. 8.291 + ὁ θεός

¹⁴⁶ Յովհ. Ի 22. «փշեաց ի նոսա՝ եւ ասէ. Առեմ Հոգի Սուրբ»:

Թ. Վասն ի վերայ ասացելոցն¹:

Աստուած պարզ է եւ անխառն, իսկ ի բազմաց եւ յիւրաքանչիւր տեսակաց ժողովեալն խառնեալ² է: Արդ եթէ զանեղութիւն եւ զանսկբնութիւն եւ զանմարմինն գոլ եւ զանմահութիւն եւ զմշտնջենաւորութիւն³ եւ զայլ այդպիսիս⁴ էութեամբ բաժանմունս ասեմք ի վերայ Աստուծոյ, որ յայսքանեաց ժողովեալ, պարզ ոչ կարէ գոլ, այլ խառնեալ, որ եւ այս իսկ յետին հայհոյութիւն է: Վասն այսորիկ պարտ է զիւրաքանչիւրն ի վերայ Աստուծոյ ասացելոցն ոչ որպէս ինչ նա է գոյութեամբ, զայն երեւցուցանող կարծել, այլ զոր ինչ ոչ է զայն յայտնող լինել, կամ ազգականութեանն ինչ ընդ հակառակ բաժանելոյ ումեմն առ ինչ որ⁵ են հետեւողք գոյութեանն կամ⁶ բնութեանն կամ ներգործութեանն:

Արդ ստուգապէս յամենեսեան որ ինչ ի վերայ Աստուծոյ ասացեալքն են անուանք զէնն կարծելի է, որպէս եւ ինքն ի լերինն յայտնելով Մովսէսի ասէր. «ասասցես որդոցն Իսրայէլի, եթէ որ էն⁷ առաքեաց զիս»⁸: Զի զամենայն էութիւնն ժողովեալ ունի յանձն իւր, որպէս խորհ⁹ իմն էութեանն անհասանելի եւ անսահման:

Իսկ երկրորդ Աստուած անուանի, որ է թեոս¹⁰, որ եւ այս կամ ի տեսութենէն եւ ի պարագրութենէն զամենեսեան կոչէ, կամ ի բորբոքմանէն, այսինքն՝ ի կիզմանէ («վասն զի Աստուած մեր հոս է ծախող»¹¹ զշարութիւնն), եւ թէ ի տեսութենէ¹² կոչի: Վասն զի անթիւրելի նայի յամենայն էսս յերեւելիս եւ յիմանալիս¹³:

¹ Ex. Fid. 9.1 Περὶ τῶν ἐπὶ θεοῦ λεγομένων

² F խառնեալն

³ Ex. Fid. 9.4 + καὶ ἀγαθὸν καὶ δημιουργικόν

⁴ C այդպիսիք

⁵ B C F խորհ

⁶ Ex. Fid. 9.9 չիք գոյութեանն կամ

⁷ C էնն

⁸ Ել. Գ 14. «ասասցես ցորդիսն Իսրայէլի. որ էն առաքեաց զիս առ ձեզ»:

⁹ Ex. Fid. 9.13 πέλσας

¹⁰ E F ի թեոս. թեոս տեսութիւն քարզմանի եւ կիզումն ի յոյն լեզու

¹¹ Բ Օրին. Գ 24. «Զի տէր Աստուած քո հոս ծախիչ է»:

¹² C տեսութենէն

¹³ Վասն զի անթիւրելի նայի յամենայն էսս յերեւելիս եւ յիմանալիս // Ex. Fid. 9.16-20 ἀλάθρητος γάρ ἐστι καὶ πάντων ἐπόπτης. Ἐθεάσατο γὰρ “τὰ πάντα πρὶν γενέσεως αὐτῶν” ἀχρόνως ἐννοήσας καὶ ἕκαστον κατὰ τὴν θελητικὴν αὐτοῦ ἄχρονον ἐννοιαν, ἥτις ἐστὶ

Եւ վասն զի առաջին անուն նորա զէութիւն երեւցուցանելով եւ ոչ եթէ զինչ է, այլ թէ է¹⁴, իսկ երկրորդս՝ զներգործութիւնսն: Իսկ անսկիզբն եւ անապական եւ անստեղծ եւ անեղ եւ անմարմին եւ անտեսանելի եւ այլ այդպիսիք, զոր ինչ ոչ է, զայն յայտնեն, այսինքն՝ եթէ ոչ սկսաւ էանալ երբէք եւ ոչ լուծանի. ոչ եղական է եւ ոչ մարմնաւոր եւ ոչ տեսանելի: Իսկ բարեւար եւ արդար եւ երանելի եւ այդպիսիք լծակից են բնութեանն¹⁵ եւ ոչ եթէ զգոյութիւն¹⁶ յայտնել կարող են: Իսկ տէր եւ թագաւոր եւ այլ այդպիսիք¹⁷ զյատկութիւնն յայտնեն հակառակ բաժանեցելոցն¹⁸, զի վասն¹⁹ տիրելոցն²⁰ ասի տէր, եւ թագաւորութեանն թագաւոր, արարածոց²¹ արարիչ եւ հովուելոցն՝ հովիւ:

προορισμός και εικών και παράδειγμα, ἐν τῷ προορισθέντι, καιρῷ γίνεται. / FG om. Ἐθεάσατο... γίνεται

¹⁴ Ex. Fid. 9.22 չիք այլ թէ է

¹⁵ C բնութեան են

¹⁶ C + բնութեանն

¹⁷ E այդպիսիքն

¹⁸ C զբաժանելոցն

¹⁹ C վասն զի

²⁰ Ex. Fid. 9.28 κυριευομένων // B C տէրութեան

²¹ C արարածոցն

Ժ. Վասն աստուածային միատրութեանն ի բաժանմանն¹:

Եւ արդ, զամենայն հասարակաց բերիցոմ² յամենայնի ի վերայ աստուածութեանն եւ պարզ եւ անբաժանելի եւ միատրեալ զբանս, իսկ բաժանեալ զհայրութիւն եւ զորդութիւն եւ զհոգիութիւն եւ զանպատճառն գոլ եւ զ³ ի³ պատճառէն եւ զանձնունդն եւ զձնունդն⁴ եւ զելոդութիւն, որք ոչ եթէ այլ⁵ զէութիւնն ցուցանեն, այլ առ միմեանս զհամագգութիւնն⁶ եւ զընտանութիւն եւ զկարգ էութեանն:

Այսոցիկ գիտութեամբն եւ ի սոցանէ առ աստուածային էութիւն ձեռնարկանողփս⁷ ոչ եթէ յէութիւն Աստուծոյ⁸ եթէ զինչ է հասանեմք, այլ արտաբոյ էութեանն, որպէս եւ այն, որ⁹ զի գիտեմք, եթէ հոգի անմարմին է եւ անֆանակ եւ անորակ, այլ ոչ այսպէս եւ զէութիւնն նորա կարեմք գիտել, եւ ոչ¹⁰ զմարմնոյ, եթէ գիտեմք, եթէ սպիտակ է¹¹ կամ սեւաւ, ոչ զէութիւն¹², այլ զառինչն նորա գիտեմք: Իսկ ճշմարիտ Բանն ուսուցանէ, եթէ պարզ է Աստուած եւ եթէ մի եւ պարզ ներգործութիւն ունի, զբարին՝ ամենեւիմք յամենեսեան ներգործելով, իբրեւ զհառագայթ արեգական, որ զամենեսեան ջեռուցանէ եւ ներգործէ յիւրաֆանչիւսն բնութեամբ յաջողութիւն բերմանց զաւրութեամբն¹³:

Իսկ բաժանեալ են այնոքիկ, որք ասեն աստուածային եւ մարդասիրի Բանին Աստուծոյ մարմնատրութեանն բանն¹⁴, քանզի յայսոսիկ ոչ Հայր եւ ոչ Հոգի եւ ոչ մի բանիմք հաղորդեալ են, բայց միայն ի հանոյութենէն եւ ըստ անպատմելի սֆանչելագործութեանն, զոր գործէր այն, որ իբրեւ զմեզ մարդացեալ էր Աստուած Բանն, որպէս անփոփոխելի Աստուած եւ Որդի Աստուծոյ:

¹ Ex. Fid. 10.1 Περί θείας ἐνώσεως καὶ διακρίσεως

² B C բերցոմ Ex. Fid. 10.2 ἐκκληπτέον

³ C զի ի

⁴ C չիք

⁵ Ex. Fid. 10.5 չիք

⁶ B C համագգութիւն Ex. Fid. 10.6 σχέσεως

⁷ C ձեռնարկաւփս

⁸ Ex. Fid. 10.8 չիք

⁹ C չիք

¹⁰ Ex. Fid. 10.8 ἥδη καὶ τὴν οὐσίαν αὐτῆς κατελήφαμεν, οὐδὲ // B չիք այսպէս եւ զէութիւնն նորա կարեմք գիտել, եւ ոչ

¹¹ C չիք

¹² Ex. Fid. 10.11 չիք ոչ զէութիւն

¹³ Ex. Fid. 10.15-16 + ἐκ τοῦ δημιουργήσαντος θεοῦ τὴν τοιαύτην εἰληφὼς ἐνέργειαν

¹⁴ Ex. Fid. 10.18 չիք

ԺԱ. Վասն մարմնապէս ի վերայ Աստուծոյ¹ ասացելոցն²:

Իսկ որովհետեւ բազումն գտանին յաստուածային գիրս առական մարմնապէս ասացեալ զԱստուծոյ, գիտել պարտ է, եթէ ի մէնջ, որ մարդիկ եւմբ թանձրութեամբ մարմնոյ շրջափակեալք, զաստուածային եւ զբարձր եւ զաննիւր ներգործութիւնն աստուածութեանն իմանալ կամ պատմել անկար է, եթէ ոչ բերցոյ՝ առակս եւ աւրինակս ինչ, որ տեսանին ի միջի մերում: Արդ որքան մարմնական³ ինչ ասացեալ է զԱստուծոյ առակաւ⁴ ինչ⁵ ասացեալ է, իսկ ունին բարձրագոյն իմացուածս ինչ, վասն զի պարզ է Աստուած եւ անգաղափարելի: Իսկ մեք աչք⁶ Աստուծոյ եւ բիրք⁷ եւ տեսարանք զգաւրութիւնն, որով յամենայն նայի⁸, եւ զանհալելի գիտութիւն ի միտ առնումք, վասն զի ի մեզ այսու զգայարանաւ լինի կատարեալ գիտութիւն եւ իմացութիւն:

Իսկ լսելիք եւ ունկն գփաւութիւն եւ զմերոզութիւն նորա, որով եւ զաղաշանս մեր ընդունի, վասն զի եւ մեք այսու զգայարանաւ զթացող լինիմք առ որս աղաշեն զմեզ⁹, բանալով առ նոսա զունկն մեր: Իսկ բերան եւ խաւք՝ զյայտնութիւն եւ զցուցումն խորհրդոց իւրոց, զի բերանովք եւ խաւքի յայտնեմք մեք, զոր¹⁰ ի սրտի¹¹ զմտածութիւն մեր: Իսկ կերակուր եւ ըմբելի զհետեւելն մեզ կամաց իւրոց¹², վասն զի եւ մեք ճաշակելեալք¹³ լնումք զկարիս բնութեանս: Իսկ հոտոտելիք՝ զընդունարան զաւրութիւն, որ առ նա զմեր փոյթ եւ զյաւժարութիւն, վասն զի այսու զգայարանաւ մտանէ առ մեզ անուշահոտութիւն: Իսկ տեսակ՝ զոր ի գործոց ցուցանին երեւելիք լեալ մեզ, վասն զի ի տեսակէ լինին յայտնութիւնք¹⁴ առ մեզ:

¹ C E չիք

² Ex. Fid. 11.1 Περί τῶν σωματικῶς ἐπὶ θεοῦ λεγομένων

³ E մարմին

⁴ Ex. Fid. 11.6-7 περὶ θεοῦ... εἴρηται, συμβολικῶς // B չիք ինչ ասացեալ է զԱստուծոյ առակաւ

⁵ C չիք

⁶ F աչքն

⁷ E F բիրք

⁸ E հայի | տեսարանք զգաւրութիւնն, որով յամենայն նայի // Ex. Fid. 11.9-10 ὁρασιν καὶ τὴν τῶν ἀπάντων ἐποπτικὴν αὐτοῦ δύναμιν

⁹ + Ex. Fid. 11.14 γνησιώτερον

¹⁰ B F զի C չիք

¹¹ C + եղեալ

¹² B C իւր

¹³ Ex. Fid. 11.18 διὰ τῆς γευστικῆς αἰσθήσεως

¹⁴ C յայտնութիւն

Իսկ ձեռք՝ զանդադարողություն ներգործութեան իւրոյ, վասն զի եւ մեք զպիտոյս եւ առաւել զպատուական բանս ձեռամբ մերովք առնեմք: Իսկ աչ՝ զսեփական իւր առ սիրելիս իւր զաւգնականություն, որով եւ մեք զառաւել պիտանիսն եւ զպատուականագոյնսն եւ զառաւել զաւրութեան կարատսն զաջն մեր կարկառեմք: Իսկ յանդիմանություն զ՛ի վեր հասանելն¹⁵ իւր, որ զյոյժ անյայտսն¹⁶ եւ զգաղտնիսն յանդիմանեն, վասն զի եւ ի մեզ ոչ կարեն խնդրեալն ծածկել: Իսկ ոտք եւ գնացք առ աւգնականություն կարատելոցն կամ առ հատուցումն թշնամեացն կամ առ այլ գործ զհասանելն եւ զելսն, որովհետեւ եւ մեք ի ձեռն ոտին առնեմք զհասանելն:

Իսկ երդումն՝ զանդառնալի կալն ի խորհուրդս, վասն զի մեք երդմամբ հաստատեմք զուխտ ընդ միմեանս: Իսկ բարկություն եւ սրտմտություն առ չարությունս զխստություն եւ զյետ դարձուցանելն իմանամք¹⁷, վասն զի եւ մեք զատողս կամաց մերոց խստութեամբ խրատեմք: Իսկ մոռացումն եւ բուն եւ նիրհումն առ թշնամիս վրէժխնդրութեանն եւ զյամառելն ի սովորական աւգնականութենէն ի նեղությունս մեր գիտեմք¹⁸: Եւ համառատագոյնս ասացից ամենայն մարմնական ասացեալն ի վերայ Աստուծոյ ծածկեալ իմն զաւրություն ունին, որ ի մերոցն ուսուցանեն մեզ զայն, որ ի վեր քան զմեզ է եւ ոչ եթե վասն մարմնատուր Բանին Աստուծոյ գալստեանն ասացեալ է: Վասն զի նա զամենայն զմարդոյն էառ յաղագս փրկութեան մարդկան հոգի մտաւոր եւ մարմին եւ զյատկություն մարդկային բնութեանս ընդ բնութեանն եւ¹⁹ զկիրս անմեղադրելի եւ անխտրելի ախտից:

¹⁵ Ը զվերահասանելն

¹⁶ Ex. Fid. 11.28 *λεπτὼν* B անյոյսսն

¹⁷ Ex. Fid. 11.35 *չիք*

¹⁸ Ex. Fid. 11.38 *չիք*

¹⁹ F *չիք*

ԺԲ. Վասն նոցա դարձեալ¹:

«Այսպէս այսոքիկ ուսանել² լինին մեզ յաստուածային բանիցն գրոց»³, որպէս ասէ մեծն Դիոնէսիոս Արիսպագացին, «եթէ Աստուած ամենայնի պատճառ է եւ սկիզբն, էութեանց գոյութիւն, կենդանեաց կեանք, բանականաց բան, մտաւորաց՝ միտք, եւ անկելոցն ի նմանէ՝ վերակոչումն եւ յարութիւն, իսկ ապականելոցն բնութեամբ՝ նորոգումն եւ կերպարանոյ, անպատիւ շարժմամբ փակտելոցն՝ հաստատութիւն պատուական, եւ առ նա եղանոյց՝ հանապարհ եւ պատրաստեալ ձեռնատու: Իսկ յաւելից եւ զայս, եթէ նա է եղելոցն ի նմանէ Հայր (վասն զի սեփական Հայր մեր Աստուած է, որ յոչ գոյից զմեզ ի գոյութիւն երբեք առաւել, քան զայնոցիկ, յորոց ծնաք եւ յառաջ եկեալ եղաք), հետեւելոցն նմա եւ հովուելոցն ի նմանէ հովիւ, լուսաւորելոցն պայծառութիւն, կատարելոցն կատարապետութիւն⁴, աստուածացելոցն՝ աստուածպետութիւն, բաժանելոցն խաղաղութիւն, եւ պարզելոցն պարզութիւն, եւ միատրեւոցն միատրութիւն, ամենայն սկզբան ի վեր քան զգոյութիւն եւ ի վեր քան սկզբնատրութիւն սկիզբն, եւ ծածկելոցն, այսինքն՝ գիտութեանն իւրոյ ըստ չափոյ եւ հասման իւրաքանչիւրոց բարեւարութեամբ տուող»⁵:

¹ Ex. Fid. 12.1 Ἐτι περὶ τῶν αὐτῶν

² C ուսանելի

³ Dion. Areopag., *De divinis nominibus* 112.7, հմմտ. Դիոն. էջ 131.7. Զայսոքիկ ուսաք յաստուածայնոց ասացելոց

⁴ Ex. Fid. 12.13 τελεταρχία // B կարապետութիւն

⁵ Cf. Dion. Areopag., *De divinis nominibus* 111.13-112.4, հմմտ. Դիոն. էջ 130.20-131.4. Իբր զի ամենեցուն է պատճառ եւ սկիզբն եւ էութիւն եւ կեանք. եւ անկելոց ի նմանէ վերակոչումն է եւ յարութիւն, իսկ որոց հաստատուն կայիւք են զգոյութիւն, եւ որոց ի նայն վերաբերին յարձակեցուցիչ առաջնորդութիւն. եւ լուսաւորելոցն լուսափայլութիւն, եւ կատարելոցն կատարողապետութիւն, եւ աստուածացելոցն աստուածպետութիւն, եւ պարզելոցն պարզութիւն, եւ միատրեւոցն միատրութիւն. քան զամենայն սկիզբն գերագոյապէս գերասկզբնագոյն սկիզբն, եւ թափնութեանն ըստ արժան գոյոյ բարոյք հաղորդեցուցիչ / KLMN + caput 12a

**ԺԳ. Յաղագս տեղեացն Աստուծոյ եւ եթէ միայն
Աստուած է անպարագրելի¹:**

Տեղիք սեռական իմն է եւ կատարեալ, շրջապատելով զոր ի նմա եղեալ լինի², որով շրջապատի ենթական, որպէս եւ առ շրջապատեալ ունի զայլ իմն մարմինս: Այլ ոչ ամենայն շրջապատող առ տեղի իմն է ի միջի ըմբոնեալ էակին, այլ կատարած շրջապատողի աւոյն, որ մերձենայ ըմբոնեալ մարմինն: Եւ առանց ամենայն կարծեաց շրջապատողն ոչ յըմբոնեալն է, այլ ըմբոնեալն ի յըմբոնողն է³:

Իսկ է եւ մտաւոր եւ իմանալի տեղիք, որ եւ իմացեալ լինի եւ է իմանալի եւ անմարմին բնութիւնս, որ է եւ ներգործէ, եւ ոչ մարմնապէս շրջապատեալ ըմբոնի, այլ իմանալապէս, վասն զի ոչ ունի կերպարանեալ հատուած, որպէս զի մարմնապէս ըմբոնեացի եւ պարագրեացի: Առդ Աստուած որպէս զաննիւթ եւ զանպարագրելի ի տեղի ինչ ոչ է, վասն զի ինքն է տեղի անձին իւրոյ, որ զամենայն լնու եւ ի վեր քան զամենայն է, եւ նա⁴ ըմբոնէ զամենայն: Իսկ ասի ի տեղի ինչ գոլով, ասի եւ տեղիք Աստուծոյ, որ եւ յայտնեցին ներգործութիւնք նորա: Վասն զի նա յամենայնի անխառնակաբար տնաւորին է ամենայնի տայ յիւրում ներգործութենէն ըստ չափոյ յաջողութեան⁵ տուողին եւ ըստ ընդունելութեան զարութեան, ասեմ զբնութենէն եւ զընտրողութենէն սրբութիւնն, վասն զի սրբագոյն են աննիւթքն քան զնիւթականս⁶ եւ առաքինիքն քան զչարայեղսն: Որով եւ տեղիք Աստուծոյ կոչին, որք առաւել առնուն զգործ եւ զընտրես նորա: Վասն այսորիկ աթոռ նորա է (վասն զի ի նա են արարողք կամաց նորա հրեշտակք եւ միշտ փառաբանիչքն նորա, վասն զի այս է հանգիստ նորա), եւ երկիր պատուանդան է ոտիցն նորա⁷ (զի ի նմա մարմնով շրջեցաւ ընդ մարդկան): Եւ զի ոտք սուրբ մարմինն իւր բազում անգամ կոչեալ⁸ են: Ասի եւ եկեղեցի⁹ տեղիք Աստուծոյ, վասն զի ի փառատրել

¹ Ex. Fid. 13.1 Περί τόπου θεοῦ καὶ ὅτι μόνον τὸ θεῖον ἀπερίγραπτον

² սեռական իմն է եւ կատարեալ, շրջապատելով զոր ի նմա եղեալ լինի // Ex. Fid. 13.2 ἐστὶ σωματικὸς πέρας τοῦ περιέχοντος

³ այլ ըմբոնեալ յըմբոնողն է // Ex. Fid. 13.6 ἄλλ

⁴ C չէք

⁵ Ex. Fid. 13.14 ἐπιτηδεσιότητα // F կարողութեան

⁶ C զնիւթականսն

⁷ Եւ. ԿԶ. 1. «Երկիր պատուանդան ոտից իմոց»:

⁸ C կոչեցեալ

⁹ C եկեղեցիք

զնա իբրեւ գտանար¹⁰ ինչ յայտնեցաք զսա, յորում կատարեմք զաղաչանս առ նա: Նոյնպէս եւ տեղիք, յորս¹¹ կամ մարմնով եւ կամ առանց մարմնոյ յայտնեցան գործք նորա, տեղիք Աստուծոյ կոչին:

Իսկ պարտ է գիտել, եթէ անբաժանելի¹² է Աստուած եւ ամենայն ամենայնի յամենայնի է եւ ոչ մասնատու ինչ ի տեղիս տեղիս¹³ մարմնապէս բաժանեալ, այլ ամենայն յամենայնի եւ ամենայն ի վեր քան զամենայն:

Իսկ հրեշտակ¹⁴ իբրեւ եղական¹⁵ ինչ ընդ տեղեաւ ոչ բովանդակի, որպէս թէ տպաւորի եւ շրջափակի կամ հատուած ընդունի¹⁶, այլ ասի ի տեղի գոլով անդ ուրեմն լինելով իմանալապէս եւ վասն ներգործելոյ ինչ ըստ բնութեան իւրում եւ ոչ լինելով յայլում տեղոջ, այլ անդ միայն մտաւորաբար վասն պարագրելի գոլոյն, ուր եւ գործեսցէ ինչ, վասն զի միայն Աստուծոյ է ի մի եւ ի նոյն ժամու յամենայնի ներգործել¹⁷: Իսկ հրեշտակ վասն¹⁸ փոյթ գոլ¹⁹ բնութեամբ եւ պատրաստ սուրհանդակութեամբ արագընթաց իբրեւ զմիտս գոլով²⁰ գործէ յամենայն տեղոջ, իսկ Աստուած յամենայնի լի գոլով եւ ի վեր քան զամենայն ելով եւ ի մի եւ ի նոյն ժամու յամենայնի²¹ եւ այլ եւ այլս գործէ մի եւ պարզ ներգործութեամբ:

Իսկ հոգի բանական²² կապեալ ընդ մարմին՝ ամենայն ընդ ամենայն եւ ոչ մասն ընդ մասն, եւ ոչ շրջապատեալ պահի ի նմանէ, այլ շրջապատեալ պահէ զնա, որպէս հուր՝ զերկաթ, եւ ի նմա կալով գործէ զներգործութիւն իւր:

Եւ պարագրեալ է ժամանակաւ եւ տեղեաւ եւ հասանելով շրջապատեալ է, իսկ անպարագրելի եւ ոչ միով իւրիք ի սոցանէ արտասահմանալ է: Անպարագրելի է Աստուած եւ անսկիզբն եւ անկատարած եւ ամենայնի պարունակող, իսկ ինքն եւ ոչ մի ինչ հասմամբ պարունակեալ յումեմէ: Զի միայն է անիմանալի եւ անսահման եւ ոչ ի միոյ ումեմէ իմացեալ, միայն ինքն տեսանող իւր գոլով: Իսկ հրեշտակ ժամանակաւ պարագրելի է (զի սկսաւ էանալ), եւ

¹⁰ Ե տանար

¹¹ Ex. Fid. 13.25 + ἔκδηλος ἡμῖν ἢ αὐτοῦ ἐνέργεια

¹² Ե բաժանելի

¹³ ի տեղիս տեղիս // Ex. Fid. 13.28 ἐν μέρει

¹⁴ Ե հրեշտակք

¹⁵ Ex. Fid. 13.30 σωματικῶς

¹⁶ շրջափակի կամ հատուած ընդունի // Ex. Fid. 13.31 σχηματίζεσθαι

¹⁷ Ե ներգործեալ

¹⁸ Ե չիք

¹⁹ Ե գոլով

²⁰ իբրեւ զմիտս գոլով // Ex. Fid. 13.36 μεταβαίνειν

²¹ Ե ամենայնի

²² Ex. Fid. 13.39 չիք

տեղեալ պարունակի²³, թէպէտ եւ իմանալաբար²⁴, եւ հասանելի է (վասն զի գիտեն զբնութիւն իրերաց²⁵, եւ յարարչէն սահմանին կատարելապէս), իսկ մարմինն՝ սկզբմամբ²⁶ եւ կատարածիւ եւ մարմնական տեղեալ եւ հասմամբ:

Անփոփոխելի է Աստուած ամենեւիմբ եւ անայլայլելի, եւ զամենայն, որ ոչ ընդ մեամ²⁷ են, կանխագիտութեամբն իւրով նախասահմանեաց՝ իւրաքանչիւր ըստ նմանութեան ժամու եւ տեղոյ իւրոյ: Որով ըստ բանի իւրոյ «Հայր ոչ դատի²⁸ զոք, այլ ամենայն²⁹ դատաստանն տուեալ է Որդոյ իւրոյ»³⁰: Վասն զի դատի³¹ Հայր իբրեւ Աստուած³², յայտ է, եթէ զՈրդի³³ որպէս զԱստուած եւ որպէս զՍուրբ Հոգի, իսկ ինքն Որդի՝ որպէս զմարդ մարմնապէս իջանէ եւ նստի յաթոռ փառաց իւրոց³⁴ (վասն զի մարմնաւոր պարագրութեան³⁵ է իջանել եւ նստել) եւ դատի³⁶ զամենայն աշխարհ արդարութեամբ³⁷:

Ամենայն ինչ հեռի յԱստուծոյ է՝ ոչ տեղեալ, այլ բնութեամբ: Վասն զի որ առ մեզ գիտութիւն եւ իմաստութիւն եւ խորհուրդ որպէս զեղական պատահի ինչ եւ դարձեալ փախչի, այլ ոչ ի վերայ Աստուծոյ³⁸: Վասն զի առ նա ոչ ինչ լինի եւ անյայտ լինի, վասն զի անայլայլելի եւ անփոփոխելի ելով նա եւ ոչ էր պարտ պատահումն ասել ի վերայ նորա. զբարեւարութիւն միշտ ընթացակից ունի գոյութիւն Աստուծոյ³⁹: Եւ որք միշտ ցանկանան հետեւել⁴⁰ Աստուծոյ, նա կարէ⁴¹ տեսանել զայն: Յամենայնի է Աստուած, վասն զի էին լծակցեալ են էին, եւ ոչ գոյ էութիւն ինչ, եթէ ոչ յէն⁴² ունիցի գէութիւնն, զի ընդ ամենեսեան խառնեալ է Աստուած, որպէս ըմբոնողն բնութեան, իսկ ընդ

²³ Ex. Fid. 13.48 չիք

²⁴ C իմանալաբար Ex. Fid. 13.48 + ὡς προείπομεν

²⁵ Ex. Fid. 13.49 + ποσῶς

²⁶ C սկսմամբ

²⁷ E F մեմ

²⁸ C դատէ

²⁹ C զամենայն

³⁰ Յովն. Ե 22. «ոչ եթէ հայր դատի զոք՝ այլ զամենայն դատաստանն եւ որդոյ իւրոյ»:

³¹ C դատէ

³² Ex. Fid. 13.54 չիք իբրեւ Աստուած

³³ E + ուրախ

³⁴ Մատթ. ԻԵ 31. «յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոց»:

³⁵ C պարագրութիւն

³⁶ C դատէ

³⁷ Գործք ԺԵ 31. «պարտ է դատել զաշխարհս արդարութեամբ»:

³⁸ B + այսպէս // Ex. Fid. 13.59

³⁹ Ex. Fid. 13.61-62 Τὸ ἀγαθὸν ὁ θεὸς σύνδρομον ἔχει τῇ οὐσίᾳ

⁴⁰ Ex. Fid. 13.62 չիք

⁴¹ Ex. Fid. 13.62 չիք

⁴² Ex. Fid. 13.64 ἐν τῷ ὄντι // F էն

սուրբ մարմնոյ իւրոյ⁴³ անձնատրութեամբ միացաւ եւ խառնեցաւ անխառնակաբար ընդ զանկուածն մեր: Ոչ ոք ետես զՀայր, բայց Որդի եւ Հոգի⁴⁴:

Վասն զի խորհուրդ եւ իմաստութիւն եւ գաւրութիւն Հայր Որդի է. եւ զի ոչ է պարտ ասել որպիսութիւն ինչ ի վերայ Աստուծոյ, որպէս զի մի խառնեալ⁴⁵ ասասցոմ զնա ի գոյութենէ եւ յորպիսութեան⁴⁶: Որդի ի Հայր է, եւ զամենայն, զոր ինչ ունի, ի նմանէ ունի: Վասն որոյ ոչ կարէ յանձնէ իւրմէ առնել ինչ⁴⁷, զի ոչ ունի տարորիշ ներգործութիւն բաց⁴⁸ ի Հայրէ:

Վասն զի բնութեամբ անտեսանելին Աստուած ի գործոց իւրոց տեսանելի լինի՝ յաշխարհի ունելոյն եւ ուղղելոյն ծանուցեալ:

Պատկեր Հայր է Որդի, եւ Որդոյ՝ Հոգին սուրբ⁴⁹, վասն այսորիկ Քրիստոս բնակեալ⁵⁰ ի մարդիկ տայ նոցա զպատկերանալն:

Աստուած է Հոգին սուրբ միշոց⁵¹ անձնիցելոյ եւ ծնիցելոյն եւ ընդ Որդուով զուգակցի Հայր: Հոգի Աստուծոյ կոչի, Հոգի Քրիստոսի, միտք Քրիստոսի, Հոգի Տեառն, ինքն Տէր, հոգի որդեգրութեան, նշմարտութեան, ազատութեան, իմաստութեան (վասն զի ներգործող է այսու ամենայնի), ամենայն էութեան լցուցիչ⁵², ամենակալ, լցուցիչ աշխարհի եւ գոյութեան, անմեկնելի յաշխարհէ գաւրութեամբ:

Աստուած է մշտնջենաւոր եւ անփոփոխելի էութեամբ, արարիչ⁵³ էիցս, բարեպաշտան երկրպագութեամբն⁵⁴ երկիրպագեալ:

Աստուած է եւ⁵⁵ Հայր միշտ է էն անձնունդն, որպէս ոչ յումեմէ ծնեալ, իսկ ծնող Որդոյ մշտնջենակցի: Աստուած⁵⁶ եւ Որդի միշտ է ընդ Հայր՝ անժամանակ եւ մշտնջենաւոր եւ առանց հեղման եւ անախտ եւ անմեկնելի ծնեալ ի նմանէն: Աստուած է եւ Հոգի սուրբ, գաւրութիւն սրբարար, ինքնանձնաւոր,

⁴³ Ex. Fid. 13.65 + ó θεός λόγος.

⁴⁴ Հմմտ. Յովհ. 2. 46. «ոչ եթէ զՀայր՝ ուրոմ տեսեալ իցէ. եթէ ոչ որ է՛ն յԱստուծոյ, նա՛ ետես զՀայր»:

⁴⁵ E F խառնել

⁴⁶ Ex. Fid. 13.70 ποιότητος // B որպիսութեանց

⁴⁷ Յովհ. Ե 30. «ոչ կարեմ ես յանձնէ առնել եւ ո՛չ ինչ»:

⁴⁸ E բայց

⁴⁹ Ex. Fid. 13.75 չիք

⁵⁰ C + է

⁵¹ Ex. Fid. 13.77 μέσον // B C F միոյ

⁵² Ex. Fid. 13.81 πληροῦν // B ցուցիչ

⁵³ C աշարիչ

⁵⁴ C προσκυνήσει // Ex. Fid. 13.84 συνειδήσει

⁵⁵ C չիք

⁵⁶ C + է

⁵⁷անմեկնելի ի Հարէ ելանող եւ ընդ Որդոյ հանգուցեալ, համագոյ Հար եւ Որդոյ:

Բանն է միշտ գոյութեամբ ելով ընդ Հարն, եւ դարձեալ Բան է բնութեամբ շարժութիւն մտաց, որով շարժի եւ մտածէ եւ խորհրդաբանէ, որպէս եւ լոյս եւ ճառագայթ իւր: Դարձեալ Բան է ներտրամադրեալն ի սրտի խորհուրդ⁵⁸: Եւ դարձեալ Բան է հրեշտակ իմանալի: Արդ Աստուած Բանն գոյութեամբ է եւ անձնատուր, իսկ այլ մեր⁵⁹ երրորդ Բանս զաւրութիւն է Հոգոյ՝ ոչ ի բաժանեալ⁶⁰ անձինս երեւեալ, յորոց առաջինն բնութեամբ ծնունդ մտաց է մշտնջենատուր աղբիւրացեալ ի նմանէ, իսկ երկրորդն ասի ներհաղրեալ, եւ երրորդն ձայնատուր:

Հոգի բազմատիմակ իմացեալ լինի՝ Հոգի սուրբ, իսկ եւ զաւրութիւնք Հոգոյն սրբոյ հոգիք կոչին, հոգի եւ հրեշտակաց՝ այլ բարերար, հոգի եւ դեւ՝ այլ չար⁶¹, հոգի մարդկային⁶², երբեմն հոգի կոչի եւ միտք, հոգի կոչի եւ հողմ, հոգի եւ ար:

⁵⁷ C + եւ

⁵⁸ Ex. Fid. 13.94 λαλούμενος.

⁵⁹ Ex. Fid. 13.95 չիք

⁶⁰ Ex. Fid. 13.96 ἰδίᾳ

⁶¹ Ex. Fid. 13.101 չիք այլ չար

⁶² Ex. Fid. 13.101 καὶ ἡ ψυχὴ

ԺԴ. Յատկութիւնք աստուածային բնութեանն¹:

Անեղութիւն, անսկզբնութիւն, անմահութիւն, անպարագրութիւն, յաւիտենականութիւն, աննիւթութիւն, բարեւարութիւն, արարչութիւն, արդարութիւն, լուսաւորիչ լինել, անփոփոխելութիւն, անախտութիւն, անբովանդակութիւն², անկարաւտն գոլ, ինքնակալութիւն, ինքնիշխանութիւն, ամենակալութիւն եւ կենդանատնողութիւն, ամենակարողութիւն, անհասանելի գաւրութիւն, սրբաւարութիւն, շուրջապահապանութիւն³ եւ ըմբոնեալ ունի⁴ գամենայն եւ նախախնամութիւն ամենայնի: Զայս ամենայն եւ զայլ այսպիսիս բնութեամբ ունի Աստուած⁵ եւ ոչ յայլմէ ուստեմ⁶ բերելով զսոսա, այլ ինքն⁷ տնող է ամենայն բարեաց արարածոց իւրոց ըստ կարի ընդունելութեան եւ զարութեան իւրաքանչիւրոցն:

Եւ առ միմեանս⁸ հաստատութիւն ունին անձնատրութեամբ, վասն զի անմեկնելիք եւ անհատանելիք են սոքա ի միմեանց՝ անխառնակելի ունելով առ միմեանս զբովանդակումն եւ զդրութիւն, ոչ եթէ առ միմեանս ցնդեալ եւ կամ խառնակեալ⁹, այլ իբրեւ առ միմեանս ունելով էութեան¹⁰: Վասն զի Որդի ի Հարէ ելանէ եւ ի Հոգւոյ, եւ Հոգի ի Հարէ եւ յՈրդւոյ գոլով, եւ Հայր յՈրդի եւ ի Հոգի բնակեալ՝ ոչ մի առ մի լծեալս¹¹ կամ խառնակեալ: Այլ միութեամբ ինքնակամ շարժեցեալ¹², վասն զի մի է փայլատակումն, եւ մի շարժութիւն երից անձնատրութեանց, վասն զի զայս ի վերայ եղական բնութեանս տեսանել անկարելի է:

Վասն զի աստուածային պայծառութիւնն մի է եւ պարզ եւ անբաժանելի, նոյնպէս եւ ներգործութիւն, եւ բարեւարութեան արինականն առ բաժանեալսն բազմագոյնս լեալ եւ յիւրմէ բնութեանն հաստատութենէն բաժա-

¹ Ex. Fid. 14.1 Τὰ ἰδιώματα τῆς θείας φύσεως

² Ex. Fid. 14.4-5 + τὸ ἀχώρητον, τὸ ἀπεριόριστον, τὸ ἀόριστον, τὸ ἀσώματον, τὸ ἀόρατον, τὸ ἀπερινόητον.

³ C շրջապահպանութիւն

⁴ Ex. Fid. 14.8 + καὶ συνέχειν // MN om.

⁵ Ex. Fid. 14.9 *չիք*

⁶ B ումեմ C ումեմէ

⁷ Ex. Fid. 14.9 αὐτῇ

⁸ Ex. Fid. 14.11 + μονή

⁹ B խառնեալ

¹⁰ C գէութիւն Ex. Fid. 14.11 *չիք*

¹¹ Ex. Fid. 14.15-16 συναλοιφῆς ἢ συμφύρσεως // C E F լուծեալս

¹² E շարժեալ

նէ ամենեցուն եւ կայ, ի պարզութեան բազմացեալ առ բաժանեալսն անբաժանաբար, եւ առ պարզութիւն իւր ժողովելով եւ դարձուցանելով զբաժանեալսն (զի ամենայն կարաւտին նմա եւ ի նմա¹³ զէութիւն ունին): Եւ ինքն է էութիւն ամենեցուն, որպէս ունի բնութեամբ տոռոյութիւն: Եւ նա է էիցն էութիւն, կենդանեաց կեանք, բանաւորաց բան եւ¹⁴ մտաւորաց միտք, ինքն ի վեր քան զբանս եւ զմիտս էութիւն՝ ի վեր քան զկեանս, ի վեր քան զգոյութիւն:

Նա եւ զամենայն տնաւորինէ անխառնակաբար, իսկ ինքն տնաւորինի¹⁵ ոչ յումեմէ: Եւ գիտէ զամենայն պարզ գիտութեամբ եւ աստուածային եւ ամենատես եւ աննիւթ¹⁶ աչաք իւրով պարզաբար նայելով յամենայնի, որք են այժմ եւ յանցեալսն եւ յապառնին, նախ քան զլինելն նոցա¹⁷, անմեղ գոլով եւ թողացուցանող մեղանաց եւ կեցուցանող, եւ զամենայն, զոր ինչ եւ կամի, կարող է, իսկ ոչ որչափ կարող է, կամի: Վասն զի կարող է անյայտ առնել զաշխարհ, այլ ոչ կամի:

¹³ C նմանէ

¹⁴ F չիք

¹⁵ Ex. Fid. 14.28 չիք

¹⁶ Ex. Fid. 14.30 καὶ ἀόλω // B չիք եւ աննիւթ

¹⁷ Դան. ԺԳ 42. «գիտես զամենայն յառաջ քան զլինել նոցա»:

ԺԵ. Վասն յափտեանցն¹:

Սա արար գյափտեանսն², որ էր յառաջ քան զամենայն յափտեանս, առ որ աստուածայինն Դաւիթ ասէ, եթէ. «յափտենից մինչեւ յափտեանս դու ես»³, եւ⁴ առաքեալ ասէ. «որով գյափտեանս արար»⁵:

Պարտ է գիտել, զի⁶ բազում ինչ նշանակէ անուն յափտենիս, քանզի յափտեան կոչի իւրաքանչիւր էիցս կեանք: Եւ դարձեալ կոչի յափտեան շրջանակս հազար ամաց⁷ եւ դար եւս: Եւ յափտեան կոչի այժմու ժամանակի շրջանակ ի սկսմանէ⁸ երկնից եւ երկրի մինչեւ ցնորոգումն նոցա⁹: Ասի յափտեանս եւ առ յապայն այն կեանք¹⁰ անկատարելին, որ ոչ է ընդ ժամանակաւ ինչ կամ մասն ժամու կամ ժամ բերմամբ արեգական չափեալ, որ յատուրց եւ ի գիշերոց ժողովի, այլ ընդ նմին յերկարածգեալ ընդ մշտնջենաւորսն, որպէս ժամանակաւոր շարժումն¹¹: Վասն զի որպէս ընդ ժամանակաւս են ժամն, նոյնպէս եւ մշտնջենաւորացն յափտեան է:

Կոչի յափտեան եւ անցեալն այն, որ անսկիզբն էր ընդ Աստուծոյ յերկարածգեալ անիմանալին այն, որ եւ կատարած է առ ի ստեղծումն էիցս¹²:

Եւսքն ասին¹³ յափտեանս եւ եւսքն դարս, շրջանակ հազարացս այսու կենցաղոյս սկիզբն եւ կատարած ունելով: Ի սկսմանէ արարածոց¹⁴ այսորիկ, այսինքն՝ երկնից եւ երկրի, մինչեւ զհասարակաց կատարումն մարդկան եւ յարութիւն ամենեցուն¹⁵: Վասն զի է եւ մասնաւոր կատարած մահ իւրաքան-

¹ Ex. Fid. 15.1 Περὶ αἰῶνος

² E գափտեանսն

³ Սաղմ. ԴԲ 2. «Ի սկզբանէ յափտեանս դու ես»:

⁴ Ex. Fid. 15.3 + ὁ θεός

⁵ Եբր. Ա. 2. «որով եւ գյափտեանսն արար»:

⁶ Ex. Fid. 15.5 + πολύσημόν ἐστι.

⁷ E հազարաց

⁸ C սկզբանէ F իսկ ի սմանէ

⁹ Ex. Fid. 15.6 չիք եւ յափտեան կոչի այժմու ժամանակի շրջանակ ի սկսմանէ երկնից եւ երկրի մինչեւ ցնորոգումն նոցա

¹⁰ եւ առ յապայն այն կեանք // Ex. Fid. 15.7-9 ὅλος ὁ παρὼν βίος, καὶ αἰὼν ὁ μέλλων ὁ μετὰ τὴν ἀνάστασιν

¹¹ Ex. Fid. 15.11 + καὶ διάστημα.

¹² Հուն. չիք Կոչի յափտեան ... ստեղծումն էիցս:

¹³ Ex. Fid. 15.14 Λέγονται μὲν οὖν ἐπτα // B C E երեւային

¹⁴ եւ եւսքն դարս, շրջանակ հազարացս այսու կենցաղոյս սկիզբն եւ կատարած ունելով: Ի սկսմանէ արարածոց // Ex. Fid. 15.14 τοῦ κόσμου τούτου

¹⁵ Ex. Fid. 15.17 չիք

չիր մարդկան, եւ է իմն հասարակաց կատարած, յորժամ հանդերձեալ է լինել յարութիւն ամենայն մարդկան: Իսկ է ութերորդ յաւիտեան հանդերձեալն:

Եւ զի յառաջ քան զլինելն աշխարհի, յորժամ ոչ երկին¹⁶ եւ ոչ արեգակն չափ ժամուց եւ ոչ չափեալ ժամանակ¹⁷, այլ ընդ¹⁸ մշտնջենաւորին յերկարածգեալ, որպէս ժամանակաւոր շարժութիւն¹⁹: Եւ ըստ այսմ բանի մի յաւիտեան է՝ առաջին միջին եւ վերջին²⁰, որով եւ Աստուած յաւիտենական կոչի, այլ եւ նախ քան զյաւիտեանսն, զի ինքն արար զյաւիտեանս: Վասն զի Աստուած միայն է անսկիզբն, իսկ զայլսն²¹ ամենայն նա արար գէսս եւ զյաւիտեանս: Իսկ Աստուած յորժամ ասեմ, յայտ է զի գՀայր ասեմ, զմիածին Որդին իւր, զՏէրն²² մեր Յիսուս Քրիստոս եւ գՀոգին իւր սուրբ, զմի Աստուածն մեր:

Իսկ ասեն յաւիտեանս յաւիտենից, որ են ըստ այսց բանից այսու աշխարհի եւրն յաւիտեանսն բազում յաւիտենից, այս ինքն է իւրաքանչիւր մարդոց կենացն²³ յաւիտենից յաւիտեանս²⁴ են զնոսա յինքն պարունակելով: Նոյնպէս եւ առաջի²⁵ յաւիտեանն զայժմ, եւ զյապայն յինքն պարագրէ մի զմիոյ յաւիտեանս ելով. եւ յաւիտեանս այս յապագային²⁶ կոչի յաւիտեանս²⁷: Իսկ յաւիտենական կեանք եւ յաւիտենական տանջանք²⁸ զանկատար²⁹ լինելն նշանակէ զհանդերձելոյն, վասն զի զկնի հասարակաց³⁰ յարութեանն ոչ աւուրբ եւ գիշերաւ³¹ թուին ժամանակ: Այլ եղիցի ամենայն մի ար աներեկոյ, յորժամ արեգակն³² արդարութեան ի վերայ արդարոց վայել-

¹⁶ C երկին էր

¹⁷ ոչ երկինք եւ ոչ արեգակն չափ ժամուց եւ ոչ չափեալ ժամանակ // Ex. Fid. 15.19-20 οὐδὲ ἥλιος ἢν διαρῶν ἡμέραν ἀπὸ νυκτός, οὐκ ἦν αἰὼν μετρητός

¹⁸ F չիք

¹⁹ Ex. Fid. 15.21 + καὶ διάστημα

²⁰ Ex. Fid. 15.22 չիք առաջին միջին եւ վերջին

²¹ Ex. Fid. 15.24 չիք

²² E գաւեր

²³ Ex. Fid. 15.29 + περιέχουσι καὶ

²⁴ C յաւիտեանս յաւիտենից

²⁵ C զառաջին

²⁶ B E յապային

²⁷ Նոյնպէս եւ առաջի յաւիտեանն զայժմ, եւ զյապայն յինքն պարագրէ մի զմիոյ յաւիտեանս ելով. եւ յաւիտեանս այս յապագային կոչի յաւիտեանս // Ex. Fid. 15.30-31 Καὶ αἰὼν αἰῶνος λέγεται ὁ νῦν καὶ ὁ μέλλων

²⁸ C կեանքն... տանջանքն

²⁹ C զանկատար

³⁰ Ex. Fid. 15.32 չիք

³¹ C գիշերիւ

³² F արեգակնն

շաբար պայծառանայ, իսկ մեղաւորացն գիշեր եղիցի անլոյս անկատարելի, եւ ո՞չ որպէս Ռոգիմեցիք դարձեալ կալ ասեն եւ փրկիլ ի տանջանաց զկնի հազար թուելոյ ամաց: Ամենայն յաւիտենից մի արարիչ է Աստուած, որ ստեղծեաց զամենայն մի ըստ միոջէ³³, որ եւ էր յառաջ քան զյաւիտեանս եւ մնայ յաւիտեան³⁴:

³³ Ex. Fid. 15.37 չիք մի ըստ միոջէ

³⁴ Ex. Fid. 15.38 չիք եւ մնայ յաւիտեան + Ex. Fid. 16.1-8 Περί δημιουργίας. Ἐπεὶ οὖν ὁ ἀγαθὸς καὶ ὑπεράγαθος θεὸς οὐκ ἠρκέσθη τῇ ἑαυτοῦ θεωρίᾳ ἀλλ' ὑπερβολῇ ἀγαθότητος εὐδόκησε γενέσθαι τινὰ τὰ εὐεργετηθησόμενα καὶ μεθέξοντα τῆς αὐτοῦ ἀγαθότητος, ἐκ τοῦ μὴ ὄντος εἰς τὸ εἶναι παράγει καὶ δημιουργεῖ τὰ σύμπαντα, ἀόρατά τε καὶ ὄρατά, καὶ τὸν ἐξόρατοῦ καὶ ἀόρατου συγκείμενον ἄνθρωπον. Κτίζει δὲ ἐννοῶν, καὶ τὸ ἐννόημα ἔργον ὑφίσταται λόγῳ συμπληρούμενον καὶ πνεύματι τελειούμενον

ԺԶ. Վասն հրեշտակաց¹:

Նա ինքն է ստեղծիչ եւ արարիչ հրեշտակաց եւ յոչ գոյից ի գոյութիւն եւ յէութեան ածող, եւ որ ըստ պատկերի իւրում եղականացոյց² զնոսա՝ բնութիւն անմարմին, որպէս զհոգի ինչ կամ զհոս աննիւթ, որպէս ասէ³ Դաւիթ. «Որ արար զհրեշտակս իւր հոգիս եւ զպաշտանեայս իւր ի բոց հորոյ»⁴, թեթեւութեան եւ բորբոքման եւ ջերմութեան եւ սրութեան եւ փութութեան նոցա առ աստուածային կարատն եւ սպասաւորութիւն նկարագրելով զնոսա եւ զ՛ի վերելսն յամենայն նիւթական իմացութեան եւ զհետացումն ի ներքնոց ցուցանելով⁵:

Եւ հրեշտակ է էութիւն իմանալի, մշտաշարժ, ինքնիշխան, անմարմին, սպասաւոր Աստուծոյ, եւ շնորհամ առեալ ի բնութիւն իւր զանմահութիւն, զորոյ զգոյութիւն եւ զտեսակ եւ զսահման միայն զիտէ արարիչն նոցա: Իսկ անմարմին եւ աննիւթ ասի⁶ ի մէնջ, իսկ ամենայն ինչ առ Աստուած արիւնակեն, նիւթական⁷ եւ թանձր եւ եղական ճանաչին, վասն զի սեփական Աստուած միայն է աննիւթ եւ անմարմին⁸:

Արդ են նոքա բնութիւն բանական եւ մտաւոր եւ ինքնիշխան, փոփոխելի կամաւ, այսինքն՝ կամաւ ընդունել յինքն զփոփոխումն: Զի ամենայն եղական փոփոխելի ելով, եւ միայն անեղն է անփոխադրելի, եւ ամենայն բանաւոր ինքնիշխան է: Վասն որոյ եւ նոքա որպէս բանաւոր եւ մտաւոր ինքնիշխան են, եւ որպէս եղական փոփոխելիք են, որք եւ ունին իշխանութիւն վերստին կեալ եւ աճել ի բարին եւ դառնալ առ վատքարն:

Ոչ կարէ առնուլ զապաշխարութիւն, վասն զի անմարմին է, քանզի մարդ վասն տկարութեան մարմնոյ հանդիպեցաւ ապաշխարութեան: Անմահ ոչ բնութեամբ, այլ շնորհամ, վասն զի ամենայն սկսեալ եւ⁹ կատարումն առնու բնութեամբ: Եւ միայն Աստուած է, որ միշտ էն գոլով եւ ի վեր քան

¹ Ex. Fid. 17.1 Περὶ ἀγγέλων

² Ex. Fid. 17.3 κτίσας // C E F եղանակացոյց

³ Ex. Fid. 17.4 + ὁ θεὸς

⁴ Սաղմ. ՃԳ 4. «Որ արար զհրեշտակս իւր հոգիս, եւ զպաշտանեայս իւր ի հոս կիզելոյ»:

⁵ եւ զհետացումն ի ներքնոց ցուցանելով // Ex. Fid. 17.8 ἀπηλλαγμένον

⁶ Ex. Fid. 17.12 ὅσον

⁷ առ Աստուած արիւնակեն, նիւթական // Ex. Fid. 17.12-13 συγκρινόμενον πρὸς θεὸν τὸν μόνον ἀσύγκριτον

⁸ E անմարմին եւ աննիւթ

⁹ C չէք

գմշտնջենատրութիւն, զի ոչ ընդ ժամանակաւ, այլ ի վեր քան զժամանակս է եւ արարիչ ժամանակաց:

Լոյս երկրորդ իմանալիք յառաջին եւ յանսկիզբն լուսոյն ունելով զլուսատրութիւն, ոչ կարաւոք գոլով լեզուի¹⁰ եւ լսելեաց, այլ առանց ձայնատրքանի¹¹ կալով միմեանց գլխացութիւն եւ գլխորհուրդ:

Ի ձեռն Բանին ստեղծեցան ամենայն հրեշտակք, եւ ի ձեռն Սուրբ Հոգւոյն սրբութեամբ կատարեցան՝ ըստ նմանութեան պատուոյ եւ կարգի՝ առնելով¹² զշնորհս եւ զլուսատրութիւն:

Շուրջ պարունակեալք ընդ տեղեաւ¹³, զի մինչ յերկինս են, ոչ են ի վերայ երկրի, եւ յերկիր մինչ առաքին յԱստուծոյ, ոչ են յերկինս: Իսկ ոչ սահմանին¹⁴ պարսպաւ կամ դռամբ¹⁵ կամ մատանեաւ, վասն զի առ մերս այս անսահմանելիք են: Իսկ անսահմանս վասն այսորիկ ասեմ, զի ոչ եթէ որպէս են, այնպէս երեւին արժանեացն, որոց Աստուած կամեսցի երեւել նոցա, այլ աւրինակաւ այլափոխութեամբ, որպէս կարող լինիցին նոքա¹⁶ տեսանել: «Վասն զի անսահման բնութեամբ եւ ստուգութեամբ միայն անեղն է, իսկ ամենայն եղական յարարչէն իւրմէ¹⁷ Աստուծոյ սահմանի»¹⁸:

Արտաքոյ գոյութեան իւրեանց ի Հոգւոյն Սրբոյ ունելով զսրբութիւն, աստուածային շնորհամբն մարգարէանան, ոչ ընդունին եւ ոչ կրեն զամուսնութիւն, վասն զի ոչ մահկանացոք են:

Իսկ որպէս միտք իմանալիք¹⁹ ի մտաւոր եւ յիմանալի տեղիս կեան, ոչ մարմնապէս պարագրեալս (զի ոչ մարմնատրք²⁰ բնութեամբ տեսակեցան եւ ոչ ընդ երրորդ²¹ կոյս սփռեալք²²), այլ իմանալիապէս անդէն եւ ներգործեն, ուր եւ հրամային²³, եւ ոչ կարեն ի մի եւ նոյն ժամու աստ եւ այլուր լինել եւ ներգործել:

¹⁰ Շ լեզու

¹¹ Շ բանից

¹² Շ առնելով

¹³ Շ տեղեալք, վասն

¹⁴ E F սահմանի

¹⁵ Ex. Fid. 17.33 + καὶ κλειθρῶν

¹⁶ Ex. Fid. 17.36 οἱ ὁρῶντες

¹⁷ Շ իւրեանց

¹⁸ Շ սահմանին | Հմմտ. *Doctrina patrum* 282.23-24: <Αόριστόν> ἐστὶ μόνον τὸ ἄκτιστον· πᾶν γὰρ κτίσμα ὑπὸ τοῦ κτίστου ὀρίζεται

¹⁹ Ex. Fid. 17.42 *չիք*

²⁰ Շ մարմնատր

²¹ Շ երկրորդ

²² F սփռեալք

²³ Ex. Fid. 17.44 προσαχθῶσι // B համարին

Կամ թէ հաւասար են գոյութեամբ, եւ թէ բաժանեալս առ միմեանս ոչ գիտեմք: Միայն արարիչն նոցա Աստուած գիտէ, որ ճանաչէ²⁴ զամենայն: Իսկ բաժանին ի միմեանց լուսաւորութեամբ եւ կայանիւք, կամ ի լուսաւորութեանն ունին ստացեալ զկայանսն կամ առ կայեանս առնուն զլուսաւորութիւն եւ զմիմեանս լուսաւորեն ըստ վերագոյն անողութեան կարգացն կամ բնութեանն: Իսկ յայտնի է, զի վերագոյնն եւ մեծն փոփոնցն²⁵ տան զլուսաւորութիւն եւ զգիտութիւն: Հզարք եւ պատրաստք են կատարել զաստուածային կամսն եւ փութապէս յամենայն կողմանս գտանին, ուր եւ հրամայեցէ աստուածային կամացն ակնարկութիւնն, ի բարձրութենէ²⁶ բնութեանն, եւ պահապանք են երկրաւորացս ի վերայ ազգաց եւ տեղեաց վերակացոյս ելով, որպէս կարգեալք են յարարչէն, նախախնամողք եւ ազնականք մեր եւ ստուգապէս ըստ կամաց եւ ըստ հրամանաց Աստուծոյ, պատերազմակիցք լինին²⁷ մեզ, իբրեւ միշտ մերձ Աստուծոյ եղեալք:

Դժուարաշարժք ի շարիս են եւ ոչ ամենեւին անշարժ²⁸, իսկ այժմ անշարժ եւս՝ ոչ բնութեամբ, այլ շնորհաւ եւ միայն բարերարին Աստուծոյ մերձաւորութեամբն: Տեսանողք Աստուծոյ ըստ հասանելոյ նոցա, զնա ունելով կերակուր իւրեանց: Վերագոյն քան զմեզ էութիւնս որպէս անմարմինք եւ յամենայն մարմնական ախտից ատարացեալք, ոչ ամենեւինք անախտք, զի միայն Աստուած է ատար յախտից: Իսկ կերպարանին զայն առ որ²⁹ հրամայէ Աստուած, եւ այնպէս երեւին մարդկան եւ յայտնեն նոցա զաստուածային խորհուրդսն: Յերկինս բնակեալ կան եւ գործ ունին զարհմտութիւն Աստուծոյ եւ սպասաւորութիւն զկամս³⁰ նորա:

Իսկ որպէս սուրբ եւ աստուածային եւ քահանայականն եւ առաւել աստուածաբանն Դիոնիսիոս Արիսպագացին³¹ ասէ. «Ամենայն աստուածաբանութիւն, որ³² են աստուածային գիրք, յայտնի ասեն զերկնային³³ էութիւնսն, զայն աստուածային քահանայեւորութիւն երրորդս³⁴ յայտնելով երրորդութեամբ զարդարեալս: Եւ առաջին կարգս ասէ որք մերձ Աստուծոյ են միշտ եւ

²⁴ F ճանանչէ

²⁵ C առ փոփոնսն

²⁶ Ex. Fid. 17.53 τάχει

²⁷ C լինիլ

²⁸ Ex. Fid. 17.58 ἀκίνητοι // C E F ինքնաշարժ

²⁹ C այնու գոր

³⁰ C զսպասաւորութիւն ի կամս

³¹ 116 *ուղղված Արիսպագացին*

³² C որք

³³ Ex. Fid. 17.67-68 τὰς οὐρανίους // B C զաստուածային

³⁴ C + ասեն

բեւեռեալ անընդմիջաբար միատրեալ ընդ տուողն զվեցբեւեան սերովքէն եւ զբազմաշեայ փերովքէն եւ զամենասուրբ արքողոցն դասն, իսկ երկրորդ զՏէրութեանց, զԶարութեանց եւ զՊետութեանց կարգ, իսկ երրորդ զկատարածին զԻշխանութեանց, Հրեշտակապետաց եւ Հրեշտակաց գունդսն»:

Արդ ոմանք ասեն, եթէ յառաջ քան զամենայն եղական արարածքս եղեն, որպէս Գրիգոր Աստուածաբանն ասէ, եթէ «Նախ իմանայր զհրեշտակական եւ զերկնային զարութիւնսն, եւ իմաստքն³⁵ գործք լինէին»: Իսկ ըստ Յոբայ՝ սկիզբն գոլ³⁶ գործոց Աստուծոյ³⁷: Եւ այլք ասեն, եթէ զկնի առաջին երկնիցն, որ է տեղի նոցա³⁸: Իսկ յառաջ քան զլինել մարդոյն ամենեւին խոստովանին: Այլ եւ զաստուածաբանին Գրիգորի պարտ վարկանիմ, վասն զի վայել էր նախ զիմանալի էութիւնսն էացուցանել, եւ ապա զգալին, եւ այնպէս յերկոցունցն³⁹ զմարդն:

Իսկ որք ասացին զհրեշտակս արարիչս գոլ ոմանց գոյութեանց, նոքա բերանք⁴⁰ Հաւրն իւրեանց՝ սատանայի են, զի արարածք եւ ոչ արարիչք են: Իսկ ամենեցուն արարիչ եւ նախախնամող եւ ամենակալ Աստուած է միայն անեղն, որ ի Հայր եւ յՈրդի եւ ի Հոգի Սուրբ գովի եւ փառաբանի:

³⁵ F իմաստքն

³⁶ C գործեալ

³⁷ Ex. Fid. 17.77 չիք Իսկ ըստ Յոբայ՝ սկիզբն գոլ գործոց Աստուծոյ | հմմտ. Յոբ Խ 14. «Նա՛ է սկիզբն արարածոց Տեառն»:

³⁸ Ex. Fid. 17.78 չիք որ է տեղի նոցա

³⁹ E F երկոցունցն

⁴⁰ C բերանալ

ԺԷ. Վասն սատանայի եւ դիւացն¹:

Ի սոցանէ ի հրեշտակական զարութեանս, որ վերակացուն էր երկրա-
յին կարգաց, որ եւ զպահպանութիւնն երկրի ի ձեռին եղեալ ունէր յԱստուծոյ,
ոչ բնութեամբ չար ինչ ստեղծեալ, այլ բարիոք էութիւն գոլով եւ վասն բարոյ
ստեղծեալ եւ ի բարի², եւ ամենեւիմբ ոչ ինչ ունելով յարարչէն յանձն իւր
հետս շարութեան, այլ ոչ կարաց բովանդակել յինքն զլուսատրութիւն եւ
զպատիւն, զոր պարգեւեաց իւր արարիչն, եւ ինքնիշխանական ընդրութեամբ
փոփոխեցաւ ի բնական բարեացն արտաբոյ բնութեանն եւ հպարտացաւ
հակառակ լեալ³ արարչին իւրոյ⁴ Աստուծոյ եւ դիմամարտել նմա խոստացաւ
եւ նախ բաժանեալ ի բարոյն եղեւ ի շարութիւն: Որովհետեւ չարն այլ ոչ ինչ
է, բայց միայն պակասել բարոյն, որպէս խաւարն պակասել⁵ լուսոյ, վասն
զի բարին լոյս է իմանալի, նոյնպէս եւ չար խաւար է իմանալի: Եւ արդ որք
լոյս ստեղծեալ եղեն յարարչէն եւ բարիոք արարեալ, «վասն զի ետես
Աստուած զամենայն, զոր ինչ արար, եւ ահա բարի էին յոյժ»⁶, ինքնիշխան
կամաւ խաւար եղեւ: Եւ ընդ նմա հերձեալ հետեւեցան նմա, եւ անկան ընդ
նմա բազմութիւն անթիւ որք ընդ նովաւ կարգեալք էին հրեշտակքն: Որք ի նոյն
հրեշտակական բնութենէն էին, իսկ չարք եղեն յառաջընտրութեամբ կամաւ
խոտորեալ ի բարութենէն առ շարութիւնն:

Ոչ ունին իշխանութիւն վնասել ումեք⁷ եւ ոչ զարութիւն, եթէ ոչ նա-
խախնամութեամբ ումեք թողացեալ լինին յԱստուծոյ, որպէս առ Յոբայ ասի⁸
եւ որպէս գրեալ է յԱւետարանին վասն խոզիցն⁹: Իսկ յորժամ թոյլ տացի յԱ-
ստուծոյ, յայնժամ կարող են եւ փոփոխին եւ այլակերպին, յոր եւ կամին¹⁰
տեսակ առ աչաւ լինել:

Եւ զլինելոցն ոչ հրեշտակք եւ ոչ դեւք գիտեն, այլ մարգարէանան, հրեշ-
տակք աստուածային յայտնութեամբն¹¹ առ նոսա, զոր հրամային ի նմանէ

¹ Ե դիւաց | Ex. Fid. 18.1 Περὶ διαβόλου καὶ δαιμόνων

² Ե բարոյ Ե բարոյն Ե բարոյ | վասն բարոյ ստեղծեալ եւ ի բարի // Ex. Fid. 18.4 չէք

³ Բ հակառակել

⁴ Ե չէք

⁵ Ե պակասի

⁶ Ծմնդ. Ա. 31. «Եւ ետես Աստուած զամենայն զոր արար, եւ ահա բարի են յոյժ»:

⁷ վնասել ումեք // // Ex. Fid. 18.19 չէք

⁸ Տէ՛ս Յովբ Ա. 12:

⁹ Տէ՛ս Մարկ. Ե 13:

¹⁰ Ex. Fid. 18.22 θέλουσι // Ե Ե Բ կամի

¹¹ Ex. Fid. 18.25 ἀποκαλύπτοντος // Ե ընտրութեամբն

մարգարէանալ զհանդերձեալն: Վասն այսորիկ եւ զամենայն ինչ զոր ասեն, լինիցի: Իսկ դեւ ասեն զյառաջակայն, երբեմն նախագոյն եղելոցն տեսութեամբն, եւ երբեմն մտախորհելով¹², վասն այսորիկ եւ զբազումս ստեն, որոց չէ պարտ հաւատալ, թէպէտ եւ ճշմարտեն երբեք¹³, այնու աղագաւ զի զբազումս ստեն¹⁴: Իսկ գիտեն եւ զգիրս:

Եւ ի նոցանէ գտեալ եղեւ ամենայն շարութիւն եւ հոյլ անսուրբ ախտից: Եւ խաբեալ զմարդիկ թողացեալ են¹⁵, իսկ բռնադատել զոք ոչ են կարող, վասն զի առ մեզ է ընդունել զբախումն նոցա կամ ոչ ընդունել: Վասն այսորիկ սատանայի եւ հրեշտակաց նորա պատրաստեալ է հուրն անշէջ եւ տանջանքն յախտենից¹⁶, եւ որոց հետեւին նմա:

Իսկ պարտ է գիտել, եթէ զոր ինչ է մարդկան մահն, նոյն է եւ հրեշտակաց անկումն, զի զկնի անկմանն ոչ գոյ նոցա ապաշխարութիւն, որպէս եւ ոչ մարդկան յետ մահումն:

¹² E խորհելով C մտախորհելով

¹³ C երբեմն

¹⁴ F չիք որոց թէ պարտ հաւատալ, թէպէտ եւ ճշմարտեն երբեք, այնու աղագաւ զի զբազումս ստեն | այնու աղագաւ զի զբազումս ստեն // Ex. Fid. 18.29 οἶφο τρώπω εἰρήκαμεν

¹⁵ B C եղեն

¹⁶ Տե՛ս Մատթ. ԻԵ 41:

ԺԸ. Վասն երեւելի եւ զգալի արարածոցս¹:

Նայ ինքն Աստուածն մեր, որ Երրորդութիւն եւ միութիւն փառաբանի, արար զերկինս եւ զերկիր եւ զամենայն, որ ի միջի նոցա² յոչ գոյից ի գոյութիւն ածելով զամենայն, զոմանս յոչընչէ յէութիւն երբեք³, որպէս զերկին, եւ զերկիր, եւ զջուր, եւ զաւդ, եւ զհոտ, իսկ զոմանս ի սոցանէ յիւր ստեղծեալ նիւթոցն ետեղծ, որպէս զբոյսս, զտունկս, զսերմանս եւ զկենդանիս, զի սոքա յերկրէ, ի ջրոյ, յաւդոյ եւ ի հոռոյ հրամանաւ արարչին փոխատուութեամբ արարան:

¹ Ex. Fid. 19.1 Περί κτίσεως όρατής

² Սաղմ. ձևե 6. «արար զերկինս եւ զերկիր, զծով եւ զամենայն որ է ի նոսա»:

³ յոչընչէ յէութիւն երբեք // Ex. Fid. 19.4 ούκ έκ προϋποκειμένης ύλης

ԺԹ. Յաղագս երկնից¹:

Երկինք է շուրջ պարունակող՝ երեւելի եւ աներեւոյթ արարածոց, վասն զի ի ներքս ի նա են իմանալի զարոպիւնք հրեշտակացն, եւ ամենայն զգալիս ընդ նովաւ պարփակին² եւ սահմանին: Եւ միայն Աստուած գոլով անպարագրելի, որ³ զամենայն լնու եւ բովանդակէ եւ սահմանէ, որպէս առաւել քան զամենայն է եւ արարիչ ամենայնի:

Եւ վասն զի երկինք ասէ գիր եւ երկինք երկնից⁴, եւ Պաւղոս⁵ մինչեւ ցերրորդ երկինս ասի յափշտակեալ⁶, այլ մեք ասեմք յարարումն ամենայն աշխարհի ի գրոց⁷ երկնից ստեղծումն ուսեալ եղաք, զոր արտաքին իմաստունքն անաստեղս սփեռ կոչեն, ուսեալք ի Մովսէսի⁸ արինադրութենէն: Եւ դարձեալ հաստատութիւն կոչեաց Աստուած զերկինս⁹, զոր ի մէջ շուրցն, եւ շուրցս¹⁰ հաստատել հրամայեաց եւ մինչ կարգեաց զնա բաժանող զշուրն, որ ի վերոյ հաստատութեանն, եւ ի մէջ ջրոյն, որ ի ներոյ հաստատութեան¹¹: Զսորաբնութիւնն աստուածային Վասիլիոս¹² մանր իմն ասէ իբրեւ զծուխ, ուսեալ յաստուածային գրոց: Իսկ այլք իբրեւ զշուր խստացեալ, որպէս ի միջի շուրց հաստատեալ, այլք ի շորից նիւթոցն լեալ, որք անուանեալք են անդամք¹³, իսկ այլ՝ հինգերորդ մարմին, եւ այլ՝ նիւթ բայց¹⁴ ի շորիցն նիւթոց:

Վասն այսորիկ հաճոյ թուեցաւ ոմանց արտաքին ամենեցուն շուրջ գալ երկնից ընթացիւք սփեռածութիւն իւր եւ յամենայն կողմանց հաւասար վերագոյն լինել կողմ նոցա վերին, իսկ միջինն որ ի նմանէ պարունակեալն է

¹ Ex. Fid. 20.1 Περι οὐρανοῦ

² Ex. Fid. 20.3-4 περικλείονται // B E Fփակին

³ C սորա

⁴ երկինք երկնից // Ex. Fid. 20.7-8 “οὐρανὸν τοῦ οὐρανοῦ” καὶ “οὐρανοὺς οὐρανῶν” | Սաղմ. ճեֆ 4. «երկինք երկնից»

⁵ E գՊաւղոս C վասն Պաւղոսի Ex. Fid. 20.8 ὁ μακάριος Παῦλος

⁶ Բ Կորնթ. ԺԲ 2. «յափշտակեալ զայնպիսին մինչեւ յերրորդ երկնից»:

⁷ C + սրբոց Ex. Fid. 20.9 չիք

⁸ F Մովսիսէ

⁹ Տէ՛ս Ծննդ. Ա. 8:

¹⁰ եւ շուրցս // Ex. Fid. 20.12 չիք

¹¹ Տէ՛ս Ծննդ. Ա. 6-7:

¹² C Բասիլիոս | Bas. Hex. 120.7-9

¹³ Ex. Fid. 20.17 չիք որք անուանեալք են անդամք

¹⁴ C բաց

ներքին կողմն լինելով, եւ թեթեւ, որ ոչ ունին ծանրութիւն մարմինն, գվերինն ունելով հանդիպեալ զկարգ յարարչէն, իսկ ծանրունն եւ ի վայրաֆաշողն ներնագոյն երկիր¹⁵, որ է ի միջի: Եւ է թեթեւ եւ ի վերընթաց¹⁶ նիսք հուր, գոր առժամայն ընդ երկնաւ կարգեալ ասեն եւ կոչեն նմա եթեր, եւ ընդ նովաւ ի ներոյ կողմանէ է ալ: Իսկ երկիր եւ ջուր որպէս ծանունն եւ ստորաֆարշ ի մէջ կախեալ գոլով, որպէս զի լիցի այսպէս, ի միջի սփեռին ներոյ եղիցի երկիր, եւ ի վերայ նորա ջուր¹⁷, վասն զի ջուր ֆան գերկիր թեթեւ գոյ, որով եւ դիրաշարժ ֆան գնա է, եւ ի վերոյ ամենայն կողմանց որպէս կտաւ ինչ ալ է. եւ արտաֆոյ ալոյ յամենայն կողմանց եթեր է. իսկ արտաֆոյ ֆան գամենեսեան շրջապատեալ երկինն:

Իսկ բոլորումն ասեն շարժել գնա¹⁸ եւ խստութեամբն ըմբռնեալ գոր ի միջի ունի, եւ այնպէս կայ հաստատուն եւ անֆակտելի:

Իսկ եւթն գաւաթս ասեն երկնից, եւ զմինն բարձր ֆան գամենեսեան: Եւ ասեն գնա մանր իբրեւ զծովսդ գոլ բնութեամբ եւ յիրաֆանչիր գաւաթս զմի ի մոլորականացն ասեն գոլ: Եւ եւթն մոլորականսն թուեն՝ Արեգակնն եւ Լուսինն, Դիայ, Երմիս, Արէս, Ափրոդիտի¹⁹ Կրոնոս²⁰: Իսկ Ափրոդիտի կոչեն որ երբեմն առաւատու եւ երբեմն երեկոյի արուսեակ լինի: Եւ մոլորականն կոչեցին գոսսա, վասն զի հակառակ երկնից առնեն զընթացս, վասն զի երկինն եւ ամենայն աստեղն յարեւելից յարեւմուտս շարժին, միայն սոֆա ունին յարեւմտից յարեւելս շարժումն: Եւ զայս իմանամք ի Լուսնէ ըստ երեկոյից փոֆր մի յարեւելս մնալով կոյս:

Արդ որք իբրեւ զսփեռ ասացին գոլ գերկինս, մի թէ բարձրացեալ եւ հեռացեալ ասեն գնա յերկրէ, ի վերին կողմանց եւ ի ներոյ՝ հաւասար²¹: Իսկ ներոյ զկողֆանս ասեմք ըստ հասանելոյ մերոյ, եւ զի հետեւելով բանին յամենայն կողմանց երկինն²² ունի գվերին կողմ տեղեաց եւ երկիր գներքին: Եւ ասեն երկինս իբրեւ զսփեռ շուրջ պատեալ գերկրաւ եւ փոքրապէս իւր ընթանալովն ընդ ինն տանի գարեգակն եւ զլուսինն եւ զաստեղս, եւ մինչ ի վերայ

¹⁵ C յերկինսն

¹⁶ E վերաընթաց *դ/ս* ի վերընթաց

¹⁷ որպէս զի լիցի այսպէս, ի միջի սփեռին ներոյ եղիցի երկիր, եւ ի վերա նորա ջուր // Ex. Fid. 20.26-27 ὥς εἶναι ἐξ ἐναντίας κάτω μὲν τὴν γῆν καὶ τὸ ὕδωρ

¹⁸ Ex. Fid. 20.31 τὸν οὐρανόν

¹⁹ F *ուղղված* Ափրոդիտի C Ափրոդիտի

²⁰ E Կրոնոս

²¹ Ex. Fid. 20.43 *չ/բ*

²² C երկին

երկրի եղիցի արեգակն, ար եղիցի աստ, եւ ի ներքոյ՝ եղիցի գիշեր: Իսկ մինչ ընդ երկրաւ մտանէ արեգակնն, աստ գիշեր եւ անդ ար լիցի:

Իսկ այլոց կէս սփեռի հանոյ թուեցաւ գոլ²³ երկրի ի բանից աստուածախասին Դաւթայ²⁴. «որ արկանէ գերկինս որպէս զխորան»²⁵, եւ ըստ երանելուն Եսայեայ²⁶, որ ասէ. «որ ձգեաց գերկինս իբրեւ կամար»²⁷»²⁸: Եւ եթէ մինչ մտանէ²⁹ արեգակն, եւ լուսին եւ աստեղք շրջին գերկրաւ ընդ արեւմուտս եւ³⁰ ընդ հիւսիսի կողմ յարեւելս ընթանան եւ ոչ ընդ երկրաւ³¹, այլ թէ այս ինչ է եւ կամ թէ այն, ամենայն աստուածային հրամանաւն եղեն եւ հաստատեցան: Եւ զաստուածային կամքն եւ զխորհուրդն ստացեալ ունին հիմն անշարժ, զի «նա ասաց՝ եւ եղեն, հրամայեաց՝ եւ հաստատեցան, կարգեաց զնոսա յաւիտեանս յաւիտենից, հրաման ետ³² եւ ոչ անցանեն»³³:

Եւ իմն երկինք երկնից առաջին երկինք³⁴, որ ի վերոյ³⁵ հաստատութեան: Եւ ահա երկրորդ³⁶ երկինք, վասն զի «եւ հաստատութիւնն երկինքս կոչեաց Աստուած»³⁷: Իսկ սովորութիւն է աստուածային գրոց եւ զապս երկինքս անուանել, վասն ի վերոյ գոլոյ³⁸ նորա, վասն այսորիկ³⁹ «աւրհնեցէք», ասէ «թշունք երկնից զՏէր»⁴⁰, զգաւորցն ասէ: Զի ասոք է անցք թռչնոց, եւ ոչ երկինք: Ահա երրորդ⁴¹ երկինք, զոր ասաց աստուածային առաքեալ⁴²: Իսկ եթէ

²³ C գործ

²⁴ C Դաւթի

²⁵ Սաղմ. ՃԳ 2. «Զգեցեր գերկինս որպէս խորան» // Ex. Fid. 20.52-53 “Ὁ ἐκτείνων τὸν οὐρανὸν ὥσει δέσπριν”, ὅπερ δηλοῖ τὴν σκηπτήν:

²⁶ F Եսայի E Եսայիա

²⁷ C զկամար

²⁸ Ես. Խ 22. «որ կանգնեաց գերկինս իբրեւ զկամար, եւ ձգեաց իբրեւ զխորան»

²⁹ B C մտանեն

³⁰ C չիք

³¹ եւ ոչ ընդ երկրաւ // Ex. Fid. 20.55 չիք

³² C եղ

³³ Սաղմ. ՃԽԸ 5-6. «Զի նա ասաց եւ եղեւ, հրամայեաց եւ հաստատեցաւ: Կարգեաց զնոսա յաւիտեանս յաւիտենից, հրաման ետ եւ ոչ անցանէք»:

³⁴ C երկինք

³⁵ C E F + կողմ

³⁶ Ex. Fid. 20.62 δόο

³⁷ Ծմնդ. Ա 8:

³⁸ Ex. Fid. 20.64 ὁρᾶσθαι

³⁹ E F չիք

⁴⁰ Դան. Գ 80. «Աւրհնեցէք, թռչունք երկնից, զՏէր»:

⁴¹ Ex. Fid. 20.E τρεῖς // B C երկրորդ

⁴² Բ Կորնթ. ԺԲ 2. «յափշտակեալ զայնպիսին մինչեւ յերրորդ երկնից»:

ո՞հ գեւրն գաւտիսն եւրն երկինս կամիցի կոչել, ոչ ինչ հակառակ է⁴³ բանին նշմարտութեան: Իսկ սովորութիւն է երբայեցոցն բանի բազմադիմի կոչել զերկինս: Եթէ երկինս, եւ մինչ կամէր երկինք երկնից ասել, երկինս երկնից ասաց, որով երկինք⁴⁴ երկնից յայտնէ զվերին կողմն հաստատութեանն: Եւ ջուրք, որ ի վերոյ երկնից, կամ աւոյոյ եւ հաստատութեան ասէ կամ եւրն գաւտեաց հաստատութեանն, որք ըստ սովորութեանն երբայեցոցն բազում երկինս կոչեն:

Վասն այսորիկ որք ընդ արարածովք են, ապականութեան լծակիցք են, հետեւամբ բնութեանն եւ նոյն ինքն երկինք⁴⁵, իսկ շնորհաւմն Աստուծոյ ըմբռնին եւ պահին: Եւ միայն Աստուած է անսկիզբն⁴⁶ եւ անկատարած: Վասն որոյ ասացաւ. «նոքա անցանէն, եւ դու մնաս յաւիտեան»: (Այլ ոչ ի սպառ անյայտ լինին երկինք⁴⁷), այլ «հնասցին եւ որպէս հանդերձ փոփոխեցես զնոսա, եւ փոխեցին»⁴⁸, եւ եղիցին «երկինք նոր եւ երկիր նոր»⁴⁹:

Իսկ բազում չափով⁵⁰ մեծ է երկինք քան զերկիր, եւ զգոյութիւն երկնից ոչ է պարտ քննել, վասն զի անիմանալի է:

Եւ մի ո՞հ հոգեւոր կարծեսցէ զերկինս կամ զաստեղս, զի անհոգիք են եւ անզգայք: Եւ թէպէտ եւ ասէ աստուածային գիր. «նորախ լիցին⁵¹ երկինք⁵² եւ երգեսցէ երկիր»⁵³, յերկինս զհրեշտակս եւ ի վերայ երկրի զմարդիկ կոչէ յուրախութիւն, զի գիտէ գիր կերպարանել եւ որպէս ընդ շնչատուս խաւսել ընդ անշունչս: Որպէս եւ այն, թէ⁵⁴ «Ծով ետես եւ փախեաւ, եւ Յորդանան յետս⁵⁵ դարձաւ»⁵⁶, եւ «զի՞ է քեզ, զո՞ տեսեր եւ փախեաւ. եւ Յորդանան զի՞ յետս

⁴³ C է հակառակ

⁴⁴ C երկին

⁴⁵ E չէք C երկին

⁴⁶ Ex. Fid. 20.76 + φύσει

⁴⁷ C երկին

⁴⁸ Սաղմ. ՃԱ 27 «նոքա անցանէն, եւ դու կաս եւ մնաս յաւիտեան... որպէս ձորնս մաշեցին. որպէս վերարկուս փոխեցես զնոսա եւ փոխեցին»:

⁴⁹ Յայտն. ԻԱ 1. «Եւ տեսի երկին նոր եւ երկիր նոր»:

⁵⁰ E չափովք

⁵¹ F եղիցին C լիցի

⁵² C երկին

⁵³ Սաղմ. ՂԵ 11. «Ուրախ եղիցին երկինք՝ եւ ցնծասցէ երկիր»:

⁵⁴ C չէք

⁵⁵ E F յետ

⁵⁶ Սաղմ. ՃԺԳ 3. «Ծով ետես եւ փախեաւ, եւ Յորդանան անդրէն դարձաւ»:

դարձար»⁵⁷: Եւ լերանց եւ բլրոց հարցեալ լինի պատճառք խայտալոյն: Եւ մեք սովոր եմք ասել, եթէ ժողովեցաւ ամենայն քաղաք, ոչ զշինուածն նշանակեմք, այլ զբնակիչսն ժողովեալ քաղաքին: Եւ «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ»⁵⁸ ոչ զգալի ականջացն լսելի⁵⁹ ձայնս արձակելով⁶⁰ այլ յիւրմէ մեծութենէն զգաւորօրին արարչին յանդիման կացուցանել⁶¹ մեզ, զորոյ զվայելչութիւն⁶² գիտելով, որպէս զարուեստապետ փառաւորեմք զարարիչն նորա:

⁵⁷ Սաղմ. ՃԺԳ 5. «Զի՞ է մեզ ծով, զո՞ տեսեր եւ փախեաւ, կամ դու Յորդանան զի՞ դարձար անդրէն»: | Ex. Fid. 20.89 *չիք* եւ Յորդանան զի՞ յետս դարձար // C + καὶ σοί, Ἰορδάνη, ὅτι ἀνεχώρησας εἰς τὰ ὀπίσω;

⁵⁸ Սաղմ. ԺԸ 2. «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ»:

⁵⁹ F լսել

⁶⁰ E ձայն արկանելով

⁶¹ C կացուցանէ

⁶² E վայելչութիւն

Ի. Վասն հրոյ, լուսոյ եւ լուսաւորացն ամենեցուն¹:

Հուր մի է ի շորից նիւթոցն² թերեւ եւ վերագնացս քան զնոսա, այրող եւ լուսաւորիչ, յառաջնումն յաւուր ստեղծեալ յարարչէն: Վասն զի ասէ աստուածային գիրք. «Եւ ասաց Աստուած եղիցի լոյս, եւ եղեւ լոյս»³: Եւ հուր այլ ոչ ինչ է, բայց⁴ միայն լոյս⁵: Արդ ի սկզբանն արար Աստուած զլոյս, այս ինքն՝ յառաջնումն ատուրն ի զարդ եւ ի գեղեցկութիւն տեսանելի արարածոց: Քանզի եթէ բարձցի լոյս, ամենեքին ի մթոյ մնան անիմանալի եւ ոչ կարեն ցուցանել զիրեանց վայելչութիւն: «Իսկ կոչեաց Աստուած զլոյսն տիւ եւ զիսաւարն կոչեաց գիշեր»⁶: Իսկ մութն ոչ գոյութիւն ինչ է, այլ պատահումն, զի պակասումն լուսոյ է, ստուեր աւոյոյ⁷, վասն զի աւոյ ոչ էութիւն իւր ունի զլոյս:

Զայն պակասել⁸ աւոյոյն ի լուսոյ իսաւար կոչեաց Աստուած, եւ ոչ եթէ աւոյոյ գոյութիւն է իսաւար, այլ պակասումն լուսոյ, որ զպատահումն առաւել քան զգոյութիւն ցուցանէ: Իսկ ոչ կոչեցաւ առաջին գիշեր այլ ար, վասն այսորիկ առաջին է ար եւ զկնի նորա⁹ գիշեր: Իսկ հետեւի գիշեր ատուր, եւ ի սկսմանէ ատուրն մինչեւ ցմիս արն մի ար եւ գիշեր է: Իսկ ասէ գիր. «Եղեւ երեկոյ, եւ եղեւ վաղորդեան, ար մի»¹⁰:

Եւ գերորդ¹¹ ատուրս սփումամբ եւ ժողովմամբ գոյական¹² լուսոյն աստուածային հրամանաւն տիւ եւ գիշեր լինէին, իսկ ի շորորդում ատուրն արար Աստուած զլուսաւորն մեծ, որ է արեգակն, յիշխանութիւն տուրնջեան¹³ (զի նովաւ հաստատի ար, վասն զի ար է, յորժամ արեգակն ի վերոյ կոյս

¹ Ex. Fid. 21.1-2 Περὶ φωτός, πυρός, φωστήρων ἡλίου τε καὶ ἡλίου τε καὶ σελήνης καὶ ἄστρον

² F նիւթոց

³ Ծննդ. Ա. 3 «Եւ ասաց Աստուած. եղիցի լոյս. եւ եղեւ լոյս»:

⁴ F ոչ իցէ

⁵ Ex. Fid. 21.7-8 + ὡς τινές φασιν, Ἴτεροι δὲ τὸ κοσμικὸν πῦρ ὑπὲρ τὸν ἀέρα φασίν, ὃ καλοῦσιν αἰθέρα // FIL om.

⁶ Ծննդ. Ա. 5:

⁷ Ex. Fid. 21.13 չիք ստուեր աւոյոյ

⁸ C ի պակասելն

⁹ C չիք

¹⁰ Ծննդ. Ա. 5:

¹¹ Ex. Fid. 21.21 ταῖς τρισὶν

¹² Ex. Fid. 21.21 չիք

¹³ Ծննդ. Ա. 5. «Եւ արար Աստուած... զլուսաւորն մեծ յիշխանութիւն տուրնջեան»:

երկրի շրջի, եւ ընդարձակութիւն ատուր է յարեւելից մինչեւ յարեւմուտս ի վեր¹⁴ կոյս երկրի գնացք արեգականն): Եւ լուսաւորն կրսեր¹⁵ եւ աստեղ¹⁶ յիշխանութիւն գիշերոյ¹⁷ լուսաւորել զնա: Իսկ¹⁸ գիշերի յորժամ արեգակն ի ներքոյ երկրի լինի, եւ ընդարձակութիւն գիշերոյ է յարեւմտից մինչեւ ցարեւելս ընդ երկրաւ ընթացք արեգականն: Եւ լուսին եւ աստեղ¹⁹ կարգեցան¹⁹ ի լուսաւորութիւն գիշերոյն²⁰, ոչ եթէ զցերեկ ամենեւիմբ ի ներքոյ երկրի են, զի²¹ ոչ երեւին²² (վասն զի աստեղ²³ եւ զցայգ²³ յերկինս են ի վերայ երկրի): Այլ արեգակն առ հասարակ զոսսա եւ զլուսին ահաւոր ճառագայթիւք իւր ծածկէ եւ ոչ տայ թոյլ երեւել:

Իսկ ի լուսաւորես յայտոսիկ զյառաջաստեղծեալ լոյսն եղ արարիչն, ոչ որպէս թէ ոչ ունելով այլ լոյս²⁴, այլ զի մի անպիտան մնացէ այն լոյս՝ սկիզբն գործոյ իւրոյ²⁵, զի լուսաւոր ոչ ինքն լոյս է, այլ անաւթ լուսոյ է:

Յայսցանէ լուսաւորացս²⁶ եւթն մոլորականս ասեն²⁷: Հակառակ գոլ շարժութեան երկնից ընթացք նոցա, եւ վասն այսորիկ մոլորականք անուանին: Վասն զի երկինք ասեն յարեւելից յարեւմուտս շարժի, իսկ մոլորականացն յարեւմտից յարեւելս, իսկ երկինք ընդ շարժութեան իւրում զկնի իւր տանի զնոսա²⁸, որպէս զփոյթ ընթաց ինչ: Իսկ եւթն մոլորականացն են

¹⁴ B C վերին

¹⁵ Ex. Fid. 21.27 + ἦτοι τὴν σελήνην

¹⁶ Ծննդ. Ա. 16. «Եւ արար Աստուած... զլուսաւորն մեծ յիշխանութիւն տուրնչեան, եւ զլուսաւորն փոքր յիշխանութիւն գիշերոյ, եւ զաստեղս»:

¹⁷ F գիշեր

¹⁸ C + ի

¹⁹ C կատարեցան

²⁰ C գիշերոյ

²¹ C եւ

²² Ex. Fid. 21.31 չիք զի ոչ երեւին

²³ C F զցայգ

²⁴ F չիք այլ լոյս

²⁵ Ex. Fid. 21.35 չիք սկիզբն գործոյ իւրոյ

²⁶ E F + եւ

²⁷ F եւ Ex. Fid. 21.37 + Καὶ λέγουσιν

²⁸ Ex. Fid. 21.41 τοὺς ἐπτα πλανήτας

անուանման²⁹ այսոփիկ՝ Արեգակն³⁰, Լուսին³¹, Զեւս³², Երմիս³³, Արիս³⁴, Ափրոդիտէ³⁵, Կրանոս³⁶: Իսկ եւն յիւրաքանչիւր գատիս երկնից մի յեալեանց մոլորականացն.

Եւ յառաջին գատին, այսինմն՝ ի վերինն, Կրանոս³⁷,

իսկ յերկրորդն՝ Դիա³⁸,

իսկ յերրորդն՝ Արեա³⁹,

Եւ ի չորրորդն՝ Արեգակն⁴⁰,

Եւ ի հինգերորդն՝ Ափրոդիտի⁴¹,

Եւ ի վեցերորդն՝ Երմի⁴²,

իսկ եւթներորդն՝ Լուսին⁴³:

Եւ ընթանան զընթացս անդադարս, զոր արարիչն սահմանեաց նոցա Եւ որպէս հիմնացոյց զնոսա, որպէս ասէ Դաւիթ. «զԼուսինն Եւ գաստեղս զոր դու հիմնացուցեր»⁴⁴: Վասն զի «հիմնեցուցեր» ասելովն⁴⁵ զհաստատութիւն Եւ զանփոփոխելութիւն, զոր յԱստուծոյ տուեալ է նոցա կարգ Եւ յաւրում: Վասն զի կարգեաց զնոսա ի ժամս Եւ ի նշանս Եւ յամս⁴⁶:

Վասն զի ի ձեռն արեգական շորս⁴⁷ փոփոխմունմն պատրաստին, յորոց առաջինն գարունն է: Զի ի նմա արար Աստուած զամենայն Եւ յայտնէ մինչեւ ցայսաւր ի նմա լեալ բուսումն ամենայն էիցս՝ դալարոց ծաղկանց Եւ

²⁹ 5879 անուանմ եմ

³⁰ B E F տողից վեր (B F կարմիրով) շամս

³¹ E F տողից վեր (B F կարմիրով) դամարտի B դամար

³² B E F տողից վեր (B F կարմիրով) մուշթարի

³³ B E F տողից վեր (B F կարմիրով) ափրիդի) ափրիդի

³⁴ B E F տողից վեր (B F կարմիրով) մառեխ

³⁵ B Ափրոդիտի | B E F տողից վեր (B F կարմիրով) զոմրա) զորրա

³⁶ B E F տողից վեր (F կարմիրով) զոմալի

³⁷ B E F ի լուս. (F կարմիրով) զոմալ C ի լուս. երեակ

³⁸ B E F ի լուս. (F կարմիրով մուշթար) մուշթարի C ի լուս. լուսնթագ

³⁹ E F ի լուս. (F կարմիրով) մարիխ B ի լուս. մառիխ C ի լուս. հրատ կամ արաւսա (?)

⁴⁰ B E F ի լուս. (F կարմիրով) իլիոս շամս C ի լուս. արեգակն

⁴¹ B E F ի լուս. (F կարմիրով զոմրա) զոմրա C ի լուս. լուսաբեր

⁴² B E F ի լուս. (F կարմիրով) ստորիդի C ի լուս. փայլածու

⁴³ B E F ի լուս. (F կարմիրով) սելինի դամար C ի լուս. լուսին

⁴⁴ C հիմնեցուցեր | Սաղմ. Ը 4. «զլուսին Եւ գաստեղս, զորս դու հաստատեցեր»:

⁴⁵ Ex. Fid. 21.54 + ἐστῆµανε

⁴⁶ Ծննդ. Ա. 14. «եղիցին ի նշանս, Եւ ի ժամանակս, Եւ յաւուրս, Եւ ի տարիս»:

⁴⁷ C շորս

արմտեաց եւ կենդանեաց⁴⁸, որ է դարձ հաւասարութեան⁴⁹ ատուրց, զի երկոտասան ժամ է ւարն եւ գիշեր նոյնչափ: Այս ի միջի գալոյ⁵⁰ արեգականն լինի, վասն զի բարիոք խառնեալ է անեցուցանող արեան, տաք⁵¹ եւ հիւք⁵² գոլով եւ անձամբ իւրով միջնորդ լեալ ձմերայնոյ եւ ամարայնոյ, քան զձմեռն ջերմագոյն⁵³ եւ քան զամառն հիւքագոյն⁵⁴ եւ ցուրտ: Եւ ընդարձակի ժամս այս ի քսան եւ միոյ մարտոյ, մինչեւ ցփսան եւ չորսն յունիսոյ: Եւ զկնի այսորիկ բարձրանալով արեգականն⁵⁵ յարեւելից կողմոյ⁵⁶ ի հիւսիս՝ ի խոյէն մինչեւ ցիւեցգետինն⁵⁷, փոխանորդ նորա լինի փոփոխումն ամարայնոյ, միջնորդ գոլով գարնայնոյ եւ աշնայնոյ, ի գարնայնոյ⁵⁸ զջերմութիւն ունելով, եւ յաշնայնոյ զցամաքութիւն: Վասն զի է տաք⁵⁹ եւ չոր եւ անեցուցանէ զդեղին մաղձ: Սա զատուրս մեծ ունի՝ ժամս ԺԵ., եւ գիշերս փոքունս՝ ժամս Թ.⁶⁰, եւ այս ընդարձակի ի քսան եւ չորից յունիսոյ մինչեւ ցփսան եւ հինգ սեպտեմբերի՝ ի խեցգետնոյ⁶¹ մինչեւ ցկշիռ⁶²: Եւ դարձեալ միջոցին յարեւելից կոյս դառնալով արեգականն⁶³, փոփոխումն աշնայնոյ փոխանորդի ամարայնոյ, զմիջոց իմն ունելով ցրտոյ եւ ջերմոյ, ցամաքոյ եւ զհիւքոյ⁶⁴, եւ միջնորդ գոլով ամարանոյ եւ ձմերայնոյ⁶⁵, յամարայնոյ ունելով զցամաքութիւն, եւ ի ձմերայնոյ՝ զցրտութիւն, վասն զի զով եւ ցամաք է եւ ունի անեցուցանել զսեւ մաղձն: Այլ եւս յատուրց հաւասարութեան շրջանակ է երկոտասան ժամեայ եւ զաւր եւ զգիշեր⁶⁶ ունելով, եւ ընդարձակի ի սեպտեմբերի քսան եւ հնգէն մինչեւ ցփսան

⁴⁸ Ex. Fid. 21.59 չիք եւ արմտեաց եւ կենդանեաց

⁴⁹ C չիք

⁵⁰ F չիք

⁵¹ B E Բողոքից վեր ջերմ

⁵² E F Բողոքից վեր գէջ B գէջ

⁵³ B E Բողոքից վեր ցամաք եւ չոր Ex. Fid. 21.63-64 και ξηροτέρα

⁵⁴ B E Բողոքից վեր գէջ

⁵⁵ C արեգակն

⁵⁶ B C F կողմ

⁵⁷ Ex. Fid. 21.66 չիք ի խոյէն մինչեւ ցիւեցգետինն

⁵⁸ C գարնանայնոյ... գարնանայնոյ

⁵⁹ E ջերմ Բողոքից վեր տաք B F Բողոքից վեր ջերմ

⁶⁰ Ex. Fid. 21.70 + διάστημα ἔχουσαν

⁶¹ E խեցգետն F խեծգետնոյ

⁶² Ex. Fid. 21.72 չիք ի խեցգետնոյ մինչեւ ցկշիռ

⁶³ C արեգակն

⁶⁴ B E Բողոքից վեր գիշոյ

⁶⁵ Ex. Fid. 21.73 + τροπή

⁶⁶ E գիշեր

և հինգ ղեկտեմբերի, ի կշռէն մինչեւ ցայծեղջիւրն⁶⁷: Եւ արեգականն⁶⁸ ի փոքր փոքր ի խոնարհ գնալով, յարեւելս ի հարաւ իջանելով, գայ հասանէ փոփոխումն ձմեռայնոյն, ցուրտ եւ գիշին ունելով զբնութիւն եւ միջնորդելով աշնայնոյ եւ գարնայնոյ, յաշնայնոյ զցրտութիւն ունելով, եւ ի գարնայնոյ՝ զգիշութիւն: Սա փոքր ունելով զաւուրս՝ իբրեւ զժամս Թ., եւ զգիշերս մեծ՝ իբրեւ զժամս ԺԵ.⁶⁹, եւ անեցուցանէ զփղեմմա⁷⁰, եւ ընդարձակի⁷¹ մինչեւ ցֆսանն⁷² մարտոյ, յայծեղջերէն մինչեւ ցիտոյ⁷³: Վասն զի⁷⁴ յառաջ սահմանեաց հրաման արարչին, զի մի առաւել ցրտութեամբն կամ ջերմութեամբն կամ գիշութեամբ կամ ցամաքութեամբն յաղթել, առաւել հակառակ գոլով յատկութեանց⁷⁵ ի խստագոյն անկցոյ հիւանդութիւնս: Վասն զի մոլորեալ կոչէ Բանն զյանկարծակի փոփոխմունսն⁷⁶:

Այս են փոփոխմունքն արեգականն, եւ ի ձեռն սոցա լինի ամ, եւ⁷⁷ ար եւ գիշեր, մինն ի վերոյ երկրի գոլով եւ միսն ընդ երկրաւ մտանելով, եւ զայլ լուսաւորսն՝ զԼուսին եւ զաստեղս լուսաւորս ինքնիշխանութեամբ յարդարէ:

Իսկ երկոտասան զաւրս⁷⁸ ասեն յաստեղացն⁷⁹ լինել յերկինս, որք հակառակ ընթացք ունին, արեգականն եւ լուսնին⁸⁰ եւ այլ⁸¹ մոլորակացն եւ ընդ երկոտասանքն ընդ այնոսիկ անցանեն եւթն մոլորականքն⁸²: Արդ արեգականն յիւրաքանչիւր զաւրս⁸³ կատարէ ամիս մի եւ յերկոտասան ամիսն շրջի ընդ երկոտասան կենդանակերպսն: Իսկ երկոտասան զաւրիցն եւ ամսոցն նոցա⁸⁴ են անուանք այսոքիկ.

⁶⁷ Ex. Fid. 21.79 չիք ի կշռէն մինչեւ ցայծեղջիւրն

⁶⁸ C արեգակն

⁶⁹ F ԺԴ ԺԴ

⁷⁰ B զպլլամ E F տողից վեր պլլամ

⁷¹ Ex. Fid. 21.85-86 + ἀπὸ κε' Δεκεμβρίου // CFG om.

⁷² Ex. Fid. 21.86 κα'

⁷³ Ex. Fid. 21.86 չիք յայծեղջերէն մինչեւ ցիտոյ

⁷⁴ Ex. Fid. 21.86 + Σοφῶς

⁷⁵ E խոնաւութեանցն

⁷⁶ F ուղղված է փոփոխմունքն

⁷⁷ E չիք

⁷⁸ Ex. Fid. 21.94 ζῶδια

⁷⁹ E F + ասեն

⁸⁰ F լուսին C լուսինն

⁸¹ Ex. Fid. 21.95 + πέντε

⁸² E մոլորակքն Ex. Fid. 21.96 չիք

⁸³ C աւրս

⁸⁴ C աւրիցն եւ ամսոցն չիք զաւրիցն եւ ամսոցն նոցա

Խոյն ի մարտի Իէ.⁸⁵ Ընդունի զարեգակնն, Յովն՝ յապրիլի ԻԳ., Երկատրեկն⁸⁶ ի մայիսի ԻԳ., Խեցգետինն՝ ի յունիսի ԻԳ., Առեւծն՝ ի յուլիսի ԻԵ., Կոյսն՝ յազոստոսի ԻԵ., Կշիռն՝ ի սեպտեմբերի ԻԵ., Կարինն՝ ի հոկտեմբեր ԻԵ., Աղեղնատրն՝ ի նոյեմբերի ԻԵ., Այծեղջերն՝ ի դեկտեմբերի ԻԵ., Ջրհոսն՝ ի յունուարի Ի., Ջուկն՝ ի փետրուարի Ի.:

Իսկ լուսինն յիւրաքանչիւր⁸⁷ ամիսս անցանէ ընդ երկոտասան կենդանակերպս, որպէս ի ներքին⁸⁸ գաւտին ելով⁸⁹ փութապէս անցանելով ընդ նոսա: Վասն զի իբրեւ զայն եթէ շինեսցես քաղաք ի միջի այլում քաղաքի⁹⁰, ի միջի այն քաղաքն փոքր գտանիցի, նոյնպէս եւ ընթացք լուսնին, որպէս զի ներքոյ է, փոքր է⁹¹ եւ փութով անցանէ:

Առդ հելլենացիք աստեղացս այսոցիկ եւ արեգական եւ լուսնի ծագման եւ մտանելոյ եւ պատահմանց եւ շրջագայութեան ասեմ գոլ զամենայն նախախնամութիւն եւ զտնտեսութիւն⁹² եւ զկենցաղս մեր, զի ի սակս սորա հպի արուեստ աստեղաբաշխութեան: Իսկ մեք ասեմք, եթէ նշանս⁹³ ի նոցանէ լինին անձրեւոց եւ երաշտութեան, ցրտութեան եւ տալթոյ, գիշութեան եւ ցամաքութեան, հողմոց եւ անդորրութեան⁹⁴ եւ այլ այդպիսեացդ, իսկ գործոց մերոց՝ եւ ոչ երբեք: Վասն զի մեք անձնիշխանք ստեղծեալք յարարչէն՝ ինքնատէր եմք գործոց մերոց: Վասն զի եթէ ի շարժմանէ աստղեաց առնեմք զամենայն ինչ, ապա ի հարկէ առնեմք զամենայն, զոր ինչ առնեմք: Իսկ⁹⁵ ի հարկէ գործեալ ինչ ոչ առաքինութիւն է եւ ոչ շարութիւն ունիմք, ոչ գովութեան եւ պսակաց եւ ոչ պարսաւանաց եւ տանջանաց արժանի լիցում: Եւ գտանի անիրաւ գոլ Աստուած ոմանց զբարիսն յառաքինութեան սակս եւ ոմանց զվիշտս ընդ շարութեան⁹⁶ տալով: Նաեւ ոչ զուղղել եւ ոչ զնախախնամութիւն

⁸⁵ E իե B քսան ու հինգն Ex. Fid. 21.100 κα'

⁸⁶ E երկատրն

⁸⁷ F յիւրաքանչ

⁸⁸ F ին քիս ի ներքին

⁸⁹ Ex. Fid. 21.113 չիք որպէս ի ներքին գաւտին ելով

⁹⁰ քաղաք ի միջի այլում քաղաքի // Ex. Fid. 21.113-14 πόλον ἔνδον ἄλλου πόλου

⁹¹ C չիք

⁹² եւ պատահմանց եւ շրջագայութեան ասեմ գոլ զամենայն նախախնամութիւն եւ զտնտեսութիւն // Ex. Fid. 21.118 καὶ συγκρούσεως φασὶ πάντα διοικεῖσθαι

⁹³ C չիք

⁹⁴ Ex. Fid. 21.121 չիք եւ անդորրութեան

⁹⁵ Ex. Fid. 21.125 + τὸ δὲ κατ' ἀνάγκην γινόμενον οὕτε ἀρετὴ οὕτε κακία ἐστίν. Εἰ δὲ

⁹⁶ Ex. Fid. 21.128 չիք յառաքինութեան սակս... ընդ շարութեանց

արարածոց իւրոց առնել ստիպէ⁹⁷, եթէ ի հարկէ յականայ յառաջ գան եւ լինին ամենայն: Եւ բանականութիւն եւս առ մեզ աւելորդ է, վասն զի ընդունայն խորհիմք զամենայն⁹⁸ եւ ոչ միոյ գործոյ տեսաք գոյով: Իսկ բանաւորութիւն առ մեզ յաղագս խորհրդոյ տուեալ է, վասն որոյ եւ ամենայն բանական ինքնիշխան գոյ:

Իսկ մեք ասեմք, եթէ եւ ոչ ումեք յարարածոցս են նոքա պատճառ՝ ոչ եղելութեան եղելոցս եւ ոչ ապականութեան ապականացուաց, այլ նշան միայն անձրեւոց եւ արոց փոփոխմանց: Միթէ ասիցէ ոք, թէ եւ պատերազմաց որոց ոչ պատճառ, այլ նշան միայն⁹⁹:

Իսկ լինին եւ¹⁰⁰ բազում անգամ եւ կոմիտք, որ են վարսաւոր աստեղք, առ ի նշան մահու թագաւորաց, որք ոչ են նախաստեղծ աստեղաց, այլ աստուածային հրամանաւ ի նմին ժամու երեւելի լինին եւ դարձեալ լուծանին, քանզի եւ տէրունական մարդասէր եւ կենդանարար վասն մեր¹⁰¹ մարմնաւոր ծնունդն մոգուցն երեւեալ աստղն ոչ ի սկիզբն աստեղծ աստեղացն էր: Եւ այս յայտ յայնմանէ, զի երբեմն յարեւելից յարեւմուտս, եւ երբեմն ի հարաւոյ ի հիւսիս, եւ ապա յարեւմտից յարեւելս¹⁰² գնալով եւ երբեմն թափչելով, եւ երբեմն ի փոքր տեղոյ վերակալով¹⁰³. վասն զի այս ոչ աստեղաց բնութեան եւ կարգի է:

Իսկ պարտ է գիտել, եթէ յարեգականէ լուսաւորի լուսինն, ոչ եթէ իբր զի անկար¹⁰⁴ էր Աստուծոյ տալ նմա առանձին զլուսաւորութիւն, այլ զի կարգ եւ դաս դիցէ¹⁰⁵ յարարածս¹⁰⁶ իշխան եւ ընդ իշխանութեամբ գոլոյ, եւ զի ուսցով եւ մեք հաղորդ լինել միմեանց եւ տուողս լինել իրերաց¹⁰⁷ եւ հնազանդս նախ

⁹⁷ Ex. Fid. 21.129 ὁ θεὸς ποιήσεται

⁹⁸ C զամենայնէ

⁹⁹ Ex. Fid. 21.136-139 + καὶ ἡ ποιότης δὲ τοῦ ἀέρος ποιομένου ἢ ὑπὸ ἡλίου καὶ σελήνης καὶ τῶν ἀστέρων ἄλλως καὶ ἄλλως διαφόρους κράσεις καὶ ἔξεις καὶ διαθέσεις συνίστησιν. Αἱ δὲ ἔξεις τῶν ἐφ' ἡμῖν. κρατοῦνται γὰρ τῷ λόγῳ καὶ ἄγονται τρεπόμεναι

¹⁰⁰ C չիք

¹⁰¹ C չիք վասն մեր

¹⁰² Ex. Fid. 21.146 չիք եւ ապա յարեւմտից յարեւելս

¹⁰³ ի փոքր տեղոյ վերակալով // Ex. Fid. 21.146-147 φαίνεσθαι

¹⁰⁴ F անկատար

¹⁰⁵ E կարգ դասիցէ

¹⁰⁶ F յարարածոց

¹⁰⁷ F երիւրաց

արարչին եւ թագաւորին մերոյ Աստուծոյ¹⁰⁸, եւ զկնի այսորիկ ի նմանէ կարգելոյ իշխանաց, եւ ոչ դատապարտութեամբ տրտնջել եւ ասել¹⁰⁹, եթէ ընդէ՞ր նա իշխէ¹¹⁰ եւ ոչ ես, այլ ընդունել զամենեսեան իբրեւ յԱստուծոյ կարգեալ իշխողս¹¹¹ գոհութեամբ եւ բարեմտութեամբ:

Իսկ խաւարին երբեմն արեգակն եւ լուսին առ ի յանդիմանութիւն անմտութեան այնոցիկ, որք երկիր պագանեն արարածոցս փոխանակ արարչին¹¹² եւ ուսուցանեն, եթէ փոփոխելիք են եւ այլայլելիք: Իսկ ամենայն փոփոխելի աստուած ոչ է, զի բնութեամբ իւրով ապականելի է ամենայն փոփոխելի:

Եւ խաւարի արեգակնն, յորժամ սեռ լուսնին իբրեւ զմիջնորմ լինի ինչ՝ առաջի ընդդէմ կալով եւ¹¹³ հովանի եւ ստուեր առնելով եւ ոչ թողու իջանել առ մեզ լուսոյն: Եւ որչափ գտանի սփեռ¹¹⁴ լուսնին ծածկող արեգականն, այնչափ խաւարի: Իսկ եթէ փոքր է սեռ լուսնին եւ անձն քան զարեգակնն¹¹⁵, մի սփանչացիս: Զի զարեգակն ոմանք բազում մասամբք մեծ քան զաշխարհ ասացին գոյ, իսկ հարքն մեր հաւասար երկրի ասացին: Բազում անգամ¹¹⁶ եւ փոքր մի ամպ ծածկէ զնա եւ բլուր ինչ եւ պարիսպ:

Իսկ խաւարումն լուսնին ի ստուերէ երկրի լինի, յորժամ լինի լուսնն ատուս հնգետասան եւ գտանի հակառակ նորա¹¹⁷ միոյ կողման խայթոցք ստուերաց երկրի¹¹⁸, զի արեգակն ի ներոյ երկրի եւ լուսնին ի վերայ երկրի կշռեցան միմեանց¹¹⁹, եւ ստուերս արարեալ երկիր ընդդէմ¹²⁰, եւ ոչ կարացին հասանել լոյս արեգականն լուսաւորել զլուսնին, եւ յայնմանէ խաւարի լուսինն:

¹⁰⁸ Ex. Fid. 21.152 + καὶ δεσπότη

¹⁰⁹ դատապարտութեամբ տրտնջել եւ ասել // Ex. Fid. 21.153 ἀνακρίνειν

¹¹⁰ Ex. Fid. 21.153 ἄρχει // B C իշխան է

¹¹¹ Ex. Fid. 21.154 չիք կարգեալ իշխողս

¹¹² Հռոմ. Ա. 25. «որք... պաշտեցին զարարածս, եւ ո՛չ զԱրարիչն»:

¹¹³ Ex. Fid. 21.160 չիք առաջի ընդդէմ կալով եւ

¹¹⁴ Ex. Fid. 21.161 τὸ σῶμα

¹¹⁵ Ex. Fid. 21.163 չիք եւ անձն քան զարեգակնն

¹¹⁶ Ex. Fid. 21.164 πολλακίς // B C բազում

¹¹⁷ C չիք

¹¹⁸ Ex. Fid. 21.168 չիք ստուերաց երկրի

¹¹⁹ Ex. Fid. 21.168 չիք կշռեցան միմեանց

¹²⁰ Ex. Fid. 21.169 չիք

Իսկ պարտ է գիտել, եթե կատարեալ ստեղծեցաւ լուսինն յարաշէն, այսինքն իբրեւ զհնգետասանաւոր, զի կատարեալ վայել էր յառաջ կացուցանել: Եւ ի չորրորդում ատուրն շինեալ եղեւ եւ էացաւ, որպէս եւ գրեալ է¹²¹: Եւ յառաջեաց քան զարեգակնն մետասան ատուրք, վասն զի չորրորդում արէն մինչեւ ցննգետասանն մետասան ատուրք: Վասն այսորիկ ամի ամի երկոտասան ամիս լուսնին մետասան ատուրս պակասեն¹²² քան զերկոտասան ամիս արեգական, որ ունի երեք հարիւր վաթսուն եւ հինգ ար եւ ժամս երիս: Վասն որոյ միատրելով չորից երրորդացն¹²³ ի չորրորդում ամին, ար մի կատարի, որ կոչի նահանջ. եւ լինի ամն այն¹²⁴ ատուրս երեք հարիւր վաթսուն եւ վեց: Իսկ ամ լուսնին ժողովի յաւուրց երեք հարիւր եւ յիսուն եւ չորից, վասն զի լուսին յորմէ հետէ ծնանի¹²⁵, անէ մինչ ցատուրս չորեքտասան եւ կէս եւ մի ի չորից մասանց, եւ սկսանի պակասել, մինչեւ ցատուրս քսան¹²⁶ եւ ինն եւ կէս, եւ ամենեւիմբ անլոյս լինի: Եւ դարձեալ մերձմամբ արեգականն¹²⁷ ծնանի եւ նորոգի, բերելով գլիշատակ մերոյ յարութեանն: Որով եւ յիւրաքանչիւր ամի տայ արեգակն ատուրս մետասան, որ եւ յերրորդ¹²⁸ ամին որ երբայեցոց եմովիզմոս անուանեալն լինի ամ¹²⁹, ունելով ամիսս լուսնի երեքտասան եւ ատուրս երեք եւ կէս¹³⁰ յաւելմամբ մետասան ատուրցն:

Իսկ յայտնի է, զի խառնեալք ի մասանց են արեգակն եւ լուսին եւ աստեղք եւ ըստ ինքեանց բնութեանն¹³¹ ապականութեան պարտական են, այլ զբնութիւն նոցա ոչ ոք գիտէ¹³²: Վասն զի ոմանք ասացին, եթէ հոս աներեւոյթ է առանց ամենայն նիւթոյ ելով, վասն որոյ մինչ շիջանի, անյայտ լինի: Իսկ ոմանք ի շիջեալ հոյ աւղ եղեալ ասեն զփոփոխումն նորա:

Իսկ կենդանակերպից բոլորումն գաւտի թիւրաշարժ գոլով, բաժանեալ ի մասունս երկոտասան, որք անուանին զոտ, այսինքն՝ կենդանիք: Եւ իւրա-

¹²¹ Ex. Fid. 21.173 + ó ἥλιος // b om.

¹²² F պակասին

¹²³ Ex. Fid. 21.176 τοῦ τετάρτου

¹²⁴ C ամենայն չիս ամն այն

¹²⁵ Ex. Fid. 21.170 + ἡγοῦν ἀνακαινισθῆ

¹²⁶ C քսան չիս ցատուրս քսան

¹²⁷ C F արեգակն

¹²⁸ Ex. Fid. 21.185 τρεῖς

¹²⁹ Ex. Fid. 21.185 μὴν

¹³⁰ Ex. Fid. 21.186 չիք եւ ատուրս երեք եւ կէս

¹³¹ Ex. Fid. 21.188 κατὰ τὴν ἰδίαν φύσιν // C E F ըստ ինքեանց բնութեամբ

¹³² F չիք այլ զբնութիւն նոցա ոչ ոք գիտէ Ex. Fid. 21.188 ἵσμεν

բանչիր զոտս ունին տանարս գաւթապետս¹³³ երիս եւ մասունս երեսունս, եւ իւրաբանչիր մասն ունի հատորս վաթսուն, որ¹³⁴ ունի երկինք մասունք երեք հարիւր եւ վաթսուն, ի վերոյ երկրի կէս սփեռի մասունս հարիւր եւ ութսուն¹³⁵:

Իսկ տունք մոլորակացն են այսք՝ Խոյն եւ Կարինն Արէսի են¹³⁶, Յուլ եւ Կշեռն՝ Ափրոդիտէ, Երկատրեկն եւ Կոյսն՝ Երմիսոյ, Խէցգետինն՝ լուսնի, Առեւծն՝ արեգական, Աղեղնատրն եւ Ջուկն՝ Դիայի, Այծեղջիրն եւ չրհոսն՝ Կրոնոսի: Իսկ բարձրութիւն արեգականն Խոյն, եւ լուսնին¹³⁷ Յուլն, Դիոսին՝ Խէցգետինն, Արէոսի¹³⁸ Կոյսն, Կրոնոսի՝ Կշեռն, Երմիսի¹³⁹ Այծեղջիրն, Ափրոդիտոսի՝ Ջուկն:

Տեսակք¹⁴⁰ լուսնի. ժողովումն, յորժամ լինի լուսինն¹⁴¹ ի մասինն, յորում արեգակն¹⁴² է. ծնունդ լինի նմա¹⁴³, եւ յորժամ հեռանայ մասունս վաթսուն: Երկահատս երեւի երկրորդ անգամ, եւ յորժամ հեռացի մասունս իննսուն: Լնուլ սկսանի յերկոցունց երկրորդ անգամ, եւ յորժամ մեկնեսցի մասունս հարիւր եւ քսան: Լիալուսին եւ լիալոյս լինի երկրորդ անգամ, եւ յորժամ մեկնի մասունս հարիւր յիսուն: Լի է երկրորդ անգամ եւ ամենեւիմք լոյս է լուսին¹⁴⁴, մինչ մեկնի մասամբք հարիւր եւ ութսուն: Իսկ երկրորդ անգամ, զոր ասացաք մին անմանն եւ միւսն պակասութեանն: Եւ յատուս երկուս եւ կէս անցանէ լուսինն¹⁴⁵ մի զոտ եւ զարեգակնն զերեսուն ատուս¹⁴⁶:

¹³³ E գաւթապետս *տողից վեր* տանարս B գաւթապետս *ի լուս.* տանար *հմմտ.* Ex. Fid. 21.193 δεκανός

¹³⁴ E + եւ

¹³⁵ Ex. Fid. 21.195 + καὶ τὸ ὑπὸ γῆν ρπ´

¹³⁶ C Արէսինն

¹³⁷ C F լուսին

¹³⁸ Ex. Fid. 21.200 Ἑρμῶς

¹³⁹ Ex. Fid. 21.200 Ἄρεως

¹⁴⁰ B F *ի լուս.* ծնունդ՝ ա, իթ, մանգաղ՝ գ, իե, երկահատ՝ ի, իե (B ի իսէ), լնուլ յերկուց՝ ք, իք, լի լոյս՝ ժ, ի, լի՝ ժք, ժք, ամենեւիմք՝ ժդ, ժզ

¹⁴¹ Ex. Fid. 21.201 *չիք*

¹⁴² C + մանգաղ

¹⁴³ ծնունդ լինի նմա, եւ // Ex. Fid. 21.202-203 †γέννα, ὅταν ἀποστῇ τοῦ ἡλίου μοίρας ιε´, ἀνατολή, ὅτε φανῇ, † μνηοειδεῖς δύο.

¹⁴⁴ Հուսն. *չիք* երկրորդ անգամ եւ ամենեւիմք լոյս է լուսին

¹⁴⁵ E + ընդ

¹⁴⁶ Ex. Fid. 21.207 *չիք* եւ զարեգակնն զերեսուն ատուս

ԻԱ. Վասն ատոյ եւ հողմոյ¹:

Ատ մի է ի շորից տարերաց². եւ³ է ատ մանր⁴ նիւթ, զով եւ հիւթ⁵, քան զհոր ծանրագոյն, եւ քան զշոր⁶ թեթեւագոյն⁷, շնչոյ եւ ձայնի պատճառ, անգոյն⁸, այսինքն՝ ի բնութենէ ոչ ստացեալ գոյն, երկատեսակ⁹, երկաներգործութիւն¹⁰ գոլով¹¹, վասն զի լուսոյ է ընդունող եւ խաւարի, սպասաւոր երից զգայարանաց մերոց, զի նովաւ տեսանեմք եւ լսեմք եւ հոտոտեմք, ընդունող գոլով տաւրոյ եւ ցրտոյ, ցամաքոյ եւ գիշոյ, որոյ են ի տեղութի ի տեղի շարժմունք՝ ի վեր, ի վայր, յարտաքոյ, ի ներքոյ, յաջ եւ յահեակ եւ բոլորագեղ¹² շարժմունս: Ի ներքս յինքն ոչ ունելով զլոյս¹³, այլ յարեգակնէն եւ ի լուսնէ եւ յաստեղաց եւ ի հրոյ լուսաւոր գոլով: Եւ սա¹⁴ է, վասն որոյ ասէ գիր, եթէ «Խաւար էր ի վերայ անդնդոց»¹⁵, կամելով ցուցանել, եթէ ոչ յինքն ունի ատ զլոյս, այլ այլ իմն է գոյութիւն լուսոյ:

Իսկ հողմ շարժումն է ատոյ, եւ տեղիք ատոյ ոչ ասի¹⁶, վասն զի տեղիք իւրաքանչիւր անձին շրջափակաւ կոչի, եւ ո՛չ այլ ինչ պատեալ ունի զամենեցուն անձինս, բայց միայն ատ: Իսկ են տեղիք այլ եւ այլ տեսակս, ուստի լինին շարժումն ատոց, յորոց ունին հողմունք զանուանադրութիւնս: Եւ ամենեւեան նոքա են երկոտասանք: Այլ ասացին ոմանք զատոյ, եթէ շիջեալ հուր է կամ գոլորշի ջեռեալ ջրոյ: Եւ է ատ ըստ բնութեանն իւրում ջերմ, իսկ զովանայ շարախառնութեամբ ջրոյ եւ դրակցութեամբ հողոյ, մին զի ներքին կողմ նորա զով, իսկ վերինքն¹⁷ ջերմունք:

¹ Ex. Fid. 22.1 Περί ἀέρος καὶ ἀνέμων

² E անդամ F տարերց

³ Ex. Fid. 22.2 չիք Ատ մի է ի շորից տարերց. եւ

⁴ E F մանր

⁵ զով եւ հիւթ // Ex. Fid. 22.2 ὕγρὸν τε καὶ θερμόν

⁶ Ex. Fid. 22.3 τῆς δὲ γῆς καὶ τῶν ὑδάτων

⁷ E չիք եւ քան զշոր թեթեւագոյն

⁸ Ex. Fid. 22.4 ἀχρωμάτιστον // B չիք

⁹ E երկրորդ տեսակ

¹⁰ E երկրորդ ներգործութիւն

¹¹ երկաներգործութիւն գոլով // Ex. Fid. 22.5 διαφανές

¹² E + է

¹³ E զայս

¹⁴ C այս B ասէ

¹⁵ Ծննդ. Ա. 2. «Խաւար՝ ի վերայ անդնդոց»:

¹⁶ ոչ ասի // Ex. Fid. 22.13 ἐστὶ

¹⁷ E վերջինքն

¹⁸ Հողմ է բազմութիւն ջերմութեան եւ ցամաքոյ եւ գոլորշոյ եւ հիւթոյ¹⁹, շարժութիւն ի վերայ երկրի²⁰: Իսկ հնչեն հողմունք այսոքիկ յարեւելից կողմանէ ամարայնի Կեկիա²¹, եւ յարեւելից ի հաւասարութիւն ատուրց Ապիլիոտի, յարեւելից ձմեռնային Եվոսի, եւ յարեւմտից ձմեռնային Լիփսի, յարեւմտից ատուրցն²² հաւասարութեան Զեփիրոսի, յարեւմտից գարնայնոյ Արգեստի²³, որ է Ողոմպիայ, եւ Յապիփսի եւ Էրդաստի: Եւ ապա Նոտոս եւ Ապարկտիա միմեանց հակառակ հնչեն եւ այսպիսի միջոյ Ապարկտիային եւ Կեկիոյին Վորէաս հնչէ: Իսկ Եվոսին²⁴ եւ Նոտոսին միջոցն Փինիփս²⁵ հնչէ, որ Եւրոնոտոս կոչի²⁶, իսկ միջոց Նոտոսին եւ Լիվային Լիվոնոտոս եւ Լեկոնոտոս կոչի, իսկ միջոց Ապարկտիոսի եւ Արգեստոսի Թրասկեա²⁷ կոչի, որ կոչի Կիրկիոտ ի պարսից²⁸:

Իսկ են ամենեքեան երկոտասան, որոց շրջագրութիւն այս ինչ էր, որ գրեցաւ²⁹:

¹⁸ Նոր գլուխ՝ Ex. Fid. 22b.1-2 Περί ανέμων. Ἀνεμός ἐστι πλῆθος...

¹⁹ ցամաքոյ եւ գոլորշոյ եւ հիւթոյ // Ex. Fid. 22b.2 ξηρὰς ἀναθυμιάσεως κινούμενον

²⁰ F չիք վերինին ջերմունք: Հողմ է բազմութիւն ջերմութեան եւ ցամաքոյ եւ գոլորշոյ եւ հիւթոյ, շարժութիւն ի վերայ երկրի

²¹ Ex. Fid. 22b.3 + μέσης

²² C չիք

²³ F Արեստի

²⁴ F վոսսին

²⁵ C Փինիփ

²⁶ C որոյ եւ վերոյ Նաւոտոս չիք որ Եւրոնոտոս կոչի

²⁷ F քրակսեա

²⁸ Ex. Fid. 22b.9 τῶν περιόικων

²⁹ այս ինչ էր, որ գրեցաւ // Ex. Fid. 22b.10-14 ἐστὶν αὖτε· Ἀνατολὴ θερινή, ἀνατολὴ ἱσημερινή, ἀνατολὴ χειμερινή - καικίας, ἀπηλιώτης, εὖρος, μέσης, εὐρόνοτος, βορέας, Φοῖνιξ - ἄρκτος ἀπαρκτίας, νότος - μεσημβρία - θρασκίας, λιβόνοτος, μέσης, λευκόνοτος, κέρκιο, λίψ - δύσις θερινή - ἀργέστης - δύσις χειμερινή - Ἰάπυξ, Ὀλυμπίας - δύσις θερινή - ἐργάστης, ζέφυρας

ԻԲ. Վասն ջուրց¹:

Ջուր մի է ի չորից անդամոցն, բարի ստեղծուած Աստուծոյ: Ջուր է նիւթ գիջային եւ զով, ծանր է եւ ներհնաբար է ղիւրահեղլի: Ջուր յիշէ աստուածային գիր ասելով. «Եւ խաւար ի վերայ անդնդոց, եւ Հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց»²: Զի անդունդք ոչ այլ ինչ է, բայց միայն բազմութիւն ջուրց, որոյ կատարած³ անհասանելի գոլ ի մարդկանէ: Արդ ի սկզբանէ ջուրք սփռեալ էին ընդ ամենայն երեսս երկրի: Եւ նախ ետես⁴ Աստուած զհաստատութիւն, որ բաժանեաց ի մէջ ջրոյն որ ի վերոյ հաստատութեանն, եւ ի մէջ ջրոյն, որ ի ներոյ հաստատութեանն, վասն զի ի մէջ խորութեան ջրոցն հաստատեաց զնա⁵ տէրունական⁶ հրամանաւն: Վասն որոյ հաստատութեան էանալ հրամայեաց Աստուած եւ եղեւ: Իսկ ընդէ՛ր ի վերոյ հաստատութեանն ջուրս հիմնացոյց Աստուած⁷: Այսինքն՝ վասն արեգականն եւ երեւին կիզական ջերմութեանն, վասն զի մերձ զկնի հաստատութեանն երբեք սփռեալ է: Եւ արեգակն ընդ լուսնի եւ աստեղաց ի հաստատութիւն եղեալ են: Եւ եթէ ոչ եղեալ էին ջուրք ի վերոյ կողման նորա, կիզէր հաստատութիւն ի ջերմութենէ նոցա:

Յետ այսորիկ հրամայեաց Աստուած ջուրց ժողովել «ի ժողով մի»⁸, իսկ «Մի ժողով» ասելն ոչ յայտնէ ի մի տեղոջ ժողովել զնոսա, վասն զի անասիկ զկնի նորա ասէ. «Եւ զժողովս ջուրց կոչեաց ծովս»⁹, այլ ուրոյն յերկրէ միանգամայն զժողովումն ջուրց երեւեցոյց բանն: «Ժողովեցան ջուրք ի ժողովս իւրեանց, եւ երեւեցաւ ցամաք»¹⁰: Յայսցանէ երկրորդ ծովս¹¹, որք շրջապատին զԵգիպտոսիւ (զի ի մէջ երկուց ծովուց ենթակայի Եգիպտոս¹²) եղեն,

¹ Ex. Fid. 23.1 Περί ύδάτων

² Ծննդ. Ա. 2. «Եւ խաւար ի վերայ անդնդոց. եւ հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց»:

³ F կատած

⁴ Ex. Fid. 23.8 ἐποίησεν

⁵ հաստատեաց զնա // Ex. Fid. 23.10 ἐστερεώθη

⁶ F գտէրունական *ի/ս* զնա տէրունական

⁷ C հիմնեցոյց

⁸ Ծննդ. Ա. 9. «ի ժողով մի»:

⁹ Ծննդ. Ա. 10. «Եւ զժողովս ջուրցն կոչեաց ծովս»:

¹⁰ Ծննդ. Ա. 9. «Ժողովեցան ջուրքն, որ ի ներոյ երկնից ի ժողովս իւրեանց. եւ երեւեցաւ ցամաք»:

¹¹ Ex. Fid. 23.22 αἱ δύο θάλασσαι

¹² Ex. Fid. 23.23 *չիք*

եւ իւրաքանչիւր տեսակէ անդնդոց¹³, ծովու եւ կղզեաց, լեռանց եւ բլրոց եւ դաշտից¹⁴ եւ նաւահանգստաց¹⁵, եւ բազմատեսակ անասունս ի ծոցս շրջափակողս ծովեզերց, աւազոց եւ վիմաձաւնաց¹⁶: Վասն զի ծովեզր կոչի որ աւազուտ եւ դիր եւ ոչ առժամայն խոր գոլով¹⁷, իսկ ակրա կոչի վիմացանցից¹⁸ որք առժամայն յեզրն ընդ վիմաւ խոր եւ անդունդք գոլով¹⁹: Նոյնպէս եւ արեւելեանն²⁰ ծով, որ Հնդկիս անուանի, եւ հիւսիսոյն, զոր կոչեն Կասպիա: Իսկ եւ ծովակէ ի սոցանէ ժողովեցան:

Է եւ ավկիանոս²¹ իբրեւ զգետ ինչ շրջապատող ամենայն երկրի, վասն որոյ ասէր, որպէս եւ կարծեմ, աստուածային գիր, եթէ «գետ ելանէր ի դրախտէն քաղցր եւ ըմպելի ունելով²² զջուր»²³: Սա պարզեւ զջուրս ծովուց, որք մինչ²⁴ յամեն ի ծովս եւ կան անշարժս, դառն եւ աղիս²⁵ լինին, արեգական եւ սիֆոնոյ միշտ ծծելով զմանրն եւ զփաղցրն²⁶ ի նոցանէ, յորմէ եւ ամպք նիւթաւորին եւ անձրեւս լինին ի ձեռն քամելոյ եւ քաղցրացուցանելոյ²⁷ ջուրց, յորոց գետս եւ աղբիւրս եւ հեղեղս զկնութիւն, զդառնութիւն, զաղութիւն յերկրէ միշտ ի ծով բարդելով²⁸:

Այսոքիկ ի չորս առաջս²⁹, այսինքն՝ ի չորս գետս բաժանին: «Անուն միոյն Փիսոն»³⁰, որ եւ Գանգիս անուանի ի հնդկաց: «Եւ անուն միւսոյն³¹ Գե-

¹³ Ex. Fid. 23.24 չիք

¹⁴ եւ բլրոց եւ դաշտից // Ex. Fid. 23.24 καὶ ἀγκῶνας

¹⁵ Ex. Fid. 23.25 + ἔχουσαι

¹⁶ B C վիմաձաւնաց | աւազաց եւ վիմաձաւնաց // Ex. Fid. 23.26 καὶ ἀκτάς

¹⁷ Ex. Fid. 23.26 չիք եւ դիր եւ ոչ առ ժամայն խոր գոլով

¹⁸ C վիմաձաւնածից B վիմաձաւնծից

¹⁹ որք առժամայն յեզրն ընդ վիմաւ խոր եւ անդունդք գոլով // Ex. Fid. 23.27 ἀρχιβαθὺς ἦτοι ἡ εὐθέως ἐν τῇ ἀρχῇ βάθος ἔχουσαι

²⁰ F արեւեանն

²¹ B E F Ուկիանոս

²² E ունել

²³ Ծննդ. Բ 10. «Եւ գէտ ելանէր յեղեմայ ոռոգանել զդրախտն. եւ անտի բաժանի ի չորս առաջս»:

²⁴ C միշտ

²⁵ E դառնաղիս

²⁶ Ex. Fid. 23.34 չիք եւ զփաղցրն

²⁷ B քաղցնելոյ Ex. Fid. 23.36 γλυκαινομένου

²⁸ Ex. Fid. 23.36 չիք յորոց գետս եւ աղբիւրս եւ հեղեղս զկնութիւն, զդառնութիւն, զաւտութիւն յերկրէ միշտ ի ծով բարդելով

²⁹ Ծննդ. Բ 10. «անտի բաժանի ի չորս առաջս»:

³⁰ E F Փիսոն | Ծննդ. Բ 11. «Անուն միումն Փիսովն»:

³¹ E միոյն

հովն»³². այս է որ յեթովպիայ իջանէ³³ եւ գայ յեգիպտոս, գոր կոչեն Նիլոս³⁴: Եւ անուն երրորդին՝ Տիգրիս³⁵, եւ չորրորդին՝ Եփրատէս³⁶: Են եւ այլ բազում եւ մեծամեծ գետս, յորոց ոմանք ի ծովակս հեղուն, իսկ ոմանք յերկրի ցնդին: Նաեւ ամենայն երկիր փողս եւ խոխոջանս իբրեւ զերակս ունելով, ի ձեռն որոց ի ծովէ փաշելով զջուրս ի վեր բղխին³⁷ զաղբիւրս: Եւ ըստ իմնութեան եւ բնութեան հողոյն լինիցին ջուրք աղբերացն: Վասն զի մինչ ֆամի եւ անասունայ ի ձեռն հողոյ ջուր ծովու եւ այնպէս փացրանայ: Իսկ եթէ տեղիք, յորմէ աղբիւրք բխեն, դառն լիցի կամ աղի, ըստ երկրի եւ³⁸ բխեն ջուրք: Իսկ մինչ նեղին ջուրք եւ բոնութեամբ վերագնացս լինին, ջերմանան, ի բոնութենէն ի սոցանէ ջերմկաց ջուրս³⁹: Արդ աստուածային հրամանաւ գոլքս եւ վիհս եղեն յերկրի, եւ այսպէս ի ժողովս իւրեանց ժողովեցան ջուրք. ի սոցանէ եղեն լերինք:

Եւ նախ ջուրց⁴⁰ հրամայեաց Աստուած հանել զշունչ կենդանի, վասն զի հանդերձեալ էր ի ձեռն ջրոյ եւ ի սկզբանէ ի վերայ ջուրց⁴¹ շրջելով Սուրբ Հոգւոյն նորոգել զմարդիկ, որպէս ասէ աստուածային Վասիլիոս⁴²: Եւ եհան ջուր զկենդանիս, գտունկս, զբոյսս եւ⁴³ զմեծամեծ գազանս⁴⁴ եւ զվիշապս եւ զծկունս, որ շրջին ընդ ծովս, եւ զթռչունս թռատուրս: Վասն զի ի ձեռն թռչնոց միատուրեցան ծով եւ ցամաք եւ աւդ, վասն զի ի ջրոց եղեն նոքա⁴⁵ եւ յերկիր շրջելով կան եւ ընդ աւդս թռչին: Եւ արդ բարի նիւթ գոլով ջուր եւ ի պէտս

³² E F Գէհոն

³³ Ծննդ. Բ 13. «Եւ անուն գետոյն երկրորդի Գեհովն. նա պատէ զամենայն երկիրն եթովպացոց»:

³⁴ B Նիլալ

³⁵ Ծննդ. Բ 14. «Եւ գետն երրորդ՝ Տիգրիս»:

³⁶ Ծննդ. Բ 14. «Եւ գետն չորրորդ եփրատէս»:

³⁷ E F բխելով

³⁸ C չէք

³⁹ ի բոնութենէն ի սոցանէ ջերմկաց ջուրս // Ex. Fid. 23.49 κάντεϋθεν τὰ αὐτοφυσὴ θερμὰ ἀνάγονται ὕδατα

⁴⁰ C ջրոց

⁴¹ C ջրոց

⁴² C Ֆասիլիոս Bas. Hex. 390-476

⁴³ Ex. Fid. 23.55 չէք գտունկս, զբոյսս եւ

⁴⁴ Ex. Fid. 23.55 + κήτη.

⁴⁵ C չէք

բազումս եւ սրբիչ է ամենայն բիծի⁴⁶, ոչ միայն մարմնատրի, այլեւ հոգեւորաց, եթէ ընդունի զշնորհս Հոգւոյն⁴⁷:

⁴⁶ C բբծի B բծի

⁴⁷ Ex. Fid. 23b.1-15 (HKLMN) + Περί πελαγῶν. Διαδέχεται τὸ Αἰγαῖον πέλαγος Ἑλλήσποντος λήγον εἰς Ἄβυδον καὶ Σηστόν· εἶτα ἡ Προποντὶς λήγουσα εἰς Χαλκηδόνα καὶ Βυζάντιον· ἔνθα τὰ στενά, ἀφ' ὧν ὁ Πόντος ἄρχεται· εἶτα ἡ Μαιῶτις λίμνη. Πάλιν δὲ ἀπ' ἀρχῆς Εὐρώπης καὶ Λιβύης Ἰβηρικὸν τὸ ἀπὸ Στηλῶν εἰς Πυρήνην τὸ ὄρος· Λιγυστικὸν δὲ τὸ ἕως τῶν τῆς Τυρρηνίας περάτων· Σαρδώνιον δὲ τὸ ὑπὲρ τὴν Σαρδῶν νεῦον πρὸς τὴν Λιβύην κάτω· Τυρρηνικὸν δὲ τὸ μέχρι Σικελίας λήγον, ἀρχόμενον ἀπὸ Λιγυστικῆς ἄκρων· εἶτα Λιβυκόν· εἶτα Κρητικὸν καὶ Σικελικὸν καὶ Ἰώνιον καὶ Ἄδριον, τὸ δὲ ἀνακεχυμένον ἐκ τοῦ Σικελικοῦ πελάγους, ὃν καλοῦσιν Κορινθιακὸν κόλπον ἥτοι Ἀλκυονίδα θάλασσαν. Τῷ δὲ Σουνίῳ καὶ Σκυλλαίῳ περιεχόμενον πέλαγος Σαρωνικόν· εἶτα Μυρτώον καὶ Ἰκάριον, ἐν ᾧ αἱ Κυκλάδες· εἶτα Καρπάθιον καὶ Παμφύλιον. καὶ Αἰγύπτιον. Ὑπὲρ δὲ τὸ Ἰκάριον ἐξῆς ἀναχεῖται τὸ Αἰγαῖον. Ἔστι δὲ ὁ τῆς Εὐρώπης παράπλους ἀπὸ Τανάιδος ποταμοῦ ἐκβολῶν ἕως Ἡρακλέους στηλῶν στάδια ζ', θψθ'· τῆς δὲ Λιβύης ἀπὸ Τίγας ἕως στόματος Κανωβικοῦ στάδια β', θσνβ', τῆς δὲ Ἀσίας ἀπὸ Κανώβου ἕως Τανάιδος ποταμοῦ μετὰ τῶν κόλπων ὁ παράπλους στάδια δ, ρια'. Ὁμοῦ παράλιος σὺν κόλποις τῆς καθ' ἡμᾶς οἰκουμένης στάδια ιγ', θοβ'.

ԻԳ. Վասն երկրի եւ որք ի նմայն է¹:

Երկիր մի է ի շորից նիւթոցն ցամաքային եւ ցուրտ, ծանր եւ անշարժ, յոչ գոյից ի գոյութիւն ածեալ յառաջնումն աւուր յԱստուծոյ: Վասն զի ասէ. «Ի սկզբանէ արար Աստուած զերկինս եւ զերկիր»²: Զորոյ հաստատութիւն եւ զխստութիւն ոչ ոք ի մարդկանէ պատմել կարող է, վասն զի ոմանք ի վերայ ջուրց ասացին հաստատեալ զնա, որպէս ասէ Դաւիթ, եթէ «հաստատեաց զերկիր ի վերայ ջուրց»³: Իսկ այլք ի վերայ աւոյտ ասեն, իսկ այլ ոմն՝ «որ հիմնեցոյց զերկիր յոչընչոյ վերայ»⁴: Եւ դարձեալ աստուածայինն Դաւիթ՝ իբրեւ ի բերանոյ արարչին ասէ. «Ես հաստատեցի զսիւնս նորա»⁵, որ զհաստատող զաւրութիւն նորա⁶ սիւնս կոչէ: Իսկ ի վերայ ծովու զհիմնաւորութիւն նորա⁷ յայտ առնէ յամենայն կողմանց երկրի հեղումն բնութեան ջուրց⁸: Արդ եթէ ինքն անձամբ իւրով եւ կամ թէ ի վերայ աւոյտ, թէ ի վերայ ջուրց կամ թէ յոչընչոյ վերայ⁹ իմաստով հաստատել զնա, պարտ է մեզ, զի մի խափանեցոյցով ի բարեպաշտութեան խորհրդոց, այլ միանգամայն յամենայնի զաւրութեամբ արարչին խոստովանեցոյցով ուղղել եւ պահել զսա:

Վասն զի ի սկզբանն, որպէս ասեն գիրք, ծածկեալ ի ջուրց¹⁰ եւ անպատրաստ¹¹, այս ինքն՝ առանց զարդոյ գոյր: Եւ ապա հրամանաւն Աստուծոյ եղեն ժողովարանք ջուրց, եւ ապա երեւեցան¹² լեռինք եւ դաշտք, յայնժամ¹³ աստուածային հրամանաւն առին իւրաքանչիւր զգարդ իւր յամենայն կողմանց բուսոց եւ տնկոց զարմիւ¹⁴ գեղեցկացեալ, յորում եղ հրամանն տէրունական զաւրութիւն անման եւ սննդական եւ սերմնական, այսինքն՝ իւրոյ¹⁵

¹ Ex. Fid. 24.1 Περὶ γῆς καὶ τῶν ἐξ αὐτῆς

² Ծննդ. Ա. 1. «Ի սկզբանէ արար Աստուած զերկին եւ զերկիր»:

³ Սաղմ. ՃԼԵ 6. «Հաստատեաց զերկիր ի վերայ ջուրց»:

⁴ Շ վրա | Յովք ԻԶ 7. «Կախեաց զերկիր ի վերայ ոչնչի»:

⁵ Սաղմ. ՀԳ 4. «Ես հաստատեցի զսիւնս նորա»:

⁶ Շ չիք

⁷ Սաղմ. ԻԳ 2. «Ի վերայ ծովու հիմունս արկ նմա»:

⁸ Շ ջրոց B չիք

⁹ Շ վրա

¹⁰ Շ ջրոց

¹¹ Ծննդ. Ա. 2. «Երկիր է՛ր աներետոյթ եւ անպատրաստ»:

¹² Շ + ցամաք

¹³ Հուն. չիք եւ դաշտք, յայնժամ

¹⁴ Հուն. չիք

¹⁵ Հուն. չիք

նմանոյն ծննդաբերութեան: Եւ ապա երբէր էհան¹⁶ հրամանաւ արարչին զամենայն ազգ կենդանեաց, զազանաց¹⁷ եւ սողնոց եւ թռչնոց: Զամենեսեան ըստ ժամու իւրոյ ի պէտս մարդոյն, այլ ոմանք ի նոցանէ՝ ի կերակուրս, որպէս եղունք, ոչխարք, այծեմանք, հաւաք եւ այլ այդպիսիք, իսկ այլք ի սպասաւորութիւնք, որպէս ուղտք, նախիրք եզանք, էջք, ջորիք¹⁸ եւ այդպիսիք, իսկ այլք՝ ի զուարեմանք հրեանանց, որպէս մամունդք, կապիկք, դուղաք եւ այդպիսիք բազումք եւ ազգի ազգիք ի թռչնոց եւ ի զեռնոց¹⁹, եւ ի տնկոց եւ ի բուսոց զոմանս քաղցրապտուղս եւ բարեհաշակս յուտել, իսկ ոմանք՝ անուշահոտս եւ գեղեցկաժաղիկս ի հրնուանս ընդզանց եւ տեսարանաց²⁰, իսկ ոմանք՝ ի բժշկութիւն ակտիք եւ ցաւոց մերոց: Վասն զի ոչ է եւ ոչ ինչ բնաւ ոչ կենդանի ինչ, ոչ տունկ կամ բոյս, յորս ոչ եղ արարչին ներգործութիւն ինչ մեծ կամ փոքր ինչ աւգուտ ի պէտս մարդկան: Քանզի յառաջ քան զստեղծանելն²¹ զնոսա որ ամենայնի նախագետն էր²² գիտէր²³, եթէ կամի մարդ վասն ինքնիշխանն լինելոյ պատուիրանագանց լինել եւ յապականութիւն եւ ի մահ մատնիլ, եւ զամենայն էփ ի ժամանակի ի պէտս իւր զոր ինչ յերկինս ի վեր եւ զոր²⁴ ի վերայ երկրի եւ զորս ի ջուրս²⁵ ստեղծեաց:

Եւ յառաջ քան զպատուիրանագանցութիւնն զամենիսեան ընդ ձեռամբ մարդոյն հնազանդեցոյց²⁶, վասն զի իշխան կարգեաց զնա Աստուած ամենայնի, որոց յերկրի եւ ի ծովու²⁷: Որոց եւ անուանս եղ ըստ գործոյն իւրեանց²⁸: Իսկ եւ անհ համաբնակ մարդոյ գոլով եւ առաւել քան զայլսն մերձաւոր էր²⁹ նմա եւ ուրախական շարժամբն իբր թէ խորհրդակից լինէր: Վասն որոյ զամենաշար զայն խորհուրդ նովաւ ասաց նախահարանցն³⁰ սկզբնաշար վիշապն: Իսկ երկիր անձամբ իւրով բուսուցանէր զպտուղս, զորս պիտոյ

¹⁶ F է

¹⁷ Ex. Fid. 24.22 չիք

¹⁸ Ex. Fid. 24.25 չիք

¹⁹ մամունդք, կապիկք, դուղաք եւ այդպիսիք բազումք եւ ազգի ազգիք ի թռչնոց եւ ի զեռնոց // Ex. Fid. 24.26-27 *πιθήκους καὶ τῶν ὀρνέων κίσσας τε καὶ ψιττακούς καὶ τὰ τοιαῦτα*

²⁰ ընդզանց եւ տեսարանաց // Ex. Fid. 24.28 *ἡμῖν δεδομένα οἷον τὸ ῥόδον καὶ τὰ τοιαῦτα*

²¹ E F զստեղծելն

²² B C չիք

²³ Դան. ԺԳ 42. «գիտես զամենայն յառաջ քան զլինել նոցա»:

²⁴ C + ինչ

²⁵ F չիք ի ջուրս

²⁶ հնազանդեցոյց // Ex. Fid. 24.34 *ἦν*

²⁷ ի ծովու // Ex. Fid. 24.37-38 *τῶν ἐν ὕδασι*

²⁸ Ex. Fid. 24.38 չիք որոց եւ անուանս եղ ըստ գործոյն իւրեանց

²⁹ E F մօտեւոր

³⁰ C նախահարցն

էին իւրաքանչիւր կենդանեաց հնազանդելոցն մարդոյ, եւ ոչ անձրեւ տեղեալ երբէք ի վերայ երկրի, եւ ոչ ձմեռն լեալ: Իսկ ապա յետ յանցատրութեանն, յորժամ «հաւասարեցաւ անասնոց անմտից եւ նմանեաց նոցա»³¹ եւ իշխան կացոյց յանձն իւր զանբանական ցանկութիւն բանական մտացն իւր, անհնազանդ լինելով տէրունական պատուիրանին, ի վերայ յարեալ յարարչէն կարգեալ իշխանին, որ ընդ իշխանութեամբ իւր էր արարածն, եւ դատապարտեցաւ փրտմամբ եւ աշխատանամ գործող լինել երկրի, յորմէ առեալ էր³²:

Այլ եւ ոչ այժմ արտաքին պիտոյից են գոյութիւն³³ գազանաց, իբրեւ զի երկեցուցանեն զմարդ եւ կոչել տան զանունն Աստուծոյ յազնականութիւն, նաեւ զփուշս յետ յանցանացն բուսուցին երկիր³⁴ հրամանաւ Տեառն, ընդ որոց լծակցեալ է գեղեցկութիւն վարդի³⁵, որպէս զի առ յիշողութիւն վարդի յիշողութիւն պատուիրանազանցութեանն բերցէ զմեզ³⁶, վասն որոյ փուշ եւ տատասկ բերել³⁷ մեզ երկիր դատապարտեցաւ³⁸:

Եւ արդ եթէ հաստատուն են այսոքիկ, մինչեւ ցարդ եւս հաւատամք ներգործութեամբ ի նոսա տէրունական բանին որ ասաց. «Անեցեք եւ բազմացարոմ եւ լցեք գերկիր»³⁹:

Իսկ ոմանք գնդաձեւ ասացին զերկիր, իբրեւ զսփեռ, եւ այլք մարդաձեւ յառաջնոցն⁴⁰, եւ յոյժ աղաւտ եւ փոքր քան զերկինս, իբրեւ զկէտ ինչ ի մէջ նորա կախեալ զմիջաւ: Այլ եւ այն ինչ, որ գնայ եւ փոխադրի: Եւ երանի այնոցիկ, որք ժառանգեն զերկիրն հեզոց⁴¹, վասն զի ի յալիտեանս որ գալոց է երկիր, որ ընդունելոց է զսուրբսն, անմահ եւ անփոխադրելի է⁴²: Ո՞վ կարող է արժանապէս սփանչանալ ընդ անսահմանելի եւ անպատմելի իմաստու-

³¹ Սաղմ. ԽԸ 13. «Մարդ ի պատուի էր եւ ոչ իմացաւ, հաւասարեաց անասնոց անբանից եւ նմանեաց նոցա»:

³² Ծննդ. Գ 19. «Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո, մինչեւ դարձցիս յերկիր ուստի առար»:

³³ Ex. Fid. 24.48 չրդիւս

³⁴ C չիք

³⁵ գեղեցկութիւն վարդի // Ex. Fid. 24.51 τῇ ἀπολαύσει τοῦ ῥόδου ἢ ἄκανθα

³⁶ C F մեզ | որպէս զի առ յիշողութիւն վարդի յիշողութիւն պատուիրանազանցութեանն բերցէ զմեզ // Ex. Fid. 24.51-52 εἰς ὑπόμνησιν τῆς παραβάσεως ἡμᾶς ἄγουςα

³⁷ F բերեալ

³⁸ Ծննդ. Գ 18. «Փուշ եւ տատասկ բուսուցէ քեզ»:

³⁹ Ծննդ. Ա 28:

⁴⁰ մարդաձեւ յառաջնոցն // Ex. Fid. 24.57 κωνοειδῆ

⁴¹ Մատթ. Ե 5. «Երանի հեզոց, զի նոքա ժառանգեցեն զերկիր»:

⁴² Ex. Fid. 24.61 չիք եւ անփոխադրելի է

թիւն արարչին, կամ ո՞ր ըստ պատշաճի կարող է մատուցանել գոհութիւն Աստուծոյ⁴³, որ այսչափ բարիս ետ ստեղծուածոց իւրոց⁴⁴:

⁴³ Ex. Fid. 24.63 չ/բ

⁴⁴ AMN + 24b.1-35 Εἰσὶ δὲ αἱ γνωσθεῖσαι ἐπαρχίαι τῆς γῆς ἥτοι σατραπείαι αὗται· Εὐρώπης μὲν ἐπαρχία λδ', πίνακες ι'· α' Ἰουβερνία, νῆσος Βρετανική β' Ἀλουίωνος νῆσος Βρετανική γ' Ἰσπανία Βαιτική δ' Ἰσπανία Λουσιτανία ε' Ἰσπανία Ταρακωνησία ζ' Γαλλία Ἀκουιτανία ζ' Γαλλία Λουγδονησία η' Γαλλία Κελτική θ' Γαλλία Ναρβωνησία ι' Γερμανία μεγάλη ια' Ραιτία καὶ Οὐνδελικία ιβ' Νωρικόν ιγ' Παννονία ή ἄνω ιδ' Παννονία ή κάτω ιε' Ἰλλυρίς ις' Δελματία ιζ' Ἰταλία ιη' Κύρνος νῆσος ιθ' Σαρδὼ νῆσος κ' Σικελία νῆσος κα' Σαρματία ή ἐν Εὐρώπῃ κβ' Ταυρικὴ Χερσόνησος κγ' Ἰάζυγες Μετανάσται κδ' Δακία κε' Μυσία ή ἄνω κς' Μυσία ή κάτω κζ' Θράκη κη' Χερσόνησος κθ' Μακεδονία λ' Ἡπειρος λα' Ἀχαΐα λβ' Εὐβοία νῆσος λγ' Πελοπόν νησος λδ' Κρήτη νῆσος. Λιβύης ἐπαρχία ιβ', πίνακες η'· α' Μαυριτανία Τιγγιτανή β' Μαυριτανία Καισαρηνσία γ' Νουμιδία δ' Ἀφρική ὅλη ε' Κυρηναϊκή πεντάπολις ζ' Μαρμαρική ζ' Λιβύη ή Αἴγυπτος ή κάτω θ' Αἴγυπτος Θηβαΐς ι' ή ἐντὸς Ἀφρικῆς Λιβύη ια' ή ἄνω Αἰγύπτου Αἰθιοπία ιβ' ή ἐντὸς τούτων πάντων νωτιωτάτη Αἰθιοπία. Ἀσίας ήπείρου μεγάλης ἐπαρχία μη', κανόνες ιβ'· α' Βιθυνία Πόντου β' Ἀσία ή ιδίως, πρὸς τῇ Ἐφέσῳ γ' Φρυγία μεγάλη δ' Λυκία ε' Γαλατία ζ' Παφλαγονία ζ' Παμφυλία ή Καππαδοκία θ' Ἀρμενία μικρά ι' Κιλικία ια' Σαρματία ή ἐντὸς Ἀσίας ιβ' Κολχίς ιγ' Ἰβηρία ιδ' Ἀλβανία ιε' Ἀρμενία μεγάλη ις' Κύπρος νῆσος ιζ' Συρία κοίλη ιη' Συρία Φοινίκη ιθ' Συρία Παλαιστίνη κ' Ἀραβία Πετραία κα' Μεσοποταμία κβ' Ἀραβία ἔρημος κγ' Βαβυλωνία κδ' Ἀσσυρία κε' Σουσιανή κς' Μηδία κζ' Περσίς κη' Παρθία κθ' Καρμανία ἔρημος λ' Καρμανία ἐτέρα λα' Ἀραβία εὐδαίμων λβ' Ὑρκανία λγ' Μαργιανή λδ' Βακτριανή λε' Σογδιανή λς' Σακὼν λζ' Σκυθία ή ἐντὸς Ἰμάου ὅρους λη' Σκυθία ή ἐκτὸς Ἰμάου ὅρους λθ' Σηρική μ' Ἀρεία μα' Παροπανισάδαι μβ' Δραγγιανή μγ' Ἀραχωσία μδ' Γεδρωσία με' Ἰνδική ή ἐντὸς Γάγγου τοῦ ποταμοῦ μς' Ἰνδική ή ἐκτὸς Γάγγου τοῦ ποταμοῦ μζ' Σῖναι μη' Ταπροβάνη νῆσος. Ὅμοι γίνονται Εὐρώπης μὲν πίνακες ι', ἐπαρχία λδ', πόλεις ἐπίσημοι ριη' Λιβύης δὲ πίνακες μὲν η', χῶραι δὲ ιβ', πόλεις ἐπίσημοι νβ' Ἀσίας δὲ μεγάλης πίνακες μὲν ιβ', ἐπαρχία δὲ μη', πόλεις ἐπίσημοι ρπ' αἱ πᾶσαι τῆς οἰκουμένης χῶραι ρδ', πόλεις τν'. Ἐθνη δὲ οἰκεῖ τὰ τέρατα· κατ' ἀπηλιώτην Βακτριανοί, κατ' εὖρον Ἰνδοί, κατὰ Φοίνικα Ἐρυθρὰ θάλασσα καὶ Αἰθιοπία, κατὰ λευκόνοτον οἱ ὑπὲρ Σύρτιν Γεράμαντες, κατὰ λίβα Αἰθίοπες καὶ δυσμικοὶ Ὑπέρμαυροι, κατὰ ζέφυρον Στῆλαι καὶ ἀρχαὶ Λιβύης καὶ Εὐρώπης, κατὰ ἀργέστην Ἰβηρία ή νῦν Ἰσπανία, κατὰ δὲ θρασκίαν Κέλτοι καὶ τὰ ὄμορα, κατὰ ἀπαρκτίαν οἱ ὑπὲρ Θράκην Σκύθαι, κατὰ βορρᾶν Πόντος Μαιῶτις καὶ Σαρμάται, κατὰ καικίαν Κασπία θάλασσα καὶ Σάκες.

ԻԳ. Վասն դրախտին¹:

Որով կամեցեալ Աստուծոյ յերեւելի եւ յաներեւոյթ էութենէ ստեղծեալ զմարդն ըստ պատկերի եւ ըստ նմանութեան իւրոյ, որպէս զի իբրեւ զթագաւոր իմն եւ զիշխան ամենայն երկրի եւ որոց ի նմա կացուցէ զնա իբրեւ ի թագաւորութիւն ինչ, յորում բնակելով եւ կելով երանելի եւ ցանկալի յոյժ ունիցի կեանս: Այսինքն է մեծապանծալի² դրախտն՝ ձեռամբ Աստուծոյ տնկեալ յեղեմ ընդ արեւելս³, ամենայն միսիթարութեան եւ ցնծութեան զանձարան: Վասն զի եղեմ ցնծութիւն թարգմանի՝ յարեւելից կողմ բարձր քան զամենայն երկիր ենթադրեալ, բարիոք նիւթիւ խառնեալ եւ սուրբ աւդիւ եւ մանրիւ պայծառացեալ, տնկաւ միշտ ծաղկեցելովք եւ պտղաւիցք, լի անուշահոտութեամբ եւ լուսով աղցեալ, եւ վերանցեալ⁴ գեղեցկութեամբ քան զամենայն զգայական տեսութիւն եւ իմացումն, ստուգիւ աստուածային տեղի եւ արժանի բնակութիւն նմա, որ ի պատկերի Աստուծոյ ստեղծաւ, յորում եւ ոչ մի ինչ անբանական⁵ բնակել հնարէր, այլ միայն մարդ, որ ձեռամբ Աստուծոյ ստեղծեալ էր:

Ի միջի այսորիկ դրախտի ծառ կենաց եւ ծառ գիտութեան տնկեաց Աստուած . ծառ գիտութեան⁶ իբր զժանուցանող ինչ եւ փորձեցուցանող եւ իմացուցանող հնազանդութեան եւ անհնազանդութեան մարդոյն: Յորում եւ ծառ գիտութեան բարոյ եւ շարի անուանեցաւ⁷, կամ թէ զգիտութեան զաւրութեան իւրոյ բնութեանն տալոց էր ճաշակողաց իւրոց, որ եւ սա իսկ բարիոք էր կատարելոցն, այլ շար եղեւ դեռ եւս անկատարիցն եւ զգայութեամբ անյագելոց, որպէս զհաստատուն⁸ կերակուր դեռեւս կարատելոց կաթին, վասն զի ոչ կամ էր⁹ արարչին¹⁰ մերոյ Աստուծոյ, որպէս զմարդ¹¹ հոգացող եւ վասն

¹ Ex. Fid. 25.1 Περὶ παραδείσου

² Ex. Fid. 25.6 ὁ θεῖος

³ Ex. Fid. 25.6 չիք ընդ արեւելս

⁴ C երանեցեալ

⁵ C անբան

⁶ Ծննդ. Բ 9:

⁷ Ծննդ. Բ 9:

⁸ F զհաստուն

⁹ Ex. Fid. 25.20 ἐβούλετο // B E հանդերձեալ էր

¹⁰ F արարիչն

¹¹ F Ex. Fid. 25.20 չիք

բազմաց աստ եւ անդ շրջող լինել, ոչ աշխատող եւ ինքն յառաջադրող կենաց իւրոց: Որ եւ պատահեաց Ադամայ յետոյ¹², զի յորժամ նաշակեաց ի պտղոյն¹³ եւ ծանեաւ, թէ մերկ գոյ¹⁴, եւ վասն ծածկոյթի իմի՛ գնոգալ ախտացաւ¹⁵: Իսկ նախ քան զնաշակելն «մերկ գոլով¹⁶ Ադամ եւ Եւայ եւ ոչ ամաշէին»¹⁷, քանզի այսպիսի անախտոս կամեցաւ լինել զմեզ Աստուած (վասն զի այս է կատարումն անախտութեան), եւ դարձեալ¹⁸ յայն պարապել¹⁹, զի մի միայն ունիցի գործ մարդն հրեշտակական, որ է այսինքն անդադար գոհաբանութիւն արարչին եւ ցնծութիւն տեսութեամբն իւրոյ եւ ի նմա ընկենոյ զհոգս իւր: Որ եւ այս իսկ ի ձեռն Դաւթի ասացաւ առ մեզ, եթէ «ընկեա ի Տէր զհոգս քո, եւ նա կերակրէ զքեզ»²⁰, եւ ²¹Աւետարանին զառաքեալսն Տէրն²² ուսուցանէր ասելով. «Մի հոգայք վասն ոգոց ձերոց»²³, զինչ ուտիցե՛ք, եւ մի վասն մարմնոյ, թէ զինչ զգենուցո՛ւք»²⁴, եւ դարձեալ. «Խնդրեցե՛ք զարհայոյթիւն Աստուծոյ եւ զարդարութիւն նորա, եւ այս ամենայն յաւելցի ձեզ»²⁵, եւ ցՄարթայ ասէ. «Մարթայ, Մարթայ, դու հոգաս եւ բազում իւրի գրադեալ ես,

¹² Ex. Fid. 25.22 չիք

¹³ Ex. Fid. 25.22 չիք ի պտղոյն

¹⁴ C մերկ գոյր չիք ծանեաւ, թէ մերկ գոյ

¹⁵ վասն ծածկոյթի իմի՛ գնոգալ ախտացաւ // Ex. Fid. 25.23-24 περίζωμα έαυτῷ περιεποιείτο· φύλλα γὰρ σκεπὴς λαβὼν περιεζώσατο

¹⁶ Ex. Fid. 25.24 ἦσαν ἀμφοτέροι

¹⁷ Ծննդ. Բ 25. «Եւ էին երկոքեան մերկ՝ Ադամ եւ կին իւր, եւ ոչ ամաշէին»:

¹⁸ E F չիք եւ դարձեալ

¹⁹ յայն պարապել // Ex. Fid. 25.26 ἀμερίμους

²⁰ Սաղմ. ԿԳ 23. «Ընկեա ի Տէր զհոգս քո եւ նա կերակրէ զքեզ»:

²¹ Ex. Fid. 25.31 + ἐν τοῖς ἱεροῖς

²² Ex. Fid. 25.31 չիք զառաքեալսն Տէրն

²³ C + թէ

²⁴ Մատթ. Զ 25. «Վասն այդորիկ ասեմ ձեզ. մի հոգայք վասն ոգոց ձերոց՝ զինչ ուտիցե՛ք կամ զինչ ըմպիցե՛ք. եւ մի վասն մարմնոց ձերոց՝ թէ զինչ ազանիցիք», Դուկ. ԺԲ 22. «Վասն այդորիկ ասեմ ձեզ. մի հոգայք ընդ ոգոյ՝ թէ զինչ ուտիցե՛ք, եւ մի ընդ մարմնոյ՝ թէ զինչ զգենուցո՛ւք»:

²⁵ Մատթ. Զ 33. «Խնդրեցե՛ք նախ զարհայոյթիւն Աստուծոյ եւ զարդարութիւն նորա, եւ այդ ամենայն յաւելցի ձեզ»:

եւ աստ սակաւ ինչ պիտոյ է²⁶, Մարիամ մասն բարի ընդրեաց, որ ոչ բարձցի ի նմանէն»²⁷, այսինքն՝ նստելն²⁸ առ ոտսն իւր եւ լսել²⁹ զբանսն նորա:

Իսկ որ³⁰ ծառն կենաց կոչիր³¹, ծառ էր, որ ունէր ներգործութիւն ինչ զայս, որ կեանս անվախճանս³² շնորհէր³³, որոց արժանի կենաց գոյին եւ որոց մահկանացու ոչ լինէին³⁴, նոցա փաղցրանայր³⁵: Արդ ումանք զգալի ասացին³⁶ գոլ զդրախտն, եւ ումանք իմանալի: Այլ որպէս եւ կարծեմ, իբրեւ մարդ, որ զգալի եւ իմանալի ստեղծեալ էր միանգամայն, նոյնպէս եւ այն փառաւոր տաճարն իւր զգալի եւ իմանալի էր, կրկին ունելով զգայութիւնս մարդ³⁷, վասն զի մարմնով յաստուածային յայն երկիր եւ ի գերագոյն բարեաց փաղափն յայն ի դրախտին³⁸ բնակէր, իսկ Հոգւով ի վերնական եւ անմեղմեղալի յիմանալի³⁹ կայանս շրջէր առ Աստուած⁴⁰, եւ զԱստուած ունելով ժառանգութիւն եւ ժառանգակից միանգամայն⁴¹, զնա ստանալով⁴² զգեստ եւ ծածկեալ եւ զարդարեալ շնորհաւ նորա, հրճուէր եւ փաղցր այնմ պտղով տեսութեանն նորա⁴³ շատանայր, իբր այլ իմն հրեշտակ եւ ի ձեռն այսպիսեացս հաստատեալ եւ անեալ⁴⁴: Այն, որ ծառ կենացն անուանէր միայն արժանեացն, զկեանս անհատանելիս զանընդունակս մահացու զփաղցրութիւն աստուածային հաղորդութեանն տայ ընդունողաց իւրոց: Զոր ամենայն ծառ կո-

²⁶ E չիք

²⁷ Դուկ. Ժ 41-42. «Պատասխանի ետ Յիսուս՝ եւ ասէ. Մարթա Մարթա, դու հոգաս՝ եւ զբազում իւրիք զբաղեալ ես. բայց աստ՝ սակաւ ինչ պիտոյ է. Մարիամ մասն բարի ընտրեաց, որ ոչ բարձցի ի սմանէ»:

²⁸ Ex. Fid. 25.37 τὸ καθῆσθαι // B E F նստեալն

²⁹ Ex. Fid. 25.37 ἀκούειν // C E F լսէր

³⁰ C չիք

³¹ կոչիր // Ex. Fid. 25.39 ἢ GH ἦν

³² Ex. Fid. 25.39 չիք

³³ Ex. Fid. 25.39 + ἦ

³⁴ E լինին

³⁵ փաղցրանայր // Ex. Fid. 25.40 ἐδωδισμον

³⁶ Ex. Fid. 25.41 ἐφαντάθησαν

³⁷ զգայութիւնս մարդ // Ex. Fid. 25.44 ἔμφασιν

³⁸ C դրախտն | փաղափն յայն ի դրախտին Ex. Fid. 25.45 καθὼς ἱστορήσαμεν

³⁹ անմեղմեղալի յիմանալի // Ex. Fid. 25.46 ἀσυγκρίτῳ καὶ περικαλλεστέρω

⁴⁰ Ex. Fid. 25.46 չիք առ Աստուած

⁴¹ ժառանգութիւն եւ ժառանգակից միանգամայն // Ex. Fid. 25.47 οἶκον τὸν ἑνοικον

⁴² Ex. Fid. 25.47 + εὐκλεές

⁴³ F տեսութեամբ C տեղութեանն նորա

⁴⁴ C F հաստատել եւ անել

շեաց Աստուած, յորժամ ասաց. «յամենայն ծառոց, որ ի դրախտիդ⁴⁵ են, ուտելով կերիջիք»⁴⁶, վասն զի է այն ամենայն, յորում եւ որով պատրաստեցաւ ամենայն⁴⁷:

Իսկ բարոյ եւ չարի ծանուցանող ծառ է բազմաւորինակ տեսութեանն գիտութիւն, որ է գիտութիւն իւրում բնութեանն, եւ որ բարի իմն է կատարելոցն եւ որք յաստուածային տեսութիւն կենցաղավարին, որով իւր⁴⁸ երեւելի լինի մեծագործութիւն արարչին: Այնոցիկ, որ երկնչիցին յանկմանէ, իբր առ ժամ էիւս յապաղմամբ սովորութեամբ ոչ եկեալ յայդպիսեաց տեսութիւնս, իսկ ոչ բարոյ⁴⁹ մանկագունից դեռես, որոց ցանկան անյագութեան ցանկութեան, անհաստատ գոլով առ վերնական հրահանգութիւն⁵⁰ եւ ոչ զաւրագոյն հաստատեալք ի տոփութիւն միայն բարոյն եւ կամ հոգացող գոլով միայն մարմնոյ իւրոյ, յանձն իւր շփոթեալ գոլով ցնդեալ յաստիս:

Այսպէս կրկին կարծեմ զփառաւոր⁵¹ դրախտն, որպէս ճշմարտութեամբ աւանդեցին մեզ աստուածազգեաց հարֆն կամ որք զսա ուսուցանէին⁵²: Իսկ զամենայն ծառ այսպէս կարասցոյք իմանալ, որ առ ամենայն եղականս գոյ գիտութիւն աստուածային զարութեանն, որպէս ասէ աստուածայինն առաքեալ, եթէ. «աներեւոյթն նորա ի սկզբանէ աշխարհիս արարածովս իմացեալ տեսանին»⁵³: Իսկ առաւել քան զամենայն զգայութիւն եւ զիմացութիւն եւ զտեսութիւն մերն վերագոյն է զմերոյ, այսինքն՝ զմարդոյն ասեմ զգոյութիւն⁵⁴, որպէս ասէ⁵⁵ Դաւիթ. «Մփանչելի եղեւ գիտութիւն քո յինչն»⁵⁶, այսինքն՝ ի պատրաստութենէ իմմէ, որ խաբէութիւն եղեւ Ադամայ՝ որպէս նորատունկ գոլով վասն պատեհառանացն, զորս ասել խնդրեմ: Կամ թէ ծառ կենաց էր

⁴⁵ Բ դրախտ

⁴⁶ Ծննդ. Բ 16. «Եւ պատուիրեաց Տէր Աստուած Ադամայ եւ ասէ. Յամենայն ծառոց որ է ի դրախտիդ՝ ուտելով կերիցես»:

⁴⁷ Կողոս. Ա 17. «ամենայն ինչ նովաւ եկաց բովանդակ»:

⁴⁸ Ը իւրաքանչիւր

⁴⁹ Ը բարտք

⁵⁰ Ex. Fid. 25.60 διαμονής

⁵¹ Ex. Fid. 25.63 θεῖον

⁵² Ը ուսուցին Բ ուսուցանէ

⁵³ Հռովմ. Ա 20. «Զի աներեւոյթն նորա իսկզբանէ աշխարհի՝ արարածովս իմացեալ տեսանին»:

⁵⁴ Ex. Fid. 25.69 συστάσεως // C E F զգայութիւն

⁵⁵ Ex. Fid. 25.69 + ó θεῖος

⁵⁶ Սաղմ. ձԼԸ 6. «Մփանչելի եղեւ գիտութիւն քո յինչն»:

այն, որ յամենայն զգալեաց գալոց էր աստուածային իմացութիւն արարչին⁵⁷, եւ ի ձեռն որոյ՝ ամենայն արարածոց արարչին եւ ստեղծողին ի վերելումն տեսութեան⁵⁸, զոր ամենայն ծառ անուանէ՝ կատարեալ եւ անբաժանելի զամենաբարոյն Աստուծոյ բերելով զհաղորդութիւն, իսկ ծառ⁵⁹ ճանաչման⁶⁰ բարոյ եւ չարի՝ զգալի եւ զուարճալի կերակուր՝ կարծեալ միայն փաղցրացուցանող, իսկ ճշմարտութեամբ՝ հաղորդ առնելով չարեաց դատող գոլ ընդունողաց զնա: Վասն զի ասաց Աստուած . «յամենայն ծառոց դրախտիդ ուտելով կերիցիք»⁶¹, որպէս թէ ասէր, եթէ յամենայն եղելոց վերանցեալ մերձեցէ՛ առ իս՝ արարիչս ձեր, եւ մի պտուղ կրթցէ՛ յամենեցունց՝ զիս, որ⁶² եմ ճշմարիտ կեանք, որ յամենայնի կեանս շնորհեմ քեզ, եւ մերձատրութիւն իմ⁶³ առցես հաստատութիւն էութեան քոյ, որպէս զի այսպէս եղիցիք⁶⁴ անմահ: «Իսկ ի ծառոյն գիտութեան բարոյ եւ չարի մի ուտիցէ՛ք, զի յատուր, յորում ատուր ուտիցէ՛ք ի նմանէ, մահու մեռանիցիք»⁶⁵: Վասն զի բնութեամբ զգալի կերակուր պակասութեան իմիք լիութիւն է եւ յորովայն եւ յելս եւ յապականութիւն հասանէ⁶⁶, եւ ոչ է հնար յապականութիւն կալ մնալ որոց զգալի կերակրով վարին եւ կեանք:

Կամ թէ ծառ կենաց է մերձատուր գոլ եւ ընտանութիւն Աստուծոյ, որով զարգանան հրեշտակք, որով հանդերձեալ էր առնուլ մարդ⁶⁷ զանապականութիւն: Զի պարտ էր մեզ նախ առանց քննութեան իմիք հնազանդել արինացն Աստուծոյ, մինչեւ ի կատարումն գալ հասակի առաքինութեան եւ այնպէս պարգեւս առնուլ յԱստուծոյ զընտրողութիւն բարոյ եւ չարի, որ է ծառ գիտութեան բարոյ եւ չարի: Զի ոչ առանց գրոյ լինել⁶⁸ կարէր նորատունկ եւ

⁵⁷ Ex. Fid. 25.72 չիք

⁵⁸ Ex. Fid. 25.74 չիք

⁵⁹ C չիք

⁶⁰ E F ճանաչումն

⁶¹ Ծննդ. Բ 16. «Եւ պատուիրեաց Տէր Աստուած Ադամայ՝ եւ ասէ. Յամենայն ծառոց որ է ի դրախտիդ՝ ուտելով կերիցես»:

⁶² C + ես

⁶³ F չիք

⁶⁴ B C + դուք Ex. Fid. 25.82 չիք

⁶⁵ Ծննդ. Բ 17. «Բայց ի ծառոյն գիտութեան բարոյ եւ չարի՝ մի ուտիցէ՛ք, զի յորում ատուր ուտիցէ՛ք ի նմանէ՝ մահու մեռանիցիք»:

⁶⁶ Ex. Fid. 25.86 չիք

⁶⁷ հանդերձեալ էր... մարդ // Ex. Fid. 25b.2 ἡμέλλομεν

⁶⁸ C լինել | առանց գրոյ լինել // Ex. Fid. 25b.5 ἀσφαλῆς

մատաղ գոլոյն ընտրողութիւն առնել խորհրդոց սրտի եւ ընդդիմաբանութեան⁶⁹, որովհետեւ ախտատու եւ ցանկասէր ունէր⁷⁰ դեռեւս զմիտս եւ զխորհուրդ: Այլ արդ ծառն կենաց ասեմբ զաստուածատուր զայն պատուիրանն, վասն զի ծառ կենաց է արդարութիւն ամենեցուն, որք առնեն զնա: Եւ ւարինեալ է փայտ, որով տնկեցաւ արդարութիւն, ասէ Սողոմոն, իսկ ծառ գիտութեան ընտրողութիւն է բարոյ եւ չարի: Եւ պարտ էր Ադամայ անընտրելի հնազանդութեամբ միատուրել ընդ Աստուծոյ եւ մեծանալ միատուրելովն եւ աստուածանալ նախ ի ժամուն, յորում հանոյ թուէր արարչին⁷¹ եւ բնութեամբ Աստուծոյ, եւ ճշգրտեալ⁷² զծանաթութիւն եւ զընտրողութիւն ամենայնի⁷³:

Եւ նախ մշակ փորձ լինել անփորձելի հնազանդութեանն, վասն զի պատուիրան ետ Աստուած մի նաշակել ի ծառոյ գիտութեան, որ էր այս ինքն անհաւատութիւն արինաց իւրոց, եւ ոչ ուտել ի ծառոյ ումեքէ, որ ունիցի բնութեամբ ներգործութիւն առնել յինքն ընտրողութեան՝ իւրում բնութեանն: Իսկ յորժամ եկ⁷⁴ չարն ի ձեռն աւձին եւ ասէ, եթէ. «Լինիցիք իբրեւ զաստուածս՝ նանաշել զբարի եւ զչար, եթէ ուտիցէք»⁷⁵, հաւատաց իւրոյն ընտրողութեամբ⁷⁶, եւ բարիոք թուեցաւ իւրն աստուած լինել եւ նանաշող գոյ: Եւ ոչ յիշեաց, թէ⁷⁷ յիւրում ժամու⁷⁸ բարի է⁷⁹ այն եւ ոչ տարածամ⁸⁰ եւ եթէ ոչ է բարին բարի, եթէ ոչ բարիոք ի ժամու⁸¹ լինիցի, եւ եթէ ոչ է պարտ յառաջագոյն յափշտակել զտուեալն առանց հաճութեան եւ⁸² կամաց տոտղին գոլոյ եւ բարիոք գոլոյ: Եւ ետես, եթէ բարի է, եւ առեալ եկեր, եւ մերկացաւ յաստուածային հրահանգութենէն, եւ բացան աչք մարմնականք, եւ ախտն նորա շարժեցան, եւ ծանեան, եթէ մերկ են, եւ զամաթի հարան: Եւ խորշեցան յԱստուծոյ, եւ

⁶⁹ F չիք եւ ընդդիմաբանութեան

⁷⁰ C չիք

⁷¹ Ex. Fid. 25b.10 չիք

⁷² C ճշգրտել

⁷³ Ex. Fid. 25b.11 + καὶ τὴν ἀπέραντον ζωήν

⁷⁴ E ուղղված եկն

⁷⁵ Ծննդ. Գ 5. «Զի գիտէր Աստուած թէ յորում ատուր ուտիցէք ի նմանէ, բանայցեն աչք ձեր, եւ լինիցիք իբրեւ զաստուածս, նանաշել զբարի եւ զչար»:

⁷⁶ E ընտրութեամբ

⁷⁷ Ex. Fid. 25b.17 + πάντα

⁷⁸ F ժամ

⁷⁹ F բարիոք

⁸⁰ Ex. Fid. 25b.18 չիք եւ ոչ տարածամ

⁸¹ Ex. Fid. 25b.18 չիք ի ժամու

⁸² Ex. Fid. 25b.19 չիք հաճութեան եւ

որպես գողայս խոտորեալ պատրեցան ի ցանկութիւնս եւ արտաբեցան ի փայտէն կենաց եւ մահկանացոյս փոփոխեցան: Վասն զի ի փորձէն գիտէր թշնամին, եթէ բարեկամութեամբ մերձաւորութիւն Աստուծոյ աստուածանալոյ եւ յաւիտեան կելոյ, անվախնան եւ անմահ գոլոյ առիթ եւ ընձեռող լինիցի⁸³:

⁸³ Ex. Fid. 25b.1-24 չհք // GMN +

ԻԵ. Վասն մարդոյն¹:

Այսպէս իմանալի գոյութիւնս կազմեաց Աստուած՝ զհրեշտակացն² եւ զամենայն երկնային կարգացն (որք ստուգապէս իմանալի եւ անմարմին բնութեամբ են, իսկ անմարմինս ասեմ առ նոսա մերձ դնելով զքանձորութիւն նիւթոյ. վասն զի միայն Աստուած է աննիւթ եւ անմարմին), եւ յետ սոցա զգալիս՝ միանգամայն զերկինս³ եւ զերկիր եւ զոր ի մէջ նոցա ենթակացեալս, եւ զոմանս մերձաւորս գոլով ինքեան (վասն զի մերձաւոր Աստուծոյ են բանաւոր եւ մտաւ միայն իմանալի բնութիւնն), իսկ զոմանս ամենեւիմբ հեռացեալս, յայտ է իբր զգալեացս հետեւեալ: Եւ ապա հարկ եղեւ յերկոցունցն խառնել ինչ «առ ի յայտնել զառաւելութիւն իմաստութեան եւ զբնութեամբ բազում կատարելութիւնն», որպէս ասէ Աստուածաբան Գրիգորիոս, իբրեւ զկապ ինչ «Երեւելի եւ աներեւոյթ բնութեանն»: Իսկ «հարկ եղեւ»⁴, զի զայս ասացի յայտնել զկամս արարչին, վասն զի նա է կարգ եւ արէնք հարկաւորք, եւ ոչ ոք ասէ արարչին. «ընդէ՞ր այսպէս ստեղծեր զիս»: Զի իշխանութիւն ունի բոլորն ի կառոյ իւրմէ պատրաստել անաւթս՝ յայտ առնել զիմաստութիւն իւր:

Իսկ զի այսպէս այսոքիկ ունէին, յերեւելի եւ յաներեւոյթ բնութենէն էստեղծ⁵ զմարդն ձեռամբ իւրով ըստ պատկերի եւ ըստ նմանութեան իւրով, յերկրէ զմարմին կազմելով եւ հոգի բանաւոր եւ մտաւոր փշմամբ իւրով⁶ շնորհեաց դնելով ի նմա, զոր աստուածային կերպարան ասել զիտէ Բանն⁷: Վասն զի «ըստ պատկերի» Աստուծոյ⁸ ասելն զմտաւոր եւ զինքնիշխան գոլն յայտ առնէ, իսկ «ըստ նմանութեան»՝ որ ըստ կարի նմանեսցի առաքինութեամբ արարչին⁹:

Եւ առժամայն ստեղծան մարմին¹⁰, հոգի յանկարծակի, եւ ոչ ոմն առաջին եւ ոմն վերջին՝ ըստ բարբաջման Որեգինի¹¹:

¹ Ex. Fid. 26.1 Περί ἀνθρώπου

² Ex. Fid. 26.2 + φημί

³ Ex. Fid. 26.6 οὐρανόν // B գծով

⁴ C + եւ

⁵ E ստեղծ

⁶ E F իւրոյ

⁷ ասել զիտէ Բանն // Ex. Fid. 26.19 φαμέν

⁸ Ex. Fid. 26.20 չիք

⁹ Ex. Fid. 26.21 չիք

¹⁰ F ստանմարմին փխ ստեղծան մարմին

¹¹ C Որեգինի

Եւ արար Աստուած մարդ անշար, ուղիղ¹², առաքինի, անտրտում, անհոգ, ամենայն առաքինութեամբ պայծառացեալ, ամենայն բարութեամբ աղի, որպէս երկրորդ իմն աշխարհի մեծումն փոքր, այլ հրեշտակ, երկրպագելի խառնեալ, տեսող երեւելի արարածոյս¹³ եւ իմացող խորհրդոյ հանդերձելոյն¹⁴, իշխան որոց ի վերայ երկրի, ընդ իշխանութեամբ գոլ վերնոյն¹⁵, երկրաւոր եւ երկնային, առժամեայ եւ անմահ, տեսանելի եւ իմանալի, միջոց մեծութեան եւ խոնարհութեան, նոյն ինքն հոգի եւ մարմին, մարմին վասն ամբարտաւանութեան, հոգի վասն շնորհին, նա՛ զի շարշարեցի եւ շարշարեալ յիշեցէ եւ խրատեցի, իսկ այս¹⁶ զի կեցցէ եւ փառաւորեցէ զարարիչն¹⁷, մեծութեամբ պատուեալ, կենդանի աստ տնարինեալ, այսինքն՝ յայսմ կենցաղումս, եւ այլուր փոխադրելի, այսինքն՝ ի հանդերձեալն յաւիտեան, եւ՛ կատարումն խորհրդոյս, յաստուած ակնարկելովն աստուածանալ, իսկ աստուածանալ հաղորդութեամբ աստուածային պայծառութեանն եւ ոչ յաստուածային գոյութիւն փոփոխելով:

Արար զնա բնութեամբ անմեղ եւ կամաւ ինքնիշխան: Իսկ անմեղ ասելով՝ ոչ իբրեւ գոչ պարունակող գոլ զմեղս (զի Աստուծոյ միայն է անմեղ գոլ բնութեամբ), այլ ոչ բնութեամբ եւ ի հարկէ¹⁸ ունելով զմեղս, այլ ինքնակամ ընտրութեամբ եկամուտ գործով, որ է իսկ իշխանութիւն ունել¹⁹ առնել կամ ոչ եւ²⁰ կալ մնալ²¹ ի բարիս աւգնականութեամբ աստուածային շնորհացն, նոյնպէս եւ հակադարձող ի բարոյն ի վատթարն կոյս հակել առ շարիսն, թոյլ տալով Աստուծոյ²² սակս անձնիշխան գոլոյ: Զի ոչ²³ առաքինութիւն է բռնութեամբ²⁴ գործելն²⁵:

Եւ հոգի է գոյութիւն ինչ կենդանի պարզ եւ անսեռ, ի մարմնաւոր տեսարանաց անտեսանելի, ըստ իւրում բնութեան անտեսակ գոլով, բանաւոր,

¹² B E F ուղեղ

¹³ Ex. Fid. 26.27 κτίσεως // B C արարածոցս

¹⁴ Հուն. չիք

¹⁵ C վերնայնոյն

¹⁶ C սա

¹⁷ Ex. Fid. 26.32 τὸν εὐεργέτην

¹⁸ Ex. Fid. 26.39 չիք ի հարկէ

¹⁹ E F չիք

²⁰ Ex. Fid. 26.40 չիք առնել կամ ոչ եւ

²¹ Ex. Fid. 26.40 + καὶ προκόπτειν

²² E F + ի

²³ C չիք

²⁴ F բնութեամբ

²⁵ Ex. Fid. 26.43 γινόμενον

մտաւոր, անկերպ, իբր զանաւթ կրելով զմարմին կենաց եւ անման, զգայական եւ ծննդականութեան պարգետող մարմնոյ, ոչ արտաբնական ինքեան յումեմէ յատարէ ումեմ ունելով զմիտս, այլ մասն իւր սրբագոյն գոլ (զի որպէս ակն²⁶ ի մարմնի, նոյնպէս²⁷ եւ միտք յանձին գոլով), ինքնիշխան, կամաւորական, գործաւորական, դարձական²⁸, վասն զի եղական է՝ զայս ամենայն բնութեամբ ընկալեալ յարարչէն, յորմէ բարձանումն²⁹, եւ³⁰ այսպէս ընկալաւ գոլ շնորհամբ:

Իսկ զանմարմնութիւն եւ զանտեսանելութիւն եւ զանպարագրելութիւն կրկին կերպիւ իմանամք՝ զմինն գոյութեամբ եւ զմիսն շնորհամբ, եւ զոմն բնութեամբ այսպէս գոլ, եւ զոմն առ թանձրութիւն նիւթոյ բերելով: Եւ առ Աստուծոյ բնութեամբ գոլ, իսկ առ հրեշտակս եւ առ դէս եւ յոգիս մարդկան³¹ շնորհամբ, իսկ ի մարմինս՝ իբրեւ ի թանձրութիւն նիւթոյ:

Ամենայն³² մարմին սփռեալ է ընդ երիւ կողմանս, այսինքն՝ ունելով երկայնութիւն, լայնութիւն եւ խորութիւն³³: Եւ ամենայն մարմին հաստատի³⁴ ի չորից նիւթոց, իսկ մարմին կենդանեացն՝ ի չորից հիւթոց:

Իսկ³⁵ չորք նիւթք են այսոքիկ՝ երկիր չորին է եւ գոլ, ջուր գոլ է եւ կակոտ, աւ՝ ջերմ եւ կակոտ, հուր ջերմ է եւ չորին: Նոյնպէս եւ հիւթքն նման նիւթոցն³⁶ ելով, սեւա եւ մաղձ՝ փոխանակ երկրի (զի հոլ է եւ չորին), մաղաս սպիտակ՝ նման ջրոյ (հոլ եւ կակոտ), արիւնն՝ աւոյ նման (ջերմ եւ գէշ³⁷), իսկ խարտեաշ մաղձ՝ հրոյ նմանեալ (ջերմ եւ չորին): Եւ արդ բոյսք, տունկք եւ³⁸ պտուղք եւ սերմանիք³⁹, հաստատին⁴⁰ ի չորից նիւթոց, իսկ հիւթքն՝ ի պտղոց երկրի⁴¹, եւ մարմինք ամենայն կենդանեաց՝ ի չորից հիւթոցն, եւ դարձեալ ամենայն ի

²⁶ F տեսակն

²⁷ C նմանապէս

²⁸ Ex. Fid. 26.50 + ἡτοι ἐθελότρεπτος.

²⁹ Ex. Fid. 26.51 καὶ τὸ εἶναι

³⁰ Ex. Fid. 26.52 + τὸ φύσει

³¹ Ex. Fid. 26.56 *չիք*

³² Ex. Fid. 26.58 *չիք*

³³ Ex. Fid. 26.59 + ἡτοι πάχος

³⁴ F հաստի

³⁵ Ex. Fid. 26.61 χρὴ εἰδέναι, ὅτι

³⁶ Ex. Fid. 26.63 χυμοὶ ... στοιχείοις // B հիւթքն... հիւթոցն

³⁷ Ex. Fid. 26.65 ὕγρον // E F կակոտ

³⁸ Ex. Fid. 26.67 *չիք* բոյսք, տունկք եւ

³⁹ Ex. Fid. 26.67 *չիք* եւ սերմանիք

⁴⁰ E հաստին

⁴¹ Ex. Fid. 26.68 *չիք*

նոսա լուծանին, զի ամենայն խառնեալ առ նա լուծանի, յորմէ⁴² ժողովեալ եղեւ:

Իսկ⁴³ մարդ հաղորդ գոլով անշնչից կենդանեաց եւ անբանից կենդանեացն⁴⁴ հաղորդ է եւ բանատրաց անմարմնոց⁴⁵ մասնակիցն է մտաւ: Քանզի հաղորդի անշնչիցն կենդանեաց⁴⁶ սեռականութեամբն եւ չորից նիւթոց խառնմամբ, իսկ տնկոցն այսոիկ՝ անողականութեամբ եւ բազմանալով եւ սերմականութեամբ⁴⁷ եւ ծննդական զարութեամբն, իսկ անբանիցն՝ այսու ամենայնիւ եւ առաւել յաւժարականութեամբ⁴⁸, այսինքն՝ սրտմտականաւ, ցանկականաւ դիմելութեամբ, զգայականութեամբ եւ շարժական⁴⁹ դիմելութեամբ:

Եւ զգայութիւնք հինգ են այսոիկ՝ տեսութիւն, լսողութիւն, հոտոտել, նաշակել, շաւշափել: Իսկ դիմութեան շարժմանց մանունք⁵⁰ այսոիկ աստի անտի փոփոխել շարժութիւն բոլոր մարմնոյն, գոչումն եւ տուրեւառ շնչոյ, զի սոցա ի մեզ են գործել եւ ոչ գործել:

Իսկ հաղորդի ի ձեռն բանի յանմարմին եւ յիմանալի բնութիւնս որպէս բանական եւ իմացական եւ դատող զիրաւանշիւսն եւ հետեւողս առափնութեան եւ զկատարումն առափնութեան ընդունելով բարեպաշտութեամբ, որով եւ փոքր աշխարհ կոչի եւ է մարդ:

Իսկ⁵¹ մարմնոյն առանձինն են ազգք այսոիկ՝ հատումն, հեղումն, ցնդումն⁵², փոփոխումն: Եւ փոփոխի որակութեամբ, որպէս ջեռնոլ կամ ցրտանալ եւ այլ այդպիսիք: Իսկ հեղումն դատարկութեան եւ սթափման, վասն զի թափի շորութիւն, հիւթութիւն, զովութիւն⁵³ եւ շունչ եւս, որք եւ կա-

⁴² F յորժամ

⁴³ Ex. Fid. 26.71 *χρὴ γινώσκειν*, ὅτι

⁴⁴ C չիք եւ անբանից կենդանեացն

⁴⁵ Ex. Fid. 26.72 չիք

⁴⁶ Ex. Fid. 26.73 չիք

⁴⁷ C սերմնականութեամբ

⁴⁸ C յաւժարութեամբ

⁴⁹ դիմելութեամբ, զգայականութեամբ եւ շարժական *ῥῆμα*. Ex. Fid. 26.76 *ἐπιθυμίαν κατὰ τὴν αἰσθησιν καὶ κατὰ τὴν καθ' ὁρμὴν κίνησιν* // B չիք

⁵⁰ C մասունք

⁵¹ Ex. Fid. 26.86 *χρὴ εἰδέναι*, ὅτι

⁵² Ex. Fid. 26.86 չիք

⁵³ Ex. Fid. 26.88 չիք

րատին դարձեալ վերստին առնոյ⁵⁴ եւ լրութեան: Որով եւ շարժին բնական ախտք⁵⁵ այստիկ՝ քաղց, ծարաւ, նուաղումն եւ այլ այդպիսիք⁵⁶:

Իսկ ընդանի անձին այս է՝ բարեպաշտութիւն, գիտութիւն, իմաստութիւն, հանճար, նախատեսութիւն, կանխագիտութիւն⁵⁷: Իսկ հասարակ հոգւոյ եւ մարմնոյ այս է՝ առաքինութիւն, որ միայն ի⁵⁸ յոգի ամբառնան, որպէս հոգւոյ զմարմին բերող:

Եւ զի⁵⁹ բանականն անձն բնութեամբ տիրող է մարմնոյն⁶⁰, իսկ անբանականին են մասունք երկուս, եւ ոմն ոչ հնազանդի բանի, իսկ ոմն հնազանդի եւ հետեւի բանի: Եւ⁶¹ անհնազանդ բանի է այն, որ կենդանական⁶² կոչի, եւ սերմնական, ծննդական եւ տնկական եւ ականայ շարժումն⁶³, որ սնուցիչն կոչի⁶⁴. եւ անեցուցիչն⁶⁵, որ զաւելուածն ընձեռէ մարմնոց: Զի սոքա անբանականք գորով⁶⁶, որ ուղղադիմին⁶⁷ բանի, այլ բնութեամբ: Իսկ հնազանդն եւ հետեւեալն բանի բարձանի ի ցանկութիւն, սրտմտութիւն, որ եւ հասարակաց անուանէ⁶⁸ այս իբր անբանական կողմ անձին՝ ախտաւոր եւ յաւժարական, եւ⁶⁹ ի սմանէ գոլ դիմելական շարժութիւն եւ յարձակումն:

Եւ զայս արժան է գիտել, զի ի գործոց ոմանք բարիք են եւ ոմանք տգեղք: Եւ ականկալութիւն բարւոյ զցանկութիւն բարի յարգէ, եւ որ ի նմա կեցցէ, փափկանայ նովիմք: Նոյնպէս եւ ականկալութիւն շար գերկեղ եւ աւրինակ է զտրտմութիւն: Եւ⁷⁰ բարւոյ յիշատակ ականկալութիւն աստ կամ ճշմարիտ բարին, կամ զկարծելին միայն ասեմք. նոյնպէս եւ զշարսն իմասցին:

⁵⁴ C առնելոյ

⁵⁵ F ախտք

⁵⁶ Ex. Fid. 26.90 չիք նուաղումն եւ այլ այդպիսիք

⁵⁷ Ex. Fid. 26.9 չիք իմաստութիւն, հանճար, նախատեսութիւն, կանխագիտութիւն

⁵⁸ E F չիք

⁵⁹ Ex. Fid. 26.94 չորի շնորհակց, զոր

⁶⁰ Ex. Fid. 26.94-95 τοῦ ἀλόγου διαιροῦνται γὰρ αἱ δυνάμεις τῆς ψυχῆς εἰς λογικὸν καὶ ἄλογον

⁶¹ C չիք

⁶² Ex. Fid. 26.98 + ὁ καὶ σφυσμικὸν

⁶³ Ex. Fid. 26.99 չիք եւ ականայ շարժումն

⁶⁴ F սնուցիչի

⁶⁵ Ex. Fid. 26.100 τοῦτου δὲ ἐστὶ καὶ τὸ ἀϋζητικόν // B չիք եւ անեցուցիչն

⁶⁶ Ex. Fid. 26.100 չիք անբանական գորով

⁶⁷ E F ուղղադիմին

⁶⁸ C անուն է

⁶⁹ Ex. Fid. 26.103 չորի շնորհակց, զոր τοῦ ἐπιτειοῦς λόγῳ

⁷⁰ Ex. Fid. 26.107 δεῖ δὲ εἰδέναι, ὅτι

ԻԶ. Վասն ճաշակացն, որ են համբ¹:

Ճաշակքն ոմանք հոգետոք են եւ ոմանք մարմնատոք. եւ հոգետոք են, որք նմին հոգւոյ առանձինն են, որպէս այնոքիկ, որք ուսմամբ եւ տեսութեամբ են, որք զոգի կերակրեն²: Իսկ մարմնականք, որք հաղորդութեամբ անձին եւ մարմնոյ գործին եւ վասն այսորիկ մարմնականք անուանին, որք անիւք են մարմնոյ կերակրոց համբ³ կամ մերձատրութեան եւ այլ այդպիսիք: Իսկ միայն մարմնոյ ոչ ոք գտանէ ճաշակս ինչ:

Եւ դարձեալ ի ճաշակացն ոմանք ստոյգ են եւ ոմանք սուտք եւ ոմանք իմացութեամբ են, որք արուեստի եւ տեսութեամբ լինին, իսկ ոմանք մարմնականք եւ զգայականք: Եւ ի մարմնական ցանկութեան համոցն ոմանք են բնութեամբ եւ կարետոք, առանց որոց կեալ անկար է, որպիսիք են կերակրոցն ամենեցուն որ միշտ զպակասութիւն լնուն, պահելով զկեանս, եւ կարետոք հանդերձք, իսկ ոմանք բնականք գոլով, այլ ոչ կարետոք, որպէս են բնական եւ արինատր մերձատրութիւնք (զի սոքա բնութեամբ⁴ ամենայն ազգաց հարկատոք են, իսկ կարելի է առանց սորա⁵ կենդանի գոլ), իսկ ոմանք են, որ ոչ բնութեամբ եւ ոչ ի հարկէ⁶ կարետոք են, որպէս են որկրամոլութիւն⁷, արբեցութիւն, վաւաշտութիւն եւ այլ այդպիսիք⁸, որ լրութիւն որովայնի են եւ արտաքոյ պիտոյից ինչք: Զի ոչ ի հաստատութիւն կենաց պիտոյ են եւ ոչ ի փոխանորդութիւն ազգի, այլ վնասակար միայն երեւին: Արդ որք կամին ըստ Աստուծոյ կենցաղավարիլ, պարտ է զի զբնատրականն եւ զկարետոքն միայն առցեն յանձն, իսկ զերկրորդ կարգէ՝ որ բնական է եւ ոչ կարետոք ի բաց դիցէ եւ նմանապէս ըստ ժամանակին եւ ըստ հասակին⁹ եւ ըստ տպին ներգոր-

¹ Ex. Fid. 27.1 Περι ἡδονῶν

² Ex. Fid. 27.4 չիք որք զոգի կերակրեն

³ Ex. Fid. 27.5 չիք

⁴ Ex. Fid. 27.12 εἰς μὲν τὴν διαμονήν

⁵ Ex. Fid. 27.13 + ἐν παρθενίᾳ

⁶ B C + եւ ոչ

⁷ Ex. Fid. 27.14 չիք

⁸ Ex. Fid. 27.15 չիք եւ այլ այդպիսիք

⁹ F հասարակին

ծէ¹⁰, իսկ այլոցն ամենեցուն, որ ոչ բնութեամբ եւ ոչ կարեամբ են¹¹, ամենեւիմբ հրաժարեցէ¹²:

Իսկ ցանկալի նաշակք գնոսա միայն¹³ պարտ է ասել, ընդ որոց ոչ է հիսեալ եւ զուգեալ տրտմութիւն, եւ ոչ գործեն տրտմութիւնս եւ ոչ ծնանիցին զվնաս այլոց, եւ ոչ պարսաւին անշափութեամբ, եւ ոչ ի փութալի եւ տենչալի գործոց արգելուն կամ իւրեանց ծառայեցուցանեն զմեզ:

¹⁰ F ներգործ B ներգործութեան | ըստ հասակին եւ ըստ տալին ներգործէ // Ex. Fid. 27.19
τρόπου και μέτρου γινομένης

¹¹ Ex. Fid. 27.19 չիք ամենեցուն, որ ոչ բնութեամբ եւ ոչ կարեամբ են

¹² C հրաժարեցի

¹³ C չիք

ԻԷ. Վասն տրամութեան¹:

Տրամութեան տեսակք են չորք՝ հեղձումն, հոգք, նախանձ, եւ ողորմել²:
 Եւ հեղձումն՝ տրամութեան առնեն ձայնս³, իսկ հոգք՝ տրամութիւն ծանրա-
 ցուցանող, եւ նախանձ՝ տրամութիւն ընդ բարիս այլոց, իսկ ողորմել՝
 տրամութիւն ի վերայ չարեաց աստարաց:

¹ Ex. Fid. 28.1 Περί λύπης

² E ողորմեալ

³ տրամութեան առնեն ձայնս // Ex. Fid. 28.3 ἀφωρίαν ἐμποιοῦσα

ԻԸ. Վասն երկեղի¹:

Իսկ երկեղ բաժանի ի մասունս վեց՝ ի ծուլութիւն, ի պատկառանս, յամաթ, ի զարմացումն, ի հիացումն, յաննարակութիւն²: Եւ ի ծուլութիւն երկեղ զ'առ յապայ գործեալն³ յիշեցուցանէ, իսկ պատկառանք՝ երկեղ, որ մնայ նախականաց ակն ունել, եւ բարի է այս ախտս: Իսկ ամաթ՝ երկեղ ի վերայ պիղծ գործոյ, եւ ոչ այս անյոյս ի կենաց: Եւ զարմացումն՝ երկեղ ի մեծ իմն ցնորից ինչ, նոյնպէս եւ հիացումն՝ երկեղ յանսովորական ցնորից: Իսկ անհնարութիւն՝ երկեղ արտաք⁴ անկանելոյ, վասն զի մինչ երկնշիմֆ զրկել ի կենաց⁵, անհնարիմֆ:

¹ Ex. Fid. 29.1 Περί φόβου

² C յաննարութիւն

³ F գործեն C գործելն

⁴ C արտաքոյ

⁵ Ex. Fid. 29.8 τῆς πράξεως

ԻԹ. Վասն սրտմտութեան¹:

Իսկ սրտմտութիւն է եռացումն արեան, որ շուրջ զսրտին, ի գոլորշոյ մաղձոյն² կամ ի խառնելոյ նորա³ ընդ նմա, վասն որոյ մաղձել եւ մաղձաւորութիւն կոչի: Իսկ է երբեմն, զի եւ տրտմութիւն կամաւ լինի առ փոխարէնս տալ, զի մինչ բռնադատիմ կամ կարծեմք բռնադատիլ, սրտմտիմք բարկութեամբ, եւ խառն⁴ եղիցի յայնժամ ախտից ցանկութեան ընդ ախտս բարկութեան:

Իսկ բարկութեանն տեսակք երիս՝ բարկութիւն, որ կոչի մաղձ եւ դառնութիւն⁵, զի բարկութիւն մինչ սկսանի շարժել, սրտմտութիւն եւ մաղձ կոչի: Եւ մոլեգնել, որ է յամառել ի բարկութիւն, այսինքն՝ յոխակալութիւն, եւ ասի սա ի շինուածոյ մարդոյն եւ յուսմանէ սովորութեան: Եւ մինչ երեւի⁶ բարկութիւն, խնդրէ զժամ տանջել զոմն, ասի եւ այս առ ենթակայ սորա:

Իսկ սրտմտութիւն է իբրեւ զդանին, զինակալ⁷ խորհրդոց եւ⁸ դատախագ ցանկութեան սրտին, քանզի յորժամ ցանկանամք գործոյ⁹ ինչ եւ արգելումք¹⁰ յումեմէ, սրտմտութեամբ լինիմք առ նա, իբրեւ զբռնադատեալս, յայտ է զի ի ցանկութենէ սրտին դառնութեան դատաստանաւ գործոյն այնորիկ, որք պահապանք են բնական կարգացն:

Իսկ այնմ, որ ոչ հնազանդ է¹¹, եւն այսոքիկ՝ սնուցանողականն, ծննդականն եւ տոփական շարժութիւն: Եւ անուանի սնուցողական եւ ծննդական¹² անեցողականն, իսկ տոփական կոչի կենդանական դիմելութիւն:

Իսկ սնուցողականն ունի մասունս եւթն¹³ ներսաբարշականն՝ այն, որ յինքն քաշէ զկերակուրն, ի վայրաձգողականն, որ ըմբռնէ զկերակուրն եւ ոչ թողու յանկարծակի ձգել յինքն, եւ փոխադրականն, որ փոխադրէ զկերա-

¹ Ex. Fid. 30.1 Περι θυμοῦ

² C մաղձին

³ C խառնիլ չի/ս խառնելոյ նորա

⁴ Ex. Fid. 30.5 μικτόν // C E F խառնումն

⁵ Ex. Fid. 30.7-8 + καὶ μῆνις καὶ κότος

⁶ E F արեւ կա | հում. չի/ք մինչ երեւի

⁷ իբրեւ զդանին, զինակալ *հմմտ.* Ex. Fid. 30.12 τὸ δορυφορικόν // C E F + ինչ, զի նա է ոխակալ

⁸ Ex. Fid. 30.12 τοῦ λογισμοῦ // B E F սրտին

⁹ F գործ

¹⁰ C արգելիմք

¹¹ C եւ Ex. Fid. 30.17 + λόγῳ

¹² C + եւ

¹³ ունի մասունս եւթն // Ex. Fid. 30.20 δυνάμεις εἰςὶ τέσσαρες

կուրն առ հիւթս պղղամաց¹⁴, եւ արտաբականն՝ այն, որ արտաբա առաքէ զաւելորդսն ընդ որսայս:

Եւ դարձեալ¹⁵ կենդանական զաւրութիւնն եւ մասունն երեւ¹⁶ ոմանք անձնականք, ոմանք բնականք, ոմանք կենդանականք: Եւ անձնականք եւ՝ որ ընտրութեամբք եւ, այսինքն՝ որ նախընտրութեամբք դիմեալ լինին, իսկ բնականքն¹⁷ առանց ընտրութեան, այլ ի հարկէ, իսկ կենդանականքն՝ անընտրելի եւ առանց հարկի¹⁸:

¹⁴ Ը պղղամաց Բ բղղամաց // Ex. Fid. 30.22 չիք

¹⁵ Ex. Fid. 30.25 չրի՞նք ձէ՞նում, թէ

¹⁶ Ex. Fid. 30.25 չիք մասունն երեւ

¹⁷ Ex. Fid. 30.30 փսիկա՞յ // Բ բնականքն

¹⁸ որ նախընտրութեամբք դիմեալ լինին, իսկ բնականքն՝ առանց ընտրութեան, այլ ի հարկէ, իսկ կենդանականքն՝ անընտրելի եւ առանց հարկի // Ex. Fid. 30.27-32 ή καθ' ὅρμην κίνησις καὶ ἡ αἴσθησις. Τῆς δὲ καθ' ὅρμην κινήσεως ἐστὶ τό τε κατὰ τόπον μεταβατικὸν καὶ κινητικὸν ὅλου τοῦ σώματος καὶ φωνητικὸν καὶ ἀναπνευστικόν· ἐν ἡμῖν γάρ ἐστι ποιῆσαι ταῦτα καὶ μὴ ποιῆσαι. Φυσικαὶ δὲ καὶ ζωτικαὶ αἱ ἀπροαίρετοι. Καὶ φυσικαὶ μὲν ἡ θρεπτικὴ καὶ αὐξητικὴ καὶ σπερματικὴ, ζωτικὴ δὲ ἡ σφυγμικὴ· αὗται γὰρ καὶ θελόντων καὶ μὴ θελόντων ἐνεργοῦσι

Լ. Վասն անուրջոց¹ եւ ցնորից²:

Իսկ անուրջոցն³ են ազգք չորք՝ երազք, անուրջք, տեսութիւնք եւ ցնորք⁴: Եւ են անուրջք⁵ զարութիւն անբանական մասին⁶ անձին, գործելով ի ձեռն զգայարանացն, որ եւ անուանի զգալի: Իսկ անուրջք այնք են ենթակայք զգայութեան, եւ ցնորք են⁷՝ որք ստորադրին ընդ զգալեամբ⁸: Իբր այն զի տեսութիւն է տեսողական⁹ զարութիւնն, իսկ տեսական¹⁰ այն ինչ, որ ենթակայի տեսողականին, այսինքն՝ սեռ քաղի, փայտի եւ այլ¹¹ այսպիսեաց¹²: Իսկ ցնորք են պատահումն ինչ անբանական մասին անձին ի ցնորից ինչ եղեալ, որ ոչ կարէ ենթակալ¹³ զգայութեան եւ ոչ իմիք: Իսկ երեւումն¹⁴ կոչի պատահումն ինչ լեալ տուեալ յստուծոյ ի բանական մասն անձին անբանաբար, որ է նախատեսութիւն անձին եւ հեռի ի մասանց ցնորից լեալ¹⁵: Իսկ գործարան¹⁶ երազականացս է առաջի կոյս գոգ ուղղոյ¹⁷ իւելապատակացն:

¹ C անբրջոց

² Ex. Fid. 31.1 Περί τοῦ φανταστικοῦ

³ C անբրջոցն

⁴ Ex. Fid. 31.2 չիք Իսկ անուրջոցն են ազգք չորք՝ երազք, անուրջք, տեսութիւնք եւ ցնորք

⁵ C երազք

⁶ Ex. Fid. 31.2 չիք

⁷ եւ ցնորք են // Ex. Fid. 31.3 τῇ φαντασίᾳ

⁸ C զգալեամբն

⁹ B տեսազգական

¹⁰ C տեսականն

¹¹ Ex. Fid. 31.5 չիք փայտի եւ այլ

¹² C այսպիսեացդ

¹³ C ենթակայանալ B ենթականալ

¹⁴ E երեւումն

¹⁵ Իսկ ցնորք են պատահումն ինչ անբանական մասին անձին ի ցնորից ինչ եղեալ, որ ոչ կարէ ենթակալ զգայութեան եւ ոչ իմիք: Իսկ երեւումն կոչի պատահումն ինչ լեալ տուեալ յաստուծոյ ի բանական մասն անձին անբանաբար, որ է նախատեսութիւն անձին եւ հեռի ի մասանց ցնորից լեալ // Ex. Fid. 31.6-8 Φαντασία δέ ἐστὶ πάθος τῆς ἀλόγου ψυχῆς ὑπὸ φανταστοῦ τινος γινόμενον, φάντασμα δὲ πάθος διάκενον ἐν τοῖς ἀλόγοις τῆς ψυχῆς ἀπ' οὐδενὸς φανταστοῦ γινόμενον

¹⁶ C գործական

¹⁷ Ուղղել ենք ըստ՝ Ex. Fid. 31.9 κοιλία (σύνιμ. ԼԲ. գոգ է ուղղոյն – Ex. Fid. 33.8 κοιλία τοῦ ἐγκεφάλου, ԼԳ. գոգ ուղղոյն լինելով, զոր արտաքին խելապատակք կոչեն – 34.18 κοιλία τοῦ ἐγκεφάλου, ἣν καὶ παρεγκεφαλίδα καλοῦσι) // B E F գողեղոյ C գողեղոյ

ԼԱ. Վասն զգայութեան¹:

Զգայութիւն է գաւռութիւն անձին ծանուցական իմն, այսինքն՝ ընտրողական նիւթականաց: Իսկ զգայարանն են անդամ², որով զգամ³, իսկ զգալիք են, որ ենթակայեն զգալեացն ի ստորեւ: Իսկ իմացող է կենդանին ունող զգայարանն, եւ են զգայարան մասունք հինգ, նոյնպէս եւ զգացող⁴ հինգ:

Առաջին զգայարան⁵ ակն, տեսարանն. եւ գործարան նորա՝ երակքն, որ յառաջմէ կողմանէ⁶ ուղղոյն ելեալ ձգին յակն կոյս՝ նուազ յոյժ եւ լի ուղեղաբամ անաւար եւ լուսատու ջրով⁷: Եւ զգայ տեսարան, ըստ նախկին բանի՝ զամենայն⁸ գոյնս, զի ընտրէ զգոյն եւ զատուցող գունոյ սեռ, զմեծութիւն իւր, զհատուած⁹ եւ զտեղի ուր գոյ, զորպէսն, զորքան, զբանի¹⁰, զքիւն, զշարժականութիւն, զկայունն, զդուրկ, զխոշոր, զհարթն եւ զանհարթն¹¹, զսուր, զրուր, զորակութիւն տեղեացն, եթէ¹² խոնաւ է կամ չորին:

Երկրորդ զգայարան՝ լսելիք, եւ զգալի սորա՝ լուր, որ զգայ զգոչմուն¹³ եւ զձայն: Եւ որոշէ ծանուցմամբ զփոյթն եւ զյարմարն¹⁴, զխոշորն եւ զոդորկն¹⁵, զմեծութիւն եւ զչափատրն, զբանականն եւ զաննշանն եւ զամենայն ճշդումն եւ ճեղքումն աւոյն¹⁶: Եւ գործարանն են նմա, որ յուղղումիջնոյ

¹ Ex. Fid. 32.1 Περί αισθήσεως

² Ex. Fid. 32.3 τὰ ὄργανα ἡγουν τὰ μέλη

³ Ex. Fid. 32.3-4 δι' ὧν αἰσθανόμεθα // B չիք որով զգամք

⁴ C զգացող

⁵ Ex. Fid. 32.7 αἴσθησις // B զգայարանին

⁶ C չիք

⁷ երակքն, որ յառ աջմէ կողմանէ ուղղոյն ելեալ ձգին յակն կոյս՝ նուազ յոյժ եւ լի ուղեղաբամ անաւար եւ լուսատու ջրով // Ex. Fid. 32.7-8 τὰ ἐξ ἐγκεφάλου νεῦρα καὶ οἱ ὀφθαλμοὶ

⁸ Հուն. չիք

⁹ Ex. Fid. 32.10 τὸ σχῆμα

¹⁰ զորպէսն, զորքան, զբանի // Ex. Fid. 32.11 καὶ τὸ διάστημα τὸ μεταξὺ καὶ

¹¹ Ex. Fid. 32.12 καὶ ἀνώμαλον // B C չիք եւ զանհարթն

¹² Ex. Fid. 32.13 + ὕδατώδης, εἴτε γεώδης ἡγουν

¹³ C զգոչմունս

¹⁴ C F գլամրն | զփոյթն եւ զյարմարն // Ex. Fid. 32.15 τὴν ὀξύτητα καὶ τὴν βαρύτητα

¹⁵ C F զըղորկն

¹⁶ Ex. Fid. 32.16 չիք եւ զչափատրն, զբանականն եւ զաննշանն եւ զամենայն ճշդումն եւ ճեղքումն աւոյն

թոյլ երակին յունկն կոյս, որք լի են գոլորշիւ շնշոյ եւ անշարժութիւն ունկան, զի¹⁷ միայն մարդ եւ կապիկ ոչ կարեն շարժել զունկն:

Երրորդ զգայարան՝ հոտոտելիք, որ ներգործեն ի ձեռն ըռընգաց, որք առաքեն զգոլորշի նիւթոց յամանս ուղղոյն, որ եւ թափանցիկն լինին յայնկոյս յառաջի կողմանէ ընդ բոլորումն մզան խելապատակացն: Եւ է սա զգայարան ամենայն գոլորշեաց էիցս: Իսկ գոլորշիքն համազգի բարժանմունք ունին անուշահոտութեան եւ ժանտահոտութեան եւ որ ի միջի սոցին, որոշմունք բազմազանք¹⁸: Եւ լինին անուշահոտութիւնք ի հիւթոցն ի սեռս ոմանս էիցն որք անպակաս եւ բարտք առմամբ խառնին: Իսկ որք զմիջակն խառնին, զմիջակն ունին հոտ, իսկ որ փոքրագոյն իմն կամ յոյժ պակասագոյն եւ թիւր առեալ ունի զգոլորշի նիւթոցն, նա զժահահոտութիւն արտադրէ:

Քառ զգայարան՝ նաշակելիք, եւ զգալի նմա՝ համք հիւթոց, եւ են ամենայն կերակրոց եւ ըմպելոց¹⁹ եւ հիւթոց զգալի եւ իմացող²⁰: Եւ գործարան սմա²¹ ծայր լեզուոյ եւ վերին ձեղունք բերանոյն, որ ուրանիկոս կոչի յառաջնոցն, եւ կոկորդ, որ է բերան փաղերթին²², յորս իջանեն յուղղոյն երակք ստուարք եւ ընդարձակք եւ բազումք, որք պատմեն զիշխանականն զոլ ուղղոյ ի վերայ ամենայն մարմնոյն ի ծանուցումն զգալեացն: Իսկ նաշակելեաց որակութիւնքն, որ կոչեալ են եւ համք հիւթոցն, են այսոքիկ՝ փաղք, դժուար, փացախոտ, թթու, փոդոդ, դառն, կծու, աղի, գէր, նիհար. ի սոցանէ ոմանք՝ ջերմ կամ ջերմ եւ չորին, ոմանք՝ զով կամ զով եւ չորին, ոմանք՝ զչորեքին ունին²³: Իսկ չորս ի սոցանէ անորակ է, զի մի ի հիւթոց է ինքն առանձին, իսկ փոդոդն՝ յաւելուած ցրտութեան, եւ կծու՝ յաւելուած հրոյ²⁴:

Հինգերորդ զգայարան՝ շաւափելիք, որ եւ հասարակաց է ամենայն կենդանեաց, որ եւ լինի առ որ յամենայն մարմինն երակք իջանեն յուղղոյ անտի, որք են բազում յոյժ²⁵: Եւ ամենայն զգայարան առանձին ունի զիւրն

¹⁷ յունկն կոյս, որք լի են գոլորշիւ շնշոյ եւ անշարժութիւն ունկան, զի // Ex. Fid. 32.17 καὶ τῶν ὠτῶν ἡ κατασκευή

¹⁸ որոշմունք բազմազանք // Ex. Fid. 32.23 ὁ μήτε εὐὼδης ἐστὶ μήτε δυσὼδης

¹⁹ F ըմպելոյ C ըմպելեաց | Ex. Fid. 32.26 չիք համք հիւթոց, եւ են ամենայն կերակրոց եւ ըմպելոց

²⁰ F իմացող C իմացուածոյ

²¹ C սորա

²² Ex. Fid. 32.28 չիք յառաջնոցն, եւ կոկորդ, որ է բերան փաղերթին

²³ ոմանք՝ ջերմ կամ ջերմ եւ չորին, ոմանք՝ զով կամ զով եւ չորին, ոմանք՝ զչորեքին ունին // Ex. Fid. 32.33 ἡ γερύσις διαγνώστικῇ

²⁴ ցրտութեան, եւ կծու՝ յաւելուած հրոյ // Ex. Fid. 32.35 τῆς ἀσθηρότητος

²⁵ որք են բազում յոյժ // Ex. Fid. 32.38 διὸ καὶ ὅλον τὸ σῶμα

զգալի, եւ շաւշափելիք հետեւին իւր ջերմ եւ ցուրտ, կակուղն եւ խոշոր, ծանր, քերթեւ, կարծր²⁶, զի սոքա միայն ի շաւշափելեաց քննին:

Իսկ շաւշափելեաց եւ տեսանելեաց հասարակաց այս է խոշորն եւ ուղորկն²⁷, չորին²⁸ եւ խոնավ, թանձր եւ մանր, վերոյ եւ ներքոյ, մեծ եւ փոքր, եւ տեղի, թաւն եւ լերկն, բոլոր եւ երկայն եւ այլ այսպիսիք, յորժամ միւսովն տեսանելով եւ միւսովն շաւշափելով հասարակաց եւ միապէս զգայ: Նոյնպէս եւ յամենայն անձինն մերձենալով զգայ ինչ յիշողութեամբն եւ ծանաւութեամբն, այսպէս եւ զթիւք մինչեւ երկուս եւ երիս եւ զայս²⁹ զսակաւս եւ զդիրափմացս: Այլ զայսոսիկ տեսարան առաւել ընտրէ, քան³⁰ զշաւշափելի:

Նաեւ զայս գիտել պարտ է, զի զայլ զգայարանքն երկու երկու ստեղծ Աստուած ի կենդանիսն³¹, որ եթէ մինն ախտասցի ինչ, միւս այլն վնասեցէ զպէտսն: Զի երկու ակն եւ ունկն երկու եւ երկու պինչ ըռընգաց եւ լեզու երկու էստեղծ՝ առ ոմանս բաժանեալ լեզու, որպէս յաւձս³² եւ ի նման սոցին, եւ յոմանս՝ միատրեալս, որպէս ի մարդ եւ յայլ կենդանին³³: Իսկ շաւշափելիքն յամենայն մարմինն, բայց միայն յոսկերաց եւ ջլաց, ըղընգանցն եւ եղջիւրոց, մագոյ եւ աղեաց եւ այլ այդպիսեաց, ամենայնի առ հասարակ է³⁴:

Եւ զայս եւս իմա, զի ակն դէմ յանդիման ուղղորդ զկէտ իմն միայն տեսանէ, իսկ հոտոտելիք եւ լսելիք ոչ ուղղորդ ընդդէմ միայն գործեն³⁵, այլ յամենայն կողմանց հոտոտէ եւ լսէ³⁶: Իսկ շաւշափելի եւ ճաշակելի ոչ ուղղորդ եւ ոչ յամենայն կողմանց ճանանչեն, այլ յայնժամ միայն, յորժամ մերձենայ եւ յարի³⁷ ինչ ի նոսա³⁸:

²⁶ Ex. Fid. 32.40 καὶ γλίσχυρον καὶ κραῦρον

²⁷ B C F ըղորկն

²⁸ C չորն

²⁹ C զայլ

³⁰ E F չիք

³¹ Ex. Fid. 32.51 չիք ի կենդանիսն

³² C աւձ

³³ Ex. Fid. 32.54 չիք եւ յայլ կենդանին

³⁴ Ex. Fid. 32.56 չիք ամենայնի առ հասարակ է

³⁵ Ex. Fid. 32.58 չիք

³⁶ Ex. Fid. 32.58 չիք հոտոտէ եւ լսէ

³⁷ B E F յարին

³⁸ Ex. Fid. 32.60 τοῖς ἰδίοις τοῖς

ԼԲ. Վասն իմացականին¹:

Իսկ իմացականին են այսոքիկ՝ դատողություն եւ հանդուրին եւ դիմելություն առ ներգործությունս եւ պատճառքն, եւ փախուստ² ի գործոց, իսկ առանձին³ ինչ ի միտ առնուլ զիմացականն ինչ եւ զառաքինություն եւ զհասու լինել ինչ եւ զբանս⁴ հնարագիտութեան արուեստից եւ զխորհրդականություն եւ զյառաջընտրութեան զարություն: Սա այսինքն որ ի ձեռն երագոց ծանուցանէ մեզ զ'առ յապա լինելոցն, զոր նշմարիտ դիպություն ասացին գոլ պիթագորացիքն հետեւեալք հեբրայեցոցն: Իսկ գործարան նորա ելով որ ի միջի գոգ է ուղղոյն եւ որ ի նմա շնչատու ոգի, ուր յիշողություն եւ վերստին յիշողություն եւ ինքնայիշողություն է⁵:

¹ Ex. Fid. 33.1 Περί τοῦ διανοητικοῦ

² C F պատճառին եւ (C չիք) փախուստ

³ C առանձն

⁴ C զբան B զբանն

⁵ Ex. Fid. 33.9 չիք ուր յիշողություն եւ վերստին յիշողություն եւ ինքնայիշողություն է

ԼԳ. Վասն յիշողականիմ¹:

Յիշողական է յիշողութեան եւ վերստին յիշողութեան պատճառ եւ գանձարան, զի յիշողութիւն է ի զգայութենէ² ինչ եւ յիմացութենէ³ թողեալ ինչ ցնորս: Վասն զի անձն զգալիսն⁴ զգայարանամբ իմանալ կարէ, այսինքն՝ զգայ եւ լինի ինքնիմայ⁵, իսկ զիմանալիս ի ձեռն մտաց իմանասցի⁶, եւ լինի իմացումն, որով եւ մինչ գտեսակս⁷ նոցա, զոր ինչ զգաց կամ իմացաւ, ամբողջ պահեսցէ, այս իսկ լինի յիշողութիւն:

Այլ գիտել պարտ է, զի իմանալեացն մերձումն եւ շաւշափումն⁸ ոչ գոյ, բայց միայն ուսանել մտադրելով⁹, զի իմանալիք¹⁰ յինքն յինքենէ ի¹¹ յիշումն գայցէ, իսկ զգալիքն ընդ զգայութեամբ անկեալ մերձենալ¹² լեալ յիշեսցի¹³: Եւ իմանալիքն, զոր եւ բարիոք¹⁴ է ուսեալ, զայն յիշեն, իսկ գոյութեան նոցա յիշողութիւն ոչ ունիմք:

Իսկ վերստին յիշողութիւն կոչի այն, որ ի մոռացութենէ իմիք անյայտ եղեալ եւ դարձեալ յիշմամբ նորոգեսցի: Եւ մոռացումն է հեռանալ ինչ ի յիշեցելոցն: Արդ իմացական ինչ զգայարանաւ ընտրեալ ի նիւթոցն տուեալ լինի իմացականին կամ բանականին (զի սոքա երկուս են մի ելով), զոր առեալ ընտրէ եւ դատի¹⁵ եւ ճշգրտեալ առաքէ առ յիշողականն: Իսկ գործարան յիշողականին յետին գոգ ուղղոյն լինելով, զոր արտաքին խելապատակք կոչեն, եւ ի նմա իսկ է շնչատու ոգի:

¹ Ex. Fid. 34.1 Περί τοῦ μνημονευτικοῦ

² Ex. Fid. 34.4 + τῆς κατ' ἐνέργειαν φαινομένης ἡ σωτηρία αἰσθήσεως τε

³ C յիմացողութենէ

⁴ F զգալի

⁵ Ex. Fid. 34.6 δόξα B իմա

⁶ Ex. Fid. 34.6 չիք

⁷ C ի տտակս

⁸ մերձումն եւ շաւշափումն // Ex. Fid. 34.9 ἀντίληψις

⁹ Ex. Fid. 34.10 ἡ φυσικῆς ἐννοίας, οὐ γὰρ ἐξ αἰσθήσεως

¹⁰ Ex. Fid. 34.10 αἰσθητά

¹¹ E F չիք

¹² B C մերձենալի

¹³ Ex. Fid. 34.10 չիք իսկ զգալիքն ընդ զգայութեամբ անկեալ մերձենալ լեալ յիշեսցի

¹⁴ Ex. Fid. 34.11 չիք

¹⁵ C դատէ

**ԼԴ. Վասն որ¹ ի ներքոյ ներտրամադրական բան²
 եւ արտաքին արտաբերական³:**

Դարձեալ բաժանի բանականութիւն անձին որ ի ներքոյ ի նմա տրամադրի⁴ եւ որ արտաքին արտաբերի, որ⁵ ձայնական եւ աղական է⁶: Եւ է այն, որ յանձն ստորոգեալ է բան, շարժումն անձին միայն ի բանական զարուրթիւն իւր թափուն գործել⁷, առանց ձայնի իմիք. որով միշտ անդադար լութեամբ մարմնոց կատարեալ⁸ բանիւ խորհելով խաւսիմք յանձինս, նաեւ յանուրջս եւ ի տեսեանս խաւսիմք կատարելապէս եւ ի խաւսեալսն դատիմք եւ յիշելով պահեմք⁹. եւ եւս առաւել այս է ցոյց բանականութեանս մերոյ: Վասն զի որ ի ծննդէն խոլք ելով եւ կամ յախտէ պատահմանէ իմիք անձայն լեալ ումեք, ոչինչ պակասին ի բանականութենէ: Իսկ որք յայտնին բանք ի ձեռն ձայնի, որ գործէ զպատասխանիս, այն որ ի ձեռն բերանոյ եւ լեզուի եւ աղից ներգործին, որով եւ յայտ լեալ անուանի, եւ է նա քարոզ, որ ի ծածուկ բանին¹⁰ մտածութեան, եւ սովաւ խաւսունս եւ բանական կոչիմք մեք:

¹ E որոյ

² Ex. Fid. 35.1 λόγος // C E F է

³ Ex. Fid. 35.1 Περι ένδιαθέτου λόγου καί προφορικοῦ

⁴ E տրամադրի Ex. Fid. 35.2 + λόγον

⁵ E F չիք

⁶ Ex. Fid. 35.3 չիք որ ձայնական եւ աղական է

⁷ C գործել | Ex. Fid. 35.4 չիք իւր թափուն գործել

⁸ Ex. Fid. 35.5 չիք

⁹ Ex. Fid. 35.6 չիք կատարելապէս եւ ի խաւսեալսն դատիմք եւ յիշելով պահեմք

¹⁰ Ex. Fid. 35.10 չիք որ ի ծածուկ բանին

ԼԵ. Վասն ախտից եւ ներգործութեան¹:

Ախտ փաղանունաբար կոչին, վասն զի ասին ախտ եւ մարմնական իմն, որպէս հիւանդութիւն եւ վէրք. կոչին ախտ հոգեւորք, որք են ցանկութիւն, սրտմտութիւն: Եւ է հասարակաց եւ ազգային ախտ կենդանոյն, որոյ հետեւի² ցանկութիւն եւ տրտմութիւն³, վասն զի ախտից հետեւի տրտմութիւն: Եւ ոչ եթէ ինքն տրտմութիւնն ախտ է (վասն զի մինչ ախտանայ ինչ անզգայական ոք, ոչ ցաւ⁴ եւ ոչ եթէ ախտ այն է, որ ցաւն է), այլ զգայութիւն ախտին: Եւ պարտ է նմա զի արժանի բանի իցէ, այսինքն՝ մեծ այնքան մինչ զգայութեամբ ենթակայիլ:

Այլ անձնական ախտից են սահմանմ աշտփիկ. ախտ է իմացական⁵ շարժութիւն յաւժարականի զարութեան ի յիմացումն ինչ շարի կամ բարւոյ: Եւ այլազգ. ախտ է անբանական շարժութիւն անձին առ կարծիս ինչ բարւոյ կամ շարի: Որ եւ ի կարծիս բարւոյ իմիք զցանկութիւն յինքն շարժէ, իսկ կարծիք շարին՝ զսրտմտութիւն: Իսկ հասարակաց, այսինքն՝ ազգային ախտ այսպէս սահմանեալ լինի. ախտ է շարժութիւն յայլմէ յայլ ինչ: Իսկ ներգործութիւն՝ շարժութիւն գործական, եւ գործական է ի նմանէ եւ նովա⁶ շարժել: Նոյնպէս եւ սրտմտութիւն ներգործութիւն իմն է սրտմտականին, իսկ ախտ՝ երկոցունց կողմանցն⁷ եւ ընդ նոսա ամենայնի մարմնոյն, յորժամ ի սրտմտութենէն բռնութեամբ ձգեալ լինի առ ներգործութիւն: Վասն զի յայլմէ յայլ իմն եղեւ սմա շարժութիւն, որ եւ անուանի ախտ: Եւ դարձեալ այլով արինակաւ կոչի ախտ եւ ներգործութիւն, քանզի ներգործութիւն է ինչ բնական շարժութիւն, իսկ ախտ՝ արտաբոյ բնութեանն, եւ ըստ այսմ բանի՝ ախտ անուանի եւ ներգործութիւն, յորժամ ոչ բնականաբար շարժեալ յուզեսցի՝ կամ յինքենէ կամ յայլմէ իմեքէ: Վասն այսորիկ որ ի ձեռն երակաց ստին շարժութիւն է՝ իբրեւ բնական ներգործութիւն ելով, իսկ որ յամենայն երակաց լինի իբրեւ զանշափ ինչ, եւ ոչ բնական, սա ախտ եւ ոչ ներգործութիւն գոլով:

¹ Ex. Fid. 36.1 Περί πάθους καὶ ἐνεργείας

² C E հետեւին

³ Ex. Fid. 36.5 λύπη // B C սրտմտութիւն

⁴ C ցաւի

⁵ Ex. Fid. 36.9 ἡρ

⁶ Ex. Fid. 36.14 ἡρ եւ նովա

⁷ Ex. Fid. 36.16 + τῆς ψυχῆς

Այլ եւ ոչ ամենայն շարժումն ախտատրականին ախտասցի, այլ խստագոյնքն եւ որք ընդ զգայութեամբ անկանին, վասն զի նուագքն եւ անգգալիքն ոչ ուրեք ախտք գոյով. վասն զի հարկ է ախտից ունել մեծութիւն արժանի բանի: Վասն այսորիկ խառնի ընդ սահման ախտի եւ այս ինչ, որ լինի շարժութիւն ինչ զգալի, վասն զի փոքր մի շարժութիւն, որ ծածկին ի զգայութենէ, ոչ կարեն նոքա ախտս առնել:

Այլ պարտ է գիտել, զի բանական⁸ անձն կրկին ունի զաւրութիւն՝ ոմն գիտնական եւ ոմն կենդանական: Եւ գիտնականքն են այսոքիկ՝ միտք եւ իմացութիւն, հաճութիւն, դիտումն եւ զգայութիւն, իսկ կենդանականքն այսոքիկ՝ յաւժարութիւն, խորհել, ընտրողութիւն, դիմելութիւն: Այլ զի յայտնաբանեսցոյք զասացեալս, զգոյշաբանեսցոյք մանրամասնաբար եւ նախ զգիտութենէ ասասցոյք:

Զտեսութեան եւ զգայութեան սակս բանի յիւրում կարգի⁹ բաւականապէս գրեցի նախ¹⁰: Արդ ի ձեռն զգայութեան յանձն պատրաստի ախտ, որ եւ անուանի իմացումն կամ¹¹ ցնորս, եւ իմացութենէ¹² լինի հաճութիւն: Եւ ապա իմացութիւն եւ ընտրողութիւն հանելեացն յայտնէ զստոյգն եւ¹³ զոչ ստոյգն, զոլ բաղդատել¹⁴, վասն այսորիկ իմացութիւն եւ գիտութիւն անուանի: Եւ այսպէս իմացողականին եւ դատողականի¹⁵, եւ ընտրողականի եւ սահմանողի զստոյգն եւ զոչն միտք անուանի:

Նաեւ այլազգ. իմացոյք, եթէ առաջին շարժութիւն մտաց¹⁶ իմացութիւն կոչի, իսկ այն ինչ զոր իմացաւ, իմացական անուանի, որ յորժամ յամեսցէ ի միտսն, տպատրի յանձն, զոր իմացան, սմա խորհուրդ ասի: Իսկ խորհելն յորժամ միեւնոյն կայցէ զինքն քննել եւ դատել, իմացումն անուանի: Իսկ իմացումն յորժամ ընդարձակի, առնէ զխորհելն, որ ներհաղրեալ¹⁷ բան

⁸ Ex. Fid. 36.30 ἡ ἡμετέρα

⁹ Ex. Fid. 36.35 չիք յիւրում կարգի

¹⁰ գրեցի (B գրեցին) նախ // Ex. Fid. 36.35-36 ἐν τοῖς προελεγεμένοις εἴρηται

¹¹ Ex. Fid. 36.37 չիք իմացումն կամ

¹² Ex. Fid. 36.37 ἐκ δὲ τῆς φαντασίας

¹³ C կամ

¹⁴ C բաղդատեալ // Ex. Fid. 36.38 κρίνει τὸ ἀληθές

¹⁵ Եւ այսպէս իմացողականին եւ դատողականի // Ex. Fid. 36.39 ἀπὸ τοῦ διανοεῖν καὶ διακρίνειν

¹⁶ Ex. Fid. 36.41 τοῦ νοῦ // B չիք

¹⁷ E F ներհաղրել

անուանի, որոյ սահմանադրոջն, որք զսա բացորոշեցին¹⁸, այսպէս ասեն. եթէ անձն¹⁹ ամենայնիւ կատարեալ ի խորհուրդ եւ ի բանականութիւն լեալ առանց իմիք ձայնի շնչման, յորմէ ձայնատուն իսկ բանատրութիւն բաղդատեալ յայտնի գայ, այսինքն՝ ի ձեռն լեզուի ասացեալ: Արդ այժմ մինչ ասացաք վասն իմացականի զաւրութեանն անձին²⁰, ասասցոք եւ վասն կենդանականին, այսինքն՝ վասն յաւժարականացն:

Պարտ է գիտել, զի տնկեալ իմն է յանձն²¹ զաւրութիւն ինչ անձնական²², որ յաւժարական եւ դիմելական կոչի բնական ինչ եւ ամենայնի, զոր ինչ գոյականութեամբ ունի անձն բնական, յինքն ժողովեալ կապէ: Վասն զի գոյութիւն էական եւ կենդանական եւ շարժական մտաւ եւս եւ զգայարանաւ յաւժարական է՝ իբր կարաւտ իմն իւրում ի լրումն ածողի: Վասն այսորիկ այսպէս սահմանեցին զբնական կամքն. «եթէ կամք է յաւժարութիւն բանատրական եւ կենդանական, հաստատեալ միայն ի բնականացն²³», որովհետեւ կամք է նոյն ինքն բնական եւ յաւժարական²⁴ պարզ իմն զաւրութիւն անձին²⁵: Որով եւ անբանից յաւժարականն իբրեւ ոչ բանական ելով ոչ կոչի յաւժարութիւն:

Իսկ կամելն է որպիսութիւն ինչ եղեալ կամք բնութեամբ, այսինքն՝ բնական բանական յաւժարութիւն ումեմն գործոյ, վասն զի ստորակայի յանձն մարդոյ զաւրութիւն ինչ²⁶ բնականաբար, յաւժար²⁷ ցուցանող²⁸: Եւ յորժամ բնականն²⁹ այն յաւժարութիւն բնատրականաբար շարժեսցի յայս ինչ ներգործութիւն³⁰, նա կոչեսցի կամք, վասն զի կամք է յաւժարութիւն եւ անձուկ բնականաբար գործոյ իմիք:

¹⁸ Ex. Fid. 36.46 *չիք* որք զսա բացորոշեցին

¹⁹ Ex. Fid. 36.46 *κίνημα ψυχῆς*

²⁰ Ex. Fid. 36.49 *չիք*

²¹ Ex. Fid. 36.51 + *φυσικῶς*

²² Ex. Fid. 36.51 *չիք*

²³ *Ը բանականացն*

²⁴ Ex. Fid. 36.57 *λογικῇ ὁρεξίς*

²⁵ Ex. Fid. 36.58 *չիք*

²⁶ *F ին*

²⁷ *Ը յաւժարէ*

²⁸ *բնականաբար, յաւժար ցուցանող* // Ex. Fid. 36.62 *τοῦ λογικῶς ὁρέγεσθαι*

²⁹ Ex. Fid. 36.62 *τοῦ λογικῇ*

³⁰ Ex. Fid. 36.63 *πρός τι πράγμα*

Իսկ կոչին կամք եւ նոցա, որոց ընդ մերով ենթակային եւ որոց ընդ մեաւ ստորոգին, այսինքն՝ կարելեաց եւ անկարելեաց³¹, քանզի կամիմք բազում անգամ ուտել կամ պահել³², ննջել կամ հսկել³³ եւ զայլ այդպիսիք: Եւ սոքա ամենեւեան³⁴ ընդ մեաւ ստորոգին եւ կարելի գոն: Եւ դարձեալ կամեսցոմք թագաւոր³⁵ կամ անմահս լինել, եւ այդ ոչ ընդ մեաւ ենթակայի եւ³⁶ անկարելի ելով:

Եւ դարձեալ կամք է կատարեալ գոյ յայնցանէ, որք ոչ ի կատարելոցն³⁷ են: Եւ կատարեալ կոչի³⁸ իբր³⁹ թագաւոր կամ անմահ ելով⁴⁰: Եւ ընդ կատարելութեամբ ենթակայի կամեցեալ, այսինքն՝ տեսակն⁴¹, որով արժան է թագաւոր կամ անմահ գոյ⁴². եւ ապա զկնի եւ⁴³ կամելոյն խնդիր⁴⁴ եւ ընտրութիւն, զի եթէ ընդ մեաւ ստորոգին, կարելի է, եւ եթէ ոչ ստորոգին, անկար է⁴⁵:

Իսկ կամելն⁴⁶ այս ինչ է յաւտարութիւն խնդրողական եղեալ, յորոց ընդ մեաւ եւ ի մեզէն ներգործութիւնք, վասն զի խորհի, թէ պարտ է ձեռն արկանել գործոյն, թէ ոչ է պարտ, եւ ապա դատէ զխորհելոյն⁴⁷ բարի գոյ կամ ոչ⁴⁸, եւ այս է դատողութիւն անուանեալ: Եւ ապա հաւանեալ սիրէ զխորհեալն դատեցեալ. այս կոչի հաճութիւն: Զի եթէ խորհեալն դատեալ քննէ եւ ոչ⁴⁹ սի-

³¹ Ե չիք եւ անկարելեաց

³² ուտել կամ պահել // Ex. Fid. 36.67 πορνεῦσαι ἢ σωφρονῆσαι

³³ Ե չիք Բ ի լուս. ննջել կամ հսկել | հուն. չիք հսկել

³⁴ Հուն. չիք

³⁵ Ex. Fid. 36.68-69 + τοῦτο οὐκ ἔστι τῶν ἐφ' ἡμῖν. Βουλόμεθα δὲ τυχόν.

³⁶ Ex. Fid. 36.70 չիք ոչ ընդ մեաւ ենթակայի եւ

³⁷ Ե կատարեալսն

³⁸ Ex. Fid. 36.72 + τὸ βουλευτόν

³⁹ Ե + թէ

⁴⁰ Ex. Fid. 36.72 τὸ ὑγιαίνειν

⁴¹ Ե տեսական | ընդ կատարելութեամբ ենթակայի կամեցեալ, այսինքն՝ տեսակն // Ex. Fid. 36.72-73 πρὸς τὸ τέλος δὲ τὸ βουλευτόν ἤγουν ὁ τρόπος

⁴² Ex. Fid. 36.73 ὑγιαίνειν

⁴³ Ե չիք

⁴⁴ Ե խնդրել

⁴⁵ զի եթէ ընդ մեաւ ստորոգին, կարելի է, եւ եթէ ոչ ստորոգին, անկար է // Ex. Fid. 36.74-75 Καὶ μετὰ ταῦτα, εἰ τῶν ἐφ' ἡμῖν ἔστι γίνεται βουλή ἤγουν βούλευσις

⁴⁶ Ե կամելոյն

⁴⁷ Ե զխորհեալն

⁴⁸ զխորհելոյն բարի գոյ կամ ոչ // Ex. Fid. 36.77 τὸ κρεῖττον

⁴⁹ Ex. Fid. 36.79 + διατεθῇ πρὸς τὸ κριθὲν ἤγουν

րէ, ոչ եղիցի հաճութիւն: Այսպէս զկնի մանրամանն ելոյ⁵⁰ եղիցի յառաջընտրութիւն⁵¹, վասն զի յառաջընտրութիւն է յերկուց ենթակացելոց ընտրել եւ դատել զմինն նախկին⁵² միւսոյն գոյ: Եւ ապա զկնի այսոցիկ դիմէ առ գործել, որ եւ կոչի դիմելութիւն, եւ ապա ինքն՝ առդրէ, որ կոչի առդրութիւն, եւ յետ այսորիկ դադարէ ի յաւժարութենէն զկնի առդրութեան⁵³ պիտոյից:

Առդ եւս առ անբանին գոյր յաւժարութիւն ինչ, եւ յանկարծակի ընդ յիշելն⁵⁴ դիմէ առ գործելն, վասն զի անբանաբար եւ առանց ընտրութեան⁵⁵ է յաւժարականն անբանից, եւ վարին բնական յաւժարութեամբն՝ անքննել եւ դատել⁵⁶: Որով եւ ոչ կամելն անուանի⁵⁷ եւ ոչ խորհել, այլ դիմելութիւն անբանաբար⁵⁸, վասն զի կամք է բանական եւ անձնիշխան բնական յաւժարութիւն: Զի ի մարդ իբր ի բանական եւ առաւել կալեալ⁵⁹ եւ պահեալ լինի բնական յաւժարութիւն, քան թէ քաշել եւ տանել զմարդ ակամայ ընդ իւր: Զի անձնիշխանաբար եւ բանականապէս շարժի, որովհետեւ լծակցեալ ունի յինքն զիմացականն զկենդանական զարութիւնսն: Ինքնիշխանութեամբ ունի զյաւժարելն, ինքնիշխանութեամբ խորհի⁶⁰, ինքնիշխանութեամբ դատէ, ինքնիշխանութեամբ քննէ եւ ինքնիշխանութեամբ յառաջընտրեացէ եւ ինքնիշխանութեամբ դիմէ⁶¹ եւ ինքնիշխանութեամբ գործէ բնութեամբ ի վերայ էիցս:

Այլ հարկ է գիտել, եթէ Աստուծոյ խորհել ինչ ասելի է, այլ յառաջընտրութիւն առնել սեփական ոչ ասելի է, զի խորհելն իշխանութիւն⁶², իսկ յառաջընտրութիւն անգիտութեան են ցոյցփ: Վասն զի զգիտելն ոք յիւրմէ ոչ յա-

⁵⁰ C մանրամաննելոյ

⁵¹ Ex. Fid. 36.80 + ἡγοῦν ἐπιλογὴ

⁵² F նախկին ի

⁵³ C առադրէ... առադրութիւն... առադրութեան

⁵⁴ Ex. Fid. 36.84 չիք ընդ յիշել

⁵⁵ Ex. Fid. 36.85 չիք եւ առանց ընտրութեան

⁵⁶ Ex. Fid. 36.86 չիք անքննել եւ դատել

⁵⁷ F չիք եւ ոչ կամելն անուանի

⁵⁸ C անասնաբար

⁵⁹ E կապեալ

⁶⁰ F չիք ինքնիշխանութեամբ խորհի | Ex. Fid. 36.91-92 + καὶ αὐτεξουσίως ζητεῖ καὶ σκέπτεται καὶ αὐτεξουσίως βουλεύεται

⁶¹ E F դիմ է

⁶² զի խորհելն իշխանութիւն // Ex. Fid. 36.96 οὐ γὰρ βουλεύεται ὁ θεός

ոաջընտրել: Եւ զի յառաջընտրելն անգիտութիւն է, ապա⁶³ Աստուած, որ զամենայն գիտէ եւ պարգաբար⁶⁴ կամի եւս:

Այլ եւ ոչ Տեառն մերոյ տէրունական⁶⁵ հոգւոյն բանականի⁶⁶ ասեմք զխորհելն եւ զյառաջընտրութիւն ունել⁶⁷, որովհետեւ ոչ ունէր մասն անգիտութեան: Զի թէպէտ առյապապին ոչ գիտողի բնութենէն էր, այլ իբրեւ առանձնատրութեամբ միացեալ էր Բանին Աստուծոյ, ունէր զգիտութիւն հանդերձելոցն⁶⁸ ոչ շնորհաւ, այլ իբրեւ⁶⁹ առանձնատրութեամբ միատրութեամբն: Վասն զի մի եւ նոյն ինքն էր Աստուած եւ մարդ, վասն որոյ եւ ոչ հանեցութեան ունէր կամատրութիւն: Զկամք բնութեամբ ունէր պարզ զայն, որ յամենայն անձինս մարդկան միազգաբար տեսանելի է, իսկ հանոյական կամատրութիւն ոչ ունէր Սուրբ Հոգին իւր, հակառակ իմն աստուածային կամաց իւրոց: Վասն զի հանոյութիւն բաժանի ի վերայ առանձնատրութեան, բայց միայն ի սուրբ եւ պարզ եւ անխառն եւ յանբաժանելի իւրում յաստուածութենէն: Վասն զի անդ ոչ ամենեւին բաժանմամբ եւ ուրոյն կալով առանձնատրութիւնք եւ ոչ կամք բարժանեալ գոլով: Զի որով մի ելով բնութիւն, մի եւ նոյն է բնական կամք ի նմա: Եւ որպէս անբաժանելի է առանձնատրութիւնքն, մի է եւ կամելն նոցա, եւ մի շարժութիւն երրորդ անձնատրութեանն: Իսկ առ մարդկանն, որովհետեւ բնութիւնն մի գոլով, մի է եւ բնական կամք, այլ վասն զի բարժանեալ եւ ի միմեանց մեկնեալ առանձնատրութիւնք ժամանակաւ⁷⁰ եւ տեղեալ եւ գործովք եւ այլով⁷¹ ամենայնիւ, վասն այսորիկ բարժանեալ եւ մեկնեալ են եւ կամք նոցա եւ հանոյութիւն: Իսկ ի Տէրն մեր Յիսուս Քրիստոս վասն զի բաժանեալ ունի զբնութիւնքն, բաժանեալ են եւ կամքն բնականք աստուածութեանն եւ մարդկութեանն իւրոյ, այս ինքն՝ կամատրական զաւրութիւնք: Եւ վասն զի մի է առանձնատրութեամբ եւ մի է, որ կամեցցի, մի եւ նոյն է եւ կամեցեալն, այսինքն՝ հանոյական կամքն, եւ մարդ-

⁶³ Եւ զի յառաջ ընտրելն անգիտութիւն է, ապա // Ex. Fid. 36.97-98 Εἰ δὲ ἡ βουλὴ ἀγνοίας, πάντως καὶ ἡ προαίρεσις

⁶⁴ Ex. Fid. 36.98 + οὐ // bMN om.

⁶⁵ C տէրունականի

⁶⁶ Տեառն մերոյ տէրունական հոգւոյն բանականի // Ex. Fid. 36.100 τῆς τοῦ κυρίου ψυχῆς

⁶⁷ C առնել

⁶⁸ Ex. Fid. 36.102 πάντων

⁶⁹ Ex. Fid. 36.103 + εἴρηται

⁷⁰ C ժամանակաւ

⁷¹ F այլու B C այսու

կային կամքն հետեւելով⁷² աստուածային կամաց եւ նորին կամելովն զամենայն ինչ, զոր կամէրն, իւր համարէր աստուածային կամքն:

Այլ պարտ է գիտել, զի այլ իմն է կամք, եւ այլ խորհուրդ, եւ այլ է կամեցեալն, եւ այլ կամեցողն, եւ այլ կամեցողականն: Վասն զի կամք կոչի պարզ այն զաւրոքին կամաց անձին, իսկ խորհուրդ՝ եթէ վասն ինչ իրիք գոյ կամք, եւ կամեցեալ՝ որ ենթակայ է կամացն գործ իմն, զոր կամեսցի ոք (որպէս եւ շարժին յաւժարոքին առ կամս⁷³, վասն զի պարզ յաւժարոքին բանական կամք գոյով, իսկ առ կերակրիլն յաւժարոքին խորհուրդ⁷⁴ է, իսկ կերակուրն կամեցեալ կոչի), եւ կամեցողական է, որ ունի զկամել սորա զաւրոքին մարմնոյն⁷⁵, եւ կամեցող է, որ կրէ յինքն զկամեցեալն:

Եւ զայս⁷⁶ գիտեա, եթէ կամք երբեմն զկամելն նշանակէ, որ է կամողական զաւրոքին, եւ կոչի սա կամք բնական, եւ երբեմն՝ զկամեցեալն, եւ կոչի նա կամք հանոյական⁷⁷:

⁷² Ex. Fid. 36.122 + δηλαδὴ

⁷³ Ex. Fid. 36.128 βρωσιν

⁷⁴ C խորհրդոյ

⁷⁵ մարմնոյն // Ex. Fid. 36.130-131 οἷον ὁ ἄνθρωπος

⁷⁶ E F այս

⁷⁷ C հանոյական

ԼԶ. Վասն ներգործութեան¹:

Եւ զայն ինչ գիտել պարտ է, եթէ ամենայն նախասացեալ զաւրութիւնն՝ իմացականն եւ կենդանականն, բնականն եւ արուեստականն, ներգործական կոչին: Վասն զի ներգործութիւն է իւրաքանչիւր գոյութեան բնական զաւրութիւն եւ շարժումն: Եւ դարձեալ. ներգործութիւն² է բնութեամբ ամենայն էիցս ինքնաբոյս շարժութիւն, որով եւ յայտ իսկ է, եթէ որոց բնութիւնն նոյն է, նոցա նոյն եւ մի³ է ներգործութիւն, իսկ որոց բաժանեալ բնութիւն, նոցա եւ ներգործութիւն տարորիշ⁴: Վասն զի անհնար ելով, թէ անմասն գայցէ գոյինն ի բնական ներգործութենէն:

Դարձեալ ներգործութիւն է բնական իւրաքանչիւր էիցն յայտ յանդիման կացուցանելի զաւրութիւն. եւ այլ եւս՝ ներգործութիւն է բնական ամենայն գոյիցն⁵ առաջին եւ մշտաշարժ զաւրութեամբ մտաւոր անձին, այսինքն՝ իմանալի հոգւոյ մշտաշարժ բանականութիւն, որ միշտ բնութեամբ բղիւ է ի նմանէ: Դարձեալ⁶ ներգործութիւն է բնութեամբ ամենայն գոյիցն զաւրութիւն եւ ել⁷, յորմէ որիշ է միայն, որ ամենեւին անգոյ է:

Այլ կոչին ներգործութիւն եւ ամենայն գործ, որպէս են խորհել, գնալ, ուտել, ըմպել, ննջել, հսկել, տխրել, խնդալ⁸ եւ այլ ամենայն կիր⁹: Բազում անգամ եւ բնական ախտն ներգործութիւն կոչին, իբր փաղցնուլ, ծարավել, առնուլ, պակասել իմի¹⁰: Ասի դարձեալ ներգործութիւն կատարուած զաւրութեան:

Եւ ասի կրկին անուամբ սա, զի միեւնոյն կոչի զաւրութիւն եւ ներգործութիւն: Զի եւ ստնդիոյ¹¹ մանկան ասեմք հռետոր գոյ զաւրութեամբ եւ ոչ ներգործութեամբ, վասն զի զաւրութիւն ունի լինել զկնի ժամուց¹² ուսմամբ

¹ Ex. Fid. 37.1 Περί ενεργείας

² C ներգործական

³ C մի եւ նոյն

⁴ C տարորիշ են

⁵ ամենայն գոյիցն G ή πάσης οὐσίας // Ex. Fid. 37.10 չիք

⁶ Ex. Fid. 37.12 չիք

⁷ Ex. Fid. 37.12 κίνησις

⁸ Ex. Fid. 37.15 չիք ննջել, հսկել, տխրել, խնդալ

⁹ Ex. Fid. 37.15 չիք

¹⁰ առնուլ (E F խառնուլ), պակասել իմիք // Ex. Fid. 37.16 καὶ τὰ τοιαῦτα

¹¹ C ստնդիա

¹² Ex. Fid. 37.19-20 չիք զկնի ժամուց

հոետոր¹³: Եւ դարձեալ ասեմք մարդոյ հոետոր ուսմամբ¹⁴, զաւրութեամբ եւ ներգործութեամբ. ասեմք հոետոր նմա, մինչ լո՛ւ եւ ոչ խաւսի ինչ, ասեմք հոետոր եւ մինչ մեկնէ մեզ զնորքն բան¹⁵ եւ ստուգէ¹⁶, զի սոքա երկոքեան հաղորդ նմա¹⁷, առաջինն զաւրութեամբ միայն, իսկ երկրորդն զաւրութեամբ եւ ներգործութեամբ¹⁸:

Ներգործութեան բնութիւնն այս է առաջին եւ միայն եւ նշմարիտ ինքնընտրելի, ինքնակամ¹⁹, բանական եւ անձնիշխան, տեսակիս մերոյ պատրաստող եւ պահող կեանք²⁰, յորմէ որք արգելին բանիւք իւրեանց²¹ զՏէրն մեր Յիսուս Քրիստոս²², ոչ գիտեմ, թէ ո՞րպէս Աստուած մարդացեալ կարասցեն կոչել զնա: Ներգործութիւն է շարժումն բնութեան ի գործ ինչ, իսկ գործական սսի որպէս եւ ինքն անձամբ իւրով շարժեցեալ:

¹³ B F ոետոր... ոետոր // Ex. Fid. 37.19-20 γραμματικόν... γραμματικός

¹⁴ Ex. Fid. 37.20 չիք

¹⁵ C նոր բնաբան

¹⁶ ասեմք հոետոր նմա, մինչ լո՛ւ եւ ոչ խաւսի ինչ, ասեմք հոետոր եւ մինչ մեկնէ մեզ զնորքն բան եւ ստուգէ (B ստոյգ է) // Ex. Fid. 37.21-23 ἐνεργεία μὲν, ὅτι ἔχει τὴν γνῶσιν τῆς γραμματικῆς, δυνάμει δέ, ὅτι δύνανται ἐξηγηθῆναι, οὐκ ἐνεργεῖ δὲ τὴν ἐξηγήσιν. Λέγομεν πάλιν ἐνεργεία γραμματικόν, ὅτε ἐνεργεῖ ἡγοῦν ἐξηγεῖται

¹⁷ զի սոքա երկոքեան հաղորդ նմա

¹⁸ զի սոքա երկոքեան հաղորդ նմա, առաջինն զաւրութեամբ միայն, իսկ երկրորդն զաւրութեամբ եւ ներգործութեամբ // Ex. Fid. 37.24-25 Χρὴ οὖν γινώσκειν, ὅτι ὁ δεύτερος τρόπος κοινός ἐστὶ τοῦ δυνάμει καὶ τοῦ ἐνεργεία, δεύτερος μὲν τοῦ δυνάμει, πρῶτος δὲ τοῦ ἐνεργεία

¹⁹ Ex. Fid. 37.26 չիք

²⁰ Ex. Fid. 37.27 չիք եւ պահող կեանք

²¹ Ex. Fid. 37.28 չիք բանիւք իւրեանց

²² Ex. Fid. 37.28 չիք Յիսուս Քրիստոս

ԼԷ. Վասն կամայի եւ ակամայի¹:

Իսկ որովհետեւ կամաւ գործ ուրեմն է եւ ակամայ հա[մա]րե[ա]լն² գործ յայլ³ ումեմն է⁴, իսկ բազում ոմանք զստոյգ ակամայ գործ ոչ պատահումն կամ դիմելութիւն⁵, այլ ի ներգործութիւն կարգեն, այլ գիտել պարտ է, եթէ գործ է ներգործութիւն բանական: Իսկ զկնի գործոյն հետեւի գովութիւն կամ աղնատումն. եւ ոմանք ի նոցանէ հեշտութեամբ, իսկ ոմանք տրտմութեամբ լինիցին, եւ ոմանք ի նոցանէ ընտրելիք են ի գործողացն իւրեանց, եւ ոմանք փախչելիք: Եւ յայնցանէ, որք ընտրելիք են, ոմանք միշտ ընտրելի ելով, եւ ոմանք առժամայն միայն. նոյնպէս եւ փախչելեացն: Դարձեալ ոմանք ի գործոցն ողորմեցեալ գոն, եւ ոմանք թողութեան արժանի գտանին, իսկ ոմանք ատելիք եւ տանջանաց արժանիք: Արդ կամատրականացն հետեւին գովութիւնք կամ աղնատմումք եւ ախորժութեամբ գործելութիւն, իբրեւ զի հանելի թուեսցի գործողացն գործն կամ միշտ կամ միայն ի ժամ գործելոյն, իսկ ակամայիցն ողորմութեան եւ թողութեան արժանի լինել եւ տրտմութեամբ գործել եւ ոչ հանութեամբ լինել եւ ոչ անձամբ կատարել⁶ զնա⁷ ի գործողէն, թէպէտ եւ բռնադատեսցի:

Իսկ ակամայիս է ոմն, որ բռնադատութեամբ է, եւ է ոմն որ անգիտութեամբ. եւ բռնադատութեամբ է⁸, յորժամ գործական է⁹ սկիզբն, որ է պատճառն արտաբուստ յայլմէ լինիցի, յորժամ յայլմէ բռնադատիցիմք, ինքեամբ բնաւ ոչ կամեցեալ եւ ոչ խառնեալ ընդ բռնադատումն զիւրն շարժութիւն, ոչ իմիք իւրով գործակից լեալ կամ թէ անձամբ իւրով գործող գոլ բռնադատեցելոյն, որոյ արտադրողք սահմանիմք¹⁰: Ակամայ է¹¹, որոյ սկիզբն արտաբուստ ոմն գոլ ոչ իմիք զկնի հանեալ միաբանեալ բռնադատելոյն իւրովն

¹ Ex. Fid. 38.1 Περί ἐκούσιου καὶ ἀκούσιου

² *Ուղղել ենք ըստ* Ex. Fid. 38.2 τὸ νομιζόμενον // B C F հարեւն

³ F այլու B յայլու Ex. Fid. 38.3 *չիք*

⁴ Ex. Fid. 38.2-3 καὶ τὸ νομιζόμενον δὲ ἀκούσιον ἐν πράξει τινὶ ἐστὶ // E *չիք* եւ ակամայ հա[մա]րե[ա]լն գործ յայլ ումեմն է (F ուրեմնէ)

⁵ պատահումն կամ դիմելութիւն // Ex. Fid. 38.4 ἐν τῷ πάσχειν

⁶ F կատել

⁷ C + գործ

⁸ F + այն ինչ է գորոյ զսկսելն ապատճառն յինքն բերէ ոք գիտող ելով իւրաքանչիւրն, որովք եւ յորում ներգործի...

⁹ F *չիք* գործական է

¹⁰ արտադրողք սահմանիմք // Ex. Fid. 38.19 ὀριζόμενοι φάμεν

¹¹ ակամա է = BCL^e ἀκούσιόν ἐστιν // Ex. Fid. 38.19 *չիք*

շարժութեամբ, իսկ սկիզբն ասեմք զգործողականն պատնառ: Իսկ անգիտելին ակամայ եւ է, յորժամ ոչ մեք զգաստացուցանեմք զպատնառ անգիտութեանն, այլ ընդ անգէտս ինքնին¹² պատահեսցի: Վասն զի թէ¹³ արբեալն սպանութիւն գործէ, անգիտութեամբ էսպան¹⁴, այլ ոչ ակամայ, զի զպատնառ անգիտութեան՝ զարբեցումն, ինքն¹⁵ արար: Ապա թէ ոք ի սովորական տեղոյ նետս ձգեալ ի նշաւակի սպան զհայր իւր յանկարծ՝ զանց առնելով զտեղեան, սա¹⁶ ակամայ գործող կոչի:

Այսպէս ակամայ կրկնակի՝ միոյն բռնադատելովն, եւ երկրորդին՝ ոչ գիտելովն, զի կամատրին երկուքն հակառակ կան, վասն զի կամայական¹⁷ նա է, որ ոչ բռնադատութեամբ եւ ոչ անգիտութեամբ գործեցաւ: Եւ կամատրական այն ինչ է, զորոյ սկիզբն եւ պատնառն¹⁸ յինքն բերէ ոք, զիտող ելով իւրաքանչիւրն, որովք եւ յորում ներգործի: Իսկ «իւրաքանչիւր» յայտոցիկ ստորոգութեանց ասին, զոր իմաստունքն փորձութեան մասունք առդրեցին¹⁹, եւ են այսոքիկ՝ ո՛վ, զի՞նչ, որո՞վ, ո՞ւր, ե՞րբ, ո՞րպէս, ընդէ՞ր: Արդ այսպէս ստուգաբանէ²⁰. ո՛վ այս ոմն, որ գործեացն²¹, զի՞նչ՝ այսինքն սպան կամ այլ ինչ գործեաց, որո՞վ՝ այսինքն գործեալ իմիք, ո՞ւր՝ զտեղոյն դրութեան ցոյցս է, ե՞րբ եւ զժամն նշգրտէ²² սա, ո՞րպէս՝ որո՞վ արինակաւ եղեւ, ընդէ՞ր՝ այսինքն զպատնառն դիտելով²³:

Նա եւ այլ²⁴ իմն են գործք ընդ մէջ ելով կամայի եւ ամայի, զորոց զանյարմարութիւն եւ զտրամութիւն²⁵ յաղագս մեծագոյն չարեացն երկեղի կա-

¹² ընդ անգէտս ինքնին // Ex. Fid. 38.22 οὕτω

¹³ C չէք

¹⁴ C եսպան

¹⁵ E ինքնին

¹⁶ Ex. Fid. 38.25 + δι' ἄγνοιαν.

¹⁷ C կամատրական

¹⁸ Ex. Fid. 38.28-29 ἡ ἀρχὴ τούτέστιν ἡ αἰτία // E սկզբնապատնառն B F զսկզբնապատնառն

¹⁹ յայտոցիկ ստորոգութեանց ասին, զոր իմաստունքն փորձութեանց մասունք առդրեցին // Ex. Fid. 38.30 ἐστὶν ἃ καλεῖται παρὰ τοῖς ῥήτορσι περιστατικά μόρια

²⁰ եւ են այսոքիկ՝ ո՛վ, զի՞նչ, որո՞վ, ո՞ւր, ե՞րբ, ո՞րպէս, ընդէ՞ր: Արդ այսպէս ստուգաբանէ // Ex. Fid. 38.31 οἶον.

²¹ Ex. Fid. 38.31 + τίνα ἤγουν τὸν παθόντα

²² B նշմարտէ

²³ F գիտելով

²⁴ Ex. Fid. 38.35 Ἰστέον, ὥς

²⁵ E զտրամակրութիւն

մաւ²⁶ յանձն առնումք, որպէս այն զի յերկեղէ²⁷ նաւակոծութեան կամաւ²⁸ զկարասին ընկղմեմք ի ծովու²⁹:

Եւ արդ գիտելի է, զի մատաղ մանկունք եւ անբան կենդանիք կամաւ գործեն, այլ ոչ յառաջընտրութեամբ, եւ արք, զորս ինչ սրտմտութեամբ գործեն, ոչ յառաջընտրելով կամաւ գործեն³⁰, այլ ոչ յառաջընտրութեամբ³¹: Եւ յանկարծակի բարեկամ թէ եկեսցէ առ մեզ, կամայ է եւ ոչ յառաջընտրութեամբ: Եւ որ անկասկածն ելով գանձի հանդիպի, կամաւ հանդիպի, եւ ոչ յառաջընտրութեամբ: Եւ այս ամենայն կամայ են վասն³² խնդացականութեան իւրեանց, այլ ոչ յառաջընտրութեամբ, վասն զի ոչ խորհրդով, այլ պատահմամբ դիպեցան³³, զի հարկ է³⁴ խորհրդոյ յառաջընթաց գոլ յառաջընտրութեան, որպէս ասացան:

²⁶ Ex. Fid. 38.36 չիք երկեղի կամաւ

²⁷ Ex. Fid. 38.36 չիք

²⁸ C չիք

²⁹ Ex. Fid. 38.37 չիք ի ծովու

³⁰ արք... գործեն... գործեն // Ex. Fid. 38.39-40 πράττομεν... ποιοῦμεν

³¹ C E չիք եւ արք, զորս ինչ սրտմտութեամբ գործեն, ոչ յառաջընտրելով կամաւ գործեն, այլ ոչ յառաջընտրութեամբ

³² F + զի

³³ Ex. Fid. 38.44 չիք այլ պատահմամբ դիպեցան

³⁴ Ex. Fid. 38.44 + πάντως

**ԼԸ. Վասն որոյ¹ ընդ մեաւ ենթակային,
այսինքն, անձնիշխանութիւն²:**

Այլ որ³ վասն անձնիշխանութեանն բան է, այսինքն՝ որ ի ներոյ մեր ստորոգի, ունի նախ խնդրելի⁴ զայս ինչ, թէ գոյ ինչ որ ի ներոյ⁵ մեր ենթակայի, վասն զի բազումք ի բանաւորաց գիտնոց⁶ հակառակին սմա: Երկրորդ, թէ զինչ ոք իցեն, որ ընդ մեաւ ստորեւ կան եւ որոց իշխանութիւն ունիմք մեք: Երրորդ, խնդրելով զպատճառն, թէ յո՞ր սակս եղաւ անձնիշխան յարարչէն Աստուծոյ ստեղծեալ այնպէս: Արդ սկսեալ զառաջնոյն, նախ ասասցոմք, յայտնելով զսա, եթէ են ինչ, որ ի ներոյ մեր են, եւ ասեմք զայն, որ ի նոցանէ ասացեալ է, եւ սկսցոմք այսպէս:

Եղելոց ամենայնի կամ զԱստուած ասեն պատճառ գոյ, կամ զհարկաւորն գոյ, կամ զպատահումն, կամ զքնութիւն, կամ զբախտ, կամ զինքնագոյն գոյ: Այլ Աստուծոյ գործ է գոյութիւն եւ նախախնամութիւն, իսկ հարկաւորականին միշտ առ մի ինչ յէիցն շարժութիւն: Իսկ պատահմանն՝ որպէս զի հարկաւորապէս կատարեսցին որք նովաւ (զի եւ ինքն իսկ ի հարկէ է): Իսկ բնութեանն՝ եղելութիւն, անողականութիւն, ապականութիւն, տունկք եւ բոյսք եւ կենդանիք: Իսկ բախտի են հազիւքն եւ անակնկալիքն (վասն զի այսպէս սահմանեն զբախտ՝ եթէ ընդ մի գալուստ եւ ժողովումն է երկուց պատճառաց⁷, որ եւ յառաջընտրութենէն ունեն սկիզբն, որք այլանդակս⁸ կատարին արտաբոյ այնմ, զոր գոյաբար լինին, հիբար՝ զայն որ գերեզման⁹ բրելով, գանձս գտանէ: Զի եւ ոչ որ խորեաց զգանձն յայն սակս եղ, զի նա գտցէ զայն, եւ ոչ որ բրէն¹⁰ յայն սակս փորէր¹¹, զի գտցէ¹², այլ նա՝ զի միւսանգամ¹³ ինքն առցէ, եւ սա՝ իբր զի շիրիմ յարինեսցէ, այլ ի մէջ եկն այլ իմն ինչ նոր՝ ար-

¹ C չիք

² Ex. Fid. 39.1 Περὶ τοῦ ἐφ' ἡμῖν, τουτέστι τοῦ αὐτεξουσίου

³ F այլոց *φ/ս* այլ որ

⁴ C խնդրել

⁵ F ներք

⁶ Ex. Fid. 39.3 չիք ի բանաւորաց գիտնոց

⁷ F պատճառից

⁸ E F այլընդակս

⁹ C գերեզմանս

¹⁰ Ex. Fid. 39.18 ὁ εὐρών

¹¹ C քրէր

¹² Ex. Fid. 39.18 + θησαυρόν

¹³ Ex. Fid. 39.19 ὅταν θέλῃ

տաճոյ այնմիկ, որ էր կարծիք երկոցունցն): Իսկ որ ինքն ինքեամբ գոյ, այսինքն¹⁴ անշնչից եւ անբանիցն պատահմունքն արտաճոյ բնութեան կամ մակացութեան¹⁵ արուեստից, զի այսպէս ասեն նոքա:

Արդ այժմ առ այսոքիւմ առդիցոյմ զոր ինչ յաղագս մարդոյ, եթէ ո՞չ է մարդ սկիզբն եւ պատեառ գործոց: Վասն զի ոչ իրաւունս ելով ի վերայ Աստուծոյ գծագրել զգործս գարշելիս եւ զանիրաւս եւ ոչ զկարեւորսն (վասն զի ոչ միշտ միապէս կարէ կեալ), եւ ոչ զպատահումն (զի ոչ յեկելոցն բնութեամբ, այլ ի կարեւորացն ասեն գոյ զպատահումն), եւ ոչ զբնութիւն (քանզի բնութեան գործք են տունկն եւ կենդանիք), եւ ոչ բախտ (վասն զի ոչ հազիւ են եւ անակնկալիք գործք մարդկան), եւ ոչ ինքնագոյ ինչ (վասն զի անշունչ կամ անբան ասեն զպատահումն ինքնագոյականիւն): Եւ զի այս այսպէս¹⁶, մնաց այս միայն, որ ինքն գործող եւ ուղղիչ գոյ ամենայն գործոյ իւրոյ մարդ, սկիզբն բանից եւ գործոց իւրոց եւ ինքնիշխան ելով:

Դարձեալ եթէ եւ ոչ միոյ գործոյ տէր անձնիշխան¹⁷ իցէ մարդ, աւելորդ իմն ունի զխորհրդականութիւն. որ եւ առ ի՞նչ ներգործէ զխորհրդողականութիւն¹⁸, եւ ոչ միոյ գործոյ տիրելով: Զի ամենայն խորհել¹⁹ զգործոյ իմեմնէ է, իսկ զընտրելին եւ զամենապատիւն²⁰, որ առ մարդն է, եւ պարգեւս եւ շնորհս²¹ աւելորդ եւ անպէտ ցուցանել յոյժ անմտութիւն է: Վասն զի եթէ խորհի, զգործոյ խորհի, զի ամենայն խորհուրդ վասն գործոյ եւ ներգործութեան լինի:

¹⁴ Ex. Fid. 39.20 չիք

¹⁵ Ex. Fid. 39.21 չիք

¹⁶ Ex. Fid. 39.29 չիք եւ զի այս այսպէս

¹⁷ Ex. Fid. 39.32 չիք

¹⁸ C չիք որ եւ առ ի՞նչ ներգործէ զխորհրդողականութիւն

¹⁹ E խորհելով

²⁰ C զամենայն պատուելին

²¹ Ex. Fid. 39.35 չիք եւ պարգեւս եւ շնորհս

ԼԹ. Վասն գործեցելոցն¹:

Յեղեղոցն ոմանք ընդ մեաւ ենթակայի եւ ոմանք ոչ ընդ մեաւ: Եւ ընդ մեաւ² ստորոգին այնք, որոց մեք ինքնիշխանութեամբ գործեմք կամ ոչ գործեմք, այսինքն՝ ամենայն որք կամաւորութեամբ գործին ի մէնջ (զի ոչ կամաւորութեամբ ասի առնել գործոյ, եթէ ոչ ի ներքոյ մեր զոյ նորա)³, որոց հետեւին գովութիւնք կամ աղնատանք, առ որս եղեալ է արէնս հրամանի: Իսկ պարզաբար ընդ մեաւ ենթակային ամենայն անձնականք եւ վասն որոց խորհիմքն. եւ խորհուրդ հասարակաց ամենայն եկելոցն⁴ է⁵: Իսկ հաւասար եկամուտ է, զորոյ զարութիւն ունիմք գործելոյ, եւ հակառակին իւրոյ⁶: Իսկ զընտրողութիւն⁷ նորա առնեն միտք մեր, եւ այս է սկիզբն ամենայն գործելոցն: Եւ են ընդ⁸ մեաւ ստորոգեալ՝ հաւասար եկամուտքս այսոքիկ, իբր շարժիլ կամ ոչ շարժիլ, ստել եւ⁹ ոչ ստել, դիմել կամ ոչ դիմել, յաւժարել կարեւորացն կամ ոչ յաւժարել, տալ կամ ոչ տալ, խնդալ ի վերայ որոց պարտ է, կամ ոչ խնդալ ի վերայ որոց անպարտ է, եւ այլ որք են այդպիսիք, առ որս յառեալ¹⁰ են առաքինութեան կամ շարութեան գործք, վասն զի այսոցիկ եմք անձնիշխանք: Իսկ ի հասարակաց եկամտիցն են եւ մակացութիւնք¹¹ արուեստիցն, վասն զի ընդ մեաւ ստորոգի ձեռն արկանել, յորոց կամիցիմք կամ ոչ հպել ի նա:

Այլ եւ այս¹² գիտելի է, զի ընտրողութիւն իմն գործոց միշտ ի ներքոյ մեր ենթակայի: Իսկ գործել առթել¹³ արգելումք բազում անգամ տեսակաւ ինչ նախախնամութեան կամ տնտեսութեան¹⁴:

¹ Ex. Fid. 40.1 Περί τῶν γινομένων

² E չիք եւ ընդ մեաւ

³ Ex. Fid. 40.5 + καὶ ἀπλῶς

⁴ C եկելեցեաց

⁵ F չիք

⁶ C իւրաքանչիւրոյ

⁷ C զընտրողութիւն

⁸ C չիք

⁹ C կամ

¹⁰ Ex. Fid. 40.14 չիք

¹¹ Ex. Fid. 40.16 չիք

¹² C զայս

¹³ C առնել

¹⁴ Ex. Fid. 40.18 չիք կամ տնտեսութեան

Խ. ¹Թէ որոյ պատճառի եղա՞մ անձնիշխան²:

Արդ ասելի է, եթէ առժամայն փոյթ զկնի բանականութեան մտանէ անձնիշխանութիւն, վասն զի ամենայն եղական եւ շրջողական իսկ է: Վասն զի որոց սկիզբն եղելութեան ի փոփոխմանէ լինի, հարկ է, զի նոքա եւ բնաբար³ փոփոխելի եղիցին: Իսկ փոփոխականութիւն է այս յոչ գոյից ի գոյութիւն եւ յոչէ՛յ յետիւն գալ⁴ եւ ոչ յառաջադրել նիւթոյ իմն այլ ինչ իրս լինել: Վասն զի անշունչն եւս եւ անբանֆն փոփոխելիք լինին ըստ նախասացելոց նիւթականաց փոխանորդութեանն⁵, իսկ բանական⁶ ըստ յառաջընտրութեան: Իսկ բանականին է ինչ որ իմացական է, եւ է ինչ որ գործատրական. եւ իմացական է մտատրական նկատումն, որպէս էութիւն էիցն, իսկ գործական է խորհրդականն, որ է⁶ սահմանադրողութիւն գործոց իրաւաբանութեամբ: Եւ անուանեն զիմացականն միտք եւ զգործականն՝ բան, զիմացականն՝ իմաստութիւն, իսկ զգործականն՝ իմացումն, որով եւ ամենայն խորհողական իբրեւ ի նոյն ելով զընտրողութիւն՝ գործոց խորհեացի, որպէս զի ի ձեռն խորհելոյն ազնուական ինչ ստորոգեալ⁷ ընտրեսցէ⁸: Արդ եթէ այս այսպէս է, պատշանաբար⁹ եւ հարկատրապէս բարդի ընդ բանականի անձնիշխանութիւն, զի կամ ոչ բանական է, եւ թէ բանական է, տէր է գործոց եւ անձնիշխան: Որովհետեւ անբանֆ ոչ անձնիշխանֆ են, վասն զի վարեալ տանին ի ձեռն բնութեան ձգել՝ ուր եւ տանին¹⁰: Վասն որոյ ոչ զաւրեն ընդդէմ կալ բնական յաւժարութեան, այլ յանկարծաւրէն ընդ ախորժմանն իմիք դիմեն առ գործել: Իսկ մարդ իբրեւ բանական վարէ եւ գերէ առաւել, քան թէ վարեալ լինի ի բնական կրից, վասն այնորիկ մինչ յաւժարեացի ինչ ի կամականացն, իշխանութիւն ունի ընդդէմ դառնալ յաւժարականին կամ հետեւել նմա: Եւ

¹ C + յաղագս

² Ex. Fid. 41.1 Διὰ ποίαν αἰτίαν αὐτεξούσιοι γεγónαμεν

³ Ex. Fid. 41.4 չիք

⁴ C գոլ

⁵ E փոխադրութեան

⁶ E F են

⁷ F ազնվակ ինչ ստորեալ

⁸ Ex. Fid. 41.13 + καὶ ἐλόμενος πράξει

⁹ Ex. Fid. 41.13 չիք

¹⁰ B տանիցեն

վասն այսորիկ անբանմ առ գործել¹¹ ոչ գովութեան եւ ոչ պարսաւի տէր գովով եւ ոչ արիւնաց¹², իսկ մարդ գովութեան կամ պարսաւանաց հասցէ:

Նաեւ¹³ հրեշտակք իբրեւ զբանականմ անձնիշխանմ են եւ որպէս եղականմ գովով փոփոխելիք են: Եւ ապացոյց սորա դեմ¹⁴ բարիոք ստեղծեալ յարաշէն, իսկ անձնիշխանութեամբ գտակ չարութեան եղեւ եւ որ ընդ նմա ապստամբ զարութիւնմ¹⁵, իսկ այլ դասք հրեշտակաց¹⁶ կացին մնացին ի¹⁷ բարւոջն:

¹¹ Ex. Fid. 41.21 չիք առ գործել

¹² Ex. Fid. 41.21 չիք եւ ոչ արիւնաց

¹³ Ex. Fid. 41.23 Χρή δὲ γινώσκειν, ὅτι καὶ

¹⁴ Ex. Fid. 41.24 ὁ μὲν διάβολος

¹⁵ Ex. Fid. 41.26 + ἡγουν οἱ δαίμονες

¹⁶ C հրեշտակաց դասք

¹⁷ F չիք

ԽԱ. Վասն այնոցիկ, որք ոչ ի ներքոյ մեր են¹:

Իսկ որք ոչ ընդ մեաւ ենթակային, ի նոցանէ ոմանք² ոչ³ ի մէնջ ունին զսկիզբն, որք են պատնառք, այսինքն՝ հատուցմունք գործոց մերոց ի ներկայս եւ յապառնի յաւիտեանս, իսկ այլքն ամենեւեան ի ձեռն աստուածային կամացն կատարին: Վասն զի առնել ամենայնի յԱստուծոյ է, իսկ ապականութիւն ի շարութենէ մերմէ ի վերայ եմուտ՝ առ ի տանջանս եւ ի շահս, վասն զի «Աստուած զմահ ոչ արար եւ ոչ խնդայ ընդ կորուստ կենդանութեան»⁴, այլ եւս առաւել ի ձեռն մարդոյ եմուտ մահ յաշխարհ⁵ յանցաւորութեամբ Ադամայ, նոյնպէս եւ այլ տանջմունք: Իսկ զայլն⁶ զամենեսեան Աստուծոյ առդիցում, վասն զի ստեղծանելն զմեզ իւր արարչական զաւրութեանն է, եւ բազում ամաւ եւ յամբ կեալ եղելոցս՝ ժողովական եւ ամենակալ հրաման իւրոյ է, եւ ուղղել եւ պահել եւ կեալ՝ նախախնամական զաւրութեան է: Եւ վայելումն յաւիտենից բարեացն բարերարութեան նորա է, որով եւ ստեղծեալ եղաք⁷:

Իսկ վասն զի հակառակին ոմանք նախախնամութեան ելով, ասասցում փոքր ինչ վասն նորա:

¹ Ex. Fid. 42.1 Περὶ τῶν οὐκ ἐφ' ἡμῖν

² C ոմանք ի նոցանէ

³ Հուն. չիք

⁴ Իմ. Ա 13 Զի «Աստուած զմահ ոչ արար, եւ ոչ խնդայ ընդ կորուստ կենդանեաց»:

⁵ Հուն. չիք եմուտ... յաշխարհ

⁶ C զայլսն

⁷ Ex. Fid. 42.11 չիք եւ վայելումն յաւիտենից բարեացն բարերարութեան նորա է, որով եւ ստեղծեալ եղաք // BC^cGHMN + καὶ ἡ τῶν ἀγαθῶν αἰώνια (B αἰώνίων) ἀπόλαυσις τῆς ἀγαθότητος αὐτοῦ τοῖς φυλάσσοις τὸ κατὰ φύσιν, ἐφ' ᾧ καὶ ἐπλάσθημεν

ԽԲ. Վասն նախախնամութեան¹:

Նախախնամութիւն այս ինչ է, որ առ յԱստուծոյ ի վերայ էիցս փութացութիւն, եւ այլ՝ նախախնամութիւն է խորհուրդ Աստուծոյ, որով ամենայն էութիւնմ գնման իւր կայումն առնու²: Իսկ եթէ Աստուծոյ խորհուրդ եմ խնամմն, հարկ է ամենեւին որպէս ամենայն նախախնամութեամբն Աստուծոյ³ եղեալմն ըստ իրան բանի ամենաբարի եւ աստուածավայելուչ եղիցին եւ⁴ վասն կատարեալ բարոյ եղելոյ: Հարկ է զի մի եւ նոյն եղիցի արարիչ էիցս եւ նախախնամող⁵ նոցա, վասն զի ոչ յանգ եւ ոչ պատշան գոյ, իբր թէ այլ ոմն եղիցի արարիչ էիցն եւ այլ ոք նախախնամող: Վասն զի այսպէս ի տկարութիւն⁶ պարագրին երկոքին. մինն ստեղծեալ նախախնամել⁷ ոչ կարէ, եւ մինն պահել, զոր ոչ կարէ ստեղծանել⁸: Եւ արդ Աստուած միայն է ստեղծագործող եւ նախախնամող, իսկ ստեղծողական զարութեան եւ կարողութեան եւ նախախնամութեան բարերար կամմն իւր է, «զի զամենայն, զոր ինչ կամեցաւ Տէր, արար եւս»⁹, եւ կամաց նորա ոչ ոք կարաց հակառակ կալ¹⁰: Կամեցաւ զի եղիցին ամենայն, եւ եղեն, կամեցաւ հաստատել զերկիր¹¹, եւ հաստատեալ կայ, եւ զամենայն զոր ինչ եւ կամեսցի, եղիցին:

Այլ զի նախախնամ է եւ բարիոք խնամէ, բարեմտաբար խնդրեսցէ այսպէս. միայն Աստուած է բարերար բնութեամբ եւ իմաստուն¹² (եւ զի մարդիկ եւ անբանմ¹³ որդւոց իւրեանց միայն խնամեն բնութեամբ, եւ որ ոչ խնամէ,

¹ Ex. Fid. 43.1 Περί προνοίας

² C առնէ

³ Ex. Fid. 43.5 *ի/ք*

⁴ Ex. Fid. 43.6 + οὐκ

⁵ C նախախնամութեան

⁶ D իսկ արութիւն

⁷ D E խնամել

⁸ մինն ստեղծեալ նախախնամել ոչ կարէ, եւ մինն պահել, զոր ոչ կարէ ստեղծանել // Ex. Fid. 43.9-10 ὁ μὲν τοῦ ποιεῖν, ὁ δὲ τοῦ προνοεῖν

⁹ Տէր, արար եւս // B արար տէր | Սաղմ. ճլԴ 6. «Զամենայն զոր ինչ կամեցաւ եւ արար Տէր»:

¹⁰ C կեալ | Հռովմ. Թ 19. «կամաց նորա ոչ ոք կայ հակառակ»:

¹¹ Ex. Fid. 43. 14 τὸν κόσμον

¹² Ex. Fid. 43.17 + ὧς οὖν ἀγαθὸς προνοεῖ (ὁ γὰρ μὴ προνοῶν οὐκ ἀγαθός // G om.

¹³ Ex. Fid. 43.18 τὰ ἄλογα // B C D բանմ

ոչ բարերար կոչի¹⁴), նախախնամէ եւ Աստուած իբրեւ բարերար, եւ վասն բարեկարգութեան նոցա¹⁵ խնամակալէ իբրեւ զիմաստուն¹⁶:

Վասն այսորիկ պարտ է որոց հաւատան այսոցիկ՝ զարմանալ¹⁷ ի վերայ այս ամենայնի, զամենեսին¹⁸ գովել, զամենեսին առանց երկմտութեան¹⁹ եւ մանրաբնին առնելոյ ընդունել զգործս նախախնամութեան, եւ թէ պէտ իբր զանիրաւ թուեսցի բազմաց, վասն անյայտ եւ անիմացն գոլոյ ի մէջ²⁰ աստուածային խնամոցն, վասն խորհրդոց եւ գործոց մերոց եւ հանդերձելոցն, որ միայն նմա²¹ գիտելիք են²²: Իսկ զամենայն ասեմ, որք ոչ ընդ մերով ստորոգին, զի որ ընդ մեամ են, նոքա ոչ նախախնամութեան են, այլ ընդ մեր անձնիշխանութեամբ ելով:

Իսկ նախանամութեան բանն ոմանք հաճոյականք են եւ ոմանք թոյլ տալոյ սակս. եւ հաճոյականք են այնք, որք առանց կասկածանաց բարիք²³ են, իսկ թոյլտուականք²⁴ այնք, որպէս²⁵ եւ թողեալ լիցի բազում անգամ արդար անկանել ի փորձութիւնս, որպէս զի զծածուկ ի նմա զառաքինութիւնն ցուցցէ այլոց, որպէս առ Յոբայ եղե²⁶: Եւ դարձեալ թողացուցանէ²⁷ գործել ինչ յանպատշանիցն, որպէս զի ի ձեռն այնմ յոռոյ²⁸ գործոյ²⁹ ջերմացեալ եւ մեծ իմն եւ սոսկալի ուղղեսցէ առաքինութիւնս³⁰, որպէս եւ ինքն³¹ խաչին

¹⁴ ոչ բարերար կոչի // Ex. Fid. 43.19 ψέγεται

¹⁵ Ex. Fid. 43.19 չիք նախախնամէ եւ Աստուած իբրեւ բարերար, եւ վասն բարեկարգութեան նոցա

¹⁶ Ex. Fid. 43.20 + ἄριστα τῶν ὄντων

¹⁷ F զարմանալի

¹⁸ E յամենեսին

¹⁹ C երկմտութեամբ

²⁰ E մէջ | Ex. Fid. 43.23 չիք ի մէջ // G + ἡμῖν

²¹ C նման

²² Ex. Fid. 43.24 չիք վասն խորհրդոց եւ գործոց մերոց եւ հանդերձելոցն, որ միայն նմա գիտելիք են // ABGHMN + καὶ τοὺς λογισμοὺς καὶ τὰς πράξεις καὶ τὰ μέλλοντα αὐτῷ μόνῳ γνωστά

²³ Ex. Fid. 43.27 ἀγαθὰ // B C բարոք

²⁴ E թոյլտուողականք F թոյլտուառականք

²⁵ այնք, որպէս // Ex. Fid. 43.28 <εἶδη πολλά> supplevi ex Nemes. // οὕτως (EMN om.)

²⁶ Յովք Ա. 12:

²⁷ B E թուցուցանէ

²⁸ Ex. Fid. 43.30 չիք

²⁹ Ex. Fid. 43.31 πράξεως // B D E F գործով

³⁰ ջերմացեալ եւ մեծ իմն եւ սոսկալի ուղղեսցէ առաքինութիւնս // Ex. Fid. 43.31 μέγα τι καὶ θαυμαστὸν κατορθώσῃ (C κατορθώσει)

³¹ Ex. Fid. 43.31 չիք եւ ինքն

փրկութիւնն մարդկան ամենայնի³²: Եւ դարձեալ այլու³³ արինակաւ թուացուցանէ զոմանս յարժանեացն չարաչար³⁴ տանջել, զի մի յարգար մտածութենէ անկեալ լիանիցի տուեցելոյն նմա ի վերուստ շնորհաց եւ զարութեան. յամբարտաւանութենէ խաբեալ եւ լիեալ³⁵, իբրեւ զՊաւլոս³⁶: Թողեալ լինին եւ ոմանք երբեմն ուրեք ի նախախնամութենէն³⁷ ժամս ինչ առ յուղղութիւն այլոց, իբր զի նայելով ուսցին զաւգտակարն, որպէս ի վերայ Ղազարու եւ մեծատանն կրի միշտ³⁸, զի³⁹ յորժամ տեսանեմք զոք ի ցաւս եւ ի տանջանս ինչ, յիշելով զայն սոսկամբ երկուցեալ: Թողեալ լինիցին⁴⁰ ոմանք ի փառս ոմանց՝ ոչ վասն մեղաց իւրոց կամ ծնողաց իւրոց, այլ որպէս կոյր ի ծնէ, զի փառաւորեացի որդի մարդոյ: Դարձեալ թողեալ լիցի ոմն չարչարել⁴¹ առ ի նախանձ արկանել այլոց, որպէս զի մեծասցի փառք չարչարեցելոյն եւ այնու յուսով⁴² դիւրահամարձակելի լինիցի չարչարանքն այլոց՝ յուսով հանդերձելոց փառացն եւ ցանկութեամբ անանցանելի⁴³ բարեացն, որպէս ի վերայ վկայիցն Քրիստոսի եղև⁴⁴: Թողեալ լինի ոք երբեք, յորժամ ի պղծութիւն գործոց անկեալ լինի, որպէս զի նովաւ ազատեսցի յայլմէ իմն չարագոյն ախտէ⁴⁵, որպէս զի իցէ ոմն փաւցեալ ի վերայ առաքինութեան եւ ուղղութեան անձին իւրոյ, զոր թոյլ տուեալ Աստուծոյ անկանի ի պոռնկութիւն, որպէս զի սակս անկմանն ծանիցէ զիւր տկարութիւն եւ խոնարհեալ անկանի առաջի Տեառն խոստովանութեամբ եւ այնու զերծանի ի փաւցեալ ամբարհաւանութենէն, որ է համաստեո սատանայի⁴⁶:

³² Ex. Fid. 43.32 չիք

³³ F այլ

³⁴ F չարչար C չարաչարն

³⁵ յամբարտաւանութենէ խաբեալ եւ լիեալ // Ex. Fid. 43.34 εις ἀλαζονείαν ἐκπέσῃ

³⁶ Բ Կորնթ. ԺԲ 7. «Եւ զի մի՛ առաւելութեամբ յայտնութեանցն հպարտացայց, տուա՛ւ ինձ խա՛յթ մարմնոյ, հրեշտակ Սատա՛ն՝ կոփել զիս. զի մի՛ հպարտացայց»:

³⁷ Ex. Fid. 43.35 չիք

³⁸ Ղուկ. ԺԶ 19:

³⁹ կրի միշտ, զի // Ex. Fid. 43.37 φουσκῶς

⁴⁰ B C լիցին

⁴¹ Ex. Fid. 43.40 παθεῖν // B F չարչարեալ C չարչարիլ

⁴² Ex. Fid. 43.41 չիք այնու յուսով

⁴³ B անցանելի Ex. Fid. 43.42 τὼν μελλόντων

⁴⁴ Ex. Fid. 43.42 չիք Քրիստոսի եղև

⁴⁵ E յաղթէ

⁴⁶ Ex. Fid. 43.47 չիք եւ այնու զերծանի ի փաւցեալ ամբարհաւանութենէն, որ է համաստեո սատանայի

Այլ⁴⁷ գիտելի է, զի յառաջընտրութիւն գործոց մերոց ի ձեռս մեր են, իսկ կատարել զբարիսն ի նոցանէ աւգնականութեանն Աստուծոյ կարատին, որ եւ ստուգի աւգնեսցէ որք յարդար մտաց ընտրեսցեն զբարին եւ յաւատութեամբ հետեւին⁴⁸ գործոյն իւրովն կանխագիտութեամբն, իսկ որք զշարն սկսանին, թողացուցանէ Աստուած⁴⁹:

Իսկ թողոյն նորա են տեսակք երկու. վասն զի է⁵⁰ թողացուցանել որ նախախնամութեամբ տնարինէ վասն խրատելոյ սակս, եւ է թողացուցանել, որ ամենեւին մերժէ: Եւ այն եւս տնարինական եւ խրատական առ յուղղել եւ ի կեցուցանել եւ ի փառս եւ ի գովութիւն ձգել ախտացելումն, կամ առ այլոց ի նա նայեցողաց սակս երկելի կամ ի խէթ եւ հետ այլոց⁵¹ կամ ի փառս Աստուծոյ: Իսկ կատարելապէս թողեալն լինել այս իսկ է, յորժամ որ վասն Աստուծոյ փրկութեան եղեն թողացութեան ոմանց նոքա անմտաբար, անգեղջ եւ առանց բժշկութեան անդառնալի⁵² կացցեն մնասցեն իւրովն յառաջընտրութեամբ⁵³: Եւ այնպէս յետին շարեաց եւ⁵⁴ կատարեալ կորստեան մատնի, որպէս Յուդայ: Զոր ի մեզ⁵⁵ խնայեսցէ Տէր⁵⁶ եւ փրկեսցէ յայնպիսի կորստենէ:

Այլ⁵⁷ զի բազում եւ անթիւ են տեսակք նախախնամութեան Աստուծոյ, եւ⁵⁸ ոչ բանիւ մեկնել եւ ոչ մտամ հասանել ումեք կարողութիւն է:

Այլ զայս գիտել պարտ է, զի ամենայն տրտմական պատահումն, այնոցիկ⁵⁹ որոց գոհութեամբ ընդունին զնոսա առ կեանս վերաբերող ելով, եւ ամենայն շահու եւ աւգտութեան ընձեռող լինին:

⁴⁷ Ex. Fid. 43.48 // B + գի

⁴⁸ F Ընտրեսցէ... հետեւի

⁴⁹ Ex. Fid. 43.51-52 + *πάλιν κατὰ τὴν πρόγνωσην αὐτοῦ δικαίως ἐγκαταλιμπάνοντος*

⁵⁰ F չիք

⁵¹ կամ առ այլոց ի նա նայեցողաց սակս երկելի կամ ի խէթ եւ հետ այլոց // Ex. Fid. 43.56 *γινόμενῃ ἢ καὶ πρὸς ἄλλων ζῆλον καὶ μίμησιν*

⁵² F անդառնալիս D դառնալի

⁵³ թողացութեան ոմանց նոքա անմտաբար, անգեղջ եւ առանց բժշկութեան անդառնալի կացցեն մնասցեն իւրովն յառաջընտրութեամբ // Ex. Fid. 43.58-59 *ἀνεπαίσθητος καὶ ἀνιάτρευτος, μᾶλλον δὲ ἀνιάτος ἐξ οἰκείας προθέσεως διαμείνῃ ὁ ἄνθρωπος*

⁵⁴ Ex. Fid. 43.59 չիք յետին շարեաց եւ

⁵⁵ C զմեզ

⁵⁶ D որպէս

⁵⁷ Ex. Fid. 43.62 *Χρὴ δὲ εἰδέναι*

⁵⁸ C չիք

⁵⁹ E այնոց

Այլ գայս գիտասցիք, զի Աստուած⁶⁰ կամի զամենեցուն կեալն եւ ի գիտութիւն նշմարտութեան գալ⁶¹ եւ արհայութեանն արժանատիլ⁶², զի ոչ եթէ ի սակս տանջանաց էստեղծ զմեզ, այլ զի հաղորդս լիցում իւրում բարերարութեանն, որպէս բարերար: Իսկ մինչ մեղանշեմք, կամի տանջել զմեզ իբրեւ զարդար⁶³:

Որով եւ ասի առաջին, նախ կամք եւ հանութիւն, իբրեւ զի ի նմանէ ունելով մարդ զսկիզբն⁶⁴: Երկրորդ, հետեւումն կամաց եւ թողացումն ի պատճառանաց մերոց: Եւ այս երկրորդ տեսակաւ՝ նախախնամական եւս եւ խրատողական առ ի փրկութիւն, իսկ ամենեւին թողեալ⁶⁵ եւ արտաբերեալ մատնեալ ի յետին տանջանաց, որպէս ասացաք: Եւ սոքա ոչ ի ներքոյ⁶⁶ մեր ենթակայից են:

Իսկ որ ընդ մեաք ստորոգին, սոքա են զորս⁶⁷ բարիս⁶⁸ համարի ընտրութեամբ զայն եւ կամեսցի եւ հանեսցի: Իսկ յոռեացն⁶⁹ եւ որք ստոյգ չարքն գոն, ոչ նախադրութեամբ եւ ոչ հետեւելով կամեսցի, այլ թողացուցանէ իբրեւ զանձնիշխանս, վասն զի որ բռնադատութեամբ եղեն ինչ, ոչ բանականին⁷⁰ եւ ոչ առաքինութիւն ինչ է: Նախախնամէ Աստուած զամենայն ստեղծուածս վասն բնութեամբ⁷¹ բարերարութեան իւրոյ եւ ուսուցիչս, բազում անգամ եւ զդեւս առնէ⁷², որպէս առ Յոք, առ Սաւուղ⁷³ եւ ի վերայ խոզիցն⁷⁴:

⁶⁰ Ex. Fid. 43.67 + προηγούμενος

⁶¹ Ex. Fid. 43.67 չիք եւ ի գիտութիւն նշմարտութեան գալ

⁶² Ա. Տիմ. Բ 4. «որ զամենայն մարդիկ կամի՝ զի կեցցեն՝ եւ ի գիտութիւն նշմարտութեան եկեսցեն»:

⁶³ = BC^eGHMN ὡς δίκαιος // Ex. Fid. 43.70 δικάως

⁶⁴ իբրեւ զի ի նմանէ ունելով մարդ զսկիզբն // Ex. Fid. 43.72 ἐξ αὐτοῦ ὄν

⁶⁵ D թողեալ

⁶⁶ C չիք

⁶⁷ F զոր

⁶⁸ C բարի

⁶⁹ E F յոռեցն

⁷⁰ C բանականութիւն

⁷¹ վասն բնութեամբ // Ex. Fid. 43.79 καὶ διὰ πάσης τῆς κτίσεως

⁷² Ex. Fid. 43.80 չիք առնէ

⁷³ Ex. Fid. 43.81 չիք առ Սաւուղ

⁷⁴ Մատթ. Ը 30:

ԽԳ. Վասն կանխագիտության եւ նախասահմանության¹:

Պարտ է գիտել, զի զամենայն ինչ կանխագիտութեամբ գիտէ Աստուած, այլ ոչ զամենայն ինչ նախասահմանադրէ: Վասն զի նախագիտէ եւ զայնոսիկ, որ ընդ մեամ ստորոգին, այլ ոչ նախասահմանադրէ զնոսա: Զի ոչ կամի, թէ գործեսցէ ոք զչար, այլ² բռնադատէ գործել զառափնութիւն: Վասն այսորիկ աստուածային կանխագիտութեանն հրամանին է գործ յառաջասահմանութիւն: Իսկ յառաջասահմանէ ոչ զայնոսիկ, որ ի ներոյ մեր են ըստ կանխագիտութեան իւրոյ, զի անհաւասիկ ըստ կանխագիտութեանն իւրոյ յառաջադատեաց զամենայն Աստուած ըստ իւրն բարերարութեան եւ արդարութեան:

Այլ զիս³ գիտեալ⁴, զի առափնութիւն առ յԱստուծոյ տուեալ եղև բնութեանս մերում, եւ ինքն սկիզբն եւ պատճառն ամենայն բարեաց, եւ առանց ազնականութեան նորա եւ գործակցութեան անկարելի է մեզ կամել կամ գործել զբարի: Իսկ ի ներոյ մեր են կալ ի վերայ առափնութեան եւ հետեւել Աստուծոյ, մինչ առ նա կոչեսցէ զմեզ, կամ խոտորել⁵ յառափնութենէն եւ առնել զչար⁶ եւ հետեւել⁷ սատանայի, մինչ կոչէ զմեզ ի նմա առանց բռնաբարելոյ⁸: Զի շարութիւն ոչ այլ ինչ է, բայց միայն հեռանալ ի բարոյ, որպէս եւ խաւար հեռացումն է լուսոյ: Արդ յորժամ կամք եւ մնամք ի բնականն մեր, ի վերայ առափնութեան կամք⁹, իսկ մինչ խոտորիմք ի բնականէն մերմէ, որ է առափնութիւն¹⁰, արտաքին բնութեան դիմեալ եւ ի շարութիւն լինիմք միսեալ:

Ապաշխարութիւն այս ինչ է յարտաքին բնութենէն առ բնականն¹¹ եւ ի դիւաց առ Աստուած դառնալ ճգնութեամբ եւ աշխատանաւ:

¹ Ex. Fid. 44.1 Περί προγνώσεως και προορισμοῦ

² Ex. Fid. 44.4 οὐδὲ

³ C զի

⁴ Ex. Fid. 44.9 Χρὴ δὲ γινώσκειν

⁵ C խոտորիլ

⁶ եւ առնել զչար // Ex. Fid. 44.13 ὅπερ ἐστὶν ἐν τῇ κακίᾳ γενέσθαι

⁷ C հետեւիլ

⁸ E + զմեզ

⁹ C կեամք... կեամք

¹⁰ Ex. Fid. 44.17 չիք որ է առափնութիւն

¹¹ Ex. Fid. 44.19 τὸ κατὰ φύσιν // B բանականն

Սա մարդ արու¹² ստեղծեալ եղե¹³ յարարչէն եւ աստուածային շնորհաց իւրոց ետ նմա եւ հաղորդակից իւր արար զնա նովաւ, որով եւ զանուանակոչութիւն¹⁴ կենդանեաց մարգարէութեամբ որպէս զարբանեկից եւ¹⁵ զծառայից իւրոց իշխանաբար յառաջաբանեաց: Վասն զի ըստ պատկերի Աստուծոյ մտաւոր եւ բանաւոր եւ անձնիշխան ստեղծուածոց ելով, եւ յիրաւի ի ձեռն ետ¹⁶ զիշխանութիւն երկրայնոցս առ հասարակ ամենեցուն արարիչն եւ Տէրն:

Այլ գիտէր կանխագէտն Աստուած, եթէ անցանելոց է զպատուիրանան եւ ապականութեան ծառայանայ, վասն այնորիկ արար յիւրմէ գկինն «աւգնական իւր, իբրեւ զինքն», իսկ աւգնական որպէս զի ի ձեռն ծննդեան զկնի յանցատուրութեանն զփոխանորդութիւն ազգին¹⁷ պահեսցէ¹⁸: Վասն զի առաջին ստեղծութիւն¹⁹ եղելութիւն կոշի եւ ոչ ծնունդ, զի եղելութիւն եւ գործ²⁰ Աստուծոյ է, իսկ ծնունդ ի դատապարտութենէ մահուան, որ վասն յանցմանն²¹ եղեւ, որ առ ի միմեանց փոխանորդութիւն:

Զսա եղ ի դրախտին, որ էր իմանալի եւ զգալի միանգամայն, ի զգալին՝ վասն զի մարմնով ի վերայ երկրի կացցէ, իսկ յիմանալին՝ զի հոգով եւ մտաւ դասակից հրեշտակաց իցէ, մշակ աստուածային մտածութեանց եւ ի նմանէ առլցեալ անմամբ, մերկ պարգութեամբ եւ կենաւ անարուեստականաւ, միայն առ արարիչն վերելանել ստիպելով ստեղծուածոյն եւ իւրովն տեսութեամբ զուարեանալ եւ հրեռուեալ գոլով:

Իսկ որովհետեւ անձնիշխան կամաւ բնութեամբ զարդարեաց զնա²², ետ նմա արեւնս²³ ոչ նաշակել ի ծառոյն գիտութեան, գորոյ ծառոյ սակս ըստ կարի մերոյ բաւականասցի²⁴ նախ²⁵ որ յաղագս դրախտին էր բան: Զայս պատուէր ետ հրաման, որպէս զի թէ պահեսցէ զպատիւ հոգւոյն եւ բանիւ

¹² E որ եւ

¹³ C ստեղծաւ

¹⁴ E զանուանակոչութիւն

¹⁵ C չիք

¹⁶ E եղ

¹⁷ E յազգին C չիք

¹⁸ C էր... ծառայանայր.. պահիցէր

¹⁹ C ստեղծածութիւն

²⁰ Ex. Fid. 44.31 πρῶτη πλάσις

²¹ C յանցմանէ

²² C + եւ

²³ C արեւն

²⁴ C բաւականեցի

²⁵ Ex. Fid. 44.41 չիք

յաղթեսցէ զկաման²⁶, ծանաթ գոլով զաւրութեան²⁷ արարչին, պահելով զհրամանս նորա, մշտնջենաւոր հաղորդակցի²⁸ երանութեան եւ կենդանի լինիցի յափտեան վերոյ գոլով Բան զմահ: Իսկ եթէ զանձն հնազանդէ մարմնոյ եւ առաւել պատուեսցէ զփափկութիւն մարմնոյ, ոչ ծանուցեալ զպատիւ իւր եւ նմանեսցի անասնոց անմտից²⁹, յետս ձգելով զլուծ արարչին, զաստուածային հրամանսն իւր մոռանալով, մահու եւ ապականութեան պարտաւոր լինիցի³⁰ եւ կարատանայ աշխատութեան տարժանելի ունել³¹ զկեանս: Զի ոչ պատշան գոյր դեռ եւս անփորձ եւ անընդել³² գոլով հանդիպեալ անապականութեան, իբր զի մի ամբարհաւանեալ անկցի ի դատապարտութիւն դիաց³³: Վասն զի նոքա³⁴ զկնի յառաջընտրելի անկմանն, վասն զի³⁵ անապական գոլով ստացաւ³⁶ ի շարն³⁷ զանզղշանալին գոլ եւ անդառնալի խստութիւն, որպէս եւ հրեշտակք դարձեալ զկնի յառաջընտրելի առաքինութեան ի ձեռն շնորհաց անշարժելի մնալ ի բարութիւնս³⁸:

Արդ պարտ էր³⁹ նախ փորձել զմարդ եւ պահպանութեամբ պատուիրանացն կատարեալ առնել եւ այսպէս վարձս առաքինութեան անապականութեան⁴⁰ արժանի առնել: Վասն զի որ ընդ մէջ Աստուծոյ ի նիւթոյ ստեղծեալ էր, պահպանութեամբ պատուիրանացն զկնի փոփոխելութեամբ յէսս իւրով բնական անհատութեամբն ընտանութիւն եւ մերձատրութիւն Աստուծոյ ստանալով, եւ այնպէս առ բարին հաստատուն անշարժութիւն ունելով⁴¹, իսկ ի ձեռն յանցատրութեանն եւ⁴² առաւել առ նիւթս առդրեցաւ շարժելով եւ

²⁶ Ex. Fid. 44.43 չիք

²⁷ Ex. Fid. 44.44 չիք E տողից վեր

²⁸ C հաղորդակից

²⁹ Սաղմ. ԽԸ 13. «Մարդ ի պատուի՛ էր եւ ո՛չ իմացաւ, հաւասարեաց անասնո՛ց անբանից եւ նմանեաց նոցա»:

³⁰ F լիցի

³¹ C ունելով

³² E անընդել C անընտրեալ

³³ Ա. Տիմ. «մի՛ հպարտացեալ ի դատաստանս Սատանայի անկանիցի»:

³⁴ Ex. Fid. 44.52 Έκεῖνος

³⁵ C չիք վասն զի

³⁶ C ստացան

³⁷ C զշարն

³⁸ անշարժելի մնալ ի բարութիւնս // Ex. Fid. 44. ἐκλογὴν τὴν ἐν τῷ καλῷ διὰ τῆς χάριτος ἀμετακίνητον ἴδρυσιν

³⁹ E է

⁴⁰ E ապականութեան

⁴¹ հաստատուն անշարժութիւն ունելով // Ex. Fid. 44.61-62 παγίότητα λαμβάνειν ἀμετακίνητον ἔμελλε

⁴² C չիք

ի պատճառէն իւրմէ, յԱստուծոյ⁴³, հատել զմիտս յապականութիւն մատնեցաւ, եւ ախտաւոր փոխանակ անախտութեան եւ մահկանացու փոխանակ անմահն գոյոյ եղեւ, մերձատրութեան եւ հեղման ծննդեան գտակ եղեւ եւ սիրով կենդանութեան ուրախարարացն իբրեւ հաստատողաց իւրոց շատանալ ըղծայր⁴⁴, իսկ զորս ի նոցանէ պակասել հրաւիրէին, հեշտաբար⁴⁵ արհամարհէր եւ զիղծս սրտի յԱստուծոյ առ նիւթ⁴⁶ եւ զսրտմտութիւն յայնմանէ, որ թշնամի է կենաց, եւս առաւել առ ընտանիս դարձուցանէր: Եւ այնպէս նախանձելով չար դիւացն յաղթեալ⁴⁷ մարդ, վասն զի ոչ կարէր բաւել⁴⁸ բարիատեացն եւ նենգաժողուն դեւ ինքն ի վայր անկեալ գոլ ամբարտաւանութեան աղագաւ, վերագունին հանդիպելով մեզ եւ վասն այսորիկ աստուածանալոյ յուսովն խաբեալ⁴⁹ զեղկելին եւ յիւր ամբարտաւանութեանն բարձրութիւն հանեալ, յիւրն անկման նման ի խորխորատ ընկեց:

⁴³ Ex. Fid. 44.63 τοῦ θεοῦ φημι

⁴⁴ E ըղծանայր

⁴⁵ Ex. Fid. 44.67 ἀδεῶς // B հրեշտակաբար

⁴⁶ C նիւթս

⁴⁷ E յաղթել

⁴⁸ E F բովել

⁴⁹ Ex. Fid. 44.72 ó ψεύστης

**ԽԴ. Վասն աստուածային¹ տնտեսության և որ
առ մեզ փառքության և փրկության²:**

Առդ, այսու բախմամբ սկզբնաչար դիւաց խաբեալ եղև մարդ, ոչ պահելով զպատուիրանն արարչին և մերկացեալ ի շնորհաց, կողոպտեալ որ առ Աստուած համարձակութենէն, ծածկեցաւ տաժանելի կենաւ (այսինքն է տերեւ թզենոյ³) և զգեցաւ մեռելոտիւք, այսինքն մահկանացու գոլ թանձրութեամբ մարմնոյ (զի այս իսկ էր զգեցումն մեռելոտի մորթոյ), այլ արդար դատաստանան Աստուծոյ ի դրախտէն արտաքսեալ ի մահ մատնեցաւ և սպականութեան ծառայ եղև և այլ ոչ մոռացեալ եղև ի գրացողէն այն, որ զկեալն⁴ ետ և զբարիոք կեալն շնորհեաց, և նախ բազմաւ խրատեաց ի դարձ վերակոչելով հառաչմամբք, դողութեամբք⁵, ջրհեղեղաւ, որով և զամենայն ազգ կենդանեաց ջնջեաց⁶, բայց⁷ ի փոքունց, լեզուաց⁸ բաժանմամբ⁹, վերակացութեամբ հրեշտակաց, փառաքաց հրակիզութեամբ, տեսակապէս Աստուծոյ յայտնութեամբք, պատերազմամբ, յաղթելով, յաղթեալ լինելով, նշանամբ, յերկնից և յերկրէ¹⁰ և ազգի ազգի զաւրութեամբք, արինամբ, մարգարէիւք, որովք փութայր կորուսանել զմեղս, որ բազմադիմի սփռեալ էր և զմարդ ծառայեցուցեալ իւր և ամենայն արինակաւ շարութեան զկեանս նորա աուցեալ զայսց¹¹ կրից հոյլք ի սակս խրատոյ թոյլ ետ կրել¹² գրածն¹³, զի տոբամ առ բարիոք կեալն դարձեալ ելցէ մարդ:

Եւ զի վասն մեղաց եմուտ մահ յաշխարհ¹⁴, իբրեւ զգազան վայրենի, անընդել և չար, ապականիչ կենաց մարդկան ելով, պարտ իսկ էր որ ազա-

¹ C + կամաց

² Ex. Fid. 45.1-2 Περὶ τῆς θείας οἰκονομίας καὶ περὶ τῆς δι' ἡμᾶς κηδεμονίας καὶ τῆς ἡμῶν σωτηρίας

³ Ծննդ. Գ 7:

⁴ C զկեանելն

⁵ F գողութեամբ

⁶ Ծննդ. Զ 13:

⁷ C բաց

⁸ Ex. Fid. 45.13 + συγχύσει καὶ

⁹ Ծննդ. ԺԱ 7:

¹⁰ E երկրի | յերկնից և յերկրէ // Ex. Fid. 45.15 καὶ τέρασι

¹¹ C զայսոցիկ

¹² C չիք

¹³ Ex. Fid. 45.18 չիք զայսց կրից հոյլք ի սակս խրատոյ թոյլ ետ կրել գրածն

¹⁴ Հռովմ. Ե 12. «որպէս ի միոջէ մարդոյ մեղք յաշխարհ մտին, և ի մեղաց անտի մահ»:

տելն¹⁵ կամէր, զի անմեղ ցուցցէ զնա¹⁶, զի մի մահու պարտական լիցի յաղագս մեղացն, եւ այնպէս նորոգել եւ զարացուցանել զբնութիւնն եւ գործով խրատել եւ ցուցանել զնաւապարհ առաքինութեան, որովք ապականութիւն անցանէր եւ լոյս յաւիտենական կենացն սպասեալ լինէր: Իսկ ի վախճան ժամանակի մեծն այն խորք բարերարութեան յայտնի լինի վասն նորին, զի նոյն ինքն արարիչն եւ Տէր փոխանակ ստեղծուածոյն իւրոյ, յանձն իւր առ զպատերազմն եւ գործովք վարդապետ եւ ուսուցիչ լինի:

Եւ զի աստուածանալոյ յուսով որսաց թշնամին զմարդ, կարթիւ մարմնոյ ինքն խաբեալ որսասցի, եւ յայտնի լինի միանգամայն բարերարութիւն եւ իմաստութիւն եւ արդարութիւն եւ զարութիւն Աստուծոյ: Բարերարութիւն՝ այսպէս, զի ոչ անտես արար գոկարութիւն ստեղծուածոյն իւրոյ, այլ զթացեալ ի վերայ անկելոյն նորա եւ ի ձեռն ետ յարուցանել¹⁷: Իսկ արդարութիւն՝ որովհետեւ մարդ յաղթեալ գոլով, ոչ զայլ ոք արար յաղթել յաղթողին եւ ոչ բռնութեամբ յափշտակէ ի մահուանէ զմարդ, այլ այն որ նախ ի ձեռն մեղաց ծառայելոյ արար իւր զմահ¹⁸, զսա բարերարն եւ արդարն¹⁹ դարձեալ յաղթող եցոյց նմա, եւ նմանեալ զնմանն վերակոչեաց, որ եւ սա իսկ անհնարին ելով: Եւ իմաստութիւն՝ հիբար²⁰, վասն զի եգիտ կապելոյն հնարս լուծման ամենավայելուչ, վասն զի հանութեամբ Աստուծոյ Հաւր միաձին Որդին եւ Բանն Աստուծոյ եւ Աստուած, որ էր ի ծոց Հաւր²¹, համագոյ Հաւր եւ²² Հոգւոյն, նախ քան զյաւիտեանս, անսկիզբն, որ ի սկզբանէ է եւ ընդ Աստուծոյ Հաւր²³ էր եւ առ Աստուած եւ Աստուած էր, պատկեր եւ կերպարան Աստուծոյ²⁴, խոնարհեցոյց զերկինս եւ էջ, այսինքն յանխոնարհելի բարձրութենէ իւրմէ, անխոնարհելի կալով խոնարհեալ ի վայր իջանէ ընդ ծառայս իջումն անհասանելի եւ անպատմելի (զի զայս յայտնէ զիջումն), եւ որ կատարեալ Աստուած էր, կատարեալ մարդ լինի եւ կատարի քան զամենայն նորս նորագոյն եւ միայն

¹⁵ E + էր

¹⁶ ցուցցէ զնա // Ex. Fid. 45.21 εἶναι

¹⁷ Ex. Fid. 45.31 չիք C + զնա

¹⁸ ծառայելոյ արար իւր զմահ // Ex. Fid. 45.34 καταδουλοῦται ὁ θάνατος

¹⁹ Ex. Fid. 45.34 καὶ δίκαιος // B չիք

²⁰ Ex. Fid. 45.36 չիք

²¹ Յովհ. Ա. 18. «միաձինն Որդի, որ է ի ծոց Հաւր»:

²² Ex. Fid. 45.38 + ἀγίω

²³ Յովհ. Ա. 2. «Նա էր իսկզբանէ առ Աստուած»:

²⁴ Փիլիպ. Բ 6. «որ ի կերպարանս Աստուծոյ է»:

նոր ելով ընդ արեգակամբս²⁵, որով եւ անշափ²⁶ զաւրութիւն Աստուծոյ երեւելի լինի: Զի զի՞նչ այլ մեծ քան զայն, զի մարդանայ Աստուած: Եւ Բանն անփոփոխելի մարմին լինի ի Հոգոյ սրբոյ եւ ի Մարիամայ սրբունոյ եւ միշտկուսէն Աստուածածնէն, եւ միջնորդ Աստուծոյ եւ մարդկան յայտնի միայն Տէրն²⁷, ոչ կամամ կամ ցանկութեամբ²⁸ կամ մերձատրութեամբ առն կամ հեշտութեամբ ախտի ծննդեամբ յղացեալ յանապական արգանդ²⁹ կուսին, այլ Հոգոյն Սրբոյ եւ ըստ արինակի առաջին ստեղծմանն Ադամայ: Եւ հնազանդի Հաւր, որով ի մէնջ, եւ իբրեւ զմեզ ներգործութեամբն, զի զմեր բժշկեսցէ զանհնազանդութիւն, եւ անդրանիկ արինակ հնազանդութեան երեւել Վասն մեր, զի բաց ի նմանէ ոչ է հնար կենաց հանդիպել:

²⁵ Ժող. Ա. 10. «ո՛չ է ամենայն առժամայն ընդ արեգակամբ. զի զոր խասիցի ո՞ր եւ ասիցէ. Ահաասիկ այս նո՛ր է»:

²⁶ Ե այնշափ

²⁷ Ex. Fid. 45.48 φιλάνθρωπος

²⁸ Ը կամակցութեամբ

²⁹ Ex. Fid. 45.49-50 ἐν τῇ μήτρᾳ // B C արգանդէ

ԽԵ. Յարինակ յղութեան Բանին Աստուծոյ եւ մարմնանալոյն իւրոյ¹:

Քանզի հրեշտակ Տեառն առաքեցաւ առ² Կոյսն, որ ի Դաւթեան տոհմէ³ գայր իջանելով, «Յայտ է թէ ի Յուդայէ, յորմէ ծագեաց մեզ Տէրն»⁴: «Յորմէ ազգէ ոչ ոք եղեւ սպասաւոր սեղանոյն»⁵, որպէս ասէ աստուածայինն առաքեալ, վասն որոյ յետոյ պատմեցումք գգուշագոյն եւս: Առ որ եկեալ ատենիս ետ եւ ասէ. «Ուրախ լեր, բերկրեալ, Տէր ընդ մեզ, եւ նա շփոթեալ ի վերայ բանիս այսորիկ»⁶: Եւ ասէ հրեշտակն. «Մի՛ երկնչիր, Մարիամ, զի գտեր շնորհս առաջի Տեառն, ծնցիս Որդի եւ կոչեցես զանունն նորա Յիսուս, եւ նա փրկեցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց»⁷: Վասն զի Յիսուս Փրկիչ բարգմանի: Իսկ նա մինչ յանհմարինս էր, ասէր. «Զիա՛րդ լինիցի ինձ այդ, զի գայր ոչ գիտեմ»⁸: Ասէ ցնա հրեշտակն. «Հոգի⁹ սուրբ եկեցէ ի մեզ, եւ զաւրոյթին բարձրելոյ հովանի լիցի ի վերայ քո, քանզի եւ որ ծնանելոցն¹⁰ է ի քէն, սուրբ է եւ Որդի Աստուծոյ¹¹ կոչեցի»¹²: Իսկ սա առ նա. «Ահա կամ աղախին Տեառն, եղիցի ինձ ըստ բանի քում»¹³:

Յորմէ հետէ զկնի հաւանելոյ եւ ընդունելոյ¹⁴ Կուսին զԲանն, Հոգին Սուրբ հանգեալ ի վերայ նորա ըստ բանին Տեառն, զոր ասաց առ նա¹⁵ հրեշտակն, եւ սրբեաց զնա յամենայն կրից մարմնականաց¹⁶ եւ շնորհեաց զաւրոյթին ընդունել զբանին աստուածութեան առանձնաւորութիւն կրել, անե-

¹ Ex. Fid. 46.1-2 Περί τοῦ τρόπου τῆς συλλήψεως τοῦ θεοῦ λόγου καὶ τῆς θείας αὐτοῦ σαρκώσεως

² Ex. Fid. 46.3 + ἀγίαν

³ C զարմէ

⁴ Եբր. է 14. «Արդ՝ յայտ իսկ է, թէ յազգէ Յուդայ ծագեաց Տէր մեր»:

⁵ Եբր. է 13. «Յայլմէ ազգէ կալաւ հաղորդութիւն, յորմէ ոչ ոք երբեք եղեւ հաղորդ սեղանոյն»:

⁶ Դուկ. Ա. 28-29. «Ուրախ լեր բերկրեալ, Տէր ընդ մեզ: Եւ նա՛ ընդ բանսն խոռվեցաւ»:

⁷ Մատթ. Ա. 21. «Ծնցի որդի, եւ կոչեցես զանուն նորա Յիսուս, զի նա փրկեցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրեանց», Դուկ. Ա. 30-31. «Մի երկնչիր Մարիամ, զի գտեր շնորհս յաստուծոյ: Եւ անա՛ յղասչիր՝ եւ ծնցես որդի. եւ կոչեցեն զանուն նորա Յիսուս»:

⁸ Դուկ. Ա. 34. «Զիա՛րդ լինիցի ինձ այդ, քանզի գայր ոչ գիտեմ»:

⁹ E հոգին C ոգին

¹⁰ E եւ ծնանելոյն

¹¹ Ex. Fid. 46.14 θεοῦ // B բարձրելոյն

¹² Դուկ. Ա. 35. «Հոգի սուրբ եկեցէ ի մեզ, եւ զաւրոյթին բարձրելոյ հովանի լիցի ի վերայ քո. քանզի եւ որ ծնանելոցն է ի քէն՝ սուրբ է, եւ որդի Աստուծոյ կոչեցի»:

¹³ Դուկ. Ա. 38, «Ահաւասիկ՝ կամ աղախին Տեառն, եղիցի ինձ ըստ բանի քում»:

¹⁴ Ex. Fid. 46.16 + ἀγίας

¹⁵ Ex. Fid. 46.17 չիք առ նա

¹⁶ Ex. Fid. 46.18 չիք յամենայն կրից մարմնականաց

ցուցանել¹⁷ եւ ծնանել զնա¹⁸: Եւ յայնժամ հովանաւորեաց զնա¹⁹ Աստուծոյ բարձրելոյն անձնաւոր իմաստութիւն եւ զաւրութիւն, Որդին Աստուծոյ եւ համագոյ Հաւր եւ Հոգւոյն²⁰ եւ զաւրէն սերման անպարագրելի անձն Բանին Աստուծոյ բնակեցաւ միանալով ընդ²¹ անձն կուսին, որ եւ ազգ իւր եւ յիւրմէ տուեալ եւ եւ իբրեւ զինքն անմահ եւ անպարագրելի եւ եւ անդէն ի մարմնոյն կուսական յինքն ձգելով զնորայն շինեսցի իւր²² յամբիժ արեւնէ նորա մարմին հոգեւոր եւ հոգի մարմնաւոր եւ բանաւոր, զսկզբունս բնութեան²³ մերոյ, ոչ սերմնականաւ, այլ ստեղծագործութեամբ ի ձեռն Հոգւոյն սրբոյ, ոչ փոքր փոքր ինչ անմամբ կատարելով զտեսակս սեռին, այլ միանգամայն ընդ առնուլն կատարեալ գտաւ²⁴: Եւ ինքն իսկ Բանն Աստուծոյ անձն եղեւ մարմնոյ իւրոյ: Վասն զի ոչ²⁵ նախ անձին սեռացեալ եւ նկարեալ²⁶ մարմին միացաւ Աստուած Բանն, այլ մինչ բնակեցաւ ի կոյսն²⁷, անպարագրելապէս յիւր անձն, առանձնացոյց մարմին հոգեւոր, հոգի մտաւոր եւ բանաւոր յանբիժ յարեւնէ միշտկուսին²⁸, առեալ յինքն զսկիզբն մարդկային բնութեանս²⁹, Բանն անձն լինելով մարմնոյն: Վասն այսորիկ յանկարծակի մարմին առ ժամայն Բանին Աստուծոյ մարմին բանաւոր, մտաւոր, հոգեւոր մարմին³⁰: Վասն որոյ ոչ մարդ աստուածացեալ ասի, այլ Աստուած մարդացեալ: Զի այն, որ բնութեամբ կատարեալ³¹ Աստուած եւ, բնութեամբ կատարեալ մարդ եղեւ ինքն, ոչ փոփոխմամբ բնութեանն, եւ ոչ առ աշաւ գոլ տնտեսութեանն³², այլ

¹⁷ Ex. Fid. 46.18 չիբ առանձնաւորութիւն կրել, անեցուցանել

¹⁸ Ex. Fid. 46.19 չիբ

¹⁹ C չիբ

²⁰ Ex. Fid. 46.20 չիբ եւ Հոգւոյն

²¹ E ի

²² զաւրէն սերման անպարագրելի անձն բանին Աստուծոյ բնակեցաւ միանալով ընդ անձն կուսին, որ եւ ազգ իւր, եւ եւ յիւրմէ տուեալ եւ եւ իբրեւ զինքն անմահ եւ անպարագրելի եւ եւ անդէն ի մարմնոյն կուսական յինքն ձգելով զնորայն շինեսցի իւր // Ex. Fid. 46.20 οἶονεὶ θεῖος σπόρος καὶ συνέπηξεν ἐαυτῷ

²³ Ex. Fid. 46.23 φυχράματος

²⁴ միանգամայն ընդ առնուլն կատարեալ գտաւ // Ex. Fid. 46.25 ὅφ' ἐν τελειωθέντος

²⁵ E + ի

²⁶ սեռացեալ եւ նկարեալ // Ex. Fid. 46.26-27 καθ' ἐαυτὴν

²⁷ Ex. Fid. 46.27-28 τῇ γαστρὶ τῆς ἀγίας παρθένου

²⁸ Ex. Fid. 46.29 παρθένου // ABCEMN ἀειπαρθένου

²⁹ Ex. Fid. 46.30 φυχράματος

³⁰ = ABEGHL // Ex. Fid. 46.32-33 + ἅμα θεοῦ λόγου σὰρξ ἔμψυχος λογικὴ τε καὶ νοερά | E

չիբ

³¹ E չիբ

³² F չիբ եւ ոչ առ աշաւ գոլ տնտեսութեանն

որով ի սրբունոյ կուսէն առեալ մարմնով՝ հոգւով³³ եւ մտամբ եւ բանիւ կատարեալ էր, եւ որ ի նոսա եղեալ մարմնոյն միացաւ առանձնաւորութեամբ Բանն³⁴ անխառնակաբար եւ անփոփոխելի եւ անբաժանելի, ոչ փոփոխեցաւ իւր աստուածային բնութիւնն ի մարմնոյ գոյութիւն եւ ոչ գոյութիւն գոյութեան մարմնոյն շրջեցաւ ի բնութիւն աստուածութեան, եւ ոչ զոր աստուածային բնութեամբն առ զմարդկային բնութիւնս³⁵, ի մի բնութիւն եւ գոյութիւն³⁶ միացեալ³⁷ խառնակեաց:

³³ F չիք

³⁴ Ex. Fid. 46.38 չիք

³⁵ C + եւ

³⁶ Ex. Fid. 46.42 չիք եւ գոյութիւն

³⁷ E միացուցեալ

ԽԶ. Վասն երկուց բնութեանց¹:

Վասն զի անփոփոխելի եւ անբաժանելի միատրեցան բնութիւնք, ոչ աստուածային բնութիւն փոխեցաւ յիւրումն պարզութենէն, եւ ոչ մարդկային բնութիւնն փոխեցաւ ի պարզութիւն² աստուածութեանն³, եւ ոչ յերկուց բնութեանց ի մի ժողովեալ բնութիւն եւ խառնակեալ եղև. վասն զի խառնակեալ բնութիւն եւ ոչ միոյ ուրոք, յորոց խառնեցան, կարող է համագոյ լինել, իբրեւ յայլոց առ այլս ունեւոր զկատարելութիւն: Եւ որպէս այս ինչ զի ի չորից նիւթոց կատարեալ սեռ ոչ հրոյ համագոյ ասի եւ ոչ հուր կոշի, նոյնպէս եւ ոչ աւոյ եւ⁴ աւթ, եւ ոչ ջրոյ կամ⁵ ջուր, եւ ոչ երկրի համագոյ է կամ երկիր կոշի միայն առանձին⁶, նաեւ որ ոչ ուրում⁷ միոյ մինն համագոյ է: Արդ եթէ ըստ⁸ հերձուածողացն միոյ խառնեալ բնութեամբ երեւեցաւ Քրիստոս զկնի միատրութեանն, ապա ի պարզ բնութենէն դարձաւ ի խառնակեալն գոլ բնութիւն եւ այնիւ ոչ Հաւր է համագոյ, որ պարզն է բնութեամբ, նաեւ ոչ մաւր է⁹ համագոյ (զի ոչ յաստուածութենէ եւ ի մարդկութենէ խառնեալ է), եւ թէ այսպէս է¹⁰, ոչ յաստուածութիւն է եւ ոչ ի մարդկութիւն է եւ ոչ Աստուած անուանելի է եւ ոչ մարդ, այլ միայն Քրիստոս: Եւ եղիցի ըստ նոցայն¹¹ Քրիստոսդ ոչ առանձնատրութեան¹², այլ մի ուրոք բնութեան անուն:

Իսկ մեք ոչ մի խառնակեալ բնութիւն խոստովանիմք զՔրիստոսս եւ ոչ յայլմէ այլ ինչ, որպէս որ ի հոգոյ եւ ի մարմնոյ մարդ, կամ ի չորից նիւթոց սեռք անձանց, այլ յայլոց ինքեան¹³, վասն զի աստուածութեան եւ մարդկութեան Աստուած կատարեալ եւ մարդ կատարեալ զնորա յէութիւնն եւ զանուանակոշութիւն յերկուց եւ յերկուս բնութիւնս խոստովանիմք: Իսկ զՔրիստոսն անուն առանձնութեանն ասեմք, ոչ¹⁴ միատեսակաւ ասելով, այլ

¹ C + որ ի Քրիստոս | Ex. Fid. 47.1-2 Περὶ τῶν δύο φύσεων

² Ex. Fid. 47.4 φύσιν

³ Ex. Fid. 47.4 + ἢ εἰς ἀνυπαρξίαν χωρησάσης

⁴ Ex. Fid. 47.9 չիք աւոյ եւ

⁵ Ex. Fid. 47.9 չիք ջրոյ կամ

⁶ երկրի համագոյ է կամ երկիր կոշի միայն առանձին // Ex. Fid. 47.9 γῆ

⁷ C E ուրում

⁸ E q C չիք

⁹ C + բան

¹⁰ Ex. Fid. 47.13 չիք թէ այսպէս է

¹¹ Ex. Fid. 47.13 չիք ըստ նոցայն

¹² E առանձնատրութեամբ B անձնատրութեան Ex. Fid. 47.15 τῆς ὑποστάσεως

¹³ C E ինքեանց

¹⁴ C զի

երկու բնութիւնս նշանակելով: Վասն զի ինքն զինքն ամ, ամանող իբրեւ Աստուած ամանելով զմարմին իւր իւրով աստուածութեամբն, իսկ ամեալ իբրեւ զմարդ: Վասն զի նա մի եւ նոյն է՝ սա եւ նա, իսկ ամծումն մարդկութեանն աստուածութիւն: Զի եթէ միով խառնակեալ բնութեամբն Քրիստոս համագոյ Հաււ է, ապա եւ Հայր ի խառնեալ բնութենէ է եւ համագոյ է մարմնոյ¹⁵ եւս, որ եւ այս անպատշաճ եւ լի հայհոյութեամբ է:

Կամ զիսրդ մի բնութիւն երկուց հակառակաց գոյական բաժանմանց պարագրող կարէ գոլ¹⁶ եւ ընդունող, կամ ո՞րպէս կարողութիւն է մի եւ նոյն բնութիւն միանգամ եղական եւ անեղ գոլով, մահկանացու եւ անմահ, պարագրելի եւ անպարագրելի:

Իսկ եթէ միոյ բնութեան ասեն գոլ զՔրիստոս, պարզ ասեն զնա եւ սոսկ Աստուած խոստովանին. նոքա ցնորս ասեն գոլ առ աշաւ եւ ոչ մարդանալ¹⁷, կամ լոկ մարդ ասեն ըստ Նեստորի: Եւ ո՞ր կարէ գոլ կատարեալ աստուածութեամբ¹⁸ եւ կատարեալ մարդկութեամբ¹⁹: Կամ ե՞րբ ասեն երկու բնութիւնս Քրիստոսի միոյ բնութեան խառնակեալ յետ միաւորութեանն խոստովանողին: Եւ զի մի կատարեալ բնութեամբ էր Քրիստոս նախ քան զմարդանալն²⁰, յայտ է ամենայնի:

Այլ այս ինչ²¹ առնէ զմոլորութիւն²² հերձուածողացն, մի եւ նոյն ասելով զբնութիւն եւ զառանձնաւորութիւն գոլ: Այլ թէպէտ մի ասի բնութիւն գոյութիւն եւ էութիւն²³ մարդկան, յայտ է, թէ ոչ նայելով ի սահման հոգոյ եւ մարմնոյ ասեմք²⁴ զայն. զի անկար է ի մի բնութենէ ասել զանձն եւ զմարմին, յորժամ ընդ միմեանս հարցցին²⁵ քննել: Այլ վասն զի բազում են անձինք մարդկան, եւ ամենեւեան զմի եւ զնոյն բան պարագրեն զբնութեան (զի ամենեւեան ի հոգոյ եւ ի մարմնոյ խառնեալ են, եւ ամենեւեան զբնութիւն հոգոյ եւ զէութիւն մարմնոյ ունին), զի հասարակաց է տեսակ բազմացն եւ կերպա-

¹⁵ C չիք

¹⁶ C գոլով

Իսկ ստուգապէս եւ ճշմարիտ Աստուածածին խոստովանիմք զկոյսն Մարիամ², եւ որպէս ճշմարիտ Աստուած է ծնեալն ի նմանէ, նոյնպէս եւ ճշմարիտ Աստուածածին է ճշմարտին Աստուծոյ մարմնապէս ծնողն: Եւ ի նմանէ ճշմարիտ³ ծնեալ ասեմք զԱստուած, ոչ եթէ զսկիզբն⁴ աստուածութեան ի նմանէ էառ Բանն, այլ թէ նոյն ինքն Բանն Աստուծոյ, որ նախ քան զյաւիտեանս անժամանակ ծնեալ ի Հաւրէ եւ անսկզբնակից եւ մշտնջենակից Հաւր եւ Հոգւոյ գոյով, ի յետին ատուս վասն փրկութեան մերոյ բնակեցաւ յարգանդի նորա, եւ ի նմանէ անփոփոխելի մարմնացաւ եւ ծնաւ: Եւ ոչ զի լոկ մարդ ծնաւ Կոյսն, այլ Աստուած ճշմարիտ⁵, եւ ոչ սոսկ Աստուած⁶, այլ մարմնացեալ, ոչ յերկնից վայրաբերեալ զմարմին, եւ որպէս ընդ խողովակ անցեալ ընդ նմա, այլ համագոյ մեր մարմին կատարեալ⁷ առեալ ի նմանէ եւ անձն իւր ի նմա լինելով ինքնութեամբ: Զի եթէ յերկնից իջեալ մարմինն եւ ոչ ի մէնջ եւ⁸ ի մերմէ բնութենէն առեալ եղեւ, զի՞նչ աւգուտ գործեցաւ ի⁹ մարմնանալոյն: Վասն զի մարմնանալ Բանին Աստուծոյ յայս սակս եղեւ, զի զանկեալ¹⁰ եւ զմեղուցալ եւ զապականեալ¹¹ բնութիւնն յաղթող արասցէ յաղթողին զնա¹², եւ այսպէս ազատեցէ յապականութենէ, որպէս ասէ աստուածալին առաքեալ, եթէ «Մարդով եղեւ մահ եւ մարդով յարութիւն մեռելոց»¹³. Եթէ առաջինն ճշմարիտ է, ապա եւ երկրորդն ստուգապէս եւս:

¹ Ex. Fid. 56.1 Ὅτι θεοτόκος ἡ ἁγία παρθένος

² զկոյսն Մարիամ // Ex. Fid. 56.2 τὴν ἁγίαν παρθένον

³ Ex. Fid. 56.4 *չիք*

⁴ F ըսկիզբն

⁵ B + բանն

⁶ = N θεὸν // Ex. Fid. 56.11 *չիք*

⁷ Ex. Fid. 56.13 *չիք*

⁸ Ex. Fid. 56.14 *չիք* ի մէնջ եւ

⁹ C *չիք*

¹⁰ E զանգեալ F զանարգեալ

¹¹ Ex. Fid. 56.16 καὶ φθαρεῖσα // B *չիք* եւ զապականեալ

¹² յաղթողին զնա // Ex. Fid. 56.17 τὸν ἀπατήσαντα τύραννον

¹³ Ա. Կորնթ. ԺԵ 21. «Բանգի մարդով եղեւ մահ, եւ մարդով յարութիւն մեռելոց»:

Եւ թէպէտ եւ ասէ զայս, եթէ «առաջին Ադամն յերկրէ հողեղէն եւ երկրորդ Ադամն Տէրն երկնից»¹⁴, այլ յայտ է, զի բարձրական¹⁵ մարդ է, վասն զի Ադամ կոչէ զնա եւ Տէր միանգամայն ծանուցանէ, եթէ երկուն¹⁶ ի մի անձն: Զի Ադամ հողածին թարգմանի, իսկ հողածին յայտ է, զի մարդոյ բնութիւն է ի հողոյ ստեղծեալ: Իսկ տէրութիւն աստուածային բնութեանն են ապացոյց:

Եւ դարձեալ ասէ նոյն. «Առաքեաց Աստուած զՈրդին իւր միածին, որ եղև ի կնոջէ»¹⁷, ոչ ասէ, թէ «վասն կնոջ», այլ թէ «ի կնոջէ»: Որով յայտ արար¹⁸ առաքեալ, եթէ նոյն ինքն միածին Որդի Աստուծոյ եւ Աստուած, այն, որ ի Կուսէն եղև մարդ, եւ որ ի Կուսէն ծնաւ՝ նոյն Որդի Աստուծոյ եւ Աստուած գոյով. իսկ որ ծնունդ մարմնապէս կրէ, որպէս եղև մարդ, ոչ¹⁹ ի յառաջագոյն եղեալ անձն մարդ բնակեցաւ Բանն²⁰, որպէս ի մարգարէսն Հոգին սուրբ²¹, այլ ինքն Աստուած²² գոյութեամբ եւ ճշմարտութեամբ մարդ եղև, այսինքն՝ յանձն իւր պարզ առեալ զհոգեւոր մարմինն, հոգւոյ մտաւորի եւ բանաւորի, անձն լինելով ինքն: Զի զայս նշանագրէ ասելով, եթէ «եղև ի կնոջէ»: Այսպէս իբրեւ թէ ինքն անձնաւոր Բանն Աստուծոյ եւ Աստուած²³ եմուտ ընդ արինամբ բնութեանս մերում, ոչ եթէ մեր համագոյ մարդ երեւեալ էր, եթէ ոչ բոլորիմբ զգեցեալ էր զմարդ²⁴:

Եւ վասն այսորիկ ճշմարտապէս եւ յիշատի Աստուածածին խոստովանիմք ԳԿոյսն Մարիամ, վասն զի այս անուն կատարեալ առնէ զամենայն խորհուրդ տնարէնութեան: Զի եթէ Աստուածածին է ծնողն, ապա Աստուած է ստոյգ ծնեալն, ստուգապէս եւ մարդ է: Վասն զի զիս²⁵ րդ²⁵ ի կնոջէ է ծնեալն Աստուած ունէր զառաջ Բան զյաւիտեանս էութիւն, եթէ ոչ մարդ էր երեւեցեալ:

¹⁴ H // Ex. Fid. 56.21 + οὐ τὸ σῶμά φησιν ἐξ οὐρανοῦ | Ա. Կորնթ. ԺԵ 45-47. «Այսպէս եւ գրեալ է, եղև մարդն առաջին Ադամ շունչ կենդանի. երկրորդ Ադամ ի հոգի կենդանարար: Բայց ոչ նախ հոգեւորն, այլ շնչաւորն, եւ ապա հոգեւորն: Առաջին մարդն յերկրէ, հողեղէն. իսկ երկրորդ մարդն՝ Տէր յերկնից»:

¹⁵ Ex. Fid. 56.21-22 οὐ ψιλὸς *կարդացել է նպղծός ?*

¹⁶ C երկուցն

¹⁷ Գաղ. Դ 4. «առաքեաց Աստուած զորդին իւր՝ որ եղև ի կնոջէ»:

¹⁸ Ex. Fid. 56.28 + θεῖος

¹⁹ C F մարդոչ

²⁰ Ex. Fid. 56.32 *չիբ*

²¹ Ex. Fid. 56.32 *չիբ* Հոգին սուրբ

²² Ex. Fid. 56.32 *չիբ*

²³ Ex. Fid. 56.35 *չիբ* եւ Աստուած

²⁴ Ex. Fid. 56.36 *չիբ* եթէ ոչ բոլորիմբ զգեցեալ էր զմարդ

²⁵ C զի մարդ

Վասն զի որդին մարդոյ ստուգապէս մարդ է, իսկ եթէ որ ի կնոջն ծնաւ Աստուած է, յայտ է²⁶, եթէ մի եւ նոյն է, որ ի Հաւրէ եւ յԱստուծոյ էր ծնեալ աստուածական եւ անսկիզբն գոյութեամբ, եւ ի յետին ժամանակին ի Կուսէն ծնեալ սկսանելի եւ ժամանակաւոր գոյութեանն, այսինքն՝ մարդկութեանն: Վասն զի մի անձն եւ երկու բնութիւնս, երկուս ծնունդս Տեառն Յիսուսի Քրիստոսի նշանակէ այս:

Իսկ Քրիստոսածին ոչ երբեք ուրեք ասելի է Կոյսն, վասն զի զայս ի սակս ջնջելոյ զանուն աստուածածնողութեան գտաւ պեղծ եւ ասելին²⁷ Նեստոր, իբր ինքն անապատութեան²⁸ գոլով, անպատուելի լինել ջանայր այնորիկ, որ ի վեր քան զամենայն էս պատուական եւ սուրբ Աստուածածին եղեւ, վասն զի շարժել ի Հաւրէն իւրմէ ասէ. «Մի՛ Աստուածածին ասել, այլ մայր աւծելոյն²⁹, եւ զի աւծեալ էր թագաւոր Դաւիթ³⁰ եւ Ահարոն քահանայ աւծեալ (զի այսոքիկ էին աւծեալ՝ թագաւորութիւն եւ քահանայութիւն³¹), եւ ամենայն աստուածազգեաց մարդ աւծանի ի շնորհաց Հոգւոյն³², այլ ոչ Աստուած բնութեամբ լինի, նոյնպէս եւ ծնեալն ի Կուսէն մարդ լոյ ծնեալ աւծաւ յաստուածութենէն յետոյ, եւ նա մայր աւծելոյն մարդոյ գոլով եւ ոչ աստուածութեանն, զի նա զաւծանելին եւ ոչ զաւծումն ծնաւ³³»: Այս բանք Նեստորի մարդ աստուածազգեաց կոչելով զՔրիստոս³⁴:

Այլ մեզ մի՛ լիցի աստուածազգեաց կոչել կամ իմանալ, այլ Աստուած մարմնացեալ³⁵: Զի Բանն մարմին եղեւ, յղանալով ի Կուսէն, եւ եկեալ Աստուած հանդերձ առեցելովն եւ ետ առժամայն առեցելոյն³⁶ եւ աստուածացելոյն ինքեամբ, ի սկսանել էութեան մարմնոյն միանգամայն սկսել

²⁶ C յայտնէ

²⁷ Ex. Fid. 56.48 βδελυρὸς καὶ ἰουδαϊόφρων

²⁸ C անպատուելի

²⁹ վասն զի շարժել ի հաւրէն իւրմէ ասէ. «Մի՛ Աստուածածին ասել, այլ մայր աւծելոյն, եւ զի ասեալ էր // Ex. Fid. 56.50-51 καὶν αὐτὸς διαρρήγνυται σὺν τῷ πατρὶ αὐτοῦ τῷ καὶν αὐτὸς διαρρήγνυται σὺν τῷ πατρὶ αὐτοῦ τῷ σατανᾶ

³⁰ C մարգարէն Դաւիթ ի թագաւորութիւն Ex. Fid. 56.52 + ὁ βασιλεὺς

³¹ Ex. Fid. 56.52-53 βασιλεία τε καὶ ἱερωσύνη // B քահանայութիւն եւ թագաւորութիւն

³² աւծանի ի շնորհաց Հոգւոյն // Ex. Fid. 56.53 Χριστὸς λέγεσθαι δύναται

³³ Ex. Fid. 56.53 չիք լինի, նոյնպէս եւ ծնեալն ի Կուսէն մարդ լոյ ծնեալ աւծաւ յաստուածութենէն յետոյ, եւ նա մայր աւծելոյն մարդոյ գոլով եւ ոչ աստուածութեանն, զի նա զաւծանելին եւ ոչ զաւծումն ծնաւ

³⁴ Այս բանք Նեստորի մարդ աստուածազգեաց կոչելով զՔրիստոս // Ex. Fid. 56.54 -55 ὡς καὶ Νεστόριος ὁ θεήλατος τὸν ἐκ παρθένου τεχθέντα θεοφόρον εἶπεῖν ἐφρουράζατο

³⁵ Ex. Fid. 56.56 σεσαρκωμένον // C մարմնացաւ

³⁶ E աւծելոյն Ex. Fid. 56.58 չիք ետ առժամայն առեցելոյն

ի սկիզբն յղութեանն, ընդ բանին հրեշտակին, ետ առելոյն³⁷ էութիւն, գոյութիւն եւ աստուածութիւն՝ Բանն Աստուծոյ տալով զայս մարմնոյն³⁸: Եւ այսպէս եւ վասն այսորիկ ճշմարիտ Աստուածածին խոստովանեսցի Կոյսն, ոչ վասն Աստուածն գոյ բնութեամբ Բանին Աստուծոյ, որ ի նմայն բնակեցաւ³⁹, այլ սակս աստուածացուցանելոյ զմարդն, զոր միանգամ սփանչելագործեաց յղութիւն եւ էութիւն՝ յղութիւն Բանին, իսկ մարմին ի նոյն Բանն զէութիւն, ի ձեռն անապական մարն շնորհելով արարումն արարչին եւ զմարդանալն Աստուծոյ եւ ստեղծողին համայնից եւ աստուածացուցանող⁴⁰ առելոյն⁴¹ այնմ, որ այսպէս պահեաց զմիատրութիւն միատրեցելոցն, որպէս եւ միատրեցան: Քանզի ոչ միայն զաստուածայինն ասեմ, այլ եւ զմարդկայինն Քրիստոսի, ի վեր Բան զմերս⁴² ունելով եւ իբրեւ զմերս: Զի եւ ոչ յառաջագոյն եղեալ իբրեւ զմերս, յետոյ եղեւ ի վեր Բան զմերս, այլ միշտ ընդ առաջին գալ յէութիւն երկու էր եւ ի սկիզբն միատրութեանն մարմինն⁴³ ի բան սկսեալ առնուլ զէութիւն⁴⁴: Որով եւ մարդապէս է ըստ իւրն⁴⁵ բնութեան, իսկ Աստուծոյ եւ աստուածային ի վեր Բան զբնութիւնս գոլով: Նա եւ զանձնատր մարմնոյ ինքնութիւն էառ, զի բանիւ տնտեսութեանն յանձն իւր էառ զնոսա Բանն կրելով, ըստ կարգի բնական շարժման եւ անման, զոր ճշմարտապէս կրեաց բնութեամբ:

³⁷ ի սկսանել էութեան մարմնոյն միանգամայն սկսել ի սկիզբն յղութեանն, ընդ բանին հրեշտակին, ետ առելոյն (B առաւելոյն) // Ex. Fid. 56.58-59 ἅμα τῇ εἰς τὸ εἶναι ταύτης παραγωγῇ, ὥς ὁμοῦ γενέσθαι τὰ τρία

³⁸ Ex. Fid. 56.60 չէր տալով զայս մարմնոյն

³⁹ վասն Աստուածն գոյ բնութեամբ Բանին Աստուծոյ, որ ի նմայն բնակեցաւ // Ex. Fid. 56.61 μόνον διὰ τὴν φύσιν τοῦ λόγου

⁴⁰ E աստուածացուցանողի

⁴¹ F առնելոյն

⁴² Ex. Fid. 56.69 ἡμᾶς // B զմիսս

⁴³ ի սկիզբն միատրութեանն մարմինն // Ex. Fid. 56.69-70 διὰ τὸ ἐξ ἄκρας συλλήψεως

⁴⁴ C զբնութիւն

⁴⁵ C զէութիւն

ԾՁ. Ինքնութիւն երկուց բնութեանցն¹:

Կատարեալ Աստուած խոստովանելով եւ կատարեալ մարդ զմի Տէր Յիսուս Քրիստոս², եւ ասեմք մի եւ նոյն Քրիստոս³ զամենայն ունի, զոր ինչ Հայր⁴, բայց միայն յանձնելութենէն, եւ զամենայն ունէր, զոր յառաջին Ադամն ունելով, բայց միայն ի մեղաց՝ ունելով մարմին հոգեւոր⁵ եւ հոգի մտաւոր եւ բանաւոր: Ունէր եւ հանգոյն նմին երկուց բնութեանցն կրկին ծնունդս⁶, կրկին բնութիւնս⁷, երկու կամս բնականս՝ աստուածային եւ մարդկային⁸, կրկին ինքնիշխանութիւն՝ իբր Աստուած եւ մարդ, իմաստութիւն եւ գիտութիւն կրկին՝ աստուածային եւ մարդկային: Վասն զի համագոյ Հայր Բանն ինքնիշխանութեամբ կամի եւ ներգործէ⁹ եւ իբրեւ զմարդ նոյնն, զի նորա են սփանչելութիւնն¹⁰ եւ շարշարանք վասն անձամբ մի գոլոյն¹¹:

¹ Ex. Fid. 57.1 Περί τῶν ἰδιωμάτων τῶν δύο φύσεων

² = BCE κύριον ἡμῶν Ἰησοῦν Χριστόν // Ex. Fid. 57.2 չիք զմի Տէր Յիսուս Քրիստոս

³ Ex. Fid. 57.3 չիք

⁴ C + ունի

⁵ Ex. Fid. 57.4 չիք

⁶ Ex. Fid. 57.5 չիք կրկին ծնունդս

⁷ Ex. Fid. 57.5-6 διπλὰ τὰ τῶν δύο φύσεων φυσικά ταῖς δύο φύσεσι

⁸ Ex. Fid. 57.7 + καὶ ἐνεργείας δύο φυσικάς, θεῖαν τε καὶ ἀνθρωπίνην

⁹ Ex. Fid. 57.10-11 + ὡς θεός, ὁμοούσιος δὲ ὢν καὶ ἡμῖν αὐτεξουσίως θέλει καὶ ἐνεργεῖ

¹⁰ B սփանչեղագործութիւնն

¹¹ Ex. Fid. 57.23 չիք վասն անձամբ մի գոլոյն

**Ծէ. Վասն կամաց եւ իմբնիշխանութեան Տեառն
մերոյ Յիսուսի Քրիստոսի¹:**

Արդ, վասն զի երկու ասի բնութիւնս Քրիստոսի, երկու բնական կամք նորա եւ կրկին բնական ներգործութիւնս: Իսկ որովհետեւ մի է անձն երկուց բնութեանցն, մի եւ նոյն կոչի կամեցող եւ ներգործող բնութեամբ ըստ երկուց բնութեանցն, յորոց եւ յորում, եւ յորմէ է Քրիստոս Աստուածն մեր, իսկ կամեցող եւ ներգործող՝ ոչ բաժանմամբ, այլ միատրաբար: Կամի եւ «ներգործէ² զիւրաբանչիւր բնութեանն», զի որոյ գոյութիւն նոյն, նորա կամք եւ ներգործութիւն նոյն ելով: Իսկ որոց բաժանի գոյութիւն, նոցա³ բաժանեալ գոյով կամք եւ ներգործութիւն: Եւ դարձեալ ընդդէմ որոց նոյն է կամք եւ ներգործութիւն, նոցա նոյն է եւ գոյութիւն: Իսկ բաժանելոցն բաժանելով⁴:

Վասն այսորիկ ի Հայր եւ յՈրդի եւ ի Հոգին սուրբ սակս նոյն ելով կամաց եւ ներգործութեան մի եւ նոյն ճանաչի գոյութիւն եւ բնութիւն նոցին⁵: Իսկ ի վերայ աստուածային տնաւէնութեան Տեառն⁶ ի բաժանեալն գոյոյ կամաց եւ ներգործութեանց՝ բնութեանց կրկին գոյ իմանի⁷, եւ խոստովանիմք ըստ կամաց եւ ներգործութեան գոյ զբնութիւնս⁸: Վասն զի որպէս զմի եւ զնոյն Քրիստոս բնութեան թիւք բարեպաշտութեամբ իմացեալ, ոչ կարէ բաժանել յերկուս անձինս⁹, այլ ի¹⁰ միատրութիւն անբաժնելի պահէ ուրոյն¹¹ գոյ բնութեան, նոյնպէս եւ որ ի բնութիւնսն իւր են գոյականութեամբ էացեալ կամաց եւ ներգործութեան թիւքն (զի կրկին գոյով բնութեամբ կամաւ եւ ներ-

¹ Ex. Fid. 58.1-2 Περὶ θελημάτων καὶ αὐτεξουσίῳ τοῦ κυρίου ἡμῶν Ἰησοῦ Χριστοῦ

² Ex. Fid. 58.8 + ἐκατέρα μορφή

³ C + եւ գոյութիւն նոցա

⁴ Իսկ բաժանելոցն բաժանելով // Ex. Fid. 58.11-12 ὧν δὲ διάφορος ἡ θέλησις καὶ ἡ ἐνέργεια, τούτων καὶ ἡ οὐσία διάφορος

⁵ նոյն ճանաչի գոյութիւն եւ բնութիւն նոցին // Ex. Fid. 58.14-15 τὴν ταυτότητα τῆς φύσεως ἐπιγινώσκωμεν

⁶ Ex. Fid. 58.15 ἡ/ք

⁷ բնութեանց կրկին գոյ իմանի // Ex. Fid. 58.16-17 καὶ τὴν τῶν φύσεων διαφορὰν ἐπιγινώσκωμεν καὶ τὴν τῶν φύσεων διαφορὰν εἰδότες // C om. καὶ τὴν τῶν φύσεων διαφορὰν ἐπιγινώσκωμεν καὶ τὴν τῶν φύσεων

⁸ Ex. Fid. 58.18 διάφορον

⁹ յերկուս անձինս // Ex. Fid. 58.19 τὸν ἕνα Χριστόν

¹⁰ F ἡ/ք

¹¹ F որոյն

գործութեամբ¹²) ոչ կարեն բաժանել յերկուս անձինս¹³, քալ լիցի, այլ յայտ առնէ միայն զնոցա միատրութիւն զպատարումն եւ զկենդանին գոլ: Վասն զի բնութեամբ եւ ոչ առանձնատրութեամբ ասեմք զկամելն եւ զներգործելն:

Ասեմ զնոյն ինքն կամեցողական եւ գործական զաւրութիւնն, որով կամեցի եւ գործէ կամող եւ գործող նմա: Զի եթե անձնատրական ասասցեն¹⁴ զնոսա, այլ կամք եւ այլ ներգործութիւն բռնադատիմք ասել զերեք անձինս սրբոյ Երրորդութեանն:

Զի պարտ է գիտել, եթէ ոչ մի եւ նոյն է կամք եւ բնութիւն¹⁵, զի կամք բնութեանն առ ինչ է, իբրեւ զտեսութիւն (զի ամենայն մարդ է), իսկ կամելն¹⁶ ոչ բնութեանն, այլ մերում հանութեանն¹⁷ է, իբրեւ զտեսութիւն բարոյ կամ շարի (զի ոչ ամենայն մարդ նմանապէս կամի եւ միապէս տեսանէ): Սապէս եւ ներգործութիւն, վասն զի համակամութիւն եւ համատեսութիւն, համագործութիւն ազգ է կամաց եւ տեսութեան եւ գործոյ դիմելոյ՝ միայն յառնողին նոցա ենթակայ¹⁸ եւ այլում բաժանելով զսա ըստ հասարակաց ասացուածոյ բաժանմանց:

Ասի եւ պարզաբար կամք կամեցեալ, այն որ է կամեցողական զաւրութիւն, զբանական ասեմ յաւժարութիւն բնութեանն: Իսկ կամեցողութիւն, որ է ենթակայ կամացն, կամեցեալ եւ կամք յառաջընդորութեամբ: Իսկ կամատրութիւն է ունել¹⁹ զկամսն, իբրեւ զի կամեցող է աստուածային բնութիւնն, նոյնպէս եւ մարդկայինն: Իսկ կամող է եւ որ առնող է կամեցելոյն, այսինքն՝ անձն որ կրէ, իբրեւ զՊետրոս կամ այլ ոմն²⁰:

Իսկ որով մի է Քրիստոս, մի եւ նոյն անձն իւր, մի եւ նոյն է, որ կամի²¹ աստուածաբար եւ մարդկաբար: Իսկ վասն զի կրկին է բնութեամբ՝ կամեցող գոլ բնութեանցն իբր բանականաց (վասն զի ամենայն բանական կամեցող եւ ինքնիշխան գոլով), կրկին ունի եւ կամք, այսինքն՝ զբնականն կամք ասեմ ունել: Վասն զի կամական է²² ըստ իւրոցն երկուցն բնութեանց, զի բնութեամբ էացեալ ի մեզ կամատրական զաւրութիւն էաւ: Որով մի եւ նոյն է

¹² F ներգործութեան Ex. Fid. 58.23 + τῆς ἡμῶν σωτηρίας

¹³ Ex. Fid. 58.23 չիք յերկուս անձինս

¹⁴ Ex. Fid. 58.27 δῶμεν

¹⁵ Ex. Fid. 58.30 πῶς θέλει

¹⁶ Ex. Fid. 58.31 πῶς θέλει

¹⁷ C հանդիմանն

¹⁸ C + կամեցեալ եւ կամք յառաջընդորութեամբ

¹⁹ F ունող

²⁰ F այլում Ex. Fid. 58.44 չիք

²¹ Ex. Fid. 58.44 + καὶ ἐνεργῶν

²² Ex. Fid. 58.47 + ὁ αὐτὸς

Քրիստոս, որ կամի ըստ իւրաքանչիւր բնութեանն, մի եւ նոյն ճանաչին եւ կամելն իւր, ոչ եթէ զնոսա միայն կամելով, զոր բնութեամբ կամի²³ իբրեւ զաստուած (զի ոչ²⁴ եթէ աստուած է, կամելն ուտելոյ եւ ըմպելոյ²⁵ եւ այլ այդպիսեացդ), այլ հաստատողին²⁶ զմարդկային բնութիւնս, ոչ հակառակութեամբ²⁷ ընդ հանութիւնն, այլ ինքնութեամբ բնութեանն: Զի յայնժամ կամէր զայնոսիկ բնութեամբ, յորժամ կամ էր²⁸ աստուածային բնութեանն իւրում²⁹ եւ թոյլ տայր մարմնոյն հանդիպիլ եւ գործել զիւրն:

Բայց քանզի բնութեամբ զոյ ի մարդն կամեցողութիւն, յայսմանէ յայտ է: Երեւ տեսակէ են կենդանութեան³⁰ բնականաբար, զգայական եւ մտաւորական. եւ բնականին³¹ ինքնութիւնք են այսոքիկ՝ սննդականութիւն, աճողականութիւն եւ ծննդական շարժութիւն: Իսկ զգայականին է դիմելական շարժութիւն, իսկ մտաւորականի եւ բանականի է ինքնիշխանութիւն³²: Արդ եթէ ըստ բնութեան կարգի ազգական եւ ականայ³³ է բնութեանն ունել³⁴ սննդական, աճողական եւ ծննդական շարժումն, նոյնպէս եւ զգայականն ունելով դիմելական շարժութիւն, նոյնպէս ի հարկէ ունել³⁵ պարտ է մտաւորի եւ բանականին զինքնիշխանութիւնն: Եւ ինքնիշխանութիւն ոչ այլ ինչ է, բայց միայն կամք գոյով: Այսպէս եւ Բանն Աստուած³⁶ որպէս եղեւ մարմին մտաւոր³⁷ եւ բանաւոր եւ ինքնիշխան եղեւ եւ կամաւորական եւս:

Դարձեալ բնականն անուսանելիք են, զի ոչ ոք իմանայ զկենաց կամ զգաղց, զծարաւ, զգուն, զտրտմութիւն եւ զուրախութիւն, զինքնիշխանու-

²³ Ex. Fid. 58.50 ἡθελεν // C F կամ

²⁴ Ex. Fid. 58.50 οὐ // C չիք

²⁵ F ըմբել

²⁶ C հաստողին

²⁷ F հակառակութեան C հակառակաբար

²⁸ Ex. Fid. 58.53 ἡθελε // E կամք

²⁹ աստուածային բնութեանն (E F բնութիւնն) իւրում // Ex. Fid. 58.53 ἡ θεία αὐτοῦ θέλησις

³⁰ Ex. Fid. 58.56 + ὅπεξαίρουμένης τῆς θείας

բնականաբար... բնականին // Ex. Fid. 58.56-57 ἡ φυσική... Τῆς... φυσικῆς

³² C ինքնիշխանութեամբ

³³ F ական

³⁴ կարգի ազգական եւ ականայ է բնութեանն ունել // Ex. Fid. 58.59 πρόσεστι

³⁵ F ունելոյ

³⁶ Ex. Fid. 58.62 չիք

³⁷ Ex. Fid. 58.62 ἔμψυχος

թիւն³⁸։ Եւ զկամֆ ոչ ուսեալ մանկան, այլ ի ծնունդն բնաբար ունելով գործէր³⁹։

Նաեւ յանասունս ցուցանէ բնութիւնն զկամելն ունել⁴⁰, այլ մարդ ունի զկամելն տիրաբար, իւրն կամաւ շարժուն, իսկ անբան դիմելութեամբ շարժի⁴¹։

Եւ դարձեալ եթէ ըստ պատկերի Աստուծոյ⁴² ստեղծու մարդ, եւ բնութեամբ ինքնիշխան եւ կամաւորական է Աստուած⁴³, ապա եւ մարդ իբրեւ զպատկեր իւր ինքնիշխան եւ կամաւորական եղիցի բնութեամբ։ Վասն զի ինքնիշխանութիւն զկամֆն⁴⁴ սահմանեցին գոլ հարֆն⁴⁵։

Եւ դարձեալ եթէ յամենայն մարդիկ կամելն⁴⁶ եւ ոչ յոմանս գոլով եւ յոմանս ոչ գոլով, այլ հասարակաց տեսանի յամենայն բնութիւնս եւ նշանակէ որ ընդ նովաւ ենթակային անհատս, ապա բնութեամբ կամական գոլով մարդն։

Եւ դարձեալ թէ զաւելին եւ զպակասն բնութիւն⁴⁷ ոչ ընդունի, այլ հաւասար յամենիսեան է կամելն, եւ ոչ յոմեմն մեծ եւ ոմն փոքր, ապա բնութեամբ կամական գոլով մարդ։ Իսկ արդ եթէ բնութեամբ կամական գոլով մարդ, եւ Տէրն՝ ոչ միայն որով Աստուած է, այլ որով եւ մարդ եղեւ, իբրեւ զմարդ⁴⁸ կամաւորական գոլով։ Զի որպէս զբնութիւն մեր բոլոր էառ, նոյնպէս եւ զբնական⁴⁹ մեր կամֆն յինֆն⁵⁰ կրեաց, եւ ըստ այսմ⁵¹ բանի ասացին հարֆն⁵² կրել նորա զամենայն զմերս⁵³։

Եթէ ոչ բնութեամբ է կամֆ կամ անձնատուր իմն է, կամ արտաբոյ բնութեան։ Ապա թէ անձնատուրութեամբ է կամֆ, յայսմանէ այլ խորհուրդ եղիցի

³⁸ Ex. Fid. 58.66 չիք գորտմութիւն եւ գուրախութիւն, զինքնիշխանութիւն

³⁹ մանկան, այլ ի ծնունդն բնաբար (C բանականաբար) ունելով գործէր // Ex. Fid. 58.65-66 ὥστε φυσικὸν τὸ θέλειν

⁴⁰ Ex. Fid. 58.67 չիք զկամելն ունել

⁴¹ իսկ անբան դիմելութեամբ շարժի // Ex. Fid. 58.68-69 ἄρα φύσει θελητικὸς ὁ ἄνθρωπος

⁴² Ex. Fid. 58.70 τῆς μακαρίας καὶ ὑπερουσίου θεότητος

⁴³ Ex. Fid. 58.71 ἡ θεία φύσις

⁴⁴ B E զկամֆ

⁴⁵ Ex. Fid. 58.73 οἱ πατέρες // C E F հայրն

⁴⁶ C F ամենայն մարդի կամել

⁴⁷ F զպակասութիւն

⁴⁸ իբրեւ զմարդ // Ex. Fid. 58.80 φύσει

⁴⁹ Ex. Fid. 58.82 φύσει // B զբանական

⁵⁰ C F ինֆն

⁵¹ F այսմն

⁵² F հայրֆն

⁵³ Ex. Fid. 58.83 + θέλημα

որդի առ հաւր: Վասն զի միայն⁵⁴ զանձն նշանագրէ անձնատուրութիւն, եւ թէ արտաքին բնութեան է կամք, անկանիլ ի բնութենէ եղիցին կամք: Վասն զի ապականող բնութեան են արտաքին բնութեան:

Արդ ամենեցուն Աստուածն Հայր իբրեւ զհայր կամի, թէ իբրեւ զաստուած: Թէ իբրեւ զհայր կամի, այլ է կամք նորա եւ այլ Որդոյ, զի ոչ հայր է որդի: Իսկ եթէ իբրեւ⁵⁵ զաստուած կամի, մի են կամք երիցն⁵⁶, զի Աստուած է Որդի եւ Հոգի, զի Հայրն անձին⁵⁷ եւ Աստուածն բնութեան անուն⁵⁸, ապա բնութեան է կամք⁵⁹:

Եւ դարձեալ ըստ հարցն եթէ յորոց կամքն մի, նոցա⁶⁰ եւ գոյութիւն մի գոլով⁶¹, իսկ եթէ մի է կամք աստուածութեան եւ մարդկութեան Քրիստոսի, ապա մի է⁶² գոյութիւն⁶³ նորա:

Եւ զիա՛րդ է Հաւր եւ մեր համագոյ եւ թէ ոչ համագոյ Հաւր գոլով, զիա՛րդ աստուած, եւ թէ ոչ համագոյ մեր, զիա՛րդ մարդ ելով⁶⁴: Եւ դարձեալ⁶⁵ բաժանմունք բնութեանցն ի մի գոլ կամաց ո՛չ յայտնի, կարեւոր է⁶⁶ մի⁶⁷ կամս աստղացն մի՛ ասելով զբնութիւն Քրիստոսի⁶⁸, եւ որ երկուս ասեն զբնութիւնսն, նոցա ոչ ասել մի կամս ունել:

⁶⁹Ասէ Աւետարանն. «Եկն Յիսուս ի կողմանս Տիրոսի եւ Սիդովնի եւ մտեալ ի տունն, ոչ կամէր, թէ ոք գիտացէ, եւ ոչ կարաց թափել»⁷⁰: Արդ զի ամենագաւր է աստուածային կամքն, եւ կամեցաւ ծածկել եւ ոչ կարաց, ապա իբրեւ զմարդ կամեցաւ եւ ոչ կարաց, վասն զի մարդապէս կամեցող էր:

⁵⁴ Ex. Fid. 58.86 μόνης // B ամենայն C չիք

⁵⁵ C չիք

⁵⁶ Ex. Fid. 58.91 չիք մի են կամք երիցն

⁵⁷ F անձին

⁵⁸ Ex. Fid. 58.92 չիք զի հայրն անձին եւ աստուածն բնութեան անուն

⁵⁹ Ex. Fid. 58.92 + ἵγουν φυσικόν

⁶⁰ C չիք

⁶¹ F չիք մի գոլով

⁶² Ex. Fid. 58.95 καὶ ἡ αὐτὴ τούτων ἔσται

⁶³ C եւ գոյացութիւն

⁶⁴ Ex. Fid. 58.96 չիք Եւ զիա՛րդ է Հաւր եւ մեր համագոյ եւ թէ ոչ համագոյ Հաւր գոլով, զիա՛րդ աստուած, եւ թէ ոչ համագոյ մեր, զիա՛րդ մարդ ելով

⁶⁵ Ex. Fid. 58.96 + Εἰ κατὰ τοὺς πατέρας

⁶⁶ Ex. Fid. 58.97 ἀνάγκη // B կամեւոր է C F եւ

⁶⁷ C ի

⁶⁸ Ex. Fid. 58.98 + διαφορὰν

⁶⁹ Ex. Fid. 58.99 + Καὶ αὐθις· Εἰ, καθὼς

⁷⁰ Մարկ. է 24. «Եւ անտի յարուցեալ եկն ի սահմանս Տիրոսի եւ Սիդովնի. եւ մտեալ ի տուն՝ ոչ ոմեք կամէր յայտնել, եւ ոչ կարաց ծածկել»:

Եւ դարձեալ⁷¹. «ասէ. ծարաւի եմ» եւ «ետուն նմա քացախ զմեռել, եւ իբրեւ ոչ կամեցաւ ըմբել»⁷²: Արդ թէ իբրեւ աստուած ծարաւեցաւ⁷³, եւ էառ եւ ոչ կամեցաւ ըմբել, ապա չարչարելի գոյ աստուածութեամբն: Վասն զի ախտ է ծարաւ եւ ճաշակել, ապա թէ ոչ իբրեւ զաստուած⁷⁴, ապա իբրեւ զմարդ ստուգապէս կամէր եւ կամեցող գոյր աստուածապէս եւ մարդկապէս⁷⁵:

Վասն զի ասէ⁷⁶ առաքեալ. «եւ եղեւ հնազանդ մինչեւ ի մահ եւ մահու խաչի»⁷⁷: Հնազանդութիւն էին ի կամաց էր հնազանդել, եւ ոչ անէին, վասն զի ոչ⁷⁸ ասելի է Բանին հնազանդ կամ անհնազանդ, իսկ հնազանդ Հաւր լինելով Որդոյ⁷⁹, ոչ իբրեւ զաստուած եղեւ հնազանդ, այլ իբրեւ զմարդ: «Վասն զի իբր զաստուած ոչ հնազանդ էր եւ ոչ անհնազանդ, վասն զի ընդ ձեռամբ անկելոցն⁸⁰ են այսոքիկ», ըստ ասելոյն Գրիգորի Աստուածաբանի: Մարդապէս ուրեմն կամական է Քրիստոս:

Իսկ որք⁸¹ բնութեամբ ասեն զոյ զկամսն, ոչ բռնադատութեամբ⁸² ասեն ունել⁸³, այլ ինքնիշխանութեամբ: Զի եթէ բանական է, ապա ստուգապէս եւ անձնիշխան է, եւ զի ոչ միայն աստուածային եւ անեղ բնութիւն ոչ ունի ինչ բռնադատական յինքն, այլ եւ ոչ զգալի⁸⁴ եւ եղական ունի ականայելի⁸⁵: Այլ այս յայտ է, թէ բնութեամբ բարեբար է Աստուած եւ բնութեամբ արարիչ եւ բնութեամբ Աստուած է, եւ ոչ հարկատրականք են⁸⁶ եւ սոքա նմա⁸⁷, զի ո՞ր կարէ նեղել զնա:

⁷¹ Ex. Fid. 58.104 + «Ἐλθὼν», φησίν, «εἰς τὸν τόπον»

⁷² Մատթ. Իէ 34. «Ետուն նմա ըմբել գինի ընդ լեղի խառնեալ: Եւ իբրեւ ճաշակեաց, ոչ կամէր ըմբել», Հովհ. ԺԹ 28-29. «ասէ. ծարաւի եմ: Եւ անդ կայր աման ինչ լի քացախով. եւ նոցա սպունգ լցեալ քացախով ընդ լեղոյ՝ շուրջ եղեալ զմշտկաւ զոպայի, մատուցին ի բերան նորա»:

⁷³ Ե ծարաւել

⁷⁴ Ե չիք ապա թէ ոչ իբրեւ զաստուած

⁷⁵ Ex. Fid. 58.108 չիք եւ կամեցող գոյր աստուածապէս եւ մարդկապէս

⁷⁶ Ex. Fid. 58.109 Καὶ ὁ μακάριος δὲ Παῦλος

⁷⁷ Փիլիպ. Բ 8. «Խոնարհեցոյց զանձն, լիեալ հնազանդ մահու չափ, եւ մահու խաչի»:

⁷⁸ Ex. Fid. 58.111 + τὸ ἄλογον

⁷⁹ Ex. Fid. 58.112 ὁ κύριος

⁸⁰ Ե անգելոցն Բ յանկելոցն

⁸¹ Ը որ

⁸² Ը բռնատրութեամբ

⁸³ ասեն ունել // Ex. Fid. 58.116 τοῦτο φάμεν

⁸⁴ Ex. Fid. 58.118 νοερά

⁸⁵ Ex. Fid. 58.119 չիք

⁸⁶ Բ չիք

⁸⁷ Ex. Fid. 58.120 չիք

Այլ գայս գիտել պարտ է, զի համանունաբար ասի անձնիշխանութիւն, զի այլու արինակաւ ասի զաստուած գոլ, եւ այլ կերպ զհրեշտակ, եւ այլ զմարդ անձնիշխան գոլ⁸⁸: Աստուծոյ ասի ի վեր Բան զգոյութիւն գոլ անձնիշխան, իսկ հրեշտակաց իբրեւ զկնի ընթանալով ձեւոյն նոցա ի ձեռնարկել, եւ ամենեւին ոչ ընդունին զյամլէն ժամաւ ինչ (զի բնութեամբ ունելով զանձնիշխանութիւն անդադար առնեն զնայ, ոչ ինչ ունելով խափանող ի մարմնոց. եւ ոչ հակառակող զոք), իսկ մարդոյ իբր ձեռնարկողի ընդ ժամաւ առաջադրելով յանձնէ եւ ի կերպէ կամելոյն: Զի անձնիշխան գոլով մարդ, եւ բնական գոլ անձնիշխան, ունի իսկ եւ ի դիւաց մարտ ինչ եւ շարժութիւն մարմնոց, որով եւ վասն պատերազմելոյն ընդ այն եւ վասն ծանրութեան մարմնոյն պակասեցուցանէ զայն ձեռնարկել⁸⁹ զնիւթոյ նորա:

Արդ եթէ լսել խորհրդոյն կամեցաւ Ադամ եւ, մինչ կամեցաւ, ճաշակեաց, նախ այն զի ախտաւոր է որ ի մեզ կամֆն է: Իսկ եթէ ախտաւոր գոլ զկամսն, ի բնէ եւ զսա ոչ էառ ընդ բնութեան մարմնացեալ Բանն Աստուած⁹⁰, ապա մարդիկ⁹¹ ոչ ազատեցաք ի մեղաց:

Եւ դարձեալ եթէ գործ⁹² բնութեանս է անձնիշխան կամֆ⁹³, եւ զնա ոչ էառ Բանն⁹⁴, կամ վնաս եւ բիծ եղ իւրում արարչագործութեանն, իբր ոչ բարւոյ իմիք գոլ արարիչ, կամ նախանձիւ խոկաց ընդ մեզ ոչ կամելով բժշկութիւն տալ նմա, եւ ի մեզ պակասեցոյց զնորա բժշկեալն եւ զանձն իւր ախտից պարտական արար կամ յոչ կամելոյ կամ յոչ կարող լինելոյ կատարելապէս կացուցանել զառեալն:

Իսկ եւ ոչ կարողութիւն է, զի մի ինչ յերկուց խառնեալ ասել ի կամաց ի⁹⁵ կամս, որպէս⁹⁶ բնութեանց խառնել յանձին: Նախ այսու աղագաւ, զի խառնումն յանձինս եւ ոչ այլ ումեք լինիցի որ արտաբոյ տեսականին: Իսկ երկրորդ, եթէ կամաց եւ գործոյ միաւորութիւն ասեմք, յայնժամ ամենայն բնական ինքնութեանց խառնեալ գոլ ասել բռնադատիմք այսոցիկ՝ անեղին եւ եղականին, անտեսանելոյ եւ տեսանելոյն, անմահին եւ մահկանացոյին⁹⁷ եւ այլ այդպիսեացդ:

⁸⁸ Ex. Fid. 58.123 չիք անձնիշխան գոլ

⁸⁹ E արկանել

⁹⁰ Ex. Fid. 58.135 չիք

⁹¹ Ex. Fid. 58.135 չիք

⁹² Ex. Fid. 58.137 + τοῦ αὐτοῦ

⁹³ Ex. Fid. 58.137 δύναις

⁹⁴ Ex. Fid. 58.138 չիք

⁹⁵ B C E + մի

⁹⁶ C + ի

⁹⁷ Ex. Fid. 58.147 չիք անմահին եւ մահկանացոյին

Կամ զիա՞րդ յերկուց⁹⁸ խառնեալ կամի կամք կոչեսցի (վասն զի անկար է խառնելոյն յորոց խառնեցաւ զնոցայն անուանսն⁹⁹ կոչիլ), որպէս ի¹⁰⁰ նիւրոց¹⁰¹ խառնեալ¹⁰² անձին զմիոյ կոչել զանուն նիւրոյ¹⁰³: Եւ դարձեալ թէ մի¹⁰⁴ խառնեալ կամք ասեմք Քրիստոսի, հեռի դնեմք զնա¹⁰⁵ ի հայրական կամացն, զի ոչ խառնեալ գոյով կամքն Հաւ: Այլ մնայ ասել զայս, եթէ անձն միայն է Քրիստոսի խառնեալ, իսկ հասարակաց որպէս բնութիւն, նոյնպէս եւ ամենայն բնականմ¹⁰⁶ գոյով:

Իսկ հանդիպեան եւ յառաջընտրութեան կրել Քրիստոսի ասել ոչ է հնար, թէ կամիցիս ստուգաբանել: Վասն զի հանդ թուել զկնի անձանաւթի իմն գործոյ լինի ի խնդրելոյ եւ ի խորհելոյ եւ յընտրելոյ հանդայնայ: Եւ զանգիտելին զայն իմացեալ եւ զիմացեալն խորհի եւ յառաջընտրեսցէ, եւ զնա քան զայլ լաւ սահմանէ եւ ապա կամամք հանեսցի¹⁰⁷: Իսկ Տէրն զի ոչ լոկ մարդ գոյով, այլ Աստուած եւ ամենայնի կանխագէտ, նախ քան զեանալն¹⁰⁸ ոչ կարատելով տեսութեան, խորհելոյ եւ յառաջընտրութեան եւ հանութեան, այլ բնութեամբ ունի առ բարիսն միաբանութիւն եւ ի շարէն հեռաւոր եւ աւտարն գոյ: Որպէս ասէ Եսայի մարգարէ¹⁰⁹, եթէ «Յառաջ քան զհանաչելն մանկանն զբարի եւ զչար, ընդրէ¹¹⁰ զբարի եւ ատէ զչար, վասն զի նախ քան¹¹¹ զհանաչումն մանկանն բարոյ եւ չարի, ոչ հաւատայ չարին, այլ ընտրէ զբարին»¹¹²: Վասն զի «նախ»-ն¹¹³ զայս յայտնէ, եթէ ոչ իբրեւ զմեզ խնդրէ եւ խորհի, այլ իբրեւ զաստուած աստուածապէս եւ մարդապէս¹¹⁴ մարմին եղեալ,

⁹⁸ Ex. Fid. 58.148 չիք

⁹⁹ C F վասն

¹⁰⁰ C չիք

¹⁰¹ B C F նիւրոյ // Ex. Fid. 58.150 ἐκ τῶν φύσεων

¹⁰² Ex. Fid. 58.150-151 + καὶ οὐχ

¹⁰³ Ex. Fid. 58.150 φύσιν

¹⁰⁴ F չիք

¹⁰⁵ Ex. Fid. 58.152 αὐτὸν // F չիք

¹⁰⁶ F բնական

¹⁰⁷ Եւ զանգիտելին... կամամք հանեսցի // Ex. Fid. 58.158-159 Μεθ' ἧν ἡ προαίρεσις ἐκλεγομένη καὶ αἰρουμένη πρὸ τοῦ ἐτέρου τὸ ἕτερον

¹⁰⁸ Ex. Fid. 58.160 չիք նախ քան զեանալն

¹⁰⁹ Ex. Fid. 58.162 չիք

¹¹⁰ B C ընտրեսցէ

¹¹¹ C չիք

¹¹² Եւ. է 15-16. «Մինչէլ ինչ իցէ ծանուցեալ նորա. կամ ախորժեալ յառաջագոյն զարութիւն, ընտրեսցէ զբարին: Վասն այնորիկ մինչէլ ծանուցեալ իցէ մանկանն զբարի կամ զչար, անարգեսցէ զչարն եւ ընտրեսցէ զբարին»:

¹¹³ C նախ քան

¹¹⁴ Ex. Fid. 58.166 չիք

այսինքն՝ առանձնատրութեամբ միատրեալ ի մարմնի, զինքն գէութիւն եւ զգոյութիւն բնութեան մեր ունելով գիտէր զբարին¹¹⁵: Վասն զի բնութեամբ են առաքինութիւնք եւ բնութեամբ եւ հաւասար յամենայնի, թէպէտ եւ ոչ հաւասար գործեմք ամենեւեան զբնութեանն, վասն զի մեք ի բնականէն յայն որ արտաքին բնութեանն էր անկեալ եղաք ի ձեռն յանցաւորութեանն: Իսկ Տէրն յայնմանէ, որ¹¹⁶ արտաքին բնութեանն էր, ի բնականն մեր վեր եհան զմեզ, այս է՝ եթէ ըստ պատկերի եւ ըստ նմանութեան¹¹⁷: Եւ վերակացու լինելն եւ ցաւակցելն¹¹⁸ իւր ոչ այսպէս ստանալ¹¹⁹ զառաքինութիւն, որպէս զի զատար ինչ գտանել պարտ էր, այլ զատարն եւ զարտաքին բնութեանն զշարութիւնն ի բաց ձգելով, եւ որպէս ժանգ երկաթոյ ոչ բնութեամբ գոլով, այլ ի ձեռն մոռացեալ եղելոյ եկեալ մտանէ ի նմա, զորս որք աշխատութեամբ ի բաց ձգեալ ձեռն արկանեն, ցուցանեն զբնութեամբ¹²⁰ պայծառութիւն երկաթոյն:

Իսկ եւ զայս պարտ է գիտել, զի հանոյութեան անուն բազմատեսակ եւ բազում ինչ իրաց նշանակող գոլով, զի երբեմն զհանոյակից լինել ումեք ստորագրէ, որպէս ասէ աստուածային առաքեալ, եթէ «վասն կուսանաց հրաման¹²¹ ի Տեառնն ոչ ունիմ¹²², բայց զհանոյ գոլն ասեմ»¹²³: Իսկ երբեմն զխորհուրդ յայտնէ, իբրեւ զայն զի ասէ մարգարէն Դաւիթ, եթէ. «Ի վերայ ժողովրդեան քո խորամանկեցին զգիտութիւնն»¹²⁴, իսկ երբեմն՝ զվնիւն¹²⁵ հատանելն յայտնէ, իբրեւ զայն զի ասէ Դանիէլ մարգարէն, եթէ «վասն որոյ ումեք ելեալ զվնիւն անընդունելի»¹²⁶, եւ երբեմն վասն հաւատոյ կամ վասն մարդահանութեան կամ գիտութեան ասելի է: Եւ համառատագոյն ասասցում՝ դրոշմելոցն նմանութեամբ բերեալ լինի անունն հանութեան:

¹¹⁵ զինքն գէութիւն եւ զգոյութիւն (B զգիտութիւն) բնութեան մեր ունելով գիտէր զբարին // Ex. Fid. 58.167-168 αὐτὸς τῶ εἶναι καὶ τὸ πάντα εἰδέναι τὸ ἐκ φύσεως εἶχεν ἀγαθόν

¹¹⁶ F չիք

¹¹⁷ Ծննդ. Ա. 26:

¹¹⁸ F ցաւակցեալն C ցաւակցիլ

¹¹⁹ F ըստանա

¹²⁰ F զբնութեան

¹²¹ C E F + ինչ // Ex. Fid. 58.180 չիք

¹²² F ունի

¹²³ Ա. Կորնթ. է. 25. «Այլ վասն կուսանաց հրաման ինչ ի Տեառնն ոչ ունիմ. բայց խրատ տամ»:

¹²⁴ Սաղմ. Զբ. 4. «Ի վերայ ժողովրդեան քո խորամանկեցին զգիտութիւնն»:

¹²⁵ C ըզնիւն

¹²⁶ Դան. Բ. 15. «Վասն է՛ր ել հրամանդ այդ խիստ յերեսաց արքայի: Եւ յայտնեաց զբանն Արիով Դանիելի»:

ԾԸ. Վասն Տեառն Յիսուսի կրկին ներգործութեան¹:

Իսկ երկուս ասեմք ներգործութիւնս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Վասն զի ունէր իբրեւ զաստուած եւ որպէս զհամագոյ Հաւր աստուածային ներգործութիւն եւ ունէր որպէս զմարդացեալ եւ համագոյ ելով մեր զմարդկային բնութեանս ներգործութիւն: Այլ պարտ է գիտել, եթէ այլ է ներգործութիւն, եւ այլ է ներգործել, եւ այլ է ներգործական, եւ այլ է ներգործողն: Եւ ներգործութիւն է գոյութեամբ եւ գործով շարժումն բնութեանն: Իսկ գործական է բնութիւն, յորմէ յառաջ գայ ներգործութիւն: Իսկ ներգործել կոչի² կատարեալն ներգործութիւն: Իսկ ներգործող է, որ ձեռնարկէ ի ներգործութիւն կրողն³ նորա անձն: Ասի եւ ներգործութիւն ներգործել⁴, որպէս ստացուած ստաձի: Զի այսպէս ասեմք, եթէ ամենայն ստացուած զստացիչն ցուցանեն:

Իսկ⁵ ներգործութիւն շարժութիւն իմն է եւ ներգործի առաւել, քան թէ ներգործէ, որպէս ասէ Գրիգոր Աստուածաբան ի բանս իւր, որ յաղագս Հոգւոյն սրբոյ ասացեալ. «Իսկ եթէ ներգործութիւն է, մինչ ներգործէ, յայտ է, եթէ եւ ոչ ներգործող գործէ եւ յանկարծակի դադարէ ընդ ներգործելն»:

Նաեւ⁶ կենդանութիւն ներգործութիւն է, եւ առաջին⁷ ներգործութիւն կենդանւոյն, եւ ամենայն կենդանւոյն տնարէնութիւն՝ սննդական եւ աճողական, տնկական եւ դիմելական շարժումն, այսինքն՝ զգալի եւ իմանալի եւ ինքնիշխան շարժութիւն: Մի⁸ զարուբեան կատարումն է ներգործութիւն: Արդ եթէ զայս ամենայն տեսանեմք ի Քրիստոս, մարդկային ներգործութիւն ասեմք ունել նմա:

Ներգործութիւն ասի նախ որ ի մեզ է ենթակացեալ իմացութիւն⁹: Եւ է ինքն¹⁰ պարզ եւ անընդամի ներգործութիւն մտացն, զոր ինքն ինքեամբ ան-

¹ Ex. Fid. 59.1 Περί ἐνεργειῶν τῶν ἐν τῷ κυρίῳ ἡμῶν Ἰησοῦ Χριστῷ

² Ex. Fid. 59.9 *չիք*

³ Ex. Fid. 59.10 ἦτοι

⁴ = L // Ex. Fid. 59.11 + καὶ τὸ ἐνέργημα ἐνέργεια

⁵ Ex. Fid. 59.13 ἰστέον, ὥς

⁶ Ex. Fid. 59.17 δεῖ δὲ γινώσκειν, ὅτι

⁷ առաջին = CEGHMN πρώτη // Ex. Fid. 59.17 τροπή

⁸ Ex. Fid. 59.20 *չիք*

⁹ Ex. Fid. 59.23 νόημα // B իմաստութիւն

¹⁰ C F ինք Ex. Fid. 59.23 *չիք*

յայտաբար ներգործել¹¹, առանց որոյ եւ ոչ ինքն միտք կոչի, ըստ իրան բանի: Դարձեալ կոչի ներգործութիւն յայտնագունին բանին յայտնութիւն ան-յայտն բանին որ ի ներքուստ ի միտսն¹² լինի: Այլ այս ոչ պարզ եւ անընտանի գոյով, այլ ազգականին իւրում տեսանի ի մտաց եւ ի բանէ խառնեալ: Եւ զայն ունի¹³ ազգ, զոր ունի գործողն առ գործեալն, ներգործութիւն է: Եւ նոյն այն, որ կատարի իսկ, ի ներգործելոցն: Է ոմն որ միայն հոգւոյ է պարզ, եւ է ոմն հոգւոյ զմարմինն առնելով¹⁴ ընդ իւր, եւ ոմն մարմնոյն որ մտաւ եւ հոգ-ւով կենդանի գոյով, եւ ոմն կատարելութիւն: Վասն զի միտք նախագոյն տե-սանէ զներգործելին¹⁵ եւ այնպէս գործէ ի ձեռն մարմնոյն: Եւ արդ հոգւոյն է իշխանականն գոյ: Վասն զի առնու զմարմին իբրեւ զգործարան՝ ինքն շար-ժելով եւ ուղղելով զնա: Իսկ այլ եւ ներգործութիւն մարմնոյն, որ¹⁶ ուղղի եւ շարժի ի հոգւոյն: Եւ կատարումն մարմնոյն մերձենալ եւ ըմբոնել եւ զգործե-լին ճշգրտել եւ նշանագրել, իսկ հոգւոյն՝ զառապայն իմանալ եւ նկարագրել: Այսպէս եւ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի սքանչելեացն զաւրութիւնն էլով¹⁷ աստուածութեանն իւրում էին ներգործութիւնն: Իսկ մարմնոյն¹⁸ առ-նելն եւ կամելն եւ ասելն էր մերձենալ ձեռաւ եւ ասել. «Կամիմ սրբեաց»¹⁹ մարմնոյն էր²⁰: Եւ կատարելն զասելն Աստուծոյ²¹ մարդկապէս էր բեկանել զհացն²², եւ ասել²³ ցանդամալոյծն «Կամիմ», իսկ Աստուծոյ՝ անեցութիւն հացին²⁴ եւ սրբել բորոտին: Վասն զի յերկոցունցն՝ ի հոգեւոր եւ մարմնաւոր գործոյն մի եւ հաւասար եւ համազգի տեսանիւր լեալ աստուածային ներ-գործութիւնն: Զի որպէս միատրեալս գիտեմք զբնութիւնսն եւ ի միմեանս բո-վանդակեալս եւ ոչ զբաժանումն նոցա ուրանալ կարեմք, այլ թուեմք եւ ան-

¹¹ Ex. Fid. 59.24-25 τὰ ἴδια νοήματα προβαλλομένου

¹² F միտ

¹³ Ex. Fid. 59.28 չիք

¹⁴ F առնելն

¹⁵ Ex. Fid. 59.32 τὸ ἐσόμενον

¹⁶ C F չիք

¹⁷ Ex. Fid. 59.38-39 δόναμις... ὑπῆρχεν // C E F զաւրութիւն (C զաւրութիւնն) բննելով

¹⁸ Ex. Fid. 59.39 չիք

¹⁹ Մատթ. Ը 3. «Կամիմ, սրբեա՛ց»:

²⁰ Ex. Fid. 59.40 τῆς ἀνθρωπότητος αὐτοῦ ὑπῆρχεν ἐνέργεια

²¹ Ex. Fid. 59.41 չիք զասելն Աստուծոյ

²² Յովհ. Զ 11:

²³ Ex. Fid. 59.41 τὸ ἀκοῦσαι

²⁴ Յովհ. Զ 11:

բաժանելիս հանաչեմք զնոսա: Նոյնպէս եւ զկամս եւ զներգործութիւնսն, զմիատրութիւնն գիտեմք եւ զինքնութիւն հանաչեմք, թուեմք²⁵, այլ բաժանել ոչ թուացուցանեմք:

Զի զոր արինակ մարմինն աստուածացաւ եւ յիւր բնութենէն փոփոխումն ոչ կրեաց, զնոյն արինակ կամք եւ ներգործութիւնք աստուածացան եւ յիւրեանցն սահմանէ ոչ փոփոխեցան: Վասն զի մի է նա, որում սոքա ստորագրին²⁶, եւ այսպէս եւ այնպէս, այսինքն՝ աստուածապէս եւ մարդկաբար, կամեցող եւ ներգործող:

Եւ վասն այսորիկ երկու ներգործութիւնս ասել հարկ է Քրիստոսի վասն կրկին գոլոյ բնութեանցն: Զի որոց²⁷ բնութիւն այլ եւ այլ է, նոցա բաժանեալ գոլով եւ ներգործութիւն, եւ որոց ներգործելն այլ եւ այլ եղով, նոցա բաժանեալ գոլ եւ բնութիւն²⁸: Եւ որոց ներգործութիւն մի, նոցա եւ գոյութիւն մի եւ նոյն, որպէս գրեցին հարքն: Եւ կարեւոր է մի յերկուցն՝ կամ մի ասողացն զներգործութիւն Քրիստոսի մի ասել եւ զէութիւն եւ զգոյութիւն նորա²⁹, կամ թէ պատերազմակից գոլով³⁰ նշմարտութեանն եւ կրկին գոյութիւն եւ կրկին կամք³¹ եւ ներգործութիւն խոստովանել եւ ըստ Աւետարանին եւ հարցն դրուագի³²: Վասն համագոյ Հայր եւ Աստուծոյ եւ հաւասար իւր գոլով աստուածութեամբն³³ եւ կամամք³⁴ եւ ներգործութեամբ: Եւ նոյն ինքն համագոյ մեր գոլով մարդկութեամբ՝ եւ հաւասար մեր բնութեամբ, կամամք եւ³⁵ ներգործութեամբ: Ասէ³⁶ Գրիգոր Նիսեայ եպիսկոպոսն, եթէ. «Որոց ներգործութիւն մի, նոցա եւ զաւրութիւն մի գոլով եւ նոյն, զի ամենայն գործ ի զաւրութենէ ներգործի»: Իսկ ոչ է կարողութիւն անելի եւ եղականի բնութեամբ մի գոլ կամ զաւրութեամբ եւ կամամք³⁷ եւ ներգործութեամբ: Իսկ եթէ մի

²⁵ Ex. Fid. 59.49 չիք եւ զինքնութիւն հանաչեմք, թուեմք

²⁶ Ex. Fid. 59.52 չիք որում սոքա ստորագրին

²⁷ Ex. Fid. 59.56 Ὡν // B C E որոյ

²⁸ Ex. Fid. 59.58 + Καὶ τὸ ἀνάπαλιν· Ὡν ἡ φύσις ἡ αὐτή, τούτων καὶ ἡ ἐνέργεια ἡ αὐτή,

²⁹ Ex. Fid. 59.61 չիք եւ զգոյութիւն նորա

³⁰ պատերազմակից գոլով // Ex. Fid. 59.61 ἐχόμεθα

³¹ Ex. Fid. 59.62 չիք եւ կրկին կամք

³² Ex. Fid. 59.63 καταλλήλως αὐτοῖς ἐπομένους συνομολογεῖν

³³ E աստուածութեանն

³⁴ Ex. Fid. 59.63 չիք եւ կամամք

³⁵ Ex. Fid. 59.63 չիք բնութեամբ, կամամք եւ

³⁶ Ex. Fid. 59.66 + γοὺν ὁ μακάριος

³⁷ Ex. Fid. 59.69 չիք

ասեմք ներգործություն Քրիստոսի, յաստուածություն Բանին մերձեցուցանեմք զախտս մեր իմանալի հոգւոյն, զերկեղն ասեմ եւ զտրտմութիւն եւ զհոգս եւ զայլն:

Իսկ եթէ ասեն, եթէ ի սակս³⁸ Երրորդութեանն խաւսելով ասացին հարքն³⁹, եթէ որոց գոյութիւն մի, նոցա եւ ներգործութիւն մի է, եւ որոց բաժանեալ գոյութիւն, նոցա եւ ներգործութիւն այլ գոյով, եւ չէ պարտ զաստուածաբանութիւն բերել ի վերայ տնաւորութեանն, եւ մեք ասեմք: Եթէ վասն աստուածաբանութեան միայն ասացաւ ի նոցանէ, եւ ոչ ի նոյն հայրական ներգործութենէ Որդի զկնի մարմնանալոյն եւ ոչ յիւրում գոյացութեանն է: Վասն որում ասէր զայս, եթէ. «Հայր իմ մինչեւ ցայժմ գործէ, եւ ես գործեմ»⁴⁰, եւ «գոր տեսանէ զՀայր, զի առնէ, զնոյն եւ Որդի նմին նման գործէ»⁴¹, եւ «եթէ ինձ ոչ հաւատայք, սակայն գործոց իմոց»⁴² հաւատացէք»⁴³, եւ «գործքն զոր ես»⁴⁴ գործեմ՝ վկայեն վասն իմ»⁴⁵, եւ «որպէս Հայր յարուցանէ զմեռեալս եւ կենդանի առնէ, նոյնպէս եւ Որդի զորս կամի՝ կենդանի առնէ»⁴⁶: Եւ այս ամենայն ոչ միայն համագոյ Հաւր ցուցանեն զնա յետ մարդանալոյն, այլ եւ մի եւ նոյն⁴⁷ ներգործութիւն⁴⁸ ընդ նմա:

Եւ դարձեալ. թէ էիցն ամենայնի նախախնամութիւն ոչ միայն Հաւր եւ⁴⁹ Հոգւոյ, այլ եւ Որդւոյ է յետ մարմնանալոյն, եւ ներգործութիւն իւր է յէսս⁵⁰, նոյն ինքն ի Հաւր ներգործութիւնն է, եւ նա յետ մարմնաւորութեանն:

³⁸ + Ex. Fid. 59.72 τῆς ἁγίας

³⁹ Ex. Fid. 59.72 + οἱ ἄγιοι

⁴⁰ Յովհ. Ե 17. «Հայր իմ մինչեւ ցայժմ գործէ, եւ ես գործեմ»:

⁴¹ Յովհ. Ե 19. «Եթէ ոչ տեսանիցէ զհայրն զի առնէ. զի զոր նայն առնէ, զնոյն եւ որդին նմին նման գործէ»:

⁴² B E գործոցն

⁴³ Յովհ. Ժ 38. «Թէ եւ ինձ ոչ հաւատայք, սակայն գործոցն հաւատացէք»:

⁴⁴ Ex. Fid. 59.80 ἐγὼ // C E F չէք

⁴⁵ Յովհ. Ե 36 «գործքն զոր գործեմ՝ վկայեն վասն իմ»:

⁴⁶ Յովհ. Ե 21. «Զի որպէս հայր յարուցանէ զմեռեալս եւ կենդանի առնէ, նոյնպէս եւ որդի զորս կամի կենդանի առնէ»:

⁴⁷ F չէք

⁴⁸ Ex. Fid. 59.84 ἐνεργείας // B ներգործող

⁴⁹ Ex. Fid. 59.85 + ἁγίου

⁵⁰ իւր է յէսս // Ex. Fid. 59.86-87 τοῦτό ἐστιν

Եւ եթէ ի ձեռն սփանչեղագործութեանց ի հայրական գոյութենէն նանաչեալ եղեւ Քրիստոս, եւ գործն⁵¹ այն Աստուծոյ էր սփանչեղագործութիւն, ապա ի հայրական ներգործութեանն էր նա, յետ մարմնատրութեանն⁵²:

Իսկ եթէ մի ներգործութիւն էր աստուածութեան եւ մարդկութեան⁵³ նորա, եղիցի եւ ինքն խառնակեալ, կամ յայլ ներգործութենէ լիցի բայց ի Հաւրէ կամ Հայր ի խառնեալ ներգործութենէ եղիցի, եւ թէ ներգործութիւնն խառնակեալ գոյով, ապա եւ բնութիւնն նոյնապէս:

Իսկ եթէ ասեմ, եթէ ներգործութեամբն եւ դէմք մտանէ ի ներք, ասեմք, եթէ ներգործութեամբն դէմք ածի ի ներք⁵⁴, ստուգապէս⁵⁵ դիմաւ ներգործութիւն մտցէ, եւ լինիցի իբրեւ երեք դէմք, որ են անձինք սուրբ Երրորդութեանն, նոյնապէս եւ երեք ներգործութիւնս, կամ որպէս մի ներգործութիւն է, այնպէս եւ մի եղիցի եւ դէմք եւ մի⁵⁶ անձն: Եւ միաձայնեալ ասացին հարքն ի մի գոյութենէ եւ ի մի ներգործութենէ երեք անձինս եւ դէմք նոցա⁵⁷:

Եւ դարձեալ եթէ ներգործութեամբ դէմք բերեալ լինի, ոչ միոյ եւ ոչ երկուց ներգործութեանց Քրիստոսի ասելով հարքն⁵⁸, ոչ մի եւ ոչ երկուս դէմս սահմանեցին:

Այլ իբրեւ ի ջեռուցեալ սուր բնութիւնմն ամբողջ պահին հրոյն եւ երկաթոյն, նոյնապէս եւ երկու ներգործութիւն եւ կատարելութիւն նոցա: Վասն զի երկաթ ունի զհատողականութիւն, եւ հուր՝ զկիզողութիւն, եւ հատումն յերկաթոյ ի⁵⁹ բնութենէն կատարի, եւ կիզումն հրոյ ներգործական: Եւ պահեալ լինին բաժանմունք որակութեան նոցա ի կիզողականին եւ հատողականն, եւ ի հատողականին կիզողականն, թէպէտ եւ ոչ կիզել առանց հատման կատարի⁶⁰, եւ հատումն առանց կիզելոյ: Եւ ոչ յաղագս կրկին գոյոյ⁶¹ ներգործութեանն կրկին ասեմք զանձն⁶² ջեռուցեալ սրոյն, եւ ոչ ի սակս մի գոյոյ դէմք

⁵¹ C E F գործովն

⁵² Ex. Fid. 59.87 չիք եւ եթէ ի ձեռն սփանչեղագործութեանցն... յետ մարմնատրութեանն

⁵³ Ex. Fid. 59.91 σαρκός

⁵⁴ B E ներքս

⁵⁵ Ex. Fid. 59.95 κατὰ τὴν εὐλογον ἀντιστροφὴν

⁵⁶ Ex. Fid. 59.98 μία // C E F չիք

⁵⁷ Ex. Fid. 59.100 չիք երեք անձինս եւ դէմք նոցա

⁵⁸ ասելով հարքն // Ex. Fid. 59.102 θεσπίσαντες

⁵⁹ B C F չիք

⁶⁰ Ex. Fid. 59.109-110 + μετὰ τὴν ἔνωσιν

⁶¹ Ex. Fid. 59.111 + φυσικῶς

⁶² Ex. Fid. 59.111 չիք

ջեռեալ սրոյն խառնակումն առնեմք գոյացութեան բաժանմանց նոցա: Նոյն-
պէս եւ Քրիստոս աստուածութեանն իւր աստուածային եւ ամենագաւառ ներ-
գործութիւն էր, իսկ մարդկութեանն իբրեւ զմերս: Ներգործութիւն եւ ղէմք⁶³
մարդկային գործոյ այսք՝ կալեալ զձեռանէ⁶⁴ մանգանն ձգէր⁶⁵, իսկ աս-
տուածութեանն էր կենագործեալ զմեռեալն⁶⁶: Զի սոքա այլ եւ այլ, թէպէտ եւ
անմեկնելի են ի միմեանց, եւ են ի մի աստուածային անձն Բանին ներգոր-
ծութիւն: Եթէ վասն մի գոլոյ տէրունական առանձնութեանն, մի է եւ ներգոր-
ծութիւնն, ապա մի գոլով անձին, մի ասասցես եւ զգոյութիւն նորա:

Եւ դարձեալ թէ մի ներգործութիւն⁶⁷ ասես, կամ աստուածային գոլով
կամ մարդկային եւ կամ ոչ ոք ի սոցանէ: Եւ եթէ Աստուծոյ ասես, Աստուած
միայն լիցի սոսկ մերկ ի մարմնոյ⁶⁸, եւ եթէ մարդոյ ասես, լոկ մարդ հայհոյես
զնա, իսկ եթէ ոչ աստուածային եւ ոչ մարդկային, ոչ Աստուած ասես եւ ոչ
մարդ, եւ ոչ ինչ իմիք⁶⁹ համագոյ, վասն զի ի ձեռն միատրութեան՝ առանձ-
նատրութեան իմֆնութիւն եղեւ մի եւ նոյն կալով, եւ ոչ բարժանմունս⁷⁰ բնու-
թեան գտաւ: Իսկ բաժանումն բնութեանցն մինչ պահեալ լինի, պահին ամ-
բողջ եւ ներգործութիւնք նոցա, վասն զի ոչ գոյ բնութիւն առանց ներգործու-
թեան:

Եթէ մի է Քրիստոսի էութեանն⁷¹ ներգործութիւն կամ եղական լիցի կամ
անեղ, զի ի միջոցի այսոցիկ⁷² ոչ գոյ⁷³ ներգործութիւն, որպէս եւ ոչ բնութիւնք:
Եւ եթէ եղական գոյ, զեղական միայն յայտնէ զբնութիւն: Իսկ եթէ անեղ, զա-
նեղն միայն պարագրէ զբնութիւն եւ զգոյութիւն: Զի պարտ է անկասկածելի
որ ընդ նմանութեան բնութեանն եղիցին բնական գործք, վասն զի անհնար
է էութիւն ունել ի պակասել⁷⁴ բնութեան կրից: Իսկ բնութեան ներգործութիւն
ոչ յարտաբնոցն է, եւ այս յայտ է, զի ոչ է եւ ոչ ճանաչել կարելի է զբնութիւն

⁶³ ներգործութիւն եւ ղէմք // Ex. Fid. 59.115 ἀποτέλεσμα

⁶⁴ C չիք

⁶⁵ Ղուկ. Ը 55:

⁶⁶ Ex. Fid. 59.116 չիք

⁶⁷ Ex. Fid. 59.120 + ἐπὶ τοῦ κυρίου

⁶⁸ Ex. Fid. 59.122 τῆς καθ' ἑμᾶς ἀνθρωπότητος // B om. καθ' ἑμᾶς

⁶⁹ Ex. Fid. 59.124 οὐδὲ τῷ πατρὶ οὐδὲ ἡμῖν

⁷⁰ Ex. Fid. 59.125 ἡ διαφορά // C E F բարժանմունք

⁷¹ Ex. Fid. 59.128 τοῦ δεσπότη Χριστοῦ

⁷² C այսոցիկ

⁷³ Ex. Fid. 59.139 // E F B + այլ

⁷⁴ Ex. Fid. 59.132 ἐλλειποῦς // F չիք ի պակասել

առանց բնական ներգործութեանն: Զի գոր⁷⁵ ներգործէ իւրաքանչիւրն, նովաւ զբնութիւնն իւր հաւատացոյցանէ, որ ի նմա անփոխադրելի է:

Եթէ մի է ներգործութիւն Քրիստոսի, նոյն ինքն է աստուածային եւ մարդկային ներգործութիւն, եւ ոչ ոք յէիցս կարող է, մինչ դեռ կայ ի բնական կարգի իւրում, գործել զհակառակ ինչ: Վասն զի ոչ կարէ զովացոյցանել եւ ջեռուցանել հուր, եւ ոչ չորացուցանել եւ տամկացուցանել ջուր: Եւ արդ զիւս՝ որ բնութեամբ կատարեալ Աստուած էր եւ բնութեամբ կատարեալ մարդ եղել, զսփանչելիսն եւ զախտս եւ զչարշարանս⁷⁶ միով ներգործութեամբ կատարէր:

Եթէ զմիտք մարդոյ առ Քրիստոս⁷⁷, մտախորհ լինէր ստուգապէս, նաեւ մշտնջենատրաբար խորհէր, վասն զի ներգործութիւն մտաց խորհելն գոյով, որով եւ մարդկապէս ներգործող եւ մշտնջենատր ներգործող է Քրիստոս:

Ասէ⁷⁸ Ոսկեբերան ի մեկնութիւն Գործոց առաքելոցն⁷⁹ յերկրորդ ճառին. «Ոչ ոք մեղիցէ, եթէ եւ զչարշարանք իւր ներգործութիւն կոչէ, վասն զի պատահմամբ ամենայն ախտից գործեաց զմեծն այն եւ զսփանչելի գործ այն, որ զմահ ելոյծ եւ զայլ⁸⁰ ամենայն մեծամեծս⁸¹ կատարեաց»:

Եթէ ամենայն ներգործութիւն միոյ ուրումն⁸² բնութեան գոյական ներգործութիւն սահմանի, որպէս ասացին, որք այսոցիկ փոյթ յանձին ունէին, ո՞վ ետես երբէք ուրեք անշարժ կամ ամենեւիմբ անգործ բնութիւն եւ կամ ներգործութիւն գտեալ եղել, որ ոչ էր շարժութիւն բնութեանն զաւրութեան: «Իսկ մի բնական ներգործութիւն Աստուծոյ եւ արարածոյն նորա⁸³» ոչ ոք ի բարեմտացն⁸⁴ իմանալ իշխեաց⁸⁵ երբէք, որպէս երանելին Կիրել ապ: Եթէ⁸⁶ ոչ

⁷⁵ C E + եւ

⁷⁶ Ex. Fid. 59.140 չիք

⁷⁷ Ex. Fid. 59.141-42 + ἡγοῦν ψυχὴν νοεράν τε καὶ λογικὴν

⁷⁸ Ex. Fid. 59.144 + Ὁ δὲ ἅγιος Ἰωάννης

⁷⁹ Ex. Fid. 59.144 չիք

⁸⁰ Ex. Fid. 59.147 τὰ ἄλλα // B չիք

⁸¹ Ex. Fid. 59.147 չիք

⁸² F որումն

⁸³ Ex. Fid. 59.152 չիք

⁸⁴ F բարի մտացն

⁸⁵ իմանալ իշխեաց // Ex. Fid. 59.153 δοίη

⁸⁶ Ex. Fid. 59.153 չիք

կարէ⁸⁷ կենդանի առնել զՂազար մարդոյ բնութիւն⁸⁸, եւ ոչ արտասուէր աստուածային իշխանութիւն, վասն զի արտասու մարդոյ որակութիւն է, իսկ կենագործեալ զմեռեալն՝ անձնաւոր կենարարին ինքնութիւն⁸⁹: Այլ այսպէս հասարակաց երկուցն է ամենայն՝ վասն մի եւ նոյն գոլով առանձնաւորութեանն: Վասն զի մի է Քրիստոս՝ մի դէմք, որ է անձն իւր, այլ երկուս ունելով կատարեալ⁹⁰ բնութիւնս՝ Աստուծոյ եւ մարդոյ: Վասն զի աստուածութեան բնական փառաւորութիւն հասարակաց եղեւ իւրաքանչիւրոցն վասն նոյն գոլոյ անձնաւորութեանն, իսկ մարմնոյն խոնարհագոյնմն⁹¹ հասարակաց են: Զի մի եւ նոյն էր, որում առ ինչ⁹² սա եւ նա գոլով, այսինքն՝ Աստուած եւ մարդ, եւ նմա գոլով աստուածայինն եւ մարդկայինն: Զի աստուածային սփանշեալ գործութիւնմն աստուածութիւն առնէր, այլ ոչ առանց մարմնոյն, իսկ խոնարհագոյնսն մարմինն կրէր⁹³, այլ ոչ առանց աստուածութեանն: Վասն զի ընդ շարշարելի մարմինն միացեալ էր անախտաբար եւ անշարշարելի մնացեալ աստուածութիւնն, եւ շարշարանաւմն կատարէր զփրկութիւնն եւ կենաց պատճառ լինելով աստուածութիւն Բանին⁹⁴ եւ մինչ ներգործէր աստուածութիւն Բանին⁹⁵, ի նմա էր եւ միտքն իւր իմացող եւ կատարող լինելով գործելոցն⁹⁶:

Վասն զի յիւրմէ մեծութենէն աստուածութիւն տայր մարմնոյն, եւ ինքն անհաղորդ մնայր ի շարշարանաց եւ յախտից⁹⁷ մարմնոյն: Զի ոչ որպէս ընդ մարմնոյն աստուածութիւնն Բանին ներգործէր, նոյնպէս եւ հանդերձ աստուածութեամբ ախտանայր մարմինն: Վասն զի գործարան աստուածութեանն երեւէր⁹⁸ մարմինն: Թէպէտեւ ի սկզբանէ յղութեանն ոչ ինչ էր առանձին բաժանեալ նոցա տեսակ կամ անձն, այլ մի դէմս եւ անձն լինելով ամե-

⁸⁷ B C E կարէր

⁸⁸ Տէ՛ս Յովն. ԺԱ. 43-44:

⁸⁹ իսկ կենագործեալ զմեռեալն՝ անձնաւոր կենարարին ինքնութիւն // Ex. Fid. 59.155 ἢ δὲ ζῶνι τῇς ἐννοουστᾶτος ζῶνις

⁹⁰ Ex. Fid. 59.158 չիք

⁹¹ F սորագոյնմ Ex. Fid. 59.160 + ἐκατέρω

⁹² Ex. Fid. 59.161 չիք որում առ ինչ

⁹³ Ex. Fid. 59.164 չիք

⁹⁴ Ex. Fid. 59.16 չիք եւ կենաց պատճառ լինելով աստուածութիւն Բանին

⁹⁵ E չիք եւ մինչ ներգործէր աստուածութիւն Բանին

⁹⁶ F գործոցն

⁹⁷ F յաղթից

⁹⁸ Ex. Fid. 59.171 ἐχρημάτισεν

նայն յայնմ ժամու կատարելութիւնն⁹⁹: Այլ այնպէս այնցն անբաժանելի գործելոցն ոչ միով տեսակաւ խառնակեցաւ¹⁰⁰, այլ թէ որ որոյ բնութեան գոլով¹⁰¹ յորակութենէ ներգործութեանն նանաշեմբ¹⁰²:

Վասն զի ներգործե¹⁰³ Քրիստոս իւրաքանչիւրով բնութեամբն եւ «ներգործէ իւրաքանչիւրն բնութիւն զիւրն¹⁰⁴ գործ, հաղորդակից գոլով երկրորդին», ի ձեռն Բանին առնելով, գոր անկ էր Բանին, տէրութեան եւ իշխանութեան աստուածութեանն, որքան թագաւորական եւ¹⁰⁵ իշխանական գոլով, իսկ մարմնովն կատարելով, որքան էին մարմնոյն կամաւ եւ ըստ կամաց ի նմա միացելոյ Բանին Աստուծոյ, որով եւ ինքն ի գոյութիւն եկն: Վասն զի ոչ եթէ ինքն ինքեամբ առնէր զդիմելութիւն բնութեամբ առ ախտս եւ ոչ դարձեալ ի տրտմականացն յետ դառնալ եւ հրաժարել, կամ արտաբուստ դիպելոց պատահմանց¹⁰⁶, այլ շարժէր միայն զկնի բնութեանն¹⁰⁷ կամաւ Բանին եւ թողացուցանելով¹⁰⁸ տնտեսութեամբ պատահեալ նմա եւ գործել զիւրն¹⁰⁹, որպէս զի ի ձեռն կրից գործոց բնութեան հաւատացուցանէր զնշմարտութիւնն:

Քանզի որպէս ի վեր քան զգոյութիւն¹¹⁰ գոյացաւ ի կուսէն բնութեամբ¹¹¹, այնպէս եւ¹¹² ի վեր քան զմարդկան¹¹³ գործէր զմարդկայինս, եւ զի ի վերայ անկայուն¹¹⁴ ջրոյն գնալով հողեղէն ոտիւք, ոչ ի հող թանձրացոյց

⁹⁹ կամ անձն, այլ մի դէմս եւ անձն լինելով ամենայն յայնմ ժամու կատարելութիւնն // Ex. Fid. 59.173-174 ἄλλ' ἐνδὸς προσώπου αἱ τοῦ παντὸς χρόνου πράξεις ἐκατέρας μορφῆς γεγόνασιν

¹⁰⁰ Ex. Fid. 59.175 συγχέομεν

¹⁰¹ բնութեան գոլով // Ex. Fid. 59.175 εἴη μορφῆς

¹⁰² F նանաշի

¹⁰³ C ներգործութիւն է

¹⁰⁴ E զիւր C իւրն

¹⁰⁵ F կամ

¹⁰⁶ Ex. Fid. 59.184 + ἔπασχεν

¹⁰⁷ C բնութեանցն

¹⁰⁸ C E թուլացուցանելով

¹⁰⁹ C զիւրաքանչիւրն

¹¹⁰ E ի վեր գոյութեամբ

¹¹¹ գոյացաւ ի (F չիք) կուսէն բնութեամբ // Ex. Fid. 59.188 οὐσιώθη ἐκ παρθένου κυθηεῖς

¹¹² C F չիք

¹¹³ E մարդկան

¹¹⁴ = Ex. Fid. 59.189 // C E F + բնութեան

զջուր, այլ աստուածական իւրով¹¹⁵ զաւրութեամբն հաստատեաց¹¹⁶ առ անհեղելութիւն, նովին¹¹⁷ կրելով զմարմնական ոտից իւրոց ծանրութիւն: Եւ զի ոչ մարդկապէս ներգործէր զմարդկայինս (զի ոչ մարդ միայն էր, այլ եւ աստուած, եւ վասն այնորիկ կենդանարար եւ կենսագործող էին շարշարանք նորա), եւ ոչ աստուածապէս ներգործէր զաստուածայինսն (զի ոչ աստուած միայն, այլ եւ մարդ էր, որով եւ մերձենալով եւ բանիւ եւ այդպիսեամբ մարմնականամ¹¹⁸ առնէր զաստուածային զսփանչելիս¹¹⁹):

Իսկ եթէ ասացէ ոք, եթէ «ոչ ի սակս լուծանելոյ զմարդկային ներգործութիւն ասեմք Քրիստոսի զմի ներգործութիւն, այլ որովհետեւ մինչ հետեւին¹²⁰ աստուածային ներգործութեանն մարդկային ներգործութիւնք, ախտք կոչին: Վասն այսորիկ մի ասեմք զոչ ներգործութիւն Քրիստոսի: Ասեմք մեք¹²¹, եթէ նոյն է որք բնութիւնն մի ասեն, ոչ վասն լուծանելոյ զմարդկային բնութիւն ասեն, այլ վասն ընդ նմա նանաչել զոչ մարդկային բնութիւնն ընդ աստուածային եւ շարշարելի ասեն զոչ: Այլ մեզ քաւ լիցի ասել, եթէ վասն ընդ նմա նանաչիւր մարմնոյ ներգործութիւն ընդ աստուծոյն գործոյ, եւ վասն այսորիկ շարշարանք կոչի եւ ախտ մարմնական շարժութեանն: Վասն զի ոչ մի էութիւն հասարակաց ասին վասն մերձ առնելոյ կամ համաման գոլոյ, եթէ ի մի նանաչին եւ սահմանին, որով եւ այսպէս հակառակ միմեանց գտանին գործք գոյիցն: Վասն զի եթէ վասն ներգործող գոլոյն աստուածային շարժութիւնն ախտ կոչի¹²², ապա ստուգիւ ախտ է մարդկային շարժութիւն, եւ վասն բարի գոլոյ աստուածային բնութեանն շար է մարդկային բնութիւնն: Եւ դարձեալ դիմաբանութեամբ դարձուցեալ վասն ախտ կոչելոյ զմարդկային շարժութիւնն յաղագս այսորիկ ներգործութիւն կոչի աստուածային շարժութիւն, եւ վասն շար լինելոյ մարդկային բնութիւնս¹²³ այլ իմն անուն կոչելի է¹²⁴

¹¹⁵ Ex. Fid. 59.190 ὑπερφυσί

¹¹⁶ = Ex. Fid. 59.191 // C E F + զջուր

¹¹⁷ Ex. Fid. 59.191 μὴ

¹¹⁸ Ex. Fid. 59.195 չիք

¹¹⁹ C սփանչելիս

¹²⁰ F հետին

¹²¹ Ex. Fid. 59.200 + Κατὰ τοῦτον τὸν λόγον καὶ

¹²² Ex. Fid. 59.207 չիք ախտ կոչի

¹²³ F մարդկայինութիւնս

¹²⁴ այլ իմն անուն կոչելի է // Ex. Fid. 59.211 ἀγαθὴ ἔσται

զաստուածայինն»։ Եւ այսպէս չար լիցին ամենայն եղականք, եւ ստէ, որ ասացն, եթէ «Ետես Աստուած զամենայն ինչ, զոր արար, եւ բարի են յոյժ»¹²⁵։

Իսկ մեք ասեմք, եթէ «սուրբ հարքն եւ առաջին իմաստունքն»¹²⁶ բազում արինակաւ անուանեցին զմարդկային շարժութիւնս, նմանապէս առաջի եղելոյ մտածութեանց¹²⁷։ Զի կոչեցին զնա զարութիւն եւ ներգործութիւն, տարբերութիւն, շարժութիւն եւ ինքնութիւն, որպիսութիւն եւ որակութիւն եւ ախտակրութիւն։ Եւ ոչ վասն համանման գոյ աստուածային բնութեան կոչեն զայս¹²⁸, այլ իբրեւ ի մի ժողովեալ եւ անփոփոխելի գոյով զարութիւն կոչեն¹²⁹, իսկ ներգործութիւն յայս սակս իբրեւ զկերպարանող յամենայն միատեսակս անփոփոխելապէս յառաջաբերող գոյով, իսկ բարձանելութիւն¹³⁰ իբրեւ զբարձանող¹³¹ ինքնութեամբ զէսս¹³², իսկ շարժութիւն¹³³ իբրեւ զհաստատ ինչ¹³⁴ իմն եւ միայն¹³⁵ առ ինքն եւ ոչ առ այլս էանալով, իսկ որպիսութիւն՝ իբրեւ զտեսակ ներգործող¹³⁶, իսկ որակութիւն՝ իբր զսահման լինել ինքնութեան¹³⁷, իսկ ախտ՝ իբրեւ զշարժական ինչ, զի ամենեւեմ առ Աստուած եւ որք զկնի Աստուծոյ են¹³⁸, ախտանան եւ շարժեալ լինին իբրեւ ոչ ինքնազարմ եւ ինքնաշարմ, ոչ երբեք վասն¹³⁹ համանման գոյոյ¹⁴⁰, որպէս ասացաւ, ըստ արարչագործութեանն, որ ի նոսա եղեալ եղեւ բան յամենեցուն հաստատողէ¹⁴¹ պատճառէն։ Վասն այսորիկ ընդ աստուածային համաձայնողին զնա ներգործութիւն անուանեցին։ Վասն զի այն որ ասաց, եթէ «Ներգործէ

¹²⁵ Ծննդ. Ա. 31:

¹²⁶ Ex. Fid. 59.214 չիք եւ առաջին իմաստունքն

¹²⁷ նմանապէս առաջի եղելոյ մտածութեանց (C E F եղելոյ մտածութեան) // Ex. Fid. 59.215
πρὸς τὰς ὑποκειμένας

¹²⁸ Ex. Fid. 59.217 չիք բնութեան կոչեն զայս

¹²⁹ Ex. Fid. 59.218 չիք

¹³⁰ C բարձանելութիւն

¹³¹ F բարձանող C զբարձանող

¹³² Ex. Fid. 59.219 չիք ինքնութեամբ զէսս

¹³³ Ex. Fid. 59.220 + ὡς ἐνδεικτικῶν, ἰδιότητα δὲ

¹³⁴ C չիք

¹³⁵ C մի սոյն

¹³⁶ Ex. Fid. 59.221 εἰδοποιόν // C E F զտեսակի ներգործող

¹³⁷ Ex. Fid. 59.221 չիք իսկ որակութիւն՝ իբր զսահման լինել ինքնութեան

¹³⁸ C աստուածային

¹³⁹ F վասն երբեք

¹⁴⁰ վասն համանման գոյոյ (F գոյով) // Ex. Fid. 59.223 κατὰ ἀντιδιαστολήν

¹⁴¹ C ամենեցուն հաստատող

խրաֆանչիւրն բնութիւն¹⁴² հաղորդութեամբ երկրորդին», այլ զինչ արասցէ: Կամ որ ասաց¹⁴³, թէ «զաւուրս փառասուն անսուաղ ելով ապա ֆաղցեալ¹⁴⁴ (վասն զի տայր բնութեանն, յորժամ կամէր գործել զիրն), եւ կամ որք քաղմատեսակ ներգործութիւն ասացին զոլ ի նմա, կամ որք կրկին, կամ որք այլ եւ այլ»: Զի այսոքիկ անուանց փոփոխմամբն զերկրորդն ներգործութիւնն նշանակեն: Եւ վասն զի քաղում անգամ փոխանականուան թիւն յայտնի կացուցանէ զինքն¹⁴⁵ եւ ասելովն թէ աստուածային եւ մարդկային: «Քանզի բարժանումն բարժանելոցն է բարժանումն»: Իսկ որ ոչ էն էացեալ զիա՞րդ կրկին լինել կարեն¹⁴⁶:

¹⁴² Ex. Fid. 59.227 *μωροφῆ*

¹⁴³ F ասացէ

¹⁴⁴ Մատթ. Դ 2. «Եւ պահեալ զփառասուն տիւ եւ զփառասուն զիշեր՝ ապա ֆաղցեալ»:

¹⁴⁵ E զէն

¹⁴⁶ կրկին լինել կարեն // Ex. Fid. 59.233 *διοίσουσιν*

ՀԳ. Վասն որ զկնի ի մեռելոց յարութենէն¹:

Իսկ զկնի ի մեռելոց յարութեանն զամենայն ախտս ապականութեան մեռժեաց յետս՝ զհաղց, զծարաւ, զգում, զաշխատել եւ զայլ այդպիսիք: Եւ թէպէտ եւ յետ յարութեանն ճաշակեաց կերակուր², այլ ոչ արիմամբ բնութեանն (զի ոչ հաղցեալ եկեր³), այլ տեսակաւ ինչ տնաւիւնութեան առեալ, որպէս զի հաւատացուցէ զճշմարիտն յարութիւն, եթէ նոյն եւ մի է չարչարեալ եւ յարուցեալ մարմինն: Այլ ոչ հեռացան ի բնական մասանց հոգի եւ մարմին, այլ մարմին եւ հոգի բանական եւ մտաւոր, կամաւորական եւ ներգործական ունելով: Եւ այսպէս ել յերկինս եւ այսպէս նստեալ է ընդ աջմէ Աստուծոյ, կամելով աստուածապէս եւ մարդկապէս զմերն փրկութիւն եւ ներգործող, աստուածապէս զամենայն նախախնամականսն՝ զէսս պահեալ եւ ուղղեալ, իսկ մարդկապէս յիշելով զոր ի վերայ երկրի շրջելն եւ զլինելն տեսանող եւ գիտող գոյ, թէ որպէս երկրպագի յամենայն բանական եղականացս: Վասն զի գիտէ բանական⁴ իւր հոգին, եթէ անձամբ միատրեալ է ընդ Բանն Աստուած եւ ընդ նմա երկրպագի իբրեւ անեղին Աստուծոյ⁵: Վասն զի ելանել⁶ յերկինս եւ դարձեալ գալն անտի ներգործութիւնք են պարագրականք մարմնոյն, զի «այսպէս եկեցէ», ասացեալ է դարձեալ առ ձեզ, «զոր արինակ տեսանէք զելանելն յերկինս»⁷:

¹ Ex. Fid. 74.1 *Περὶ τῶν μετὰ τὴν ἀνάστασιν*

² Դուկ. ԻԳ 43. «Եւ առ եկեր առաջի նոցա, եւ զմնացորդսն ետ ցնոսա»:

³ Ex. Fid. 74.5 *ἐπείνασεν*

⁴ Ex. Fid. 74.13 *ἡ ἀγία*

⁵ անեղին Աստուծոյ // Ex. Fid. 74.15 *θεοῦ ψυχὴ καὶ οὐχ ὡς ἀπλῶς ψυχὴ*

⁶ Ex. Fid. 74.15 + *ἐκ γῆς*

⁷ Գործք Ա. 11. «զորարինակ տեսէք զնա երբեալ յերկինս»:

ՀԳ. Վասն ընդ աջմէ Հաւր նստելոյն¹:

«Ընդ աջմէ Հաւր Աստուծոյ նստեալ»² ասեն³ զՔրիստոս մարմնով, իսկ ոչ ընդ տեղեալ ինչ աջմէ ասեմք լեալ Հաւր: Վասն⁴ զի ո՞րպէս ունիցի անպարագրելին տեղեալ ստորագրիլ⁵ աջմէ: Վասն զի աչ եւ անեակ պարագրելոցն դրուագի: Իսկ «աչ Հաւր» կոչեմք զփառսն եւ պատիւ աստուածութեանն, յորում էր յառաջ քան զամենայն յափտեանս Բանն Աստուած, իբրեւ զԱստուած եւ համագոյ Հաւր, իսկ յետոյ մարմնացեալ նստաւ մարմնապէս⁶ ընդ ինքն փառաւորելով զմարմինն իւր, վասն զի երկրպագի միով երկրպագութեամբ հանդերձ մարմնովն իւրով յամենայն եղելոց⁷:

¹ Ex. Fid. 75.1 Περί τῆς ἐκ δεξιῶν τοῦ πατρὸς καθέδρας

² Մարկ ԺԶ 19:

³ Հմմտ. Ex. Fid. 75.2 κεκαθικέναι φαμέν // B C D E ասեն նստեալ

⁴ A չիք

⁵ ունիցի... ստորագրիլ // Ex. Fid. 75.4 σχοίη

⁶ C մարմնաւորապէս

⁷ A ձեռագրի քաղվածքն այստեղ ավարտվում է:

ՀԵ. Առ ասողսն, եթէ երկու բնութիւն է Քրիստոս. կամ զեղականն պաշտեցէ իբրու եղականի երկրպագոմ, կամ մի բնութիւն երկրպագելի ասացէ, եւ մի բնութիւն ոչ է երկրպագելի¹:

Որդոյն ընդ Հաւր եւ ընդ Հոգւոյն երկիր պագանեմք, որ անմարմին եւ անկերպարան² էր նախ քան մարմնանալն, եւ զնոյն այժմ մարմնացեալ եւ մարդացեալ ընդ աստուածութեանն գոյ: Արդ զմարմինն իւր ըստ իւրում³ բնութեան, եթէ բաժանես մանրամասն ֆննութեամբ, զտեսանելին յիմանալոյն, ոչ է երկրպագելի, իբրեւ զեղական գոյով, իսկ միատրութեամբ⁴ Բանին Աստուծոյ վասն իւր եւ ընդ նմա երկրպագի: Զի զոր արինակ արեայ մերկ երկրպագի եւ զգեցեալ ծիրանիք⁵, իսկ ծիրանիք թէ թափուր ծիրանի է, կոխելի եւ արհամարհելի լինի, իսկ թագաւորի զարդ եւ զգեստ լեալ պատուի եւ երկրպագի ընդ նմա, եւ որ ոք արհամարհէ զնա, մահու⁶ մատնեսցի: Եւ որպէս լոկ փայտ ոչ անմեծենալի գոյ շաւշափելեաց, իսկ իբրեւ ընդ հուր միացեալ կայծանայ, ոչ ինքն ինքեամբ, այլ միատրելով ընդ հուր, անմեծենալի լինիցի, եւ ոչ բնութիւն փայտի է անմեծենալի, այլ կայծ հրոյ⁷: Նոյնպէս եւ մարմին ըստ իւրում բնութեանն, ոչ երկրպագելի գոյով, այլ երկրպագին ի մարմնացեալ Բանն Աստուծոյ մի գոյովն ոչ ինքեամբ, այլ անձնատրութեամբ միատրելով ընդ նմա Բանին Աստուծոյ, եւ ոչ ասեմք լոկ մարմնոյ երկիր պագանել մեք, այլ մարմնոյ Աստուծոյ, այս ինքն մարմնացելոյ Աստուծոյ:

¹ Ex. Fid. 76.1-3 Πρὸς τοὺς λέγοντας· Εἰ δύο φύσεις ὁ Χριστός, ἢ καὶ τῇ κτίσει λατρεύετε φύσιν κτιστὴν προσκυνοῦντες ἢ μίαν φύσιν προσκυνητὴν λέγετε καὶ μίαν ἀπροσκύνητον

² E F + uen

³ B իւրն

⁴ E F միատրութիւն

⁵ Ex. Fid. 76.10 չ/ք

⁶ Ex. Fid. 76.12-13 + ὡς τὰ πολλὰ

⁷ Ex. Fid. 76.16 ὁ ἀνθραξ ἦτοι τὸ πεπυρωμένον ξύλον

**ՀԶ. Ընդէ՛ր Որդին Աստուծոյ մարմնացաւ եւ ոչ Հայր, եւ ոչ Հոգի:
Եւ կամ թէ զի՞նչ ուղղեաց եւ կազմեաց իւրովն մարմնանալովն¹:**

Հայր է Հայր եւ ոչ Որդի, Որդի է Որդի եւ ոչ Հայր, Հոգի է Հոգին սուրբ, եւ ոչ Հայր, եւ ոչ Որդի: Վասն զի ինքնութիւն անշարժելի² գոլով, կամ զի՞արդ ինքնութիւն եղիցի շարժեցեալ եւ դրդուեալ³: Վասն այսորիկ Որդին Աստուծոյ որդի մարդոյ լինի⁴, որպէս զի անշարժ կացցէ մնացցէ ինքնութիւն: Քանզի որ⁵ Որդի Աստուծոյ էր, որդի մարդոյ եղեւ եւ մարմնացեալ սրբունոյ Աստուածածնէն եւ ոչ փոփոխեցաւ յորդէականին⁶ բնութենէն:

Այլ մարդացաւ Որդին Աստուծոյ այսու աղագաւ, որպէս զի որպիսի ինչ ստեղծեաց զմարդ, այնպիսի գոյութիւն տացէ նմա: Վասն զի ստեղծ զնա ըստ պատկերի իւրում մտաւոր եւ անձնիշխան, եւ ըստ նմանութեան, այսինմն՝ կատարեալ առաքինութեամբ, որքան եւ կարող էր բովանդակել բնութիւն մարդկային: Վասն զի այսոքիկ իբրեւ զտիպ եւ նմանութիւն են աստուածային բնութեանն, անհոգ եւ անշփոթելի, անմեղ, բարերար, իմաստուն, արդար եւ յամենայն շարութենէ աւտար գոլով: Եւ այսպէս ի հաղորդութիւն իւր եղ զմարդ, զի⁷ վասն անապական լինելոյ ստեղծ զնա⁸, որպէս զի հաղորդութեամբն իւրով հանցէ զնա յանապականութիւն: Իսկ որովհետեւ ի ձեռն պատուիրանագանցութեանն զնմանութիւն պատկերին Աստուծոյ մթացուցեալ խառնակեցաւ, ի շարիս խոտորեալ յաստուածային հաղորդութենէն մերկացաւ (վասն զի զինչ համանման գոլով խաւարի առ լոյս⁹), եւ ի կենաց արտափսեալ ընդ ապականութեամբ մահու անկաւ, այլ նա զոր ետ ի բարձրագունէն, եւ մեզ ոչ պահեցաւ, առնու ի վատթարէն՝ ի մերմէ ասեմ բնութենէ, որպէս զի յանձն իւր եւ ինքեամբ նորոգեացէ զայն, որ ըստ պատկերին եւ ըստ նմանութեան զիծ¹⁰, ուսուցանելով զմեզ զառաքինական փա-

¹ Ex. Fid. 77.1-2 Διὰ τί ὁ υἱὸς ἐνηνθρόπησε καὶ οὐχ ὁ πατὴρ οὐδὲ τὸ πνεῦμα καὶ τί ἐνανθρωπήσας κατάρθωσεν

² C շարժելի

³ Ex. Fid. 77.5 μεταπίπτουσα // E F դրդեալ

⁴ C եղանի

⁵ C չիք

⁶ = BCEGHKMN υἱότης // Ex. Fid. 77.8 τῆς οἰκείας

⁷ C չիք

⁸ Իմաստ. Բ 23. «Զի Աստուած հաստատեաց զմարդն յանեղծութեան»:

⁹ Բ Կորնթ. Զ 14. «զի՞նչ հաւասարութիւն է լուսոյ ընդ խաւարի»:

¹⁰ Ex. Fid. 77.23 չիք

ղափավարութիւն եւ հեշտագնաց արասցէ զնա մեզ անձամբ իւրով¹¹, եւ հաղորդ լինելով կենաց, ազատեսցէ¹² յապականութենէ, սկիզբ լինելով մերոյ յարութեան, եւ զխորտակեալ եւ զանպիտանացեալ¹³ անաւրն նորոգեսցէ, որպէս զի ի բռնութենէ ախտից եւ¹⁴ դիւաց ազատեալ յաստուածգիտութիւն վերակոչիցիմք եւ հաստատեսցէ եւ ուսուցէ համբերութեամբ եւ խոնարհութեամբ յաղթել յաղթողին:

Վասն այսորիկ դադարեցին արէնք դիւաց, եւ աստուածային արեամբ բժշկեցան ստեղծածք, կոտք եւ տանաւ նոցա¹⁵ փակեցան¹⁶, եւ աստուածգիտութիւն տնկեցաւ, երրորդութիւն համագոյ, անեղ աստուածութիւն սպասաւորի, մի Աստուած ճշմարիտ արարիչ ամենայնի եւ Տէր: Առաքինութիւն փաղափարի, եւ յոյս յարութեան յարութեամբն Քրիստոսի պարգեւեալ է, դողան դեմք ի մարդկանէ, որ նախ հնազանդեալ էին նոցա, եւ այս են սփանջելիք, զի այս ամենայն խաչին եւ շարշարանամ եւ մահուամբ ուղղեցան:

Յամենայն երկիր Աւետարան աստուածգիտութեան փարզեցաւ, ոչ պատերազմաւ եւ զինուոր, եւ զինուորաց յաղթութեամբ եւ հակառակութեամբ, այլ ի ձեռն փոփոնց մերկ եւ աղփատ անուամանց եւ հալածելոց¹⁷, մարմնով խաչեցելոյ ումեմն եւ մեռելոյ փարզաց, յորոց իմաստունք եւ հզաւր յաղթեցան, վասն զի զաւրացուցանէր զնոսա զաւրաւոր զաւրութիւն խաչեցելոյն: Որ կանխաւ ահաւոր էր մահ, յաղթահարեալ է, եւ որ ատելի համարեալ էր եւ դառն, քան զկեանս լաւագոյն համարեալ է¹⁸: Այսոքիկ են գալստեանն Քրիստոսի ուղղութիւնքն, այսոքիկ զաւրութեանն նորա վերայայտնութիւնք: Վասն զի ոչ իբրեւ զայն, զի մի ժողովուրդ ի ձեռն Մովսէսի յեգիպտոսէ ի ծառայութենէն փարատնի հերձմամբ ծովուն փրկեցան, այլ եւս առաւել ամենայն մարդկութիւն¹⁹ յապականութենէն մահու եւ ի դառն բռնութենէ մահու²⁰ փրկեցան, ոչ բռնաբար տարեալ լինելով յառաքինութիւն եւ ոչ յերկիր կործանեալ եւ հրով այրեալ եւ փարկոծեալ հրամայելով զմեղուցեալսն, այլ հեզութեամբ եւ երկայնմտութեամբ հաւատացոյց զմարդիկ

¹¹ Ex. Fid. 77.24 չիք անձամբ իւրով

¹² F չիք

¹³ F զապականեալ

¹⁴ Ex. Fid. 77.26 չիք ախտից եւ

¹⁵ Ex. Fid. 77.30 εἰδὼλον

¹⁶ C փակեցան

¹⁷ Ex. Fid. 77.36 + αἰκιζόμενοι, θανατούμενοι

¹⁸ որ ատելի համարեալ էր եւ դառն, քան զկեանս լաւագոյն համարեալ է = Ex. Fid. 77.41-42
 τῆς ζωῆς νῦν ὁ στυγερὸς καὶ μισητὸς πάλαι προκρίνεται // B որ ատելի համարեալ է

¹⁹ C մարդիկ

²⁰ Ex. Fid. 77.46 τῆς ἀμαρτίας C չիք եւ ի դառն բռնութենէ մահու

ընտրել զառափնութիւն եւ զոր ի նոցա նգնութիւն եւ անձուկ յանձն առնուլ: Վասն զի ի հնումն մեղուցեալն ի տանջանս մատնէին²¹ եւ ի նմին ի մեղս ընթանային²², իսկ արդ վասն բարեպաշտութեան եւ առափնութեան ի տանջանս մատնեն զանձինս եւ ի մահ եւ ի հարուածս:

Արդ ո՛վ Քրիստոս Աստուծոյ Բան եւ իմաստութիւն եւ զաւրութիւն եւ Աստուած ամենակալ, զի՞նչ հատուցոյ՞ քեզ յաղագս այսու ամենայնի՝ նուաստօք եւ աղքատօք²³, այլ զի քո է ամենայն, եւ ոչ ինչ խնդրես ի մէնջ, բայց միայն զկեալն մեր, եւ զայս եւս դու շնորհես մեզ: Իսկ մեք գոհանամք եւ խոստովանիմք, որք առաք²⁴ զանհասանելի բարերարութիւն քո, գոհութիւն քեզ վայել է, որ զգոյութիւն ետուր եւ զբարիոք գոլն պարգեւես եւ զմեզ, որ յայսցանէ անկեալ եմք, դարձեալ առ նա ի վեր հանես անճառելի քո ընդ մեզ զիջանելով:

²¹ В мата́нїи

²² Ex. Fid. 77.51 + καὶ θεὸς αὐτοῖς ἡ ἁμαρτία λελόγιστο

²³ նուաստօք եւ աղքատօք // Ex. Fid. 77.55 οἱ ἄποροι

²⁴ շնորհես մեզ: Իսկ մեք գոհանամք եւ խոստովանիմք, որք առաք // Ex. Fid. 77.55-56 διδοὺς καὶ λαμβάνουσι χάριν εἰδῶς

Հէ.¹ Առ որս հարցանեն, թէ անձն Քրիստոսի անեղ է² եթէ եղական³:

Անձն Բանին Աստուծոյ⁴ պարզ էր եւ անխառն եւ անեղ եւ անմարմին, իսկ մարմնացաւ⁵ եւ եղեւ խառնեալ յաստուածութենէն, զոր միշտ էր, եւ ի մարմնոյն, զոր էառ, եւ ունի զինքնութիւն երկուց բնութեանցն, որպէս եւ յերկուս բնութիւնս հանաչի⁶, եւ վասն այսորիկ մի եւ նոյն անձն անեղ գոյով աստուածութեամբ եւ եղական մարդկութեամբ, տեսանելի եւ անտեսանելի, որով բռնադատիմք կամ բաժանել զմի Քրիստոս երկուս անձինս ասել, կամ ուրանալ զբաժանումն բնութեանցն եւ փոփոխման եւ խառնակութեան լեալ ընդունակ, զոր մեզ փաւ լիցի ասել⁷:

¹ A հետևում է ՀԱ գլխին

² A չիք

³ C E F + է Ex. Fid. 78.1-2 Πρὸς τοὺς ἐρωτῶντας, εἰ ἡ ὑπόστασις τοῦ Χριστοῦ κτιστὴ ἐστὶν ἢ ἄκτιστος

⁴ E չիք | Ex. Fid. 78.3 + πρὸ τῆς σαρκώσεως

⁵ Ex. Fid. 78.4-5 + αὕτη γέγονε καὶ τῇ σαρκὶ ὑπόστασις

⁶ երկուց բնութեանցն, որպէս եւ յերկուս բնութիւնս հանաչի // Ex. Fid. 78.6-7 ἐν δυσὶ γνωρίζομένη ταῖς φύσεσιν

⁷ A հետևում է ՀԲ գլուխը Ex. Fid. 78.10 չիք զոր մեզ փաւ լիցի ասել

ՀԸ. Եթէ յորմէ եւ երբ կոչեցաւ Քրիստոս¹:

Ոչ որպէս ոմանք ստութեամբ բարբաջեն յառաջ Բան զայն, որ ի Կուսէն մարմնացաւ, զմիտս² մեր միացաւ Քրիստոս³ եւ յայնմհետէ կոչեցաւ Քրիստոս: Զի այս Որոգիւնէի բարբաջմանն են⁴ ցոյցք, եւ որ նախ գոլ զհոգիսն աւրինադրէր:

Իսկ մեք Քրիստոս լինել եւ կոչել ասեմք⁵ Բանին Աստուծոյ յայնմհետէ, յորում յորովայնի⁶ միշտկուսին բնակեցաւ եւ մարմին եղեւ անփոփոխելի եւ ւածեցաւ մարմինն աստուածութեամբն, վասն զի «ւածանելի⁷ մարմնոյն է աստուածութիւն⁸»՝ ըստ բանին Աստուածաբանին: Իսկ Բահանայազրուիսն Աղեքսանդրի⁹ Կիրեղ գրեալ¹⁰ առ¹¹ Թէոդոս ասէ. «Զպիտոյս ասեմ ես, զի ոչ¹² Աստուածն Բան առանց մարմնոյն, եւ ոչ¹³ մարմինն¹⁴ ի կնոջէ ծնեալ առանց Բանին միատրութեանն կոչելի էր Յիսուս Քրիստոս, վասն զի¹⁵ տնտեսական միատրութեամբ, որ յԱստուծոյ Աստուածն Բան, եւ որ ընդ նմա անհառապէս միացաւ մարմինն, կոչեալ եղեւ¹⁶ Յիսուս Քրիստոս»: Նոյնպէս եւ այլք բազումք ի հարցն գրեցին¹⁷, եթէ՝ «Անունն Քրիստոսի¹⁸ վայել է առանձինն միայն իմացեալ ինքեամբ¹⁹ Բանին Աստուծոյ²⁰ գոլով: Իսկ մեք ոչ այսպէս ուսեալ

¹ Ex. Fid. 79.1 Περὶ τοῦ πότε ἐκλήθη Χριστός

² A ընդ միտս

³ Ex. Fid. 79.3 τῷ θεῷ λόγῳ

⁴ A բարբաջման են C E F բարբաջմանէն է

⁵ Ex. Fid. 79.5 + τὸν υἱὸν

⁶ Ex. Fid. 79.6 + ἀγίας

⁷ E ւածանող B C D ւածող

⁸ ւածանելի մարմնոյն է աստուածութիւն // Ex. Fid. 79.7-8 χρίσις γὰρ αὕτη τῆς ἀνθρωπότητος (Gr. Naz. or 30.2.21-22)

⁹ E Աղեքսանդրոսի

¹⁰ A գրելով

¹¹ Ex. Fid. 79.9 + τὸν βασιλέα

¹² C չէք

¹³ A C E F + լով

¹⁴ Ex. Fid. 79.11 ναὸν // BC ἄνθρωπον

¹⁵ Ex. Fid. 79.12 + ἀνθρωπότητι

¹⁶ Ex. Fid. 79.13 νοεῖται

¹⁷ Նոյնպէս եւ այլք բազումք ի հարցն գրեցին (B գրեցան) // Ex. Fid. 79.13-14 Καὶ πρὸς τὰς βασιλίδας οὕτως· «Τινὲς φασιν

¹⁸ Ex. Fid. 79.14 // B C D E + ոչ

¹⁹ A ինքեան

²⁰ Ex. Fid. 79.15-16 τῷ ἐκ θεοῦ πατρὸς γενηθέντι

եղա՛մ հաւատալ կամ ասել, այլ՝ մինչ մարմին եղել Բանն, յայնժամ ասեմք²¹ Յիսուս Քրիստոս կոչել զնա: Զի մինչ ւածեցաւ իւղով ուրախութեան, որ է Հոգին Սուրբ յԱստուծոյ Հաւրէ, յայնժամ անուանեցաւ Քրիստոս: Եւ արդ վասն զի թէ մարդացելոյն սակս է ւածեալն, ոչ ոք երկմտեացէ յիրաւապէս խորհողացն»²²:

Իսկ միշտ յիշատակելին Աթանասիէ ի կենսատու Աստուծոյ²³ յայտնութիւնն բանս զոր ասաց, գրեալ է. «Որ ի սկզբանէ միշտ է եր²⁴ Աստուած, յառաջ Բան զմարմնով գալուստն իւր ոչ եր մարդ, այլ Աստուած էր առ Աստուած անտեսանելի, անպարագրելի²⁵, անշարշարելի, նաեւ ոչ անունն Քրիստոսի առանց մարմնանալոյն յիշեցի, վասն զի զկնի գայ այսր²⁶ անուան չարչարանք եւ մահ»:

Իսկ այն զի²⁷ Գիր ասէ. «Վասն այսորիկ ւած զԲեզ Աստուած Աստուած Բն»²⁸. այսպէս իմացիս, զի բազում անգամ²⁹ Գիրք իբրեւ զանցելոց խաւսի զհանդերձելոցն, իբր այն, զի ասէ. «Յետ այսորիկ ի վերայ երկրի երեւեցաւ եւ ընդ մարդկան շրջեցաւ»³⁰ (եւ ոչ եւս դեռ երեւեալ կամ շրջեալ ընդ մարդկան էր, յորժամ ասացաւ), եւ թէ՛ «Ի գետս բաբելացոց անդ³¹ նստեալ եւ լայալ»³² (եւ դեռ ոչ եւս լեալ³³ էին այս)³⁴:

²¹ Ex. Fid. 79.17 λέγομεν // A ասել

²² B C D E խորհրդողացն

²³ Ex. Fid. 79.22 չիք

²⁴ C E F եր առ փիւ է, եր

²⁵ Ex. Fid. 79.24 չիք

²⁶ B C այսու E այս

²⁷ Ex. Fid. 79.26 + ἡ θεία

²⁸ Սաղմ. ԽԴ 8. «Վասն այսորիկ ւած զԲեզ Աստուած Աստուած Բն»:

²⁹ Ex. Fid. 79.27 + ἡ θεία

³⁰ Բարութ Գ 38. «Յետ այսորիկ յերկրի երեւեցաւ՝ եւ ընդ մարդկան շրջեցաւ»:

³¹ Ex. Fid. 79.30 ἐκεῖ // B C չիք

³² Սաղմ. ՃԼԶ 1. «Ի գետս բաբելացոց, անդ նստեալ եւ լայալ»:

³³ A եալ

³⁴ C F + այսինքն՝ անեղ եւ եղական, անծնունդ եւ ծնեալ A հետեւած է ՀԴ գլուխը

**ՀԹ. Առ հարցողսն՝ եթէ երկու բնութիւն ծնաւ կոյսն,
կամ երկու կախեցաւ զխաչէն¹:**

Բնութեանն կոչի ածենիտոյն եւ ժենիտոյն, այսինքն՝ անեղ եւ եղական, անծնունդ եւ ծնեալ², որ երկու նուի զանեղն ասէ եւ միով նուի՝ զեղականն³: Իսկ անծնունդ եւ ծնեալ ոչ բնութեան Աստուծոյ ելով⁴, այլ առանձնաւորութեան, որ է անծնունդ եւ ծնեալ, միով նուի բաժանեալ⁵: Եւ է աստուածային բնութիւնն անեղ, իսկ ամենայն՝ զկնի աստուածային բնութեանն եղականն⁶: Եւ արդ տեսանի յաստուածային անեղ բնութիւն անծնելութիւն, զի ոչ ծնաւ Հայր⁷, եւ ծնելութիւն յՈրդոյ, զի ի Հաւրէն ծնաւ մշտնջենաւոր, իսկ ելողութիւն ի Հոգին Սուրբ: Իւրաքանչիւր տեսակի կենդանեաց սկզբունքն անծնունդ գոլով⁸, վասն զի ստեղծան⁹ յարարչէն, եւ ոչ ծնեալ եղեն ի նմանեացն: Զի ստեղծեալն եղական կոչի, իսկ ծնունդ Աստուծոյ է բնութեամբ¹⁰ այն, որ միայն ի հաւրէ համագոյ իւր Որդին միայն փայլատակեաց: Իսկ յեղականսն ծնունդ է, որ մերձաւորութեամբ հայրական եւ մայրական անձանց համագոյ նոցին անձն ծնանի, որով յայտ է, թէ ոչ բնութեանն ասի ծնանելն, այլ անձանցն առ ինչ գոլ¹¹: Զի թէ բնութեան էր, ոչ մի եւ նոյն բնութեան լինէր անծնունդն եւ ծնեալն, վասն զի բնութիւն կատարելի է¹²: Եւ արդ անձն ծնաւ¹³ աստուածածինն յերկուս բնութիւնս ծանուցեալ՝ աստուածութեամբ ի հաւրէ ծնեալ անժամանակ, իսկ յետին ժամանակին ի նմանէ մարմնացեալ մարդկութեամբ¹⁴ ծնեալ:

¹ Ex. Fid. 80.1-2 Πρὸς τοὺς ἐρωτῶντας, εἰ δύο φύσεις ἐγέννησεν ἡ ἀγία θεοτόκος, εἰ δύο φύσεις ἐπὶ σταυροῦ ἐκρέμαντο

² E ի լուս. F չիք այսինքն՝ անեղ եւ եղական, անծնունդ եւ ծնեալ Ex. Fid. 80.3 չիք

³ որ երկու նուի զանեղն ասէ եւ միով նուի՝ զեղականն // Ex. Fid. 80.3-4 δι' ἐνὸς τοῦ <ν> γραφόμενον, ὅπερ δηλοῖ τὸ ἄκτιστον καὶ κτιστόν

⁴ Ex. Fid. 80.5 չիք Աստուծոյ ելով

⁵ որ է անծնունդ եւ ծնեալ, միով նուի բաժանեալ // Ex. Fid. 80.5-6 ἥτοι τὸ γεννηθῆναι καὶ τὸ μὴ γεννηθῆναι, ὅπερ διὰ τῶν δύο <νν> ἐκφέρεται

⁶ Ex. Fid. 80.7 + γεννητὰ ἥτοι κτιστά

⁷ անծնելութիւն, զի ոչ ծնաւ Հայր // Ex. Fid. 80.8-9 τὸ μὲν ἀγέννητον ἐν τῷ πατρὶ (οὐ γὰρ ἐγεννήθη)

⁸ Ex. Fid. 80.11 + ἀλλ' οὐκ ἀγέννητα

⁹ Ex. Fid. 80.11 γεγόνασι // B C ստեղծ

¹⁰ Ex. Fid. 80.13 չիք

¹¹ Ex. Fid. 80.16 չիք առ ինչ գոլ

¹² Ex. Fid. 80.17 չիք վասն զի բնութիւն կատարելի (B անկատարելի) է

¹³ Ex. Fid. 80.17 + ἡ ἀγία

¹⁴ Ex. Fid. 80.20 σαρκί

Իսկ թէ ասեն հարցողն, եթէ նոյն ինքն ծնեալն ի¹⁵ կուսէն երկու բնութիւն է, ասեմք՝ այո¹⁶, «վասն զի Աստուած է եւ մարդ» երկոքումք կատարեալ¹⁷: Նոյնպէս եւ զխաչելութիւն, զմահ¹⁸ եւ զյարութիւն եւ զհամբարձումն անձին ասեմք գոյ, եւ ոչ բնութեանն: Չարչարեցաւ Քրիստոս¹⁹ յերկուս կատարեալ²⁰ բնութիւնս գոյով, չարչարելի բնութեամբն կրելով խաչեցաւ, կախեալ զփայտէ մարմնով, զի աստուածութիւն ոչ շաւշափիւր²¹: Իսկ թէ ասիցեն ցմեզ²² երկո՞ւ բնութիւնք մեռան Քրիստոսի²³, ասեմք՝ ոչ, այլ մահկանացուն միայն²⁴: Եւ ասեն ապա՝ ոչ երկու բնութիւն խաչեալ է, ասեմք՝ այո, երկու²⁵: Այլ²⁶ ծնաւ մարմնով²⁷, չարչարեցաւ մարմնով, մեռաւ մարմնով²⁸, անչարչարելի մնալով աստուածութեամբն իւրով:

¹⁵ Ex. Fid. 80.21 + τῆς ἀγίας

¹⁶ Ex. Fid. 80.22 + δύο φύσεις ἐστί·

¹⁷ Ex. Fid. 80.23 չիք երկոքումք կատարեալ

¹⁸ Ex. Fid. 80.23 չիք

¹⁹ E չիք

²⁰ Ex. Fid. 80.25 չիք

²¹ զի աստուածութիւն ոչ շաւշափիւր // Ex. Fid. 80.26 καὶ οὐ θεότητι

²² Ex. Fid. 80.26 + ἐρωτῶσιν

²³ Ex. Fid. 80.27 չիք

²⁴ Ex. Fid. 80.27 չիք այլ մահկանացուն միայն

²⁵ Ex. Fid. 80.28 չիք ասեմք՝ այո, երկու

²⁶ Ex. Fid. 80.28 + ἐγεννήθη ὁ Χριστὸς ἥτοι ὁ θεὸς λόγος ἐνανθρωπήσας

²⁷ Ex. Fid. 80.29 + ἐσταυρώθη σαρκί

²⁸ չարչարեցաւ մարմնով, մեռաւ մարմնով = Ex. Fid. 80.29 ἔπαθε σαρκί, ἀπέθανε σαρκί // C F մեռաւ մարմնով // E մեռաւ մարմնով, չարչարեցաւ մարմնով

2. Որպէ՞ս անդրանիկ կոչի միածին Որդին Աստուծոյ՞:

Անդրանիկ կոչի առաջի ծնեալն՝ թէ միածին եղիցի, կամ եթէ առաջին լինել յեղբարսն: Արդ եթէ անդրանիկ կոչիւր Որդին Աստուծոյ եւ միածին ոչ կոչիւր, իմանիւր, եթէ եղականաց անդրանիկ էր նա, իբրեւ ինքն եղական գոյով: Այլ վասն զի անդրանիկ կոչի եւ միածին, պարտ է զերկոսեանն ամբողջ պահեալ նմա: Անդրանիկ ասեմք զնա ամենայն եղելոց², զի եւ նա յԱստուծոյ Հաւրէ է³, այլ նա ի գոյութենէ Աստուծոյ Հաւր միայն անժամանակ ծնեալ եւ յիրաւի Որդին միածին, անդրանիկ եւ ոչ նախաստեղծեալ անուանի: Վասն զի եղեալքն ոչ ի գոյութենէ Հաւր, այլ կաման իւրով յոչ գոյից ի գոյութիւն եկին: Իսկ անդրանիկ ի մէջ բազում եղբարց⁴, վասն զի որ միածինն էր ի միայնոյ Հաւրէ⁵, որովհետեւ հաղորդեցաւ մարմնոյ եւ արեան⁶, նման մեր մարդ եղեւ: Եւ եղաք մեք նովաւ որդիք Աստուծոյ, որդեգրեալք ի ձեռն մկրտութեանն. եւ նա՛ ինքն բնութեամբ Որդին Աստուծոյ անդրանիկ, եղեւ բնակելով ի միջի մերում եւ շնորհաւ որդիս Աստուծոյ զմեզ առնելով եւ զեղբարս իւր ցուցանելով⁷:

Եւ վասն այսորիկ ասէր. «Ելանեմ ես առ Հայր իմ եւ առ Հայր ձեր»⁸: Ոչ ասաց՝ առ Հայր մեր⁹, այլ «առ Հայր իմ», յայտ է թէ նմա բնութեամբ գոյով Հայր¹⁰, եւ «Հայր ձեր», այսինքն՝ շնորհաւ մեզ լեալ Հայր¹¹: «Առ աստուած իմ», եթէ իմանալիաբար¹² բաժանես զիմանալին ի տեսականէն¹³ մեր բնութեանն¹⁴, զոր ունէր ասէր աստուած իւր¹⁵: Եւ «աստուած ձեր», այսինքն՝ ստեղծագործող եւ Տէր ձեր:

¹ Ex. Fid. 81.1 Πῶς πρωτότοκος λέγεται ὁ μονογενὴς υἱὸς τοῦ θεοῦ

² Կողոս. Ա. 15. «անդրանիկ ամենայն արարածոց»:

³ նա յԱստուծոյ Հաւրէ է // Ex. Fid. 81.7 ἐκ τοῦ θεοῦ καὶ ἡ κτίσις ἐκ τοῦ θεοῦ

⁴ Հռովմ. Բ. 29. «անդրանիկ ի մէջ եղբարց բազմաց»:

⁵ ի միայնոյ Հաւրէ է // Ex. Fid. 81.12 ἐκ μὴτρὸς

⁶ Եբր. Բ. 14. «մանկունք հաղորդեցին արեան եւ մարմնոյ»:

⁷ Դիք եւ զեղբարս իւր ցուցանելով

⁸ Յովհ. Ի. 17. «Ելանեմ ես առ Հայրն իմ եւ առ Հայր ձեր»:

⁹ Ex. Fid. 81.18 // C E F + այլ առ հայր ձեր, ոչ ասաց՝ առ հայր մեր

¹⁰ Ex. Fid. 81.18 Դիք գոյով հայր

¹¹ Ex. Fid. 81.19 καὶ «θεὸν μου καὶ θεὸν ὑμῶν». Καὶ οὐκ εἶπε θεὸν ἡμῶν, ἀλλὰ 4/μ մեզ լեալ հայր

¹² E իմանալաբար

¹³ Ex. Fid. 81.20 τὸ ὁρώμενον // B ի տեսակէն C Դիք ի տեսականէն

¹⁴ B C բնութեամբն

¹⁵ Ex. Fid. 81.20 Դիք մեր բնութեանն, զոր ունէր ասէր աստուած իւր

**20. Առ հարցոսն¹ եթէ ի խառնակելոցն, թէ ի սահմանելոցն
վերաբերին ի ֆանիանութիւն բնութիւնք Գրիստոսի²:**

Բնութիւնք Գրիստոսի ոչ մի սեռ են եւ ոչ մի տեսակ, ոչ յաւտ³ եւ ոչ տեղի, եւ ոչ ժամ, որպէսզի ընկղմեցելոցն ի մի ֆանիանութիւն⁴ վերաբերեցին: Վասն զի այսոքիկ են խառնակութեամբ ի թիւ արկեալն⁵: Այլ միատրին բնութիւնքն Տեառն անձնատրութեամբ անխառնակաբար եւ բաժանին բանի եւ տեսակաւ բաժանման անբաժանելապէս: Եւ որով արինակաւ միատրին, նովին ոչ ի թիւ անկանին (զի ոչ ասեմք, եթէ երկու անձինք են բնութիւնք Գրիստոսի, կամ երկուս ըստ անձնատրութեան): Իսկ որով արինակաւ անհատանելաբար բաժանին եւ նովին թուին (վասն զի երկու են բնութիւնքն բանի եւ ազգաւ բաժանման), վասն զի անձնատրութեամբ միատրեալն եւ ի միմեանս բովանդակեալն անխառնակելի միատրին ի միմեանս՝ զփոփոխումն եւ զյեղումն ոչ ընդունելով, այլ զիրաքանչիւրոցն բնական բաժանմունս պահելով ամբողջ յետ միատրութեանն: Վասն զի անեղն անեղ եւ եղականն եղական կացին մնացին: Արդ միայն ազգաւ բաժանմանցն թուեցելով ի սահմանադրելոցն վերաբերին ի ֆանիանութիւն: Վասն զի ոչ կարողութիւն է թուել զոչ իմիք բաժանեալսն, իսկ իբրեւ իւրիք բաժանին, նովին թուելի լինիցին: Զոր արինակ Պետրոս եւ Պաւղոս, որով միատրին, ոչ թուելի են (վասն զի որք բանի գոյացութեանն միատրին, երկուս բնութիւնս ոչ են եւ ոչ ասին), իսկ դիմաւ եւ անձամբ բաժանեալք երկու անձինք ասին գոյ, վասն զի բաժանումն է պատեալ թուոյ:

¹ E ասոսոսն

² Ex. Fid. 81b.1-2 Πρὸς τοὺς ἐρωτῶντας, εἰ ὑπὸ τὸ συνεχὲς ποσὸν ἀνάγονται ἢ ὑπὸ τὸ διωρισμένον αἱ δύο φύσεις

³ եւ ոչ մի տեսակ, ոչ յաւտ // Ex. Fid. 81b.3 οὐτε ἐπιφάνεια οὐτε γραμμὴ

⁴ F ֆանիան

⁵ C արկեալն

ՁԲ. Վասն հաւատոյ եւ մկրտութեան¹:

Խոստովանիմք զմի մկրտութիւն ի թողութիւն մեղաց եւ ի կեանսն յափտենից, զի մկրտութիւն զմահ Տեառն նշանագրէ²: Ընդ նմին թաղիմք ընդ Տեառն մկրտութեամբ, որպէս ասէ Պաւղոս³: Եւ որպէս միանգամ եղեւ մահն Տեառն, նոյնպէս եւ միանգամ⁴ մի պարտ է առնուլ զմկրտութիւն, իսկ մկրտութիւն՝ ըստ բանին Տեառն, յանուն Հար եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ առեալ, ուսանիմ զխոստովանութիւնն Հար եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Արդ որք յանուն Հար եւ Որդոյ եւ⁵ Հոգւոյ մկրտեալք⁶ եւ յերիս անձինս զմի բնութիւն աստուածութեանն ուսեալք, որ զսոսա⁷ միւսանգամ մկրտեն, միւսանգամ⁸ ի խաչ հանեն զՈրդին Աստուծոյ⁹, ըստ առաքելոյ, որ ասէ, եթէ՝ «Ոչ է հնար¹⁰ միանգամ մկրտելոցն»¹¹, որք յանուն Երրորդութեանն մկրտեցան¹², «միւսանգամ մկրտել¹³, եւ անձամբ իւրեանց ի խաչ հանել զՈրդին Աստուծոյ¹⁴ եւ խայտառակել»¹⁵: Իսկ որք ոչ¹⁶ յանուն սրբոյ Երրորդութեանն են մկրտեալք, զնոսա պարտ է մկրտել: Զի թէպէտ ասէ առաքեալն, եթէ՝ «ի Քրիստոս եւ ի մահ անդր նորա մկրտեցաք»¹⁷, ոչ զայս ասէ, թէ զայն կոչել ի մկրտութիւն զմահն Տեառն¹⁸, այլ եթէ արինակ մահուն Քրիստոսի է մկրտութիւն: Վասն զի երրորդ թաղելովն ի ջուր զերեւաւեայ թաղումն Տեառն նշա-

¹ Ex. Fid. 82.1 Περί πίστεως καὶ βαπτίσματος

² ՏՃՍ Հոովմ. Զ 3. «Եթէ ո՞չ գիտէք, զի որ միանգամ մկրտեցաք ի Քրիստոս Յիսուս, ի մահ անդր նորա մկրտեցաք»:

³ Ex. Fid. 82.3 ὁ θεὸς ἀπόστολος

⁴ Ex. Fid. 82.5 ἅπαξ // C E F միւսանգամ

⁵ Ex. Fid. 82.9 + ἅγιον

⁶ Մատթ. ԻԸ 19. «Գնացէք այստե՛տ եւ աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս. մկրտեցէ՛ք զնոսա յանուն Հար եւ Որդոյ եւ Հոգւոյ Սրբոյ»:

⁷ C ի սոսա Ex. Fid. 82.10 չիք

⁸ Ex. Fid. 82.10 οὐτοι

⁹ Ex. Fid. 82.11 τὸν Χριστόν

¹⁰ C հարկ

¹¹ B մկրտելոյն | Եբր. Զ 4 «Քանզի անհնար է միանգամ մկրտելոցն»:

¹² որք յանուն Երրորդութեանն մկրտեցան // Ex. Fid. 82.12 + καὶ τὰ ἐξῆς

¹³ Ex. Fid. 82.12 + εἰς μετένοισαν

¹⁴ = BC υἱὸν τοῦ θεοῦ // Ex. Fid. 82.13 Χριστόν

¹⁵ Եբր. Զ 6. «միւսանգամ նորոգել յապաշխարութիւն. եւ վերստին ի խաչ հանել անձանց զՈրդին Աստուծոյ, եւ դարձեալ խայտառակել»:

¹⁶ F չիք յանուն Երրորդութեանն մկրտեցան, միւսանգամ մկրտել, եւ անձամբ իւրեանց ի խաչ հանել զՈրդին Աստուծոյ եւ խայտառակել: Իսկ որք ոչ

¹⁷ Հոովմ. Զ 3. «որ միանգամ մկրտեցաք ի Քրիստոս Յիսուս, ի մահ անդր նորա մկրտեցաք»:

¹⁸ Ex. Fid. 82.16 չիք զմահն Տեառն

նակէ ի մկրտութեանն: Վասն զի ի Քրիստոս մկրտելն իւրում հաւատացելոց զիւրն մկրտութիւն նշանակէ: Այլ ոչ է հնար ի Քրիստոս հաւատացեալ լինել, որք ոչ ուսանին խոստովանել զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին: Քանզի Քրիստոս է Որդի Աստուծոյ կենդանոյ¹⁹, զոր ամ Հայր Հոգով Սրբով, որպէս ասէ Դաւիթ. «Վասն այսորիկ ամ զքեզ Աստուած Աստուած քո եղով ուրախութեամբ»²⁰ առաւել քան զընկերս քո»²¹, եւ Եսայի ի բերանոյ²² Տեառն ասէ. «Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ եւ ամ զիս»²³: Եւ մինչ ի կոչումն առաւել զաշակերտսն²⁴, ուսուցանէր, եթէ «մկրտեցէք զնոսա յանուն Հայր եւ Որդոյ եւ Հոգոյն սրբոյ»²⁵: Եւ քանզի²⁶ սակս անապականութեան էստեղծ զմարդն²⁷ Աստուած, իսկ մինչ յանցաւ²⁸ զկենարար պատուիրանան իւրով, ապականութեան մահու դատապարտեաց զմեզ²⁹, զի մի անման լինիցի չարն, եւ ապա իբրեւ զիջաւ ընդ մեզ խոնարհեալ ի ծառայս իւր մարդասիրութեամբ, եւ եղև իբրեւ զմեզ, ի ձեռն շարշարանաց իւրոց փրկեաց³⁰ զմեզ ի մահուանէ, յորժամ աղբերացոյց մեզ զանապական եւ զսուրբ վտակս կողից իւրոց³¹ աղբերս թողութեան. զշուրն՝ ի³² սակս վերստին ծննդեանն, առ ի սրբել³³ զմեղս եւ զապականութիւն, իսկ զարիւն՝ յարբումն, որ ճանաչիր³⁴ տուող լինել կենաց մշտնջենատրի, եւ պատուէր ետ³⁵ մեզ, զի երկրորդ անգամ ծնցով ի ջրոյ եւ ի Հոգոյ³⁶ եւ աղաչանաւ եւ կոչմամբ ի վերայ ջուրցն տնկելով³⁷ զՀոգին սուրբ: Եւ վասն³⁸ զի կրկին գոլով մարդ՝ ի հոգոյ եւ ի մարմնոյ, կրկին ետ մեզ

¹⁹ Մատթ. ԻԶ 16. «Դո՛ւ եւ Քրիստոսն Որդի Աստուծոյ կենդանոյ»:

²⁰ C իւղով ուրախութեան

²¹ Սաղմ. ԽԴ 8. «Վասն այսորիկ ամ զքեզ Աստուած Աստուած քո իւղով ուրախութեամբ, առաւել քան զընկերս քո»:

²² Ex. Fid. 82.24 ἐκ προσώπου

²³ Ես. ԿԱ 1. «Հոգի Տեառն ի վերայ իմ, վասն որոյ եւ ամ իսկ զիս»:

²⁴ Ex. Fid. 82.26 + ὁ κύριος

²⁵ F սուրբ հոգոյն | Մատթ. ԻԸ 19. «մկրտեցէք զնոսա յանուն Հայր եւ Որդոյ եւ Հոգոյն սրբոյ»:

²⁶ E F + ի

²⁷ Ex. Fid. 82.28 ἡμῶς

²⁸ F յանցանք

²⁹ Ex. Fid. 82.29 չէք

³⁰ C չէք

³¹ Յովն. ԺԹ 34:

³² C ի ջուր

³³ F սրբեալ

³⁴ F ճանաչի

³⁵ C չէք

³⁶ Յովն. Գ 5. «Եթէ ոչ ոք ծնցի ի ջրոյ եւ ի Հոգոյ, ոչ կարէ մտանել յարձայութիւն Աստուծոյ»:

³⁷ Ex. Fid. 82.35 ἐπιφοιτῶντος (ἐν ἡμερῇ ἐπὶ ἐπιφοιτῶντος)

³⁸ B C չէք

եւ զմահութիւն՝ ի ձեռն հոգւոյ եւ ջրոյ, որպէս զի հոգին զայն, որ ի մեզ, անձն³⁹, որ պատկեր եւ նմանութիւն գոլ նորոգեսցէ, իսկ ջուրն շնորհաւ սուրբ Հոգւոյն զմարմին ի մեղաց սրբեսցէ եւ յապականութենէ ազատեսցէ, եւ որպէս զի զմահուն կերպարան ջուրն կատարեսցէ եւ զառհասաւշեայն⁴⁰ կենաց պարգեւեսցէ Հոգին:

Վասն զի ի սկզբանէ «Հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց»⁴¹ ի վերուստ վկայելով գիր, եթէ որպէս սուրբ արարէ ջուր⁴²: Վասն զի առ Նոյի ջրովն հեղեղեաց Աստուած զհամաշխարհական մեղս⁴³, ջրով սրբէր ըստ արինացն ամենայն անսուրբ, եւ նոյն ինքն հանդերձսն զոր լուանային ջրով, եւ ապա մտանէին ի բանակն⁴⁴: Եցոյց Եղիա զշնորհս Հոգւոյն միատրեալ ընդ ջուր գոլով, մինչ կիզեալ հոդեհեաց ջրովն զողջակէզսն⁴⁵: Եւ բոլորովիմբ ամենայն⁴⁶ ջրով սրբէին արինացն (զի տեսանելին արինակ էին իմանալեացն), եւ զի դարձեալ վերստին ծնունդն ի ձեռն Հոգւոյն կատարի: Վասն զի գիտէ հաւատս եւ շնորհաւ Որդի Աստուծոյ առնել⁴⁷ ի ձեռն Հոգւոյն զերկրածինսն եւ յառաջին երանութիւն ի վեր տանել:

Եւ արդ թողութիւն մեղաց ամենեցուն հաւասարապէս տուեալ լինի ի ձեռն մկրտութեանն, իսկ շնորհք Սուրբ⁴⁸ Հոգւոյն ըստ չափոյ հաւատոցն եւ նախասրբութեան պարգեւի: Վասն որոյ եւ այժմ ի սկիզբն զՀոգւոյն սրբոյ առնումք շնորհս ի ձեռն մկրտութեանն եւ սկիզբն այլու կենաց լինի մեզ վերստին ծնունդն եւ կնիք եւ պահապան եւ լուսատրութիւն:

Այլ պարտ է յամենայն զարութենէ պատրաստութեամբ պահել զանձինս մեր սուրբս ի գարշելի եւ յախտակիր⁴⁹ գործոց, որպէս զի մի⁵⁰ իբր զայն որ առ փսխածս իւր դարձեալ են շունսն⁵¹, ծառայս⁵² մեղացն գործեսցոմ

³⁹ Ex. Fid. 82.38 չիբ

⁴⁰ F առհասաւշեայն

⁴¹ Ծննդ. Ա. 2:

⁴² Ղեւտ. ԺԵ 10:

⁴³ Ծննդ. Զ 17:

⁴⁴ Ex. Fid. 82.46 չիբ եւ ապա մտանէին ի բանակն

⁴⁵ Գ Թագ. ԺԺ 34. «Եւ ասէ. Առէք ինձ շորս սափորս ջրոյ, եւ հեղէ՛ք ի վերայ ողջակիզիդ եւ ի վերայ շերտիցդ»:

⁴⁶ Ex. Fid. 82.48 *ἀπαντα* // B տեսուն

⁴⁷ եւ շնորհաւ Որդի Աստուծոյ առնել // Ex. Fid. 82.50 *ὁιοθετεῖν*

⁴⁸ Ex. Fid. 82.56 չիբ

⁴⁹ Ex. Fid. 82.58 չիբ

⁵⁰ Ex. Fid. 82.59 + *πάλην*

⁵¹ Բ Պեւ. Բ 22. «Շուն դառնայ անդրէն ի փսխած իւր»:

⁵² Ex. Fid. 82.60 + *πάλην*

զմեզ: Զի «հաւատք առանց գործոց մեռեալ են»⁵³, նոյնպէս եւ գործք առանց հաւատոց: Իսկ ճշմարիտ հաւատն ի գործոցն յայտնի լինիցի:

Իսկ մեք մկրտութիւն առնումք յանուն սուրբ Երրորդութեանն, զի մկրտելոցն պատշաճէ շնորհք⁵⁴ Երրորդութեանն, իբրեւ զի հաստատեսցէ եւ պահեսցէ զնոսա: Եւ անհնար է, եթէ ոչ ի միմեանս հասարակաց եղիցին երեք⁵⁵ անձնատրութիւն, զի անբաժանելի է⁵⁶ Սուրբ Երրորդութիւնն:

Եւ առաջին մկրտութեան ջրհեղեղ գոլով, որ եբարձ հատանելով զմեզս յաշխարհէ⁵⁷, երկրորդն՝ ջրովն եւ ամպովն առ Մովսէսիւ⁵⁸, վասն զի արինակ էր ամպն Հոգւոյ եւ ծովն՝ ջրոյ: Երրորդ արինակն, զի ամենայն անսուրբ ջրով լուացեալ սուրբ էր, եւ, ողողելով զհանդերձս, այնպէս մտանէին ի բանակն⁵⁹: Զորրորդ մկրտութիւն այն, որ Յովհաննոս էր եւ կոչնական էր եւ հրաւիրէր յապաշխարութիւն⁶⁰, զի ի Քրիստոս հաւատացին, զի ասէր. «Ես մկրտեմ զձեզ ջրով յապաշխարութիւն, բայց գայ զաւրագոյն քան զիս⁶¹ զկնի իմ, եւ նա մկրտեսցէ⁶² Հոգւով սրբով եւ հրով»⁶³: Եւ վասն այսորիկ յառաջէր սրբէր⁶⁴ ջրովն, զի կարասցեն ընդունել զՀոգւովն⁶⁵: Հինգերորդ մկրտութիւն Տեառն այն, որ ինքն մկրտեցաւ. եւ մկրտէր, ոչ եթէ պէտք ունէր սրբելոյ⁶⁶ ջրովն⁶⁷, այլ զիմն յանձն առնոյր զսրբութիւն, եւ զի խորտակեսցէ զգլուխ վիշապացն ի ջուրս⁶⁸, որպէս զի լուայցէ⁶⁹ զմեզս եւ զբոլոր զհինն Ադամն թաղեսցէ ի ջուրս, եւ զի սրբեսցէ զմկրտիչն, եւ զի կատարեսցէ եւ լցցէ զարեւնս, եւ զի յայտնէ զխորհուրդ Երրորդութեանն, եւ զի արինակ լիցի մեզ գալ առ մկրտութիւն:

⁵³ Յակ. Բ 26. «հաւատք առանց գործոց մեռեալ են»:

⁵⁴ C շնորհաւք

⁵⁵ C երեքէք

⁵⁶ F չիք

⁵⁷ Ex. Fid. 82.67 չիք

⁵⁸ Ex. Fid. 82.67 չիք առ Մովսէսիւ | Ա. Կորնթ. Ժ 2. «Եւ ամենեքեան ի Մովսէս մկրտեցան յամպն եւ ի ծովն»:

⁵⁹ Հմմտ. Դեառ. ԺԶ 26. «Եւ որ արձակէ զնոխազն նովորեալ յարձակումն, ողողեսցէ՝ զձորձս իւր, եւ լուացէ՝ զմարմին իւր ջրով. եւ ապա՝ մտցէ ի բանակն»:

⁶⁰ Ex. Fid. 82.72 + τὸν βαπτίζομένον

⁶¹ Ex. Fid. 82.73 չիք զաւրագոյն քան զիս

⁶² F մկրտէ

⁶³ Մատթ. Գ 11. «Ես մկրտեմ զձեզ ջրով յապաշխարութիւն. բայց որ զկնին իմ գայ՝ հզաւագոյն է քան զիս... նա մկրտեսցէ զձեզ ի Հոգին Սուրբ եւ ի հուր»:

⁶⁴ Ex. Fid. 82.74 + ὁ Ἰωάννης

⁶⁵ Ex. Fid. 82.74 չիք զի կարասցեն ընդունել զՀոգւովն

⁶⁶ F սրբել

⁶⁷ Ex. Fid. 82.76 չիք

⁶⁸ Սաղմ. ՀԶ 13. «Դու խորտակեսցեր զգլուխս վիշապաց ի վերայ ջուրց»:

⁶⁹ B C լուացէ

Այլ մկրտիմք է մեք գկատարեալ մկրտութիւնն Տեառն ջրով եւ Հոգւով: Իսկ եւ հրով մկրտիչ ասի Քրիստոս, վասն զի տեսակաւ հրեղէն լեզուաց սփռեաց⁷⁰ յառաքեալսն զշնորհս Հոգւոյն սրբոյ, որպէս եւ ինքն⁷¹ ասաց, եթէ՝ «Յովհաննէս մկրտեաց ի ջուր, իսկ դոք մկրտեսցիք ի Հոգին սուրբ եւ հուր, ոչ յետ բազում ինչ ատուցս այսոցիկ»⁷²: Կամ զի հուր արինակ ի⁷³ բնութիւնն Աստուծոյ⁷⁴ ասէ⁷⁵, կամ զհանդերձեալ յախտենին⁷⁶ զտանջողական զայն մկրտութենէն ասէ մկրտել անշէջ⁷⁷ հրովն: Վեցերորդ՝ որ ապաշխարութեան եւ արտասուացն է եւ յոյժ տարժանելի: Եւթներորդ՝ արեամբ եւ վկայութեամբ, զոր եւ ինքն Քրիստոս մկրտեցաւ վասն մեր, իբրեւ յոյժ գովելի եւ երանելի, որ երկրորդ աղտեղութեամբ ոչ շաղախելի էր: Ութերորդ՝ կատարածին այն, որ ոչ ի փրկութիւն, այլ ամենայն շարութեան ջնջումն առնելով տանջանամ⁷⁸, զի մի՛ այլ յայնմ հետէ քաղաքավարեսցի մեղք եւ շարութիւն, այլ տանջանք գոլով անկատարելի:

Այլ մարմնատուր տեսլեամք իբրեւ զաղանի էջ Հոգին Սուրբ ի վերայ Տեառն, ցուցանելով զայն սկիզբն գոլ մերում մկրտութեան, նա եւ պատուելով զմարմինն, վասն զի եւ սոքա՝ այսմ մարմինք ի ձեռն աստուածանալոյ Աստուած, եւ դարձեալ ի վերուստ սովորեաց⁷⁹ աղանի անտեսալ զցածումն ջրհեղեղին⁸⁰: Եւ ի վերայ առաքելոցն իբրեւ զհուր էջ⁸¹, վասն զի Աստուած է եւ Աստուած մեր հուր ծախիչ զշարութիւն⁸²:

⁷⁰ Ex. Fid. 82.83-84 + ἐπὶ τοὺς ἀγίους

⁷¹ Ex. Fid. 82.85 + κύριος

⁷² Գործք Ա. 5. «Զի Յովհաննէս մկրտեաց ի ջուր, այլ դոք մկրտիցիք ի Հոգին Սուրբ, ոչ յետ բազում ինչ ատուցս այսոցիկ»:

⁷³ B E + նայ

⁷⁴ E չիք

⁷⁵ Ex. Fid. 82.86 չիք Կամ զի հուր արինակ ի բնութիւնն Աստուծոյ ասէ

⁷⁶ F յախտենից Ex. Fid. 82.87 չիք

⁷⁷ Ex. Fid. 82.87 չիք մկրտել անշէջ

⁷⁸ Ex. Fid. 82.91 չիք

⁷⁹ C չիք

⁸⁰ Տէ՛ս Ծմնդոց Ը 8-12:

⁸¹ Տէ՛ս Գործք Բ 2-3. «Եւ եղև յանկարծակի հնչիւն յերկնից՝ եկեալ իբրեւ սաստիկ հողմոյ. եւ ելից զամենայն տունն յորում նստէին: Եւ երեսեցան նոցա բաժանեալ լեզուք իբրեւ ի հոռոյ»:

⁸² Ex. Fid. 82.98 չիք E չիք եւ դարձեալ ի վերուստ սովորեաց աղանի անտեսալ զցածումն ջրհեղեղին: Եւ ի վերայ առաքելոցն իբրեւ զհուր էջ, վասն զի աստուած է եւ աստուած մեր հուր ծախիչ զշարութիւն | Բ Օրին. Գ 24. «Զի Տէր Աստուած քո հո՛ւր ծախիչ է»:

Ձեթ բերեալ լինի ի⁸³ մկրտութիւն, գաւթանողութիւն ամօթելոյն⁸⁴ նշանակելով՝ առ յաւթանել զմեզ, զի ամօցով մեք խոստմամբ շնորհաց Սուրբ Հոգւոյն զողորմութեան Աստուծոյ ամօումն⁸⁵, զի եւ անդ տերեւ⁸⁶ ձիթենոյ շիւղերէր աղանին ի տապանն⁸⁷ այնոցիկ, որ զերծեալ էին ի ջրհեղեղէն⁸⁸: Մկրտութիւն առ Յովհաննէս⁸⁹ դնելով զձեռն իւր ի վերայ⁹⁰ գագաթանն Տեառն եւ մկտեցաւ⁹¹ եւ իւրով արեամբն:

Ոչ է պարտ յամառել առ մկրտութիւն, յորժամ ի ձեռն գործոց վկայեսցին հաւատք ի նմա եկողին: Իսկ որ նենգութեամբ գայ ի մկրտութիւն, եւս առաւել դատապարտի ի⁹² մկրտութենէն⁹³:

⁸³ E չիք

⁸⁴ Ex. Fid. 82.99 չիք

⁸⁵ առ յաւթանել զմեզ, զի ամօցով մեք խոստմամբ շնորհաց սուրբ Հոգւոյն զողորմութեան Աստուծոյ ամօումն // Ex. Fid. 82.100-101 χριστὸν ἡμᾶς ἐργαζόμενον καὶ τὸν τοῦ θεοῦ ἡμῖν ἐπαγγελλόμενον διὰ τοῦ ἁγίου πνεύματος ἔλεον

⁸⁶ Ex. Fid. 82.101 չիք

⁸⁷ Ex. Fid. 82.101 չիք ի տապանն

⁸⁸ Ծննդ. Ը 11. «Եւ դարձաւ առ նա աղանին ընդ երեկս, եւ ունէր տերեւ ձիթենոյ շիւղ ի բերան իւրում. եւ գիտաց նոյ, թէ ցածուցեալ են ջուրն յերկրէ»:

⁸⁹ C F Յովհաննէս

⁹⁰ Ex. Fid. 82.103 + θείαν

⁹¹ Ex. Fid. 82.104 չիք

⁹² F չիք

⁹³ ի մկրտութենէն // Ex. Fid. 82.107 ἢ ὠφελήσεται

24. Վասն Հաւատոց¹:

Հաւատ երկու ունի տեսակս, վասն զի «են հաւատքի լոյ»²: Զի յորժամ լսեմք զաստուածային գիրս, հաւատամք վարդապետութեան Հոգւոյն Սրբոյ³: Եւ այս կատարեալ լինի ամենայնի, որք Քրիստոսի արինադրութեամբն գործովք հաստատեն զհաւատն, բարեպաշտութեամբ եւ պատուիրանացն գործելութեամբն, որովք Քրիստոս⁴ նորոգեաց զմեզ: Վասն որոյ ոչ ըստ դրուակի կաթողիկէ եկեղեցւոյ հաւատասցէ եւ կամ անպատշաճ բանիմ⁵ հաղորդեսցի ոք դիւաց, անհաւատ է:

Եւ դարձեալ հաւատք են յոյս, որք գործոց յանդիմանիչ⁶ են ոչ տեսանելեաց⁷, անփակտելի⁸ եւ աներկմտելի յոյս՝ որոց յԱստուծոյ տուեալ են եւ⁹ խոստացեալ են մեզ, եւ հանդիպումն խնդրուածոց¹⁰: Եւ առաջինն մերում հանդուրեանն¹¹ է, իսկ երկրորդն շնորհաց Հոգւոյն:

Այլ պարտ է գիտել, եթէ ի ձեռն մկրտութեան թլփատեմք մեք զամենայն, որ ի ծննդենէ ծածկոյթն է, որ են մեղք մարմնոյն¹², եւ հոգեւոր Իսրայէլ եւ ժողովուրդ Աստուծոյ լինիմք¹³:

¹ Ex. Fid. 83.1 Περὶ πίστεως

² Հռովմ. Ժ 17. «հաւատքի լսելոյ են»:

³ = B ἁγίου // Ex. Fid. 83.3 չիք

⁴ Ex. Fid. 83.5 չիք

⁵ Ex. Fid. 83.7 δὲ... ἔργων

⁶ F այնդիմանելիք C աղիչի

⁷ Հմմտ. Եբր. ԺԱ 1. «Զի՞նչ են հաւատք, եթէ ոչ՝ յուսացելոց իրաց հաստատութիւն, եւ յանդիմանութիւն որոց ոչն երեւին»:

⁸ C անփակտելիք

⁹ Ex. Fid. 83.10 չիք տուեալ են եւ

¹⁰ B C ի խնդրուածոց մերոց

¹¹ F հանդուրեանն C անփակտելիք

¹² Ex. Fid. 83.14 չիք

¹³ Ex. Fid. 83.15 χρηματίζομεν

ԶԴ. Վասն խաչին եւ վասն Հաւատոյ¹:

«Ճառ խաչին կորուսելոցն յիմարութիւն է, իսկ մեզ փրկելոցս՝ զաւրութիւն Աստուծոյ»²: Վասն զի «հոգեւորն զամենայն ֆննէ»³, իսկ «մարմնաւոր մարդ⁴ ոչ կարէ ընդունել զՀոգւոյն Աստուծոյ»⁵: Վասն զի յիմարութիւն է որոց ոչ հաւատով ընդունին զբարեւարութիւն եւ զամենագաւազ աւրութիւն Աստուծոյ ոչ յիշելով, այլ մարդկայնով եւ բնական խորհրդով ֆննեն զաստուածայինսն: Վասն զի աստուածայինմն ամենայն ի վեր քան զմիտս եւ զքան⁶ եւ զգիտութիւն են: Զի եթէ ոք մտածեսցէ, եթէ ո՞րպէս յոչ գոյից ի գոյութիւն կամ վասն որոց ինչ իրաց⁷ էա՞ծ զամենեսեան Աստուած եւ բնական խորհրդով հասու լինել փութայ այսոցիկ, ոչ կարէ հասու լինել: Վասն զի շնչաւոր է այս գիտութիւն⁸, իսկ եթէ ոք ի հաւատոց զաւրացեալ⁹ բարեւար եւ ամենագաւազ եւ ճշմարիտ եւ իմաստուն եւ արդար իմասցի զԱստուած, գտանէ զայս ամենայն ուղիղ եւ դիւր եւ հորդեալ ճանապարհ: Վասն զի առանց հաւատոյ ոչ ոք կարէ ապրել, վասն զի հաւատովք հաստատին ամենայն՝ հոգեւորք եւ մարդկայինք: Զի եւ ոչ մշակ¹⁰ առանց հաւատոյ եւ յուսոյ¹¹ հերձեսցէ զականսս երկրի սերմանել¹², եւ ոչ վանառական ի ձեռն փոքր փայտից տացէ զանձն իւր խորոց ալեկոծեալ ծովու: Եւ ոչ ամուսնութիւնմ կատարեալ լինին, եւ ոչ այլ ինչ ի կենցաղոյս իրաց: Հաւատով իմանամք յոչ գոյից ի գոյութիւն աստուածային զաւրութեամբն ածեալ զաշխարհ¹³ եւ հաւատով ուղղեմք զա-

¹ Ex. Fid. 84.1 Περί σταυροῦ, ἐν ᾧ ἔτι καὶ περὶ πίστεως

² Ա. Կորնթ. Ա. 18. «Զի ճառ խաչին կորուսելոցն յիմարութիւն է, այլ փրկելոցս մեզ՝ զաւրութիւն Աստուծոյ»:

³ Ա. Կորնթ. Բ. 15. «հոգեւորն ֆննէ զամենայն»:

⁴ Ex. Fid. 84.3 ψυχικὸς

⁵ Ա. Կորնթ. Բ. 14. «շնչաւոր մարդ ոչ ընդունի զՀոգւոյն Աստուծոյ»:

⁶ E F զքանս

⁷ որոց ինչ իրաց *հմմտ.* Ex. Fid. 84.8 τίνος τε ἔνεκεν // C F զինչ որոց իւրեան (C իւրեանց) E որոյ իրաց

⁸ Ex. Fid. 84.10 + δαιμονιώδης

⁹ F զաւրաց

¹⁰ F չիք

¹¹ Ex. Fid. 84.15 չիք եւ յուսոյ

¹² Ex. Fid. 84.15 չիք

¹³ Ex. Fid. 84.18 չիք

մենայն աստուածայինս եւ մարդկայինս¹⁴: Իսկ հաւատ է ոչ մանրաբնին¹⁵ յառաջընտրութիւն:

Ամենայն գործք եւ սքանչելիքն Քրիստոսի մեծ եւ սքանչելի եւ աստուածայինք են, այլ քան զամենայն սքանչելի է պատուական խաչն իւր: Զի եւ ոչ ի ձեռն այլոյ ինչ¹⁶ իմիք խափանեցաւ մահ կամ նախահաւուն¹⁷ Ադամայ¹⁸ յանցանքն լուծան, դժոխք գերեցաւ, եւ յարութիւն պարգեւեցաւ, արհամարհել գկենցաղոյս իրօս, նա եւ զմահ իսկ տուեալ եղեւ զարութիւն, եւ առաջին երանութիւն դառնալ անդրէն ուղղաւորեցաւ, դրոնմ դրախտին բացան, եւ բնութիւն մեր ընդ աշմէ Աստուծոյ Հաւր նստաւ, որդի եւ ժառանգ Աստուծոյ եղաւ, ոչ այլ իւրիք եղեւ այս ամենայն¹⁹, բայց միայն խաչին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Քանզի ի ձեռն նորա²⁰ ուղղեցան այս ամենայն: Վասն զի «ամենայն որք ի Քրիստոս մկրտեցաւ», ասէ առաքեալ, «ի մահ անդր նորա մկրտեցաւ»²¹: Եւ որ ի Քրիստոս մկրտեցաւ, զՔրիստոս զգեցաւ²²: Եւ Քրիստոս է Աստուծոյ զարութիւն եւ իմաստութիւն²³: Ահա զմահն Քրիստոսի, որ է խաչն նորա, անձնատու զարութիւն եւ իմաստութիւն Աստուծոյ զգեցոյց զնա²⁴ մեզ, իսկ զարութիւն Աստուծոյ է նաո խաչին, կամ վասն այսր է զարութիւն Աստուծոյ, այն որ զի եւ յաղթութիւն մահու նովալ ցուցաւ մեզ, կամ զի թէ որպէս չորք կողմունմ²⁵ խաչին միջոցաւ իւրով պնդեալ կայ, այսպէս եւ աստուածային զարութեամբն բարձրութիւն եւ խորութիւն, երկայնութիւն եւ լայնութիւն, այսինքն՝ ամենայն երեւելի եւ աներեւոյթ ստեղծուածք ըմբռնի եւ պահի:

Սա տուեալ է մեզ նշան ի վերայ նակատոյ, որպէս Իսրայելի զթլփատութիւն, վասն զի նովալ հաւատացեալք բարժանիմք յանհաւատից եւ ճանաչիմք: Սա է վահան, ասպար եւ սպառազինութիւն եւ յաղթութիւն ընդդէմ դի-

¹⁴ F աստուածայինքս եւ մարդկայինքս B C աստուածայինք եւ մարդկայինք

¹⁵ C F մանրաբնին

¹⁶ C իրի B ինձ

¹⁷ E F նախամահն եւ

¹⁸ Ex. Fid. 84.23 չիք

¹⁹ ոչ այլ իւրիք եղեւ այս ամենայն // Ex. Fid. 84.28 չիք

²⁰ = bMN αὐτοῦ // Ex. Fid. 84.29 τοῦ σταυροῦ

²¹ Հռովմ. Զ 3. «որ միանգամ մկրտեցաւ ի Քրիստոս Յիսուս, ի մահ անդր նորա մկրտեցաւ»:

²² C զգեցեալ էք | Գաղատ. Զ 27. «Որք միանգամ ի Քրիստոս մկրտեցաւ, զՔրիստոս զգեցեալ էք»:

²³ Հմմտ. Ա. Կորնթ. Ա. 24. «զՔրիստոս՝ Աստուծոյ զօրութիւն, եւ Աստուծոյ իմաստութիւն»:

²⁴ Ex. Fid. 84.34 չիք

²⁵ B C կողմիք

ւաց: Սա²⁶ կնիք, զի մի մերձեսցի ի մեզ սատակիչն անդրանկացն²⁷, որպէս ասէ գիր²⁸: Սա անկելոց կանգնումն, կացելոց հաստատութիւն, հիւանդացելոց ցուպ, հովուաց գաւազան, դարձելոց ձեռնկալու, յառաջադիմեցելոց կատարումն, առաջնորդ կուրաց²⁹, դարձուցիչ մոլորելոց, հոգւոց եւ մարմնոց փրկութիւն³⁰, շարեաց փախուցիչ, ամենայն բարեաց պատճառ, մեղաց մաքրութիւն, տունկ յարութեան, ծառն կենաց³¹:

Այս պատուական³² եւ երկրպագելի փայտ, յորոյ վերայ վասն մեր պատարագ մատուցաւ Քրիստոս Հաւր: Սրբեցաւ սա մերձամբ սուրբ մարմնոյն Տեառն³³ եւ արեամբն, որ հեղաւ ի սա³⁴, եւ յիրաւի երկրպագելի է, ընդ սմա՝ եւ բեւեռն եւ գեղարդն, անդերձն եւ տեղիքն, ուր կացին մարմին, այսոքիկ՝ մտորն, այրն, Գողգոթայ³⁵, գերեզմանն, գլուխ փաղափացն Երուսաղէմ, եկեղեցի գերեզմանին³⁶, եւ Սիոն³⁷, եւ այլն ամենայն: Որպէս աստուածահայրն Դաւիթ ասէ. «Մտցո՛ւմ յարկս նորա եւ երկիր պագցո՛ւմ³⁸ ի տեղոջ, ուր կացին³⁹ ում նորա»⁴⁰: Եւ զի զայս զխաչն ասէ, ի յաջորդն յայտ է, որ ասէ. «Արի՛, Տէր, ի հանգիստ Բո», վասն զի հետեւեցաւ ընդ խաչին եւ յարութիւնն⁴¹: Եւ եթէ սիրելոյ ումեմ ըղձալի է տունն, գահոյքն եւ զգեստն, ո՛րչափ եւս առաւել Աստուծոյն եւ փրկչին մերոյ, որով փրկեցաւ:

Այլ երկիր պագանեմ կերպարանաց պատուական խաչին, եւ թէպէտ եւ յայլմէ նիւթոյ պատրաստեալ է⁴², ոչ նիւթոյ եմ երկրպագողք, քան լիցի, այլ արինակին, որ է նշան Քրիստոսի: Վասն զի ասէր աշակերտացն ի չարչար-

²⁶ Ex. Fid. 84.43 // C E F + մեզ

²⁷ Ex. Fid. 84.43 չիք

²⁸ Տե՛ս ելք ԺԲ 12, 29:

²⁹ Ex. Fid. 84.45 չիք առաջնորդ կուրաց

³⁰ Ex. Fid. 84.46 + πάντων

³¹ Ex. Fid. 84.48 + αἰωνίου

³² Ex. Fid. 84.49 + ὡς ἀληθῶς

³³ Ex. Fid. 84.51 չիք

³⁴ Ex. Fid. 84.51 չիք որ հեղաւ ի սա

³⁵ Ex. Fid. 84.53 + ὁ σωτήριος, ὁ ζωοποιός

³⁶ Ex. Fid. 84.53 չիք գլուխ փաղափացն Երուսաղէմ, եկեղեցի գերեզմանին

³⁷ Ex. Fid. 84.54 + τῶν ἐκκλησιῶν ἢ ἀκρόπολις

³⁸ C երկրպագցո՛ւմ B երկիր պագից

³⁹ C F կացեալն

⁴⁰ Սաղմ. ՃԼԱ 7. «Մտցո՛ւմ ի յարկս նորա, երկիր՝ պագցո՛ւմ ի տեղոջ, ուր կացեալ են ում նորա»:

⁴¹ Սաղմ. ՃԼԱ 8. «Արի՛ Տէր ի հանգիստ Բո, դու եւ կտակարանք սրբութեան Բո»:

⁴² պատրաստեալ է // Ex. Fid. 84.62 γένηται

րանսն գնալով⁴³, եթէ՝ «Յայնժամ յայտնեսցի նշան որդոյ մարդոյ յերկնից»⁴⁴, եւ զայս զխաշէն ասէր։ Վասն որոյ եւ կանանցն ասէր յարութեան հրեշտակն. «ԶՅիսուս խնդրէ՛ք զնազարացին⁴⁵ զխաշելեալն»⁴⁶։ Եւ առաքեալն. «այլ մեք քարոզեմք զխաշելեալն Քրիստոս»⁴⁷։ Բազումք եղեն ամենալք եւ յիստաք, այլ մի էր խաշեալն։ Ոչ ասաց, թէ զխոցեալն⁴⁸, այլ թէ զխաշելեալն։ Եւ արդ երկրպագեսցի նշան խաշին⁴⁹, եւ նիւթոյն, յորմէ խաշն դրոշմեալ է, թէպէտ եւ ոսկի է, կամ արծաթ, երկաթ⁵⁰, կամ քարինս պատուականս, յորժամ դրոշմի, երկրպագելի է, իսկ եթէ դիպեսցի քակտումն⁵¹, ոչ երկրպագելի է⁵²։ Երկիր պագանեմք ամենայն Աստուծոյ ընծայելոցն առ Աստուած առաքելով զնորայն պատիւ։

Այս պատուական խաշս նշանագրեցաւ կանխագոյն ի ծառն կենաց ի դրախտին, զոր տնկեաց Աստուած (որպէս զի փայտին այն եմուտ մահ⁵³, որ կենաց էր տուող, իսկ այսու փայտի պարգեւեցաւ կեանս եւ յարութիւն)։ Յակոբ յորժամ երկիր պագի ծագ գաւազանին եւ փոփոխմամբ ձեռացն արհնեաց զորդիսն Յովսէփոս⁵⁴, զնշան խաշին կանխագրեաց յանդիման⁵⁵, գաւազանն Մովսիսի, որ խաշին արինականն հերձեաց ծովն, եւ զԻսրայէլ փրկելով, զփարատն ընկղմեաց⁵⁶, զխաշն նախադրոշմէր⁵⁷, զձեռն խաշապէս ամբառնալով, եւ զԱմադէկ յաղթահարեաց⁵⁸, զխաշն⁵⁹ դրոշմէր⁶⁰, փայտն, որ զդառն ջուրն քաղցրացոյց եւ որ զվէմն եհար եւ աղբերացոյց փայտն⁶¹, գա-

⁴³ ի շարշարանս գնալով // Ex. Fid. 84.63 διατιθέμενος

⁴⁴ Մատթ. ԻԳ 30. «Եւ ասպա երեսեցի նշան Որդոյ մարդոյ յերկինս»։

⁴⁵ C զնազովրացին

⁴⁶ Մարկ. ԺԶ 6. «զՅիսուս խնդրէ՛ք զնազովրացի զխաշելեալն»։

⁴⁷ Ա. Կորնթ. Ա. 23. «այլ մեք քարոզեմք զխաշելեալն Քրիստոս»։

⁴⁸ Ex. Fid. 84.68 Οὐκ εἶπε λογιζόμενον // B չիք Ոչ ասաց, թէ զխոցեալն

⁴⁹ Ex. Fid. 84.69-70 + Ἐνθα γὰρ ἂν ἦ τὸ σημεῖον, ἐκεῖ καὶ αὐτὸς ἔσται

⁵⁰ կամ արծաթ, երկաթ // Ex. Fid. 84.71 չիք

⁵¹ յորժամ դրոշմի, երկրպագելի է, իսկ եթէ դիպեսցի քակտումն // Ex. Fid. 84.71-72 μετὰ τὴν τοῦ τύπου (εἰ τύχοι) διάλυσιν

⁵² B C E չիք

⁵³ Ծննդ. Բ 3։

⁵⁴ Ծննդ. ԽԷ 31, եբր. ԺԱ 21, ԽԸ 14։

⁵⁵ B յառաջագոյն // Ex. Fid. 84.78 σαφέστατα

⁵⁶ Ելք ԺԳ 16։

⁵⁷ Ex. Fid. 84.80 չիք զխաշն նախադրոշմէր

⁵⁸ Ելք ԺԷ 11։

⁵⁹ F չիք նախադրոշմէր, զձեռն խաշապէս ամբառնալով, եւ զԱմադէկ յաղթահարեաց, զխաշն

⁶⁰ Ex. Fid. 84.80 չիք զխաշն դրոշմէր

⁶¹ Ելք ԺԳ 6։

լազանն Ահարոնի, որ ծաղկեաց⁶² ի պատիւ փահանայութեանն⁶³, աւձն, որ ի վերայ փայտի հրապարակեցաւ⁶⁴ (որ փրկութիւն արար, որոց տեսին զթշնամին մեռեալ եւ հաւատային, թէ մեռեալ գոյով նա փայտին, որպէս եւ Քրիստոս մարմնով մեղաց մեղս դատապարտեաց), այս ամենայն զխաշն նշանագրէին⁶⁵: Մովսէս ասէ. «Տեսանիցեմ գկեանս ձեր կախեալ զփայտէ առաջի աշաց ձերոց»⁶⁶: Եսայի ասէ. «Զար ամենայն ձգեցից զձեռս իմ առ ժողովուրդ անգգամ եւ հակառակող»⁶⁷: Խաշին Քրիստոսի⁶⁸ երկրպագողն հասցում⁶⁹ մասին խաշեցելոյն Քրիստոսի ամէն:

⁶² C ծաղկեցաւ Ex. Fid. 84.83 *χρηματίζουσα*

⁶³ Թիւ Ժէ 8, 9:

⁶⁴ Թիւ ԻԱ. 9:

⁶⁵ Ex. Fid. 84.86 *չիք* այս ամենայն զխաշն նշանագրէին

⁶⁶ Բ Օրին. ԻԸ 66. «Եւ եղիցին Կեանք քո կախեալ առաջի աշաց քոց»:

⁶⁷ Ես. ԿԵ 2. «Զար հանապազ ձգեցի զձեռն իմ առ ժողովուրդն անհաւան եւ հակառակաւ»:

⁶⁸ Ex. Fid. 84.88 *τοῦτο*

⁶⁹ C հասցի

ՁԵ. Վասն ընդ արեւելս երկրպագութեանն¹:

Ոչ լոկ կամ պատահմամբ եւ առանց ընտրութեանն² երկիր պագանեմք ընդ արեւելս, այլ վասն զի երեւելի եւ աներեւոյթ եմք, այս ինքն իմանալի եւ զգալի խառնեալ եղաք ի բնութենէ, կրկին եւս եւ զերկրպագութիւն մատուցանեմք արարողին, որպէս ասէ՝ սաղմոսեմք մտամ եւ անձամբ իմանալաբար, սաղմոսեմք³ եւ մարմնական շրթամբք եւ մկրտիմք ջրով, մկրտիմք եւ⁴ հոգւով եւ կրկին միատրիմք ընդ Տեառն հաղորդութեամբ սուրբ խորհրդոյն եւ շնորհաւ⁵ Հոգւոյն:

Եւ արդ վասն զի Աստուած լոյս է⁶ իմանալի եւ⁷ արեգակն արդարութեան⁸ եւ արեւելք ի գրոց անուանի⁹ Քրիստոս, նմա մատուցանել¹⁰ լինի ընդ արեւելս երկրպագութիւն, զի առ Աստուած ելանեն ընդ նմա ամենայն բարիք, եւ նոյն ինքն ընդ արեւելս երկրպագութիւն, որով ընդունելի լինի¹¹ եւ սրբին ամենայն բարիքն, զի աղապիւմն սրբին¹² եւ ընծային ամենայն¹³: Դաւիթ ասէ. «Քագատրութիւնք երկրի, արհնեցէք զԱստուած եւ սաղմոս ասացէք Տեառն, որ նստի յերկինս երկնից ընդ արեւելս»¹⁴: Եւ գիր ասէ. «Տնկեաց Աստուած զդրախտն յեղեմ¹⁵ ընդ արեւելս, յոր եւ եղ զմարդն, զոր էստեղծ»¹⁶, զոր պատուիրանազանցութեան աղագաւ ի դրախտին փափկութենէ արտաբնեաց, եւ առաջի դրախտին բնակեցաւ Ադամ¹⁷ յետ ելանելոյ յարեւմտից

¹ Ex. Fid. 85.1 Περι τοῦ προσκυνεῖν κατὰ ἀνατολάς

² Ex. Fid. 85.2 չիք եւ առանց ընտրութեանն

³ Ex. Fid. 85.5 չիք եւ անձամբ իմանալաբար, սաղմոսեմք

⁴ Ex. Fid. 85.5 չիք մկրտիմք եւ

⁵ B C + սուրբ

⁶ Ա. Յովհ. Ա. 5. «Աստուած լոյս է»:

⁷ C եւ իմանալի

⁸ Մաղաք. Դ. 2:

⁹ Զաք. Գ. 5. «ափառասիկ եւս ածեմ զծառայ իմ զԾագումն»:

¹⁰ Ex. Fid. 85.9 ἀναθετέον // F մատուցանեալ C մատուցեալ

¹¹ B C չիք Ex. Fid. 85.10 πᾶν γὰρ καλὸν τῷ θεῷ ἀναθετέον, ἐξ οὗ *ϕ/ψ* որով ընդունելի լինի

¹² C չիք

¹³ Ex. Fid. 85.10 չիք Զի աղապիւմն սրբին եւ ընծային ամենայն

¹⁴ Սաղմ. Կէ. 33-34. «Քագատրութիւնք երկրի արհնեցէք զԱստուած, եւ սաղմոս ասացէք Տեառն: Ճանապարհ արարէք այնմիկ, որ նստի յերկինս երկնից ընդ յարեւելս»:

¹⁵ F չիք

¹⁶ Ծննդ. Բ. 8. «Եւ տնկեաց Աստուած զդրախտն յեղեմ ընդ արեւելս, եւ եղ անդ զմարդն զոր ստեղծ»:

¹⁷ Ex. Fid. 85.16 չիք

կուսէ¹⁸: Եւ գառաշին ժառանգութիւնն խնդրելով ընդ այն նայելով երկիր պագանէին¹⁹ Աստուծոյ, զի ի դրախտին ետես զԱստուած²⁰: Եւ Մովսէսեան²¹ վրանն յարեւելից կոյս ունէր զվարագոյրն եւ զփաւարանն²², որ էր²³ սրբութիւն սրբոց, եւ նոցա ընդդէմ երկրպագէր ժողովուրդն²⁴: Եւ ազգն Յուդայ իբրեւ զպատուական գոյով յարեւելից կողմն վրանին բանակէր²⁵, եւ յանուանաւոր²⁶ տանարն Սողոմոնի դուռն Տեառն յարեւելից կողմանէ էր դրեալ²⁷: Այլ եւ Տէրն ի խաշ ելեալ ընդ արեւմուտս հայէր, եւ այսպէս երկիր պագանեմք իբր ի նա հայելով: Եւ մինչ համբառնայր, ընդ արեւելից կողմ ի վեր ընթանայր, եւ առաքեալքն յարեւմտից կոյս կալով ընդ արեւելս²⁸ երկիրպագին նմա, եւ «այսպէս գալոց է», ասէին հրեշտակք²⁹, «գոր աւրինակ տեսանէք³⁰ զերթալն նորա յերկինս»³¹: Եւ ինքն Տէրն ասէ. «Որպէս փայլակն զի ելանէ յարեւելից եւ երեւի մինչեւ ցարեւմուտս, այնպէս եղիցի գալուստ որդոյ մարդոյ»³²: Նմա մնալով գալոյ երկիր պագանեմք ընդ արեւելս, իսկ անգիր աւանդեցին զսա առաքեալքն, զի բազում աւանդեցին կարգս անգիրս:

¹⁸ Ex. Fid. 85.16 + δηλαδή

¹⁹ Ex. Fid. 85.17 προσκυνούμεν

²⁰ Ex. Fid. 85.17 չիք զի ի դրախտին ետես զԱստուած

²¹ F Մովսէսի

²² Ղեւա. ԺԶ 14:

²³ F է

²⁴ Ex. Fid. 85.18 չիք որ էր սրբութիւն սրբոց, եւ նոցա ընդդէմ երկրպագէր ժողովուրդն

²⁵ Թիւք Բ 3:

²⁶ Ex. Fid. 85.20 ἐν τῷ περιωνύμῳ // C E F յանուանաբար

²⁷ Եզեկ. Ը 16, ԺԱ 1. «Եւ ամբարձ զիս Հոգի, եւ ած զիս յանդիման դրան տանն Տեառն որ հայէր ընդ արեւելս»:

²⁸ յարեւմտից կոյս կալով ընդ արեւելս // Ex. Fid. 85.23 οὐτως

²⁹ Ex. Fid. 85.24 չիք ասէին հրեշտակք

³⁰ = BM ἐθεάσαντο // Ex. Fid. 85.24 ἐθεάσαντο

³¹ Գործք Ա 11. «սոյնպէս եկեցէ զորարինակ տեսէք զնա երթեալ յերկինս»:

³² Մատթ. ԻԳ 27. «որպէս փայլակն՝ որ ելանէ յարեւելից՝ եւ երեւի մինչեւ յարեւմուտս, այնպէս եղիցի գալուստն Որդոյ մարդոյ»:

22. Վասն սուրբ եւ անապական խորհրդոց Տեառն¹:

Բարի եւ ամենաբարի եւ առաւել բարի բանն Աստուած, որ բոլորովիմբ բարերարութիւն է, վասն առաւելութեամբ բարերարութեան իւրոյ² ոչ համբերեաց միայն իւր³ լինել⁴ բարերարութեանն, որ է իւրն բնութիւն, եւ ոչ միոյ ումեմ հաղորդ ունելով⁵ նմա: Վասն այսորիկ էստեղծ նախ զիմանալի եւ զերկնային զաւրութիւնսն, եւ զկնի այսորիկ՝ զտեսանելի եւ զգալի աշխարհ եւ զամենայն⁶, որ ի նմա⁷, եւ ապա երրորդ⁸ յիմանալոյ եւ զգալոյն բնութենէ խառնեալ ստեղծ⁹ զմարդ: Վասն այսորիկ ամենայն, որք նովաւ ստեղծան, հաղորդակից եղեն իւրում բարերարութեանն էութեամբ (վասն զի նա ինքն է ամենեցուն էութիւն, վասն զի ինքեամբ եւ¹⁰ յինքն բովանդակեալ ունի զամենայն էս¹¹, ոչ այսու աղագաւ միայն, զի յոչ գոյից ի գոյութիւն ած զնոսա, այլ վասն զի նախախնամութեամբ¹² ուղղէ եւ պահէ միշտ զիւր արարածսն), իսկ եւս առաւել կենդանիքն (զի էութեամբ եւ եւս կենդանութեամբ հաղորդեն բարերարութեան), իսկ բանականն յառաջասացելոցն¹³ մասամբք եւ եւս եւ բանականութեամբ եւ մտաւ եւ անձամբ¹⁴ առաւել ընտանի նմա գոլով, թէպէտ եւ ինքն անհասանելապէս վերագոյն քան զամենայն հաստատեալ կայ:

Եւ վասն այսորիկ մարդ, որ բանաւոր եւ անձնիշխան ստեղծաւ, իշխանութիւն առ յարարէն¹⁵, որպէս զի իւրովն յառաջընտրութեամբն անպակասելի եւ անհատ միատրեսցի ընդ ստեղծիչն, եթէ կացցէ մնասցէ ի բարիոցն, այսինքն ի հնազանդութիւն արարչին: Եւ որպէս զի յանցաւոր եղել պատուիրանաց արարչին իւրոյ եւ մահու եւ ապականութեան ծառայ եղել, վասն այ-

¹ Ex. Fid. 86.1 Περι τῶν ἁγίων καὶ ἀχράντων τοῦ κυρίου μυστηρίων

² F չիք

³ F միայնու

⁴ C ունել չի/ս իւր լինել

⁵ Ex. Fid. 86.4 μετεχόμενον // B հաղորդ լինելով

⁶ C չիք եւ զամենայն

⁷ Ex. Fid. 86.6 չիք եւ զամենայն, որ ի նմա

⁸ Ex. Fid. 86.6 չիք

⁹ Ex. Fid. 86.6 չիք բնութենէ խառնեալ ստեղծ (B էստեղծ)

¹⁰ Ex. Fid. 86.9 չիք ինքեամբ եւ

¹¹ Հոովմ. ԺԱ 36. «Զի ի նմանէ եւ նովաւ եւ ի նոյն ամենայն»:

¹² Ex. Fid. 86.10 ἡ αὐτοῦ ἐνέργεια

¹³ Ex. Fid. 86.12 τὰ προεξηγμένα // B C E յառաջ զասացելոցն

¹⁴ Ex. Fid. 86.13 չիք | = EN // + καὶ ταῦτα μᾶλλον

¹⁵ Ex. Fid. 86.16 չիք

սորիկ արարիչն ամենայնի¹⁶ փաղցրութեամբ եւ ողորմութեամբ իւրով ամենայնի նմանեցաւ մեզ եւ մարդ եղեւ եւ հաւասար մեր, զմեր զամենայն առեալ¹⁷ բայց ի մեղաց եւ միատրեցաւ ընդ բնութիւնս մեր: Եւ վասն զի ետ մեզ զիւրումն պատկերին եւ նմանութեանն զանձն եւ զմիտս իւրով առաքինութեամբ¹⁸, եւ մեք ոչ պահեցաք, առնու ինքն զաղփատ եւ զսկար բնութիւնս մեր, որպէս զի սրբեցէ եւ անապականացուցէ եւ հաղորդ իւրոյ աստուածութեանն ցուցցէ դարձեալ:

Այլ պարտ էր, զի ոչ միայն սկիզբն բնութեանս հաղորդէր վերագոյն աստուածային բնութեանն¹⁹, այլ ամենայն մարդ, որ եւ կամեսցի, երկրորդ ծնցի վերստին ծննդեամբն եւ նորոգ կերակրով, որ եւ նման գոյով նոր ծննդեանն, սնանէր եւ այսպէս հասանէր ի չափ կատարմանն Քրիստոսի²⁰: Եւ զի իւրովն ծննդեամբ, այսինքն մարմնատրութեամբ եւ մկրտութեամբ եւ շարշարանամբ եւ յարութեամբն, ազատեաց զբնութիւն մեր ի մեղաց նախահարն, յապականութենէ եւ ի մահուանէ, եւ սկիզբն եղեւ յարութեան, եւ հանապարհ եւ աւրինակ եւ նախատիպ եղ զանձն իւր, որպէս զի մեք հետեւեցումք նմա եւ աստուածացումք²¹, եւ զոր նայն է բնութեամբ, եղիցումք շնորհամք, որդի եւ ժառանգ Աստուծոյ եւ ժառանգակիցք նորա²²: Եւ ետ մեզ, որպէս ասացի, կրկին ծնունդ, զի որպէս եւ մինչ ծնաք²³ յԱդամայ զիւրն ծնունդ²⁴ նման եղաք, Ադամայ ժառանգելով զանէծս եւ զապականութիւն, այսպէս եւ ի նմանէ ծնանելովն նմանեցումք նմա եւ ժառանգեցումք զանապականութիւն, զարհնութիւն եւ զփառսն նորա:

Այլ²⁵ վասն զի հոգեւոր գոյով Ադամ, պարտ է զի եւ ծնունդն հոգեւոր լիցի, նոյնպէս եւ կերակուրն: Եւ դարձեալ վասն զի կրկին եմք մեք եւ խառնեալք, պարտ է եւ ծնունդս կրկինս լինել, նոյնպէս եւ կերակուրքն խառնեալք: Իսկ զի ծնունդ ի ջրոյ եւ ի հոգւոյ ետ մեզ²⁶, զոր ի մկրտութենէն շնորհեաց,

¹⁶ Ex. Fid. 86.19-20 ó ποιητής καὶ δημιουργὸς τοῦ γένους ἡμῶν

¹⁷ Ex. Fid. 86.19-21 չիք եւ հաւասար մեր, զմեր զամենայն առեալ

¹⁸ ետ մեզ զիւրումն պատկերին եւ նմանութեանն զանձն եւ զմիտս իւրով առաքինութեամբ // Ex. Fid. 86.21-23 μετέδωκεν ἡμῖν τῆς ἰδίας εἰκόνης καὶ τοῦ ἰδίου πνεύματος

¹⁹ Ex. Fid. 86.27 չիք աստուածային բնութեանն

²⁰ Ex. Fid. 86.29 չիք

²¹ Ex. Fid. 86.34 γενώμεθα θέσει

²² Հռովմ. Ը 17. «Եւ եթէ որդիք, ապա եւ ժառանգք. ժառանգք Աստուծոյ եւ ժառանգակիցք Քրիստոսի»:

²³ Բ ծննդամք

²⁴ զիւրն ծնունդ // Ex. Fid. 86.37 αὐτῷ

²⁵ Եւ

²⁶ Յովհ. Գ 5. «Եթէ ոչ ոք ծնցի ի ջրոյ եւ ի Հոգւոյ, ոչ կարէ մտանել յարժայոյթին Աստուծոյ»:

խակ կերակուր ինքն եղեւ, որ եւ յերկնից էջ հացն կենացն²⁷ Քրիստոս: Վասն զի յորժամ հանդերձեալ էր կամաւ զմահ կրել յաղագս մեր ի գիշերին, յորում մատնէր զինքն վասն աշխարհի կենաց²⁸, պատուիրան նոր պատուիրեաց եւ ուխտ եղ²⁹ իւրոց աշակերտացն եւ առաքելոցն եւ նոբաւ ամենայն յինքն հաւատացելոց: Վասն զի ի վերնատունն արքայն³⁰ Սիրովնի³¹ զընթրիսն³² ուտէր ընդ աշակերտացն եւ այնի³³ կատարեաց զհինն արեւնքն եւ ի լնույն զհինն արինացն³⁴ ապա յարուցեալ³⁵ լուաց զոտս աշակերտացն ի նշան մկրտութեան³⁶: Եւ բազմեցաւ³⁷ եւ ապա բեկանէ³⁸ զհացն եւ ետ նոցա եւ ասէ. «Առէ՛ք կերայի՛ք³⁹, այս է մարմին իմ, վասն ձեր բեկեալ ի թողութիւն մեղաց»⁴⁰: Նոյնպէս եւ զբաժակն առեալ խառնեալ⁴¹ ետ նոցա եւ ասէ. «Արբէ՛ք ի սմանէ ամենեւեմ: Այս է արիւն իմ նորոյ ուխտի վասն ձեր հեղեալ ի թողութիւն մեղաց: Զայս արարէ՛ք առ իմոյ յիշատակի: Զի քանիցս անգամ ուտիցէ՛ք զհաց զայս եւ զբաժակս ըմպիցէ՛ք, զմահն իմ⁴² պատմեսցի՛ք⁴³ մինչեւ գամ ես»⁴⁴:

²⁷ Ex. Fid. 86.44-45 + ó κύριος ἡμῶν Ἰησοῦς | Յովհ. Զ 48. «Եւ եւ հաց կենաց», Զ 51. «Եւ եւ հաց կենաց, որ յերկնից իջեալ»:

²⁸ Ex. Fid. 86.46 չիք վասն աշխարհի կենաց

²⁹ Ex. Fid. 86.47 չիք եւ ուխտ եղ

³⁰ Ex. Fid. 86.49 + καὶ ἐνδόξου

³¹ C Սիրովնի

³² Ex. Fid. 86.49 τὸ παλαιὸν πᾶσχα

³³ Ex. Fid. 86.50 չիք

³⁴ E F արինակն B օրինակ

³⁵ Ex. Fid. 86.50 չիք ապա յարուցեալ

³⁶ Յովհ. ԺԳ 5. «Եւ ապա առեալ ջուր՝ արկ ի կոնք, եւ սկսաւ լուանալ զոտս աշակերտացն»:

³⁷ Ex. Fid. 86.51 չիք եւ բազմեցաւ

³⁸ C երեկ

³⁹ F չիք

⁴⁰ Մատթ. ԻԶ 26. «առ Յիսուս հաց, արհնեաց եւ երեկ եւ ետ աշակերտացն եւ ասէ. Առէ՛ք կերայի՛ք, այս է մարմին իմ», Ա. Կորնթ. ԻԶ 24-25. «առ հաց, գոհացաւ, երեկ եւ ասէ. Այս է իմ մարմին որ վասն ձեր»:

⁴¹ առեալ խառնեալ // Ex. Fid. 86.54 ἐξ οἶνου καὶ ὕδατος

⁴² Ex. Fid. 86.58 τοῦ νοῦ τοῦ ἀνθρώπου

⁴³ Ex. Fid. 86.58-59 + καὶ τὴν ἀνάστασιν αὐτοῦ ὁμολογεῖτε

⁴⁴ Մատթ. ԺԶ 27-28. «Եւ առեալ բաժակ գոհացաւ, ետ նոցա եւ ասէ. Արբէ՛ք ի դմանէ ամենեւին, զի այդ է արիւն իմ նորոյ ուխտի, որ ի վերայ բազմաց հեղու ի թողութիւն մեղաց», Մարկ ԺԳ 24. «Եւ ասէ ցնոսա. Այս է արիւն իմ նորոյ ուխտի, որ փոխանակ բազմաց հեղու», Դուկ. ԻԲ 20. «Նոյնպէս եւ զբաժակն յետ ընթրեացն առ՝ եւ ասէ. Այս բաժակ է նոր ուխտ՝ իմով արեամբ վասն ձեր հեղեղոյ», Ա. Կորնթ. ԺԱ 24-26. «Տէր Յիսուս ի գիշերին յորում մատնէր, առ հաց, գոհացաւ, երեկ եւ ասէ. Այս է իմ մարմին որ վասն ձեր. զայս արարէ՛ք առ իմոյ յիշատակի: Նոյնպէս եւ զբաժակն յետ ընթրեացն, առ եւ ասէ. Այս բաժակ նոր ուխտ է իմով արեամբ. զայս արարէ՛ք քանիցս անգամ թէ ըմպիցէ՛ք, առ իմոյ յիշատակի: Քանիցս անգամ

Եւ արդ⁴⁵ «զի կենդանի էր Բանն Աստուած եւ ներգործող»⁴⁶ եւ «զամենայն, զոր ինչ կամեցաւ⁴⁷, արար»⁴⁸, ասաց. «եղիցի լոյս, եւ եղեւ, եղիցի հաստատութիւն, եւ եղեւ»⁴⁹, «Եթէ բանիւ Տեառն երկինք հաստատեցաւ, եւ հոգւով բերանոյ նորա ամենայն զարուրիւմ նոցա»⁵⁰, եթէ երկինք եւ երկիր, ջուր⁵¹, ասդ եւ հուր բանիւն Տեառն ի կատարումն եկին⁵², եւ այս հոշակելի է կենդանի՝ մարդ. զի կամեցաւ Աստուած⁵³ եւ եղեւ մարդ, նաեւ ի սրբոյ⁵⁴ Կուսէն ի սուրբ եւ յանաւատ յարենէն⁵⁵ մարմինն իւր յանգեաց⁵⁶ առանց սեւման, մի՞թէ ոչ կարէր⁵⁷ զհացն մարմին իւր առնել, եւ⁵⁸ զգինին⁵⁹ արիւն: Ի սկզբանն ասաց. «Հանցէ երկիր զդալար խոտոյ»⁶⁰, եւ ցարդ եւս ռոտգելով ցաւով անձեռեաց հանէ զբոյս իւր, զարացեալ եւ ուղղեալ հրամանաւն Աստուծոյ: Ասաց Աստուած. «այս է մարմին իմ», եւ «այս է արիւն», եւ թէ՛ «զայս արարէք», եւ ամենազար բանիւն իւրով մինչեւ ցգալուստն իւր լինի: Իսկ անձրեւ նորոյ այս վաստակոյ եղիցի ի ձեռն կոշման հովանաւոր զարութեան⁶¹ Հոգւոյն: Զի որպէս այն, զոր ինչ արար Աստուած, ներգործութեամբ Հոգւոյն Սրբոյ եղեն, նոյնպէս եւ այժմ ներգործութիւն Սուրբ Հոգւոյն կատարէ զայն, որ ի վեր բան զընութիւնս, որք մտաց⁶² ոչ բովանդակելի են, այլ միայն հաւատով կրի: «Ո՛րպէս լինիցի ինձ այդ⁶³», ասէր⁶⁴ Կոյսն, «զի զայր ոչ զի-

թէ ոտիցէք զհացս զայս եւ զբաժակս ըմպիցէք, զմահն Տեառն պատմեցէք, մինչեւ եկեսցէ նա»:

⁴⁵ E չիք

⁴⁶ Եբր. Դ 12. «Զի կենդանի է բանն Աստուծոյ եւ ազդաւոր»:

⁴⁷ Ex. Fid. 86.61 + ὁ κύριος

⁴⁸ Սաղմ. ՃԼԴ 6. «Զամենայն զոր ինչ կամեցաւ եւ արար Տէր»:

⁴⁹ Ծննդ. Ա. 3. «Եւ ասաց Աստուած. եղիցի՛ լոյս: Եւ եղեւ լոյս», 6. «Եւ ասաց Աստուած. եղիցի՛ հաստատութիւն ի մէջ ջրոցդ... Եւ եղեւ այնպէս»:

⁵⁰ Սաղմ. ԻԲ 6. «Եւ բանիւ Տեառն երկինք հաստատեցան, եւ հոգւով բերանոյ նորա ամենայն զարուրիւմ նոցա»:

⁵¹ Ex. Fid. 86.64 ὕδωρ // B E F ջուր

⁵² C F եկ

⁵³ Ex. Fid. 86.66 + λόγος

⁵⁴ C սրբութիւն

⁵⁵ F յանաւատէնէ

⁵⁶ Ex. Fid. 86.68 ὑπεστήσατο // E յանգեց F ագեց

⁵⁷ C կարեամ

⁵⁸ C իսկ

⁵⁹ Ex. Fid. 86.69 + καὶ τὸ ὕδωρ

⁶⁰ Ծննդ. Ա. 11:

⁶¹ Ex. Fid. 86.75 + τοῦ ἁγίου

⁶² F մտաւ Ex. Fid. 86.78 չիք

⁶³ C չիք

⁶⁴ Ex. Fid. 86.79 + ἡ ἄγία

տեմ»։ Եւ պատասխանեաց ասելով Գաբրիէլ⁶⁵. «Հոգին Սուրբ եկեսցէ ի քեզ, եւ զգաւորօրէն բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո»⁶⁶։ Եւ դու հարցանես զայդ իրս, թէ զիա՞րդ լինիցի հացն մարմին Քրիստոսի, եւ գինի եւ ջուր արիւնն իւր⁶⁷։ Ասեմ եւ ես քեզ՝ Հոգին Սուրբ իջանէ ի նոսա եւ առնէ զնոսա ի վեր քան զքանս եւ զմիտս։

Իսկ հաց եւ գինի յայն սակս⁶⁸ առեալ լինի, զի գիտելով Աստուծոյ զտկարօրին մարդկան, եթէ բազումք բազում անգամ⁶⁹ յոչ սովորականացն դիպեալ յետս դառնան յիրացն⁷⁰, վասն այսորիկ ընդ մեզ զիջանելով⁷¹ զսովորականն բնութեանն առնէ ի վեր քան զբնութիւնս։ Եւ որպէս ի մկրտութիւնն է տեսանել, զի սովորօրէն եւ մարդկան ջրով լուանիլ, եւ ձիթով աւծանիլ, լծակցեաց ընդ ձեթ եւ ընդ ջուր զշնորհս Հոգւոյն եւ արար զնա լուացարան վերստին ծննդեանն, նոյնպէս եւ վասն զի սովորօրէն ունէին մարդիկ հաց եւ գինի ճաշակել եւ կեալ⁷², լծակցեաց ընդ նմա Աստուած ուրիւնն իւր, առնելով⁷³ զնոսա իւր մարմին եւ արիւն, որպէս զի սովորականամբն եւ բնականամբն⁷⁴ լինիցոյ՝ հաղորդ նոցա, որ ի վեր քան զբնութիւնս։

Եւ դարձեալ զի մարմին եւ արիւն ամենայն կենդանեաց ի կերակրոյ եւ ըմպելոյ գոլով, զի մի եւ նոյն մարմին կերակուր⁷⁵, եւ կերակուր⁷⁶ մարմին է արեամբ յանգեալ⁷⁷, եւ զի նախ ի մարմին եւ յարիւն միաւորեաց զհոգի եւ զմիտան զիւր ազգ, եւ նա⁷⁸ ի նոսա գոլով բարբերարութեամբ, իսկ զկնի յանցանացն եւ ի մահ մատնելոյն առեալ զարիւն եւ զմարմին մեր, միացոյց ընդ իւրն աստուածութիւն՝ զսկիզբն զանգուածոյս մերոյ, որով եւ ծնաւ աւտար ծննդեամբ։ Եւ ապա զամենայն մարդիկ մինչ միաւորեաց ընդ ինքն հաւատով եւ վերստին ծննդեամբն, ետ նոցա զհացն եւ զբաժակն, յորոց իւրն էր մարմին, այ-

⁶⁵ Ex. Fid. 86.80 + ó ἀρχάγγελος

⁶⁶ Դուկ. Ա. 34-35. «Եւ ասէ Մարիամ ցհրեշտակն. Զիա՞րդ լինիցի ինձ այդ, քանզի զայր ոչ գիտեմ։ Պատասխանի ետ հրեշտակն եւ ասէ ցնա. Հոգի Սուրբ եկեսցէ ի քեզ, եւ զաւորօրէն Բարձրելոյ հովանի լիցի ի վերայ քո»։

⁶⁷ Ex. Fid. 86.82 Χριστόν

⁶⁸ Ex. Fid. 86.84 չիք յայն սակս

⁶⁹ Ex. Fid. 86.85 չիք բազում անգամ

⁷⁰ Ex. Fid. 86.86 δυσχεραίνουσα

⁷¹ ընդ մեզ զիջանելով // Ex. Fid. 86.86 τῇ οὖν συνήθει συγκαταβάσει κεχρημένος

⁷² հաց եւ գինի ճաշակել եւ կեալ // Ex. Fid. 86.91 ἄρτον ἐσθίειν ὕδωρ τε καὶ οἶνον πίνειν

⁷³ Ex. Fid. 86.92 καὶ πεποίηκεν Β C առնել

⁷⁴ C չիք եւ բնականամբն

⁷⁵ C չիք մարմին կերակուր

⁷⁶ F չիք եւ կերակուր

⁷⁷ F յանգել E յազել

⁷⁸ E չիք եւ նա

նու զիւրն ուտել մարմին եւ արիւն: Եւ միաւորեցաւ ընդ⁷⁹ մեզ մարմնով ի մարմին, արեամբ յարիւն, հոգւով ի հոգի եւ մտաւք ի միտք, եւ եղեւ ի մեզ կատարեալ ի մի, որպէս ասէ, Եթէ որք ուտէ զմարմին իմ, նա յիս բնակէ⁸⁰ եւ ես ի նմա, եւ եղիցին կատարեալք ի մի, որպէս դու Հայր յիս, եւ ես ի նոսա, եւ նոքա յիս⁸¹:

Մարմին է ճշմարիտ միացեալ ընդ աստուածութիւնն, ի Կուսէն առեալ⁸² մարմինն, ոչ եթէ յերկինս համբարձեալ մարմինն դարձեալ գայ, այլ նոյն ինքն հաց եւ գինի փոփոխին ի մարմին եւ յարիւն Աստուծոյ լինել: Եթէ զտեսակն խնդրես, թէ որպէս լինի, բաւական է այս, թէ ի ձեռն Հոգւոյն Սրբոյ, եւ որպէս ի Սուրբ Կուսէն Հոգւով Սրբով եւ ինքն անձամբ իւրով պատրաստեաց Տէրն զմարմինն իւր: Եւ աւելի ինչ ոչ գիտեմք, այլ զի Բանն Աստուծոյ ճշմարիտ⁸³ եւ հզաւ է, այլ արիւնակ լինելոյն անքննելի է: Եւ⁸⁴ որպէս բնութեամբ հաց եւ գինի լինի⁸⁵ ուտելով⁸⁶ մարմին, եւ արիւն լինի ուտողացն⁸⁷, եւ ոչ այլ մարմին եւ արիւն լինի⁸⁸, այլ ի մի եւ նոյն մարմին միանայ⁸⁹, նոյնպէս եւ յառաջադրութեանն այն հաց եւ գինի եւ ջուր, կոչմամբ⁹⁰ եւ իշմամբ Հոգւոյն Սրբոյ ի վեր քան զբնութիւնս փոխադրի⁹¹ լինելով մարմին եւ արիւն Քրիստոսի, եւ ոչ են երկու, այլ մի եւ նոյն մարմին:

Որով լինել կարէ հաւատով արժանապէս առողացն թողութիւն մեղաց եւ կեանք յաւիտենից եւ պահապան հոգւոյ եւ մարմնոյ, իսկ որք անհաւատութեամբ եւ անարժանս հաղորդին ի տանջանս եւ ի դատապարտութիւն, զոր արիւնակ եւ մահն Տեառն եղեւ, զի հաւատացելոց եղեւ կեանք եւ անպականութիւն, եւ տուող⁹² յաւիտենական երանութեանն, իսկ անհաւատից եւ Տեառն սպանողացն՝ դատաստան եւ տանջանք յաւիտենական: Եւ արդ ոչ

⁷⁹ B չիք

⁸⁰ C բնակեցի B բնակեցէ

⁸¹ Յովն. Ժէ 21. «զի ամենեմիս մի իցեն, որպէս դու Հայր յիս, եւ ես ի քեզ, զի եւ նոքա ի մեզ իցեն»: Հունարենում այս պարբերությունը չիք:

⁸² Ex. Fid. 86.94 չիք

⁸³ Ex. Fid. 86.100 + καὶ ἐνεργής

⁸⁴ Ex. Fid. 86.101 + Οὐ χεῖρον δὲ καὶ τοῦτο εἶπεῖν, ὅτι

⁸⁵ E չիք

⁸⁶ Ex. Fid. 86.102-103 + καὶ τὸ ὕδωρ διὰ τῆς πόσεως

⁸⁷ եւ արիւն լինի ուտողացն // Ex. Fid. 86.103 καὶ αἷμα τοῦ ἐσθίουτος καὶ πίνοντος μεταβάλλεται

⁸⁸ Ex. Fid. 86.104 չիք եւ արիւն

⁸⁹ եւ արիւն լինի, այլ ի մի եւ նոյն մարմին միանայ // Ex. Fid. 86.104 παρὰ τὸ πρότερον αὐτοῦ σῶμα

⁹⁰ C խառնեալ չիք եւ ջուր, կոչմամբ

⁹¹ C փոխադրութիւն

⁹² եւ տուող // Ex. Fid. 86.112 εἰς ἀπόλαυσιν

երթ արինակ է այս հաց եւ գինի մարմնոյն Տեառն եւ արեան, քաւ լիցի, այլ նոյն ինքն աստուածացեալ մարմինն Տեառն է, վասն զի ինքն Տէրն ասէ. «Այս է իմ» ոչ արինակ մարմնոյ, այլ «մարմին», եւ ոչ նմանասեռ արինն⁹³, այլ «արին իմ»: Եւ նախ քան զայս ցնրեայսն ասէ. «Եթէ ոչ ուտէ՞ զմարմին որդոյ մարդոյ»⁹⁴, ոչ ունի՞ր կեանս յաւիտենականս: Զի մարմին իմ ճշմարիտ կերակուր է եւ արին իմ ըմպելի», եւ «որ ուտէ զիս, կեցցէ»⁹⁵:

Եւ արդ ամենայն երկիւղածութեամբ եւ սուրբ սրտիւ եւ աներկմիտ հաւատով պարտ է մատչել, եւ լինիցի մեզ որպէս եւ հաւատամբ⁹⁶: Այլ եւ պատուեսցոյ՞ զնա ամենայն սրբութեամբ հոգոյ եւ մարմնոյ, վասն զի կրկին է նա: Մերձեսցոյ՞ ի նա բորբոքեալ սիրով եւ փափագանաւ եւ խաչապէս դնելով⁹⁷ առ իրեարս զձեռս մեր, առնլով ի նմա զմարմին խաչեցելոյն Քրիստոսի եւ դնելով ի վերայ աչաց մերոց, ի շրթունս եւ ի նակատս, զաստուածային կայծակն այնպէս հաղորդիմ, որպէս զի հոս փափագանացն, որ ի մեզ է, մինչ առնու ի կայծակէն յայնմանէ զջերմութիւն, կիզէ զմեղս մեր, եւ լուսաւորէ զսիրտս մեր եւ հաղորդութեամբ աստուածային հոյն բորբոքիմ եւ աստուածանամբ:

Կայծակն ետես Եսայի, այլ կայծակ ոչ լոկ փայտ է, այլ ընդ հոս միատրեալ: Նոյնպէս եւ այս հաց հաղորդութեան ոչ լոկ հաց է, այլ միատրեալ ընդ աստուածութիւն: Մարմին միատրեալ ընդ աստուածութիւնն⁹⁸ ոչ մի բնութիւն է, այլ մի մարմին է եւ միւս ընդ նմա միատրելոյ աստուածութեանն, վասն որոյ ընդ միմեանս երկուն ոչ մի կոչին բնութիւն, այլ երկու:

Հիւրընկալեաց Մեղիսեդեկ զԱբրահամ հացիւ եւ գինեաւ, մինչ գայր ի կոտորածէ դարձեալ այլազգեացն, որ քանակայն էր Աստուծոյ բարձրելոյն: Այն սեղանն արինակեաց, զխորհուրդ այսու սեղանոյս, զոր արինակ քանակն այն Քրիստոսի ճշմարիտ քանակայնապետին արինակ եւ պատկեր գոլով: Զի «Դու ես», ասէ, «քանակայն յաւիտեան ըստ կարգին Մեղիսեդե-

⁹³ նմանասեռ արին // Ex. Fid. 86.117 τύπος τοῦ αἵματος

⁹⁴ C չիք

⁹⁵ Յովհ. Զ 53. «Մարտնչին ընդ միմեանս Հրէայն եւ ասէին. Զիա՞րդ կարէ սա տալ մեզ զմարմին իւր յուտել», 55. «Որ ուտէ զմարմին իմ եւ ըմպէ զարին իմ, ունի՞ր զկեանս յաւիտենականս», 57. «Որ ուտէ զմարմին իմ, եւ ըմպէ զարին իմ, յիս բնակեցէ, եւ ես ի նմա»:

⁹⁶ = B // Ex. Fid. 86.122-123 + μη διστάζοντες

⁹⁷ C խաչապնդելով

⁹⁸ Ex. Fid. 86.132 σῶμα δὲ ἡνωμένον θεότητι // B C չիք Մարմին միատրեալ ընդ աստուածութիւնն

կի»⁹⁹: Զհացս զայս արինակ էր հացն առաջատրութեան¹⁰⁰: Այս հաց է սրբեալ ընծայք, յայտ է, թէ եւ անարին, զորում յարեւելից մինչեւ յարեւմուտս ընծայել հրամայեաց Աստուած բերանով մարգարէին:

Մարմին է եւ արին Քրիստոսի, որ հաստատէ զհոգի եւ զմարմին, որոց հաւատով հաղորդին, որ ոչ երբեք ցնդեսցի եւ ոչ ապականեսցի եւ ոչ յելս որովայն իջանէ, քան լիցի, այլ հանապազորդ գոյական եւ պահապան լինելով, յամենայն ախտից անմեղեմալի մնալով, եւ եթէ ոսկի առցէ¹⁰¹, դատատրական հալմամբ սրբէ յամենայն աղտոյ, որպէս զի մի ի հանդերձելումն ընդ աշխարհի դատապարտեսցի: Վասն զի սրբէ ի հիւանդութեանց եւ յամենայն արկածից, որպէս ասէ առաքեալն. «Եթէ զանձինս քննեալ, ապա ոչ դատապարտեալ, եւ եթէ քննիմք ի Տեառնէ, խրատիմք, զի մի ընդ աշխարհի դատապարտեսցուք»¹⁰²: Եւ այս է, զոր ասէ. «Վասն զի որ ոք հաղորդի զմարմին եւ զարին Տեառն անարժանութեամբ, ի դատաստան անձին իւր ուտէ»¹⁰³: Իսկ որք¹⁰⁴ նովաւ սրբեալք¹⁰⁵ միատրիմք ընդ մարմին Տեառն¹⁰⁶ եւ ընդ հոգի նորա, եւ լինիմք մարմին Քրիստոսի:

Այս հացս լինի սկիզբն հանդերձելոյ հացին, որ է գոյական, վասն զի գոյականն զայս յայտ առնէ՝ կամ կեանս հանդերձեալ լինելով¹⁰⁷, կամ արդեալ պահապան գոյութեան մերոյ լինելով¹⁰⁸: Արդ թէ այսպէս, եւ թէ այնպէս է, մարմինն Տեառն պարտաբար¹⁰⁹ կոչելի է հաց գոյական, վասն զի հոգի կենդանաբար է մարմինն Տեառն¹¹⁰: Այսու աղագաւ զի Հոգւովն սրբով եղև

⁹⁹ Սաղմ. ճԹ 4. «Դու ես քահանայ յախտեան ըստ կարգին Մեկիսեղեկի»:

¹⁰⁰ Ex. Fid. 86.140 τῆς προθέσεως // C E F առաջընտրութեան

¹⁰¹ Ex. Fid. 86.147 + κίβδηλον

¹⁰² Ա. Կորնթ. ԺԱ 31-32. «Զի եթէ զանձինս քննեալ, ապա ոչ դատապարտեալ: Եւ եթէ դատիմք ի Տեառնէ խրատիմք. զի մի՛ ընդ աշխարհի դատապարտեսցուք»:

¹⁰³ Ա. Կորնթ. ԺԱ 29. «Զի որ ուտէ եւ ըմպէ անարժանութեամբ, դատաստանս անձին իւրում ուտէ»:

¹⁰⁴ C չէք

¹⁰⁵ C E սրբեալ

¹⁰⁶ C նորա

¹⁰⁷ Կեանս հանդերձեալ լինելով // Ex. Fid. 86.156-157 τὸν μέλλοντα, τουτέστιν τὸν τοῦ μέλλοντος αἰῶνος

¹⁰⁸ Ex. Fid. 86.157-158 λαμβανόμενον

¹⁰⁹ C պարտաբար

¹¹⁰ Յովհ. 2 63. «Հոգին է կենդանաբար, մարմին ինչ ոչ ազնի»:

յղութիւն նորա, եւ «ծնեալ ի Հոգոյ հոգի է»¹¹¹: Եւ զայս ասելով ոչ ուրանաւ զբնութիւն մարմնոյն, այլ կենդանաւոր եւ աստուածային ցոյցանեմ զնա:

Իսկ եթէ ոմանմ արինակ եւ փոխանակ մարմնոյ եւ արեանն Քրիստոսի¹¹² կոչեն զհացն զայն¹¹³ ըստ սրբոյն Վասիլիոսի¹¹⁴, զայն նախ քան զկատարեալն եւ զսրբեալն ասէին, մինչդեռ ընծայեալ¹¹⁵ ի ձեռին ունէին:

Առումն¹¹⁶ ասի վասն զի նովաւ առնուն հաղորդեալն զՅիսուսի աստուածութիւնն: Հաղորդութիւն անուանի եւ է նշմարիտ, զի նովաւ հաղորդ լինիմք Քրիստոսի, միաւորելով ընդ մարմին եւ աստուածութիւն նորա, եւ միաւորիմք եւ հաղորդիմք ընդ միմեանս նովաւ, վասն զի որովհետեւ ի միոյ հացէ առնելով ամենեւեան մի մարմին¹¹⁷ եւ մի արին, իւրաքանչիւր անդամք լինիմք¹¹⁸:

Ապա ամենայն¹¹⁹ զգուշութեամբ պահեսցոմ զանձինս՝ ոչ տալ եւ ոչ առնուլ հերձուածողացն հաղորդութիւն: Վասն զի «մի տայք զսրբութիւն շանց», ասէ Տէր, եւ «արկանէք զմարգարիտ ձեր առաջի խոզից»¹²⁰, որպէս զի մի հաղորդ նոցա շարափառութեանն եւ դատապարտութեանն լիցոմ: Զի եթէ ստուգապէս միաւորութիւն ընդ Քրիստոսի է, ապա եւ մեք միով հաղորդութեամբ ընդ միմեանս միաւորիմք, ընդ որս միանամք յառաջընտրութեամբ¹²¹, վասն զի իմացութեամբ եւ մտամք լինի այս միաւորութիւն, այլ ոչ առանց

¹¹¹ Յովհ. Գ 6. «Ծնեալն ի Հոգոյ հոգի է»:

¹¹² Ex. Fid. 86.163 τοῦ κυρίου

¹¹³ Ex. Fid. 86.164 + καὶ τὸν οἶνον

¹¹⁴ Ը Քասիլիսիոսի Ex. Fid. 86.164-165 + οὐ μετὰ τὸ ἁγιασθῆναι

¹¹⁵ Ex. Fid. 86.165 τὴν προσφορὰν // E F ընծեալ

¹¹⁶ Ex. Fid. 86.167 Μετάληψις // E F Առումն

¹¹⁷ Ex. Fid. 86.171 + Χριστοῦ

¹¹⁸ = C // Ex. Fid. 86.172 + σύσσωμοι Χριστοῦ χρηματίζοντες

¹¹⁹ Ը ամենայնի

¹²⁰ Ը զմարգարիտս ձեր առաջի խոզաց | Մատթ. է 6. «Մի՛ տայք զսրբութիւն շանց. եւ մի՛ արկանէք զմարգարիտ ձեր առաջի խոզաց»:

¹²¹ Ապա եւ մեք միով հաղորդութեամբ ընդ միմեանս միաւորիմք, ընդ որս միանամք յառաջընտրութեամբ // Ex. Fid. 86.177-178 καὶ πρὸς ἀλλήλους, πάντως καὶ πᾶσι τοῖς συµµεταλαµβάνουσιν ἡµῖν κατὰ προαίρεσιν ἐνούµεθα

մերն հանութեան¹²²: Զի ամենեւեւան մի մարմին եմք յաղագս ի միոյ հացէն հաղորդելոյ¹²³, ասէ առաքեալ¹²⁴:

Իսկ արինակ հանդերձելոցն կոչին, ոչ վասն այնորիկ, եթէ ոչ է նշմարիտ մարմին եւ արին Քրիստոսի, այլ վասն զի նովաւ այժմ հաղորդիմք Քրիստոսի¹²⁵ աստուածութեանն, եւ նա է հանդերձեալ կեանքն¹²⁶, եւ յայնժամ իմանալապէս մտաւ¹²⁷ միայն տեսութեամբ:

¹²² այլ ոչ առանց մերն հանութեան *հմմտ.* Fid. 86.179 οὐ χωρὶς τῆς ἡμῶν γνώμης // C E F չիք

¹²³ Ա. Կորնթ. Ժ 17. «Զի մի հաց մի՛ մարմին եմք բազումքս. զի ամենեւին ի միոջէ հացէ անտի վայելեմք»:

¹²⁴ = bMN Πάντες γὰρ ἐν σῶμά ἐσμεν, ὅτι ἐκ τοῦ ἐνὸς ἄρτου μεταλαμβάνομεν, καθὼς φησιν ὁ θεῖος ἀποστολος // Ex. Fid. 86.179 չիք

¹²⁵ C չիք

¹²⁶ եւ նա է հանդերձեալ կեանքն // Ex. Fid. 86.182 չիք

¹²⁷ C իմանելիապէս

ՁԷ. Ազգաբանութիւն Տեառն եւ Կուսին¹:

Զարբոյ եւ զառաւել փառատրելոյ զմիշտկուսէ զԱստուածածնէն Մարիամայ յառաջասացեալ բանսն փոքր ինչ ասացի եւ շափատրաբար² ցուցալ³, եթէ ճշմարիտ եւ սեփական Աստուածածին է եւ ասի, իսկ այժմ զպականսն ի լրութիւն ածցում: Քանզի սա յառաջ քան զյալիտեանս յառաջագիտական խորհրդովն Աստուծոյ նախասահմանել եւ իւրաքանչիւր արինական եւ մարգարէական բանիւն⁴ նկարագրեալ եւ նախաբարոյցեալ⁵ եղեւ, որպէս զի ի նախասահմանեալ ժամանակի, ի Դաւթի արմատոյն ելանելով, որպէս եղեալ էին առ⁶ նա խոստումն Աստուծոյ⁷: «Վասն զի երդուաւ Տէր», գրեալ է⁸, «Դաւթի ճշմարտութեամբ եւ ոչ ստեաց նմա. ի պտղոյ յորովայնէ քունմէ նստուցից յաթոռ քո»⁹: Եւ դարձեալ՝ «Միանգամ երդուայ ի սրբութիւն իմ, թէ Դաւթի¹⁰ ոչ ստեցից, զաւակ նորա յալիտեան կացցէ¹¹, եւ աթոռ նորա որպէս արեգակն առաջի իմ, որպէս լուսին, զի հաստատեալ է յալիտեանս վկայ հաւատարիմ յերկինս»¹²: Եւ Եսայի ասէ. «Ելցէ ի գաւազան յարմատոյն Յեսեա¹³ եւ ծաղիկ յարմատոյն նորա»¹⁴:

¹ Ex. Fid. 87.1-2 Περὶ τῆς γενεαλογίας τοῦ κυρίου καὶ περὶ τῆς ἀγίας θεοτόκου

² F շափատրապէս

³ Ex. Fid. 87.4 καὶ τὸ καιριώτατον παραστήσαντες

⁴ Ex. Fid. 87.7-8 + διὰ πνεύματος ἁγίου

⁵ C քարոյցեալ

⁶ C ի

⁷ Ex. Fid. 87.10 չիք

⁸ C F չիք գրեալ է Ex. Fid. 87.10 փոքր

⁹ Սաղմ. ՃԼԱ 11. «Երդուաւ Տէր Դաւթի ճշմարտութեամբ եւ ո՛չ ստեաց նմա. ի պտղոյ որովայնէ քունմէ նստուցից յաթոռ քո»:

¹⁰ C + ես

¹¹ Ex. Fid. 87.13 μένει // B C կեցցէ

¹² Սաղմ. ՁԸ 36-38. «Միանգամ երդուայ ի սրբութիւն իմ, թէ Դաւթի եւ ոչ ստեցից: Զաւակ նորա յալիտեան կացցէ, եւ աթոռ նորա որպէս արեգակն առաջի իմ. որպէս լուսին զի հաստատեալ է յալիտեան վկայ հաւատարիմ յերկինս»:

¹³ E F Յեսէ B Յեսսէ

¹⁴ Ես. ԺԱ 1. «Եւ բղխեսցէ գաւազան յարմատոյն Յեսսեայ. եւ ելցէ ծաղիկ յարմատոյ անտի»:

Արդ եթէ Յովսէփ¹⁵ ի Դաւթի¹⁶ տոնմէն գայր իջանէր, Մատթէոս եւ Ղուկաս աստուածախաւսն յայտնապէս ցուցին: Այլ Մատթէոս ի Դաւթ ընդ Սողոմոն ասէ իջանել զՅովսէփ, իսկ Ղուկաս ընդ Նաթան ասէ: Իսկ ի Կուսէն զազգահամարն երկրորդն¹⁷ լոեցին:

Եւ վասն այս պատճառի էր լեալ¹⁸, զի սովորութիւն էր հրէից եւ աստուածային գրոց ոչ յազգաթիւ գրել զկանայս, եւ ոչ որդի ոք յազգս նոցա¹⁹: Եւ արեւն էր ոչ առնուլ ումէ կին յայլում ցեղէ: Իսկ Յովսէփ վասն զի յազգէ Դաւթի, եւ զի արդար էր (զի արդար գոլ վկայէ զնա Աւետարանն), եւ արդարն ոչ արտաւոյ արինացն անցեալ առնէ զՄարիամ²⁰ իւր խաւսեցեալ, եւ ոչ քահանայն վկայէին նմա²¹, եթէ ոչ ի նմին թագաւորական ցեղէ լեալ էր, յորմէ Յովսէփ²²: Եւ վասն Յովսէփու, զի որդի Դաւթի էր, բաւական է ասացեալն²³:

Այլ մեք ասեմք վասն Կուսին²⁴: Աւրեւն գոլով անլուծանելի²⁵, զի զկին մեռելոյ ուրեմն անորդի գոլով, զի²⁶ առցէ զնա եղբայր մեռելոյն եւ յարուցէ նմա զաւակ, եւ որ նախ ծնանէր որդի բնութեամբ հաւուն իւր²⁷ գոլով որդի որ ծնան զնա, իսկ ըստ արինացն երկրորդին, որ մեռեալն էր, նմա կոչիր զաւակ²⁸:

Արդ ի ցեղէն Նաթանայ որդւոյն²⁹ Դաւթի, այր ոմն անուն Ղեւի ծնաւ երկուս որդիս՝ զՄեղիքի եւ զՊանթեր, եւ Պանթեր ծնաւ զՎարապանթեր³⁰: Եւ

¹⁵ E F Յովսէփ

¹⁶ Ex. Fid. 87.17 Δαυιδικοῦ // B E F Դաւթին

¹⁷ Ex. Fid. 87.20 καὶ ἀμφότεροι

¹⁸ Եւ վասն այս պատճառի էր լեալ // Ex. Fid. 87.22 Χρὴ οὖν εἰδέναι

¹⁹ Ex. Fid. 87.23 *չիք* եւ ոչ որդի ոք յազգս նոցա

²⁰ Ex. Fid. 87.25 τὴν ἀγίαν παρθένον

²¹ Եւ ոչ քահանայն վկայէին նմա // Ex. Fid. 87.26 *չիք*

²² թագաւորական ցեղէ լեալ էր, յորմէ Յովսէփ // Ex. Fid. 87.26 σκῆπτρον κατήγετο

²³ Եւ վասն Յովսէփու, զի որդի Դաւթի էր, բաւական է ասացեալն // Ex. Fid. 87.27 Δείξας τοῖνυν τὸ τοῦ Ἰωσήφ καταγώγιον ἡρκέσθη

²⁴ Այլ մեք ասեմք վասն Կուսին // Ex. Fid. 87.28 Χρὴ δὲ καὶ τοῦτο εἰδέναι, ὥς

²⁵ Ex. Fid. 87.28 *չիք*

²⁶ B C E *չիք*

²⁷ C իւրոյ

²⁸ Բ Օրին. ԻԵ 5-6. «Եւ եթէ բնակեցեն եղբարք ի միասին, եւ մեռանիցի մի ոք ի նոցանէ, եւ զաւակ ոչ իցէ նորա. մի՛ լինիցի կին մեռելոյն արտաւոյ առն ումէք, որ մերձաւոր չիցէ նորա. այլ եղբայր առն իւրոյ մտցէ առ նա, եւ առցէ զնա իւր կնութեան. եւ բնակեցէ ընդ նմա. եւ եղիցի մանուկն որ ծնանիցի՝ հաստատեալ յանուն վախճանելոյն»:

²⁹ E F որդին

³⁰ Ex. Fid. 87.34-35 + οὕτως ἐπικληθέντα

Վարապանքեր ծնաւ զՅովակիմ, Յովակիմ ծնաւ զաստուածածինն³¹ Մարիամ: Իսկ ի ցեղէն Սողոմոնի որդւոյն Դաւթի Մատթան առեալ կին, յորմէ ծնաւ Յակոբ, իսկ յետ մահուն Նաթանայ³² Մեղի ի ցեղէն Նաթանայ որդին³³ Ղեւեայ, եղբայր Պանքերայ³⁴, առեալ իւր կինն Մատթանայ՝ զմայրն³⁵ Յակոբայ, եւ ծնաւ ի նմանէ զԵլի: Եւ եղեն ի նմանէ³⁶ եղբարք Յակոբ եւ Ելի՝ Յակոբ ի ցեղէն Սողոմոնի գոլով ի հաւրէ, եւ Ելի՝ ի ցեղէն Նաթանայ: Եւ մեռաւ Ելի անորդի, որ ի Նաթանայ ցեղէն էր: Եւ առեալ եղբայրն իւր Յակոբ, որ Սողոմոնեան էր, զկինն նորա վասն յարուցանելոյ զաւակ եղբարն³⁷ եւ ծնաւ Յովսէփ: Եւ Յովսէփ բնական որդի էր Յակոբայ, որ ի ցեղէն Սողոմոնի, իսկ ըստ աւրինացն որդի էր Ելիէ, որ ի Նաթանայ:

Այսպէս եւ Յովակիմ պատուական եւ արժանագովն զԱննա առ իւրն ի կնութիւն, այլ որպէս կանխաւ ամուլ Աննա ի ձեռն աղաւթից եւ ուխտի զՍամուէ, սոյնպէս եւ սա առ Աստուած աղաւթելովն եւ ուխտիւմ խնդրեաց զԱստուածածինն եւ, զի եւ յայտոսիկ մի պակաս լիցի ի մեծ անուն կոչեցելոցն³⁸, ծնաւ շնորհքն (զի շնորհք կոչի Աննա), զտիրունին (զի այս է³⁹ կոչիւն Մարիամ, զի ստուգապէս տիրունի եղեւ ամենայն ստեղծուածոց, իբրեւ մայր երեւեալ Տեառն ամենեցուն): Այլ ծնաւ ի Պրոպատիկէն⁴⁰ ի տունն Յովակիմայ եւ անտի տարաւ ի տանարն Տեառն: Յետ այսորիկ տնկեալ եղեւ ի տան Աստուծոյ եւ պարարտացեալ հոգւով որպէս ձիթենի պտղալից⁴¹ եւ ամենայն առաքինութեան բնական եղեւ, յամենայն մարմնական եւ յաշխարհական ցանկութեանց հեռացեալ մտաւ եւ այսպէս կոյս պահելով հոգւով եւ մարմնով եւ մտաւ⁴², որպէս վայել էր լինել այնմ, որ պատրաստ էր գրկաւ բառնալ

³¹ Ex. Fid. 87.35 τὴν ἁγίαν

³² Ex. Fid. 87.36-37 τοῦ Ματθαῖν

³³ E F որդի

³⁴ Ex. Fid. 87.38 Πάνθηρος // E Պանթելի F Պանթենի C Պաների

³⁵ E F զմայր

³⁶ Ex. Fid. 87.39 ὁμομήτριοι

³⁷ = CEGHMN καὶ ἀνέστησε σπέρμα τῷ ἀδελφῷ αὐτοῦ καὶ // Ex. Fid. 87.43 չիք վասն յարուցանելոյ զաւակ եղբարն

³⁸ F չիք ի մեծ անուն կոչեցելոյն

³⁹ E ասէ

⁴⁰ Յովհ. ե 2. «Եւ ի յերուսաղէմ ի Պրոպատիկէ աւագանին, որ կոչէր Եբրայեցերէն Բեթհեզդա, հինգ սրահ»:

⁴¹ Սաղմ. ԾԱ 10. «Այլ եւ որպէս ձիթենի պտղալից ի տան Աստուծոյ»:

⁴² Ex. Fid. 87.56 չիք եւ մտաւ

զԱստուած: 2[ի] այն, որ ի սուրբս⁴³ հանգչի եւ բնաւ սուրբ է: Այսպէս եմուտ նա ի սրբութիւն, եւ տանարն սուրբ եւ սփանչելի Աստուծոյ բարձրելոյն յայտնի արժանապէս:

Այլ վասն զի դաւանանել⁴⁴ դարանէր կուսանաց թշնամին փրկութեան մերոյ⁴⁵. լսել յեսայեայ, որ ասէր. «Ահա կոյս յղասցի եւ ծնցի որդի, եւ կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ, որ թարգմանի ընդ մեզ աստուած»⁴⁶, որպէս զի խաբեսցի այն, որ վասն իմաստութեան միշտ պարծէն⁴⁷, յայնմանէ, որ ըմբռնէ զիմաստունս ի գիտութիւնս իւրեանց, եւ այսու աղագաւ խաւսեցեալ եղել եւ տուաւ⁴⁸ կոյսն Յովսէփու ի ֆահանայիցն ի տանարէն Աստուծոյ՝ կոյսն⁴⁹ նոր տոմս գլուխ գոյն առն, որ գիտէ դպրութիւն⁵⁰: Իսկ խաւսելն պահպանութիւն էր կուսութեանն եւ ծանաւութիւն դաւանանողին կուսանաց: Իսկ յորժամ եկն լրումն ժամանակին⁵¹, առաքեցաւ առ նա հրեշտակ յԱստուծոյ աւետարանել նմա զյղութիւն Տեառն: Եւ այսպէս ընկալաւ յարգանդի գորդին Աստուծոյ՝ զանձնատու իմաստութիւնն եւ⁵² զգաւրութիւնն Հաւր, «ոչ ի կամաց մարմնոյ եւ ոչ ի կամաց առն»⁵³, այսինքն՝ մերձաւորութեամբ կամ սերմնառութեամբ, այլ հանդոյութեամբ Հաւրն եւ ներգործութեամբ Հոգւոյն: Տուեալ եղել ստեղծողին ամենայնի ստեղծանիլ, եւ արարչին՝ արարեալ լինել, եւ Որդւոյն Աստուծոյ եւ Աստուծոյ⁵⁴ մարմնաւորութիւն⁵⁵ յամբիծ եւ յանշաղախ մարմնոյ եւ յարենէ նորա՝ այն, որ հատոյց արդ եւս զպարտս

⁴³ E սուրբ

⁴⁴ Ex. Fid. 87.60 չիք

⁴⁵ F մեր

⁴⁶ Ես. Է 14. «Ահա կոյսն յղասցի՝ եւ ծնցի որդի, եւ կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ», Մատթ. Ա 23. «Ահա կոյսն յղասցի եւ ծնցի որդի, եւ կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ. որ թարգմանի ընդ մեզ Աստուած»:

⁴⁷ Ա Կորնթ. Գ 19. «որ ըմբռնէ զիմաստունս ի խորագիտութեան իւրեանց»:

⁴⁸ C ետուն

⁴⁹ Ex. Fid. 87.65 չիք ի տանարէն Աստուծոյ՝ կոյսն

⁵⁰ Հմմտ. Ես. Է 1. «Առ դու քեզ տոմս մի նոր մեծ», 11-12. «Եւ եղիցին ձեզ պատգամս այս ամենայն իբրեւ զբան թղթոյ կնիքոյ. զոր իբրեւ տայցեն ցայր մի գրագէտ եւ ասիցեն ցնա. Ընթերցի՛ր զայդ: Եւ ասիցէ. Ոչ կարեմ ընթեռնույ զի կնիքալ է: Եւ տացի նոյն գիր ի ձեռս առն, որ ոչ զիտիցէ գիրս, եւ ասացսն ցնա. Ընթերցի՛ր զայդ: Եւ ասիցէ. Ոչ գիտեմ դպրութիւն»:

⁵¹ Գաղատ. Դ 4. «Իբրեւ եկն լրումն ժամանակին»:

⁵² Ex. Fid. 87.70 չիք իմաստութիւնն եւ

⁵³ Յովն. Ա 14. «ոչ յարենէ, եւ ոչ ի կամաց մարմնոյ, եւ ոչ ի կամաց առն»:

⁵⁴ Եւ Աստուծոյ = Ex. Fid. 87.73 καὶ θεῶ // B կատարեալ լինել

⁵⁵ Ex. Fid. 87.74 + καὶ ἀνθρωπομορφῶν

նախամարն: Զի որպէս եւ նա առանց մերձաւորութեան յԱդամայ հատումն յոսկերաց եւ ի մարմնոյն նորա առեալ եղեւ, նոյնպէս եւ սա ծնաւ գնորն Ադամ յարինաւ յղութեան ծնեալ եւ ի վեր քան զբնութիւն ծննդեանն յայտնեալ⁵⁶: Քանզի ծնաւ առանց հաւ ի կնոջէ, որ ի հաւրէ նախ ծնեալ էր⁵⁷ առանց մար: Եւ վասն զի ի կնոջէ ծնաւ, այս արէնք բնութեան, իսկ որպէս զի առանց հաւ յղացեալ, այս ի վեր է քան զբնութիւն ծննդեան: Եւ զի ի սահմանեալ ժամանակ (զինն կատարեալ ամիսն յարգանքի, ի սկսանել տասինն էլ⁵⁸), այսուիկ արինաւ⁵⁹ յղութեանն բնութեան գոլով, իսկ զի առանց երկանց⁶⁰ ծնաւ՝ կոյս մնալով ծնաւորին ի ծնունդն, այս⁶¹ ի վեր քան զարէնս բնութեան: Զի յորում ցանկութեան ախտից սկիզբն մտից ոչ եղեւ, նմա եւ ոչ երկունք ելիցն լինել պարտ էր, որպէս մարգարէն ասէ, եթէ՝ «նախ քան զերկունս ծնաւ», եւ դարձեալ՝ «նախ քան զմերձեմալ ժամանակի երկանցն, զերծեալ յերկանց եւ ծնաւ արու մանուկ»⁶²:

Ծնաւ ի նմանէ Որդին Աստուծոյ եւ Աստուած մարմնացեալ, ոչ աստուածագրեաց մարդ, այլ Աստուած մարմնացեալ, ոչ իբրեւ մարգարէ ներգործութեամբ ւածեալ, այլ ամենեւիմբ գոլով ի նմա⁶³ ւածողին յւածեալն⁶⁴, եւ վասն զի մարդ եղեւ ւածանողն եւ աստուածացաւ ւածեալն, ոչ փոփոխելով բնութեանցն, այլ մի գոլով առանձնաւորութեամբն: Վասն զի մի եւ նոյն էր ւածանողն ու ւածեալն, որ ւած զանձն իւր իբրեւ զԱստուած եւ ւածեալն եղեւ⁶⁵ իբրեւ զմարդ: Եւ արդ ո՞րպէս ոչ Աստուածածին է, որ⁶⁶ ծնաւ զմարմնացեալն Աստուած: Ստուգապէս եւ ճշմարիտ Աստուածածին եւ տիրունի ամենայն եղելոցս եւ աղախին եւ մայր արարչին երեւեալ եղեւ: Այլ որպէս յղացեալն զկուսութիւն մարն, որ յղացաւն, կնքեալ պահեաց, նոյնպէս եւ մինչ ծնաւ,

⁵⁶ Ex. Fid. 87.77 չիք

⁵⁷ Ex. Fid. 87.78 չիք նախ ծնեալ էր

⁵⁸ C չիք

⁵⁹ C այսու արինակաւ չիք

⁶⁰ C ախտից

⁶¹ Ex. Fid. 87.81 չիք ծնաւ՝ կոյս մնալով ծնաւորին ի ծնունդն, այս

⁶² Եւ. ԿԶ 7. «Եւ մինչէի իցէ յոյն ծնեալ, եւ մինչէի հասեալ իցեն ցաւ երկանց, ապրեցաւ եւ ծնաւ արո՛ւ»:

⁶³ F ի նման C նման

⁶⁴ Ex. Fid. 87.87 չիք

⁶⁵ Ex. Fid. 87.90 չիք եւ ւածեալն եղեւ

⁶⁶ Ex. Fid. 87.91 + ἐξ αὐτῆς

զկուսութիւնն պահեաց անապական: Վասն զի նա միայն էանց ընդ նա եւ դարձեալ կնքեալ պահեաց զնա: Ի ձեռն լսելեաց եղև մուտ յղութեանն, իսկ ծնունդն ըստ սովորութեան ելից ամենայն⁶⁷ ծնելոց, թէպէտ եւ առասպելաբանեն ոմանք ընդ կողս աստուածամարն լեալ ծնունդն, զի ոչ երկար ասեն ընդ դուռն ելանել եւ կնիք դրանն ոչ շարժեալ:

Եւ զի եկաց մնաց եւ յետ ծննդեան կոյս միշտկոյսն, իբրեւ ոչ յանձն առնել խաւսելոյ⁶⁸ ընդ այր մինչեւ զմահ իւր: Եւ թէպէտ եւ գրեալ է, եթէ՝ «ոչ գիտէր զնա, մինչեւ ծնաւ գորդին իւր զանդրանիկ»⁶⁹, եւ արդ գիտելի է, զի անդրանիկ կոչի առաջին ծնեալն ի մարտէ⁷⁰, թէ միածին է, եւ թէ ընդ այլս ծնեալ, իսկ զՔրիստոս անդրանիկ կոչէ, նա եւ միածին եւս է, զի անունդ այդ ոչ խափանէ զմիածին գոլն⁷¹: Իսկ մինչն զսահմանեալ ժամն յուշ առնէ եւ ոչ զկնի լեալ գործն նշանակէ, եւ ոչ լուծանէ գոր զկնի նորա: Եւ տէր ասէ. «Ահաւասիկ եւ ընդ ձեզ եմ մինչեւ ցկատարած աշխարհի»⁷², նա եւ ոչ զկնի կատարածին⁷³ հեռանալոց էր, զի առաքեալ ասէ. «Եւ այսպէս յամենայն ժամ ընդ Տեառն լինիցիմք»⁷⁴, զայս զկնի հասարակաց յարութեանն ասէր գոլ:

Վասն զի զիա՞րդ Աստուծոյ մարմնացելոյն ծնողն եւ որք ի ծնունդն գործք եւ սփանչելիք, այնպիսեացն զփորձ առնելով գիտողն, յանձն առնոյր զկնի այնու ամենայնի ընդ առն մերձաւոր լինել: Ի բաց գնացէ: Ոչ սրբութեան սիրողի խորհուրդս այս, ոչ լսելի⁷⁵, թո՛ղ թէ ասելի գոլ:

Այլ երանելին այն, որ ի վեր քան զբնութիւնս պարգեաց արժանի եղև, յերկանցն, յորոց զերծեալ ոչ կրեաց ի ծնունդն Տեառն, գնոսս ի ժամանակի շարշարանացն կրեաց, մայրական ցաւագնութեամբ յանձն առնոյր, զցաւս եւ զգալարումն աղեսցն, եւ զայն⁷⁶ գոր Աստուած ծանեալ ի ձեռն ծննդեանն,

⁶⁷ Ex. Fid. 87.91 չիք B ամենայն ելից

⁶⁸ B խօսել

⁶⁹ Մատթ. Ա. 25. «Եւ ոչ գիտէր զնա, մինչեւ ծնաւ գորդին իւր զանդրանիկ»:

⁷⁰ Ex. Fid. 87.103 չիք

⁷¹ իսկ զՔրիստոս անդրանիկ կոչէ, նա եւ միածին եւս է, զի անունդ այդ ոչ խափանէ զմիածին գոլն // Ex. Fid. 87.103-104 τὸ μὲν γὰρ πρῶτον γεννηθῆναι δηλοῖ

⁷² Մատթ. ԻԸ 20. «Եւ ահաւասիկ եւ ընդ ձեզ եմ զամենայն ատուս մինչեւ ի կատարած աշխարհի»:

⁷³ Ex. Fid. 87.108 + τοῦ αἰῶνος

⁷⁴ B լինիցիմ | Ա. Թեա. Գ 17. «Եւ այնպէս յամենայն ժամ ընդ Տեառն լինիցիմք»:

⁷⁵ Ex. Fid. 87.112 չիք ոչ լսելի

⁷⁶ C F զայրն

զսա իբրեւ զշարագործ ի խաչեալ⁷⁷ սպանեալ տեսանելով, իբրեւ սրով հատանելով ի խորհրդոյ սրտին: Եւ այս է, որ ասաց⁷⁸, թէ՛ «Ընդ քո անձնդ անցցէ սուր»⁷⁹: Այլ տրտմութիւն իւր յուրախութիւն փոխեցաւ խնդութեամբ յարութեանն փարփելով զԱստուած չարչարեալ⁸⁰:

⁷⁷ Ex. Fid. 87.116 չէք ի խաչեալ

⁷⁸ Ը ասացաւ

⁷⁹ Դուկ. Բ 35. «ընդ քո իսկ անձն անցցէ սուր»:

⁸⁰ Ex. Fid. 87.119 τὸν σαρκὶ θανόντα

2Ը. Վասն նշխարաց սրբոցն եւ պատուոյ¹ նոցա²:

Պատուել պարտ է զսուրբս իբրեւ բարեկամս Քրիստոսի, իբրեւ զորդիս եւ ժառանգս Աստուծոյ, որպէս ասէ աստուածաբան աւետարանիչն. «Իսկ որք ընկալան զնա, ետ նոցա իշխանութիւն³ որդիս Աստուծոյ լինել»⁴, եւ «որով ոչ են ծառայ, այլ որդի»⁵, «եւ թէ որդի ապա եւ⁶ ժառանգ՝ ժառանգ Աստուծոյ եւ ժառանգակից Քրիստոսի»⁷: Եւ Տէր⁸ առաքելոցն ասէ, թէ՛ «Դուք բարեկամք իմ էք: Ոչ եւս կոչեցից զնեզ ծառայս, զի ծառայն ոչ գիտէ, զինչ առնիցէ⁹ Տէր նորա»¹⁰: Եւ եթէ տէր տերանց եւ թագաւոր թագաւորաց¹¹ եւ աստուած աստուածոց¹² ամուսնի արարիչն¹³ ամենայնի, ապա սուրբք են տէրք եւ թագաւորք եւ աստուածք, եւ նոցա տէր եւ թագաւոր եւ աստուած կոչի աստուած եւ աստուած է՝ իսկ: Զի «ես եմ», ասէ ցՄովսէս, «աստուած Աբրահամու եւ աստուած Սահակայ եւ աստուած Յակովբայ»¹⁴, եւ աստուած Փարաւովնի արարից զեզ¹⁵: Իսկ տէր եւ թագաւոր եւ աստուած ասելով զնոսա, ոչ բնութեամբ աստուածս գոյ, այլ տէր եւ թագաւոր եւ աստուածս ասաց լինել ի վերայ ախտից մարմնոյ եւ պատկեր եւ արինակ լինել պատկերին Աստուծոյ, որպէս եւ ստեղծան եւ զնա անխառնակելի պահեցին (վասն զի թագաւոր կոչի եւ պատկերն թագաւորի), եւ զի իւրեանց ընտրութեամբ միատրեցան ընդ Աստուծոյ, եւ նորա հնազանդեցան լինել ժառանգ եւ անուան նորա հաղորդակից եղեն շնորհամբ, զոր նա բնութեամբ է: Ո՞րպէս ոչ արժանի պատուելոյ են իբրեւ զսպասատրս եւ զբարեկամս եւ որդիք Աստուծոյ երեւեալք:

¹ E F պատուելոյ

² Ex. Fid. 88.1 Περὶ τῶν ἀγίων καὶ τῆς τῶν λειψάνων αὐτῶν τιμῆς

³ Ex. Fid. 88.4 ἐξουσίαν // B E F չիք

⁴ Յովն. Ա. 12. «Իսկ որք ընկալան զնա, ետ նոցա իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել»:

⁵ Գաղատ. Գ. 7. «Այսուհետեւ չես ծառայ, այլ որդի»:

⁶ F չիք

⁷ Հռովմ. Բ. 17. «Եւ եթէ որդիք, ապա եւ ժառանգք. ժառանգք Աստուծոյ եւ ժառանգակիցք Քրիստոսի»:

⁸ Ex. Fid. 88.6 + ἐν τοῖς ἱεροῖς εὐαγγελίοις

⁹ Ex. Fid. 88.8 ποιεῖ // B գործէ

¹⁰ Յովն. Ժ. 14-15. «Դուք բարեկամք իմ եք, եթէ առնիցէք զոր եսն պատուիրեմ նեզ: Ոչ եւս կոչեմ զնեզ ծառայս, զի ծառայն ոչ գիտէ զինչ գործէ տէրն նորա»:

¹¹ Յայտն. Ժ. 16. «Եւ ունէր ի վերայ պատմութեանի իւրոյ, եւ ի վերայ անդամոց իւրոց զիր գրեալ. թագաւոր թագաւորաց եւ տէր տերանց»:

¹² Սաղմ. Խ. 1. «Աստուած աստուծոց Տէր խաւեցաւ»:

¹³ Ex. Fid. 88.9 + καὶ κύριος

¹⁴ Ելք Գ. 6: Ex. Fid. 88.12-13 Καὶ θεὸν Φαραὼ τὸν Μωσῆν ὁ θεὸς ἐποίησεν.

¹⁵ Ելք 1:

Վասն զի ընդ հաւատարիմ ծառայից պատուոյն մասնակից են հասարակաց թագաւորին միամտութեամբն:

Սոքա են զանձարանքն Աստուծոյ եւ հանգստարան¹⁶ արբելեն նմա: «Վասն զի բնակեցայց ի նոսա»¹⁷, ասէ Աստուած, եւ «զնացից ի նոսա եւ եղեց նոցա աստուած»¹⁸: Եւ արդ զի «հոգիք արդարոց ի ձեռն Աստուծոյ են, եւ մի մերձեսցի նոցա մահ»¹⁹, ասէ գիր: Վասն զի մահ արբոցն նինչ եւ հանգիստ է եւ ոչ մահ: «Վասն զի աշխատեալք յայտու կենցաղոյս եւ կեցցեն ի սպառ»²⁰, եւ «պատուական է առաջի Տեառն մահ արբոց իւրոց»²¹: Եւ արդ զի՞նչ պատուական է, քան զոր²² ի ձեռն Աստուծոյ կեալն²³: Վասն զի լոյս է Աստուած եւ կեանք, եւ որք ի ձեռն Աստուծոյ կեանք, ի լոյս եւ ի կեանս յաւիտենից²⁴ են:

Եւ արդ վասն զի ի միտս եւ ի հոգի իւրեանց բնակեալ է Աստուած, ասէ առաքեալ. «Ո՞չ գիտէք, եթէ մարմինք ձեր տանար են հոգւոյ, որ ի ձեզ, այսինքն՝ Հոգւոյ արբոյ»²⁵, եւ «հոգիք է Աստուած»²⁶, եւ «որ ապականէ զտանար Աստուծոյ, ապականէ²⁷ զնա Աստուած»²⁸: Եւ արդ ո՞րպէս ոչ են պատուելի հոգեւոր տանարն Աստուծոյ, հոգեւոր բնակութիւնքն Աստուծոյ: Սոքա իբրեւ զստուգիւ²⁹ կենդանիք համարձակութեամբ կան առաջի Աստուծոյ:

Եւ աղբիւր կենաց զնշխարս իւրեանց շնորհեցին մեզ կաման Քրիստոսի, որք բազմադէմս աղբերացուցանեն մեզ բարեգործութիւնս եւ մեռոնս անուշահոտս բոխեն: Առ որս մի ոք թերահաւատացի: Զի եթէ յանհատանելի եւ ի կարծր³⁰ վիմէն ջուր³¹ աղբիւրանայր յանապատն կաման Աստուծոյ³², եւ

¹⁶ Ե զանգստարան

¹⁷ Բ Կորնթ. Զ 16. «բնակեցայց ի նոսա, եւ զնացից ի նոսա. եւ եղեց նոցա Աստուած»:

¹⁸ Դեառ. ԻԶ 12. «Եւ զնացից ի ձեզ, եւ եղեց ձեր Աստուած»:

¹⁹ Իմաստ. Գ 1. «Բայց ոգիք արդարոց ի ձեռնին Աստուծոյ են, եւ ոչ մերձեսցի ի նոսա մահ»:

²⁰ Սաղմ. ԽԼ 9-10. «Վաստակեալ յաւիտեան, եւ կեցցես մինչ ի սպառ»:

²¹ Սաղմ. ՃԺԵ 15. «Պատուական է առաջի Տեառն մահ արբոց իւրոց»:

²² Բ զի որ

²³ Բ կենալն

²⁴ Ex. Fid. 88.29 չիք

²⁵ Ա. Կորնթ. Զ 19. «Եթէ ո՞չ գիտէք, զի մարմինք ձեր տանար են Հոգւոյն, որ է ի ձեզ»:

²⁶ Ex. Fid. 88.32 Ὁ δὲ κύριος | Բ Կորնթ. Գ 17. «Տէր Հոգին է»:

²⁷ = G φθεῖραι // Ex. Fid. 88.33 φθερεῖ

²⁸ Ա. Կորնթ. Գ 17. «Եթէ ոք զտանար Աստուծոյ ապականէ, ապականեսցէ զնա Աստուած»:

²⁹ Բ ստուգիւ Ex. Fid. 88.35 չիք իբրեւ զստուգիւ

³⁰ յանհատանելի եւ ի կարծր // Ex. Fid. 88.38 ἐξ ἀκατοτόμου

³¹ Ex. Fid. 88.38 ὕδωρ // B C D չիք

³² Ելք ԺԷ 6. «Եւ հարցես զվիմն եւ ելցէ ի նմանէ ջուր, եւ արբցէ ժողովուրդդ»:

ի ծնատե իշոյն զովացոյց եւ արբոյց զծարաւին Սամսոն³³, ի վկայական նշխարացն մեռոն անուշ բոլիւեալ ընդէ՛ր անհաւատալի է: Իսկ նոցա եւ յոյժ հաւատալի³⁴, որք գիտեն զարութիւն Աստուծոյ եւ զպատիւ³⁵ արբոց³⁶ ի նմանէ եղեալ:

Պիղծ կոչէր յարինացն ամենայն, որ մերձենան ի մեռեալ³⁷, իսկ սոքա ոչ մեռեալ, զի իբրեւ կեանք ինքեանք եւ պատճառ կենաց, մեռելոց համարեալ են՝ յուսով յարութեանն եւ որք ի նա հաւատով ննջեցին, ոչ անուանին մեռեալս:

Քանզի մեռեալ մարմնոց ո՛րպէս կարողութիւն է սփանչելիս առնել: Ո՛րպէս նոքաք դեւք հալածին, հիւանդութիւնք մերժին³⁸, տկարք բժշկին, կոյրք բանութին³⁹, բորոտք արբին, փորձութիւն եւ տրտմութիւնք լուծանին, եւ ամենայն տուրք բարիք ի Հարէ լուսոյ՝ որոց անյերկուանալի հաւատովք խնդրեն, ի վերուստ⁴⁰ իջանէ նոքաք⁴¹: Եւ արդ ո՛րչափ աշխատութիւն յանձն առնուս, որպէս զի գտանիցես բարեխաւս զոք առաջի մահկանացու թագաւորի, որ կարէ⁴² առաջի նորա տանել զքեզ եւ կամ խաւսել ինչ կարող գոլ զքէն: Իսկ արդ բարեխաւս ամենայն ազգի մերում⁴³ եւ մաղթանս մատուցանողքն վասն մեր առ Աստուած ո՛չ պատուելոյ արժանի են ի մէնջ⁴⁴: Այո, պատուեցին, վասն որոց⁴⁵ եւ տանարս կանգնեմք Աստուծոյ յանունս նոցա, ընծայս մատուցանեմք եւ զյիշատակս նոցա կատարեմք եւ հոգեպէս⁴⁶ ցնծամք ի նոսա, իբր զի նման նոցա լիցի ուրախութիւն մեր, եւ զի մի՛ սակս շնորհ առնելոյ նոցա կամողք՝ առաւել⁴⁷ զայրացուցոյք զնոսա: Վասն զի որովք Աստուած

³³ Դատ. Ժե 16, 18-19. «Եւ ասէ Սամսոն. Ծնատիւ իշոյ ջնջելով ջնջեցից զնոսա... եւ ծարաւեցաւ յոյժ... եւ երաց Տէր զծակ ծնատին, եւ ել ի նմանէ ջուր, եւ արք»:

³⁴ C + է

³⁵ C զպատիւն

³⁶ Ex. Fid. 88.41 τὼν ἀγίων // B արբոցն իւրոց

³⁷ Ex. Fid. 88.42 νεκροῦ // B մեռանել

³⁸ Ex. Fid. 88.47 չիք հիւանդութիւնք մերժին

³⁹ Ex. Fid. 88.47 ἀναβλέπουσι

⁴⁰ Ex. Fid. 88.49 չիք ի վերուստ

⁴¹ Յակ. Ա. 17. «զի ամենայն տուրք բարիք եւ ամենայն պարգեւք կատարեալք ի վերուստ են իջեալ առ ի Հարէն լուսոյ»:

⁴² C կարէ

⁴³ Ex. Fid. 88.51 παντὸς

⁴⁴ Ex. Fid. 88.52 չիք ի մէնջ

⁴⁵ B C որոյ

⁴⁶ C հոգիապէս

⁴⁷ E կամ ողիւք առնել

մեծարեալ լինի, եւ սպասատրքն իւր⁴⁸ ցնծան ի վերայ նորա, իսկ որով Աստուած ձանձրացի, վասն նորա եւ բարեկամքն իւր ձանձրանան: «Սաղմոսիւ եւ արհնութեամբ եւ երգաւ հոգեւորաւ»⁴⁹, զղջութեամբ եւ ողորմութեամբ տնանկաց պատուեսցոյ՝ հաւատացեալ գտուբսն, որով Աստուած առաւել սպասատրի⁵⁰: Արձան կանգնեսցոյ՝ նոցա եւ երեւելի պատկեր, իսկ մեք անձնատր արձանս եւ պատկերս նոցա՝ նմանելով առաքինութեանց նոցա եղիցոյ:

ԶԱստուածածինն իբրեւ գտոյց եւ զնշգրիտ մայր Աստուծոյ պատուեսցոյ եւ զյառաջընթացն Յովհաննէս՝ իբրեւ զմարգարէ⁵¹ եւ զմկրտիչ, զառաքեալ եւ զմարտիրոս (զի «ոչ է յարուցեալ ի ծնունդս կանանց մեծ քան զՅովհաննէս»⁵² ըստ Տեառն ձայնի, որ նախաբարոզ եղեւ արհայութեանն): Զառաքեալսն⁵³ իբրեւ զեղբարս Տեառն, տեսողք եւ սպասատրք լեալ ամենայն խորհրդոց⁵⁴ նորա, զոր նախ ծանեալ եւ նախ սահմանեաց լինել նմանողս պատկերի Որդոյ իւրոյ⁵⁵, Աստուած Հայրն: «Նախ զառաքեալսն⁵⁶, երրորդ⁵⁷՝ զհովիս եւ զվարդապետս»⁵⁸, եւ զմարտիրոսն Տեառն, որք յամենայն գնդից ընտրեցան, իբրեւ զինուորս Քրիստոսի, եւ ըմպողք բաժակի նորա, եւ կենարար իւր⁵⁹ մկրտութեամբն մկրտեալս՝ որպէս հաղորդս եղեալ շարշարանացն եւ փառաց նորա, որոց կարգապետ է առաքեալ եւ նախավկայն Ստեփաննոս: Եւ զերանելի ճգնատր հարսն մեր⁶⁰, որք բազմամալ եւ ցաւագին վկայութեամբ մտացն կրանատրեցան, որք «շրջէին լեշկ մաշկաւ եւ մորթով ալ՝ ծենեալ, կարատեալ, նեղեալ եւ շարշարեալ, յանապատի մոլորեալ ի

⁴⁸ *C չիք*

⁴⁹ = եփես. Ե 19:

⁵⁰ Ex. Fid. 88.60 *θεραπεύεται* // F *ուղղված փառատրի*

⁵¹ զյառաջընթացն Յովհաննէս՝ իբրեւ զմարգարէ = CEGHMN τὸν πρόδρομον Ἰωάννην ὡς προφήτην // Ex. Fid. 88.64 τὸν προφήτην Ἰωάννην ὡς πρόδρομον

⁵² Մատթ. ԺԱ 11. «Զի յարուցեալ ի ծնունդս կանանց մեծ քան զՅովհաննէս մկրտիչ»:

⁵³ F զառաքեալն

⁵⁴ Ex. Fid. 88.68. *παθημάτων*

⁵⁵ Հմմտ. Հովվ. Ը 29. «Զի զորս յառաջն ճանաչէր, յառաջագոյն հրաւիրեաց կերպարանակից լինել պատկերի Որդոյն իւրոյ»:

⁵⁶ Ex. Fid. 88.69-70 + *δεύτερον προφήτας*

⁵⁷ Ex. Fid. 88.70 *τρίτον* // B C երկրորդ

⁵⁸ Ա. Կորնթ. ԺԲ 28. «Նախ՝ զառաքեալս, երկրորդ՝ զմարգարէս, երրորդ՝ զվարդապետս»:

⁵⁹ Ex. Fid. 88.7 + *θανάτου*

⁶⁰ Ex. Fid. 88.75-76 + *τοὺς θεοφόρους ἀσκητὰς*

լերինս⁶¹, յայրս եւ ի փապարս երկրի, զորս ոչ արժէ աշխարհ»⁶², եւ զորս նախ
 ֆան⁶³ զշնորհս Էին⁶⁴՝ զմարգարէսն, զհայրապետսն, զհարսն⁶⁵, զարդարֆն⁶⁶,
 որք նախապատմէին⁶⁷ զգալուստն Քրիստոսի⁶⁸: Զսոցա ամենեցուն փորձե-
 լով զֆաղաֆաւարութիւնն⁶⁹, նմանեցոյ՜ ֆաւատոցն, սիրոյ եւ յուսոյ նոցա,
 նախանձու, կենաց եւ ֆամբերութեան փորձանացն, նգնութեանն՝ մինչեւ
 ցհեղումն արեան, որպէս զի ֆաղորդակիցք եղիցոյ՜ ֆառաց եւ պսակաց նո-
 ցա:

⁶¹ C չիք ի լերինս

⁶² Եբր. ԺԱ 37-38. «շրջեցան լաշկամաշկաւ եւ մորթովք այծենեաւ: Կարաւտեալք, նեղեալք, չարչարեալք, զորս ոչ արժէ աշխարհս. յանապատի մոլորեալք, եւ ի լերինս, եւ յայրս, եւ ի փապարս երկրի»:

⁶³ F չիք

⁶⁴ C չիք

⁶⁵ Ex. Fid. 88.80 չիք

⁶⁶ C զարդարսն

⁶⁷ Ex. Fid. 88.80 τοὺς προκατηγγελκότας // C F նախ պատմէին B նախք պատմէին

⁶⁸ Ex. Fid. 88.81 τοῦ κυρίου

⁶⁹ Ex. Fid. 88.81-82 τὴν πολιτείαν // C զգաւաւարութիւնն

ԶԹ. Վասն պատկերաց երկրպագութեան¹:

Այլ վասն զի մեղադրեն մեզ² ոմանք յաղագս երկրպագելոյ եւ պատուելոյ զպատկերն Քրիստոսի Աստուծոյ³ եւ տիրունոյն մերոյ Աստուածածնին⁴, ընդ սոցա եւ զայլ ամենայն սրբոց եւ սպասատրացն Քրիստոսի, եւ արդ լուիցեն նոքա, քանզի ի սկզբանէ ըստ պատկերի եւ ըստ նմանութեան⁵ իւր արար Աստուած զմարդ եւ յայն սակս երկրպագելի⁶: Եւ մեք վասն այսորիկ երկիր պագանեմք միմեանց իբրեւ⁷ պատկեր Աստուծոյ գոլով: Մեծն⁸ Վասիլիոս⁹ ասէ, եթէ՝ «պատիւ պատկերին առ նախատիպն իւր եղանէ», վասն զի նախատիպ այն է, որ առաջին եւ անեղ պատկերն է եւ այլն՝ ամենայն մի ի միոջէ արինակաւ դրոշմեալ¹⁰: Մովսէսական ժողովն արտաբոյ կարով¹¹ վրանին երկիր պագանէին¹², վասն զի պատկեր էր երկնատրին եւս առաւել ամենայն եղելոցս: Ասէր Տէր ցՄովսէս. «Տեսչի՛ր եւ արասցե՛ս զամենայն ըստ արինակին, զոր ցուցի քեզ ի լերինն»¹³: Եւ քերովբէքն, որ հովանի ունէին քաւութեանն մարդակերպ¹⁴ եւ մարդոյ¹⁵ արարեալ էր, որում եւ Մովսէս եւ Ահարոն երկիր պագանէին¹⁶: Նաեւ հռչակելի տաճարն Սողոմոնի եւ կան նորա¹⁷ ո՞չ ամենայնն ձեռամբ մարդոյ արարեալ էր:

¹ Ex. Fid. 89.1 Περί εικόνων

² C գմեզ

³ Քրիստոսի Աստուծոյ // Ex. Fid. 89.3 τοῦ σωτῆρος

⁴ Ex. Fid. 89.3 չիք

⁵ Ex. Fid. 89.5 չիք եւ ըստ նմանութեան

⁶ Ex. Fid. 89.5 չիք եւ յայն սակս երկրպագելի

⁷ B չիք Ex. Fid. 89.6 + εἰ μὴ

⁸ Ex. Fid. 89.8 θεοφόρος καὶ πολὺς τὰ θεῖα

⁹ C Բասիլիոս

¹⁰ որ առաջին եւ անեղ պատկերն է եւ այլն՝ ամենայն մի ի միոջէ արինակաւ դրոշմեալ // Ex. Fid. 89.8-9 τὸ εἰκονιζόμενον, ἐξ οὗ τὸ παράγωγον γίνεται. Τίνος ἕνεκεν

¹¹ արտաբոյ կարով // Ex. Fid. 89.9 κυκλόθεν

¹² Հմմտ. Ելք ԻԳ 10. «Եւ կային ամենայն ժողովուրդն յոտն, եւ երկիր պագանէին իւրաքանչիւր առ դուրս խորանի իւրոյ»:

¹³ Եբր. Ը 5. «Որամայեցաւ Մովսիսի, յորժամ գործելոց էր զվրան ժամուն. Տեսչի՛ր, ասէ, արասցե՛ս զամենայն ըստ արինակին որ ցուցաւ քեզ ի լերինն»:

¹⁴ Ex. Fid. 89.13 չիք

¹⁵ = MN // Ex. Fid. 89.13 + χειρῶν

¹⁶ որում եւ Մովսէս եւ Ահարոն երկիր պագանէին // Ex. Fid. 89.13 չիք

¹⁷ Սողոմոնի եւ կան նորա // Ex. Fid. 89.13 ὁ ἐν Ἱεροσολύμοις

Աստուածային գիր յանդիմանէ զկոպաշտսն, այլ զի յանուն դիւաց արարեալ եւ նոցա զոհէին, ասէ: Զոհէին հեթանոսք, եւ զոհէին հրեայք¹⁸, այլ նոցայն¹⁹ խոտելի, զի զդէս ուսուցանէր նոցա²⁰, եւ սոցայն²¹ ընդունելի, զի զԱստուած ուսուցանէր: Վասն զի, ասէ գիր²², ընծայս մատուցեալ Նոյի²³, եւ Հաբէլ եւս²⁴, «եւ հոտոտեցաւ Աստուած ի հոտ անուշից»²⁵, զի²⁶ զայն, որ բարիոք²⁷ յառաջընտրութեամբ զոր ի նա միամտութեան անուշահոտությունն հոտոտեցաւ: Այսպէս եւ հեթանոսացն, վասն զի յանուն կոռց եւ դիւաց զոհէր, խոտելի էր:

Երկրպագէին ձեռագործի հրեայք եւ հեթանոսք, այլ սոքա դիւաց եւ խոտելի, եւ նոքա՝ Աստուծոյ եւ ընդունելի էր²⁸:

Եւ արդ անտեսանելոյն եւ անմարմնոյն եւ անպարագրելոյն²⁹ եւ զանկարագրելոյն Աստուծոյ ո՞վ կարող է³⁰ նմանութիւնս ինչ առնել: Վասն զի ծայրագոյն անմտութիւն է եւ անաստուածութիւն նկարագրել ինչ զԱստուած: Եւ վասն այսորիկ ոչ էր սովորութիւն ի հնումն գործել պատկերս: Այլ յորժամ Աստուած ողորմութեամբ եւ փաղցրութեամբ իւրով նշմարիտ մարդ եղեւ վասն փրկութեան մարդկան, ոչ այսպէս, որպէս Աբրահամու երեւեցաւ մարդակերպ եւ մարգարէիցն, այլ գոյութեամբ մարդացաւ, գնայր ի վերայ երկրի եւ «ընդ մարդկան շրջէր»³¹, սփանչելիս գործէր, շարշարեցաւ եւ յարեաւ եւ համբարձաւ, եւ նշմարտապէս եւ սեռականաբար³² եղեն այսոքիկ եւ տեսեալ եղեն ի մարդկանէ, յայնժամ գրեցին զոսոս առ ի յիշատակութիւն մեր եւ յուսանել մեզ մտամք, որ ականատես ոչ եղաք ժամուն այնորիկ, որպէս

¹⁸ Ex. Fid. 89.18 + ἀλλ' Ἐλλήνες μὲν δαίμοσιν, Ἰουδαῖοι δὲ τῷ θεῷ

¹⁹ Ex. Fid. 89.19 ἢ τῶν Ἑλλήνων θυσία

²⁰ Ex. Fid. 89.19 չիք զի զդէս ուսուցանէր նոցա

²¹ Ex. Fid. 89.19 ἢ δὲ τῶν δικαίων

²² Ex. Fid. 89.20 չիք ասէ գիր

²³ F նոր

²⁴ Ex. Fid. 89.20 չիք եւ Հաբէլ եւս

²⁵ Ծննդ. Բ 21. «Եւ հոտոտեցաւ Տէր Աստուած ի հոտ անուշից»:

²⁶ B E չիք

²⁷ F չիք

²⁸ Ex. Fid. 89.23 չիք Երկրպագէին ձեռագործի հրեայք եւ հեթանոսք, այլ սոքա (F չիք) դիւաց եւ (F չիք) խոտելի, եւ նոքա՝ Աստուծոյ եւ ընդունելի էր

²⁹ Ex. Fid. 89.24 καὶ ἀσωμάτου καὶ ἀπεριγράπτου // B չիք եւ անմարմնոյն եւ անպարագրելոյն

³⁰ C կարէ

³¹ Բարութ Գ 38. «յերկրի երեսեցաւ եւ ընդ մարդկան շրջեցաւ»:

³² Ex. Fid. 89.32 չիք եւ սեռականաբար

զի մի լսող միայն, այլ եւ հաւատացողս լիցոյ՛ եւ հասցոյ՛ անդէն երանութեանն³³:

Եւ վասն զի ոչ ամենեւեմ գիտեն զիր, զի ընթեռնով ուսցին³⁴, վասն այսորիկ գրեցին հար՛ն զմամնութիւն ի պատկերս³⁵, զի նայելով ուսցին զյիշատակ համառատո՛ւ նախեղելոցն գործոց³⁶: ³⁷Այսու աղագաւ ոչինչ ունելով ումե՛ք ի մտի զոմարէնութեանն եւ տեսեալ աշա՛ւ զպատկեր խաչելութեանն եւ յայնմանէ՛ զչարչարանս ի մտի ընկալեալ եւ անկեալ՝ երկիր պագանեմք ոչ նիւթոյն, այլ խորհրդոյ կենդանագրելոյն³⁸, որպէս եւ ոչ խաչի եւ Աւետարանին նիւթոյն երկիր պագանեմք, այլ արինակի եւ խորհրդոյ նոցա³⁹: Վասն զի իւ իւրք բաժանի խաչ բայց⁴⁰ միայն յարինակէն՝ ի բնութենէն, որ նախ քան զնկարելն ունէր⁴¹: Նոյնպէս եւ պատկեր, այլ եւ⁴² զԱստուածամայրն յայն սակս պատուեմք, զի նորա պատիւն ի ծնեալն ի նմանէ ելանէ: Նոյնպէս եւ ճգնութիւն ամենայն սրբոց պատուեմք, իբր զյորդորոյս զմեզ առ արիւթիւն եւ նախանձ նոցա, նմանելով նոցա առաքինութեանն ի պատիւն Աստուծոյ: Զի, որպէս ասացի, զհաւատարիմ ծառայսն պատուելով՝ ցուցանէ զհասարակաց թագաւորին հնազանդ եւ միամիտն լինել, նոյնպէս եւ պատիւ պատկերացն ի սկզբնատիպն ելանէ:

Այլ զի անգիր տուեալ եղեւ յայս առաքելոցն⁴³, որպէս ընդ արեւելս երկիր պագանելն եւ խաչին երկիրպագութիւն եւ այլ բազում ինչ⁴⁴:

Բայց մեք զարինական ասացուք: Ադամ եւ զի ինքն պատկեր Աստուծոյ գորով, ի պատկերի⁴⁵ իւր⁴⁶ տեսանէր զԱստուած եւ երկիր պագանէր ի դրախտին: Եւ ապա Ադամայ պատկերին ամենայն կենդանիք երկիր պագանէին: Աստուած յամենայն տեսիլս պատկեր մարդոյ տեսեալ եղեւ եւ երկրպագեցաւ:

³³ Ex. Fid. 89.35 + τοῦ κυρίου

³⁴ զի ընթեռնով ուսցին // Ex. Fid. 89.36 οὐδὲ τῇ ἀναγνώσει σχολάζουσιν

³⁵ գրեցին հար՛ն զմամնութիւն ի պատկերս // Ex. Fid. 89.36-37 οἱ πατέρες συνείδον ὥσπερ τινὰς ἀριστείας ἐν εἰκόσι ταῦτα γράφεσθαι

³⁶ Ex. Fid. 89.38 չիք նախեղելոցն գործոց

³⁷ B C + եւ

³⁸ խորհրդոյ կենդանագրելոյն // Ex. Fid. 89.40 τῷ εἰκονιζομένῳ

³⁹ Ex. Fid. 89.42 չիք եւ խորհրդոյ նոցա

⁴⁰ B E + երկու

⁴¹ բայց միայն յարինակէն՝ ի բնութենէն, որ նախ քան զնկարելն ունէր // Ex. Fid. 89.42-43 μὴ ἔχων τὸ τοῦ κυρίου ἐκτύπωμα τοῦ ἔχοντος

⁴² Ex. Fid. 89.43 չիք եւ պատկեր, այլ եւ

⁴³ տուեալ եղեւ յայս առաքելոցն // Ex. Fid. 89.49 ἡ παράδοσις

⁴⁴ Ex. Fid. 89.50 + τοῦτοις ὅμοια

⁴⁵ F պատկեր

⁴⁶ C իւրոյ

եւ հրեշտակք յամենայն սպասաւորութիւն իւրեանց մարդոյ պատկեր տեսեալ եղեն եւ երկրպագեցան: Պատկեր մարդոյ ետես Նոյ, որ ասէր առնել զտապանն եւ երկիր եպագ: Եւ Աբրահամ իբրեւ մարդ ետես միանգամ ի քաղղէացիսն, երկրորդ ի վրանի իւրում երեք կերպարանք մարդոյ եւ երկիր եպագ: Յակոբ պատկեր մարդոյ ետես ի գլուխ սանդղոցն եւ աստուած կոչեաց: Եւ Մովսէս ճԶե անգամ պատկեր մարդոյ եւ ի լերինն յամպն եւ երկիր եպագ: Գեղեհոն մարդոյ պատկեր ետես, եւ Աննա մարդոյ պատկեր, եւ Սամսոն մարդ ետես, Սամուէլ մանուկ մարդ ետես, Դաւիթ մարդ ետես: Եսայի մարդոյ պատկեր ի վերայ սեղանոյ ի մէջ քերովբէիցն ետես, Երեմիայ մարդ ետես, եւ Եզէկիէլ մարդ ետես ի մէջ անուոցն: Դանիէլ պատկեր ետես հին աւուրց եւ այլք⁴⁷ ամենայն: Մարիամ յաւտիսն զԳաբրիէլ մարդոյ պատկերաւ ետես: Եւ հովիւքն զհրեշտակսն մարդոյ պատկերաւ տեսին, նոյնպէս եւ կանայքն ի գերեզմանն: Այսք⁴⁸ ամենեքեան պատկեր մարդոյ⁴⁹ տեսին, վասն զի պատկեր Աստուծոյ է մարդ⁵⁰, եւ Աստուած պատկերիւ մարդոյ, ոչ զբնութիւն տեսին զանեղին, այլ զպատկեր տեսին եւ երկրպագեցին, եւ դու հայհոյես զերկրպագողսն⁵¹:

Այլ եւ ի նորս գոյ⁵² պատմութիւն այսպիսի, եթէ Աբգար թագաւորն Եդեսիոյ քաղաքի առաքեաց կենդանագիր յերուսաղէմ, առ ի գրել զտէրունական պատկերն եւ բերել⁵³ առ նա, զի ունէր ախտս ինչ⁵⁴: Եւ յորժամ ոչ կարաց գրել⁵⁵ ի փայլատակմանէ երեսաց նորա պայծառութեանն, ինքն Տէրն⁵⁶ եղ վարչամակն ի վերայ աստուածային⁵⁷ երեսաց իւրոց եւ ջնջեաց կտաւովն այնուիկ զմամնութիւն պատկերի իւրոյ եւ ետ⁵⁸ զնա փափագելոյն իւրոյ Աբգարու:

Նոյնպէս եւ ի ննջումն մաւր Տեառն Թումաս յետոյ եկեալ, եւ մինչ բացին գերեզմանն, զմարմինն ոչ գտին⁵⁹, բայց միայն ի տախտակին, որ դուռն գերեզ-

⁴⁷ F այլ

⁴⁸ C այլք

⁴⁹ B մարդոյ պատկեր

⁵⁰ C մարդս

⁵¹ Հռոմ. չիք պարբերութիւնը՝ Բայց մեք զարինակն ասացումք... եւ դու հայնոյես զերկրպագողսն

⁵² Այլ եւ ի նորս գոյ // Ex. Fid. 89.51 Φέρεται

⁵³ E F բերեալ

⁵⁴ Ex. Fid. 89.53 չիք եւ բերել առ նա, զի ունէր ախտս ինչ

⁵⁵ Ex. Fid. 89.53 չիք

⁵⁶ Ex. Fid. 89.54 չիք

⁵⁷ Ex. Fid. 89.54 ζωοποιῶ

⁵⁸ եւ ետ // Ex. Fid. 89.56 οὐτως ἀποστεῖλαι

⁵⁹ B տեսին

մանին էր, գրեալ գտին զպատկեր Աստուածամարն, եւ է⁶⁰ մինչեւ ցայսաւր: Նաեւ Ղուկաս աւետարանիչ կենդանագիր գոլով, յամենայն տեղիս զրոշմէր զպատկերն Քրիստոսի ի տախտակս թողլով յեկեղեցիս⁶¹:

Եւ զի բազում ինչ տուին մեզ առաքեալն առանց գրոց, վկայէ Պաւլոս, որ ասէ⁶². «Եւ արդ, եղբարք, կացե՛ք եւ կալջի՛ք զաւանդն մեր, զոր տուաք ձեզ, զոր ուսարոք թէ՛ գրով, թէ՛ բանիւ»⁶³: Եւ այլ ասէ⁶⁴. «Գովեմ ձեզ, եղբարք, զի զամենայն յիշե՛ք զմեզ»⁶⁵:

⁶⁰ Եւ չիք եւ է

⁶¹ Հուն. չիք պարբերութիւնը՝ նոյնպէս եւ ի ննջումն... թողլով յեկեղեցիս

⁶² որ ասէ // Ex. Fid. 89.58 ὁ τῶν ἐθνῶν ἀπόστολος

⁶³ Բ Թեւ. Բ 14. «Այսուհետեւ, եղբարք, հաստատո՛ւն կացե՛ք եւ պի՛նդ կալարոք զաւանդութիւնսն, զոր ուսարոք, եթէ բանիւ, եւ եթէ թղթով մերով»:

⁶⁴ այլ ասէ // Ex. Fid. 89.60 πρὸς Κορινθίους

⁶⁵ Ա. Կորնթ. ԺԱ. 2. «Գովեմ զձեզ, զի զամենայն ինչ զիմ յիշե՛ք»:

Դ. Վասն գրոց աստուածայնոց¹:

Մի է Աստուած, որ ի Հին եւ ի Նոր Կտակարանս² փարզեցաւ, որ Երրորդութեամբ գովի եւ փառաբանի, իսկ Տէրն յորժամ ասէր. «Ոչ եկի լուծանել զարէնս կամ զմարգարէս, այլ ի լնուլ»³ (վասն զի նա արար փրկութիւն մեզ, վասն որոյ լեալ էր ամենայն գիր եւ ամենայն խորհուրդ): Եւ դարձեալ, եթէ՝ «Քննեցէ՛ք զգիրս, զի նոքա վկայեն վասն իմ»⁴: Եւ առաքեալ ասէ. «Բազում մասամբ եւ բազում արինակամ կանխաւ խաւսեցաւ Աստուած ընդ հարս մեր մարգարէիմ⁵ եւ ի վախճան ատուրցս այսոցիկ խաւսեցաւ ընդ մեզ Որդւովն»⁶: Եւ զի Հոգով Սրբով խաւսէր արէնքն եւ մարգարէքն, աւետարանիչքն եւ առաքեալքն եւ հովիւքն եւ վարդապետք, եւ «ամենայն գիրք Աստուածաշունչ եւ աւգտակարք են»⁷, եւ վասն այսորիկ բարի եւ շահաբեր է անձին մարդոյ քննումն բանից աստուածային գրոց: Քանզի որպէս⁸ ծառն տնկեալ ի գնացս ջուրց, նոյնպէս եւ անձն ոռոգեալ ջրով աստուածային գրոց պարարտանայ եւ ի ժամու բերէ զպտուղ ուղղափառ հաւատոյ եւ միշտ ծաղկազարդ տերեւով՝ աստուածահանոյ վարով⁹ գեղեցկանայ եւ վայելչանայ գործով: Վասն զի առաքինասէր գործ, առ անպղտոր տեսութիւնս ի ձեռն սրբոց գրոց ուղղաւորի: Վասն զի գովել զառաքինութիւն եւ պարսաւել զչարութիւն ամենայն գտանին ի սմա: Եւ վասն այսորիկ եղիցոյ՛ն ուսումնասէրք եւ ուսեալք յոյժ, վասն զի աշխատութեամբ եւ փութով եւ յԱստուծոյ շնորհս տալով ուղղաւորին ամենայն: «Վասն զի որ խնդրէ, առնու, եւ որ հայցէ, գտանէ, եւ որ բաղխէն, բացցի»¹⁰: Արդ բախեսցոյ՛ն եւ մեք զգեղեցիկ դրախտս գրոց՝ զանուշահոտ եւ զլի փաղցրութեամբ¹¹, որ յամենայն կողմանց գեղեցկածայն¹²

¹ Ex. Fid. 90.1 Περὶ γραφῆς

² F կտակարանք

³ Մատթ. Ե 17. «Մի՛ համարիք, եթէ եկի լուծանել զարէնս կամ զմարգարէս. ոչ եկի լուծանել, այլ լնուլ»:

⁴ Յովն. Ե 39. «Քննեցէ՛ք զգիրս, զի... նոքին իսկ են, որ վկայեն վասն իմ»:

⁵ ընդ հարս մեր մարգարէիմ = Ex. Fid. 90.8 τοῖς πατέρασιν ἡμῶν ἐν τοῖς προφήταις // B մարգարէիմ ընդ հարսն մեր

⁶ Հմմտ. Եբր Ա. 1-2. «Բազում մասամբ, եւ բազում արինակամ կանխաւ խաւսեցաւ Աստուած ընդ հարսն մեր մարգարէիմ, ի վախճան ատուրցս այսոցիկ խաւսեցաւ ընդ մեզ Որդւովն»:

⁷ Բ Տիմ. Գ 16. «Ամենայն գիրք Աստուածաշունչ եւ աւգտակարք»:

⁸ F չէք

⁹ E F վարիմ

¹⁰ Ղուկ ԺԱ 10. «Զի ամենայն, որ խնդրէ, առնու, եւ որ հայցէ, գտանէ, եւ որ բախէ, բացցի նմա»:

¹¹ = B // Ex. Fid. 90.23 + τὸν ὠραιότατον

¹² C փաղցրածայն Ex. Fid. 90.24 չէք

եւ մտաւոր աստուածագգեաց թոշնոց ձայնի հնչէ ի լսելիս մեր, որ մինչ մեր-
ձենայ ի սիրտս մեր, գտրտմեալն¹³ միսիթարէ, զսրտմտեալն¹⁴ հրահանգէ եւ
լնու անվախճան ուրախությամբ եւ հանէ զմիտս մեր յոսկեգոյն եւ ի պայծառ
թիկնամէջս աստուածային աղանդոյն¹⁵, եւ ի ձեռն լուսանման թեւոց նորա
առ միածին Որդին, որ է ժառանգ այնմ, որ տնկեաց զիմանալի այգին, վե-
րացուցէ զմեզ եւ ընդ ինքն առաջի Հաւր լուսոյ կացուցանէ: Այլ մի՛ անմտա-
բար բախեսցոյ, այլ յամենայն սրտէ եւ անձանձրանալի եւ մի դառնացեալ
լիցոյ, մինչ բախեմք, զի ի ձեռն ժուրեանն¹⁶ բացցի մեզ: Եթէ ընթեռնումք մի
անգամ եւ երկուս եւ ոչ իմանամք զընթերցեալն, մի՛ տրտմեսցոյ վհատելով,
այլ կացցո՛ւք ի վերայ նորայ, քննեսցոյ, ուսցոյ, հարցցոյ այլոյ ումեք վար-
ժելոյ¹⁷: Վասն զի «հա՛րց ցհայր քո», եւ ասէ՛ «եւ պատմեսցէ քեզ, ընդ ձերս,
եւ ուսուցանէ քեզ»¹⁸: Զի ոչ ամենեցուն¹⁹ գիտութիւն²⁰, լցցոյ յաղբիւրաց այս
դրախտիս, որ բղխեն ի կեանս յափտեանականս՝ սուրբ եւ միշտ կենդանի
վտակքն, փափկասցոյ նոքամք, անյագաբար արբցոյ²¹, զի անհատանելի
են շնորհքն նորա:

Այլ թէ եւ յարտաքնոցն պիտոյական ինչ կարող եմք կրել, ոչ խտրելի եւ
ընկենելի է: Եղերոյք իմաստուն կոչնականք, փորձք՝ զստոյցն եւ զսուրբն²² ժո-
ղովել ի կրպակսն մեր²³ եւ զխոտանն ի բաց ընկեսցոյ: Աոցոյք ի նոցանէ
բանս ընտիրս, իսկ զծիծաղելիսն եւ զաստուածս եւ զառասպելս նոցա շանց
ընկեսցոյ: Եւ մեծ զաւրութիւն կարող եմք առնուլ ի նոցանէ²⁴:

Զայս գիտել պարտ է, զի քան եւ երկու գիրք Հին Կտակին ըստ նշա-
նագրաց բառին հեբրայեցոց, վասն զի քան եւ երկու է գիր, յորոց հինգն ի
նոցանէ կրկին լինի գիր, որպէս զի եղիցին միանգամայն քան եւ եւթն: Եւ
այս²⁵ կրկին են՝ քան, մեմ, նուն, փին, սաղի, վասն այսորիկ եւ գիրք այսու
աւրինակաւ քան եւ երկու թուեալ լինին, եւ են քան եւ եւթն, վասն զի հինգ

¹³ Ex. Fid. 90.25 λυπουμένην // B C գտրտմեալսն

¹⁴ Ex. Fid. 90.26 θυμουμένην // C գտրտմեալն

¹⁵ Սաղմ. Կէ 14. «Թեմ աղանդոյ արծաթապատ, եւ թիկնամէջք նորա ի գոյն ոսկոյ»:

¹⁶ ի ձեռն ժուրեանն // Ex. Fid. 90.32 Οὐτῶ

¹⁷ Ex. Fid. 90.34 չիք այլոյ ումեք վարժելոյ

¹⁸ Բ Աւ. ԼԲ 7. «հա՛րց ցհարսն քո, եւ պատմեսցեն քեզ. եւ ցձերս քո՝ եւ ասասցեն քեզ»:

¹⁹ C + է

²⁰ Ա. Կորնթ. Ը 7. «Այլ ո՛չ յամենեսեան գիտութիւն է»:

²¹ անյագաբար արբցոյ // Ex. Fid. 90.38 ἀπλήστως κατατρυφήσωμεν

²² Ex. Fid. 90.42 + χρυσίον

²³ Ex. Fid. 90.42 չիք ի կրպակսն մեր

²⁴ F չիք կարող եմք առնուլ ի նոցանէ Ex. Fid. 90.44 չիք ի նոցանէ

²⁵ C E + են որ

ի նոցանէ կրկին են: Զի Հոուր ի Դատաւորսն խառնի²⁶, եւ Առաջի եւ Երկրորդ Թագաւորացն²⁷ մի գիր կոչի ի նոցին ձայնս²⁸, եւ Երրորդ եւ Չորրորդ Թագաւորութիւն մի գիր թուի²⁹, Առաջին եւ Երկրորդ Մնացորդն մի գիր կոչին³⁰, եւ Առաջին եւ Երկրորդ Եզր մին գիր կոչի³¹, եւ այսպէս շարադրեալ են երաւյեցոցն գիրք ի չորրորդ հինգս բաժանեալս³²: Եւ մնան արտաւոյ երկու, որպէս զի լինիցի կարգ նոցա այսպէս՝ հինգ արիւնաց գիրք, եւ են այս՝ Ծնունդ, Եւ, Ղեւտականն, Թիւ, Երկրորդ Աւելն. այս հինգ գիրք³³ արեւնադրութիւն է Մովսէսի գրեալ³⁴: Եւ զկնի սորա երկրորդ հինգ այս է, որ կոչին Գիրք, եւ ոմանք ասեն Սուրբ գիրք՝ Յիսու Նաւէ, Դատաւոր ընդ Հոուրայ, Թագաւորութիւն Մին եւ Երկուն մի գիրք, եւ Թագաւորութիւն Երրորդն եւ Չորրորդն մին գիրք, եւ Երկրորդն Մնացորդ մի գիրք: Այս է երկրորդ հինգ: Իսկ երրորդ հինգ այս են յոտանաւորն՝ Յոբն, Սաղմոսարան, Առակք Սողոմոնի եւ Եկլեսիաստէս նորին, Եզս երգոց նորին: Չորրորդ հինգ կարգ զրոց այս է Մարգարէութիւնք՝ երկոտասանն մարգարէք³⁵ մի գիրք, Եսայիաս, Երեմիաս, Եզեկիէլ, Դանիէլ: Եւ զկնի այսոցիկ՝ երկու եզրայն մի³⁶ գիրք, եւ Եսթեր, Յուդիթ եւ Տուբիթ մի գիրք³⁷: Իսկ Պանարետոս, որ է Իմաստութիւն Սողոմոնի եւ Իմաստութիւն Յիսովայ³⁸, զոր հայրն Սիրախայ³⁹ գրեաց հերբայեցի եւ թարգմանեաց ի յոյն սորա թոռն՝ իսկ որդին Սիրաքի⁴⁰ Յիսու, առաքինուսոյց եւ բարի է, բաց ոչ ի թիւ զրոց է եւ ոչ եղաւ յարկեղս զրոց:

Իսկ Նորոյ Կտակիս գիրք են այս՝ չորս Աւետարանքն՝ Մատթէոսի, Մարկոսի, Լուկասու եւ Յովհաննու, Գործք առաքելոց գրեալ Լուկասու, եւ կաթո-

²⁶ Ex. Fid. 90.52 + και ἀριθμείται παρ' Ἑβραίοις μία βίβλος

²⁷ E դատաւորացն

²⁸ Ex. Fid. 90.53 չիք ի նոցին ձայնս

²⁹ Ex. Fid. 90.54 չիք

³⁰ E F կոչի Ex. Fid. 90.54 չիք

³¹ Ex. Fid. 90.55 չիք

³² երաւյեցոցն գիրք ի չորրորդ հինգս բաժանեալս // Ex. Fid. 90.56 αἱ βίβλοι ἐν πεντατέυχῳ τέτρασι

³³ = bMN // Ex. Fid. 90.58 + πρώτη

³⁴ Ex. Fid. 90.58 չիք Մովսէսի գրեալ

³⁵ F չիք

³⁶ երկու եզրայն մի // Ex. Fid. 90.67 αἱ δύο εἰς μίαν συναπτόμεναι

³⁷ Ex. Fid. 90.68 չիք Յուդիթ եւ Տուբիթ մի գիրք

³⁸ C Յեսուայ

³⁹ C Սիրաքայ

⁴⁰ C Սիրաքայ

դիկէ⁴¹ Յակոբու մի, Պետրոսի երկու, Յոհաննու երեք, Պաղոսի⁴² թուրթ չորեքտասան, Յայտնութիւն Յովհաննու աւետարանչի, կանոնս սուրբ առաքելոցն եւ Կղեմենդոսի⁴³ գիրք: Այս են նոր Կտակարան⁴⁴:

⁴¹ = b // Ex. Fid. 90.74 + ἐπιστολαὶ ἐπτά

⁴² = I // Ex. Fid. 90.75-76 + ἀποστόλου

⁴³ C F Կղեմդոսի

⁴⁴ Ex. Fid. 90.77 չիք գիրք: Այս են նոր Կտակարան

ՂԱ. Վասն ի վերայ Քրիստոսի ասելոց¹:

Ի վերայ Քրիստոսի ասացեալն տեսակի ազգային ունին արինակս չորհ, զի ոմանք նախ քան զմարմնանալն ճանաչին զոլ նմա, եւ ոմանք ի միատրեւն, եւ ոմանք յետ միատրութեանն, եւ² ոմանք զկնի յարութեան նորա:

ա. Եւ որք նախ քան զմարդանալն են բանք, ունին տեսակի վեց, զի ոմանք ի նոցանէ զմիատրութիւն բնութեանն եւ ընդ Հար զմի գոյութիւնն զոլ ցուցանեն, որպէս այն, որ ասէ. «Եւ եւ Հայր իմ մի եմք»³, եւ «որ ետես զիս, ետես զՀայր իմ»⁴, եւ «որ ի պատկեր»⁵ Աստուծոյ էր»⁶ եւ այլ այդպիսիք:

բ. Իսկ ոմանք զկատարեալ անձնատրութիւն նորա⁷ «մեծ խորհրդոյ հրեշտակ, եւ սքանչելի խորհրդակից, եւ Աստուած եւ հօգաւ եւ իշխանական»⁸ եւ այլ այսպիսիք:

գ. Իսկ ոմանք զ'առ ի միմեանս պարագրութիւն անձանցն, որպէս այն, թէ «Եւ ի Հայր, եւ Հայր յիս»⁹, եւ զանմեկնելի հաստատութիւն, իբրեւ «զբան»¹⁰, «զիմաստութիւն, զարութիւն», եւ «զնառագայթ»: Վասն զի բանն ի միտսն է (այլ զգոյական բանն ասեմ), նոյնպէս իմաստութիւն եւ գիտութիւն¹¹, եւ զարութիւն ի զարաւորին է, եւ ճառագայթ ի լոյսն անմեկնելաբար¹² հաստատեալ կան եւ ի նոցանէ ելանեն:

դ. Իսկ ոմանք որպէս ի պատճառէ Հարէ իբրեւ այն զի «Հայր իմ մեծ է քան զիս»¹³, զի ի նմանէ ունի զէութիւն ծննդեամբ եւ ոչ ստեղծագործութեամբ, եւ որպէս այն եթէ «Եւ ի Հարէ»¹⁴, եւ եթէ «Եւ կենդանի եմ վասն

¹ Ex. Fid. 91.1 Περί τῶν ἐπὶ Χριστοῦ λεγομένων

² = bMN // Ex. Fid. 91.2-4 + A' ... B' ... Γ' ... Δ'

³ Յովհ. Ժ 30:

⁴ C չիք Յովհ. ԺԳ 9:

⁵ C եթէ զպատկեր ք/ս որ ի պատկեր

⁶ Փիլիպ. Բ 6:

⁷ Ex. Fid. 91.9-10 + ὥς τὸ «υἱὸς τοῦ θεοῦ» καὶ «χαρακτήρ τῆς ὑποστάσεως αὐτοῦ» καὶ τὸ

⁸ Եսայի Զ 9. «Հրեշտակ մեծի խորհրդոյ. սքանչելի խորհրդակից, Աստուած հօգաւ, իշխան»:

⁹ Յովհ. ԺԳ 10:

¹⁰ Յովհ. Ա 1:

¹¹ Ex. Fid. 91.9-14 չիք եւ գիտութիւն

¹² C անմեկնելաբան

¹³ Յովհ. ԺԳ 28. «Հայր իմ մեծ է քան զիս»:

¹⁴ Յովհ. ԺԶ 28. «Եւ ի Հարէ եւ եկի յաշխարհ»:

Հար»¹⁵, իսկ զամենայն, զոր ունի, ոչ տուողականութեամբ եւ ոչ ուսուցանողութեամբ, այլ իբրեւ ի պատճառէ ունի, իբր զայն զի ասէ. «ոչ կարէ Որդի առնել յանձնէ եւ ոչ ինչ, թէ ոչ տեսանիցէ զՀայր, զի առնէ»¹⁶: Զի եթէ ոչ է Հայր, եւ ոչ Որդի է, որով Հայր, եւ ի Հարէ է Որդի եւ առ Հայր, եւ ի Հայր է եւ ոչ զկնի Հար: Նոյնպէս եւ զամենայն, զոր առնէ, ի նմանէ եւ նովաւ առնէ, զի մի եւ նոյն է¹⁷, ոչ նման, այլ մի եւ նոյն Հար եւ Որդոյ եւ սուրբ Հոգոյն կամք, զաւրութիւն եւ ներգործութիւն:

Ե. Իսկ ոմանք հայրական հանոյութեանն¹⁸ իւրով գործով կատարեալ՝ ոչ իբրեւ զգործարանաւ ինչ կամ ծառայի, այլ իբրեւ զգոյութեամբ եւ անձնատու իւրովն բանի¹⁹ եւ իմաստութեամբ եւ զաւրութեամբ, զի մի տեսանելով շարժութիւն ունել Հար եւ Որդոյ, իբրեւ զի զայն, թէ՛ «ամենայն ինչ նովաւ եղեւ»²⁰, եւ «առաքեաց զբան իւր եւ բժշկեաց զնոսա»²¹, եւ «զի ծանիցեն, թէ դու առաքեցեր զիս»²²:

զ. Իսկ ոմանք մարգարէականք, եւ ի սոցանէ ոմանք իբրեւ զառնապայք, իբրեւ այն, թէ՛ «յայտնապէս եկեացէ»²³, եւ Զաքարեայ՝ «ահա թագաւոր քո գայ»²⁴, եւ Միքեայ՝ «ահա Տէր գայցէ ի տեղոջէ իւրմէ եւ իջանէ եւ գայ ի վերայ բարձրութեանն Երկրի»²⁵: ²⁶Իսկ ոմանք զառնապայսն իբրեւ զանցեալս, որպէս այն, զի ասէ²⁷. «Սա է²⁸ Աստուած մեր²⁹, ի վերայ Երկրի երեւեցաւ եւ ընդ

¹⁵ Յովհ. Զ 58. «Եւ կենդանի եմ վասն Հար»:

¹⁶ Յովհ. Ե 19. «Ոչ կարէ Որդի մարդոյ առնել յանձնէ եւ ոչինչ, եթէ ոչ տեսանիցէ զՀայրն զի առնէ»:

¹⁷ C + եւ

¹⁸ B C հանութեանն

¹⁹ Ex. Fid. 91.28 // B C D + արարեալ

²⁰ Յովհ. Ա 3:

²¹ Սաղմ. ՃԶ 20. «Առաքեաց զբան իւր եւ բժշկեաց զնոսա»:

²² Յովհ. ԺԱ 42. «հաւատասցեն, թէ դու առաքեցեր զիս»:

²³ Սաղմ. ԽԹ 3. «Աստուած մեր յայտնապէս եկեացէ»:

²⁴ Զաք. Թ 9. «ահա Թագաւոր քո գայ առ քեզ»:

²⁵ Միք. Ա 3. «Զի ահաասիկ խաղասցէ ի տեղոջէ իւրմէ. իջցէ եւ հասցէ ի վերայ բարձանց երկրի»:

²⁶ Ex. Fid. 91.35 // E + է.

²⁷ Ex. Fid. 91.35 չիք որպէս այն, զի ասէ

²⁸ F ասէ *φύ* սա է

²⁹ Ex. Fid. 91.36 + μετὰ ταῦτα

մարդկան շրջեցաւ»³⁰, եւ եթէ՝ «Տէր ստացաւ զիս ի³¹ սկիզբն ճանապարհաց իւրոց ի գործս իւր»³²: Եւ եթէ՝ «Վասն այսորիկ աւծ Աստուած Աստուած քն իւղով ուրախութեան»³³³⁴, որով եւ զայն, որ յառաջ քան միատուրելն եւ որ միանալոյն են³⁵, ասին ի միասին, իսկ որ զկնի միատուրութեանն են՝ յառաջ քան զմիատուրելն եւ ոչ երբեք ուրեք, բայց միայն թէ մարգարէական, որպէս ասացի:

Բ. Իսկ որ ի միատուրութեանն ունին տեսակս երիս:

ա. Վասն զի յորժամ ի վերագունէն առնեմք զԲան, զաստուածանալ մարմնոյն եւ քան լինել եւ զվերագոյն բարձրանալն ասեմք եւ զայսպիսիսդ, եւ զմարմնոյն պարգեւեալ մեծութիւն ընդ բարձրագոյն Բանին Աստուծոյ ի ձեռն մերձենալոյ եւ միատուրութեանն երեւցուցանեմք:

բ. Իսկ յորժամ նուաստեն³⁶ մարմնատուրութիւն Աստուծոյ Բանին, մարդանալ եւ միատուրիլ³⁷, աղքատանալ եւ նուաստանալ ասեմք, զի այսպիսիք ամենայն յաղագս ընդ մարդոյ բնութիւնն միատուրելոյն յաւելան ասել Բանին Աստուծոյ: Զի այսպիսիք ամենայն յաղագս ընդ մարդոյ բնութիւնն միատուրելոյն յաւելան ասել Բանին Աստուծոյ:

գ. Իսկ յորժամ յերկուցն զմի լինելն ասեմք՝ հաղորդեալ, աւծեալ, մերձեցեալ, զպատկերն գոլ եւ զայլ այսպիսիքս: Արդ վասն այսորիկ ասին յերիս յայն տեսակաց երկու յառաջասացեալ տեսակքն, վասն զի ի ձեռն միատուրութեանն յայտնի լինի, եթէ զի՛նչ ունէր իւրաքանչիւրն ի միատուրական խառնակութենէն եւ ի միմեանս բովանդակութենէն: Զի յաղագս առանձնատուրութեամբ միատուրութեանն մարմնոյն աստուածանալն ասելի է եւ աստուած լինել՝ Բանին համագոյ եղով, եւ Բանին Աստուծոյ մարմնանալ եւ մարդ լինել եւ ստեղծական անուանիլ եւ յետին եւ ի յետնոց³⁸ կոչիլ, ոչ իբրեւ յերկուց բնութեանց ի մի խառնեալ բնութիւն փոփոխելով (վասն զի անկար է ի մի բնութիւն հակառակացն բնութեամբ միանգամայն կեալ), այլ իբրեւ զերկու

³⁰ Բարութ Գ 36. «Սա է Աստուած մեր», 38. «Յետ այսորիկ յերկրի երեւցաւ եւ ընդ մարդկան շրջեցաւ»:

³¹ E չիք

³² Առակ Բ 22. «Տէր հաստատեաց զիս ի սկիզբն ճանապարհաց իւրոց ի գործս իւր»:

³³ Ex. Fid. 91.38-39 + *παρὰ τοὺς μετόχους σου καὶ τὰ τοιαῦτα*

³⁴ Սաղմ. ԽԴ 8. «Վասն այսորիկ աւծ զԲեզ Աստուած Աստուած քն իւղով ուրախութեամբ»:

³⁵ C չիք

³⁶ Ex. Fid. 91.45 *ἀπὸ τοῦ ἐλάττονος* // F վաթարէն *սողից վեր* նուաստեն *լուս*. նուաստութենէն E *սողից վեր* նուաստութենէն B C նուաստութենէն

³⁷ Ex. Fid. 91.47 *κένωσιν*

³⁸ Ex. Fid. 91.45 չիք ի յետնոց

բնութիւնս անձամբ միացեալ եւ առ միմեանս բովանդակութիւն անշփոթելի եւ անփոփոխելի ունել: Իսկ բովանդակեալ ոչ ի մարմնոյն, այլ յաստուածութենէն եղեւ: Զի ոչ կարէր մարմին բովանդակել զաստուածութիւնն, այլ աստուածային բնութիւնն միանգամ բովանդակեաց զմարմինն, ետ եւ մարմնոյն բովանդակող լինել աստուածութեանն աննառապէս, զոր եւ միաւորութիւն³⁹ ասեմք: Արդ զայս գիտաւջիր, եթէ ի վերայ միոյ եւ երկրորդ տեսակին միաւորութեանն հակառակ ինչ է տեսանելի: Վասն զի մինչ զմարմնոյն առնեմք⁴⁰ բան, եւ Աստուած լինել եւ վերամբարձեալ գոյ, եւ աւծեալ լինել (զի յաստուածութենէն տեսանին այսոքիկ մարմնոյն), իսկ յորժամ զԲանէն Աստուծոյ՝ զբափելն ասեմք, մարմնանալ, մարդանալ, խոնարհել, փոքրանալ⁴¹ եւ զայլ այսպիսիսս, որք ի մարմնանալոյն կոչին աստուածութեանն, զի կամաւ կրեաց զայսոսիկ:

Գ. ա. Իսկ որ զլնի մարմնանալոյն են⁴², տեսակք ունին երեք: Նախ՝ աստուածային բնութեանն յայտնող, իբրեւ զայն զի ասէ, թէ՛ «Ես ի Հայր եւ Հայր յիս», եւ «Ես եւ Հայր մի եմք», եւ ամենայն, որ յառաջ քան զմարդանալն ասին զմանէն, եւ նոքա յետ մարմնանալոյն ասին ի վերայ նորա, բայց միայն զմարմին եւ զբնականսն իւր ոչ է ասելի նմա նախ⁴³:

Բ. Երկրորդ՝ մարդկութեանն, իբր զայն զի ասէ. «Ընդէ՞ր⁴⁴ խնդրէք սպանանել զիս⁴⁵՝ զմարդ, որ ձեզ զնշմարիտն խաւսեցաւ»⁴⁶, եւ թէ՛ «Այսպէս բարձրանալ պարտ է որդոյ մարդոյ»⁴⁷, եւ այլ այսպիսիս:

Իսկ սոքա մարդապէս գրեցան ի վերայ Քրիստոսի կամ բանիւ կամ գործով, ունելով տեսակս վեց: Զի են ոմանք ի սոցանէ, որ բնութեամբ տնտեսութեանն լինին եւ ասին, իբրեւ այն ինչ՝ ի Կուսէն ծնունդն եւ հասակաւ անումն⁴⁸, քաղցն, ծարաւն, աշխատելն, արտաստմն, քունն, բեւեռաց խո-

³⁹ C միաւորի

⁴⁰ Ex. Fid. 91.64 // C E F + եւ B E զԲանն աստուածանալ ասեմք եւ

⁴¹ Ex. Fid. 91.67 չիք

⁴² Ex. Fid. 91.70 // B E F + բանք

⁴³ ոչ է ասելի նմա նախ // Ex. Fid. 91.74 μη ειληφέναι

⁴⁴ Ex. Fid. 91.75 τί // F զի

⁴⁵ E զիս սպանանել

⁴⁶ Յովհ. է 20. «զի խնդրէք զիս սպանանել», Ը 40. «Այլ այժմիկ խնդրէք սպանանել՝ զիս. զայր մի որ ձեզ զնշմարտութիւնն խօսեցայ»:

⁴⁷ Յովհ. Գ 14. «Եւ որպէս Մովսէս բարձրացոյց զաւան յանապատին, նոյնպէս բարձրանալ պարտ է որդոյ մարդոյ»:

⁴⁸ Ex. Fid. 91.81 + καὶ προκοπή

ցումն, մահ եւ որ այլ այդպիսիք, ամենայն որ բնական եւ անպարսաւելի ախտք են: Վասն զի այս ամենայնի մարդկապէս մարմին միատրեղ Աստուծոյ Բանին⁴⁹ ստուգապէս լինել հաւատարիմ առնէ, ոչ ինչ յայսցանէ թէպէտ չարչարել զԱստուած⁵⁰, վասն մեր փրկութեան կարելի է ասել զԱստուած⁵¹: ա⁵². Իսկ ոմանք համարելով ասի իբր զայն, թէ՛ «ո՛ւր եղիք զՂազար»⁵³, եւ ի թգեմին զգնալն⁵⁴ եւ երկիւղն ի մահուանէ⁵⁵, եւ մեկնելն⁵⁶, եւ աղաւթելն⁵⁷: Սոքա եւ որ սոցին նման են, ոչ մարդկապէս եւ ոչ աստուածապէս պիտոյ է ի նմա, բայց միայն զի մարդկապէս համարելով ասէր եւ պատճառէր, եւ որ ոք ի սոցանէ պիտանացու եւ պատշան գոյր, որպէս եւ աղաւթելն յայն սակս պիտուանայր, որպէս զի ցուցցէ, եթէ ոչ հակառակ Աստուծոյ է, եւ եթէ իբրեւ զսկզբնապատճառ պատուէ զհայր: ք.⁵⁸ Իսկ հարցումն ոչ ի սակս անգիտութեան լինէր, այլ զի ցուցցէ, եթէ ճշմարիտ մարդ էր⁵⁹ ընդ աստուածութեանն: Իսկ մեկնելն՝ զի ցուցցէ, եթէ ստուգիւ մարմին է եւ⁶⁰ ոչ անհրահանգեալ գոլ եւ ոչ ինքն մատնէ զինքն: գ. Իսկ ոմանք բարեկամական եւ վերաբերական, իբր այն, թէ՛ «Աստուած, Աստուած իմ, նայեաց առ իս⁶¹, ընդէ՛ր թողեր զիս»⁶², եւ այն, թէ՛ «Ո՛չ գիտէր զմեղս»⁶³, եւ թէ՛ «վասն է՛ր եղեւ անէծք»⁶⁴, եւ թէ՛ «Ինքն Որդի հնազանդեսցի Հար⁶⁵, որ հնազանդեցոյց նմա զամենայն»⁶⁶: Վասն զի ոչ իբրեւ զաստուած եւ ոչ իբրեւ զմարդ թողեալ եղեւ ի Հարէ երբեք, եւ ոչ մեղք

⁴⁹ Ex. Fid. 91.84 չիք

⁵⁰ E F չարչարել զԱստուած թէպէտ

⁵¹ վասն մեր փրկութեան կարելի է ասել զԱստուած // Ex. Fid. 91.85-86 δι' αὐτῶν δὲ τὴν ἡμῶν οἰκονομοῦντος σωτηρίαν

⁵² C գ. Ex. Fid. 91.86 β'

⁵³ Յովն ԺԱ. 34. «Եւ ասէ. Ո՛ւր եղիք զնա»:

⁵⁴ Տէ՛ս Մատթ. ԻԱ. 19:

⁵⁵ Ex. Fid. 91.87 չիք եւ երկիւղն ի մահուանէ

⁵⁶ Տէ՛ս Յովն. Ը 59:

⁵⁷ Տէ՛ս Յովն. ԺԱ. 41: Ex. Fid. 91.88 + τὸ «προσεποιήσατο πορρωτέρω πορεύεσθαι»

⁵⁸ Ex. Fid. 91.92 չիք

⁵⁹ E է

⁶⁰ Ex. Fid. 91.94 չիք եթէ ստուգիւ մարմին է եւ

⁶¹ Ex. Fid. 91.95 չիք նայեաց առ իս

⁶² Մատթ. ԻԷ. 46. «Աստուած իմ, Աստուած իմ, ընդէ՛ր թողեր զիս»:

⁶³ Ex. Fid. 91.98 չիք

⁶⁴ Գաղատ. Գ. 13. «եղեալ վասն մեր անէծք»:

⁶⁵ Ex. Fid. 91.96-67 + ὑπὲρ ἡμῶν ἀμαρτίαν ἐποίησε | Բ Կորնթ. Ե. 21. «Զի զայն՝ որ ոչն գիտէր զմեղս, վասն մեր մեղս արար»:

⁶⁶ Ա. Կորնթ. ԺԵ. 28. «Ինքն Որդի հնազանդեսցի այնմ, որ հնազանդեցոյց նմա զամենայն»:

եւ ոչ անէծք եղեւ, եւ ոչ հնազանդ լինել Հաւր կարատէր: Վասն զի ստուածութեամբ հաւասար իւր⁶⁷ է եւ ոչ հակառակ է եւ ոչ հնազանդ եւ ոչ անհնազանդ⁶⁸, եւ որպէս մարդ է, ոչ անհնազանդ եղեւ ծնողին, իբրեւ զի կարատասցէ հնազանդութեանն: Այլ զի զմերն ստուգէր զկերպարան եւ ընդ մեզ կարգէր զինքն,⁶⁹ սաեք զայս այսու աղագաւ, վասն զի մեք պարտական եղաք մեղաց եւ անիծից, իբրեւ ստահակս եւ անհնազանդս, եւ այսու վասն թողեալ էաք: Դ. Իսկ ոմանք յաղագս մանրամասնութեան⁷⁰ բաժանման ասեն: Թէ աղատ քննութեամբ բաժանին իւրիւր⁷¹ անբաժանելիքն, այսինքն՝ բնութիւնք բանին եւ մարմնոյն⁷², եւ յայն սակս ասի մարմնոյն ծառայական եւ անգիտական բնութիւնն⁷³: Զի եթէ ոչ էին միատրեալ ընդ⁷⁴ Բանին, այնպէս էին⁷⁵, այլ զի առանձնատրութեամբ ընդ Բանն⁷⁶ միատրեալ գոյով, ոչ ծառայ է եւ ոչ անգէտ: Եւ այսպէս զԱստուած իւր Հայր անուանէր: Ե. Իսկ ոմանք յաղագս որ առ մեզ յայտնութեան եւ հաւատարիմ եղելոյ բանք են, իբրեւ այն, զի ասէ, եթէ՝ «Հայր, փառատրեա զիս փառաւն, զոր ունէի յառաջ քան զլինել աշխարհի առ ի քէն»⁷⁷ (վասն զի ինքն իւր բնութեամբն փառատրէր եւ է՝ եւ եղիցի, իսկ տեսողացն մարմնով⁷⁸ ոչ յայտնեալ եւ ոչ հաւատարմացեալ էր փառն նորա): Ըստ առաքելոյ, որ ասէ, եթէ՝ «⁷⁹զաւրութեամբ Հոգւոյն⁸⁰ եւ յարութեամբն ի մեռելոց»⁸¹ (վասն զի ի ձեռն սփանչելագործութեանցն եւ յարութ-

⁶⁷ Ex. Fid. 91.101 τῷ πατρί

⁶⁸ Ex. Fid. 91.101 չէք եւ ոչ անհնազանդ

⁶⁹ C + զի

⁷⁰ B մանրամասն քննութեան // Ex. Fid. 91.105 κατ' ἐπίνοιαν

⁷¹ Ex. Fid. 91.106 τῇ ἀληθείᾳ

⁷² բնութիւնք բանին եւ մարմնոյն // Ex. Fid. 91.107 τὴν σάρκα ἐκ τοῦ λόγου

⁷³ եւ յայն սակս ասի մարմնոյն ծառայական եւ անգիտական (C E F գիտական) բնութիւնն // Ex. Fid. 91.107-108 λέγεται καὶ δοῦλος καὶ ἀγνοῶν· καὶ γὰρ τῆς δούλης καὶ ἀγνοούσης φύσεως ἦν καὶ

⁷⁴ Ex. Fid. 91.108 + τῷ θεῷ

⁷⁵ այնպէս էին // Ex. Fid. 91.108-109 ἡ σάρξ, δούλη ἦν καὶ ἀγνοοῦσα

⁷⁶ C F չէք զի առանձնատրութեամբ ընդ Բանն | ընդ Բանն // Ex. Fid. 91.109 πρὸς θεὸν λόγον

⁷⁷ Յովհ. Ժէ 5. «Եւ այժմ փառատրեա՛ զիս Հայր առ ի քէն, փառաւն զոր ունէի յառաջ քան զլինելն աշխարհի առ ի քէն»:

⁷⁸ տեսողացն մարմնով // Ex. Fid. 91.114 ἡμῖν

⁷⁹ Ex. Fid. 91.115 + τοῦ ὀρισθέντος υἱοῦ θεοῦ

⁸⁰ Ex. Fid. 91.115 + ἀγιοσύνης

⁸¹ Հռովմ. Ա. 4. «սահմանելոյ Որդւոյն Աստուծոյ զաւրութեամբ ըստ Հոգւոյն սրբութեան. ի յարութենէ մեռելոց Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ»:

եան եւ տնկելով⁸² սուրբ Հոգւոյն յայտնեցաւ, եւ հաւատաց աշխարհ, թէ Որդի Աստուծոյ եւ Աստուած էր), եւ «յառաջանայր այր»⁸³ իմաստութեամբ եւ շնորհաւ»⁸⁴: Գ. Իսկ ոմանք ի դէմս հրէիցն ասին, վասն ընդ նոսա⁸⁵ թուելոյ զանձն իւր, որպէս ցաւմարացիս⁸⁶ ասէր, եթէ՝ «Դուք երկիր պագանեք որոց ոչ գիտէք, եւ մեք երկիր պագանեմք որում գիտեմք եւ զի փրկութիւն ի հրէից է»⁸⁷:

Երրորդ տեսակ զմի անձնատրութիւն ցուցանելովս⁸⁸ է եւ ընդ նմա գերկրորդն յանդիման դնելով⁸⁹, իբր զայն, թէ՝ «ես կենդանի եմ ընդ Հաւր, եւ որ ուտէ զիս, կեցցէ ինեւ»⁹⁰»⁹¹, եւ եթէ՝ «երթամ առ Հայր, եւ ոչ ես տեսանէ զիս»⁹², եւ թէ՝ «ոչ զՏէրն փառաց խաչեալ էին»⁹³, եւ եթէ՝ «ոչ ոք ել յերկինս, եթէ ոչ որ էջն յերկնից Որդի մարդոյ»⁹⁴»⁹⁵, եւ այլ այսպիսիք:

Դ. ա. Իսկ որք զկնի յարութեան ասելիք են, ոմանք աստուածավայելուչք են, իբրեւ զայն, թէ՝ «մկրտեցէք զնոսա յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ»⁹⁶ (յայտ է Որդի ընդ Հաւր Աստուած գովով⁹⁷): Եւ եթէ՝ «աւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն ատուս, մինչեւ ի կատարած աշխարհի»⁹⁸, (սոքա զայն յայտնեն, զի իբրեւ Աստուած է յաւիտեան⁹⁹): Իսկ ոմանք մարդկան վայելուչք,

⁸² C F տգնելով

⁸³ Ex. Fid. 91.118 չիք

⁸⁴ Դուկ. Բ 51. «Եւ Յիսուս զարգանայր իմաստութեամբ եւ հասակաւ եւ շնորհաւ յԱստուծոյ եւ ի մարդկանէ»:

⁸⁵ Ex. Fid. 91.119-120 τῶν Ἰουδαίων

⁸⁶ Ex. Fid. 91.120 πρὸς τὴν Σαμαρεῖτιν // C E F ցաւմարացիս

⁸⁷ Յովհ. Գ 22. «Դուք երկիր պագանեք՝ որում ոչն գիտէք, մեք երկիր պագանեմք որում գիտեմքն. զի փրկութիւն ի Հրէից է»:

⁸⁸ Ex. Fid. 91.123 δηλωτικὸς // B ցուցանելոյ վասն է

⁸⁹ C յառդնելով

⁹⁰ C F զինեւ

⁹¹ Յովհ. Զ 57. «Ես կենդանի եմ վասն Հաւր. եւ որ ուտէն զիս՝ եւ նա՛ կեցցէ վասն Հաւր»:

⁹² Յովհ. ԺԶ 10. «առ Հայր իմ երթամ, եւ ո՛չ ես տեսանէք զիս»:

⁹³ Ա Կորնթ. Բ 8. «ոչ արդեւ զՏէր փառացն ի խաչ հանէին»:

⁹⁴ Ex. Fid. 91.128 + ὁ ὢν ἐν τῷ οὐρανῷ

⁹⁵ Յովհ. Գ 13. «Եւ ոչ ոք յերկինս ել, եթէ ոչ՝ որ էջն յերկնից Որդին մարդոյ որ էն յերկինս»:

⁹⁶ Մատթ. ԻԲ 19. «մկրտեցէք զնոսա յանուն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյ Սրբոյ»:

⁹⁷ Ex. Fid. 91.130 ὡς θεοῦ δηλονότι

⁹⁸ Մատթ. ԻԲ 20. «Եւ ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն ատուս՝ մինչեւ ի կատարած աշխարհի»:

⁹⁹ սոքա զայն յայտնեն, զի իբրեւ Աստուած է յաւիտեան // Ex. Fid. 91.133 ὡς γὰρ θεός ἐστι μεθ' ἡμῶν

իբրեւ այն, թէ՛ «կալան զոտից նորա»¹⁰⁰, եւ «անդ տեսանիցեն զիս»¹⁰¹ եւ այլ այսպիսիք:

¹⁰²Որով եւ յետ յարութեանն մարդկային տեսակէ բազմադէմք են, զի ոմանք ճշմարտապէս են, այլ ոչ բնականք, այլ տնաւորէնութեամբ ասացեալ են առ ի հաւատացուցանելոյ սակս, եթէ նոյն ինքն չարչարեալ մարմինն յարեաւ, իբր զայն ցուցանել զխոցմունսն, եւ ուտել եւ ըմպել յետ յարութեանն, իսկ ոմանք ճշմարտութեամբ¹⁰³ եւ բնականք, իբրեւ զանաշխատաբար գնալն ի տեղոյէ ի տեղի եւ դրամն փակելաւ մտանել: Իսկ ոմանք համարելով միայն իբր այն, զի «պատճառէր հեռագոյն ուրեք երթալ»¹⁰⁴, իսկ ոմանք յերկոցունց կողմանց իբրեւ այն, թէ «ելանեմ առ Հայր իմ եւ առ Հայր ձեր»^{105»}¹⁰⁶, եւ եթէ՛ «Մտանէ թագաւոր փառաց»¹⁰⁷, եւ եթէ՛ «Նստաւ ընդ աշմէ մեծութեան ի բարձունս»¹⁰⁸, իսկ ոմանք իբրեւ զինքն ընդ մեզ կարգելով, տեսակաւ աղատ մտածութեամբ բաժանմամբ, իբր զայն, զի ասէ. «Առ Աստուած իմ եւ Աստուած ձեր»¹⁰⁹:

Եւ արդ պարտ է զբարձրագոյն բանսն¹¹⁰ ըստ աստուածային բնութեանն աստուածային եւ վերնական բնութեանն դնել Քրիստոսի¹¹¹, իսկ խոնարհագոյնսն ըստ մարդկային բնութեանն տալ նոյն Քրիստոսի¹¹², իսկ զհասարակաց բանք՝ ըստ խառնելոյն, այսինքն՝ նոյն միոյ Քրիստոսի, որ է Աստուած եւ մարդ, եւ¹¹³ մի եւ նմին¹¹⁴ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ճա-

¹⁰⁰ Մատթ. ԻԲ 9. «Եւ ահա պատահեաց նոցա Յիսուս եւ ասէ. Ողջ էք: Եւ նոքա մատուցեալ կալան զոտս նորա, եւ երկիր պագին նմա»:

¹⁰¹ Մատթ. ԻԲ 10. «Յայնժամ ասէ ցնոսա Յիսուս. Մի՛ երկնչիք, երթա՛յք ասացէք եղբարցն իմոց, զի երթիցեն ի Գալիլեա եւ անդ տեսցեն զիս»:

¹⁰² Ex. Fid. 91.135 + E՛

¹⁰³ C ճշտութեամբ

¹⁰⁴ Դով. ԻԳ 28. «Իբրեւ մերձեցան ի գեղն յոր երթային, եւ նա պատճառէր հեռագոյն եւս ուրեք երթալ»:

¹⁰⁵ Ex. Fid. 91.142 + καὶ θεὸν μου καὶ θεὸν ὑμῶν

¹⁰⁶ Յովհ. Ի 17. «Ելանեմ եւ առ Հայրն իմ եւ առ Հայր ձեր»:

¹⁰⁷ Սաղմ. ԻԳ 7. «մտցէ թագաւոր փառաց»:

¹⁰⁸ Եբր. Ա 3. «նստաւ ընդ աշմէ Մեծութեանն ի բարձունս»:

¹⁰⁹ Յովհ. Ի 17. «Ելանեմ եւ առ Հայրն իմ եւ առ Հայր ձեր»:

¹¹⁰ C չիք

¹¹¹ Ex. Fid. 91.146-147 παθὼν καὶ σώματος

¹¹² Ex. Fid. 91.147 չիք բնութեանն տալ նոյն Քրիստոսի

¹¹³ C + նոյն

¹¹⁴ E F նոյն

նաչել զերկուսն: Վասն զի իւրաքանչիւրոյն¹¹⁵ ինքնութիւն յատկութիւն զիտեմք եւ զերկուսն միովն կատարեալ տեսանեմք եւ իրաւապէս հաւատամք եւ ոչ մոլորիմք: Ամենեցուն յայնցանէ, յորոց կամ միատրութիւն կամ բաժանումն անձին եւ բնութիւն նանաչի, եւ եթէ «զի ոչ ի նոյն է», որպէս աստուածայինն Կիւրեղ ասէ, «յիմքնութիւն բնականացն աստուածային եւ մարդկային բնութիւնն»: Իսկ մի եւ նոյն է Քրիստոս Տէրն եւ իբրեւ զի միոյ գոյ, որ յինքն է անձն եւ դէմք, եւ ոչ իւրիք բաժանեալ գոլով յանձնական միութենէն, վասն ինքնութեանն բնութեանցն եւ բնական կրից¹¹⁶:

¹¹⁵ Շ իւրոյն

¹¹⁶ որ յինքն է անձն եւ դէմք, եւ ոչ իւրիք բաժանեալ գոլով յանձնական միութենէն, վասն ինքնութեանն բնութեանցն եւ բնական կրից // Ex. Fid. 91.154-156 καὶ ὡς ἐνὸς ὄντος ἐν αὐτοῦ καὶ τὸ πρόσωπον κατ' οὐδένα τρόπον διὰ τὴν ἐπίγνωσιν τῆς φυσικῆς διαφορᾶς μεριζομένης τῆς καθ' ὑπόστασιν ἐνώσεως

ՂԲ. Վասն¹ եթէ ոչ պատճառ² չարեաց է Աստուած³:

Ձայս գիտել պարտ էր, զի սովորութիւն է աստուածային գրոց, որպէս զի թոյլ տալն Աստուծոյ ներգործութիւն կոչէ իւր, որպէս այն զի ասէ առաքեալ ցնոմայեցիսն. «կամ թէ ոչ ունի իշխանութիւն բրտուն կաւուն, ի նմին զանգուածոյ առնել անաւթս՝ զոմն ի պատիւ եւ զոմն յանարգանս⁴»⁵: Իբր թէ ինքն ստեղծանէ⁶ զոսա եւ զնոսա, զի ինքն է արարիչ ամենայնի եւ զի նոյն է ստեղծիչ⁷, այլ ոչ զոմն ի պատիւ ստեղծեաց եւ զոմն ոչ, այլ իւրն յառաջընտրութիւն իւրաքանչիւրոյն⁸: Եւ այս յայտ յայնցանէ է⁹, զոր նոյն ինքն¹⁰ գրէ¹¹ առ Տիմոթէոս յերկրորդ թղթին, եթէ¹² «Ի տան մեծ են¹³ անաւթ արծաթեղէնք եւ ոսկեղէնք, նաեւ փայտից եւ քարանց¹⁴, խեցեղէնք՝ ոմն պատուական եւ ոմն անարգ գոլով: Որպէս թէ ոք արբեցէ զանձն իւր յայց ախտից¹⁵, լինիցի անաւթ պատուական՝ սրբեալ, բարոյ պիտանի արքայի¹⁶ պատրաստ գոլով յամենայն գործս բարութեան»¹⁷: Եւ այս յայտ է, թէ զի կամաւ իւր եղեւ սրբեալ: «Ձի եթէ», ասէ¹⁸, «ոք արբեցի զանձն իմ¹⁹», իսկ ներգործութիւն իւր

¹ B E F չէք

² E + է

³ Ex. Fid. 91.2 Ὅτι οὐκ ἔστι τῶν κακῶν αἴτιος ὁ θεός

⁴ E F անարգ

⁵ Հռովմ. Ե 21. «Եթէ ոչ ունիցի իշխանութիւն բրտուն կաւուն՝ ի նմին զանգուածոյ առնել անաւթ, զոմն ի պատիւ եւ զոմն յանարգանս»:

⁶ B C D ստեղծէ

⁷ զի ինքն է արարիչ ամենայնի եւ զի նոյն է ստեղծիչ // Ex. Fid. 92.6-7 μόνος γὰρ αὐτός ἐστι τῶν ἀπάντων δημιουργός

⁸ C իւրոյն

⁹ E F չէք

¹⁰ Ex. Fid. 92.8 ὁ αὐτὸς ἀπόστολος

¹¹ Ex. Fid. 92.9 φησιν

¹² C եւ թէ

¹³ Ex. Fid. 92.9-10 οὐκ ἔστι μόνον

¹⁴ Ex. Fid. 92.10 չէք

¹⁵ Ex. Fid. 92.11 չէք

¹⁶ Ex. Fid. 92.12 τῷ δεσπότῃ

¹⁷ Բ Տիմոթ. Բ 20-21. «Այլ ի տան մեծի ոչ միայն են անաւթ ոսկեղէնք եւ արծաթեղէնք, այլ եւ փայտեղէնք եւ խեցեղէնք. են որ ի պատուի են, եւ են որ յանարգութեան: Եթէ ոք արբեցէ զանձն իւր յայնպիսեաց անտի, եղիցի անաւթ պատուական, սրբեալ եւ պիտանի Տեառն իւրով յամենայն գործս բարութեան պատրաստեալ»:

¹⁸ C չէք

¹⁹ Ex. Fid. 92.14 ἐαυτόν

հակառակ գոյով ասելոյն, զոր ասէ²⁰: Զի եթէ գործով²¹ ոչ սրբէ զանձն, լինիցի անաւթ անարգ, անպիտան թագաւորի²² արժանի բեկանելոյ: Իսկ այն, զի ասէ, եթէ՝ «Արգել²³ Աստուած²⁴ զամենեսեսան ընդ անհնազանդութեամբ»²⁵, եւ եթէ՝ «Ետ նոցա²⁶ հոգի երկշտութեան, աշս²⁷ ոչ տեսանողս»²⁸, զայսոսիկ²⁹ ոչ որպէս յԱստուծոյ ներգործեալս այսպիսի ի միջի բերեալ եղեն³⁰, այլ իբրեւ թոյլ տալով Աստուծոյ եւ ելեալ իւրովն անձնիշխանութեամբ, զի ոչ բռնութեամբ ներգործող ստեղծեալ է մարդ³¹:

Եւ վասն այսորիկ զթոյլ տալն նորա³², իբր զայս, զի սա է, եթէ Տէր հատուցանէ շարիս³³, եւ ոչ՝ «գոյ շարիք մտեալ ի փաղափի, զոր ոչ արար Տէր»³⁴, եւ այսի³⁵ ոչ պատճառ շարեաց ասաց լինել Աստուած, այլ վասն զի երկուս դէմս ասելովն բան³⁶, երկուս նշանակէ գդէմս շարին եւ զանուն³⁷: Զի երբեմն գնոյն ինքն զբնութեամբ շար ինչ ցուցանէ, որ եւ հակառակ է առաքինութեան եւ կամացն Աստուծոյ, իսկ երբեմն զոր ի զգալիս մեր ցաւագնելի եւ շար թոյի, որք են ցաւ, վիշտ եւ փորձութիւնք: Եւ այսոքիկ ոչ բնութեամբ, այլ³⁸ զգայութեամբ են շար, իբրեւ պատճառս ցաւոց գոյով, իսկ ըստ բնութեան³⁹ բարի են, վասն զի դարձի եւ փրկութեան առիթ լինին որոց իմաստունք են, եւ գոսա յԱստուծոյ լեալ ասէ գիր:

²⁰ իսկ ներգործութիւն իւր հակառակ գոյով ասելոյն, զոր ասէ // Ex. Fid. 92.14-15 ή δὲ ἀκόλουθος ἀντιστροφὴ ἀντιφωνεῖ

²¹ Ex. Fid. 92.15 չիք

²² Ex. Fid. 92.15 τῷ δεσπότη

²³ Ex. Fid. 92.16 συνέκλεισεν // B անարգել

²⁴ F չիք

²⁵ Հոովմ. ԺԱ. 32. «արգել Աստուած զամենեսին յանհաւանութիւն»:

²⁶ Ex. Fid. 92.17 + ὁ θεός

²⁷ Ex. Fid. 92.18 ὁφθαλμοὺς // B C այս

²⁸ Ex. Fid. 92.18 + καὶ ὅτα τοῦ μὴ ἀκούειν | Հոովմ. ԺԱ. 9. «Ետ նոցա Աստուած հոգի յիմարութեան. աշս որով ոչ տեսանիցեն, եւ ականջս որով ոչ լսիցեն»:

²⁹ Ex. Fid. 92.18 + πάντα

³⁰ այսպիսի ի միջի բերեալ եղեն // Ex. Fid. 92.19 ἐκκληπτέον

³¹ զի ոչ բռնութեամբ ներգործող ստեղծեալ է մարդ // Ex. Fid. 92.20 καὶ τὸ ἀβίαστον εἶναι τὸ καλόν

³² Ex. Fid. 92.21-22 + ὡς ἐνέργειαν καὶ ποίησιν αὐτοῦ λέγειν σύνηθες τῇ θεῖᾳ γραφῇ

³³ Նսայի ԽԵ 7. «Եւ եմ որ առնեմ զխաղաղութիւն՝ եւ հաստատեմ զշար»:

³⁴ Ամովս Գ 6. «Եթէ իցե՞ն շարիք ի փաղափի՝ եւ Տեառն չիցէ արարեալ»:

³⁵ C այսոսի

³⁶ երկուս դէմս ասելովն բան // Ex. Fid. 92.24 δισέμφοτον τὸ τῆς κακίας ὄνομα

³⁷ Ex. Fid. 92.25 չիք գդէմս շարին եւ զանուն

³⁸ Ex. Fid. 92.27 չիք ոչ բնութեամբ, այլ

³⁹ F բնութեամբ Ex. Fid. 92.28 τῇ δὲ ἀληθείᾳ

Այլ զայս պարտ է գիտել, զի եւ սոցա պատճառ մեք եմք: Վասն զի կամաւոր չարեացն ծնունդք են ականաւ չարքն: Եւ զայս տե՛ս, զի սովորութիւն է գրոց, զի զպարզ ասելի ինչ բանս զոմանս իբրեւ զպատճառս իմիք գոլ ասէ, իբրեւ զայն, թէ՛ «Քեզ միայն մեղայ եւ չար առաջի քո արարի, որպէս արդար եղիցիս ի բանս քո եւ յաղթեսցես»⁴⁰ ի դատել քեզ»⁴¹: Զի ոչ յայն սակս մեղաւ, որ մեղան⁴², որպէս զի յաղթեսցէ Աստուած, եւ ոչ մերոց⁴³ մեղացն կարաւտէր Աստուած, զի նոքամ յաղթող երեւեսցի⁴⁴ (վասն զի անշափ եւ անսահման յաղթութիւն ունի եւ ի վերայ ոչ մեղուցելոցն, վասն զի արարիչ է անեղ եւ անպարագրելի բնութեամբ⁴⁵ եւ ոչ ստացական ունի փառս), այլ վասն զի մինչ մեղանչեմք մեք, ոչ անիրաւ ածէ զբարկութիւն ի վերայ մեր⁴⁶ եւ ի ձեռն ապաշխարութեան շնորհէ զթողութիւն եւ յաղթող երեւեսցի չարեացն մերոց: Իսկ մեք ոչ յայն սակս մեղաք, այլ զի այնպէս հաճոյ եղեւ մեզ, զոր արինակ՝ եթէ ոք յաշխատութիւն գործոյ կալով, եւ ապա բարեկամ եկն առ նա, եւ նա ասէ, իբրեւ զի մի աշխատիցեմ ես այսաւ, յայն սակս եկն բարեկամ իմ: Եւ արդ ոչ եթէ զի մի աշխատեսցի նա, յայն սակս եկն բարեկամն, այլ այնպէս դիպեցաւ: Իսկ նա անպարապ եղեալ վասն հիւրընկալութեան բարեկամին՝ ոչ կարաց գործել: Եւ կոչին այսպիսիքս պատահականք, վասն զի այսպէս պատահին գործք: Եւ⁴⁷ ոչ կամի Աստուած, զի ինքն միայն եղիցի արդար, այլ զի ամենեքին նմանեսցին նորա ըստ կարի իւրեանց:

⁴⁰ Ex. Fid. 92.35 νικήσῃς // F յաղթող

⁴¹ Սաղմ. Ծ 6. «Քեզ միայն մեղայ Տէր, եւ չար առաջի քո արարի: Որպէս արդար եղիցես ի բանս քո, եւ յաղթաւ ի դատել քեզ»:

⁴² C մեղաւոր մեղան

⁴³ E F մերոյ

⁴⁴ E երեւեսցէ

⁴⁵ E F չիք Ex. Fid. 92.38-39 καὶ ἄκτιστος καὶ φυσικὸν

⁴⁶ Ex. Fid. 92.40 չիք ի վերայ մեր

⁴⁷ F չիք

ԴԳ. Վասն զի ոչ գոյ երկու սկիզբն¹:

Եւ զի ոչ գոն երկու սկզբունմ² մի շար եւ միւս բարի, յայսմանէ գիտեմք, վասն զի հակառակ միմեանց են շար եւ բարի, եւ մին զմիւսն լուծանէ, եւ ամենայն, որ ի միոջ պարագրի, մի գոյ, եւ կամ բնաւ ոչ կալ ի մի ոչ միոցն³: Եւ արդ ուրեմն ի մի կողմ բաւանդակի³ բոլորովին եղիցի իւրաքանչիւրն: Եւ նախ պարագրեալն լինիցին ոչ ի բոլորէն միայն, այլ ի կողմանէ բոլորին իւրաքանչիւրն ի նոցանէ:

Եւ ո՞վ է որ իւրաքանչիւրոցն որոշեաց տեղին: Զի ոչ առ միմեանս հաշտ գոլ⁴ եւ միաբանեալ ի մի ասելի է, քանզի ոչ շար լինի շարն, եթէ խաղաղութիւն ստանայ յինքն եւ միաբանի ընդ բարի, նաեւ ոչ բարին եղիցի բարի, եթէ միատորի սիրով եւ կեցցէ ի շարի: Իսկ եթէ այլ ոք երեւեցոյց սահման իւրաքանչիւր նոցա, նա եղիցի Աստուած: Իսկ դժուարին է նոցա մի գոլ⁵:

Այլ կարեւոր է իւրաքանչիւր ումեք յերկոցունց ի նոցանէ, զի կամ⁶ մերձեցին յիրարս եւ ապականեալ լուծցեն զմիմեանս, եւ կամ եղիցի այլ ինչ ի միջի, որ ո՛չ շար է եւ ո՛չ բարի լինելով, եւ նովաւ իբրեւ զմիջնապարսպով բաժանեցին ի միմեանց, եւ ոչ երկու, այլ երիս լինելով սկզբունս:

Եւ կարեւոր է նոցա եւս, զի առ միմեանս կամ խաղաղութիւն ունել, եւ զայս շար ոչ կարէ (վասն զի խաղաղութիւն ունել ոչ շար է), եւ կամ պատերազմին, եւ այս ի բարոյ անկարելի է (զի պատերազմողն գոլ ոչ բնաւ բարի է), եւ կամ թէ զի շարն պատերազմի, եւ բարին ոչ պատերազմի ընդ նմա, այլ ինքն ի շարէն լուծանիցի եւ կամ միշտ տրտմեցի եւ շարացի, որ եւ այս ոչ է բարոյ ծանաթութիւն: Արդ մի է սկիզբն բարի յամենայն շարութենէ հետի գոլով:

Եւ արդ թէ այդպէս է, ասեն՝ ապա ուստի՞ է շար: Զի անհնար է, եթէ ի բարոյ ունիցի ի սկիզբն, լինել շար: Եւ մեք ասեմք, եթէ շար ոչ այլ ինչ է, այլ պակասութիւն բարոյ եւ ի բնականէն յոչ բնականն դառնալ, եւ զի ոչ ինչ շար է բնութեամբ: Զի ամենայն ինչ, զոր արար Աստուած, բարի էին յոյժ, ասէ

¹ Ex. Fid. 93.1 Ὅτι οὐ δύο ἀρχαί

² եւ ամենայն, որ ի միոջ պարագրի, մի գոյ, եւ կամ բնաւ ոչ կալ ի մի ոչ միոցն // Ex. Fid. 93.3-4 καὶ ἐν ἀλλήλοις ἢ σὺν ἀλλήλοις οὐχ ὑφιστάμενα

³ C E բովանդակի

⁴ Ex. Fid. 93.8 συνενεχθῆναι // C F հաշտ գոլով

⁵ Ex. Fid. 93.11 չիք իսկ դժուարին է նոցա մի գոլ

⁶ C թէ

գիր⁷: Եւ եթէ կացցեն այնպէս, որպէս ստեղծեցան, բարի են յոյժ, իսկ որք կամաւ թողուն զոր ըստ բնութեանն, եւ յայն, որ արտաբոյ բնութեանն⁸ ընթանան, ի շարի⁹ իմն լինին:

Եւ բնութեամբ ամենեւեան ծառայ եւ հնազանդ են արարչին: Իսկ յորժամ յեղելոցն ինչ կամաւ դառնայ եւ անհնազանդ լինի արարչին, յանձն իւր ինքն պատրաստեաց գշարութիւն: Զի շարութիւն կամատրական ինչ է¹⁰, որ եւ ոչ գոյական ինքնութիւն է, այլ պատահման, որ է ի բնականէն դառնալ¹¹ յարտաբոյ բնութեանն, այսինքն է մեղք:

Եւ¹² մեղք ինքնիշխան հանութեամբ գտանելի է ի սատանայէ: Չա՞ր է դէ: Այլ ոչ որպէս ստեղծեցաւ՝ ոչ շար, այլ բարի յոյժ: Վասն զի հրեշտակ լուսոյ եւ ճառագայթ պայծառ ստեղծաւ յարարչէն եւ ինքնիշխան՝ իբրեւ բանական, իսկ կամաւ հեռացաւ ի¹³ բնական առաքինութենէն եւ ի մութն¹⁴ շարութեան մտեալ եղեւ եւ հեռի անկանելով ի միայն բարոյն եւ ի լուսոյ արարչէն¹⁵, որով բարի լինին ամենայն բարիք, եւ որչափ հեռացաւ ի նմանէ հանոյութեամբ (եւ ոչ տեղեալ), այնչափ եղեւ շար:

⁷ Ասէ գիր // Ex. Fid. 93.26 καθὸ γέγονεν

⁸ F չիք եւ յայն, որ արտաբոյ բնութեանն

⁹ C շար

¹⁰ կամատրական ինչ է // Ex. Fid. 93.31-32 οὐσία τίς ἐστίν

¹¹ Ex. Fid. 93.33 ἐκούσιος παρατροπή

¹² Ex. Fid. 93.34 Πόθεν οὖν

¹³ F չիք բանական, իսկ կամաւ հեռացաւ ի

¹⁴ E մութն

¹⁵ Ex. Fid. 93.38 θεοῦ

**ԳԴ. Ընդէ՛ր զի կանխաւ գիտէր Աստուած զոմանս
մեղանշել եւ ոչ ապաշխարել, եւ¹ ստեղծ²:**

Յաղագս բարերարութեան իւր³ Աստուած յոչ գոյից ի գոյութիւն էած զամենայն գործս իւր եւ յառյապային գիտող է: Եւ արդ եթէ ոչ էին եկեալ ի գոյութիւն, ոչ չար էին լեալ⁴, վասն զի նախ լինելն է եւ ապա կամ բարի կամ չար լինել: Իսկ եթէ յաղագս բարերարութեան Աստուծոյ ի գոյութիւն եկեալքս կասկածելի էր, յետոյ ոմանց որ իւրեանց յառաջընտրութեամբն կամ էին չար լինել, արգելէին նոքա ի գոյանալոյ զէսս⁵, եւ յաղթէր չարն զբարերարութիւնն Աստուծոյ: Իսկ Աստուած բարի արար զամենայն, զոր արար: Իսկ իւրաքանչիւրն իւրով յառաջընտրութեամբն բարի կամ չար կամին լինել⁶: Եւ թէպէտ սասաց Տէրն. «լաւ էր մարդոյն այնմիկ⁷, թէ ոչ իսկ ծնեալ էր»⁸, ոչ զիւրն արարչութիւնն չար առնելով ասէր, այլ զոր նայն իւրովն յառաջընտրութեամբն եւ չարութեամբն⁹ ի վերայ ստեղծուածոյն իւր էած զչարութիւն: Զի իւրում հանութեանն թողութիւնն անպիտանացոյց յինքն զբարեգործութիւն արարչին, իբրեւ այն, զի յորժամ զմեծութիւն եւ զիշխանութիւն առնու ի թագաւորէն ոք, եւ դարձեալ բռնանայ ընդդէմ դառնալով բարեգործին, որ արժանապէս տանջի ի տոռոյէ բարւոյն, թէ մինչ ցվախճան մնասցէ¹⁰ բռնանալ:

¹ Ex. Fid. 94.2 μέλλοντας // B C E գնոսս

² Ex. Fid. 94.1-2 Τίνος ἔνεκεν προγινώσκων ὁ θεὸς τοὺς ἀμαρτάνειν καὶ μὴ μετανοεῖν μέλλοντας ἔκτισεν

³ C իւրոյ

⁴ = BDH // Ex. Fid. 94.5-6 + οὐδ' ἂν προεγινώσκοντο. Τῶν γὰρ ὄντων αἱ γνώσεις, καὶ τῶν πάντως ἐσομένων αἱ προγνώσεις

⁵ Հմմտ. Ex. Fid. 94.9 αὐτοὺς // C ի երեսս գոյանալոյ զէսս E F զերեսս

⁶ կամին լինել // Ex. Fid. 94.11 γίνεται

⁷ Ex. Fid. 94.12 ἐκεῖνο // B C այնորիկ

⁸ Մատթ. ԻԶ 24. «լաւ էր նմա, թէ չէր ծնեալ մարդն այն»:

⁹ Ex. Fid. 94.13 ῥαθυμίας

¹⁰ Ex. Fid. 94.18 κατίδοι τοῦτον ἐναπομένοντα

ՂԵ. Վասն արինացն Աստուծոյ եւ արինացն մեղաց¹:

Բարերար է Աստուած եւ առաւել բարի կամքն իւր, վասն զի այն է բարերարութիւն եւ բարի, զոր կամի² Աստուած: Իսկ արէնք կոչի³, որ զայս ուսուցանէ պատուիրան, որպէս զի ի նոսա կալով, ի լոյս պատուիրանի եղիցում: Իսկ այսու արինաւ անցանել մեղք են: Եւ այս մեղք բախմամբ դիւաց եւ անբռնադատաբար կամաւոր մեր ընդունելութեամբ առնու զկատար գործոյն եւ կոչի եւ նմա արէնք:

Իսկ եղանէն արէնք Աստուծոյ ի վերայ մտաց մերոց, եւ ձգէ զնա առ ինքն եւ խոցոտէ զխորհուրդս մեր: Եւ կոչին խորհուրդ մեր արէնք մտաց մերոց: Եւ բռնութիւն մեղացն⁴ չարին կոչին արէնք մեղացն, որ եղանէ յանդամս մարմնոց մերոց, եւ նովաւ դիմահար լինի մեզ մեղք: Վասն զի մինչ միանգամ անցանեմք⁵ զպատուիրանաւն Աստուծոյ, եւ զդիմահարեալ զբախումն չարին ընդունիմք, տուաք նմա զմուտն ի մեզ եւ յանձինս մեր բնակեցուցաք⁶ զմեղս: Եւ վասն այսորիկ փութապէս տարեալ լինին առ նա մարմինք մեր: Ասի եւ այն, որ եղեալ կայ ի մարմինս մեր շնչաւոր հոգի⁷ եւ զգայութիւն մեղաց, այսինքն է ցանկութիւն եւ տրփումն ախտից մարմնոյ արէնք անդամոց մերոց:

Այսպէս արէնք մտաց մերոց, որ է խորհուրդ, վկայէ⁸ արինացն Աստուծոյ, այսինքն՝ պատուիրանացն, եւ կամի զնա: Իսկ արէնք մեղացն, որ է բախումն չարին⁹, ի ձեռն արինաց անդամոց, որ է ցանկութիւն մարմնոյ, եւ շարժութեան եւ տեսութեան¹⁰ եւ անբանական մասին անձին, դիմամարտի արինաց մտացն հակառակել, այսինքն՝ խորհրդոյ, եւ այնու գերել զիս եւ զիս՝ զսիրողս եւ զկամեցողս արինացն Աստուծոյ եւ զոչ կամեցողս մեղաց¹¹ փափկութեամբ եւ դորկութեամբ, ցանկութեամբ համոց, ախտից մարմնոց,

¹ Ex. Fid. 95.1 Περί νόμου θεοῦ καὶ νόμου ἀμαρτίας

² Ex. Fid. 95.3 βούλεται // B C կամեցի

³ Ex. Fid. 95.3 ἐστιν

⁴ Ex. Fid. 95.10 *չիք*

⁵ Ex. Fid. 95.12 + ἐκουσίως

⁶ Cf. HK παραθέντες // Ex. Fid. 95.13-14 προθέντες

⁷ շնչաւոր հոգի // Ex. Fid. 95.15 ὁσμή

⁸ Ex. Fid. 95.18 συνήδεται

⁹ = EMN τοῦ διαβόλου // Ex. Fid. 95.20 *չիք*

¹⁰ Ex. Fid. 95.21 ῥοπή

¹¹ Ex. Fid. 95.24 + κατὰ ἀνάκρασιν

անբանական մասամբ անձին¹² խաբէ եւ հաւանեցուցանէ ծառայել մեղաց: Այլ «Աստուած զորս անհնար¹³ էր արինացն, որով տկարանայր մարմնով, առաքեաց զՌդի իւր ի նմանութիւն մարմնոյ մեղաց (եւ մարմին էառ, այլ զմեղս՝ ոչ բնաւ) եւ դատապարտեաց մարմնով զմեղս, որպէս զի զարդարութիւն արինացն կատարեսցէ, որք ոչ ըստ մարմնոյ գնան, այլ ըստ հոգւոյ»¹⁴: Վասն զի «հոգին աւգնական լինի տկարութեանս մերոյ»¹⁵ եւ շնորհէ զարութիւն արինաց մտաց մերոց, զի խորտակեսցէ զարէնս¹⁶ անդամոց մերոց: «Զի զոր աղաւթեմք, որպէս պարտ է ոչ գիտեմք, այլ Հոգին բարեխաւս լինի ի հեծութիւնս անմոռնչս»¹⁷, այսինքն՝ ուսուցանէ զմեզ, թէ զինչ պարտ է խնդրել: Վասն զի անհնար է առանց համբերութեան եւ աղաւթից առնել զպատուիրանս Աստուծոյ:

¹² Ex. Fid. 95.25 + ὥς ἔφη

¹³ B C անհնարին

¹⁴ Հռովմ. Ը 3-4. «Զի որ անհնարինն էր արինացն՝ որով տկարանայրն մարմնով. Աստուած զՌդին իւր առաքեաց ի նմանութիւն մարմնոյ մեղաց, եւ վասն մեղաց, եւ դատապարտեաց զմեղս ի մարմնի անդ, զի արդարութիւն արինացն կատարեսցի ի մեզ, որք ոչ ըստ մարմնոյ գնայցեմք՝ այլ ըստ հոգւոյն»:

¹⁵ Հռովմ. Ը 26. «Հոգին ի թիկունս հասանէ տկարութեանս մերում»:

¹⁶ զի խորտակեսցէ զարէնս // Ex. Fid. 95.32 κατὰ τοῦ νόμου

¹⁷ Հռովմ. Ը 26. «զի զոր կամքն յաղաւթս, որպէս արժան իցէ՝ ոչ գիտեմք. այլ ինքն Հոգին բարեխաւս լինի ի հեծութիւնս անմոռնչս»:

ՂԶ. Ի Բաղադրումն հրէիցն եւ վասն շաբաթուն¹:

Շաբաթ կոչի արն երթներորդ եւ յայտնէ հանգիստ անունն, զի ի նմա հանգեալ Աստուած յամենայն գործոց իւրոց, զոր սկսաւ առնել եւ արար²: Եւ վասն այսորիկ մինչեւ ցեւթն ելանեն թիւ ատուրց, դարձեալ դառնայ եւ յառաջնմէն սկսանի: ³Այս թիւ յոյժ պատուեալ գոյր առ հրեայքն⁴ հրամանաւն Աստուծոյ՝ ո՛չ իբրեւ զպատահեալ ինչ, այլ պատիժս մեծամեծս դնելով յանցուցելոցն⁵: Եւ ոչ լոկ հրամայեաց զսա, այլ խորհրդական իմն մեծ զգուշացուցանողս բազում ինչ հոգեւոր իմանալի տեսութեանց:

Եւ այսպէս մեզ⁶ իմանալի է, իբրեւ զի խոնարհագունից⁷ արարից սկիզբն բանից, գիտելով Աստուծոյ զբանձրութիւն եւ զմարմնասէրն զոլ ազգին հրէից եւ ամենեւին նիւթոց ծառայ գոյով եւ զանհանձնարութիւն նոցա: Եւ յայն սակս⁸ որպէս զի ծառայն եւ յաւանակն, եզն եւ ամենայն հասակ⁹ զի հանգիցեն¹⁰, որպէս գրեալ է, եթէ այր «արդար ողորմի գրաստու իւրոյ»¹¹, եւ որպէս զի պարապորդ լիցին այնք, որոց առ¹² նիւթս գոյր փոյթ, եւ առ Աստուած ժողովեցին եւ «սաղմոսիւք եւ երգովք հոգեւորաւք»¹³ յուսումն աստուածային գրոց ծախեսցեն զայն ար երթներորդ եւ ընդ Աստուծոյ հանգիցեն: Վասն զի յորժամ ոչ էին արեւնք եւ ոչ աստուածաշունչ գիրք, յայնժամ եւ ոչ շաբաթն տուեալ լինէր արեւնս լինել բաժին Աստուծոյ: Իսկ յորժամ աստուածախաւս գիրք ի ձեռն Մովսէսի տուան, յայնժամ ընծայեցաւ եւ շաբաթ, որպէս զի ի նմա զնոսա ուսանել պարապեցին, որք ոչ հաստատեցին զամենայն կեանս իւրեանց Աստուծոյ, որք ոչ կարատուութեամբ ծառայէին¹⁴ իբ-

¹ B F շաբաթու | Ex. Fid. 96.1 Κατὰ Ἰουδαίων περὶ τοῦ σαββάτου

² զոր սկսաւ առնել եւ արար // Ex. Fid. 96.3 ὥς φησιν ἡ γραφή

³ F + եւ

⁴ Ex. Fid. 96.5 παρὰ Ἰουδαίοις // B C D հերայեցիսն

⁵ F յանցուցանելոցն

⁶ Ex. Fid. 96.10 ἐμὲ... τὸν ἀμαθῆ

⁷ Ex. Fid. 96.10 + καὶ παχυτέρων

⁸ Եւ յայն սակս // Ex. Fid. 96.12 πρῶτον

⁹ յաւանակն, եզն եւ ամենայն հասակ // Ex. Fid. 96.13 τὸ ὑποζύγιον

¹⁰ Բ Օրին. Ե 14. «մի՛ գործեսցես ի նմա... եւ ծառայ՛ քո եւ աղախի՛ն քո. ե՛զն քո եւ էջ քո»:

¹¹ Առակ ԺԲ 10. «Արդար ողորմի՛ անասնոյ իւրում»:

¹² C որ ի ք/ւ որոց առ

¹³ Եփես. Ե 5. «խաւսել ի սիրտս ձեր սաղմոսիւք եւ արհնարեամբք, եւ երգովք հոգեւորաւք»:

¹⁴ Ex. Fid. 96.21 + τῷ δεσπότη

րեւ զհաւր, այլ իբրեւ զանիմաց ծառայս զփոքր ինչ եւ զնուագ մասն կենաց իւրոց Աստուծոյ առդրեցին, եւ զայս յերկեղէ, որ յանցուցանելոցն սպառնացեալ էր¹⁵ պատուհաս: Վասն զի «արդարոց արէնք¹⁶ ոչ գոյ, այլ ամենայն անիրաւաց¹⁷ է»¹⁸: Եւ արդ Մովսէս նախ քան զհառասուն ատուրս եւ դարձեալ այլ հառասուն ատուրս պահաւ աղաչէր զԱստուած¹⁹, ստոյգ եւ ի շաբաթսն աշխատեցուցանէր զանձն իւր պահաւ, եւ զայս զկնի հրամայելոյ արինացն, եթէ մի աշխատեւր զեղ ի շաբաթու: Եթէ ասիցեն նախ քան զարէնս այդ, զի՞նչ ասացեն եւ վասն Եղիայի Թէզբացոյ, որ զհառասուն արեալ նանապարհ գնաց միով կերակրով: Եւ սա ոչ պահի միայն, այլ եւ նանապարհորդութեամբ զհառասուն ատուրցն պատահեալ շաբաթսն լուծանէր, վասն որոյ ոչ բարկացեալ նմա տուողն արինացն, այլ իբրեւ զնահատակ²⁰ առաքինութեան ի Քորեբ յայտնեաց նմա զանձն իւր: Կամ զի՞նչ ասեն վասն Դանիէլի, ո՞չ երրորդ²¹ երթնեալս եկաց առանց կերակրոյ²²: Եւ զի՞նչ ասեն վասն ամենայն Իսրայէլի, ո՞չ ապաքին թլփատէին զմանկունս ի շաբաթու, եթէ պատահէր ուրերեակ գոլ²³: Այլ եւ մեծն պահի, որ յարինացն եղեալ էր, եթէ հասանէր ի շաբաթ, պահեալ լինէր²⁴: Կամ թէ ո՞չ քահանայք, ղետացիք ի գործս խորանին լուծանէին զշաբաթս եւ անմեղ²⁵ էին²⁶: Եւ անասուն թէ ի խորխորատ անկանէր ի շաբաթու, որ հանէր զնա, անմեղ էր, իսկ որ ոչն հանէր²⁷, դատապարտեալ լինէր: Եւ դարձեալ ո՞չ ամենայն Իսրայէլի զատուրս եւրն ընդ տապանակին Աստուծոյ շրջագայելով, կործանեցին զպարիսպն Երեմովի, յորում էր եւ շաբաթ ի նոսա:

Այսպէս որպէս ասացաք, առ Աստուած պարապորդ լինելոյ վասն մեր, զի մի թէ փոքր ինչ մասն ցուցանեն նմա եւ հանգիցեն ծառայ եւ եզն եւ էջ եւ

¹⁵ F սպառնա B C սպառնայր

¹⁶ C E արէնս

¹⁷ Ex. Fid. 96.25 ἀδίκους // B անիրաց

¹⁸ Ա. Տիմ. Ա. 9. «ի վերայ արդարոց արէնք ո՞չ կան, այլ ի վերայ անարինաց եւ անհնազանդից»:

¹⁹ Տէ՛ս Ելք ԻԳ 24, 18, ԼԳ 28:

²⁰ Ex. Fid. 96.33 ἐπαθλον

²¹ Ex. Fid. 96.34 τρεῖς

²² Տէ՛ս Դան. Ժ 2-3:

²³ Տէ՛ս Ղեւտ. ԺԲ 3:

²⁴ Տէ՛ս Ղեւտ. ԻԳ 27:

²⁵ C անմեղք

²⁶ Տէ՛ս Մատթ. ԺԲ 5:

²⁷ որ ոչն հանէր // Ex. Fid. 96.40 ὁ δὲ παριδὼν

ամենայն հասակ, եւ յայն սակս պահել զշաբաթ արինադրեցաւ տղայոցն, դեռ եւս եւ ընդ նիւթովք աշխարհի ծառայելոցն²⁸, որք էին բնաւ մարմին եւ ոչ ինչ առաւել քան զմարմին եւ զգիր իմանալ կարող էին: «Իսկ յորժամ եկն լրումն ժամանակին, առաքեաց Աստուած զՈրդին իւր միածին, որ եղել ի Կուսէ²⁹ մարդ եւ եմուտ ընդ արինաւ, զի զորս ընդ արինաւն էին, գնեցէ, զի զորդեգրութիւն ընկալցոյք»³⁰: Զի որք ընկալան զնա, ետ նոցա³¹ իշխանութիւն որդիս Աստուծոյ լինել, որոց հաւատան ի նա: Եւ վասն այսորիկ ոչ եմք ծառայ, այլ որդի, ոչ ընդ արինաւ, այլ ընդ շնորհաւ, ոչ մասամբ ինչ սպասաւոր գործ վասն նշանաց³², այլ զամենայն ժամանակս կենաց ընծայել նմա պարտական եմք, եւ ծառայ՝ ասեմ³³ զցանկութիւն եւ զստմտութիւն, որք միշտ հանգուցանեն զմեղս եւ բառնան ի բաց եւ առ Աստուած հրամայէին պարապել: Զցանկութիւն զամենայն³⁴ առ Աստուած բարձրացուցանելով, իսկ զստմտութիւն ընդդէմ հակառակացն Աստուծոյ սպառազինել եւ զէջ, որ են մարմինք, նոյնպէս ի ծառայութենէ³⁵ մեղաց հանգուցեն, իսկ զարէնս Աստուծոյ պատուել հրամայեն:

Զայս հրամայէ մեզ հոգեւոր արէնքն Քրիստոսի³⁶, եւ որք պահեցին զսոսա, վերագոյն եղեն քան Մովսէսի արէնքն: Վասն զի ի գալ կատարելոյն լուծաւ մասնաւորսն³⁷, եւ զծածկոյթ արինացն, որ է վարագոյր, խաչելութիւն Փրկչին հերձեաց³⁸, եւ Հոգւով սրբով եւ հրեղէն լեզուացն փայլատակմամբն գիրն լուծաւ եւ աներեւոյթ եղել, մարմնականքն ամենայն³⁹ դադարեցին, եւ արէնքն որ ծառայական էր, ի լրումն եկ, եւ արէնքն ազատութեան շնորհեցաւ մեզ: Եւ մեք տանեմք զկատարեալ հանգիստն մարդկային բնութեանս՝

²⁸ Գաղատ. Դ 3. «Նոյնպէս եւ մեք մինչ տղայքն էաք, ընդ տարերքք աշխարհիս ի ծառայութեան կայաք»:

²⁹ Ex. Fid. 96.49 γυναικός

³⁰ Գաղատ. Դ 4-5. «Այլ իբրեւ եկն լրումն ժամանակին, առաքեաց Աստուած զՈրդին իւր, որ եղել ի կնոջ, եւ եմուտ ընդ արինաւ, զի զնոսա որ ընդ արինաւն իցեն, գնեցէ. զի մեք զորդեգրութիւն ընկալցոյք»:

³¹ ընկալան... նոցա // Ex. Fid. 96.50-51 ἐλάβομεν... ἡμῖν

³² վասն նշանաց // Ex. Fid. 96.53 ἐκ φόβου

³³ Ը ասեմք

³⁴ = IL // Ex. Fid. 96.56 + ἀεὶ

³⁵ Ը ծառայութենէն

³⁶ = bMN Χριστοῦ // Ex. Fid. 96.60 τοῦ κυρίου

³⁷ Տէ՛ս Ա. Կորնթ. ԺԳ 10. «Այլ յորժամ եկեացէ կատարումն, փոքր ի շատէս խափանեցիք»:

³⁸ Բ պատառեաց

³⁹ Ex. Fid. 96.65 *չիք*

զարն ասեմ կենդանարար⁴⁰ յարութեանն, յորում Տէրն Յիսուս, որ է սկիզբն կենաց եւ Փրկիչ, եմոյծ զմեզ ի խոստացեալ⁴¹ ժառանգութիւնն, յորս ինքն եմուտ յառաջընթաց մեզ լինելով, մինչ յարեալ ի մեռելոց, եւ բանալով նմա դրոնքն երկնից, ընդ աջմէ Հաւր նստաւ մարմնապէս, ուր եւ մտանեն ստուգութեամբ որք պահողք լինին հոգեւոր արինաց նորա:

Վասն այսորիկ մեզ, որ Հոգայն եւ ոչ գրոյն եմք հետեւեալ, զամենայն մարմնականս ի բաց ընկենելով, եւ զհոգեւոր պաշտաւնն եւ ընդ Աստուծոյ միաւորութիւն, երանելին եւ փութալին է զշաբաթապահութիւն⁴²: Իսկ թլփատութիւն է մարմնական ախտից, այլ աւելորդացն եւ ոչ կարեւորացն ի բաց ձգումն, եւ զի թլփատութիւն այլ ոչ ինչ է, բայց միայն մոռթ աւելորդ ցանկական անդամոյն: Իսկ ամենայն ցանկութիւն, որ ոչ յԱստուծոյ⁴³ եւ առ Աստուած լինիցի, աւելորդ է, եւ մարմնոյ ախտք, զոր ընկենուլ արինակ է թլփատութիւնն: Իսկ շաբաթ է դադարումն ի մեղաց: Եւ յորժամ եղիցին միանգամայն երկոյնեանն, եւ այսպէս հոգեւոր արինացն հետեւին երկունքն, ոչ եւս յայնմհետէ եւ ոչ փոքր ինչ յանձն առնուն գործել զմեղս:

Եւ դարձեալ գիտեա՛, եթէ թիւ երթեանցն զամենայն⁴⁴ ժամանակս նշանակէ, որպէս ասէ Սողոմոն իմաստուն, եթէ՝ «տուր բաժին երթանց եւ ուրից»⁴⁵: Եւ աստուածախաւան Դաւիթ, մինչ զուրբերորդաց երգէր Սաղմոս⁴⁶, զայն, որ զկնի յարութեան մեռելոցն հանդերձեալ լինելոց հանդարտութիւն երգէ: Այսպէս եւ երթներորդ ար զպարապոյթիւն գործէ ի ձեռն շաբաթապահութեան⁴⁷, իսկ որք հոգեւորացն են հետեւեալք եւ ճշմարիտ Իսրայել են, որ է միտք տեսանողաց Աստուծոյ, նոցա հրամայէ հոգեւոր արէնք, որպէս զի բովանդակ զանձն իւր ընծայեսցէ Աստուծոյ, իւրայովքն հանդերձ⁴⁸ եւ ի վեր բան զմարմին եւ զմարմնոյ⁴⁹ լինիցի:

⁴⁰ Ex. Fid. 96.67 չիք

⁴¹ Ex. Fid. 96.67 + τοῖς πνευματικῶς τῷ θεῷ λατρεύουσι

⁴² Ex. Fid. 96.75 չիք երանելին եւ փութալին է զշաբաթապահութիւն

⁴³ Ex. Fid. 96.77 ἐκ θεοῦ // B E F Աստուծով

⁴⁴ Ex. Fid. 96.82 + τὸν παρόντα

⁴⁵ Ժող. ԺԱ 2. «Տո՛ւր բաժինս երթանց, այլ եւ ուրից»:

⁴⁶ Սաղմ. Զ 1. «Ի կատարած ընդ արհնութիւնս վասն Որբերորդաց»:

⁴⁷ B չիք ի ձեռն շաբաթապահութեան // Ex. Fid. 96.86 ἐκ τῶν σωματικῶν

⁴⁸ Ex. Fid. 96.88 չիք իւրայովքն հանդերձ

⁴⁹ Ex. Fid. 96.89 չիք եւ զմարմնոյ

ՂԷ. Վասն կուսութեան¹:

Հայհոյեն մարմնաւորք գկուսութիւն եւ կամաւորական առնուն իւրեանք զցանկութիւն վկաբերել զայս, թէ՝ «անիծեալ է որ ոչ յարուցէ զաւակ յԻսրայէլ»²: Այլ մեք ասեմք վստահանալով յայն, որ մարմնացաւ³ ի Կուսէն Բանն Աստուած, եթէ կուսութիւն ի վերուստ ի սկզբանէ տնկեցաւ ի բնութիւն մարդկան: Վասն զի ի կուսէ հոդոյ ստեղծաւ մարդ, եւ ի կուսէ⁴ միայն յԱդամայ շինեցաւ Եւայ, եւ ի դրախտին կուսութիւն⁵ Բաղաբաւարէր: Վասն զի ասէ⁶ զիր, եթէ՝ «մերկ էին Ադամ եւ Եւայ եւ ոչ ամաշէին»⁷: Իսկ յորժամ յանցեան, ծանեան, եթէ մերկ են, եւ ամաշեցեալ կարեցին իւրեանց սփածանելիս⁸: Եւ յետ յանցանացն մինչ լուաւ, եթէ «հող ես եւ ի հող դարձցիս»⁹, եւ մահ եմուտ յաշխարհ, յանժամ գիտաց¹⁰ զկիսն եւ յղացաւ եւ ծնաւ¹¹, որպէս զի մի ջնջեցի ազգ մարդոյ յերկրէ ի մահուանէ. յայն սակս գիտացեալ եղեւ ամուսնութիւն, եւ զի անմահիցն լինելն ի կուսէ եւ կոյս, ի կուսէ ելին մարդիկ: Իսկ ի մահ մատնիլն լինելով ցաւաւ եւ ապականութեամբ, յամուսնութենէ կարգեցան ծնանիլ¹², որպէս զի որդեծնութեամբ անհատ կացցէ մարդկային ազգ:

Եւ եթէ դիմաբանեն, եթէ զի՞նչ կամէր արու եւ էգ ստեղծանել նախագոյն եւ ասել¹³, թէ՝ «անեցեք եւ բազմացարուք», առ որս ասեմք, թէ ասելն «անեցեք եւ բազմացարուք» ոչ ճշգրտիւ զամուսնութեամբ միատրեղով ծնանելն յայտ առնէր: Վասն զի կարող էր Աստուած եւ այլու¹⁴ արհմակաւ բազմացուցաւ

¹ Ex. Fid. 97.1 Περὶ παρθενίας

² Հմմտ. Բ Աւրէնք Ի Ե 9:

³ C F մարդացաւ

⁴ F երկուսէ փ/ս ի կուսէ Ex. Fid. 97.6 չ/ք

⁵ Ex. Fid. 97.7 ἐν παραδείσῳ παρθενία // C ի դրախտէն կուսութեամբ B ի դրախտէն կուսութիւն

⁶ Ex. Fid. 97.8 + θεία

⁷ Ծննդոց Բ 25. «Եւ էին երկոքեան մերկ՝ Ադամ եւ կին իւր, եւ ոչ ամաշէին»:

⁸ Ծննդոց Գ 7. «Եւ գիտացին, զի մերկ էին. եւ կարեցին տերեւ թզնուոյ, եւ արարին իւրեանց սփածանելիս»:

⁹ Ծննդոց Գ 19:

¹⁰ Ex. Fid. 97.12 + Ἀδὰμ Εὖαν

¹¹ Ծննդոց Գ 1. «Եմուտ Ադամ առ Եւայ կին իւր, եւ յղացաւ եւ ծնաւ զԿային»:

¹² Ex. Fid. 97.14 չ/ք եւ զի անմահիցն լինելն ի կուսէ եւ կոյս, ի կուսէ ելին մարդիկ: Իսկ ի մահ մատնիլն լինելով ցաւաւ եւ ապականութեամբ, յամուսնութենէ կարգեցան ծնանիլ

¹³ ստեղծանել նախագոյն եւ ասել // Ex. Fid. 97.16 βούλεται καὶ τὸ

¹⁴ E F այլ

զմարդիկ¹⁵, եթէ անշարժ պահեալ էին զպատուիրանն մինչեւ ի սպառ: Այլ գիտէր Աստուած իւրովն կանխագիտութեամբն, վասն զի «գիտէ զամենայն յառաջ քան զլինելն իւրեանց»¹⁶, եթէ կայ մնայ նոցա յանցատուր լինել եւ ի ման մատնել, վասն այսորիկ¹⁷ արու եւ էգ ստեղծեաց¹⁸ զնոսա եւ անելոյ եւ բազմանալոյ հրաման ետ: Այլ մեք զհետ պատմութեան ընթացցով եւ տեսցով զպարծանս կուտութեան, սոյն եւ ասել, եթէ եւ անբծութեան:

Զնոյ, որ ի տապանն¹⁹ մտանել տայր հրաման եւ ազգատոհմ աշխարհի պահել հաւատացուցաներ, այսպէս ասէ. «մուտ ի տապանն²⁰ դու եւ որդիք քո եւ կին քո²¹ եւ կանայք որդոց քոց»²², եւ բաժանեաց զնոսա ի կանանց, որպէս զի անբծութեամբ անցցեն²³ զհամաշխարհական նաւակոծութիւնն: Եւ վասն այսորիկ յետ դադարելոյ նորա²⁴, «ե՛լ», ասէ, «դու եւ կին քո եւ որդիք քո եւ կանայք որդոց քոց»²⁵ եւ դարձեալ բազմանալոյ աղագաւ թողացոյց ամուսնանալ: Իսկ ի տապանն ոչ բնաւ²⁶: Եւ զկնի այսորիկ եղիա, որ հրեղէն կառաւ յերկինս վերանալոյ արժանի եղել²⁷, ո՛չ զկուտութիւն բնակեցոյց յանձն իւր, որով եւ վերագոյն քան²⁸ զմարդ լինել վկայեցաւ²⁹ ամենայնիւ³⁰: Ո՞վ փակեաց զերկինս³¹, ո՞վ յարոյց զմեռեալս³², ո՞վ հերձեաց զՅորդանան³³, ո՛չ եղիայի կուտութեամբ սնեալ գոլով³⁴: Իսկ եղիսէ աշակերտ նորա ո՛չ հա-

¹⁵ Ex. Fid. 97.19 τὸ γένος

¹⁶ Դան. ԺԳ 42. «գիտես զամենայն յառաջ քան զլինել նոցա»:

¹⁷ Ex. Fid. 97.22 + προλαβὼν

¹⁸ C արար

¹⁹ F տապանակն

²⁰ F տապանակն

²¹ C չիք եւ կին քո

²² Ծննդոց Զ 18. «Եւ մտցես ի տապանն. դու եւ որդիք քո, եւ կին քո, եւ կանայք որդոց քոց ընդ քեզ»:

²³ = DEGHMN // Ex. Fid. 97.28 + τὸ πέλαγος καὶ

²⁴ Ex. Fid. 97.30 τοῦ κατακλυσμοῦ

²⁵ Ծննդոց Ը 16. «Ե՛լ ի տապանէ այտի, դու եւ որդիք քո, եւ կին քո, եւ կանայք որդոց քոց ընդ քեզ»:

²⁶ Ex. Fid. 97.33 չիք Իսկ ի տապանն ոչ բնաւ

²⁷ Դ Թագ. Բ 11:

²⁸ C քան զվերագոյն չիք եւ վերագոյն քան

²⁹ Տէ՛ս Գ Թագ. ԺԷ 6:

³⁰ Ex. Fid. 97.34 μετεωρίσµατι

³¹ Տէ՛ս Գ Թագ. ԺԷ 1:

³² Տէ՛ս Գ Թագ. ԺԷ 19-22:

³³ Տէ՛ս Գ Թագ. Բ 8:

³⁴ Եղիայի կուտութեամբ սնեալ գոլով // Ex. Fid. 97.36 ὁ παρθένος Ἥλίας

ւասար սորա գառափնութիւն ստանալով՝ զկուսութիւն³⁵, կրկին զշնորհս հոգւոյն ժառանգեաց խնդրելով: Այլ զի՞նչ երեւ մանկունմն. ո՞չ կուսութեան լինել ճգնաւորք եւ ստացող³⁶ եւ վերագոյն քան զհօրն հնոցին³⁷ եղեն, որպէս ի կուսութենէ շիշաւ մարմնոց նոցա, որ սաստկապէս վառէր կուսութեան հօրն նոցա³⁸: Ո՞չ եւս Դանիէլի կուսութեամբ սեռեալ մարմին անմեռնեալի մնացին ի գազանացն ժանեաց: Եւ Աստուած մինչ կամէր երեւել Իսրայէլի, սրբութիւն զայն պատուիրեաց՝ ոչ մեռնեալ ի կանայս³⁹, եւ քանակաւն աշակաւ սրբէին զանձինս⁴⁰ եւ ապա մտանէին յանմտանելիսն եւ զընծայս մատուցանէին: Եւ արեւմն⁴¹ աշս սրբութեամբ կարգեցաւ կատարել զմեծն զայն աղաթք գառնիւն: Եւ այս ամենայն արիւնակ կուսութեան էին⁴²:

Եւ արդ պարտ է հոգեպէս առնուլ զարիւնաւորն հրաման: Վասն զի է հոգեւոր սերմ եւ զաւակ այն, որ սիրովն եւ երկիրովն Աստուծոյ յղացեալ լինի ի հոգեւոր յորովայնի, որ երկնէ եւ ծնանի զհոգի փրկութեան: Եւ այսպէս բերեալ իմաստիցս⁴³ զայն, որ ասէ, եթէ՝ «Երանի՛, որ ունիցի սերմն ի Սիոն եւ զաւակ յերուսաղէմ»⁴⁴: Վասն զի զիս՞րոյ է բանդ, թէպէտ եւ պոռնիկ իցէ կամ շնացող կամ արբեցող կամ կոպարիշտ՝ երանելի⁴⁵, թէ միայն⁴⁶ զաւակ ունի յերուսաղէմ: Ոչ բնաւ⁴⁷: Ոչ ոք ի բարեմտաց ասէ զայս այսպէս⁴⁸:

Կուսութիւն եւ հրեշտակաց է քաղաքավարութիւն եւ ամենայն անմարմնոց⁴⁹ ասէ⁵⁰ ինքնութիւն: Իսկ զայս ասելով ոչ քամահեմք զամուսնութիւն, քան լիցի: (Զի գիտէ⁵¹ Տէրն ի կենդանարար⁵² իւր գալուստն արհմեաց զհարսա-

³⁵ Ex. Fid. 97.37 չիք

³⁶ Ex. Fid. 97.38 չիք եւ ստացողք

³⁷ Ex. Fid. 97.38 չիք

³⁸ Տես՝ Դան. Գ 20, 92, 94:

³⁹ սրբութիւն զայն պատուիրեաց՝ ոչ մեռնեալ ի կանայս // Ex. Fid. 97.42 ἀγνίξειν τὸ σῶμα προσητάτεν

⁴⁰ F զանձին

⁴¹ B անօրէնմն հմմտ. Ex. Fid. 97.43 Οὐχ ὁ νόμος

⁴² Ex. Fid. 97.44 չիք գառնիւն: Եւ այս ամենայն արիւնակ կուսութեան էին

⁴³ C իմաստիս

⁴⁴ Եւ. ԼԱ 9. «Այսպէս ասէ Տէր. Երանի՛ որ ունիցի զաւակ ի Սիովն, եւ ընտանեակք իցեն նորա յերուսաղէմ»:

⁴⁵ F երանի

⁴⁶ Ex. Fid. 97.50 + σπέρμα ἐν Σιών

⁴⁷ Ex. Fid. 97.51 չիք Ոչ բնաւ

⁴⁸ Ex. Fid. 97.51 չիք

⁴⁹ F մարմնոց Ex. Fid. 97.52 πάσης ἀσωμάτου φύσεως

⁵⁰ B սա է Ex. Fid. 97.52 չիք

⁵¹ Ex. Fid. 97.53-54 οἶδαμεν

⁵² Ex. Fid. 97.54 չիք

նիսն⁵³ եւ զայն, որ ասէ, եթէ «պատուական է հարսանիքն, եւ սուրբ են անկողինքն նոցա»⁵⁴), այլ քան զնորայն բարի գոյ լաւագոյն գտանի կուսութիւն: Վասն զի յառաքինութիւնսն գոյ լաւութիւն եւ վատթարութիւն, նոյնպէս եւ յանգագաստութիւն գոն մեծ եւ փոքր⁵⁵: Եւ զայս գիտեմք⁵⁶, զի ամուսնութեան թոռունք են ամենայն մարդիկ՝ ազգացն նահապետաց⁵⁷, զի նոքա կուսութեամբ եւ ոչ⁵⁸ ամուսնութեամբ եկին յետիւն: Այլ կուսութիւն հրեշտակաց նմանութիւն է, որպէս ասացաք⁵⁹, եւ որչափ հրեշտակ քան զմարդ վերագոյն է, այնչափ կուսութիւն քան զամուսնութիւն վերագոյն է: Եւ ընդէ՞ր ասեմ հրեշտակ: Զինքն⁶⁰ գերիստոս գիտեմք պարծանք կուսութեան, որ ոչ ի Հարէ միայն անսկիզբն եւ անախտ ծնեալ, այլ զի եւ յորժամ մարդ եղև իբրեւ զմեզ, ի վեր քան զմեզ առանց սերման մարմնացաւ ի Կուսէն եւ ինքն անձամբ իւրով եցոյց ճշմարիտ եւ ամենակատարեալ գոյ⁶¹ զկուսութիւնն: Վասն այսորիկ ոչ արինադրեաց զսա մեզ, զի «ոչ ամենեքին բաւական են այդմ բանի», որպէս ինքն ասէ, իսկ գործովք ուսոյց զմեզ եւ զարացոյց առ սա: Վասն զի ո՞ւմ ոչ յայտնի է այս, զի յոյժ քաղաքավարի ի մէջ մարդկան կուսութիւն:

Բարոյն է որդեծնութիւն, որոյ⁶² պատճառ եւ սկիզբն ամուսնութիւն է, եւ բարի է ամուսնութիւն, իբր հատանող գոյ պոռնկութեան եւ կարգաւորութեամբ արինաւոր մերձաւորութեամբն ոչ թողացուցանող անկանել յանաւրէն խառնակութիւնս: Բարի է ամուսնութիւն այնպիսեացն, որ ոչ կարեն⁶³ պահել զկուսութիւն, այլ լաւագոյն է կուսութիւն՝ որպէս որդեծնութիւն հոգեւոր անեցուցանող եւ զպտուղ իւր ի ժամու՝ զաղալթսն ընծայէ Աստուծոյ: «Պատուական է ամուսնութիւն, եւ սուրբ են անկողինքն, այլ զշունս եւ զպոռնիկս դատէ Աստուած⁶⁴»⁶⁵:

⁵³ Յովն. Բ 1:

⁵⁴ Եբր. ԺԳ 4. «Պատուական է ամուսնութիւն ամենեւին, եւ սուրբ անկողինքն»:

⁵⁵ Ex. Fid. 97.57 չիք գոն մեծ եւ փոքր

⁵⁶ Ex. Fid. 97.57 Γινώσκωμεν // B E գիտեմք

⁵⁷ ազգացն նահապետաց // Ex. Fid. 97.58 μετὰ τοὺς τοῦ γένους ἀρχηγέτας

⁵⁸ Ex. Fid. 97.59 οὐ // B E չիք

⁵⁹ = CEGHMN ἀλλ' ἀγγέλων ἔστι, ὡς ἔφημεν, μίμημα // Ex. Fid. 97.59 չիք

⁶⁰ C F զի ինքն

⁶¹ C գոյով

⁶² F որով

⁶³ B C E կարող են

⁶⁴ Ex. Fid. 97.74 θεός // B C տէր

⁶⁵ Եբր. ԺԳ 4. «Պատուական է ամուսնութիւն ամենեւին, եւ սուրբ անկողինքն. բայց զշունս եւ զպոռնիկս դատի Աստուած»:

ՂԸ. Վասն թլփատութեան¹:

Թլփատութիւն յառաջ քան զարէնս տուաւ Աբրահամու յետ հաւատաւոյն եւ յետ արհնութեան եւ յետ խոստմանն. եւ էր նշան առ ի բաժանել զինքն եւ զընդոծինս իւր ի հեթանոսաց, յորոց միջի բնակէր: Եւ այս յայնմանէ յայտ է, զի, յորժամ յանապատին Իսրայել² առանձին շրջէր զամս քառասուն, ոչ խառնակ գոլ ընդ այլ ազգս, որ այնմ անապատին ծնան, ոչ թլփատեցին զնոսա: Իսկ յորժամ անցոյց զնոսա Յետու ընդ Յորդանան, յայնժամ թլփատեցին զնոսա, եւ եղեւ երկրորդ արէնք թլփատութեան: Վասն զի Աբրահամաւ արինադրեցաւ արէնք թլփատութեան, եւ դարձեալ դադարեաց յանապատին զքառասուն ամ առ Մովսէսի³, եւ ապա երկրորդ անգամ ետ Աստուած Յետուա զնա⁴ զկնի անցանելոյ⁵ ընդ Յորդանան, որպէս գրեալ ի գիրս Յետուայ. «Զի յայնժամ ասէ⁶ Տէր ցՅետու. արա քեզ դանակս ի քարից անհատից եւ նստեալ թլփատէ զորդիսն Իսրայելի յերկրորդ»⁷: Եւ փոքր մի յետոյ ասէ, եթէ՝ «Զքառասուն եւ երկու ամ շրջէր Իսրայել յանապատի ի Վատթարոյ⁸ եւ վասն այսորիկ անթլփատեալ եղեն⁹ ի նոցանէ¹⁰ պատերազմողք, որք ելեալ¹¹ էին յերկրէն յեգիպտոսի, որք անհաւատք¹² էին պատուիրանացն Աստուծոյ, որոց սահման եղ ոչ տեսանել նոցա¹³ զերկիրն աւետեաց, զոր երդուաւ Աստուած¹⁴ տալ հարցն մերոց՝ երկիր, որ բոլսէ զկաթն եւ զմեղր: Իսկ փոխանակ նոցա էարկ զորդիսն նոցա, զորս թլփատեաց Յետու, վասն զի ոչ

¹ Ex. Fid. 98.1 Περι τῆς περιτομῆς

² E Իսրայելի

³ Ex. Fid. 98.9 *չիք* առ Մովսէսի

⁴ Ex. Fid. 98.10 νόμον περιτομῆς

⁵ C անցելոյն

⁶ C ասէր

⁷ Յետու Ե 2. «Ընդ այնու ժամանակաւ ասէ Տէր ցՅետու. Արա դու քեզ սուր ի գայլախազ վիմէ եւ նստեալ թլփատեսցես զորդիսն Իսրայելի կրկնակի»:

⁸ B Վատթարոյ Ex. Fid. 98.15 τῇ Βατταρίτιδι

⁹ B C D էին

¹⁰ ի նոցանէ // Ex. Fid. 98.16 οἱ πλεῖστοι

¹¹ F եղեալ

¹² C անհաւատք

¹³ C *չիք*

¹⁴ Ex. Fid. 98.18 κύριος

թվատեղին նո՛ւա ի ճանապարհին^{15»16}: Եւ յասմանէ յայտ է, թէ նշան էր թվատութիւնն, որ բաժանէր զԻսրայել ի հեթանոսացն, ընդ որոց¹⁷ շրջէին:

Այլ եւ արիմակ էր մկրտութեան: Եւ որպէս այն, զի թվատութիւն ոչ զպիտանի ինչ անդամ հատանէ զմարմնոյն, այլ զաւելորդ եւ զանպէտ, նոյնպէս եւ ի ձեռն մրկտութեան հատանի ի մէնջ մեղք: Իսկ մեղք¹⁸ յայտ է, եթէ աւելորդ է ցանկութեանց եւ ոչ պիտանի ցանկութիւն է (վասն զի ոչ է կարողութիւն, իբր զի ոչ ինչ ցանկասցի մարդ եւ հատանի ցանկական մարդոյն մկրտութեամբն¹⁹, եւ ամենեւին ոչ հեշտանալ յախտիցն լինել), այլ անպէտ հեշտութեան, որ են արտափոյ պիտոյից հեշտութիւն²⁰ ցանկութեանց, այլ որ կոչին մեղք, զորոյ թվատութիւն առնէ մկրտութիւն, տալով մեզ նշան՝ զպատուական խաչն ի վերայ նակատոց՝ ոչ ի հեթանոսաց բաժանելով զմեզ (զի ամենայն հեթանոսք հանդիպեալ սրբեցան մկրտութեամբն եւ նշանաւ խաչին դրոշմեալ են), այլ ի մէջ հեթանոսաց բաժանող գոլով հաւատացելոյն յանհատէն: Եւ արդ ի ծագել ճշմարտութեանն անպիտան եղեն ստուերք եւ արիմակք, եւ վասն այսորիկ անպիտան եւ աւելորդ է թվատել, հակառակ գոլ սուրբ մկրտութեանն: Վասն զի որ թվատի, պարտական է զամենայն արէնս կատարել²¹, եւ Տէրն, որպէս զի լցցէ զարէնս, յայն սակս թվատեցաւ եւ զամենայն արէնս եւ զշաբաթս պահեաց, որպէս զի կատարեացէ եւ դադարեցուցէ²² զարէնս²³: Իսկ յորմէ հետէ մկրտեցաւ, եւ զՀոգին Սուրբ տեսին մարդիկ, իբրեւ զաղանի իջանելով ի վերայ նորա, յայնմ հետէ հոգեւոր պաշտան եւ փառաբալարութիւն եւ արքայութիւն երկնից փարոզի:

¹⁵ C ի ճանապարհին նո՛ւա

¹⁶ Յեսու Ե 6-7. «Քանզի զփառասուն եւ զերկուս ամս շրջեցաւ Իսրայել յանապատին Աբդարեայ. վասն որոյ անթվատք էին բազումք ի պատերազմողացն ելելոց յերկրէն Եգիպտացոց՝ որք անհնազանդեցան պատուիրանացն Աստուծոյ: Որոց եւ սահմանեաց Տէր շտեսանել զերկիրն զոր երդուաւ հարցն նոցա տալ նոցա. զերկիր՝ որ բոխէ զկաթն եւ զմեղք: Եւ փոխանակ նոցա տարաւ զորդիս նոցա՝ զոր թվատեաց Յեսու. քանզի անթվատք էին. վասն լինելոյ նոցա անթվատս ի ճանապարհին»:

¹⁷ E որ ոչ

¹⁸ E մեղ

¹⁹ Ex. Fid. 98.27 չիք

²⁰ B E հեշտութիւնք

²¹ Պաղատ. Ե 3. «Վկայեմ ամենայն մարդոյ, որ թվատիցի, թէ պարտական է զամենայն արէնսն կատարել»:

²² C դադարեացէ Ex. Fid. 98.37 στήσι

²³ Հմմտ. Մատթ. Ե 17. «Մի՛ համարիք, եթէ եկի լուծանել զարէնս կամ զմարգարէս. ոչ եկի լուծանել, այլ լնուլ»:

ՂԹ. Վասն անդիփոխտոսի, որ է Նեոն¹:

Եւ զի այսու պատճառանաւ² հարկ եղեւ գալ Նեոնին, որ կոչեցեալ է անդիփոխտոս, վասն զի ամենայն, որ ոչ հաւատայ յորդի Աստուծոյ եւ յԱստուած եկեալ մարմնով, զնա գոլ Աստուած կատարեալ եւ եղեալ մարդ կատարեալ, Աստուած կալով եւ մնալով, նա իսկ է Նեոն: Այլ առանձին եւ նոյն ինքն Նեոն կոչի այն, որ ի կատարածի այսու կենցաղոյս գալոց է, վասն զի պարտ է նախ Աւետարանիս փարոզել ընդ ամենայն հեթանոսս, որպէս ասաց Տէրն³, եւ ապա յայնժամ եղիցի գալուստ նորա ի յանդիմանութիւն աստուածամարտ հրէիցն: Վասն զի ասէր Տէր, եթէ. «Ես եկի յանուն Հաւ իմոյ, եւ ոչ ընկալայք զիս: Գայ այլ ո՞ք իւր անուն, եւ զնա ընդունիջիք»⁴: Եւ առաքեալ ասէ. «Վասն զի զսէր ճշմարտութեան ոչ ընկալան վասն կենաց իւրեանց, վասն այսորիկ առաքեացէ առ նոսա Տէրն ներգործութիւն խաբէութեան, զի հաւատասցեն ի ստութիւն նոցա, որպէս զի տանջեսցին ամենեքին, որք ոչ հաւատացին ճշմարտութեանն, այլ հանեցան ընդ անիրաւութիւն»⁵: Այսպէս առ հրեայսն Որդին Աստուծոյ Տէրն մեր Յիսուս Քրիստոս⁶ եկեալ եւ ոչ ընկալան զնա⁷, իսկ մոլորեցուցիչն զայն, որ Աստուած կոչէ զանձն իւր, ընկալցին: Եւ զի աստուած կոչեցէ ինքն զինքն, այսպէս ասէ⁸ ցԴանիէլ, որ զայս ուսուցանէր հրեշտակն, եթէ՝ «առ Աստուածն հարցն իւրոց ոչ ի միտ առնու»⁹, եւ առաքեալ. «մի՛ ոք խաբեսցէ զձեզ եւ մի իւրի արիմակաւ, զի եթէ ոչ եկեսցէ նախ ապստամբութիւն եւ յայտնեսցի մարդն¹⁰ անաւրէնութեան¹¹ հակառակ

¹ Ex. Fid. 99.1 Περὶ τοῦ ἀντιχρίστου

² Եւ զի այսու պատճառանաւ // Ex. Fid. 99.2 Χρὴ γινώσκειν, ὅτι

³ Հմմտ. Մատթ ԻԳ 14. «Եւ փարոզեսցի՝ աւետարանս արքայութեան ընդ ամենայն տիեզերս՝ ի վկայութիւն ամենայն հեթանոսաց. եւ ապա եկեսցէ կատարած»:

⁴ Յովհ. Ե 43. «Ես եկի յանուն Հաւ իմոյ, եւ ոչ ընդունիք զիս. եթէ այլ ո՞ք եկեսցէ յիւր անուն, զնա ընդունիցիք»:

⁵ Բ ԹԵԱ. Բ 10-11. «Փոխանակ զի զսէրն ճշմարտութեան ոչ ընկալան, զի ապրեսցին, եւ վասն այնորիկ առաքեացէ նոցա Աստուած ազդեցութիւն մոլորութեան, հաւատալ նոցա ստութեանն. զի դատապարտեսցին ամենեքեան, որ ոչ հաւատացին ճշմարտութեանն, այլ հանեցան ընդ անաւրէնութիւնն»:

⁶ Ex. Fid. 99.15 + καὶ θεὸν

⁷ Այսպէս առ հրեայսն Որդին Աստուծոյ Տէրն մեր Յիսուս Քրիստոս (Ե Տէրն մեր Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ առ հրեայսն) եկեալ (Ե + եւ ոչ հաւատացին նմա) եւ ոչ ընկալան զնա // Ex. Fid. 99.14-15 Οἱ οὖν Ἰουδαῖοι υἱὸν θεοῦ ὄντα τὸν κύριον Ἰησοῦν Χριστὸν καὶ θεὸν

⁸ C չԽբ

⁹ Դան. ԺԱ 37. «Եւ ի վերայ աստուծոց հարց իւրեանց զմտաւ ածցէ»:

¹⁰ F մարդկան

¹¹ = C // Ex. Fid. 99.19 + ὁ υἱὸς τῆς ἀπωλείας

ամբարձեալ ի վերայ ամենայն անուանելոց¹² եւ պաշտմանց, մինչեւ նստցի ի տանարին Աստուծոյ, եւ իբրեւ զԱստուած ցուցանէ զանձն իւր, թէ Աստուած է»¹³: Իսկ ի տանարի Աստուծոյ՝ ոչ ի մերս, այլ ի հին տանարն¹⁴ հրէից, վասն զի ոչ առ մեզ, այլ առ հրէայսն եկեցէ՝ ոչ աւգնական Քրիստոսի, այլ հակառակ Քրիստոսի եւ Բրիստոսեանցն, վասն որոյ եւ անդիքրիստոս կոչի:

Եւ արդ նախ պարտ է Աւետարանին Բարոզել յամենայն հեթանոսս, «եւ յայնժամ յայտնեսցի անարեւնն, որոյ»¹⁵ գալուստն ազդեցութեամբ սատանայի է¹⁶ ամենայն զաւրութեամբ եւ նշանաւ եւ սփանչելեալ ստովք եւ ամենայն խաբէութեամբ մոլորութեանն ի մէջ կորուսելոցն, զոր սատակեսցէ Տէր բանիւ բերանոյ իւրոյ եւ ջնջեսցէ զնա գալստեամբ յայտնութեան իւրոյ¹⁷»¹⁸: Եւ արդ ոչ եթէ նա դեւ է մարդացեալ, եւ դեւ մարդ եղեալ՝ ըստ ատրինակին Քրիստոսի¹⁹, քան ի լիցի, այլ մարդ՝ ծնեալ ի պողոնկութենէ, եւ ընդունի յինքն²⁰ զամենայն ներգործութիւն սատանայի: Վասն զի նախատեսն Աստուած գիտէ զանկարգութիւն իւրում յառաջադրութեանն եւ թոյլ տայ դիւին բնակիլ ի նմա:

Եւ արդ ծնանի ի պողոնկութենէ²¹ եւ սնանի ի գաղտնի եւ վաղվաղակի երեսցցի²² եւ բռնաբար ապստամբէ եւ թագաւորէ: Եւ ի²³ սկիզբն թագաւորութեան իւրում թափուցանէ զբռնութիւն²⁴ եւ կեղեքարանի զբարեւարութիւն, իսկ յորժամ յամենայնի տիրէ, յայնժամ սկսանի հալածել զեկեղեցի Աստուծոյ եւ երեսցուցանէ զամենայն շարութիւն իւր: Եւ գայ «նշանաւ եւ սփանչե-

¹² Ex. Fid. 99.20 + θεὸν

¹³ Բ Թեա. Բ 3-4. «Մի՛ ոք զձեզ խաբեսցէ եւ մի՛ իւիք իրաւ. զի եթէ ոչ նախ եկեսցէ ապստամբութիւնն, եւ յայտնեսցի մարդն անարեւնութեան՝ որդին կորստեան, հակառակորդն հպարտացեալ ի վերայ ամենայնի, որ անուանեալ իցէ Աստուած կամ պաշտան. մինչեւ նստել նմա ի տանարին Աստուծոյ, եւ ցուցանել զանձն, թէ Աստուած իցէ»:

¹⁴ Ex. Fid. 99.23 չիք

¹⁵ C որոց

¹⁶ Ex. Fid. 99.27-28 κατ' ἐνέργειαν τοῦ σατανᾶ // B C սատանայի է ազդեցութեամբ

¹⁷ F չիք եւ ջնջեսցէ զնա գալստեամբ յայտնութեան իւրոյ

¹⁸ Բ Թեա. Բ 8-10. «Եւ ապա յայտնեսցի անարեւնն. զոր Տէր Յիսուս սատակեսցէ հոգեւոյ բերանոյ իւրոյ, եւ խափանեսցէ յայտնութեամբ գալստեանն իւրոյ: Որոյ գալուստն ըստ ազդեցութեան Սատանայի է, ամենայն զաւրութեամբ եւ նշանաւ եւ արուեստիւ ստովք, եւ ամենայն պատրանաւ անիրաւութեան ի վերայ կորուսելոցն»:

¹⁹ Ex. Fid. 99.31-32 κατὰ τὴν τοῦ κυρίου ἐνανθρώπησιν

²⁰ C ընդ ինքն ունի

²¹ Ex. Fid. 99.36 ὥς ἔφημεν

²² E չիք

²³ E չիք

²⁴ թափուցանէ զբռնութիւն // Ex. Fid. 99.38 μᾶλλον δὲ τυραννίδος

լեալ»²⁵ եւ ունայնապէս եւ առ աշաւ կատարէ զնոսա²⁶ եւ ոչ ստուգապէս, եւ որք տկար եւ անհաստատ ունիցին զհիմունս մտաց, խաբին եւ ապստամբ լինին յԱստուծոյ կենդանոյ՝ «մինչեւ մոլորեցուցանել, թէ հնար իցէ եւ զընտրեալս»²⁷:

Եւ ապա առաքին²⁸ ենոք եւ եղիայ Թեքացին եւ եկեալ դարձուցանեն զսիրտ հարց յորդիս, այսինքն է՝ առ Ժողովսն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զհրէայսն եւ ի քաղաքիսն առաքելոցն եւ սպանանին ի նմանէ: Եւ ապա եկեցէ Տէրն յերկնից, որով արինակաւ տեսին զնա առաքեալն՝ երթեալ²⁹ յերկինս, Աստուած կատարեալ եւ մարդ կատարեալ՝ զարութեամբ եւ փառաւ քազմաւ: Եւ սատակեցէ զմարդն անարէնութեան՝ զորդին կորստեան, հոգով բերանոյ իւրոյ: Այլ մի՛ ոք յերկրէ ակնկալցի գալստեան Տեառն, այլ յերկնից եկեցէ, որպէս ինքն հաստատեաց մեզ:

²⁵ Բ ԹԵԱ. Բ 9. «նշանաւ եւ արուեստիւ ստով»:

²⁶ Ex. Fid. 99.41 չիք կատարէ զնոսա

²⁷ Մատթ. ԻԳ 24. «մինչ մոլորեցուցանել՝ թէ հնար ինչ իցէ եւ զընտրեալսն»:

²⁸ F առին

²⁹ C երթալ

Ճ. Վասն յարութեան ամենեցուն¹:

Այլ հաւատամք ի յարութիւնն, վասն զի լինիցի ստուգապէս² յարութիւն մեռելոց, եւ զյարութիւն մինչ ասեմք, զմարմնոց ասեմք զյարութիւն: Վասն զի յարութիւն կոչի երկրորդ³ կանգնումն անկելոյն⁴, քանզի հոգիք անմահք գոյով, ոչ մեռեալք եւ ոչ անկեալք յերկրի⁵, զի ա՛րդ յարիցեն: Եւ եթէ մահ զբաժանումն հոգւոյն ի մարմնոյն սահմանեցին, եւ յարութիւն ստուգապէս դարձեալ միաւորելն նոցա⁶ եղիցի եւ կրկին կանգնումն⁷ նոցա անկելոյ եւ լուծելոյ կենդանւոյն: Վասն զի նոյն ինքն⁸ լուծեալն եւ ապականեալն յարիցէ անապական գոյով, զի ա՛րդ⁹, վասն զի ո՛չ կարէ այն, որ ի սկզբանն յերկրէ ի հողոյ հաստատեաց հրամանաւ¹⁰ զնոսա, զի զլուծեալն եւ զցնդեալն եւ անդրէն ի հող¹¹ դարձեալն, ուստի առեալն¹² եղև հրամանաւն¹³ արարչին, միւսանգամ յարուցանէ զնա¹⁴:

Եւ դարձեալ թէ ոչ լինիցի յարութիւն, «կերիցոյք, արբցոյք»¹⁵, ի քաղցրահամ եւ ի հեշտ կենցաղս կեցցոյք: Եթէ ոչ գոյ յարութիւն¹⁶, ի՛նչ իւրիք բաժանիմք յանբանիցն, եթէ ոչ գոյ յարութիւն¹⁷, երանեսցոյք զգազանս անտառի, որք անտրտում ունին կեանս: Եթէ ոչ գոյ յարութիւն, ապա եւ ոչ Աստուած գոյ, ոչ նախանամութիւն, այլ անձամբ իւրեանց վարին եւ շրջին ամենայն: Վասն զի տեսանեմք բազումս զարդարսն տնանկս լեալ¹⁸ եւ ոչ միոյ ինչ հանդի-

¹ Ex. Fid. 100.1 Περὶ ἀναστάσεως

² C ստուգապէս լինիցի

³ Ex. Fid. 100.4 δευτέρα // E F + անգամ

⁴ Ex. Fid. 100.4 τοῦ πεπτωκότος // F անգելոցն

⁵ Ex. Fid. 100.5 չիք ոչ մեռեալք եւ ոչ անկեալք յերկրի

⁶ Ex. Fid. 100.6-7 ψυχῆς καὶ σώματος

⁷ = H ἀνάστασις // Ex. Fid. 100.7 στάσις

⁸ Ex. Fid. 100.8 + τὸ σῶμα

⁹ B C D զի ա՛րդ գոյով Ex. Fid. 100.9 չիք

¹⁰ Ex. Fid. 100.9 չիք

¹¹ F հողոյ

¹² E առնելն

¹³ C հրաման

¹⁴ C զնոսա

¹⁵ Եսայի ԻԲ 13. «Կերիցո՛ւք եւ արբցո՛ւք, քանզի վաղիւ մեռանիմք», Ա. Կորնթ. ԺԵ 32. «զի՞նչ աւգոստ էր ինձ, եթէ մեռեալք ո՛չ յառնեն. կերիցոյք, արբցոյք, քանզի վաղիւ մեռանիմք»:

¹⁶ F գոյութիւն չիք գոյ յարութիւն

¹⁷ F չիք եթէ ոչ գոյ յարութիւն

¹⁸ = B // Ex. Fid. 100.17 + καὶ ἀδικουμένων

պեալ աւգնականութեանն¹⁹ ի կեանս այս, իսկ անիրաւ եւ մեղաւորք ամենայն մեծութեամբ եւ գրգանաւ առցեալս գոլով: Եւ ո՞վ ոք արդարադատութեան²⁰ եւ իմաստուն նախախնամութեան զգործ զսոսա ասէ ի գիտնոց²¹ ոմանց: Այլ ստուգապէս լինելոց է յարութիւն, վասն զի արդար է Աստուած եւ, որք համբերեցին, նմա զվարձս հատուցանէ: Եւ արդ ոչ եթէ հոգի միայն աշխատեալ գոլով զառաքինութեան փրտունս, նա միայն պսակի: Եւ եթէ միայն աղտեղացեալ է յախտս²² համեղս եւ հեշտս²³, ինքն միայն տանջեսցի յիրաւի: Այլ քանզի եւ ոչ էութիւն բաժանեալ ունելով անձն եւ ոչ յառաքինութիւն կամ ի շարութիւն դիմեաց առանց մարմնոյն, յիրաւի միանգամայն երկուն առնուն զհատուցումն:

Վկայեն աստուածային գիրք լինել յարութիւն մարմնոց, որպէս եւ ասէ Աստուած ցնոյ զկնի ջրհեղեղին, եթէ՝ «Իբրեւ զբանջար խոտոյ ետու ձեզ զամենայն անասուն ի կերակուր²⁴: Այլ զմարմին արեան շնչոյ մի՛ ուտիցէք: Վասն զի եւ զձեր արին շնչոյ խնդրեցից, ի ձեռանէ ամենայն գազանաց խնդրեցից զնա եւ ի ձեռանէ ամենայն մարդոյ զարին եղբար իւր խնդրեցից զնա: Որ հեղու²⁵ զարին մարդոյ, փոխանակ արեան նորա հեղցի արին նորա: Զի պատկեր Աստուծոյ արարի զմարդ»²⁶: Եւ արդ ո՞րպէս խնդրեսցի արին մարդոյ ի ձեռանէ²⁷ գազանաց, այլ այն զի յառնիցեն մարմինք մեռեալք ի ձեռն գազանաց²⁸: Վասն զի ոչ մեռանի գազան փոխանակ մարդոյ: Եւ Մովսէս ասէ. «Ես եմ, ասէ²⁹, Աստուած³⁰, Աստուած Աբրաամու, եւ Աստուած Սահակայ³¹, եւ Աստուած Յակոբայ. եւ ոչ է Աստուած Աստուած մե-

¹⁹ Բ աւգնականութեամբ

²⁰ Բ արդարութեան

²¹ Ex. Fid. 100.20 εὖ φρονῶν

²² Բ յաղտս

²³ յախտս համեղս եւ հեշտս // Ex. Fid. 100.23 ταῖς ἡδοναῖς

²⁴ Ex. Fid. 100.29 *չիք* անասուն ի կերակուր

²⁵ Ը հեղաւ

²⁶ Ծննունդ Թ 3-6. «Եւ ամենայն զեռուն որ է կենդանի, ձեզ լիցի ի կերակուր. իբրեւ զբանջար խոտոյ ետու ձեզ զամենայն: Բայց զմիս արեամբ շնչոյ մի՛ ուտիցէք: Քանզի եւ զձեր արին շնչոյ խնդրեցից, ի ձեռաց ամենայն գազանաց խնդրեցից զնա, եւ ի ձեռաց մարդոյ. ի ձեռաց առն զշունչ արեան եղբար իւրոյ խնդրեցից: Որ հեղու զարին մարդոյ, փոխանակ արեան նորա հեղցի՛ արին նորա: Զի ի պատկեր Աստուծոյ արարի ես զմարդն»:

²⁷ Ex. Fid. 100.34 + πάντων

²⁸ Ex. Fid. 100.35 *չիք* ի ձեռն գազանաց

²⁹ Ը *չիք* ես եմ, ասէ

³⁰ Ex. Fid. 100.36 *չիք* ասէ, Աստուած

³¹ Ը Իսահակայ

նելոց³², եւ ոչ է Աստուած եղելոցն երբեմն, այլ կենդանեաց է Աստուած³³»³⁴, որոց հոգիքն ի ձեռն³⁵ նորա կենդանի են եւ մարմինքն ի ձեռն յարութեանն կենդանի լինելոց են: Եւ աստուածահայրն Դաւիթ առ աստուածասէր. «Հանցես զոգի ի նոցանէ, եւ պակասեսցին եւ ի հոդս իւրեանց դառնան»³⁶: Զայս մարմնոյ ասէ. զի նա դարձաւ ի հոդ, յորժամ հոգին առեալ եղել ի տուողէն³⁷: Եւ դարձեալ ասէ. «Առաքես զոգի քո եւ ստանաս³⁸ զնոսա, այսինքն՝ նորաստեղծ ես³⁹, եւ նորոգես զերեսս երկրի»⁴⁰:

Եւ Եսայի ասէ. «Յարիցեն մեռեալք, եւ կանգնիցեն, որք ի գերեզմանս»⁴¹, եւ⁴² այս յայտ է, զի ոչ հոգի մեռանի եւ⁴³ դնի ի գերեզմանս, այլ մարմին:

Իսկ երանելին եզելիել ասէ. «Եւ ի մարգարէանալն իմում եղել շարժումն մեծ, եւ մերձեցայր ոսկր յոսկր առ իւրաքանչիւր յաւդս, եւ ձգեցան ի վերայ նոցա ջիւս, եւ մարմին անկաւ ի վերայ նոցա, եւ մորթ պատեցաւ զնոքաւ»⁴⁴, ահա այս մարմինն է⁴⁵, իսկ զհոգի ուսուցանէ, եթէ հրամանաւ ի վերուստ եկն ի վերայ նոցա: Այս զմարմնոցն յերկրէ ժողովելն ասէ, ուր ցնդեալն էր, եւ զհոգին ի վերուստ, ուր բնակեալն է արդ⁴⁶:

Եւ աստուածայինն Դանիէլ ասէ⁴⁷, եթէ՝ «Յայնժամ յարիցէ Միքայէլ մեծն իշխանապետ, որ կայ ի վերայ որդւոց⁴⁸ ժողովրդեան քո. եւ եղիցի ժամն այն,

³² Եւ ոչ է Աստուած Աստուած մեռելոց

³³ Եւ ոչ է Աստուած

³⁴ Եւ Գ 6. «Եւ եմ Աստուած հաւր քոյ, Աստուած Աբրահամու. եւ Աստուած Սահակայ. եւ Աստուած Յակոբայ», Մատթ. ԻԲ 32. «Եւ եմ Աստուած Աբրահամու, Աստուած Իսահակայ եւ Աստուած Յակոբայ. եւ չէ Աստուած՝ Աստուած մեռելոց, այլ կենդանեաց»:

³⁵ Եւ ձեռն

³⁶ Սաղմ. ՃԳ 29. «հանես զոգի ի նոցանէն, պակասին եւ ի հոդ դառնան»:

³⁷ Ex. Fid. 100.42 Եւ զի նա դարձաւ ի հոդ, յորժամ հոգին առեալ եղել ի տուողէն

³⁸ Եւ առաքէ... ստանաս

³⁹ Ex. Fid. 100.43 Եւ այսինքն՝ նորաստեղծ ես

⁴⁰ Սաղմ. ՃԳ 30. «Առաքես զոգի քո եւ ստանաս զնոսա, եւ նորոգես զերեսս երկրի»:

⁴¹ Եսայի ԻԶ 19. «Յարիցեն մեռեալք եւ կանգնեսցին որ իցեն ի գերեզմանս»:

⁴² Եւ այլ եւ

⁴³ Ex. Fid. 100.45 Եւ մեռանի եւ

⁴⁴ Եզել. ԻԷ 7-8. «Եւ ի մարգարէանալն իմում, եւ ահա շարժումն. եւ մերձեցաւ ոսկր առ ոսկր առ իւրաքանչիւր յաւդս. եւ տեսի եւ ահա ջիւք եւ մարմինք պատէին, եւ ձգէր ի վերայ նոցա մորթ»:

⁴⁵ Ex. Fid. 100.50 Եւ ահա այս մարմինն է

⁴⁶ Ex. Fid. 100.50 Եւ Այս զմարմնոցն յերկրէ ժողովելն ասէ, ուր ցնդեալն էր, եւ զհոգին ի վերուստ, ուր բնակեալն է արդ

⁴⁷ Եւ աստուածայինն ասէ Դանիէլ Կ/ւ Եւ աստուածայինն Դանիէլ ասէ

⁴⁸ Եւ որդի

Ժամ նեղութեան, որոյ նման ոչ եղեալ⁴⁹, յորմէ հետէ եղեւ մարդ ի վերայ երկրի մինչեւ ցայն ժամ⁵⁰: Եւ յայնժամ կեցցէ ժողովուրդ քո, ամենեւեմ, որ⁵¹ գտանին գրեալ ի գիրս: Եւ բազումք յայնցանէ, որք ննջեալ են ի հող, յարիցեն յերկրէ՝ սոքա ի կեանս յափտենականս, եւ նոքա ի նախատինս եւ յամալ յափտենական: Եւ որք իմացողք են, ծագեցեն իբր⁵² զհառագայթս ի հաստատութեան երկնից. եւ⁵³ բազումք յարդարոցն իբրեւ զաստեղս յափտենից եւ ցարդ եւս ծագեցեն⁵⁴: Իսկ այսու ասելով, եթէ՝ «բազումք ննջեցելոցն ի հող յերկրէ⁵⁵ յարիցեն», յայտ է, զի զմարմնոց⁵⁶ յարութիւն ասէ, որք անդ ննջեալ են⁵⁷, զի ոչ ոք⁵⁸ երբեք զհոգի ասէ ննջեալ⁵⁹ ի հող երկրի:

Այլ եւ Տէրն յԱւետարանին⁶⁰ յայտնապէս ասէ զյարութիւն մարմնոցն⁶¹, վասն զի ասէ⁶², եթէ՝ «Լուիցեն որք ի գերեզմանս են զձայն Որդոյն Աստուծոյ եւ եկեցեն արտաքս, որոց բարիս գործեալ են՝ ի յարութիւն կենաց, եւ չարագործք՝ ի յարութիւն դատաստանաց»⁶³: Իսկ ի գերեզմանս զհոգիքն ո՞րք ի բարեմտացն ասէ գոյ:

⁴⁹ C չէք

⁵⁰ E ցայժմ

⁵¹ C որք

⁵² C իբրեւ

⁵³ E չէք

⁵⁴ Դան. ԺԲ 1-3. «Եւ ի ժամանակին յայնմիկ յարիցէ Միքայէլ իշխան մեծ, որ կայ ի վերայ որդոց ժողովրդեան քո. եւ եղիցի ժամանակ նեղութեան. նեղութիւն որպիսի ոչ եղեւ յորմէ հետէ եղեւ ազգ ի վերայ երկրի մինչեւ ի ժամանակն յայն. եւ ի ժամանակին յայնմիկ ապրեցի ժողովուրդ քո, ամենայն որ գտցի գրեալ ի դպրութեան: Եւ բազումք ի ննջեցելոց ի հող երկրի յարիցեն, ոմանք ի կեանս յափտենականս, եւ ոմանք ի նախատինս եւ յամալ յափտենական: Եւ իմաստունք ծագեցեն իբրեւ զլուսատրութիւն ի հաստատութեան. եւ բազումք յարդարոց իբրեւ զաստեղս յափտեանս եւ ես»:

⁵⁵ C երկրի E յերկրի

⁵⁶ C մարմնոց

⁵⁷ Ex. Fid. 100.60 չէք որք անդ ննջեալ են

⁵⁸ E չէք F + էր

⁵⁹ F ննջեցեալ

⁶⁰ Ex. Fid. 100.62 ἐν τοῖς ἱεροῖς εὐαγγελίοις

⁶¹ Ex. Fid. 100.62 չէք

⁶² C չէք

⁶³ Յովհ. Ե 28-29. «Ամենեմին որ ի գերեզմանս կայցեն, լուիցեն ձայնի նորա, եւ եկեցեն արտաքս. որոց զբարիս գործեալ իցէ՝ ի յարութիւն կենաց, եւ որոց զչար արարեալ իցէ՝ ի յարութիւն դատաստանաց»:

Եւ զի ոչ միայն բանիւ, այլ եւ գործով⁶⁴ եցոյց Տէրն զյարութիւն մարմնոց, նախ այն⁶⁵, յորժամ զչորեփառեայ ապականեալն եւ հոտեալն յարոյց զՂազարոս. վասն զի ոչ զհոգի միայն առանց մարմնոյ, այլ զմարմինն ընդ հոգւոյ, եւ ոչ այլ, այլ⁶⁶ զնոյն զապականեալն յարոյց: Վասն զի ո՞րպէս նանաչիւր կամ հաւատալի լինէր, եթէ ստուգապէս յարեալ⁶⁷, եթէ ոչ⁶⁸ տպաւորականն իւր ինքնութիւն եւ նկարագիրն Աղամայնոյ մարմնոյն⁶⁹ անփոփոխելի մարմնով յարուցեալ լինէր: Այլ զՂազարոս առ ի յայտնել զաստուածութիւնն իւր եւ վասն հաւատարիմ առնելոյ զիւրն եւ զմերն յարութիւնն յարոյց՝ զայն, որ դարձեալ մեռանել հանդերձեալն էր⁷⁰: Իսկ ինքն Տէրն կատարելոյն եւ ոչ դարձեալ մեռելոյն⁷¹ յարութեանն արիմակ եղել, վասն որոյ եւ աստուածայինն Պաւղոս ասէ. «Եթէ մեռեալ ոչ յառնեն, ապա եւ Քրիստոս չիցէ յարուցեալ⁷²: Եւ ընդունայն են վկայութիւն մեր⁷³, եւ ընդունայն են⁷⁴ հաւատքն ձեր, եւ դեռ ես ի մեղս մեր եմ», եւ եթէ՝ «Քրիստոս յարուցեալ է՝ սկիզբն ննջեցելոց», եւ «անդրանիկ ամենայն մեռելոց⁷⁵»⁷⁶: Եւ դարձեալ. «Եթէ հաւատամք, եթէ Յիսուս⁷⁷ մեռաւ եւ յարեալ, նոյնպէս եւ Աստուած զննջեցեալսն⁷⁸ ընդ Յիսուսի⁷⁹ ածցէ ընդ նմա»⁸⁰: Այսպէս ասէ՝ թէ որպէս Տէրն յարեալ, նոյնպէս եւ նոքա յարիցեն⁸¹:

⁶⁴ C գործով

⁶⁵ F այնմ

⁶⁶ C չիք

⁶⁷ եթէ ստուգապէս յարեալ // Ex. Fid. 100.71 ἢ τοῦ τεθνεώτος ἀνάστασις

⁶⁸ E F չիք

⁶⁹ Աղամայնոյ մարմնոյն // Ex. Fid. 100.72 ταύτην

⁷⁰ E է

⁷¹ Ex. Fid. 100.75-76 θανάτω ὑποπιπτούσης // B C D մեռանելոյն, այլ էական

⁷² Ex. Fid. 100.77 ἐγὼ γερται // B չէ յարուցեալ

⁷³ Ex. Fid. 100.78 չիք եւ ընդունայն են վկայութիւն մեր

⁷⁴ C չիք եւ ընդունայն են

⁷⁵ F չիք եւ անդրանիկ ամենայն մեռելոց

⁷⁶ Ա. Կորնթ. Ժե 16-17. «Իսկ եթէ մեռեալ ոչ յառնեն, ապա եւ Քրիստոս չէ յարուցեալ: Եւ եթէ Քրիստոս չիցէ յարուցեալ, ընդունայն են հաւատքն ձեր. եւ տակաւին ի նմին ի մեղս կայցէք», 20. «Այլ արդ Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց՝ առաջին պտուղն ննջեցելոց»: Կորնթ. Ա. 18. «անդրանիկ ի մեռելոց»:

⁷⁷ Ex. Fid. 100.80 Ἰησοῦς // B C Քրիստոս

⁷⁸ E + անդրէն

⁷⁹ C ընդ ի ձեռն Յիսուսի անդրէն B ընդ Յիսուսի անդրէն

⁸⁰ Ա. Թեա. Ա. 13. «Եթէ հաւատամք՝ եթէ Յիսուս մեռաւ եւ յարեալ. նոյնպէս եւ Աստուած զննջեցեալսն ի ձեռն Յիսուսի ածցէ ընդ նմա»:

⁸¹ Այսպէս ասէ՝ թէ որպէս Տէրն յարեալ, նոյնպէս եւ նոքա յարիցեն // Ex. Fid. 100.1-82 «Οὕτως» ἔφη, ὡς ὁ κύριος ἀνέστη

Այլ զի եթէ յարութիւն Տեառն անապական մնացեալ իւրոյ մարմնոյն եւ հոգւոյն միաւորութիւն եւ, յայտ է, եթէ որք⁸² ի միմեանց բարժանեալ էին, վասն զի ասաց. «Քակեցէ՛ք զտանարս զայս, եւ ես յերիս յաւուրս կանգնեցից զսա»⁸³: Եւ վկայ⁸⁴ է Աւետարանն, եթէ զտանարէ⁸⁵ մարմնոյ իւրոյ ասէր⁸⁶: «Շաւշափեցէ՛ք զիս եւ տեսէ՛ք⁸⁷», ասէր Տէրն աշակերտաց իւրոց, որոց⁸⁸ համարէին ոգի ինչ տեսանել, «զի ես եմ եւ ոչ եմ փոփոխեալ, զի ոգի մարմին եւ ոսկերս ոչ ունի, որպէս զիս տեսանէ՛ք զի ունիմ»⁸⁹: Եւ զայս ասացեալ՝ եցոյց նոցա զձեռսն եւ զոտս իւր⁹⁰ եւ զկողս իւր եցոյց Թոմայի առ ի տեսանել եւ ստուգել⁹¹: Ո՛չ արդեւ բաւական են այսոքիկ առ ի հաւատացուցանել յարութիւն լինել մարմնոյ: Այո, բաւական են որոց⁹² հաւատով քննեն, իսկ թերահաւատից՝ ոչ⁹³:

Դարձեալ ասէ առաքեալ. «Պարտ է ապականացոյիս այսորիկ զգենոյ զանապականութիւն եւ մահկանացոյիս զանմահութիւն»⁹⁴, եւ դարձեալ. «սերմանի ապականութեամբ եւ յառնէ առանց ապականութեան, սերմանի տկարութեամբ եւ յառնէ զաւրութեամբ, սերմանի անարգութեամբ եւ յառնէ փառամբ, սերմանի մարմին շնչաւոր»⁹⁵ եւ յառնէ մարմին հոգեւոր»⁹⁶, անփոփոխելի, անախտանալի⁹⁷, պարզ եւ աղատ: Զի զայս յայտ առնէ «հոգե-

⁸² C nf

⁸³ Յովհ. Բ 19. «Քակեցէ՛ք զտանարդ զայդ, եւ զերիս աւուրս կանգնեցից զդա»:

⁸⁴ Ex. Fid. 100.85 + ἀξιόπιστος

⁸⁵ Ex. Fid. 100.86 չէք

⁸⁶ Յովհ. Բ 21. «Բայց նա ասէր վասն տանարի մարմնոյ իւրոյ»:

⁸⁷ C + զիս

⁸⁸ C չէք

⁸⁹ Դուկ. ԻԳ 37, 39. «Եւ զանի հարեալ՝ երկնչէին. եւ համարէին ոգի ինչ տեսանել»: «Տեսէ՛ք զձեռս իմ եւ զոտս, զի ես նոյն եմ. շաւշափեցէ՛ք զիս եւ տեսէ՛ք. զի ոգի մարմին եւ ոսկերս ոչ ունի, որպէս զիս տեսանէ՛ք զի ունիմ»:

⁹⁰ Դուկ. ԻԳ 40. «Եւ զայս ասացեալ՝ եցոյց նոցա զձեռսն եւ զոտս»:

⁹¹ առ ի տեսանել եւ ստուգել // Ex. Fid. 100.90 πρὸς ψηλάφοισιν | Յովհ. Ի 27:

⁹² E nr

⁹³ Ex. Fid. 100.91 չէք Այո, բաւական են որոց հաւատով քննեն, իսկ թերահաւատից՝ ոչ

⁹⁴ Ա. Կորնթ. ԺԵ 53. «Զի պարտ է ապականութեանս այսմիկ զգենոյ զանապականութիւն, եւ մահկանացոյիս այսմիկ զգենոյ զանմահութիւն»:

⁹⁵ Ex. Fid. 100.96 + ἥτοι παχὺ τε καὶ θνητόν

⁹⁶ Ա. Կորնթ. ԺԵ 42-44. «Նոյնպէս եւ յարութիւն մեռելոց. սերմանի ապականութեամբ եւ յառնէ առանց ապականութեան. սերմանի անարգութեամբ եւ յառնէ փառամբ. սերմանի տկարութեամբ եւ յառնէ զաւրութեամբ. սերմանի մարմին շնչաւոր եւ յառնէ մարմին հոգեւոր. եթէ գոյ մարմին շնչաւոր, գոյ եւ հոգեւոր»:

⁹⁷ F անախտելի

տրն», եւ զի հոգի այդպէս է⁹⁸, որպէս էր մարմինն Տեառն Յիսուսի յետ յարութեանն, փակեալ դրամն մտանելով առանց նեղելոյ եւ ի կնքեալ գերեզմանէն ելանելով ընդ վէմն առանց արգելելոյ, անյայտ լինելով յաշից⁹⁹ նոցա, ուր¹⁰⁰ եւ կամէր եւ երեսնալն եւ ընդ տեղեալն անձանաւն եւ այլակերպ լինելն¹⁰¹, կերակրոյ եւ ըմբելոյ եւ քնոյ ոչ կարատելն, թերեալբար ելանել յերկինս: Այսպէս հոգեւոր լինին ամենայն մարմինք յետ յարութեանն¹⁰²: Վասն զի լինիցին, ասէ Տէր, իբրեւ զհրեշտակս Աստուծոյ՝ ոչ ուտել, ոչ ըմպել, ոչ կանայս առնուլ եւ ոչ արանց լինել¹⁰³: Եւ առաքեալն դարձեալ ասէ, եթէ՝ «Մեր քաղաքաւարութիւն յերկինս է, ուստի Փրկչին ական ունիմք՝ Յիսուսի Քրիստոսի¹⁰⁴, եւ որ նկարագրեաց զմարմին տկարութեան մերոյ, որպէս զի արասցէ զնոսա պատկերակից մարմնոյ փառաց իւրոց»¹⁰⁵, այլ ոչ եթէ յայլումն պատկեր աւրինակ դրոշմեալ նկարագրէ զնոսա, ի բաց տար, այլ առաւել ապականութենէ յանապականութիւն փոփոխեցէ¹⁰⁶:

Այլ ասեն ոմանք, թէ զիա՛րդ յառնեն մեռեալք, կամ որո՞վ մարմնով¹⁰⁷: Ո՛վ անհաւատութեան, ո՛վ անիմացութեան: Այն, որ զփոշին կամելովն ի միայն մարմինն փոխադրեաց եւ ընդ հոգի խառնեաց եւ այնպէս զարացոյց, մինչեւ այսու ամենայն եղելոցս պատճառ եւ էութիւն եղէ¹⁰⁸, եւ այն, որ զփոքր զայս նիւթ՝ զկաթ մի սերման անկելոյ յարգանդի ի մարմին¹⁰⁹ զարգա-

⁹⁸ Ex. Fid. 100.98 չիք եւ զի հոգի այդպէս է

⁹⁹ B C յաշաց

¹⁰⁰ C չիք

¹⁰¹ Ex. Fid. 100.99 չիք եւ ի կնքեալ գերեզմանէն ելանելով ընդ վէմն առանց արգելելոյ, անյայտ լինելով յաշից նոցա, ուր եւ կամէր եւ երեսնալն եւ ընդ տեղեալն անձանաւն եւ այլակերպ լինելն

¹⁰² Ex. Fid. 100.99 չիք թերեալբար ելանել յերկինս: Այսպէս հոգեւոր լինին ամենայն մարմինք յետ յարութեանն

¹⁰³ ոչ ուտել, ոչ ըմպել, ոչ կանայս առնուլ եւ ոչ արանց լինել // Ex. Fid. 100.100-101 οὐ γάμος ἔτι, οὐ τεκνογονία | Մարկ ԺԲ 25. «Զի յորժամ ի մեռելոց յարիցեն, ոչ արք կանայս առնեն, եւ ոչ կանայք արանց լինին. այլ իբրեւ զհրեշտակս իցեն, որ յերկինսն են»:

= DH Χριστόν // Ex. Fid. 100.102 κύριον

¹⁰⁵ Փիլիպ. Գ 20-21. «Այլ մեր առաքիւնութիւն յերկինս է, ուստի եւ Փրկչին ական ունիմք՝ Տեառն Յիսուսի Քրիստոսի, որ նորոգեցցէ զմարմին խոնարհութեան մերոյ, կերպարանակից լինել մարմնոյ փառաց նորա»:

¹⁰⁶ յանապականութիւն փոփոխեցէ հմմտ. Ex. Fid. 100.106 εις ἀφθαρσίαν ἐναλλαγήν // B չիք

¹⁰⁷ Ex. Fid. 100.107 չիք կամ որո՞վ մարմնով | Ա. Կորնթ. Ժն 35. «Այլ ասիցէ՞ ոք. Զիա՛րդ յառնեն մեռեալք, կամ որո՞վ մարմնով գայցեն»:

¹⁰⁸ Ex. Fid. 100.108 չիք եւ ընդ հոգի խառնեաց եւ այնպէս զարացոյց, մինչեւ այսու ամենայն եղելոցս պատճառ եւ էութիւն եղէ

¹⁰⁹ Ex. Fid. 100.109 չիք ի մարմին

նալ հրամայեաց եւ զբազմաւրինակի այսու եւ բազմագունակ գործարան ի մարմնոյ կատարելութիւն շնորհեաց, ո՞րչափ եւս առաւել զեղեալն եւ զփակեալն յարուցէ դիւրաբար¹¹⁰ կամելով միայն: Կամ թէ «որո՞վ մարմնով գայցեն: Անմի՛տ»¹¹¹, թէպէտ եւ զբանս Աստուծոյ ոչ թոյլ տայ հաւատալ քեզ կուրութիւն հոգոյդ¹¹², սակայն գործոց հաւատա: «Վասն զի դու զոր սերմանես, ոչ կենդանանայ, եթէ ոչ նախ մեռանիցի, եւ զոր սերմանես, ոչ զոր լինելոց է զնոյն մարմինն սերմանես, այլ զհատն մերկ ցորենոյն կամ զայլոյ սերմանեաց: Եւ Աստուած տայ նմա մարմին, որպէս եւ կամի, իւրաքանչիւր սերմանեաց՝ զիւր մարմինն»¹¹³: Եւ տե՛ս՝ որպէս ի գերեզմանս է իմանալ, որք յաւաստ¹¹⁴ թաղեն սերմանք: Ո՞վ է, որ տնկէ զարմատս նոցա, զոսոս, զորայն, զտերեւ զմանրափստ, զգլուխ եւ զտունս նորա եւ ապա ցորեն ատոք ըստ ազգի սերման¹¹⁵: Ո՞չ ամենեցուն արարիչն, ո՞չ յայնմանէ, որ զամենայն հրամանաւ յոչէից¹¹⁶ արար եւ առնէ: Այսու արինակաւ հաւատա՛ լինել յարութիւն մարմնոց մեռելոց աստուածային կամաւ եւ նայեցմամբն: Վասն զի նախընթաց ընդ կամացն ունի զարութիւն:

Որպէս զի յարիցոյք, ուրեմն միատրելով հոգւոց ամենայնի ընդ մարմնոց անապական եղեալս, մերկանալով ի հող¹¹⁷ զապականութիւն առաջին յանցանացն ելոյ ի ձեռն մահու¹¹⁸, եւ կացցոյք առաջի անհաւոր¹¹⁹ աթոռոցն Քրիստոսի, եւ տուեալ լինին սատանայ եւ դեւն իւր, եւ մարդն իւր, որ է անտիքրիստոս եւ որք նմա հաւատացին յայնժամ¹²⁰ եւ ամենայն անհաւատք եւ անարէնք եւ մեղաւորք ընդ նոսա ի հուրն յաւիտենից՝ ոչ ի նիւթոյ հուր, որ ի ժամու լուցեալ եւ ընդ ժամանակաւ շիջանի, որպէս առ մեզս տեսանի ներ-

¹¹⁰ Ex. Fid. 100.111 չիք

¹¹¹ Ա. Կորնթ. Ժե 35-36. «Կամ որո՞վ մարմնով գայցեն: Անմի՛տ»:

¹¹² Ex. Fid. 100.112 չիք

¹¹³ Ա. Կորնթ. Ժե 36-38. «Անմի՛տ, դու զոր սերմանես, ոչ կենդանանայ, եթէ ոչ մեռանիցի: Եւ զոր սերմանես, ոչ զնոյն մարմին, որ ծնանելոցն իցէ, սերմանես, այլ հատ մերկ. եթէ ցորենոյ իցէ, եւ եթէ այլոց սերմանաց: Եւ Աստուած տայ նմա մարմին, որպէս եւ կամի. եւ իւրաքանչիւր սերմանացն զիւր մարմին»:

¹¹⁴ Ex. Fid. 100.117 ταῖς αὐλάξιν // B զակասս

¹¹⁵ Ex. Fid. 100.119 չիք զգլուխ եւ զտունս նորա եւ ապա ցորեն ատոք ըստ ազգի սերման

¹¹⁶ Ex. Fid. 100.121 չիք

¹¹⁷ Ex. Fid. 100.124 չիք ի հող

¹¹⁸ Ex. Fid. 100.124 չիք առաջին յանցանացն ելոյ (B եղելոյ) ի ձեռն մահու

¹¹⁹ Ex. Fid. 100.125 // C E F + եւ սոսկալի

¹²⁰ Ex. Fid. 100.126 չիք եւ որք նմա հաւատացին յայնժամ

գործութիւն հռոյ¹²¹, այլ աննիւթ եւ անշիջանելի¹²², որպէս գիտէ միայն Աստուած: Որպէս եւ ասէ, եթէ հուր նոցա ոչ շիջանի, որդն ոչ մեռանի¹²³, իսկ բարի գործք եւ հաւատացեալք Աստուծոյ¹²⁴ ծագեսցեն¹²⁵ որպէս զարեգակն ընդ հրեշտակսն ի կեանս յաւիտենից ընդ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ տեսանեն զնա եւ տեսանին ի նմանէ եւ զանվախճան խնդումն եւ զուրախութիւն կրեն ի նմանէ:

Կատարումն վաստակոց Յովհաննու Դամասկացոյ՝ կոչեցելոյն Մանսուր. համառատ ասացեալ նորոյ շնորհաց աւանդութիւնք, եւ թարգմանեալ¹²⁶ Սիմէովնի՝ ի վրաց լեզուէ ի հայ բառ:

¹²¹ որ ի ժամու լուցեալ եւ ընդ ժամանակաւ շիջանի, որպէս առ մեզս տեսանի ներգործութիւն հռոյ // Ex. Fid. 100.127 οἷον τὸ παρ' ἡμῖν

¹²² Ex. Fid. 100.128 չիք աննիւթ եւ անշիջանելի

¹²³ Ex. Fid. 100.128 չիք Որպէս եւ ասէ, եթէ հուր նոցա ոչ շիջանի, որդն ոչ մեռանի

¹²⁴ Ex. Fid. 100.128 չիք եւ հաւատացեալք Աստուծոյ

¹²⁵ Ex. Fid. 100.128 ἐκλάμψουσιν // B չիք

¹²⁶ C թարգմանեցեալ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌՍՋԱԲԱՆ	5
1. Հայ փառաբանականներ	5
2. Սիմեոն Պղնձահանեցու թարգմանությունները վրացերենից և Հովհան Դամասկացի.....	8
3. «Ասանդութին ուղղափառ հաւատոյ» երկի բնագիրը	12
4. Սխալ կամ տարօրինակ թարգմանության դեպքեր	15
5. Խմբագրական աշխատանք՝ հունարենի հետ համեմատությամբ և լեզվական առանձնահատկությունները	16
5.1 Հունարենից պատճենված՝ նախկինում ավանդված բառեր	20
5.2 Հունարենից «Ասանդութեան» բնագրում պատճենված բառեր	23
5.3 Վրացերենից նախնական թարգմանության հետքեր	25
5.4 Տառադարձված հունարեն բառեր	28
6. Աստվածաշնչից մեջբերումներ	30
7. Հետագա անդրադարձներ	31
8. Ձեռագրերն ու սույն հրատարակությունը	32
 ԲՆԱԳԻՐ	35
Գլուխների ցանկ	37
ՍՐԲՈՅ ՀԱՒԻՐՆ ՄԵՐՈՅ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՔԱՀԱՆԱ ԿՐԱՆԱԽՈՐԻ	
ԴԱՄԱՍԿԱՅԻՈՅ ԱԽԱՆԴՈՒԹԻՒՆ ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՒԱՏՈՅ	43
Ա. Որպես զի անհասանելի է Աստուած, եւ եթէ ոչ է պարտ ֆննել եւ խնդրել՝ զոր ոչ տուեալ է մեզ ի մարգարէիցն եւ յառաքելոցն	43
Բ. Վասն ճառելեաց եւ անճառելեաց, անիմանալեաց եւ իմանալեաց	45
Գ. Ցուցումն եթէ գոյ Աստուած	47
Դ. Վասն թէ զի՞նչ է Աստուած, եւ զի անհաս է	50
Ե. Յայտնումն եթէ մի է Աստուած եւ ոչ բազում	52
Զ. Վասն Բանին Աստուծոյ	54
Է. Վասն Սուրբ Հոգոյն	55
Ը. Վասն Սուրբ Երրորդութեանն	57
Թ. Վասն ի վերայ ասացելոցն	69
Ժ. Վասն աստուածային միատրութեանն ի բաժանմանն	71
ԺԱ. Վասն մարմնապէս ի վերայ Աստուծոյ ասացելոցն	72
ԺԲ. Վասն նոցա դարձեալ	74

ԺԳ. Յաղագս տեղեացն Աստուծոյ եւ եթէ միայն Աստուած է անպարագրելի	75
ԺԴ. Յատկութիւնք աստուածային բնութեանն	80
ԺԵ. Վասն յալիտեանցն	82
ԺԶ. Վասն հրեշտակաց	85
ԺԷ. Վասն սատանայի եւ դիացն	89
ԺԸ. Վասն երեւելի եւ զգալի արարածոցս	91
ԺԹ. Յաղագս երկնից	92
Ի. Վասն հրոյ, լուսոյ եւ լուսատուացն ամենեցուն	97
ԻԱ. Վասն արոյ եւ հողմոյ	107
ԻԲ. Վասն ջուրց	109
ԻԳ. Վասն երկրի եւ որք ի նմայն է	113
ԻԴ. Վասն դրախտին	117
ԻԵ. Վասն մարդոյն	124
ԻԶ. Վասն ճաշակացն, որ են համք	129
ԻԷ. Վասն տրտմութեան	131
ԻԸ. Վասն երկեղի	132
ԻԹ. Վասն սրտմտութեան	133
Լ. Վասն անուշոց եւ ցնորից	135
ԼԱ. Վասն զգայութեան	136
ԼԲ. Վասն իմացականին	139
ԼԳ. Վասն յիշողականին	140
ԼԴ. Վասն որ ի ներքոյ ներտրամադրական բան եւ արտաքին՝ արտաբերական	141
ԼԵ. Վասն ախտից եւ ներգործութեան	142
ԼԶ. Վասն ներգործութեան	149
ԼԷ. Վասն կամայի եւ ակամայի	151
ԼԸ. Վասն որոյ ընդ մեաք ենթակային, այսինքն, անձնիշխանութիւն	154
ԼԹ. Վասն գործեցելոցն	156
Խ. Թէ որոյ պատճառի եղաք անձնիշխան	157
ԽԱ. Վասն այնոցիկ, որք ոչ ի ներքոյ մեր են	159
ԽԲ. Վասն նախախնամութեան	160
ԽԳ. Վասն կանխագիտութեան եւ նախասահմանութեան	165
ԽԴ. Վասն աստուածային տնարէնութեան եւ որ առ մեզ փաղցրութեան եւ փրկութեան	169

ԽԵ. Յարինակ յղութեան Բանին Աստուծոյ եւ մարմնանալոյն իւրոյ	172
ԽԶ. Վասն երկուց բնութեանց	175
ԽԷ. Տեսակի ի միմեանս տալոյ արինակի փոխատրութեան միմեանց տալոյ	180
ԽԸ. Վասն թուոյ երկուց բնութեանց	183
ԽԹ. Իբր զի աստուածային բնութիւն բոլոր ի ձեռն միոյ իւր անձին միատրեցաւ ընդ բոլոր մարդկային բնութիւն եւ ոչ մասն առ մասն ինչ	185
Մ. Վասն մի գոլ անձն Բանին Աստուծոյ	189
ՄԱ. Առ որս ասեն, եթէ ի միատրեցելոյ եւ թէ ի սահմանեցելոյ առեալ լինի բանիանութիւն բնութեանցն Քրիստոսի	192
ՄԲ. Դիմադրութիւն ասացողացն, եթէ ոչ գոյ բնութիւն առանց անձին	194
ՄԳ. Յաղագս երրորդ սրբասացութեանն, զոր յաւելուն	196
ՄԴ. Վասն տեսակի եւ վասն յանհատիցն գոլ տեսանելի բնութեան եւ վասն բաժանման Բանի եւ միատրութեան եւ վասն մարմնատրութեան Տեառն, եւ թէ որպէս ասելի է «մի բնութիւն մարմնացելոյ Բանին Աստուծոյ»	200
ՄԵ. Եթէ ճշմարիտ Աստուածածին է կոյսն	204
ՄԶ. Ինքնութիւն երկուց բնութեանցն	208
ՄԷ. Վասն կամաց եւ ինքնիշխանութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի	209
ՄԸ. Վասն Տեառն Յիսուսի կրկին ներգործութեան	218
ՄԹ. Առ ասողսն՝ եթէ յերկուց բնութեանց եւ ի ներգործութեան է մարդ, ապա հարկ է Քրիստոսի յերեք բնութենէ եւ յերեք ներգործութենէ ասել գոլ	230
Կ. Վասն աստուածանալոյ բնութեան եւ կամաց եւ ներգործութեան մարմնոյն Տեառն	234
ԿԱ. Դարձեալ վասն կամաց եւ անձնիշխանութեան, մտաց, գիտութեան եւ իմաստութեան	236
ԿԲ. Վասն աստուածայրական ներգործութեան	240
ԿԳ. Վասն բնական եւ անխտրելի ախտից	242
ԿԴ. Վասն անգիտութեան եւ ծառայութեան	244
ԿԵ. Վասն զարգացման եւ անման	246
ԿԶ. Վասն երկեղի	247
ԿԷ. Վասն աղաբից Տեառն	249
ԿԸ. Վասն բաժանման եւ հատման	251
ԿԹ. Վասն չարչարանաց մարմնոյն Տեառն եւ անչարչարելի աստուածութեանն	252
Ղ. Վասն անմեկնելի գոլով աստուածութեան Բանին ի հոգւոյ եւ մարմնոյ, ի մահու մարմնոյն, եւ թէ մի անձն է	254
ՂԱ. Վասն ապականութեան եւ անապականութեան	256

ՀԲ. Վասն ի դժոխս իջմանն	258
ՀԳ. Վասն որ զկնի ի մեռելոց յարութենէն	259
ՃԴ. Վասն ընդ աջմէ Հաւր նստելոյն	260
ՃԵ. Առ ասողսն, եթէ երկու բնութիւն է Քրիստոս. կամ զեղականն պաշտեցէ՞ք իբրու եղականի երկրպագոյ, կամ մի բնութիւն երկրպագելի ասացէ՞ք, եւ մի բնութիւն ոչ է երկրպագելի	261
ՃԶ. Ընդէ՛ր Որդին Աստուծոյ մարմնացաւ եւ ոչ Հայր, եւ ոչ Հոգի եւ կամ թէ զի՞նչ ուղղեաց եւ կազմեաց իւրովն մարմնանալովն	262
ՃԷ. Առ որս հարցանեն, թէ անձն Քրիստոսի անեղ է եթէ եղական	265
ՃԸ. Եթէ յորմէ եւ երբ կոչեցաւ Քրիստոս	266
ՃԹ. Առ հարցողսն՝ եթէ երկու բնութիւն ծնաւ կոյսն, կամ երկու կախեցաւ զխաչէն	268
Չ. Որպէ՛ս անդրանիկ կոչի միաձին Որդին Աստուծոյ	270
ՉԱ. Առ հարցողսն՝ եթէ ի խառնակելոցն, թէ ի սահմանելոցն վերաբերին ի փանխանութիւն բնութիւնք Քրիստոսի	271
ՉԲ. Վասն հաւատոյ եւ մկրտութեան	272
ՉԳ. Վասն Հաւատոց	278
ՉԴ. Վասն խաչին եւ վասն Հաւատոյ	279
ՉԵ. Վասն ընդ արեւելս երկրպագութեանն	284
ՉԶ. Վասն սուրբ եւ անապական խորհրդոց Տեառն	286
ՉԷ. Ազգաբանութիւն Տեառն եւ Կուսին	296
ՉԸ. Վասն նշխարաց սրբոցն եւ պատուոյ նոցա	303
ՉԹ. Վասն պատկերաց երկրպագութեան	308
Ղ. Վասն զրոց աստուածայնոց	313
ՂԱ. Վասն ի վերայ Քրիստոսի ասելոց	317
ՂԲ. Վասն եթէ ոչ պատճառ չարեաց է Աստուած	326
ՂԳ. Վասն զի ոչ գոյ երկու սկիզբն	329
ՂԴ. Ընդէ՛ր զի կանխաւ գիտէր Աստուած զոմանս մեղանշել եւ ոչ ապաշխարել, եւ ստեղծ	331
ՂԵ. Վասն արինացն Աստուծոյ եւ արինացն մեղաց	332
ՂԶ. Ի փակտումն հրէիցն եւ վասն շաքաթուն	334
ՂԷ. Վասն կուսութեան	338
ՂԸ. Վասն քլփատութեան	342
ՂԹ. Վասն անդիփրիստոսի, որէ նեոն	344
Ճ. Վասն յարութեան ամենեցուն	347

**ՀՈՎՀԱՆ ԴԱՄԱՍԿՍՅՈՒ
ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՎԱԾ ԵՐԿԵՐ**

ՀԱՏՈՐ Բ

ՀՈՎՀԱՆ ԴԱՄԱՍԿՍՅՈՒ «ԱԽԱՆԴՈՒԹԻՒՆ ՈՒՂՂԱՓԱՌ ՀԱՒԱՏՈՅ» ԵՐԿԻ ՀԱՅԵՐԵՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՔՆՆԱԿԱՆ ԲՆԱԳԻՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

**JOHN OF DAMASCUS
ARMENIAN TRANSLATIONS**

Volume II

OLD ARMENIAN VERSION OF THE *EXACT EXPOSITION OF THE ORTHODOX
FAITH* BY JOHN OF DAMASCUS. CRITICAL TEXT AND STUDY

**ИОАНН ДАМАСКИН
АРМЯНСКИЕ ПЕРЕВОДЫ**

Том II

ДРЕВНЕАРМЯНСКИЙ ПЕРЕВОД “ИЗЛОЖЕНИЯ ПРАВОСЛАВНОЙ ВЕРЫ”
ИОАННА ДАМАСКИНА. КРИТИЧЕСКИЙ ТЕКСТ И ИССЛЕДОВАНИЕ

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ Անահիտ Խանզադյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմաճեանի
Շապիկին էջեր երկի հնագույն երրուսադեմի 1297 (1363 թ.) ձեռագրից,
թ. 62բ-63ա

Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

ISBN 978-9939-897-18-9



9 789939 897189

Տպագրված է «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» հրատարակչության տպարանում: Երևան, Ազատության 24/11
Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 22,5, տպաքանակ՝ 150

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի
հրատարակչական բաժին, ֆ. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033
publishing.matenadaran@gmail.com

[illegible]

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ISBN 978-9939-897-18-9



9 789939 897189

4000000
 7000000
 10000000
 13000000
 16000000
 19000000
 22000000
 25000000
 28000000
 31000000
 34000000
 37000000
 40000000

1870-1871
1872-1873
1874-1875